

ՄԻՔԱՅԵԼ ՀԱԿՈՐՅԱՆ

ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆՅԱՆԸ
ԵՎ
ՆՐԱ ՄԻՋԱՎԱՅՐԸ



ԱՄԵՆԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մ.Ն. ՀԱԿՈՔՅԱՆ

ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆՅԱՆԸ
ԵՎ ՆՐԱ ՄԻՋԱՎԱՅԻՐԸ

(ԿՅԱՆՔԸ, ԳՈՐԾԸ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԱՅԱՅՔՆԵՐԸ)

A II
90511



ՀՏԳ- 891.981.0

ԳՄԴ 83.3Հ

Ո 459 Ի

**Գիրքը լույս է տեսնում գրիկոջ՝ Ժենյա Ճերունյանի և
որդիների՝ Գավիթ և Վարդան Հակոբյանների
հովանավորությամբ**

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Գիրքը կազմել, խմբագրել և հրատարակության է
պատրաստել **Ժենյա Ճերունյանը**

Ո 439 Ի **Հակոբյան Մ.** Ստեփան Ռսկանյանը և նրա միջավայրը (կյանքը,
գործը, հասարակական-քաղաքական հայացքները), «Գիտություն»
հրատ., Եր., 2005, 472 էջ:

Մենագրությունը նվիրված է արևմտահայ նշանավոր հրապարակախոս Ստեփան Ռսկանյանի (Ռսկանի) կյանքին ու գործունեությանը: Քննական վերլուծությամբ գնահատված են նրա հասարակական-քաղաքական հայացքները, որոնք իրենց արտահայտությունն են գտել նրա հրատարակած «Արևելք» և «Արևմուտք» պարբերականներում: Նորահայտ նյութերի ընդգրկումով ցույց է տրված այդ աչքբերականների խաղացած դերը հայ դեմոկրատական մտքի զարգացման գործում:

Գիրքը նախատեսվում է գիտական և լինթերգոյ հասարակայնության համար:

Հ $\frac{4603010000}{703(02)-2005}$ 2005

ԳՄԴ 83.3 Ի

ISBN 5 – 8080 – 0624 – 4

© ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2005

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Պատմական գիտությունների թեկնածու, արձակագիր, լրագրող, ԽՍՀՄ գրողների միության անդամ Սիբայել Նավասարդի Հակոբյանը ծնվել է 1925թ. մարտի 10-ին, Ղափանի շրջանի Արծվանիկ գյուղում: 1943 – 1945թթ. ծառայել է խորհրդային բանակում, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին:

Պարզևատուրվել է Կարմիր աստղի շքանշանով և մեդալներով, Գեյուսգույն խորհրդի նախագահության պատվոգրով և այլն:

Մևաստուպոլի մատույցներում ծանր վիրավորված Հակոբյանը վերադարձավ թիկունք, բայց երբեք ավարտված չհամարեց իր զինվորական ծառայությունը: Նա ստանձնեց դժվար ու պատվաբեր պարտականություն՝ իր ստեղծագործությունների համար նյութ ընտրելով Մեծ հայրենական ում հերոսացած, անհայտ կորած, կենդանի ու զոհված մարդկանց կյանքը:

Իր վավերագրական գործերը («Անհայտ կորած մարդիկ», «Օր առանց մայրամուտի» (հայերեն և ռուսերեն), «Աստղերը չեն ընկնում», «Որքու վերադարձը», «Բաբախող սրտեր», «Կոմիսարը») ստեղծելիս, որոնք գրվել են Մեծ հայրենականի ավարտից տարիներ ու տասնամյակներ հետո, Հակոբյանը յուրատեսակ մարտեր էր մղում ռազմաճակատի տարբեր հատվածներում, թշնամու խոր թիկունքում, ռազմագերիների ճամբարներում: Նա դժվարությամբ և համբերատարությամբ որոնում, գտնում, ու ընթերցողի սեղանին էր դնում հայ ժողովրդի անկոտորում շատ զավակների ողիսականը:

Այդ գրքերը ջերմորեն են ընդունվել ընթերցողների կողմից, բարձր են գնահատվել մամուլում: Նա թարգմանել և առանձին հրատարակել է Ա.Բեգիմենսկու, Ի. Իսբախի և Մ.Նաումովի գրքերը:

1946-ից, ավելի քան 25 տարի, աշխատել է մամուլում՝ շրջանային թերթի գրական աշխատողից հասնելով հանրապետական թերթի խմբագրի տեղակալի, «Խորհրդային Հայաստան» թերթի և Հայկական հանրագիտարանի պատասխանատու քարտուղարի պաշտոններին:

1969 – 1973թթ. եղել է ՀՍՍՀ ԳԱ «Լրաբերի հասարակական գիտությունների» ամսագրի պատասխանատու քարտուղարը, իսկ 1973-ից՝ ավագ գիտաշխատող Հայաստանի ԳԱ պատմության ինստիտուտում : 1974-ին «Գրիգոր Մսերյանը և նրա «Մետեորա» հանդեսը հայ լուսավորական շարժման մեջ» թեմայով դիսերտացիա է պաշտպանել և ստացել պատմական գիտությունների թեկնածուի աստիճան: 1977-ին հրատարակել է «Մետեորա» հանդեսին նվիրված արժեքավոր մենագրությունը. «Արևելք» և «Արևմուտք» (1980թ.), «Դալիկ» (1983թ.) հանդեսների գիտական անոտագրված մատենագիտությունները (հեղինակակից)՝ Ժենյա Ծերունյան):

Միքայել Հակոբյանի կյանքի թելը անժամանակ կտրվեց 1983թ. դեկտեմբերի 25-ին: Գրողի, ժուռնալիստի, գիտնականի նրա գրիչը արգասավորվել է ազնիվ աշխատասիրությանը, ինչպես մամուլում, այնպես էլ հայ մամուլի և հրապարակախոսության պատմության գիտական լուսաբանման ասպարեզում:


Հետմահու տպագրվել են նրա «Զմյուռնահայ պարբերական մամուլը 1839 – 1860թթ.» (1984թ.) և 1861 – 1880թթ. (1987թ.) երկու գրքերով աշխատությունները:

Հայ ականավոր խմբագիր-հրապարակախոս, արևմտահայ նշանավոր հասարակական գործիչ Ստեփան Ոսկանյանի կյանքին և գործին նվիրված սույն մեծածավալ աշխատությունը տպագրության է հանձնվել դեռևս 1993 թվականին: Եվ միայն այժմ, մեզ հնարավորություն ընձեռվեց «Գիտություն» հրատարակչության սիրահոժար աջակցությամբ ընթերցողին ներկայացնել ազնիվ հայրենասերի բուռն գործունեությունը Փարիզում, որտեղ ապրել և ստեղծագործել է շուրջ քսան տարի՝ մշտապես կապված մնալով հայ իրականության ու գաղթօրհանների հետ, վերապրելով հայության հոգսերն ու ճակատագիրը:

Սույն մենագրությունը, հուսով ենք, կօգնի ընթերցողին ավելի մոտիկից ծանոթանալ Ստեփան Ոսկանյանի հրապարակախոսությանը, հանդեսներում հրապարակված նյութերի գիտական մեկնաբանությանը, որոնք գրքում շարադրված են բավական հանգամանորեն:

ԺԵՆՅԱ ԾԵՐՈՒՆՅԱՆ





ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայ հրապարակախոսության ընդհանուր պատմությունը տակավին խոպան է. չունենք դեռևս քիչ թե շատ արժեքավոր որևէ ուսումնասիրություն, որ գաղափար տա մեր հրապարակախոսական մտքի անցած ուղու մասին՝ սկսած «Ազդարարից»: XVIII դարի վերջից, «Ազդարարի» հետ միասին ու նրա էջերում ծնունդ առած հայ հրապարակախոսությունն ուղեկցել է մեր ժողովրդին՝ ամենօրյա ու գործնական մասնակցություն ունենալով նրա մղած թեժ պայքարին սոցիալ-տնտեսական ու քաղաքական բոլոր ասպարեզներում: Հայ հրապարակախոսությունն այդ իմաստով հայ ժողովրդի պատմության ուղղակի արտացոլումն է՝ նրա գրեթե բոլոր ելևէջներով:

Ինչպես անհնար է առանց հայ մամուլին դիմելու կերտել հայ ժողովրդի վերջին՝ ավելի քան 180 տարիների պատմությունը, այնպես էլ հնարավոր չէ առանց հայ հրապարակախոսությանն ու հրապարակախոսներին դիմելու կերտել նրա գաղափարական կյանքի, հայ հասարակական մտքի պատմությունը:

Վաղուց գիտակցված այս ճշմարտությանն այսօր հրամայական պահանջ է առաջադրվում՝ ընդհուպ մոտենալ հայ հրապարակախոսության երախտավորների գործունեության լիամփոփ ուսումնասիրությանը և աստիճանաբար հող նախապատրաստել նրա ամբողջական պատմության ուսումնասիրության համար:

Հայ մամուլի պատմության ուսումնասիրությանը զուգահեռ, սկսած անցած դարի վերջերից, քիչ քան չի արվել առանձին հրապարակախոսների գործունեությունն առանձին տպագիր օրգաններում կամ այս ու այն ժամանակահատվածում լուսաբանելու համար: Սակայն ամբողջական ուսումնասիրություն, մեկ կամ երկու բացառությամբ հանդերձ, դեռևս չի նվիրվել մեր ականավոր հրապարակախոսներին, նրանց, ովքեր իրենց գործունեությամբ հայ հասարակական մտքի պատմության մեջ

և մեր ժողովրդի գաղափարական կյանքում բնավ նվազ դեր չեն կատարել, քան այլ բնագավառների նշանավոր գործիչները, ճիշտ այնպես, ինչպես փոքր չէր այս կամ այն պարբերականի դերը հասարակական ընդհանուր առաջադիմության գործում:

Ստեփան Ռսկանյանը (Ռսկան) հայ ականավոր հրապարակախոսներից մեկն էր և իր գործունեությամբ, առաջադիմական-դեմոկրատական իր հանդեսներով՝ «Արևելք» և «Արևմուտք», 1850 – 1860-ական թվականներին հիմնարարական դեր է խաղացել հայ մամուլի ու հրապարկախոսության, ինչպես նաև հայ հասարակական մտքի զարգացման պատմության մեջ:

Ո՛չ Ռսկանյանը և ո՛չ էլ նրա հանդեսները մինչև այժմ քիչ ուշադրության չեն արժանացել: Նրանք հիշատակվել են մեր լավագույն հրապարակախոսների ու պարբերականների շարքում, ժամանակի մամուլի էջերում նրանց առանձին հոդվածներ են նվիրվել: Կան նաև ուսումնասիրություններ, որոնցում նրանք ներկայացվել են առանձնահատուկ սիրով, ինչպես և որոշ մեծագրություններում քննվել են հրապարակախոսի գործունեությունը, նրա հանդեսները: Մակայն այդ աշխատանքներն առանձին-առանձին և նույնիսկ իրենց ամբողջության մեջ լրիվ ու համակողմանի գաղափար չեն տալիս Ստ. Ռսկանյանի կյանքի, ծավալած գաղափարական գործունեության, համակողմանի հրապարակախոսության, նրա ընդհանուր աշխարհայեցության, ինչպես նաև նրա խմբագրած հանդեսների ընդհանուր բովանդակության, պրոպագանդած սկզբունքների, արժարժած հարցերի, բուն իսկ պարբերականների պատմության մասին:

Մասնավորապես հպանցիկ ուշադրություն է դարձվել հայ մտավորականների, հատկապես հեղափոխական-դեմոկրատ Միք. Նալբանդյանի հետ Ռսկանյանի ունեցած կապերին ու առնչություններին, նրա մղած պայքարին, այն որոշիչ նշանակությունը, որ ունեցել են նրա հանդեսները հայ դեմոկրատական մտքի լինելության պայքարում: Ավելին. ուսումնասիրողների կամքից անկախ, ստույգ ասած՝ նյութերի բացակայության պատճառով, ականավոր հրապարակախոսի գործունեության 60-ական թվականների ժամանակահատվածը գրեթե ամբողջությամբ մնացել է անհայտ, նույնիսկ փորձեր են արվել այդ տարիների նրա հրապարակախոսությունը որակելու իբրև հետըն-

թաց, մինչև անգամ պահպանողական: Փորձ չի արվել ինչ-որ չափով վեր հանել նաև Ոսկանյանի կյանքի ու գործունեության երկրորդ կեսը՝ սկսած 1869-ից, երբ նա, թեև մեկուսացած հայ կյանքից, շարունակում էր թերթ հրատարակել, նույնիսկ միջամտում էր գաղթօջախի մտավոր ընթացքին:

Ոսկանյանի դիմագիծն, իհարկե, չափազանց բարդ է, իսկ նրա ընդգրկումն՝ անհամեմատ լայն, որպեսզի կարելի լինի միանգամից պարզաբանել ինչպես այդ, այնպես էլ բնականաբար ծնվող բազաթիվ այլևայլ հարցեր: Այսօր էլ Ոսկանյանի կյանքի շատ էջեր և գործունեության բազմաթիվ հանգույցներ մնում են ժամանակի քողով սքողված. արժեքավոր բավականաչափ նյութեր, որոնք անշուշտ պահպանվում են զանազան արխիվներում, դեռևս մատչելի չեն:

Այդուհանդերձ հրապարակում եղած նյութերը, մասնավորապես նրա հանդեսների հավաքածուները, որոշ չափով նաև վերջին շրջանում ի հայտ բերված աղբյուրները, թույլ են տալիս ամբողջական հայացք ձգել Ոսկանյան խմբագիր-հրապարակախոսի անցած ուղու, ծավալած գործունեության, նրա գաղափարախոսության վրա, քննել «Արևելք» և «Արևմուտք» հանդեսների առավել ամբողջական դիմագիծը՝ այն միջավայրում, երբ գործում էր հրապարակախոսը, և հրատարակվում էին նրա պարբերականները: Նման փորձ ձեռնարկելով նախապես նկատի ենք ունեցել, թե ամեն դեպքում չէ, որ հաջողությունը կուղեկցի մեզ, բայց և լիահույս ենք, որ այս գործի թերի էջերը կլրացվեն հետագա ուսումնասիրություններով, նոր որոնումներով ու առավել համակողմանի քննություններով:

ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՄԻՋՎԱՅԻՐԸ (1825 – 1901)

Ուսումնասիրողի ձեռքի տակ չկա որևէ լիարժեք ու ամբողջական աղբյուր Ոսկանյանի կյանքի ուղեգիծը վերարտադրելու, նրա գիտական կենսագրությունը շարադրելու համար: Նա ինքը որևէ առիթով չի ուրվագծել իր ապրած ամբողջական ուղին, բայց այս կամ այն հոդվածում թողել է ինքնակենսագրական որոշ նշումներ, հաղորդել է առանձին փաստեր, որոնք ամբողջապես վերցրած պատկերացում են տալիս նրա կյանքի այս կամ այն դրվագի մասին:

Այդ նշումներն ու փաստերն առաջնային նշանակություն ունեն հրապարակախոսի կյանքն ու կենսագրությունը քիչ թե շատ լիամփոփ ուրվագծելու համար: Դրանց ավելանում և նշանակալի չափով լրացնում են այն կենսագրականները, որոնք հրատարակվել են մամուլում կամ առանձին հրապարակախոսություններում: Շատ թերի լինելով հանդերձ, այդ կենսագրականները ամփոփում են Ստ. Ոսկանյանի կյանքի գլխավոր դրվագները, կենսագրական կարևոր տեղեկություններ են հաղորդում, նշում են նրա գործունեության հիմնական ոլորտները:

Անթերի չեն այդ աղբյուրները: Նույնիսկ միասին վերցրած դրանք ոչ միայն լիարժեք չեն լուսաբանում Ոսկանյանի կենսագրությունը, այլև բաց են թողնում հրապարակախոսի կյանքի սկզբունքային նշանակություն ունեցող ժամանակահատվածները: Դրա, ինչպես և այլ մյուսերի բացակայության հետևանքով այսօր հնարավոր չէ առանց ընդհատումների շարադրել Ոսկանյանի կենսագրությունը: Նրա կյանքի շատ, նույնիսկ ընդարձակ տարեշրջաններ մնում են գրեթե անհայտ կամ լրացվում են մասնակիորեն, ենթադրություններով:

Հակառակ դրան, Ոսկանյանի ինքնակենսագրական հիշատակությունները, վերոհիշյալ մյուսերը, մասամբ նաև մեզ հասած հատուկենտ վավերագրերը թույլ են տալիս ընդհանուր գաղափար տալ Ոսկանյանի անցած կենսուղու մասին՝ նրա կյանքը

դիտարկելով իր միջավայրի ու ժամանակի մեջ: Դ-ա կօզնի նրա գործունեության և հրապարակախոսության առավել լայն քննության ու համակողմանի ըմբռնմանը, դրանց ելևէջների պարզաբանմանը:

Ոսկանյանի տոհմաճյուղի, նույնիսկ ընտանիքի մասին որևէ տեղեկություն չի հաղորդվում, մինչև անգամ հայտնի չեն նրա հայրանունը, ծնողների զբաղմունքը, պապենական հայրենիքը¹: Հայտնի է միայն, որ աղքատ ընտանիքի զավակ էր, ուներ երկու եղբայր՝ Հակոբ և Արտաշես, որոնք գործում էին իրենց ծննդավայրում՝ Չմյուռնիայում:

Հակոբ Ոսկանյանը, որին չպետք է շփոթել նույնանուն հայտնի մանկավարժ, ստեղծագործող, Կ.Պոլսում ապրած և մինչև մեր դարի սկիզբը գործած, ականավոր քանդակագործ Երվանդ Ոսկանի հոր՝ Հակոբ Ոսկանի (1824 – 1907) հետ², հավանաբար կանոնավոր կրթություն էր ստացել: Նա Չմյուռնիայի Մեսրոպյան վարժարանում «քանի մը մանր ուսմունքներե զատ գրաբար քերականության դաս կավանդեր»³, դպրոցական միջավայրում հայտնի էր «Եղբայր Հակոբ» անվանումով: Գրաբար դասավանդելով հանդերձ, նախանձախնդիր էր մաքուր աշխարհաբարի: Մամուլում նա հանդես էր գալիս քերթվածներով: Նրան է պատկանում հայ իրակաւնության մեջ առաջին անգամ «Մարտելիեզի» թարգմանության և հրատարակության

¹ Միայն մի տեղ Ոսկանյանը վկայում է, որ Երվանդի կապ ուներ հայտնի Նուպարյան գերդաստանի հետ. նրա մայրը Նուպարյան տոհմից էր (տե՛ս «Արևմուտք», էջ 34 և 130): Հայտնի է, որ Նուպարյան գերդաստանը սերվել է Դավիթ Բեկի զինակից Թորոս իշխանի մահից հետո փոխարինած Նուպար գորավարից, որ գերդաստանով փոխադրվել էր Չմյուռնիա: Այսպիսով կարելի է ասել, որ Ոսկանյանի նախահայրենիքը մոր կողմից եղել է Չանգեզուրի Չավնդար գավառը (այսօր՝ մասամբ Դափանի շրջանը): Տե՛ս մեր հոդվածը «Նախափորձ Նուպարյան տոհմագրության» (ԲՀԱ, 1983, N 2, էջ 123 – 140):

² Տե՛ս *Ս.Շրիլյան*, Հայ նոր գրականության ժամանակագրություն, 1801 – 1850, Երևան, 1973, էջ 131, որտեղ Կ.Պոլսում գործած մտավորականի ծննդավայրը սխալմամբ համարվում է Չմյուռնիան, որով տեղիք է տրվում Չմյուռնիայում գործած Հակոբ Ոսկանին նույնացնելու Կ.Պոլսում ապրած Հակոբ Ոսկանի հետ:

³ *Ս.Նուպարյան*, Իմ մանկական հիշատակներեն, տե՛ս «Արևելյան մամուլ», 1893, էջ 373 և հետո:

պատիվը՝ դեռևս 1854թ. Չմյուռնիայում հրատարակվող «Արվի սրարատյան» պարբերականում¹:

Անհայտ գործիչ չէր մաս Արտաշես Ռսկանյանը, որը ստացել էր բժշկական կրթություն և ապրում, գործում էր Չմյուռնիայում ու Կ.Պոլսում:

Ռսկանյան ընտանիքի այդ երեք զավակների՝ Ստեփանի, Հակոբի և Արտաշեսի գործունեությունը որոշ բան ասում է. հավանաբար ընտանիքում հարզի էր գիրն ու գրականությունը: Այդ մասին է ասում մաս այն վկայությունը, թե նրանց հորեղբայրը դրամական աջակցություն է ցույց տվել երեք եղբայրներից ավագին՝ Ստեփանին, ուսման մեկնելու Փարիզ: Նույն վկայությունից դատելով, Ռսկանյանի ընտանիքը, թեև բարեկամությամբ կապված էր Նուպարյան ունևոր գերդաստանի՝ հետագայում հռչակված Նուպարի և Առաքելի, իսկ այնուհետև Պողոս Նուպարի ընտանիքների հետ, գտնվում էր սուղ պայմաններում:

Դ.ա. սակայն, չի խանգարել, որ Ռսկանյանը դպրոց հաճախի, իսկ հետագայում հիմնավոր կրթություն ստանա, դառնա իր ժամանակի զարգացած գործիչներից մեկը: Բանն այն է, որ զմյուռնահայ գաղթօջախի հասարակական հաստատությունները, գաղութի առանձին մեծահարուստների աջակցությամբ, օգնության ձեռք էին պարզում աղքատ ընտանիքների զավակների կրթությանն ու դաստիարակությանը, բավարար չափով հոգում էին 1799-ին հիմնադրված Մեսրոպյան ազգային վարժարանի, ապա և հետագայում բացված Սարգսյան՝ 1830-ականից Հռիփսիմյան իգական դպրոցի հոգսերը: Միաժամանակ այլ գաղթօջախների օրինակով, այդ հաստատությունները և մշակութային ընկերությունները ազգային միջոցների հաշվին առավել ընդունակ սաներին ուսման էին ուղարկում եվրոպական քաղաքները, մասնավորապես Փարիզ՝ սկսած XIX դարակեսերից: Այդ ուղղությամբ որոշ քայլեր էին կատարում մաս գաղթօջախի մեծատունները, որոնք ստանձնում էին առավել աչքի ընկած դպրոցավարտների հովանավորությունը¹:

¹ Տե՛ս մեր հոդվածը՝ «Չմյուռնահայ» «Մարտեիկզը» («Սովետական գրականություն», 1974, N 3, էջ 124 – 128): Մ. Ն. Հակոբյան, Չմյուռնահայ պարբերական մամուլը (1839 – 1860), 1984, էջ 180 – 215:

Ե՞րբ և քանի՞ տարի է սովորել Ոսկանյանը Ջմյուռնիայի հայկական Մեսրոպյան վարժարանում: Պարզ չէ: Ազգրիտ հայտնի է միայն, որ Փարիզ է մեկնել 1846-ին՝ Մեսրոպյանի դասընթացն ավարտելուց հետո, երբ տակավին տասնիննամյա երիտասարդ էր: Այն տարիներին, որ նա սովորում էր վարժարանում, Ոսկանյանն, անշուշտ, շատ բան է տեսել ու հասկացել, ապրելով գաղթօջախի հասարակական կյանքով: Ոսկանյանի պատանեկության ու երիտասարդական տարիներին զմյուռնահայ գաղթօջախի կյանքը հազեցած էր հասարակական այնպիսի իրադարձություններով, որոնք չէին կարող կնիք չդնել նրա հասարակական խառնվածքի վրա: Եվ առհասարակ 1830-ական թվականներից սկսած, աճող երիտասարդության համար զմյուռնահայ գաղթօջախում առկա էին օբյեկտիվորեն նպաստավոր պայմաններ, որոնք նախահիմք էին ստեղծում ընթանալու լուսավորական-դեմոկրատական ուղիով, զարգացնելու ազգային մշակույթը:

Ջմյուռնիայի հայկական գաղթօջախին նախ բնորոշ էր ազգային բարձր ոգին, ազատասիրական ձգտումները, որոնց արմատները գալիս էին գաղթօջախում հանգրվանած գանգավածների բնօրրաններից՝ Կիլիկիայից ու Արարատյան դաշտավայրից, Սյունիքից ու մայր երկրի այլ շրջաններից, որտեղից նրանք բռնագաղթի էին ենթարկվել:

Դարեր են ընկած իրադարձությունների միջև, որոնք հայության պատառիկները պոկել են հայրենի հողից և նետել Էգեյան ծովափը: Դարեր էին բաժանում զմյուռնահայության խճանկարը կազմած այլևայլ բեկորներին՝ կիլիկիացի, դարաբաղցի, երևանցի, նախիջևանցի, դափանցի, մեղրեցի, աշտարակցի և այլն: Շուրջ երեք հարյուր տարում՝ XVII – XIX դդ. ընթացքում, երբ Ջմյուռնիայի դարպասները թշնամին միայն մի անգամ էր բախել (1694-ին), զմյուռնահայության ընդհանուր թիվը տատանվում էր 8-12 հազարի միջև¹: Բազմաշերտ էր գաղթօջախի հայությունը, բայց ապրում էր հայկական կյանքով, հայ

¹ Յու. Պետրոսյանի և Ա. Յուսուպովի գրքում ("Измор", М., 1973, стр. 20.21.30) նշվում է, որ 1717թ. հայերի թիվն Իզմիրում կազմում էր 200, իսկ 1830-ական թվականների վերջերին՝ 10.000, 1870-ականին՝ 6.000, մեր դարի սկզբին՝ 15.000:

կենցաղով ու բարքով, թեև զբաղմունքով տրոհված, շահերով հակադիր, ապրուստով ծայրաբևեռ: Ամիրան ու խոշոր հողատերը, անվանի վաճառականն ու առևտրականն ապրում էին մանր խանութպանի ու օրավարձով ապրող հայ աշխատավորի, շարքային արհեստավորի ու հողագործի կողքին: Հաստատված լինելով միևնույն ընդհանուր թաղամասում, գտնվելով այլակրոն միջավայրում Չմյուռնիայի հայությունը կազմում էր բազմազգ մերձծովյա քաղաքի գրեթե ինքնուրույն մի բլիշլը:

Իր կողմնորոշմամբ զմյուռնահայությունն էջմիածնական էր, մինչև ռուս-թուրքական պատերազմը Մայր Աթոռի թեմերից մեկը Չմյուռնիան էր՝ տերունի վիճակ, շրջակա հայաբնակ վայրերով:

Մի երկարատև դարաշրջան զմյուռնահայության հասարակական ու հոգևոր կյանքի կենտրոնակետը եղել է համայնքի կրոնական առաջնորդարանը ու նրա հիմնական հենարանը՝ Ս.Ստեփանոսի տաճարը, որը փոխարինում էր 1688-ի հուլիսին տեղի ունեցած մեծ երկրաշարժից կործանված Հովհակիմ-Աննա տաճարին, և որն իր հերթին, նույնպես երկրաշարժից, կործանվել էր 1778-ին ու վերստին կառուցվել, շքեղացել: Այն 1845-ի մեծ հրդեհից հետո վերակառուցվելով գերազանցում էր քաղաքի 11 եկեղեցիներին: Համայնքի հայությունը գրեթե անմնացորդ փարված էր հոգևոր առաջնորդարանին, որ տնօրինում էր գաղթօջախի համայն կյանքը: Այնտեղ հաստատված բարձրաստիճան կղերականությունը սերտաճած լինելով գաղութի երևելիների հետ և հենվելով նրանց վրա, գլխավորում էր համայնքի գործունեությունը: Հայոց կրոնն ու եկեղեցին, պատմական ճակատագրի հետևանքով դարձել էին զմյուռնահայության հոգևոր ու ազային փրկության ապաստանը: Նրանց կողքին ու հենց նրանց հովանու տակ, բայց համայնքի ընդհանուր ջանքերով, հիմնվեց նաև մի հոգևոր ու ազգային կենտրոն՝ Մեսրոպյան վարժարան, որին էլ վերապահված էր աստիճանաբար ուժեղացող դեր խաղալու համայնքի կյանքում ու սլատմության մեջ՝ ամբողջ XIX դարի ընթացքում:

Հատկանշական է, որ թուրքական մամուլի ծննդավայրը դարձել է հենց Չմյուռնիան, որտեղ հաստատված ֆրանսիական գաղթօջախում, 1824-ի հունվարից, սկսեց հրատարակվել

առաջին թերթը բուն թուրքական հողի վրա՝ «Իզմիրցի» («Սմիր-նենեն»), որը տարեվերջից շարունակվեց «Արևելյան մեկնաբան»)
«Սպեկտատեոր դը Լ' օրիան», իսկ 1828-ից՝ «Իզմիրյան
փոստատար» («Կուրե դը Սմիրն»), դարձյալ ֆրանսերեն։
Զնյուռնիայում հռչակված ֆրանսիական առևտրական-ժուռ-
նալիստ Ալ. Բլակին (Բլաք բեյ) էլ հենց վիճակված էր 1831-ին
հիմնել թուրքական առաջին պաշտոնական մարմինը, որով նա
խթանեց թուրքերեն առաջին պարբերականի՝ «Թագվիմի
Վեգայի» հիմնադրմանը 1831-ի նոյեմբերի 1-ից։ Այս պաշտո-
նաթերթը 1832-ից սկսեց հրատարակվել նաև արաբերեն,
հունարեն և հայերեն (նախ «Թագվիմի վագայի լրո գիր», ապա
«Լրո գիր մեծի տերության օսմանյան» անուններով՝ մինչև 1833-
ը, երբ հայերեն հրատարակությունը դադարեց)։

Գրելով այս մասին, ինչպես և մատնանշելով հետագայում՝
1840 – 1841թթ. կատարված փորձերը, Ալ. Չըրչըլի սկսած թուրքե-
րեն և հայատառ թուրքերեն «Ճերիտեի հավատեսները», ապա
և անդրադառնալով օսմանյան պաշտոնաթերթի մաս կազմած
«Հայտարար գիր լրո մեծ տերության» ու վերանվանված «Սուր-
հանդակ բյուզանդյան լրագիր տերության օսմանյան» լրագ-
րերին, Ա.Ալպոյաճյանը նկատում է, որ «ասոնք բնավ ազգային
գույն ու դրոշմ չունեին, պետական կարգադրությանց, շնորհա-
բաշխությանց ու որոշմանց հայտարարությունը եղող լրագրին
պարզ թարգմանությունը ըլլալով»¹։ «Բուն ազգային մամուլը, –
իրավամբ նշում է պատմաբանը, – միայն 1840-ին իրեն համար
նպատակավոր գետին պիտի գտնար կազմավորելու և ապրելու
համար թյրքահայոց մեջ»։ Բայն թուրքական մամուլի հիմնումից
հայ մամուլի հիմնումը Թուրքիայում շատ չի ուշացել՝ հազիվ տաս
օրով։ Նույն՝ 1840-ին, «Արշալույս արարատյանի» հրատարակ
գալուց 10 օր առաջ՝ օգոստոսի 1-ին է միայն հրատարակ եկել
«Նորությունների լրատուն», որ հիմնել ու հրատարակել է
օտարերկրացի²։

¹ Ա.Ալպոյաճյան, Ազգային սահմանադրությունը, իր ծագումը և կիրառությունը
(տե՛ս «Ընդարձակ օրացույց ս. Փրկչյան հիվանդանոցի», Կ.Պոլիս, 1910, էջ 76 –
528), էջ 256։

² Թուրքիայում առաջին անգամ պարբերական են հրատարակել ֆրան-
սիական դեսպանատան աշխատողները։ Դեռևս 1794թ. ֆրանսիական կառավա-

Այդ վիճակը, երբ Թուրքիայի մշակութային կյանքին, տվյալ դեպքում մամուլի զարգացմանը, տեր ու տնօրեն էին օտարերկրացիները, դեռ երկար շարունակվեց. նույնիսկ 1850-ին Ստամբուլում լույս տեսնող 13 թերթերից 11-ը հրատարակվում էր օտար լեզուներով և օտարազգի ժուռնալիստների ձեռքով՝ ութը ֆրանսերեն ու իտալերեն, մեկական հունարեն, հայերեն և բուլղարերեն: Նույնն էր պատկերը նաև Ջմյուռնիայում, որտեղ հրատարակվող հինգ թերթերից երկուսը ֆրանսերեն էր, մնացածը՝ հունարեն, հայերեն, հրեերեն¹: Թեկուզ միայն այս փաստերից ակնառու է, թե օտարազգի գործիչները որքան կայուն և որոշիչ դեր էին կատարում Թուրքիայի առանձին քաղաքներում և ամբողջ երկրի մշակութային կյանքում, եթե նույնիսկ նրանք կորցնում էին իրենց ազգային դիմագիծը, դառնում էին աչքի ընկնող թուրքոֆիլ, այդպիսին էր դարձել հենց «թուրքական ժուռնալիստիկայի հայր» Ալ.Բլակը, այդպիսին էր նաև ավելի քան երեք հարյուր տարով ուշացած թուրքական բուն գրատպությունը սկզբնավորող և շուրջ 13 տարի միայնակ տնօրինող Իբրահիմ Մութտեֆերիկը, որը ծագումով հունգարացի էր, Տրանսիլվանիայից՝ ծնված մոտավորապես 1674թ., վախճանված 1745-ին: Գերվելով թուրքերի կողմից ու իբրև ստրուկ վաճառվելով, նա ստացել է թուրքական անուն, երկար տարիներ գտնվում էր թուրքական բարձրաստիճան ծառայության մեջ, եղել

րության որոշումով նրանք ամիսը երկու անգամ հրատարակում էին «Նորությունների բյուլետեն» («Բյուլետեն դե Նուվե»): Նրա նպատակն էր «Ստամբուլում ապրող ֆրանսիացիներին տեղեկացնել ֆրանսիական հանրապետության գործերի մասին, ինչպես և թուրքերին հաղորդել օգտակար տեղեկություններ Եվրոպայի վերաբերյալ»: Այդ պարբերակահանի, մինևույն նպատակով, 1896-ին աշխանը փոխարինել է «Ֆրանսիական Կոստանդնուպոլսական թերթը» («Գազետ Ֆրանսեզ դե Կոստանտինուպոլ»), որը նույնպես գուտ ֆրանսիական պարբերական էր: Պարբերական թերթիկներ էին հրատարակում նաև Եգիպտոսում գտնվող ֆրանսիական իշխանությունները (1798)՝ միաժամանակ փորձելով սկզբնավորել արաբերեն մամուլի հրատարակությունը: Ավելի ուշ՝ 1811 – 1812թթ. Կ.Պոլսի ֆրանսիական դեսպանատանը նույնպես պարբերական թերթիկներ էր հրատարակում: Այդ բոլոր պարբերական հրատարակությունները որևէ առնչություն չունեին Թուրքիայի պետական ու հասարակական կյանքի հետ և ոչ մի կապ չունեն թուրքական մամուլի հետ (Ո. *Желтяков*, Печать в общественной и политической жизни Турции, М., 1972, стр. 56):

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 62:

էր մի շարք երկրներում, գիտեր վեց լեզու: 1727թ. նա, ստանալով թուրքերեն լեզվով գրքեր տպագրելու իրավունք, հիմնել է տպարան՝ մասամբ սարքավորումներ գնելով հայ տպագրիչներից, և 1729-ի հունվարի 31-ին 1000 օրինակ տպաքանակով հրատարակել առաջին թուրքերեն գիրքը՝ արաբերեն-թուրքերեն բացատրական բառարանը: Մինչև 1742թ. նրան հաջողվեց հրատարակել 17 երկ՝ 23 գրքով՝ ընդամենը 12,5 հազար տպաքանակով: Ըստ որում դրանք աշխարհիկ բովանդակության գրքեր էին և մեծապես նպաստել են թուրքերի լուսավորությանը¹:

Հիշենք, որ հայ գրքի տպագրությունը հենց Թուրքիայում սկզբնավորվել է 1567-ին՝ Ապգար դայրի ջանքերով, ապա փոքր ընդհատումից հետո վերսկսվել Երեմիա Չելեբի Քեոմուրճյանի շնորհիվ: Մինչև թուրքերեն գրքի տպագրության թվականը՝ 1567 – 1729-ին Կ.Պոլսում հրատարակվել էր արդեն հայերեն ավելի քան 100 անուն գիրք, իսկ առ 1742-ը՝ 161անուն գիրք: Դարավերջին այդ թիվը պիտի հասներ 307-ի², իսկ առհասարակ հայ տպագիր գրքերի թիվը՝ 960-ի³:

Ընդհանրացնելով մեր խոսքը կարող ենք արձանագրել, որ գրատպությունն ու պարբերական մամուլը թուրքական մշակույթի ոչ առաջին և ոչ էլ վերջին ասպարեզներն էին, որտեղ հիմնարար դեր էին կատարում այլագգիները: Արվեստի, առավել ևս արհեստի շատ ու շատ բնագավառներում Օսմանյան կայսրության ազգային փոքրամասնությունները, նրանց շարքում նաև հայերը, էական ավանդ էին բերում: Ոչ առանց պայքարի ու դիմադրության տեղի ունեցող այդօրինակ ներդրումները ծավալ ու նշանակություն էին ստանում բնավ ոչ միայն նախաձեռնողների եռանդի, այլ հատկապես այն խելամիտ քաղաքականության շնորհիվ, որ թուրքական գործիչներն ու իշխանությունները վարում էին՝ նպատակ ունենալով այլագգի գործիչներից ու այլ ազգերից քաղել հնարավոր ամեն ինչ, որ կարող է նպաստ բերել

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 20 – 31:

² Տե՛ս *Ջնարիկ Կոկոբյան*, Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում, Երևան, 1964, էջ 107 – 132:

³ «Հայ հնատիպ գիրքը», մատենագիտական ցանկ (1512 – 1800), Երևան, 1963, էջ 10:

թուրքական մշակույթի տեղաշարժին. չունենալն ամոթ չէ, չունենալն է ամոթ:

Հայ գաղթօջախի հինավուրց գոյության, նրա կայուն և համեմատաբար բարգավաճող դրությունն իրական պայման էր հայ գրչության, գրատպության, կրթական գարծի, ինչպես նաև հայ գրականության ու պարբերական մամուլի զարգացման համար:

Հավանաբար Չմյուռնիայում հայ տպագրությունը և կրթական գործը սկզբնավորվել են միաժամանակ կամ ժամանակագրական ոչ մեծ ընդմիջումով՝ XVIII դարի կեսերին:

Հակառակ կրթական գործի անընդմեջ գոյատևմանն ու աստիճանական զարգացմանը, հայ տպագրությունը Չմյուռնիայում սկզբնավորվելուց և քառամյա ժամանակամիջոց տևելուց հետո ընդհատվել է և վերսկսվել շուրջ յոթ տասնամյակ անց:

1830 – 1840-ական թվականներին հայ տպագրության Չմյուռնիայում ստացած ծավալի այն ուրվագիծը, որ տալիս է Ա.Ալպոյաճյանը¹, թույլ է տալիս եզրակացնել, որ գաղթօջախը այս բնագավառում ևս հաջողությամբ մրցում էր այլալեզու և հենց թուրքերեն տպագրության հետ:

Կրթական գործի բավարար դրվածքի, քաղաքի միջազգային կապերի ու կյանքի, առավել ևս գաղթօջախի որոշակի բարեկեցության, ինչպես և քաղաքում հրատարակվող օտարալեզու պարբերականի խթանիչ առկայության շնորհիվ հրամայական դարձավ բուն ազգային պարբերական հիմնելու, տպարաններ հաստատելու, գրատպություն զարգացնելու պահանջը, որ լավ և ժամանակին հասկացավ Վանանդեզու և Փափազյանի սնած սերունդը: Իրավացի է Ա.Ալպոյաճյանը, երբ նկատում է, թե «1840-են հետո Իզմիրի հայոց մեջ կսկսի նոր շարժում մը, Միրզա Վանանդեցիի մարգած և դաստիարակած սերունդը այլևս գործոն կյանքի մեջ տեղ մը գրավել սկսած էր... Եվ որովհետև իրապես կրթված սերունդ մը, ազգային ոգով ներշնչված մարդիկ, արդեն հասած էին Իզմիրի մեջ, հետևաբար ընդհանուր փափագ կար հայ լրագիր մը հիմնելու»²: Ըստ որում նա ընդգծում

¹ Տե՛ս Ա.Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 74 – 79:


² Տե՛ս Ա.Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 76 – 78:

է այդ սերնդի «ազգասիրական և հայրենասիրական» ոգին, որով ներարկվել է Մեսրոպյանում:

Այդ պահանջի ըմբռնման ու իրագործման պատիվը առաջինը վիճակվել էր տակավին քսանամյա մի երիտասարդի՝ Մեսրոպյան վարժարանի սան Գուկաս Պալղազարյանին (1820 – 1878): Նա, հիմնելով «Արշալույս Արարատյանը», երեսնութ տարի, առանց ընդհատելու իր թերթի հրատարակությունը, տոկացել է ժամանակի ու սուլքանական իրականության պայմաններում, ամբողջապես նվիրվել է թերթի պահպանությանն ու անխափան հրատարակությանը: Ի սկզբանե վերատեսուչ-խմբագիրը որդեգրել է լոյս ուղեգիծ՝ «ազգասեր բարեկամներեն բավական քաջալերություն ընդունելով»: Թերթը չուներ իր տպարանը, իսկ խմբագիրը՝ նյութական միջոցներ: Բայց Պապոյան տոհմի ներկայացուցիչներից մեկը՝ Ստեփան Պապոյանը, կալվածատեր-վաճառական, անգլիական հյուպատոսարանի թարգման, հիմնեց ոչ մեծ տպարան, որտեղ և հրատարակվում էր թերթը:

Շատ չանցած Պալղազարյանը տարանջատվում է Ստ. Պապոյանից, հիմնում տպարան և առանց ընդհատելու հրատարակում է թերթը: Տարին չբոլորած, 1845-ի հուլիսին, հրդեհը լավում է թերթի տպարանը՝ խնայելով միայն մետաղյա մամուլները, բայց խմբագիրը չի վիստվում: Նա «Արշալույս Արարատյանի» հրատարակությունը մի կերպ շարունակում է, և, անշուշտ մեծատունների ձեռնտվությամբ, հիմնում է սեփական տպարան՝ միմիայն թերթի համար, որը գոյատևում է մինչև 1886թ.:

«Արշալույս Արարատյանը», որ լայն տարածում ուներ հայաշատ վայրերում, խթանիչ դեր է խաղացել գաղթօջախի ընդհանուր և մշակութային կյանքում, մասնավորապես մամուլի ասպարեզում՝ միաժամանակ լինելով զմյուռնահայության եզակի տարեգրությունը: Հենց միայն նրանով, որ թերթը առաջին համարից սկսած հրատարակվում էր աշխարհաբարով, նրա խմբագիրը հանդուզն քայլ էր անում ընդդիմանալով տիրող մտայնությանը և իշխող լեզվին՝ գրաբարին: Աշխարհաբարը դեռ գրավոր լեզու լինելու իրավունք չուներ, անմշակ էր ու անմաքուր: Դիշտ է, Չմյուռնիայում հաստատված միսիոներներն արդեն



11
905/1

առաջին փորձերն էին արել ընթերցողի հետ աշխարհաբար լեզվով խոսելու, բայց «Արշալույս արարատյանը» իրականում առաջին մասսայական հրատարակությունն էր արևմտահայերենով: Թերթի խմբագրի կողքին, անշուշտ, եղել են աշխարհաբարի ջատագովներ, նրանց մեջ նաև Ա.Փափագյանը, բայց նա պետք է ստանձներ թերթի լեզվի հոգսը՝ գիտակցելով, որ փորձության է դիմում և պիտի ընթանա գրեթե անձանոթ ուղիով:

Թերթի պատմությունը ցույց է տալիս, որ Ղ. Պալղազարյանը գիտակցաբար է դիմել աշխարհաբարին և, չնայած մեծ դժվարություններին, այս դեպքում նա անդրդվելի է մնացել՝ գրապայքարից մոտ մեկ ու կես տասնամյակ առաջ սկսելով արևմտահայերենի գործածումն ու մշակումը: Հատկանշական է, օրինակ, որ, «Արշալույս արարատյանից» հետո Կ.Պոլսում հրատարակվող Խ.Օսկանյանի թերթը 4-րդ համարից հետո սկսեց լույս տեսնել հայատառ տաճկերեն: Այդ առթիվ ազդ տպագրելով՝ Ղ.Պալղազարյանը նկատել է, թե «Մենք այ գիտենք, որ հասարակության մեծ մասի» համար հաճելին տաճկերենն է, «բայց մեր ջանքը աս պիտի ըլլա, որ կրցածնուս չափ աշխատինք աս անվայել սովորությունը անհետ ընելու մեր ազգին մեջեն... ու շատ հույս ունեինք, որ քիչ-քիչ ամենուն ընտանի կըլլա մեր աշխարհաբար լեզուն»¹: Նույնիսկ բաժանորդների սակավությունը չի ստիպել խմբագրին տեղի տալու, ինչպես դա արել է Խ.Օսկանյանը:

Այս իմաստով «Արշալույս արարատյանը» վատ օրինակ չէր հայ պարբերականների համար, իսկ արևմտահայ այդ, այսպես ասած, մայր թերթին տասնամյակներ շարունակ շատ պարբերականներ են ուղեկցել: 1843-ին հանդես եկավ նրա առաջին մրցակիցը՝ «Հայրենասեր» թերթը, որ գոյատևեց հազիվ երկուս ու կես տարի:

Մի ամբողջ տասնամյակ անցավ մինչև, որ գաղթօջախի երիտասարդությանը՝ Մեսրոպյան վարժարանի մի խումբ սաների, Տետեյան եղբայրների գլխավորությամբ, հաջողվեց հիմնել նոր պարբերական՝ «Արփի արարատյան» (1853 – 1855), որը դարձյալ «Արշալույս արարատյանի մրցակիցն էր և որին

¹ «Արշալույս արարատյան», 3 հունվարի 1841, N 15:

ևս բախտ չվիճակվեց երկար գոյատևելու: Բայց Տետեյան նորայրների առավել պատկառելի հաստատությունը՝ ուրույն տպարան-հրատարակչությունը, ընդհակառակը, գոյատևեց ավելի քան քառասուն տարի: Սկզբնավորության տարեշրջանից՝ 1853, Տետեյանների տպարանը դարձավ Չմյուռնիայի հայկական գաղթօջախը բնորոշող մշակութային մի բեղմնավոր օջախ, որն իր շուրջը համախմբելով առաջադեմ հայ երիտասարդությանը, հրատարակեց ավելի քան երկու հարյուր անուն թարգմանական և ինքնուրույն հատորներ: Դրանով այդ տպարան-հրատարակչությունն անգնահատելի ծառայություն մատուցեց արևմտահայերենի հղկմանն ու մշակմանը, խթանեց հնի թոթափմանն ու գրական ճաշակի զարգացմանը, արևմտաեվրոպական առաջադեմ գաղափարախոսության ներդրմանը հայ իրականության մեջ: Նման մի այլ հաստատություն հայ գրատպությունը դեռևս երկար ժամանակ չունեցավ:

* * *

Թուրքիայի հեռավոր ծայրամասում ընկած քաղաքի հայ գաղթօջախում տիրող իրավիճակի պատկերը թերի կլինի, եթե փոքր-ինչ մոտիկից չձանթափանք նրա ներքին կյանքին, այնտեղ գործող և տոն տվող ուժերին: Գաղթօջախի կյանքը լրիվ չափով անդրադարձել է հրապարակախոսի գործունեության մեջ. պայքարն ընդդեմ գաղթօջախի կյանքն իրենց համար ցանկալի հունի մեջ պահել փորձող մեծահարուստների ու հետադեմ ուժերի, կազմել է նրա գերագույն նպատակը: Այդ պայքարը, բխելով կոնկրետ նպատակներից և հենվելով զմյուռնահայության սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակի վրա, ի սկզբանե ստացավ համազգային բնույթ ու նպատակամղում, որով և Ռսկանյանը դարձավ համահայկական երևույթ, սակայն մշտապես կապված լինելով գոթօջախի իրականության հետ, որ նրան սնում էր նաև համընդհանուր գաղափարներով, լիցքավորում նորանոր խնդիրներով ու մղումներով:

Չմյուռնահայ գաղթօջախի պատմությունը տակավին չի ուսումնասիրված, համայնքի տարեգրությունը դեռևս կցկտուր է հայտնի, նրա սոցիալ-դասակարգային կազմը, գործող ուժերի հարաբերակցությունը, մղած տևական պայքարը բավարար

չափով չեն լուսաբանված: Առանձին ուսումնասիրություններում և լույս տեսած մեծ թվով հոդվածներում, որոնք գերազանցապես հրապարակվել են արտասահմանյան հնօրյա մամուլում, ուրվագծվում է զմյուռնահայ խաղաղ կյանքը, լավագույն դեպքում ցույց է տրվում կրոնադավանաբանական հարցերի շուրջ մղված պայքարը: Այսպիսով ստեղծվում է այն տպավորությունը, թե սոցիալ-դասակարգային առումով զմյուռնահայությունը գրեթե միատարր է եղել:

Իրականում Ջմյուռնիայի հայկական համայնքում, նրա կազմավորելու գրեթե սկզբնաշրջանում առկա էին տարբեր դասեր, որոնք գաղթօջախ էին ոտք դրել եթե ոչ միատեղ, ապա համարյա միաժամանակ: Պատերազմական իրադարձությունների հետևանքով իրենց բնօրրանը թողնել և Ջմյուռնիայի պես մի հեռավոր անկյունում ապաստան գտնել ու գոյատևել կարող էին նախ և առաջ ունևոր դասի ներկայացուցիչները՝ իշխանական տոհմից ու վաճառականական խավից: Բայց նրանց հետևող հիմնական դասը գաղթական, աղքատ կամ սակավունակ մասսան էր: Որքան էլ փոքրաթիվ էր առաջին դասը, և որքան էլ մեծ մաս էր կազմում գաղթօջախում ապաստանող ոչ ունևոր խավը, կամա թե ակամա գաղութահայ համայնքում վերականգնվում էր բնաշխարհում իշխող հարաբերակցությունը, որն աստիճանաբար ավելի ու ավելի էր պարզորոշվում և զգացնել տալիս: Ջուզահեռաբար հանդես է գալիս և իշխող դիրք ստանում եկեղեցին և եկեղեցական խավը:

Ջմյուռնահայ ունևոր դասը և հայ եկեղեցին, ինչ խոսք, ունեցել են իրենց հարստանալու աղբյուր-կալվածքները: Ուճանալու լայն ասպարեզ ունեի մանավանդ հայ վաճառականությունը: Առավել ունևոր էին նրանք, ովքեր բազմազան, ավելի հաճախ առևտրական կապեր էին հաստատել վաճառաշահ հանգույցներում, մասնավորապես Տրիեստում և այլուր: Կոնկրետ փաստեր զմյուռնահայ մեծատունների ունեցվածքի մասին, գրեթե բոլորովին բացակայում են, մամուլն այդ մասին ոչինչ չի գրել, արխիվներ չկան: Հնարավոր է, որ այդ հարցի շուրջ գաղափար տան Կ.Պոլսի, Երուսաղեմի, իսկ առավել հավաստի՝ թուրքական արխիվների նյութերը, բայց դրանք մնում են անմատչելի: Սիայն այն «առատաձեռնությունից», որ զմյուռնահայերը՝ թե՛ տեղա-

բնակները և թե՛ այլուր հաստատվածները, երբեմն հանդես էին բերում և ազգային բարերարի անուն հանում, կարելի է դատել, որ նրանք տեղ էին մեծ հարստության և ունեցվածքի, կալվածքների, կուտակած դրամի: Չմյուռնահայ բարերարները, ինչպես վկայում է պատմաբան Հ.Քոսյանը, իրենց «ստացվածոց մեկ մասը նվիրած են ազգային կարևոր հիմնարկությանց»¹: Այդտեղ էլ բերվում է բարերարների, նվիրատուների երկար ցանկը, որ ընդօրինակվել է առաջնորդական դիվանատանը պահպանված մատյանից, ուր գրառումներ են կատարվել, նախկինը մեծ հրդեհի ժամանակ հրո ճարակ դառնալուց հետո, սկսած 1850թ.: Հիվանդանոցի, առաջնորդարանի, դպրոցների կառուցում, տպարանների, գանազան տների, մթերանոցների, կրպակների, խանութների, սրճարանի, կալվածքների նվիրատվություն-այսպիսի բարերարություններ էին անում զմյուռնահայ մեծատունները գաղթօջախի համայնքի հաստատություններին: Կարելի է ասել, որ նրանք կատարում էին այն պարտքը, որ փափագում էր Մ.Նալբանդյանը՝ կարևոր տեղ տալով ունևորների աջակցությանը՝ ազգային լուսավորության ծավալման գործում:

Չմյուռնահայ ունևորների աջակցությունների շնորհիվ հաճախ հնարավոր էր դառնում իրագործել համազաղթօջախային կարևոր ձեռնարկումներ: Բայց Չմյուռնիայի հայկական համայնքում մշակութային կյանքին ավելի մեծ չափով խթանում էին այն գործիչները, որոնք մտահոգվելով հայության իրական կացությամբ, հանդես էին բերում անձնական ձեռներեցություն, համախմբում էին կրթություն ստացած անհատներին և իրենց սուղ միջոցներից մաս առ մաս հատկացումներ կատարելով հիմնում էին մշակութային ընկերություններ, ստեղծում առանձին հաստատություններ, որոնք ամբողջապես ծառայում էին հասարակայնությանը: Այդպիսի հաստատություն էր, օրինակ, «Վասպուրական» թատրոնը, ավելի ուշ ստեղծված որբանեցն ու մանկապարտեզը և մի շարք այլ օջախներ:

Այս իմաստով թերևս առավել հատկանշական է, որ երկու մտավորական՝ Ա.Բաբազյանը և Գ.Կոստանդյանը 1868-ին նախաձեռնեցին ու շուտով հիմնեցին արդի գրադարանի պես

¹ Հ.Քոսյան, Հայքի Չմիտնիա և ի շրջակայս, հ. 1, Վիեննա, 1899, էջ 284:

մի օջախ, որը ստացավ «Հայ ընթերցատուն» անվանումը: Նրա նպատակն էր զարկ տալ ընթերցասիրությանը, գիտելիքներ տարածել, ընթերցող հասարակությանը տրամադրել տարբեր լեզուներով գրքեր, հանդեսներ, թերթեր: Ընթերցատունն ուներ իր բազմաթիվ անդամ-աջակցողները, գաղտնի քվեադրությամբ ընտրվող գործադիր մարմինը, ատենապետ ու քարտուղար՝ իրենց տեղակալներով, «ազատ վիճաբանությամբ» ընդունված ու հաստատված հատուկ կանոնադրություն, ըստ որի, ի դեպ, աղքատներն ընթերցատնից կարող էին օգտվել ձրիաբար, իսկ ունևորները ոչ մեծ անդամավճարով: Այդտեղ տեղի էին ունենում նաև հրապարակային դասախոսություններ՝ ամենատարբեր թեմաներով: Անդամագրությամբ հավաքվող միջոցները տրամադրվում էին ընթերցատանը, գրականությունն ու մամուլը ձեռք էր բերվում հիմնականում նվիրատվությամբ: Ընթերցատունը 1896-ին ունեցավ նաև իր հատուկ շենքը՝ կառուցված ազգային հողատարածության վրա՝ երկու ընդարձակ սրահներով, մատենադարանի և ընթերցասրահի համար: Ավելի քան կես դար հայ ընթերցատունը ծառայեց գաղթօջախի հասարակայնությանը:

Նմանօրինակ նախաձեռնումներն իրենց խթանիչ ուժով՝ անշուշտ, մեծապես օգնում էին գաղթօջախի պահպանությանն ու զարգացմանը, նպաստում էին հայ մշակույթի առաջընթացին գաղթօջախում և համայնքի ընդհանուր հոգսերի թեթևացմանը: Ուշագրավ է և այն, որ հիմնվող նման հաստատություններն ավանդաբար հաստատված կարգի համաձայն չէին ստանում այս կամ այն բարերարի կամ նախաձեռնողի անունը, թեև նրանց միշտ էլ պատշաճն էր հատուցվում՝ հաճախ շնորհակալագրերով:

Ունևոր զմյուռնահայերի դաշուն հատուկ տեղ ունեին վաճառականները, որոնք գլխավորապես գործում էին արտասահմանում՝ մշտապես կապված լինելով գաղթօջախի հետ: Զմյուռնահայ խոշոր վաճառականները գործարար առևտուր էին ծավալում Հոլանդիայից մինչև Ամերիկա, Միջերկրականի ավազանից մինչև Հնդկաստանի ափերը: Հաճախ նրանք մույնիսկ աներևակայելի կապեր էին հաստատում և լուրջ դեր կատարում առևտրի զարգացման ու տարբեր երկրների միջև կապեր հաստատելու ասպարեզում: Նշանակալից է, օրինակ, որ զմյուռնահայ վաճառական Պետրոս Ապրուն 1717-ին Հոլանդիայում

մոտիկ հարաբերությունների մեջ է մտել Պետրոս Առաջինի հետ և նրանից չափազանց նպաստավոր պայմաններով ու արտոնություններով հատուկ հրավարտակ ստացել՝ ամբողջ Ռուսաստանում ազատ առևտուր կատարելու իրավունքով: Յուսուֆյանները լայն շառավիղով տնօրինում էին Տրիեստում, Էքիզյան ընտանիքը՝ Մանչեստրում: Սպարթայանները, Սրապյանները, Ավետիքյանները և ուրիշներ ընդարձակ կալվածքներ ունեին և մեծածախ վաճառականներ էին: Տասնյակ զմյուռնահայեր ձեռնարկատերեր էին, ոչ մեծ մասշտաբի վաճառականներ, որոնք վաճառքի էին հանում ոչ միայն պատրաստի ապրանքներ, այլև գյուղատնտեսական մթերքներ. նրանցից ոմանք այս կամ այն հումքի արտադրության, այսպես ասած, «արքաներ էին»:

Զմյուռնիայի հայկական գաղթօջախի կյանքում մշտապես զգալի էր այն զմյուռնահայերի գործնական ներկայությունը, որոնք գտնվելով պետական ծառայության մեջ, բնականաբար մեծ ազդեցություն ունեին: Հատկապես զգալի էր Նուպարյանների ներգործությունը, օտարերկրյա և թուրքական դեսպանատներում ու հյուպատոսարաններում գլխավորապես որպես թարգմանիչներ աշխատող զմյուռնահայերի, ինչպես և օսմանյան պետական ապարատներում տեղ ու դիրք ունեցողների որոշակի միջամտությունը գաղթօջախի համայն կյանքում:

Զմյուռնահայության ճնշող մասն, այդուհանդերձ, արիեստավորներն էին՝ ժամագործներ, տպագրիչներ, ոսկերիչներ, ատաղձագործներ, դարբիններ, դերձակներ: Փոքր չէր բժիշկների, իրավաբանների, դասատուների, զուտ մտավորական գործունեություն ծավալողների թիվը: Անշուշտ առավել հոծ բանակ էին կազմում այն զմյուռնահայերը, որոնք իրենց գոյությունը պահպանում էին սև աշխատանքով, օրվա հաց էին վաստակում նավահանգստում, գործարաններում, հողամշակությամբ, տնայնագործությամբ, բեռնափոխադրությամբ: Հարստահարությունից, անխուսափելի աղետներից, վրա հասնող պատուհասներից, հաճախ նաև պատերազմական արհավիրքներից այս բազմությունը ծանր հոգեվարք էր ապրում, ուժասպառ լինում, և տասնամյակներ էին անցնում մինչև որ նա կարողանում էր ուշքի գալ, ինչ-որ չափով զգացնել տալ իր գոյությունը: Թուրքական լծի ծանրությունն առավել դաժանորեն

ընկնում էր գաղթօջախի հենց այս դասի վրա՝ նյութապես ու բարոյապես սմբեցնելով նրան: Ուոյնիսկ միջոցներ ունենալու դեպքում հողամաս գնելն այնքան էլ հեշտ չէր, հարկ էր լինում գանազան հնարքների դիմել՝ ապացուցելու որ հողամասը նախկինում պատկանել է քրիստոնյաների (տես *L. Քոսյան*, նշվ. աշխ. էջ 40-42):

Իհարկե, ավելի լավ վիճակում չէին Չմյուռնիայում հաստատված հույները, հրեաները, ֆրանսիացիները և մյուս ազգություներնրի գաղթականությունը: Ծանր լուծ էր ընկած հենց թուրք աշխատավորության ուսերին, որ շահագործվում ու հարստահարվում էր եթե ոչ ավելի դաժանորեն, որովհետև գտնվում էր ստրկական վիճակում, ապա գոնե ոչ պակաս չափով, քան քաղաքի այլազգի գանգվածները: Բոլոր ազգությունների սոցիալական հարստահարություններին ավելանում էր կրոնաեկեղեցական լուծը, դավանաբանական կրքոտ պայքարը, որոնք իրենց հերթին քամում էին բոլոր, բայց առավելապես չարքաշ աշխատանքով ապրող խավերի վերջին ուժերը: 1797թ. մարտին Չմյուռնիան բռնկվեց ժողովրդական մեծ ապստամբությամբ: Քաղաքը ողողվեց արյունով, ֆրանսիական (ֆրանկաց) թաղամասը մոխրի վերածվեց¹:

Իր սոցիալ-տնտեսական, առավել ևս քաղաքական իրավունքների համար պայքարի օրինակներ գմյուռնահայությանը մինչև XIX դարի առաջին տասնամյակները չի տվել, իսկ ավելի ուշ ժամանակաշրջանում գրեթե չդադարող ներքին կռիվներ է մղել լուսավորական, կրոնադավանաբանական, ազգային խնդիրների շուրջ:

Չմյուռնահայությունը գտնվում էր օտար միջավայրում, համեմատաբար մեծաթիվ չէր, աշխարհագրականորեն հեռու էր հայաշատ ու հայկական բնակավայրերից, սակայն գաղթօջախում զգայուն արձագանք էին գտնում հայության կյանքում տեղի ունեցող գրեթե յուրաքանչյուր կարևոր իրադարձություն, այլևայլ տեղերում բռնկվող ազգային-ազատագրական շարժումները, գաղափարական պայքարը:

Օտարազգի միջավայրը տնականորեն թելադրում էր

¹ «Արշալոյս արարատյան», 5 սեպտեմբերի, 1847, էջ 293:

գմյունահայությանը, նույնիսկ նրա տարբեր ու հակադիր դասերին որոշակի ժամանակահատվածներում համախմբված մնալ, միասնաբար գործել, ինչ-որ չափով համատեղ հոգալ հասարակական կարիքները:

Ազգային շահը կարծես թե մերձեցնում էր կենցաղով ու գաղափարախոսությամբ ծայրաբևեռ խավերին, պահանջում ազգային հարցերում երևան բերել միասնություն ու միակամություն: Ակնհայտորեն դրան նպաստում էր գաղութի հայ հասարակայնության անհամեմատ կայուն կազմը: Եթե Չմյունիայի բնակչությունը դարասկզբին 106 հազար մարդ էր, իսկ հայերի թիվը հասնում էր 10.000, ապա դարավերջին այտեղ ապրում էր 340 հազար մարդ, մինչդեռ հայեր գրեթե մնացել էին նույնքան (11.000)¹: Սակայն դա գաղթօջախի, այսպես ասած, արտաքին կեղևն էր, որի տակ ծավալվում և հաճախ ցցուն արտահայտություն էր գտնում տարբեր շահերի ու գաղափարախոսությունների պայքարը մեծ ու փոքր բազմազան հարցերի շուրջ:

Ունևոր ամիրայությունը և առաջնորդարանը Չմյունիայի գաղթօջախում, իհարկե, չէր կատարում այն դերը, ինչ կատարում էր Բարձր դռանն ավելի մոտ կանգնած ամիրայական դասը և պատրիարքարանը Կ.Պոլսում, որտեղ վերջիններս լիիրավ տնօրինում էին ազգության կյանքը:

Չմյունահայ գաղթօջախում նույնպես մինչև 60-ական թվականներն ունևոր դասի դերը հայ համայնքի ընդհանուր կյանքում, նմանապես և մշակույթի մարզում, վճռական ու որոշիչ էր. նա էր տնօրինում կրթական գործը՝ դասատուներ հրավիրում, միջամտում դասավանդմանը, ձեռք զարկում մշակութային հաստատությունների հիմնադրմանը, նույնիսկ միջամտում եկեղեցական արդ ու զարդին, ծեսերին, զանազան հանդեսներին: Հոգևոր առաջնորդը, մշտական դաշնակցության մեջ գտնվելով ունևոր խավի հետ, կրոնական և եկեղեցական հարցերը միանձնյա տնօրինելուց բացի, ներկա էր լինում համայնքի բոլոր գործերին: Մանր վաճառականները, արհեստավորները, մտավորական դասը որևէ էական դեր չունեին գաղթօջախի հասարակական կյանքում և իրականում գտնվում էին կրկնակի ճնշման

¹ Հ.Քոսյան, նշվ. աշխ., էջ 43:

տակ՝ ենթակա և՛ ամիրաների և՛ հոգևորականների բռնություններին ու հալածանքներին: Նույնիսկ Մխիթարյան պատմաբանն արձանագրում է, որ «Չմյուռնիո հայ ժողովուրդը ամիրաներու իշխանության ներքո՝ ըստ կամի կկառավարվեր, որոնցմե ոմանք... իրենց բռնական միջոցներով ժողովուրդյան վրա բռնանալով՝ տխուր հիշատակներ թողուցած են»¹: Սահմանադրական կանոնների հաստատումից հետո էլ դեռևս գոյատևում էին հիշատակվող բռնություններն ու կամայականությունները, որոնց վկան է թեկուզ «Ծաղիկը» (1861 – 1867)՝ իր ողիսականներով ու մտրակահար հողվածներով:

Լուսավորական շարժման սկզբնական շրջանում, մանավանդ օտարազգիների հետ տեղի ունեցող նախ խուլ ապա և բացահայտ մրցակցության պայմաններում, գաղթօջախի ունևոր դասը, անշուշտ ելնելով նաև իր մերձավոր շահերից, ինչպես նշվեց, ձեռներեցություն էր հանդես բերում: Նրա գործադրած ջանքերի շնորհիվ կարելի եղավ Մեսրոպյանի խղճուկ շենքի փոխարեն կառուցել ու ավարտել նոր, անհամեմատ հարմարավետ դպրոցական շենք՝ 1825-ին և 1886-ին: Աղջիկների դպրոցական շենքը, հիվանդանոցը, նույնիսկ առաջնորդարանն ու ս. Ստեփանոս տաճարը կառուցվեցին ու վերակառուցվեցին կամ բոլորովին նոր շենքեր ստացան դարձյալ նույն կերպ: 1840-ական թվականներին հիմնված, կարճ կամ երկարատև գործած մի շարք տպարաններ, այդ թվում նաև Մեսրոպյան վարժարանի տպարանը, և նրանցում տպագրված արժեքաշատ ոչ քիչ գրքեր, ինչպես և պարբերականներ դարձյալ գոյատևում ու հրապարակ էին գալիս այդ դասի առանձին ներկայացուցիչների աջակցությամբ:

Սակայն դրանք սոսկ փշրանքներ էին, որոնք երբեմներբեմն նետվում էին՝ մեծ աղմուկով ու մեծարանքներով, վիմաքանդակ արձանագրություններով անմահանալու պայմանով: Այդ հատկացումները չնչին էին մեծահարուստների ձեռք բերած ու կուտակած հարստության, թուրքական փաշաներին ու Բ.Ղ-ռանը մատուցված դրամի ու արժեքների համեմատությամբ: Սնափառական այսպիսի մեղքը հայ մեծահարուստների ու

¹ Հ. Զոսյան, նշվ. աշխ., էջ 107:

կղերի գործած բազում մեղսագործությունների մեջ չարիքների փոքրագույնն էր:

Իրենց պատմական ամբողջ գոյության ընթացքում հայ ամիրայությունն ու հոգևորականությունը կեղեքում էին հայությանը, յոթնապատիկ բամբուս նրա քրտինքը: Նա խուլ էր հայ աշխատավորի լացի ու տառապանքի հանդեպ, կույր լինելու չափ չէր տեսնում հողագործ, պանդուխտ, գործավոր հայի չարքաշ ու հալածական վիճակը: Երկու ձեռքով փարվելով սուլթաններին, հայ մեծատուններն իրենց ոտքերով հենվել էին ազգի ուսերին, հարկ եղած դեպքում ներկայանում էին իբրև ժողովրդի ներկայացուցիչներ, իսկ երբ նեղն էին ընկնում, հանդես էին գալիս որպես օսմանյան տերության հավատարմահպատակ քաղաքացի, նույնիսկ իբրև թուրք: Եվ իրականում նրանք ինչպես Լեոն է նկատել, սեփականել էին ոչ միայն թուրքական տարազն ու լեզուն, այլ նաև հայացքներն ու գործելակերպը¹:

«Քրիստոնյա թուրք» դարձած ամիրաներ կային նաև զմյուռնահայ կյանքում, և գաղթօջախի լուսավորական առաջընթացի դեմ հարուցված արգելքների ու հալածանքների մեջ մշտապես զգալի էր նրանց ծանր բռունցքը: Նույնիսկ այն դեպքերում, երբ գաղթօջախի ունևոր դասը նկատելի աջակցություն էր ցույց տալիս, դրամական միջոցներ հատկացնում, շատ շուտով էլ կամ երես էր դարձնում գործից կամ, շրջադարձ կատարելով, հանդես գալիս նրա դեմ, տեղի տալիս պառակտումների, մինչև անգամ դիմում հալածանքների ու հետապնդումների: Այդ մասին են վկայում զմյուռնահայ կյանքի բազում էջերը, որտեղ իրենց հետքն են թողել մեծատունները: Նախնական շրջանում չուզեմալով բացահայտվել հասարակության առջև, ամիրաները մասնակցում էին մշակութային ու լուսավորական ընդհանուր ձեռնարկումներին, բայց երբ գործը ծավալվում էր, առավել ևս ստանում անցանկալի ընթացք, նրանք փորձում էին իրենց ձեռքը վերցնել շարժափոկերը, իսկ երբ դա չէր հաջողվում, խարդավանքներով ներքին պայքար էին հրահրում, հրաժարվում գործակցելուց և, ի վերջո, հասնում ընկերությունների ու հաստատությունների խափանմանն ու ինքնամահացմանը: Այդպես

¹ Լեոն. Խոջայական կապիտալը, Երևան, 1934, էջ 253 և հետո:

եղավ նույնիսկ համբավավոր Սյունյաց ընկերության, մի շարք պայրերականների հետ: Սատարելով իրենց առավել հաճելի պահպանողական «Արշալույս արարատյանի» ու նրա խմբագրի գործունեությանը, նրանք կուլ տվեցին առաջադիմական թերթեր ու սմբեցին կամ լռության դատապարտեցին ոչ քիչ թվով հրապարակախոսների, նրանց թվում նաև Ստ. Ոսկանյանին՝ 1868թ.:

Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ արտաքուստ խաղաղ թվացող գմյուռնահայ իրականության խորքում 1840 – 1860-ական թվականները մեկը մյուսին հաջորդող պայքարների ժամանակաշրջան էր: Անհաշտության և անմիաբանության տարրերը այդ պայքարներում, անշուշտ, կային: Պայքարը երբեմն ընթանում էր ոչ հանգուցային խնդիրների շուրջ, մանր հարցերը հաճախ շատ ցանք ու եռանդ էին իլուծմ, ջլատում առաջադիմականների ուժերը, շեղում նրանց ուշադրությունը: Բայց դա անխուսափելի էր, իսկ ինչ-որ տեղ էլ անհրաժեշտ՝ արմատական խնդիրներում հաջողության հասնելու համար:

Իր ինքնուրույն կյանքի արշալույսին Ստ. Ոսկանյանը գմյուռնահայ գաղթօջախի այդ շարժումներին ավելի շատ ակննատես էր, քան մասնակից: Բայց ուսումնառության վերջին շրջանում և աշխատանքային գործունեության հենց առաջին օրերից նա գտնվում էր տեղի ունեցող և հետզհետե ծավալվող շարժումների ու խմորումների շրջագծում և եթե անմիջականորեն չէր մասնակցում բախումներին, ապա իրական հնարավորություն ուներ դասեր քաղելու դրանցից:

Այդ իմաստով Ոսկանյան գործչի ու հրապարակախոսի ձևավորման արմատները նախ և առաջ պետք է որոնել հասարակական այն միջավայրում, որտեղ նա աճել է, սովորել ու մի կարճ ժամանակամիջոց աշխատել՝ բոլորելով իր կյանքի առաջին քսանամյակը:

Բազմազգ կյանքով ապրող Ջմյուռնիան անպայման իր կնիքն է դրել դեռևս պատանի Ոսկանյանի բնավորության ու խառնվածքի վրա. ինտերնացիոնալ ոգի ու ազգային փայլատակող շեշտվածություն, բազմերանգ առօրյա ու արագ փոփոխվող տրամադրություն, խռովահույզ մտածողություն ու թարթափումներ պատմական իրադարձությունների շուրջ: Նա ակա-

նատես էր իրօրյա վաճառաչահ քաղաքի անցուղարձերին ու գործարար ձեռնարկումներին, տեսնում էր «ոսկի» սամուղը-ներով վեր բարձրացողների հարևանությամբ ապրող ու օրվա ապրուստով գոհացող ազգակիցներին: Այդ ամենից շատ և այդ ամենից առաջ նա վերապրում էր իր ժողովրդի մեծ պատմության դառնությունները, մտահոգվում հայ գաղթօջախի թեև տանելի, բայց անհեռանկար վիճակով: Մյուս կողմից նրա ձևավորվող խառնվածքի վրա, սկսած մանկության օրերից, իր դրոշմն էր դնում էգեյան բնաշխարհը, և նրա հոգում իրար էին միախառնվում բանաստեղծական նուրբ զգացողություններն ու գործիչ-հրապարակախոսի շիջ-շիտակ մտածողությունը, ուղղագիծ բնավորությունն ու օրվա պետքերը թողած, իր անձը մոռացած՝ համայնքի ու ազգի ապագայի մասին օրն ի բուն խորհող, կշռադատող մտածումները:

Իր ժամանակի ու միջավայրի ծնունդն էր Ոսկանյանը, հայության այն բեկորի համաձուլվածքը, որ ընկել էր Չմյուռնիա, այն օջախի գավակը, որ Հայոց բնորոշիչ անունն էր ստացել: Խոսքը նախ ապագա հրապարակախոսի, մամուլի գործչի մասին է: Բայց այս իմաստով գաղթօջախի հրապարակախոսական մթնոլորտը, մամուլի, այսպես ասած, աշխարհը, նրա սկզբնական կացությունն ու «մանկական» թոթովումները մխիթարական քիչ բան կարող էին տալ ապագա հրապարակախոսին: Իր լինելիության երկունքն ապրող հայ մամուլի ասպարեզը այդ տարիներին գրեթե լիովին «Արշալույս արարատյանինն» էր: Շուրջ հինգ տարի նա հենց այս թերթի մշտական ընթերցողն էր, զանազան լուրեր էր քաղում նրա էջերից, հեռվից հեռու ծանոթանում ինչպես հայոց, այնպես էլ գաղթօջախների կյանքին, Հայաստան աշխարհին:

Ստ.Ոսկանյանի ձևավորվող ներքնաշխարհի վրա բնականաբար նկատելի դրոշմ էր թողել այն ամենը, ինչ հայեցի էր զմյուռնական խճանկարում և որն ըստ ամենայնի կազմում էր գաղթօջախի հյութն ու ավյունը: Չմյուռնիայի հայ աշխարհը, որ կազմեց Ոսկանյանի տոթյան ու խառնվածքի հենքը, այսօր մեզ ներկայանում է նախ և առաջ այն արտացոլումով, որ առկա է «Օրագիր Չմյուռնիո» հատկանշող ենթատիտղոսով հրատարակվող «Արշալույս արարատյանում»: Հայոց ազգային առաջին

ինքնուրույն պարբերականը լինելուց զատ, թերթը բացառիկ տևողությամբ, իր հիմնադիր խմբագրի հետ միասին, առանց խտտորումների մնաց պահպանողական, բառի այն իմաստով, որ արտահայտում է ազգայինի նկատմամբ դրսևորվող ծայրահեղ նախանձախնդրության գաղափարը: Այդ առումով թերթի ուժն ու անձնագիրն ազգային պահպանողական լինելն էր, խմբագրի ամենօրյա դողդոջ զգուշավորությունը: Դրա շնորհիվ նա, իրոք, բառի բուն իմաստով, պահպանվեց և երկար տասնամյակներ ցանեց նաև այնպիսի հունդեր, որոնք սուլթանական թուրքիայում և մահմեդական աշխարհում սնունդ տվեցին հայոց ազգապահպանությանը և շաղախվեցին այն ցեմենտին, որով վերաշինվում էր ազգության սունը՝ հիմնաքար ունենալով հայ մնալ, հայաբար ապրել ու գործել, մտածել ու գրել այբուբենային ճշմարտությունները՝ դարձյալ Մեսրոպյան:

Չանդրադառնալով, սակայն Ղ.Պալղազարյանի ու նրա թերթի բուն էությանը, հարկ է նշել, որ գրեթե մեկ տասնամյակ «Արշալույս արարատյանը», Ստ. Ոսկանյանի ծայրաստիճան խտացված արտահայտությամբ, գերազանցապես եղել է «լուրերու մրոտ թուղթի կտոր մը», իսկ նրա խմբագիրը գտնվում էր նրանց շարքում, ում Ոսկանյանը դասում էր «լուրերու բեռնակրի մը կարգը»¹: Անհասցե այդ արտահայտություններում չափազանցությունն ակնհայտ է, սակայն անհերքելի է նաև այն, որ «Արշալույս արարատյանը»² և առհասարակ հայ պարբերական մամուլը 1840-ական թվականներին դեռևս ապրում էր տասնամյակներ տևած իր լինելիության ընթացքը, երբ հրապարակախոսությունը տակավին կայուն քաղաքացիություն չէր ստացել, գերազանցապես կտրված էր բուն իրականությունից և առհասարակ լուսավորական շրջագծից հիմնականում դուրս չէր գալիս:

Այդուհանդերձ, այն, ինչ տալիս էր Ղ.Պալղազարյանի

¹ «Արևմուտք», 1 հունիսի 1864, N 9, էջ 67:

Այսուհետև Ստ. Ոսկանյանի հանդեսներից կատարվող մեջբերումների տեղերը կնշվեն տեքստում՝ ցույց տալով հանդեսը, տարեթիվը և էջը:

² Հատկանշական է, որ թերթի խմբագիր Ղ.Պալղազարյանը հաճախ իրեն կոչում էր «վերատեսուչ», «Գլխավոր բանաբարդ», իսկ իր պարբերականը՝ «Լրաթուղթ. (տե՛ս «Արշալույս արարատյան», N 240, 241 և հետո):

թերթն իր ընթերցողին, որոշակի ներգործություն ուներ նրա մտածողության ու խառնվածքի ձևավորման վրա: Նույնիսկ սոսկ թերթ հիմնելով և արտակարգ դժվարին ժամանակաընթացքում ապահովելով նրա անընդմեջ հրատարակությունը, Պալղազարյանը վկայում էր հայ մշակույթի բարսխումը և հայ զանգվածի կենսունակությունը մի այնպիսի գաղթօջախում, որպիսին Չմյուռնիան էր: Անհիմն չեն «Արևելյան մամուլում» հրատարակված, Գ. Պալղազարյանի մահախոսականի հեղինակի (հավանաբար Մ. Մամուրյանի) խոսքերը «հին, բազմարդյուն, անձանձիր, խոհական, ազգային խմբագրի» ու նրա պարբերականի մասին. «Եթե խորհենք, թե գրեթե կես դար առաջ որքան դժվարին էր հայկական մամուլ մը հաստատել, եթե պատմապես քննենք այն տգիտության օրերն, երբ նախապաշարումներ կտիրեին, հայ բռնավորներ, ամիրաներ՝ ազատ մտածողության հակառակ էին, երբ կղերն ամեն նորության կղիմադրեր, երբ անհնարին դժվարություններ կային հայերեն տառեր և գործավորներ գտնելու, այն ատեն կրնանք գնահատել այն ազդու բնավորությունն, այն հնարագետ և եռանդուն հոգին, որ այս ամեն արգելքները տապալելով և հայոց մեջ նոր բավիղ մը բանալ հառաջադիմության, որու մեջ վերջեն ուրիշներ ալ մտան... Նա գրգիռ եղավ նոր-նոր ընկերությանց հաստատության, նա ջանաց ուսումնասիրությունը տարածել հայոց մեջ, նա դպրոցները պաշտպանեց և հայոց իրավունքն իր իմացած կերպովը: Նա կերպով մ'առիթ եղավ մտավորական հարաբերություն հաստատելու այլ և այլ հայաբնակ երկրներու մեջ և հայոց աչքը դեպի էջմիածին ու Հայաստան դարձնել, որու վերնաշինության իր հարմար տարած միջոցներով աջակցելու փուլը տարավ»¹: Նմանօրինակ մղումներն էական նշանակություն ունեին Չմյուռնիայի հայոց ու նրա ծոցից ելնող ամեն մի գործչի համար՝ առավել ևս 40-ական թվականներին:

Այն հինգ տարիներին, երբ Ռսկանյանն «Արշալույս արարատյանի» ընթերցողն էր, թերթը հրատարակել է մի շարք նյութեր, որոնք բորբոքում էին հայրենասիրության կրակը, սոցոքում էին սիրով հայոց երբեմնի հայրենիքի, նրա պատմության ու

¹ «Արևելյան մամուլ», 1878, էջ 65-66::

մշակույթի, պատմական անձնավորությունների նկատմամբ, մղում էին դեպի նրա բնօրրանը: Գաղթօջախի կյանքն արտացոլելուց զատ, մասամբ այդ էր թերթի ու նրա երիտասարդ խմբագրի ծրագրային խնդիրը, որը նա համատեղում էր ընթերցողին դեպի գիտությունները մղելու խնդրի հետ: Իր առաջին համարներում թերթը Եղիշեի խոսքերով բանաձևում էր՝ «Ամենայն շարիք հանուսունութենե» է, ապա հռչակում՝ «մեկ ազգին երջանկությունը դպրատներեն կախյալ է» և պարբերաբար նյութեր գետեղում ազգային լուսավորության ծավալման, դպրոցների, նույնիսկ Լազարյան ճեմարանի մասին, խրախուսում ուսումնական ընկերություն ստեղծելու նախաձեռնությունը՝ զմյուռնահայությանը ևս նպատակամղելով դեպի նման գործունեության, հաճախ գիտական բնույթի տեսություններ և մանր հոդվածներ գետեղում: Նա ընթերցողներին պատմում էր Ալ.Մակեդոնացու, Պետրոս Առաջինի, Նապոլեոն Բոնապարտի, Արգար Դպիրի, Գալիլեյի, Նյուտոնի, Գալլ Վահանի, Մամիկոնյանների, Լևոն 6-րդի և այլոց մասին: Հատուկ ուշադրություն դարձնելով իրօրյա գիտական առաջընթացին, նա հատուկ հոդված է տպագրել Արագոյի մասին և խոստացել, «հետզհետե թարգմանելով», հրատարակել Ֆրանսիայի ժամանակակից «անվանի գիտնականաց ու գրագիտաց համառոտ վարքը»: «Արշալույս արարատյանի» վերատեսուչ-խմբագիրը շարունակաբար նյութեր էր հրատարակում ազգասիրության շուրջ, տեղ էր տալիս հայոց պատմության նշանակալից էջերին, Մյունխեն և Արարատյան բնաշխարհի նկարագրությանն ու պատմական նվիրական գործիչների կյանքի ու կարևոր իրադարձությունների վերարտադրությանը: Թերթը փորձում էր հերքել ազգի անմիաբանության շուրջ արտահայտված ինչ-ինչ կարծիքները: Նա ընթերցողի միտքը բևեռում էր Հայաստանի վրա, հաճախ էր լուսաբանում թիֆլիսահայ կյանքը:

Այդ ամենն առհասարակ չէր կարող հետևանք չունենալ թերթի հետաքրքրասեր ընթերցողի, նրանց շարքում նաև երիտասարդ Ստ.Ոսկանյանի մտավոր ձևավորման ու ազգային մտածողության վրա: Թերթի առանձին նյութեր պետք է, որ արժանանային Ոսկանյանի հատուկ ուշադրությանը և խոր մտորումների տեղիք տային: Այդպիսի նյութերից, իրոք, ուշագրավ

են Ռսկանյանի համեմատաբար հասուն շրջանում «Արշալույս արարատյանում» լույս ընծայված մի շարք հոդվածներ, որոնցում այս կամ այն չափով արժարժված գաղափարների, թեև ոչ ուղղակի զարգացումն ու հիմնավորումը հանդիպում են խմբագիր-հրատարակախոսի հետագա երկերում: Իհարկե այդ գաղափարները Ռսկանյանի գաղափարախոսության մեջ կարող էին հասունանալ նաև բոլորովին այլ եռոյի վրա և այլ միջավայրում: Բայց այդ դեպքում նույնպես չի կարելի ժխտել սկզբնական այն ներգործությունը, որ նրա ձևավորվող աշխարհայացքում կարող էին թողնել երիտասարդ տարիքում ընկալված այն գաղափարները, որոնց ոչ երկրորդական աղբյուրն էր «Արշալույս արարատյանը»:

Գրապայքարից շատ առաջ, տակավին 1843-ի մարտին, «Արշալույս արարատյանի» երկու համարներում զեաեղվել է Գ.Կ.-ի (հավանաբար Գրիգոր Կոստանոյանի) հոդվածը՝ «Գիտողությունք հայոց լեզվի վրա» (N 130, 131): Այդտեղ զարգացվում է ազգի համար լեզվի առաջին առանձնաշնորհություն լինելու գաղափարը, խնդիր է դրվում, նույնիսկ փորձ է այրվում քննել հայերենի բառապաշարը: Իբրև ծառայող խնդիր, հոդվածագիրն առաջ է քաշում աշխարհաբարի կանոնարկման, «կարգ կանոն մը դնելու» անհրաժեշտությունը, արտահայտվում է հայերենին «օտար լեզու խառնելու» դեմ: Նրա հարցադրումները դրական արձագանք են գտել մամուլի էջերում¹:

Չմյուռնիայի դպրոցական հանդեսներում և գաղթօջախի թերթի էջերից երբեմն կոչեր էին արվում հետամուտ լինել գիտությանը, որը մարդուն «անասունեն կգատե ու ասածո կմոտեցնե», «մեր միտքը կրանա, կընդարձակե, (N 140): Ըստ որում խոսքը հավասարաչափ վերաբերում էր թե՛ բնական և թե՛ հասարակական գիտություններին, մանավանդ սլատմությանը: Վերջինիս դերի ըմբռնման իմաստով, ինչպես և այն գրելու նպատակամղումը չարաշահելու մասին խորհելու մղում էին տալիս «Արշալույս արարատյանի» էջերում առաջացած բանավեճի ընթացքում արժարժվող գաղափարները՝ Գ.Այվազովսկու «Պատմություն օսմանյան պետության» շուրջ:

¹ Տե՛ս «Հայրենասեր», 16 հուլիսի 1843, N 8:

1841-ին Մխիթարյան միաբանության ականավոր անդամ Գ.Այվազովսկին նախ երկու, ապա երեք հատորով հրատարակել էր Թուրքական կայսրության պատմությունը, որտեղ ոչ քիչ էջեր նվիրված են նաև հայոց պատմությանն ու գործիչներին: Դա, իրոք, նշանակալից գործ էր և ժամանակին ու հետագայում բարձր է գնահատվել: Բայց ահա «Արշալույս արարատյանի» ազդեցիկ հեղինակը («Գ») բացահայտում է նրանում տեղ գտած «ճշմարիտ ազգասիրության² դեմ քանի մը երևելի պակասություններ», որոնք «ստուգասեր պատմագիրներու համար «հանցանք» են³: Նա հիշատակում է մի շարք փաստեր ու եղելություններ, որոնց կողքով «Պատմության» հեղինակն իրավունք չուներ անտարբեր անցնել (N 121):

Թերթը «հասարակության ողջամիտ վճռոյն» հանձնելով իր հեղինակի նամակը խուսափել է որևէ կարծիք հայտնելուց և, ըստ երևույթին, նրա խմբագիրը չուզեցնալով է այն տպագրել: Երկու ամիս անց «Արշալույս արարատյանը» վախվորած, մի ծանուցումից հետո գետեղել է պատասխան հողվածը՝ «Հ.Յ.Վ.Ս.» ստորագրությամբ: «Քաղցրությամբ» մերժելով արված դիտողությունները և ինչ-ինչ պարզաբանումներ տալով, հեղինակը (հավանաբար ինքը՝ Գ.Այվազովսկին) շտապում է հարցը փակել՝ հայտարարելով, թե՛ եթե քննադատության հեղինակը նորից գրի, ապա «պատասխանը ինձմե թող չսպասվի» (N 141):

Վ.Պալդազարյանն ամեն կերպ ձգտում էր պահպանել իր «չեզոք» դիրքը, բայց նրա կամքից անկախ թերթի էջերում

¹ Տե՛ս Ա.Բ. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 2, Երևան, 1960, էջ 41-45 և հետո:

² Ա.Բ. Կարինյանը գտնում է, որ «ճշմարիտ հայրենասեր» արտահայտությունը ժողովրդականացրել է Հովհ. Չամուռյանը, 1846-ից «Հայաստան» թերթի միջոցով (տե՛ս «Բանկեր Հայաստանի արխիվների», 1977, N 3, էջ 190): Հավանաբար այդ տերմինին հավասարագոր «ճշմարիտ ազգասիրություն» արտահայտությունն էլ քաղաքացիություն է ստացել «Արշալույս արարատյանի» էջերից՝ 1843թ. հունվարից սկսած: Նույն արտահայտությունը՝ «ճշմարիտ ազգասեր», հանդիպում ենք «Հայրենասեր» թերթում 1843թ. ապրիլից:

³ Նշենք, որ հետագայում, 1861թ. Մ.Նալբանդյանը «Երկու տողում» քննադատական ակնարկ է արել Այվազովսկու այդ աշխատության մասին (տե՛ս ԵԼԺ, հ. 3, էջ 35-36):

առաջին անգամ բանավեճ էր սկսվել: Նա ստիպված էր, հակառակ իր «անկողնմապահ ու խաղաղասեր սկզբունքի», տեղ տալ «Գ.»-ի երկրորդ հոդվածին ևս, որտեղ արդեն վճռական տոնով է խոսվում օսմանյան պետության պատմության ու նրա հեղինակի մասին: Որ Գ.Այվազովսկին կարող էր ու պարտավորված էր խուսափել առանձին փաստերից, երբեմն էլ խուսանավել, շրջանցել արևմտահայության կյանքում, օրինակ 1820-ական թվականներին տեղի ունեցած որոշ իրադարձություններ և այլն, ինքնըստինքյան հասկանալի է: Մասնավորապես ակնառու էր, որ օսմանյան պետության պատմությունը կերտված էր, այսպես ասած, որոշակի դաստիարակչական նպատակով, հայ զանգվածներին «հոյակսոսլ» հավատարիմ հպատակ լինելու կոչով, ինչպես դա երևում է նաև առաջաբանից: Թեկուզ միայն այն պատճառով, որ Գ.Այվազովսկին Թուրքական կայսրության պատմությունը գրել էր Մխիթարյաններին այցելած թուրքական ծովակալ Սուլեյմանի առաջարկով ու վարձատրությունն ստանալու պայմանով¹, «Պատմության» հեղինակը կանխապես պարտք էր ստանձնել խունկ ծխելու օսմանյան սուլթանների առջև՝ միաժամանակ երջանիկ համարելով իր ազգակիցներին՝ որ գտնվում են թուրքական հպատակության ներքո:

Ոսկանյանն, անկասկած, ծանոթ էր բանավեճին, եթե չենք սխալվում, առաջին անգամ հրապարակային քննադատություն էր ծավալվում Մխիթարյան միաբանության հրատարակության ու նրա ականավոր միաբանի դեմ: Թերևս նա կարդացել էր նաև «Պատմության» հատորները, անտեղյակ չէր նրա ստեղծման հանգամանքներին: Մասնավորապես նրա ուշադրությունից չէր վրիպել այն երկչոտությունը, որ հանդես էր բերում «Արշալույս արարատյանի» խմբագիրը՝ տեղավորելով բանավիճող հեղինակների հոդվածները. նրա համար «տրտմալի» էր, որ թերթն իր կամքին հակառակ դառնում է «անժամանակյա վեճերու» «գործիք մը»: Դրանից նա ամեն կերպ զգուշանում էր, նույնիսկ

¹ «Հայաստան» 1846, N 32: Այս թերթի խմբագիր, մոլի հետադեմ Հովհ. Չամուռչյանը նույն համարում մանրամասն անդրադարձել է Գ.Այվազովսկու աշխատությանը, փառաբանելով քի՛ նրա հեղինակին և քի՛ թուրքական «մեծագոր տերությանը» և իր հերթին կոչ արել՝ գործակցել «աննախանձաբար և անկեղծությամբ» գործող օսմանյան պետության հետ:

ծգտում էր «միշտ ու ամեն առիթներու մեջ» «անկեղծ սիրով միաբանեցնել» բանավիճող կողմերին: «Օրագրի մը վերատեսչության պաշտոնը, գրում էր Պալղազարյանը, – սովորաբար կարծվածեն ավելի դժվար է, մանավանդ այս մասին մեջ»(N 145):

Մխիթարյան միաբանության գաղափարախոսության դեմ հրապարակայնորեն հանդես գալու և բանավեճ մղելու այս նախօրինակից ուղիղ տասը տարի անց՝ 1853 – 1854թթ., Ռսկանյանը հանդես է գալու կրակոտ պամֆլետներով՝ ընդդեմ Մխիթարյանների և նրանց պաշտոնական մարմինների, իսկ մի փոքր ավելի ուշ հրապարակային անգիջում պայքար է սկսելու Գ.Ալվազովսկու դեմ և կրնկակոխ հետապնդումով նրան մերկացնելու է շուրջ տասը տարի շարունակ, դրանով չսպառելով իր պայքարն ու ասելիքը, ինչպես չսպառեց Մ.Նալբանդյանը, որին լծակից էր արևմտահայ հրապարակախոսը:

Երբ խոսքը վերաբերում է այն հնարավոր ներգործությանը, որ Ստ. Ռսկանյանի մտավոր ձևավորման վրա կարող էին ունենալ «Արշալույս արարտյանում» հրատարակված որոշ նյութեր, հարկ է անդրադառնալ նաև մի այլ հոդվածի նույնպես: Դա «Բազմավեպում» 1844թ. լույս տեսած «Հառաջադիմություն ազգային» խորագրով ծավալուն հոդվածն է, որ տեղ է գտել հանդեսի երեք համարներում, ապա և աշխարհաբար վերարտադրությամբ ու առավել աչքառու ձևով արտատպվել «Արշալույս արարատյանում»¹: Եթե ոչ «Բազմավեպում», որ բավարար տարածում ուներ Չմյուռնիայում ու նրա վարժարանում, ապա անպայման «Արշալույս արարատյանի» էջերում Ռսկանյանը կարդացել է այդ հոդվածը: Դ.Պալղազարյանը ծանոթանալով «Բազմավեպի» այդ հոդվածին, տակավին թերթի 214-րդ համարում հատուկ ծանուցում է գետեղել, փառաբանել նրա դրույթները և պատվիրել իր ընթերցողներին «մեծ ուշադրությամբ կարդալ»: Բացի այդ, թերթի այդ համարներից մեկում, հենց վերատպագրվող հիշյալ հոդվածի կողքին գետեղված է Ռսկանյանի «Չմեռ» բանաստեղծությունը: Այնպես, որ Ռսկան-

¹ Տես «Բազմավեպ», 1844, N 13, էջ 201-207, N 18, էջ 281-286, N 20, էջ 314-319, և «Արշալույս արարատյան», 18 և 25 նոյեմբերի, 2 և 9 դեկտեմբերի, 1844, N 217-220:

յանը չէր կարող չնկատել թերթի չորս համարների թելթոնները զբաղեցնող նյութը:

Այդ պատճառով, իսկ իր շոշափած հարցերով ու առաջադրած գաղափարներով առավել ևս, «Բազմավեսյից» «Արշալույս արարատյանում» արտատպված «Հառաջադիմություն ազգային» հոդվածը, որի հեղինակը, եթե հանդեսի խմբագիրը չէ, ապա մնում է անհայտ, իրոք, այժմնի է հատուկ ուշադրության: Հենց առաջին տողերում հոդվածի հեղինակը կտրուկ առաջ է քաշում «քաղաքական ու փիլիսոփայական գիտությունների ետ մնացած» ազգին կրթելու, նրա միտքը գիտություններով հարստացնելու և այդպիսով նրա համար նյութական երջանկությունն ապահովելու հարցը: Այդ առթիվ էլ նա բացահայտում է ազգային թերությունները, որոնց վերացման խնդիրն, ի դեպ, «Բազմավեսյին» զբաղեցնում էր .ի սկզբանե: Հոդվածում նշվում է, որ «մեր պատվական ազգը միշտ տգիտության տառապանաց և աղքատության մեջ չարչրված է», որ նրա «կանաչ ընձյուղներու ու տետև տալու ատենը մեկեն կուտվի կսպառի... տգիտության և զանազան պակասություններով զազանացած ու կատղած որդերեն»: Այժմ էլ այդ վիճակում գտնվող ազգին օգնելու համար հանդեսն առաջարկում է «մահը աչքը առած ջանք ընել» և որպեսզի «բոլոր ազգը մեկեն ծաղկի», հարկավոր է գործել ընդհանուր, համազգային ուժերով, «Մշակել, աշխատիլ ու ճգնիլ»:

Մխիթարյան հրապարակախոսից ու հանդեսից խնդրի ավելի լայն ու խորն ընկալում և առաջադրում սպասել, իհարկե, չէր կարելի: Բայց տվյալ դեպքում նրանք հայտնի չափով ճշմարտացի էին և ուշագրավ փորձ էին անում հրատապ հարցը հրապարակային քննության դնելու ուղղությամբ, նրանց ծավալուն հոդվածի աշխարհաբար արտատպությունը նույնսլես այդ է ասում:

Ի՞նչ ուղիներ են առաջարկվում «Հառաջադիմություն ազգային» հոդվածում. նախ հարկավոր է ձգտել այն բանին, որ «ազգասիրության եռանդը անշեջ մնա մերիներուն սրտին մեջ»: Այդ սերը պետք է աճի հայ տարիքի հետ և այնպիսի արմատներ ձգել, որ կարողանա «սաստիկ հովերուն դեմ հաղթե ու չփլչի»: Պատմական մի վավերագրի դիմելով, հոդվածագիրը հիմնա-

վորում է այն գաղափարը, որ անհրաժեշտ է մանկությունից ազգասիրություն, հայրենասիրություն դաստիարակել: Նա կրքոտ կոչով դիմում է ծնողներին ու դաստիարակներին, որոնց «վրա ապաստան եղած է ազգիս բախոք»:

Այնուհետև հողվածում մատնանշվում է ազգային երգերի ու քաջության մեծարման նշանակությունը նույն խնդրի իրագործման իմաստով. «բանաստեղծները քնարով ավելի գործք տեսան, քան թե աշխարհակալները զենքով ու աղեղով», ուստի և «այետք է աս հնարքը բանեցնել»: Առավել կտրուկ է դրվում մայրենի լեզվի նշանակությունն ազգասիրության ու ազգապահպանության գործում: Հայոց լեզուն է «միայն, որ համազգիներուն (մեկ ազգե եղող) սերը կվառե». մոռանալով այն «մեր ազգը ինքը իր ազգության հիմնը կքակե»: «Հիմա, – հռչակում է հողվածագիրը, – մեր ազգության ապացույցը միայն լեզուն է, թե որ ան ալ մեջտեղեն վերացնենք նե, ալ հայ չենք»: Հայոց լեզուն սովորելու և զարգացնելու հետ միասին խնդիր է դրվում բոլորի առջև, որ «զգուշանան օտար գրույցներ խառնելու մեր հարազատ լեզվին մեջ»:

Հիշեցնելով Բայրոնի և մի շարք օտարազգի դեմքերի հիացական խոսքերը հայ ժողովրդի մասին, «Բազմավեպի» հրապարակախոսը նախատում է նրանց, ովքեր եվրոպական ազգերին ծանոթանալուց հետո ամաչում են հայ համարվել և ապա կոչ անում՝ բարձր գնահատել ազգի պատվականությունը և փառք համարել հայ լինելը: Մակայն հայ ժողովուրդն, իրոք, քիչ է մտահոգվում իր մտավոր վիճակով, հետ է մնացել մյուս ժողովուրդներից: Պատճառն համարելով «ժամանակին հանգամանքները, աղքատության վիշտը և եղբարք իրարմե բաժանվիլը», հողվածագիրը փորձում է քննել այդ երեք գլխավոր պարագաները: Ազգն իրար հետևից զրկանքներ է կրել, հուսալքվել է, կորցրել իր բուն դիմագիծը, որոնց հետևանքով էլ «չենք կրնար տեսնել և իմանալ մեր թշվառությունը, անոր համար գիտության արվեստներու և քաղաքականության զարգացումը ու ծաղկիլը քանի մը տեղ սեպված չէ մեր քովը»:

«Բազմավեպի» հրապարակախոսը հետզհետե ընդլայնում է իր հողվածի շրջանակը, ընդգրկում է տնտեսական հարցեր, առաջ է քաշում հայոց երկրի ընդերքի մետաղներն օգտագործելու

և նույնիսկ «զենքեր, հրացաններ և ուրիշ կերպ անոթներ» պատրաստելու և գործածելու խնդիրը: Ազգի «մեծամեծ թշնամիներեն մեկն» էլ այն տզիտությունն է, որ թույլ է տալիս օտարներին քալանել իր ձեռքի եղածը և դրանով շահ ստանալ, հարստանալ: Բոլոր ասպարեզներում է նման վիճակ տիրում, և այդ վիճակի հետևանքն է ամենուր իշխող «աղքատության խեղճությունը»: Իր ցրվածության և մեկը մյուսից բաժանվելու հետևանքով ազգը կործանվում է, որովհետև «ազգային ոգին ալ շատ մասերու բաժանվեցավ, ու օտարածին և ուրիշ լեզու խոսեցնող առաջնորդություններով հազար ու մեկ կերպարանքներու փոխվեցան ազգային օրենքը, բարքը ու սովորությունները»: Ազգային առաջադիմության խոչընդոտները վերացնելու համար, ըստ «Բազմավեպի», պետք է պայքարել անմիաբանության դեմ, «միաբանություն և հասարակության եռանդ հարկավոր է».

միաժամանակ պետք չէ «ինքզինքին ետ մնալը մտածել և հուսահատելով տարակուսիլ», ինչպես և «անցած հիշատակներով մի մեռցներ միշտ ինքզինքդ»: Այսպիսի ընդհանուր խորհուրդներով և գործելու նպատակային հորդորներով հանդեսը չի բավարարվել, և նրա հողվածը դրանցով չէ ուշագրավ: Նա, տվյալ դեպքում գերազանցելով ինքն իրեն, «բոլոր ազգս մեկեն առաջ տանելու համար» առաջարկում է «ամեն քաղաքներու ու զեղերու մեջ դպրոցներ ունենալ», կարդալ ու գրել սովորեցնել, տիրապետել սկզբնական օգտակար ուսմունքներին, հիմնել «բնական ու բանասիրական վարժատներ», արվեստի մարզոցներ, դպրատներ, թանգարաններ և այլն:

Բայց ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով և ո՞ւմ օգնությամբ: Այս հարցերին պատասխանելիս նույնպես «Բազմավեպի» հողվածագիրը զգաստ մոտեցում է հանդես բերում: Մեկ կամ նույնիսկ տասնյակ բարերարներ անգոր են նման խնդիր իրագործել: Եթե նրանք միմյև անգամ ձեռներեցություն հանդես բերեն, եթե բարերարություն հանդես բերողների թիվը մեծ լինի, ապա դարձյալ նրանց ուժերից վեր է, որովհետև առաջին իսկ դժվարություններից «ձեռք կբաշեն գործքեն»: Դա մանավանդ անհնար է, քանի որ ազգը «հազարավոր դպրոցներու, վարժատուներու, արվեստանոցներու հարկավորություն ունի»: Ուստի և հարկավոր է գործել ոչ թե միմյև այժմ որդեգրած օրենքներով, ոչ թե

շարունակել ապարդյուն ջանքերը, կամ կրկնել հին տրտունջները, ոչ թե «պարապ հույսով ինքզինքնիս խաբենք, այլ գործադրել «ուրիշ հնարք»:

Այն բանից հետո, երբ հողվածագիրը հիշեցնում է եվրոպական երկրներում գործող հարկային համակարգը և ընկերությունները, նա շարունակում է. «Արդ իմ կարծիքս աս է, թե մեր ազգը ընկերությամբ միայն կրնա հառաջ երթալ ուսման, արվեստի, քաղաքականության մեջ: Վասն զի ընկերությունը մեծ գորություն և ուժ ունի, ընկերությամբ միայն հնար է գատված և ցիրուցան եղած ժողովուրդը նորեն կանգնեցնել, ընկերությամբ կմոռացվի ժողովուրդին տառապանքները, ընկերությամբ միայն կարելի է գորավար թումբ (պենտ) դնել թշվառություններուն հարձակման դեմ»: «Բազմավեպը» հրաշք գորություններ է վերագրում ազգի միաբանությանը, իր հղացած ընկերությանը, որ ընդունակ է հաղթահարել սոցիալությունը, ծաղկեցնել ուսումնի ու գիտությունները և այդպիսով «մեր հինցած ու ավերակ դարձած աշխարհքին շինվելու հնարքը» գտնել, բոլոր դժվարությունները հաղթահարել. «Վասնզի մեր կործանմանը ուրիշ ճար չկա, ազգայիններուն միաբան ընկերություններն ի գատ»: Նրանով միայն կարելի է հաղթահարել սոցիալությանը՝ «ան քարսիրտ բռնակալը, (որ) հազարումեկ տառապանքներով հազար անգամ մահվան դուռը տարավ մեզ»:

Այդ «փրկավետ» գործը պետք է սկսեն ազգասերները և օրինակ տան բոլոր հայերին՝ նկատի ունենալով արդեն գործող «բարի և օգտակար» ընկերությունները (օրինակ՝ զմյուռնահայության Սյունյաց ընկերությունը): Միաժամանակ հողվածագիրը խորհուրդ է տալիս՝ ովքեր «Եվրոպայից ներմուծում են գիտություններ ու արվեստ, պատվել մրցանակներով ու նրանց «ճակտին քրտինքը սրբել»: Հարկավոր է գործի անցնել անհապաղ և. «շիտակ ճամբան հանել» ազգը, դա է գործելու և փառքի ասպարեզը, «ալ ժամանակ չէ սենեկին քունջը նստած՝ միայն ազգասիրության անունով պարծիլ, – եզրափակում է «Բազմավեպի» հրապարակախոսը, – ազգասեր ըլլողը թող երևնա աշխարհքին, թող հորդե, սիրտ տա, կանչե զամենքը մեկ տեղ միաբանությամբ ժողովիլ, եղբայրաբար կապվիլ և բոլոր ունեցած ջանքը դուրս թափել ուսումը, արվեստները և քաղաքականությունը ծաղկեց-

նելու և առաջ տանելու համար: Երանի Ազգին, երանյալ է հիմա և երանելի պիտի ըլլա հավիտյան»:

Չի կարելի ասել, թե «Հառաջադիմություն ազգային» հողվածի գաղափարները ծնվել են վաճառական մութ խորշերում. հայոց կյանքի արձագանքը կա նրանցում և լսելի է թշվառ ու ճնշվող ժողովրդի հառաչանքը: Իհարկե, տոկալու կոչի հետ միասին ակնառու է «Բազմավեպի» հրապարակախոսի հավատը բարերարների կամ միահամուռ ուժերով ընկերություն ստեղծելու նկատմամբ. մի խոսքով, նա առաջ է սավառնում երազանքի թևերով: Բայց նա ձգտում է առաջընթացի, ընկալում է ազգի ծանր կացությունը, նկատում է նրա տառապանքը, ուղիներ է որոնում, գոտեպնդվելու և գործելու լոզունգներ է առաջադրում: Կայսրորը հենց այդ է, խնդիրների ընթռնումը պայմանավորում է դրանց իրագործման համար պայքարը:

Այս իմաստով երիտասարդ Ռսկանյանը, ապագա հրապարակախոս-խմբագիրը, քաղելու քիչ բան չուներ. «Հառաջադիմություն ազգային» հողվածի առանձին հարցադրումներ (ցրված ազգի միտքը ի մի գումարելու, համընդհանուր ընկերություն հաստատելու¹ և նրա միջոցով ազգային ցավերը հոգալու և այլն) նա հետագայում պետք է զարգացնի, հիմնավորի և հետևողականորեն քարոզի իր հանդեսների էջերից, նույնիսկ գործնական պայքար ծավալի դրանց իրագործման համար:

Պետք չէ իհարկե, ուղղագիծ պատկերացնել հարցադրումների ու գաղափարների նման «Ժառանգությունը», ինչպես և զուգահեռ անցկացնել այս կամ այն աղբյուրի կամ Ռսկանյանի պրոպագանդած որևէ գաղափարի նիջև, դեռ 10-15 տարի պիտի անցնի, և այն էլ արտակարգ, լարված բարձրագույն շփումների, եվրոպական ուսումնառության տարիներ, որպեսզի Ռսկանյանը ձեռք բերի գաղափարական հասունություն, ազգի ճակատագրով սրտանց մտահոգվողի լրջություն: Այդ ընթացքում նա քանիցս դեռ պիտի հանգի նույն գաղափարներին, որ բուն հայ կյանքի արգասիքն էին, իր բազմակողմանի ուսումնասիրության տրամա-

¹Նկատենք, որ համահայկական ընկերություններ ստեղծելու առաջարկներ և փորձեր հաճախ են արվել: Ստ.Նազարյանը «Հյուսիսափայլի» էջերից Ռուսաստանում ընդհանուր հայկական ընկերություն հաստատելու առաջարկ էր անում 1862թ. (տե՛ս «Հյուսիսափայլ», 1862, N 7, էջ 43-53):

բանական հետևությունները: Այս դեպքում նույնպես բնական է ենթադրել, որ ուսումնասեր երիտասարդը հայրենի քաղաքում ու հասարակական հարազատ միջավայրում ստանում էր մտավոր այն սնունդը, որ թթխմորի դեր պիտի կատարեր հետագա գործունեության մեջ, անհերքելի հանգամանք, որ կայարգվի ստորև:

Մի անհրաժեշտ վերապահում ևս, բանը չպետք է պատկերացնել այնպես, թե այս կամ այն հարցում Ստ. Ռսկանյանը դարձավ «Արշալույս արարատյանում» արծարծված այս կամ այն գաղափարի կրողը, այդ գաղափարի շարունակողը, նույնիսկ հետևորդը: Ստ. Ռսկանյանը և Ղ.Պալղազարյանը տրամագծորեն հակադիր, նույնիսկ անհամադրելի հրապարակագիրներ էին, տարբեր ու անհամադրելի գաղափարախոսներ, ճակատ առ ճակատ դիմացդեն կանգնած գործիչներ: Իր հրապարակագրության արշալույսից սկսած Պալղազարյանն, օրինակ, չափազանց մեղ ու հետադեմ , նույնիսկ «խոնարհական» գաղափար էր որդեգրել ազգասիրության հարցում և ուղղակի քարոզում էր ոչ միայն ազգության, այլ նաև ազգի երևելիների, մեծամեծների, ավագանիի պակասությունների հանդեպ աչք փակելու, դրանք քաքցնելու, լավագույն դեպքում լոկ զգուշությամբ նկատելու, մեկուսի ու դողողալով շտկելու գաղափար: Այդ էր նա քարոզում ու մերողություն խնդրելով ակնարկում «Արշալույս արարատյանում» 1842թ. հոկտեմբերին և նոյեմբերին հրատարակած երկու հոդվածներում՝ «Ազգասիրություն» խորագրով: «Մենք որ ինքզինքնիս ազգասեր կհամարենք, – գրում էր Ղ.Պալղազարյանը, – կպարտավորվինք, որ մեր ազգին, մեր եղբայրներուն համար ամենևին տեղ չսենք, անոնց պակասությունները միշտ ծածկենք, ու ձեռքերնս եկածին չափ աշխատինք զգաստացուցանելու զանոնք, թե որ անկարգության մեջ ընկած են, բայց միշտ սիրով, խոնարհությունով ու քաղցրությամբ»¹: Մինչդեռ իր հրապարակախոսության նախաշեմին, իր հանդեսի հենց առաջին տողերով Ստ.Ռսկանյանը մտրակ է շաչեցնում ազգային պակասությունների և անձեռնմխելիության հասած ազգային երևելիների դեմ, հույր ու շանթեր ուղղում այդ պակասությունների վրա:

¹ «Արշալույս արարատյան», 24 հոկտեմբերի, 1842, N 57:

Ինչ խոսք, կարելի է դիմել նաև այլ աղբյուրների, վկայա-
կոչել այլ նյութեր, մասնավորապես այնօրյա մի շարք հրատա-
րակություններ, ինչպես նաև բուն զմյուռնահայ կյանքից մատ-
նացույց անել կոնկրետ շատ օրինակներ: Սակայն տվյալ
դեպքում հարցը փաստերի քանակը չէ և ոչ էլ դրանց բնույթը:
Խնդիրը պարզապես այն է, որ Ռսկանյան գործիչը նախապես
ձևավորվում, հասունանում էր զմյուռնահայ իրականության մեջ
և նրա ազդեցության տակ: Դա բնական լինելուց բացի, անխո-
սափելի էր, նա իր միջավայրի հարազատ ծնունդն էր, ու նրա
հետագա գործունեությունը, իր սաղմնային սկզբնավորումով
հանդերձ, պայմանավորված էր գաղթօջախի հայկական իրակա-
նությանը:

Ռսկանյանի ծննդավայրը՝ Ջմյուռնիայի հայկական
գաղթօջախը, նաև այն օրրանն է, որտեղ նա կատարել է իր
ստեղծագործական, մի քիչ ավելի ուշ՝ նաև իր գործունեության
անդրանիկ քայլերը: Այս իմաստով նույնպես նա պարտական է
«Արշալույս արարատյան» թերթին, գուցե և՛ անձնապես նրա
խմբագիր Գ. Պալդազարյանին: Այդ թերթը, նրա խմբագրությունը,
հայտնի պայմանավորվածությամբ ասած, եղել է գաղթօջախի
մշակութային կենտրոններից մեկը, նույնիսկ գաղթօջախը մյուս
գաղթավայրերի, իսկ դրանից ավելի մայր հայրենիքի հետ
զմյուռնահայությանը կապող օղակներից: Այդ ուրույն կենտրոնի
հետ Ռսկանյանը կապված էր դեռ այն տարիներից, երբ սովորում
էր Մեսրոպյանի բարձր դասարանում՝ տակավին 18 տարե-
կանից: Թերթի էջերում սկսում են հրատարակվել Ռսկանյանի
չափածո ու արձակ գրական փորձերը¹: Դրանք, ըստ էության,
Ռսկանյանի գուտ ստեղծագործական ու հրապարակախո-
սական նախաքայլերն են՝ արժանի հատուկ ուշադրության,

¹ Այս նյութերին առաջին անգամ անդրադարձել է բանասեր Ս. Ծոխիկյանը
(տե՛ս «Լրագրեր» հաս. գլխ., 1969, N 4, 1974, N 4, «Պատմաբանասիրական
հանդես», 1969, N 2): Նկատենք նաև, որ «Արշալույս արարատյանում» տարիներ
շարունակ զետեղվում էին Մեսրոպյան և այլ վարժարանների սաների
ստեղծագործությունները, ատենախոսությունները և բարգձմությունները: Ինքնին
հասկանալի է, որ թերթը դրանով խթանիչ մեծ դեր էր կատարում: Աճող սերնդին
խրախուսելու այդ ուղեգծից նա չիրաժարվեց (ույնիսկ այն ժամանակ, երբ այլ
պարբերականներ ծաղրանքով էին խոսում այդ մասին (տե՛ս «Մեսախ», 16 ապրիլի
1859, N 377):

առափել ևս, որ այդ նյութերը մասնաճիւղային գաղափարական սահմանափակումներով հարստացնեն, թեև շատ թույլ արտահայտված:

1843թ. հունվարի 1-ին առաջին անգամ մամուլում երևաց Ստ. Ռուկանյանի ստորագրությունը. «Արշալույս արարատյան» թերթը տպագրեց Մեսրոպյան վարժարանի աշակերտի անդրանիկ գրական փորձը՝ ֆրանսերենից կատարած թարգմանությունը՝ «Կիրակի օր անգլիացի սլավոնագրական մեծի մը մեջ»: Ամսվա վերջին թերթում զետեղվել է Ռուկանյանի մի այլ թարգմանությունը՝ «Չինացոց թաղման արարողությունը»: Շուտով երևաց նրա մի նոր գործը («Արտառոց պատմություն մը»)՝ դարձյալ արձակ թարգմանություն ֆրանսերենից: Դրանք բոլորն, իրոք, աշակերտական բարեխղճությամբ կատարված թարգմանություններ են և արժեքավոր նրանով, որ սկզբնափորում են ապագա մեծ հրապարակախոսի նախաքայլերը:

Հաջորդ տարում՝ 1844-ին, Ռուկանյանը թերթում հանդես է եկել մասնաճիւղային քերթվածներով և չափածո թարգմանություններով: Մեսրոպյանի ավարտական դասարանի աշակերտի համար դա ակնառու հաջողություն էր: «Արշալույս արարատյանի» փետրվարի 4-ի համարում հաղորդվում է այն մասին, որ վարժարանի տարեվերջյան քննության հանդեսին, Ա. Փափազյանի ատենախոսությունից հետո, առաջադեմ աշակերտներից Հայկ Ստեփան Ռուկանյանը¹ կարդաց իր ոտանավորն՝ «ի նվեր Սյունյաց ընկերությանը»: Թերթը զետեղել է մասնաճիւղային գույգ տողից բաղկացած քերթվածը՝ գրաբարախառն աշխարհաբար լեզվով:

Առաջին անգամ էր «Արշալույս արարատյանը» չափածո գործ հրատարակում, և Ռուկանյանն էլ առաջին անգամն էր ինքնուրույն բանաստեղծությամբ հանդես գալիս: Բայց «Սյունյացին» նվիրված Ռուկանյանի քերթվածը դրանով չէ նշանավոր: Այդ ընկերությունը, ինչպես կտեսնենք քիչ հետո, ծավալել էր ազգասիրական չափազանց լայն ու մեծ գործունեություն,

¹ Ռուկանյանի կրկնակի անունը՝ Հայկ Ստեփան, պայմանավորված է նրանով, որ Մեսրոպյանի տեսուչ Ա. Փափազյանն իր սաներին հայրենասիրությամբ տոգորելու համար խորհուրդ էր տալիս նրանց կրել մասնաճիւղային անուն՝ գլխավորապես ժառանգելով «հայ դյուցազունի անուններ»: Ինքը՝ Փափազյանը, կրում էր Ռուսեն երկրորդ անունը:

գործադրում էր բացառիկ եռանդ նոր դպրոցների հիմնելու և հայ մանուկներիին կրթություն տալու ուղղությամբ: Դ-րվատել այդ գործունեությունը և նրան ընդարձակ ներքող նվիրել նշանակում էր որդեգրել ընկերության գլուխը, նրա դեմոկրատական գաղափարներն ու նպատակները: Շուտով նրան, իրոք, կտեսնենք «Սյունյացի» ղեկավար կազմում, իսկ այժմ նա փառաբանում է ընկերության ազգաշահ ձեռնարկումները, ներքողում նրա գործունեությունը, որ «ցրտություն սաստկաշունչ լուծով արդ ձմերան»: Դիմելով Հայաստանին, նա ասում է.

*Ձիք երկյուղ ալ գողոց ոչ երամք ժակնր մկնոնց
Այլ կրծեկ մարթասցեն ըգհամարս մեծագանն,
Ձի ունիս պահապանս որք անդուլ ինամենկ
Եվ ի սեր քո գոգիս ի վրանց արկանենկ:*

Ներքողի հեղինակն այնքան է ոգևորված հայոց որդիների «քաջառողջ ու անխիթ» աճումով, որ կոչ է հղում ազգության խորհրդանիշին.

*Մի այլևս Այրարատ, ննջեր դու խոր ի քուն,
Չարտասուս քոց աչաց սրբյալ արդ գեղամույն,
Ե՛կ փութա րեսնեկ քաջաթև սլացյալ,
Չհովիվ քո գառանց յայս փարախ ոսկեփայլ:
Ե՛կ, մի՛ այլ հսպաղեր ի հոսվո և հականց
Ոլորեկ ասրանոր պսակըս մեծագանն:*

Հեղինակի ջերմ ազգասիրությունն ու հայրենասիրությունը մարմնավորող այս ներքողից զատ թերթում հրատարակվել են նրա չորս ինքնուրույն գործերը և թարգմանությունները, որոնց մեջ հատկապես նշանակալից է Լաֆոնթենի հայտնի առակը՝ «Ճպուռն ու մրջյունը»: Դ-րանով մեծ առակագիրն առաջին անգամ էր ներկայանում հայ ընթերցողին: Զիչ ծառայություն չէ դա, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Լաֆոնթենի մի շարք այլ գործեր ևս («Գորտն, որ ջանա գլել զեզն մեծությամբ», «Կաղին և եղեգն» և այլն) նրա թարգմանությամբ լույս են տեսել «Արշալույս արարատյանում», ինչպես և այն բնորոշ պարագան, որ

մեծ առակագիրը Ստ. Ոսկանյանին ուղեկցել է նրա ողջ կյանքի ընթացքում: Անշուշտ, կարևոր են Ոսկանյանի ստեղծագործական անդրանիկ քայլերը՝ «Չմեռ» և «Հին տարի» բանաստեղծությունները, որոնցով նա իր ավանդն էր բերում արևմտահայ նոր պոեզիայի լինելիության մարզում:

Ընդհանուր առմամբ Ոսկանյանը 1844 – 1845թթ. թերթում հանդես է եկել 16 անգամ՝ ստորագրելով «Հայկ Ստեփան Ոսկանյան», «Հայկ Ս. Ոսկանյան», «Հ. Ս.», «Հ. Ս. Ո.», «Հ. Ս. Ոսկանյան»: Չանդրադառնալով դրանցից յուրաքանչյուրին, առավել ևս թարգմանություններին, որոնց ընդհանուր միտվածությունը հանգում է ֆրանսիական գրականության լավագույն մտուշները հայ ընթերցողին ներկայացնելու շնորհակալ նպատակին, ծանոթանանք Ոսկանյանի այն մի քանի գործերին, որոնք կարևոր են նրա հրապարակախոսության սկզբունքներին մոտենալու իմաստով:

Չմյուռնիայում փորձում էին ավանդաբար ամեն տարի նշել Վարդանանց տոնը, որի առթիվ տեղի էին ունենում նաև դպրոցական հանդիսություններ: Մեսրոպյան վարժարանում կայացած տոնախմբության առթիվ իր ներբողական խոսքն ասելուց հետո «Արշալույս արարատյանը» հաղորդել է նաև այն մասին, որ «անմահ գորագլխին» իբրև ընծա կարդացվել (թերևս նաև երգվել) է «միամիտ գրույզն գիրս, իբր գրավական երախտագետ սրտից», ապա «Բարեկեցիկ ավուրք» խորագրի տակ հրատարակել է Ստ. Ոսկանյանի «Ծոյլ աշակերտն և ժիր» վերնագրով չափածո ընդարձակ գործը: Դա իր ծավալով պոեմի ժանրին մոտեցող (ավելիքան 160 տող) երկխոսություն է ծույլ և ուսումնասեր երկու աշակերտների միջև:

Ծույլը նախատում է ժիր աշակերտին, թե ինչու է փակվել սենյակում, չի մասնակցում ուրախությանն ու խաղին և խորհուրդ տալիս թողնել անօգուտ գիրը, զբոսանքի գնալ ծաղկանոց: Բայց ուսումնատենչ աշակերտը դրանում որևէ օգուտ չի տեսնում: Ծույլը նորից ու նորից է փորձում համոզել, նույնիսկ հրապուրել նվագով ու երգով, պարով և բնությամբ: Սակայն ժիրը բերկրության դաշտ է համարում «գրոց դաշտ դալար», մերժում է ցուխ և ուրախ կյանքը: Ծույլը գրքերի աշխարհը համարում է դարան,

դպրոցը՝ բանտ, ուսումնասեր աշակերտին՝ դիվահար: Հակահարված տալով այդ ամենին, ժիրը խրատ է տալիս, որ անհոգ մանկությունը կտանի դեպի մահ, որ վայելքներին տրվելը, մարմին հաստացնելը կտանի դեպի քարավերժ նետվելը, իսկ վերջում ասում՝

*Ուսմամբ զարդարել
Չմիլու քո մարտը
Չի նոքա միայն
Նոքա յայս կենաց,
Ուրախ առնեն ըզմեզ
Եվ ոչ գուսակաց հսկողես:*

Գիտելիքներ ձեռք բերելու, ուսմամբ առաջադիմելու և կատարելագործվելու կոչերը հատուկ էին լուսավորական շավիղը բռնած գաղթօջախին: Երիտասարդ Ոսկանյանը իր երգով արձագանքում էր համայնքի մտավոր տեղաշարժերին և հայ մանկական պոեզիայի շտեմարան ներմուծում նրա վաղ շրջանի համար ուշագրավ մի ստեղծագործություն, որտեղ միաժամանակ դրսևորվել է հեղինակի բովանդակ կյանքի նպատակը դարձած փափագը՝ անդադրում գինվել գիտելիքներով, լուսավորության ու մտավոր զարգացման հետ կապել ազգի ներկայի բարվոքումն ու ապագայի ապահովումը:

Հատկանշական է նաև Ոսկանյանի այն թարգմանությունը, որ գետեղված է «Արշալույս արարատյանի» 1845թ. ապրիլի 21-ի համարի «Բանասիրական» բաժնում (N231): Չարդագծով իրարից անջատված երկու թարգմանություններից՝ «Հայրենասիրություն» և «Բարոյական», միայն վերջինի տակ է դրված Ոսկանյանի ծանոթ ստորագրությունը՝ «Հ.Ս.Ո.», բայց, ինքնին հասկանալի է, որ երկուսն էլ նա է ֆրանսերենից թարգմանել: Ոսկանյանին հոգեհարազատ հայրենասիրության թեման իր մագարմատներով գալիս հասնում է գողտրիկ մի դրվագի, որ արտացոլված է ոչ մեծ ակնարկում. 1806թ. ֆրանսիացիները պաշարել են Սարդինայի Թուրին քաղաքը, գրավել բոլոր բերդերը, բացի մեկից: Երկարատև պաշարումից հետո, չկարողանալով գրավել այդ բերդը, հակառակորդը միջոցներ է որոնում

դիմադրությունը կոտրելու: Մակայն քաջագուն Պետրոս Միքան, «անխուսափելի մահվան վտանգի» ենթարկվելով, կարողանում է փրկել իր համաքաղաքացիների մեծ մասին. նա դարանակալած հակառակորդին ոչնչացնելու համար որոշում է «Թշնամյաց հետ ինքն ալ մեռնիլ» և կրակի է մատնում վառողարանը: Օգնության հասած յուրայինները փրկում են քաղաքը, բշում հակառակորդին:

Իր անձը զոհելու գնով հայրենակիցներին փրկող և հայրենի քաղաքի անկախության կռվում քաջագնաբար մարտնչած Պետրոս Միքային նվրիված պատմությունը Ոսկանյանը թարգմանել է կոկիկ աշխարհաբարով: Անհավանական չէ, որ թուրինցի հերոսի սխրանքը տևական սեր է անթեղել երիտասարդ Ոսկանանի սրտում, դեպի իտալացիները, դեպի իրենց անկախության համար մարտնչող ժողովուրդները, նրանց հերոս զավակները և, առհասարակ, դեպի անկախությունն ու ազատությունը:

Ոսկանյանի վաղ շրջանի ստեղծագործություններն իրենց ամբողջության մեջ պարունակում են նրա հետագա գործունեության հունդերը, որոնք պետք է դեռ ծլեին, փարթամանային: Ընդհանուր մի ուղեգիծ խիստ կարևոր է նրա ստեղծագործական մղումների համար. նա չի տարվում այս կամ այն երևելիին նվիրված ներբողներով ու ձոներգերով, չի խանդավառվում մեծատուն ամիրաներով, սրբազան հայրերով: «Արշալույս արարատյանի» էջերում հաճախ ու հաճախ են հրատարակվում նման ներբողներ ու ձոներ: Դրանց հեղինակները՝ Մանուկ Արայանցը, Հովհաննես Շահինյանը, Գրիգոր Մարկոսյանը և ուրիշներ, մեծարում ու գովերգում են ազգային բարերարներին, նույնիսկ նրանց որդիներին, կրոնական աթոռ գրավող սուրբ հայրերին, մեծահարուստներին:

Ոսկանյանը, սակայն, անտարբեր է նրանց նկատմամբ: Նա գերադասում է ոտանավորներ նվիրել տարվա չորս եղանակներին, թարգմանել չինացիների թաղման արարողությունը, «Քաջընթաց կառքում»՝ ճեպընթացում տեղի ունեցող անցքերին նվիրված նյութերը, երգեր է գրում քամու բերանն ընկած տերևի մասին, փոխադրում է Լաֆոնթենի առակները: Եվ սա տեղի ունի ոչ պատահաբար: Նրա հետագա ստեղծագործական ուղին թույլ

է տալիս ասելու, որ նա ի սկզբանէ որևէ ակնածանք չի տածել ազգային մեծահարուստ երևելիների նկատմամբ, զանազան ազգապետերից իրեն ազատ ու անկախ պահելու տրամադրությամբ է աճել ու դաստիարակվել: Դրա համար նա, անշուշտ, մեծ կամք ու եզակի տոկոսնություն պետք է դրսևորեր, ինչպես և զինվեր անսպառելի հավատով ու վստահությամբ. չէ որ նա մշտապես ապրում ու ստեղծագործում էր նեյթրոլներով փառք ու հռչակ վայելողների շրջապատում, մեծատունների և երկրպագողների հարևանությամբ:

Հատկանշական է, օրինակ, որ «Արշալույս արարատյանը» 1844-ի տարեշրջանը փակող համարում տպագրում է զմյուռնացի Հովհ. Շահինյանի «Տաղերգ դիմառնական» վերնագրով քերթվածը՝ ձոնված արքունի վառողապետ Տատյան Պողոս ամիրայի որդուն՝ Հովհաննեսին, որ գտնվում էր Փարիզում: Մի քանի ամիս անց, նույն Շահինյանը թերթի էջերում (N 237) պիտի հանդես գա ընդարձակածավալ ներքողով՝ նվիրված նույն ամիրայի նույն որդուն¹: Եվ կարծես ի հակադրություն դրա, թերթի նույն տարեվերջյան համարում, հենց տաղերգութնա կողքին երևան է գալիս Ստ. Ոսկանյանի «Հին տարի» բանաստեղծությունը:

Ոսկանյանը դեռ երիտասարդական տարիների իր ստեղծագործություններով հաստատում էր կյանքի հետ իր կապվածությունը, քերթվածներ էր նվիրում իրական իրադարձություններին ու վեհանձնաբար աչքի ընկած հասարակ մարդկանց: Այս իմաստով ուշագրավ է «Արշալույս արարատյանի» 1845թ. հունիսի 29-ի համարում տպագրված բանաստեղծությունը՝ «Հրդեհ Չմյուռնի» վերտառությամբ:

1845թ. հունիսի 21-ի հինգշաբթի իրիկնադեմին Չմյուռնիայի հունական թաղամասում բռնկում է հրդեհ, որը շուտով ընդգրկում է գրեթե ամբողջ փայտաշեն թաղաքը: Զսան ժամ տևած հրդեհը լափում է ավելի քան 3500 տուն, պատճառում 200 միլիոն դուրուշի վնաս: Հրդեհը մոխրի է վերածում ամբողջ հայկական թաղամասը, Սարգսյան վարժարանը, ս.Ստեփանոս տաճարը, շուկան, խանութներն ու վաճառատներ: 900 հայ-

¹ Հ.Շահինյանի մասին տես «Արծալի Վասպուրականի», 1855, N 3, էջ 48:

կական շինություններից կրակե լեզուներից հագիվ 30 տուն է փրկվում¹: Հրաշքով չեն տուժում Մեսրոպյան վարժարանն ու հիվանդանոցը: Շուրջ հինգ հազար ձայեր մնում են անօքևան, «Խեղճ գերդաստաններն ապաստան էին գտել վրանների տակ, խրճիթներում, Մեսրոպյան վարժարանի և հիվանդանոցի շենքերում: Ողբալի էր ամբողջ զմյուռնահայության վիճակը: Նրա կրած նյութական վնասը կազմում էր ավելի քան 50 միլիոն դուրուշ²:

Այդ մեծ աղետի հետևանքով «Արշալույս արարատյանի» հերթական համարը լույս տեսավ միայն հունիսի 29-ին, երկու էջով, կիսատ, կես թերթի այդ համարում էլ, որտեղ, ի դեպ, կոչ է արվում չընկճվել դժբախտության առջև, զեռեղված է մաև Ոսկանյանի բանաստեղծությունը: Նա նկարագրում է ողբալի պատկերը, սրտամորմոք այն աղետը, որ վիճակվել է քաղաքին ու գաղթօջախի հայությանը:

*Եվ դու տակավ վարարախորիկ Չմյուռնիա
Չանգաթ ժանեաց չէիր զերծեալի նորա,
Քոյդ տակավիկն շենք հոյակապք և պարվարք
Մարմնեկն անդ, ավադ, հայրենաց և յավար...
...Ժանիքդ անգութ ի ծայր եհաս քաղաքին:*

Նույն աղետի հետ է կապված մաև Ոսկանյանի երգերից մեկը, որը միաժամանակ հաստատում է արդեն մատնանշված այն իրողությունը, որ նա մեծատուններին ներբողելու փոխարեն նախապատվությունը տալիս էր շարքային մարդուն երգ նվիրելուն, առօրյա սխրանքը գովերգելուն: «Հայազգի կտրիճ մը», ինչպես հաղորդում է «Արշալույս արարատյանը» փորձել է փրկել իր քարեկամի իրեղենը, բայց շոգեխաշվել, մահացել է: Ոսկանյանի «Երգը» նվիրվում է այդ երիտասարդին: Մոտ քսան տարի անց նա իր հանդեսում հատուկ ջերմությամբ վերապատմում է նմանօրինակ մի սխրանք, որ գործել է Ժան Մեյնար անունով

¹ Չմյուռնիայի հայկական տների թիվը հասնում էր 700-ի, իսկ բնակչությունը 5000-ի, ինչպես նշում է «Արշալույս արարատյանը» 1845թ. հունվարի 27-ի համարում:

² Տե՛ս «Հայրենասեր», 29 հունիս, 1845, N 85:

նավաստին. նա դեկը չթողնելով բռնկված շոգենավը հասցրել է նավահանգիստ, «բոցերու մեջ հոգի» է տվել. «Իր պարտքը կատարեր ու ընկերները ազատեր էր», – եզրափակել է Ռսկանյանն արենացիներին վայել սխարանքի նկարագրությունը¹:

Ռսկանյանի երիտասարդ տարիների թե՛ չափածո և թե՛ արձակ հրատարակությունների գերակշռող մասը թարգմանություններ են ֆրանսերենից, երբեմն էլ՝ իտալերենից: Դրանք երաշխիք են այն բանի, որ նա կարող էր նվիրվել թարգմանական գրականությանը: Նրա նախասիրությունը, որքան կարելի է դատել «Արշալույս արարատյանի» էջերում տպագրված թարգմանություններից, դեմոկրատական միտումներով տոգորված ստեղծագործություններն են, հեշտ ընթերցվող, հետաքրքրաշարժ, միաժամանակ և դաստիարակչական ներգործությամբ օժտված երկերը: Ցավոք միշտ չէ, որ թարգմանվող երկերի տակ նշվում է նաև նրանց բուն հեղինակը: Դա մեզ զրկում է Ռսկանյանի նախասիրած հեղինակներին հիշատակելու հնարավորությունից: Բացառություն է կազմում Լաֆոնթենը, որի առակները շատ չանցած տեղ գրավեցին Ռսկանյան հրապարակախոսի, ինչպես նաև հայ դեմոկրատական մտքի ներկայացուցիչների հրապարակախոսական զինանոցում:

Մի կարևոր գիծ ևս ստկա է Ռսկանյան թարգմանչի դիմապատկերում. նա արձակ երկերը գերազանցապես թարգմանում է աշխարհաբար լեզվով, հանդես է բերում որոշակի լեզվագագացողություն ու հմտություն, բառերի ու ոճերի ընտրության, երբեմն նաև կերտելու վարպետություն: Ըստ որում նա փոքրածավալ գրույցներից սկսում է անցնել համեմատաբար ծավալուն պատմությունների թարգմանությանը, որը ևս ցույց է տալիս նրա հետաքրքրասիրությունը դեպի թարգմանական գործը:

1845-ի հունիսին, «Արշալույս արարատյանի» N 235-ի էրեք էջերում հրատարակվել է Ստ.Ռսկանյանի՝ իտալերենից թարգմանած պատմվածքի՝ «Փրետերիկոս Լանուչե», առաջին մասը: Շուտով տեղի ունեցած հրդեհից թերթի տպարանում այրվում է պատմվածքի թարգմանության ձեռագիրը: Ծանուցելով այդ մասին թերթը մոտ չորս ամիս անց հրատարակում է

¹ «Արևմուտք», 1864, էջ 32:

պատմվածքի երկրորդ մասը, դարձյալ երեք էջում (N 243): Ոսկանյանն, անշուշտ, նորից էր թարգմանել պատմվածքի երկրորդ մասը: Հետաքրքրաշարժ պատմության գաղափարը հանգում է այն քանին, որ «անմեղությունը երբեմն անտանելի հալածանքներ կկրե, բայց վերջապես կհաղթե», ճշմարտություն, որի մեջ արդարության համար մարտնչող Ոսկանյանն իր գործունեության ընթացքում հաճախ է համոզվել:

Այսպիսով, վերը բերված փաստերը թույլ են տալիս պնդելու, որ «Արշալույս արարատյանը» 1843 – 1845թթ., երբ Ոսկանյանը 18-20 տարեկան երիտասարդ էր, եղել է ապագա խմբագիր-հրատարակախոս-ստեղծագործողի ուրույն դպրոցը, որտեղ նա կատարում էր իր անդրանիկ քայլերը, դասեր առնում. թերևս նաև ճաշակ բերում՝ անկախ պահպանողական այն ուղղությունից, որ հատուկ էր այդ պարբերականին ու նրա խմբագրին: Այդ դասերն ապագա գործչի համալր ավելին չէին, քան տառաճանաչությունը, որը, սակայն, նաև սկիզբների սկիզբն էր:

Այն նույն տարիներին, երբ դեռ Ոսկանյանը Չմյուռնիայում էր, «Արշալույս արարատյանի» եռամյա մենաշնորհից հետո. հրատարակվում է «Հայրենասեր» քաղաքական, բանասիրական և առևտրական շաբաթաթերթը: Նրա հրատարակ գալը կարևոր նշանաձող է գաղօջախի հասարակական մտքի, և ոչ միայն գաղօջախի, զարգացման պատմության մեջ: Թերթի հրատարակությունն ավելին է քան մի նոր պարբերականի լույսընծայումը, քան պահպանողական «Արշալույս արարատյանի» տիրապետությանը վերջ տալը: «Հայրենասերով» փաստորեն երևան էր գալիս դեմոկրատական ոգով տոգորված զմյուռնահայ երիտասարդությունը, որին վերապահված էր սկզբնավորելու առաջադիմական այն շարժումն ու պայքարը, որ հետագայում լայն ծավալ ստանալով, նվաճեց խշխտղ դիրքեր և վճռական դեր կատարեց գաղօջախի կյանքում: Դրան զուգահեռ «Հայրենասերին» բացառիկ պատիվ է վիճակվել. հայ մամուլի պատմության մեջ նրա էջերում են առաջին անգամ երևում հայ հրատարակախոսության անդրանիկ ծիլերը, հայ լրագրողի համարձակությունն ու սոկունությունը քննադատական ոգի ու նպատակալացություն հանդես բերելու ասպարեզում: Դա նոր էջ էր հայ մամուլի տարեգրության մեջ: Այդ պատճառով, թվում է՝ տեղին

կլինի ծանոթանալ այդ թերթին և նրա առաջադրած սկզբունքներում, նույնիսկ գործունեության մեջ նույնպես դիտարկել այն սկզբնասաղմերը, որոնք հետագայում աճեցին Ռսկանյանի հանդեսներում ու հրապարակախոսության անդաստանում:

«Հայրենասերը» Ջմյունիայի հայկական գաղթօջախում սկզբնավորվող դեմոկրատական շարժման նախակարապետը և նոր գաղափարախոսությամբ տոգորվող երիտասարդության երախայրիքը լինելով, ոչ թե անհատական հրատարակություն էր, ինչպես «Արշալույս արարատյանը», այլ թերթ հրատարակելու ու գրատպությանը զարկ տալու նպատակով համախմբված երիտասարդության՝ Արագածունյաց ընկերության պարբերականն էր, նրանց տպագիր օրգանը: Նրա շուրջը համախմբված երիտասարդ լրագրողներն ու հրատարակիչները, թերթի խմբագիր Խաչատուր Մելիքսելյանցը մամուլի ու գրատպության դերի հիանալի ըմբռնումով էին ձեռնամուխ լինում գործին: Նպատակ ունենալով թերթի և «ազգօգուտ գրքերի» հրատարակությամբ նպաստել հայ ժողովրդի կրթությանն ու լուսավորությանը, առաջին երկշտո քայլերն էին անում կոնկրետ քննադատություն ծավալելու և ազգային պակասություններն այդպիսով շտկելու ուղղությամբ: Ջմյունահայ հետադիմությունը և մեծահարուստները չէին կարող հաշտվել նրանց բռնած ուղեգծի հետ: Բուռն դժգոհությունները, թեև անհիմն ու անտեղի, վեց ամսով (1843թ. հոկտեմբերից մինչև 1844թ. ապրիլը) խափանեցին թերթը, իսկ երբ այն սկսեց վերահրատարակվել, հրդեհից ծանր հարված կրեց նրա տպարանը, թերթը շարաքականից դարձավ երկշաբաթյա: Ընկերությունը և նրա թերթը չկարողացան կայուն հենարան գտնել. 1846-ի մայիսին թերթը դադարեց գոյություն ունենալ: Ծատ չանցած՝ 1847-ին փակվեցին թե՛ Արագածունյացի տպարանը և թե՛ ընկերությունը, որը գրատպության իր ծրագրից իրագործեց միայն երկու գրքուկի հրատարակությունը՝ «Համառոտություն ազգասիրական սխրագործությանց»... (1843, 18 էջ), որ նվիրված էր Ներսես կաթողիկոսի գործունեությանը Վրաստանի ու Բեսարաբիայի թեմերում և Հովհ. Չամուռնյանի հայատառ թուրքերեն գրքի՝ «Հայտարար ուղղություն...» (1845, ԺԲ – 329 – 3 = 344 էջ), առաջին հատորը:

Արտաքուստ «Հայրենասերը» գրեթե չէր տարբերվում

«Արշալույս արարատյանից», բայց էությամբ նրանց միջև մեծ զանազանություն կար: Առաջին իսկ համարում նա առաջնային նշանակություն է տալիս գիտությանը, որը, նրա բնութագրությամբ, «աշխարհիս բարեկրթության ու լուսավորության հիմն է»: Ամենքն էլ պարտավոր են ամեն ինչց առաջ «երկու ձեռքով բռնել» գիտությունը, ինչպես և՛ վաճառականությունը: Այս ելակետից թերթը մատնացույց է անում եվրոպական ազգերին, որոնց առաջընթացին մեծապես նպաստել են նաև «գազետա» ըսված օրագրությունները»: Թերթն իր առջև խնդիր է դնում ընթերցողին հաղորդել «Բազմավեպի» տպագրածից տարբեր նյութեր և մանավանդ բոլորին ծանոթացնել գաղթօջախների կյանքին, կապ հաստատել Հնդկաստանի, Կ.Պոլսի և Հայաստանի հայերի միջև, ազդարարել այն մասին, որ «սղքատը օգնության կարոտ է» և չգիտե, թե «որին պատմե իր ցավը» (N 5):

«Հայրենասերը» հաստատապես կանգնած էր աշխարհաբարի դիրքերում: Պարզ աշխարհաբար լեզվով տպագրվելու հետ միաժամանակ նա հետևողականորեն խուսափում էր օտարազգի բառեր գործածելուց, իսկ գրաբար բառերը ստուգարանում էր, ամեն անգամ հատուկ ծանոթագրությամբ էջատակում բացատրում, թեև երբեմն էլ հարկ էր համարում գրաբար ոչ մեծ տեքստեր տպագրել՝ «գրաբար լեզվին վայելչությունը միտերնես չի համենք և նոր սովորողներուն ալ խրախույս մը ըլլա» (N 1): Առհասարակ թերթը գտնում էր, որ պետք է միաբանած ընթանալ «դեպի լուսավորություն, բայց առաջ մեր լեզուն շտկենք, խոսինք անանկ հայերեն մը, որ իրարու խոսք հասկնանք, հազար ու մեկ քաղաքներու տարբեր խոսակցությունը մեկ կանոնավոր հայերեն աշխարհաբարի ձևացնենք և ըլլանք մեկ համաբարբառ ազգ»: Այդ նպատակով նա դիմում է բոլոր ուսումնական ընկերություններին, դպրատներին, վանքերին ու գիտնականներին՝ միաբան հավանությամբ գործել, որպեսզի հիսուն տարի անց «ամենը մեկ լեզու ըլլա» (N 8): Թերթը մասնավորապես պաշտպանում էր «Արշալույս արարատյանի» հոդվածագրի առաջարկը՝ մշակել, հղկել հայոց լեզուն, կանոնարկել աշխարհաբարը:

Ստ. Ոսկանյանի ուսումնառության ակունքը Չմյուռնիայի մեսրոպյան հռչակավոր տղաների վարժարանն էր¹, 300-350 աշակերտներով: Վարժարանն իր գոյությունը պահպանում և բեղմնավոր գործունեությունը ծավալում էր ծանր ու մշտատև երկումքներով: Գաղթօջախի հասարակայնությունը սիրում ու փայփայում էր մշակույթի իր անդրանիկ և հինավուրց օջախը՝ նրան վերաբերող յուրաքանչյուր մեծ ու փոքր հարցում հանդես բերելով տիրոջ շահագրգռվածություն ու կիրք: Հիմնադրման օրից տեղավորված, ավելի ճիշտ ասպատանած լինելով պատահական շենքերում, հենց Ոսկանյանի ծննդյան տարում՝ 1825-ին, վարժարանն ունեցավ իր հատուկ շենքը՝ քարակառույց, երկհարկանի, բոլոր հարմարություններով: Շենքը կառուցվել է կարճ ժամանակահատվածում, համայնքի հավաքական միջոցներով ու նվիրատվություններով, բայց ոչ առանց հատկանշական դիպվածի: Երբ ավարտվում է դպրոցի երկրորդ հարկի շինությունը, քուրքական իշխանությունները արգելեցին կառուցումը, բանտ նետեցին «բոլոր ազգապետերը»: Հիմնականում միահարկ ու փայտաշեն Չմյուռնիայի համայնապատկերի վրա դպրոցի խոյացող շենքը օսմանյան զավթիչների դեմ մղվող հունական ազատագրական պատերազմների տարիներին քուրքերի աչքում ամրոցի կերպարանք էր առնում: Մեղադրանքը ծանր էր՝ «հայերն ալ ապստամբության կպատրաստվին և անոր համար ամրոցանման շենք մը կկառուցեն»: Հարկ եղավ դիմել ազդեցիկ գմյուռնահայերի և, իհարկե, կաշառքի օգնությանը: Կես դար շարունակ՝ մինչև 1886թ., այդ շենքը ծառայեց գաղթօջախի տղաների ուսումնակրթական գործին:

Երջանիկ զուգադիպությամբ Չմյուռնիայի Մեսրոպյան վարժարանի առաջին տնօրենը, որ ղեկավարել է այդ հաստատությունը շուրջ երեսուն տարի՝ 1799 – 1830թթ. եղել է իր ժամանակների համար բավական կրթություն ստացած մշակութային գործիչ, մեծավաստակ լուսավորիչ-ստեղծագործող ու ականավոր մանկավարժ Հովհան Վանանդեցին (1772 – 1840): Նա

¹ Գաղթօջախի աղջիկները 1839թ. կրթություն էին ստանում առանձին՝ Սարգսյան վարժարանում:

հայ պատմաքաղաքական պոեզիայի մեծ ներկայացուցիչն է, ստվարածավալ երկերի՝ «Տեսարան դանհիսիցն Հայկի, Արամի, ու Արայի», «Արփիական Հայաստանի», «Ոսկի դար Հայաստանի» հեղինակն է՝ սոգորված հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությամբ: Նրա պոեզիայի առանցքը ազգության քաղաքական ազատությունն է, հայրենասիրությունը՝ հենված պատմական անցյալի և ժողովրդի իրօրյա կացության ու գաղափարական ոգորումների վրա:

Ձմյուռնահայության անշեջ հայրենասիրությունը գեղարվեստական լիամփոփ արտացոլում է գտել Վանանդեցու երկերում: Պատմական անցյալի լայն վերհանումով Վանանդեցին դեպի «հայոց տունն» էր մղում ցաքուցրիվ ազգին և, այդ անցյալին շաղախելով իրականությունը, ժողովրդի առօրեական ու շոշափելի վիճակը, արծարծում էր հրատապ խնդիրներ, ոգեկոչում էր ազգային ինքնագիտակցությունը, ընթերցողին գործունեության էր մղում, նրա սրտի ու մտքի կենտրոնակետում խոյացնում «Մայր Հայաստանը, երկիր դրախտավայրը»: Իր բազմապարփակ պոեզիայով Վանանդեցին հայ պոեզիայի՝ Ալիշանից մինչև Աբովյանն ընկած ժամանակահատվածի արժանավոր նախորդն է, հայտնի չափով նաև սկզբնակունքը:

Լուսավորական իր գաղափարախոսությամբ, որ կնքված էր «Ի գիր, ի սուր և յարհեսուր ի պետս հասարակաց» նշանաբանով, Վանանդեցին ոչ միայն Մեսրոպյան վարժարանում, այլ նաև զմյուռնահայ գաղթօջախում սերմանել է ազգասիրության ու հայրենասիրության, ինտերնացիոնալիզմի ու հումանիզմի գաղափարներ:

Այդ ավանդույթներն ընդլայնվել ու ամրապնդվել են Մեսրոպյան վարժարանի հաջորդ մեծ մանկավարժի ու տնօրենի՝ Անդրեաս Փափազյանի (1806 – 1857) երկարատև ու բեղմնավոր գործունեությամբ:

Հարցը միայն այն չէ, որ Վանանդեցու գաղափարները կնիք են դրել Փափազյանի լուսավորական-մանկավարժական աշխարհայեցության ու իրական գործունեության վրա. նրանք համատեղ աշխատել են շուրջ տասը տարի, ու Փափազյանի համար Վանանդեցին ոչ միայն երախտաշատ նախորդ էր, այլ նաև մեծ ուսուցիչ: Փոխարինելով Վանանդեցուն, Փափազյանը

գործնական հողի վրա դրեց իր նախորդի գաղափարները, դարձավ նրա արժանավոր հետևորդը: Նրա գործունեության ժամանակաընթացքում (1830 – 1857) Մերուսյան վարժարանը հասավ մեծ առաջադիմության ու փառքի, ինչպես գրել է «Արշալույս արարատյանը» դեռևս 1847թ., դարձավ զմյուռնահայության «միակ պարծանքը և մխիթարությունը»: Նման վարժարանների հետ կապելով «Հայոց ազգին հույսը և ակնկալությունը», թերթը ակնկալում էր, որ Մերուսյանի շրջանավարտները մեծապես կնպաստեն գաղթօջախի առաջադիմությանը¹: Եվ իրոք, Վանանդեցու և Փափագյանի սաները շուտով սկսեցին տնօրինել Չմյուռնիայի հայկական մշակութային ամբողջ կյանքը և մի երկար ժամանակամիջոց՝ 1840 – 1900-ական թվականներին, եզակի արգասաբերությամբ զարգացրին հայ մանուկը, հրապարակախոսությունը, գրատպությունը, թարգմանական գրականությունը, մշակութային ձեռնարկումները, թատրոնը և արվեստի մի շարք այլ բնագավառներ, դարձան գաղութի հեռապլանները՝ հասարակական գրեթե բոլոր ասպարեզներում:

Ստ. Ոսկանյանը հավանաբար աշակերտել է և՛ Վանանդեցուն, և՛ Փափագյանին: Հանձին այդ մեծ մանկավարժների և գաղութահայ այդ նշանավոր վարժարանի նա ունեցել է իր սնող մայրը՝ ավստ մաթերը: Նրա գործունեության բոլոր ասպարեզներում առանց դժվարության գիտակցվում է հայ անվանի մանկավարժների ու ժամանակի հայկական լավագույն դպրոցներից մեկի ուղղակի կամ հեռավոր ազդեցությունը: Դա պարտավորեցնում է գոնե հպանցիկ մի հայացք ձգել Մերուսյան վարժարանի և Փափագյանի գործունեության վրա, ինչպես և վերիիշել նրանց հետ առնչվող այն մի շարք ձեռնարկումները, որոնք անմիջականորեն ուղեկցել են նրան: Այդպիսով երևան կգան Ոսկանյանի գաղափարական որոշ մղումների և գործնական մի շարք քայլերի սկզբնակունքները:

Որքան էլ Հովհ. Վանանդեցին իր ժամանակի զարգացած անձնավորություններից էր, այսուամենայնիվ նա իր դարաշրջանի գործիչն էր և քիչ էր հաղորդակցվել եվրոպական կյանքի առաջընթացին, և այդ առաջընթացի արդյունքը եղող տեղա-

¹ «Արշալույս արարատյան», 28 նոյեմբերի 1847, N 299:

շարժերը Մեսրոպյանում սկզբնավորվում են Ան.Փափազյանով: Մինչև նրա տնօրինությունը վարժարանի ընդհանուր պատկերը կարելի է բնութագրել Մ.Նուպարյանի խոսքերով. «Առհասարակ հարց-պատասխանով ու բոլորովին թութակորեն էին դասավանդությունը: Աշակերտը կսերտեր, կխոսեր իր դասը այլ բան մ'ընթռնած, հասկցած, յուրացրած չէր անկե: Մարդմեքենա մ' էր այն, որ կկատարեր իր անգիտակից պաշտոնը»¹:

Մեր հին դպրոցին բնորոշ այս պատկերը Մեսրոպյանում սկսել է փոփոխվել Ան. Փափազյանի նախաձեռնությամբ: Հինգ տարի սովորելով Իտալիայում, Կ.Պոլսի շուկայական մանրավաճառի որդին, հիանալի կրթություն է ստացել՝ հաղթահարելով «շատ վիշտ, տառապանք, նեղություն, հիվանդություն ու անձկություն»²: Կրթություն ստանալուց բացի, Փափազյանը, 1826 – 1831թթ. ապրել է իտալական մթնոլորտում, որ հազեցած էր հասարակական-քաղաքական լուրջ իրադարձությունների ոգով, որին նա հաղորդակցվել է թեկուզ ակամա. նա ականատես էր ազգային-ազատագրական շարժումներին ու ապստամբություններին, որոնք այդ տարիներին ցնցում էին Իտալիան: Դրանք չէին կարող չներգործել թուրքական լուծը կրող ժողովրդի ներկայացուցչի վրա:

Փափազյանի կենսագրի վկայությունը, թե նա «ամենևին տհաճություն կցուցներ պոլսահայ մեծատուններու առաջարկներին»՝ ստանձնել տնային դաստիարակի շահավետ պաշտոնը, Փափազյանի համար բնորոշող է: Մերժելով «հարզի ու ականավոր» անձանց, նա մանկավարժական աշխատանքի անցավ Չմյուռնիայում՝ սիրով ընդունելով այնտեղից արված առաջարկը: Սկզբնապես նա ստանձնել է հայկաբանության և լատիներենի դասատուի պարտականությունը: Շատ չանցած՝ 1836-ին, երբ հավանաբար Ոսկանյանը հաճախում էր դպրոց, Մեսրոպյանի աշակերտներն, իրենց դասատուի գլխավորությամբ, իտալերեն բեմադրեցին «չբեղ ներկայացում մը», որը «մեծ թնդուն հանած էր ժամանակին»: Բեմադրությունը մեծ հետաքրքրություն է առա-

¹ «Արևելյան մամուլ», 1893, էջ 472:

² (Ս Փափազյան), Կենսագրություն Ռուբեն Անդրեաս Յ.Փափազյան բազմաբրդյուն վարժարանի և ներքին տեսչի ս. Մեսրոպյան վարժարանին Չմյուռնիո, Կ.Պոլս, 1859, էջ 12:

ջացրել և կարևոր նշանակետ է հայ թատրոնի պատմության մեջ: Հավաքված միջոցները տրամադրվել են վարժարանի բարեկարգմանը: Բայց «մեծ թնղյունը» միայն դրան չի վերաբերում. գործին միջամտել է թուրքական իշխանությունը, որը ներկայացումը «կարգիլե ի սկզբանե և ի վերջո հրաման կտա այս պայմանով, որ փողար ու թմբուկ չհնչեն երաժշտության մեջ»¹:

Ղա Ան.Փափազյանի առաջին բախումը չէր, իր տեսչության սկզբնական տարիներին նա Ղ.Պալղազարյանի ջանքերով և մեծահարուստ Պ.Յուսուֆյանի միջոցներով ձեռնարկել է ֆրանսերենի դասավանդումը Մեսրոպյան վարժարանում, և դրա դեմ է ծառայել գաղթօջախի գրեթե ամբողջ հասարակայնությունը: Այդ ձեռնարկության իրագործումն ուղեկցվել է մի կատարյալ պայքարով, որ հատկանշում է թե զմյուռնահայ գաղթօջախի մթնոլորտը և թե այն մաքառումները, որ վիճակվում են առաջադեմ գործիչներին, երբ նրանք ձեռնամուխ էին լինում որևէ նորամուծության:

Մեզ հասած մի վավերագրից, որ Ան.Փափազյանը կցել է 1834թ. մայիսի 15-ին արքեպիսկոպոս Ներսեսին իր գրած նամակին², պարզվում է, որ հայերենից, հունարենից, իտալերենից ու տաճկերենից բացի, Մեսրոպյանում «գաղղիարեն լեզուն, թեպետ ոչ ուսուցանի հրապարակավ, այլ կարգյալ է վարժապետ ոմն գաղղիացի, յորմե ուսանին ոմանք յաշակերտաց դպրոցիս»³: Նամակի հեղինակը խնդրում է «օգնել մերթ ընդ մերթ նորատունկ բուրաստանի շնորհագեղ ուսմանց՝ հայրական խրատուց»: Նրան մասնավորապես հետաքրքրում էին Ներսիսյան ճեմարանի «կանոնն ուսման և բարեկարգության»:

Ոչ հրապարակավ, այսինքն չպաշտոնականացված ձևով

¹ «Արևելյան մամուլ», 1875, էջ 119: Տե՛ս նաև (Ս.Փափազյան), կենսագրության Ռուբեն Անդրեաս Յ.Փափազյան բազմադիրս վարժապետի և ներքին տեսչի ս. Մեսրոպեան վարժարանին Չմիտնիո, Կ.Պոլիս, 1859, էջ 12-13:

² Ուղղակի Ներսես արքեպիսկոպոսին դիմելը պետք է բացատրել նրանով, որ նրան Դանիել կաթողիկոսը սարկավազ էր ձեռնադրել Չմյուռնիայի ս.Ստեփանոս տաճարում: Ներսեսն առանձնահատուկ վերաբերմունք ուներ գաղթօջախի նկատմամբ: Նույնիսկ 1848թ., երբ Սյունյացը գրեթե մարում էր, կաթողիկոսը նրան նվիրաբերել է 3000 դոուրուշ («Արշալույս արարատյան», 1848, մայիսի 27, N 338):

³ ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ՝ Մատենադարան, Մեսրոպի ֆ., ք. 206, վ. 1479:

ուսուցանվող ֆրանսերենի հարցով հավանաբար դիմումներ են հղվել նաև կաթողիկոսի և այլ հասցեներով: Բանն այն է, որ Մեսրոպյան վարժարանում ֆրանսերենի ուսուցումը բորբոքեց համայնքի կրոնական զգացմունքները, զուտ կրթական հարցն արտաքուստ ստացավ դավանաբանական խնդիր: Համայնքի մեծամասնությունը հակված էր դրանում տեսնելու կաթոլիկ հավատքի ներթափանցման ճանապարհ, որը պետք էր փակել ինչ գնով էլ լիներ:

Ֆրանսերենի հակառակորդները գտնում էին, թե նրա ուսուցումն ազգային վարժարանում «ազգին ու եկեղեցիի հիմը քանդող վտանգավոր ձեռնարկ» է, թե ֆրանսերենը անաստվածության լեզուն է: Նրանք հայտարարում էին, թե ֆրանսերենը «Վոլթերի լեզուն է... ոչ անաստված ու ոչ լողրան (լութերական – Մ.Հ.) կուզենք ըլլալ... ի՞նչ, մենք մեր զավակներուն մտքերը ու սրտերը թունավորենք ֆրանսերենով, աստված չընե, թող պակաս ըլլա. ֆրենկերենը, մենք չենք ուզեր ֆրենկի անհավատ լեզուն»¹:

Այդպես ֆրանսերենի շուրջ բորբոքվեց գաղութահայության մի զգալի մասի կրոնական զգացմունքները: Թեմի հոգևոր առաջնորդ Գաբրիել եպիսկոպոսը, որ գլխավորում էր ֆրանսերենի հակառակորդների բանակը, եկեղեցու բեմից հասարակայնությանը զրգռող կոչեր հռչակեց, պարբերաբար կրկնվող քարոզներ կարդաց, շանթեր արձակելով՝ պատվիրեց ժողովրդին զգույշ լինել անվստահության ու Վոլտերի լեզվից²: Ավելի քան երկու տարի տևեց այդ պայքարը և ավարտվեց 1834-ի վերջերին: Հակադիր մասերի բաժանված գաղթօջախում կրքերը հանդարտվեցին միայն 1934թ. օգոստոսին, երբ Նրուսահեմի անվանական պատրիարք Գաբրիելը, որը միաժամանակ զմյուռնահայության հոգևոր առաջնորդն էր, թողեց Չմյուռնիան, իսկ նրան փոխարինած Պողոս եպիսկոպոսը խելամտությամբ մարեց զրգռված կրոնական զգացմունքները: Միայն դրանից հետո հնարավոր եղավ սկսել ֆրանսերենի կանոնավոր դասավանդումը Մեսրոպյան վարժարանում:

Չափազանցություն չի լինի եթե ասենք, որ ֆրանսերենի

¹ «Արևելյան մամուլ», 1893, էջ 509:

² Հ.Քուսյան, Հայքի Չմյուռնիա և ի շրջակայս, Վիեննա, 1899, էջ 123, «Արևելյան մամուլ», 1875, էջ 419:

պաշտոնական դասավանդությունը Մեսրոպյանում մտցնելը գաղթօջախի լուսավորյալ մասի հաղթանակն էր խավարամիտների նկատմամբ: Չանդրադառնալով այդ պայքարի մանրամասներին, դիմենք սուկ նրա մեկ-երկու էջերին: Ան.Փափազյանի մի այլ նամակից, որ գտնվել է 1835թ. մարտի 20-ին, պարզվում է, որ ֆրանսերենի հակառակորդների բուռն ընդդիմությունը հաղթահարելու գործում էական դեր է կատարել Ներսես արքեպիսկոպոսի միջամտությունը: Դիմելով նրան Փափազյանը գրում է, որ նրանից ստացած նամակը զվարթությամբ է հաղորդել խամբող տանկերին, նպաստել է վարժարանի գործերի կարգավորմանը, մասնավորապես ֆրանսերենի դասավանդման խնդրի լուծմանը: Ներսես արքեպիսկոպոսը ընդգծում է ֆրանսիական գրականության կարևորագույնը, ֆրանսերենը համարում շտեմարան և սռաջադիմության համար շահեկան: Նրա հորդորները, ինչպես նշում է նամակի հեղինակը, մեծ ազդեցություն են գործել: Ֆրանսերենը, գրում է Փափազյանը, «թեպետ ցանկալի էր ամենեցուն ի վաղնջուցն հետե, այլ ոչ ոք համարձակեր առնուլ զնա ի բերան, զի բազումք ի պարզամտաց խոչընդոտն լինեին, ընդ որս և Գաբրիել պատրիարզն սուրբ Երուսաղեմի գոր ոչ ոք կարաց համոզել ի հավանության: Այն ինչ մեկնեցավ սա ի քաղաքես՝ պսակվեցան իսկույն ուխտք սրտից մերոց և ուսումն գաղղիականին սկսավ անտեն հուաումարանիս, առատ արդյամբք մեծանուն Պետրոս աղա Եուսուֆյանց»¹:

Ֆրանսերենի ուսուցումը Մեսրոպյան վարժարանում խոշոր ազդակ եղավ գաղթօջախի մշակութային կյանքում, նպաստեց հայ հասարակական մտքի զարգացմանը, զարկ տվեց թարգմանական գրականությանը և այդպիսով նաև՝ առաջավոր արևմտաեվրոպական գաղափարախոսության տարածմանը զմյուռնահայության շրջանում: Գաղթօջախի մշակութային կյանքի հետագա պատմության մեջ դեր խաղացած գրեթե բոլոր գործիչները, այդ կյանքի քիչ թե շատ նշանակալից դրվագներն այսուհետև պետք է առնչվեին նաև ֆրանսերենի իմացության և ֆրանսիական առաջավոր գաղափարախոսության ու նրա ազդեցության հետ:

¹ Մատենադարան, Մսերյանի ֆ., ք. 206, վ. 1482:

Այդ ամբողջ պատմությունը ծավալվել է պատանի Ստ.Ոսկանյանի հայացքի առջև. նրա անուղղակի մասնակցությամբ: Արդեն հասուն տարիքում նա պիտի վերհիշի շատ մանրամասներ ու ծանակի ոչ միայն ֆրանսերենի հակառակորդներին, այլ ֆրանսասփրոթյունը տարիներ հետո ֆրանսամոլության՝ ֆրենկոտության հասցնողներին՝ «Ճանյալ էշն զմտոր յոր» նշանակալի հողվածում¹: Այդտեղ նա բնութագրում է նաև Մեսրոպյանը «գիտություններու տուն» դարձնելու համար «պարտքն ավելին» անող հոգաբարձուներին ու վարժարանի երախտավոր մանկավարժներին, որոնք ազգայիններին ազդարարում էին, որ «հարկ է այսուհետև լուսավորության ճամբու մեջ քալել. եթե չեն ուզեր հետնորդ գտնվիլ և մութով պաշարվիլ գլխովին»²:

Ֆրանսերենը Մեսրոպյանում դասավանդելու գործը Ան.Փափազյանը զլուխ է բերում վարժարանի լուսավորյալ մասի, առաջին հերթին այն տարիների հոգաբարձուներ Գրիգոր Կոստանդյանի, Հովհաննես Նուպարյանի և Մտեփան Պալասանյանի գործարար աջակցությամբ: Վերոհիշյալ վավերագրում Փափազյանը նրանց մասին գրում է. «Հուսալ հուսամբ զի անդուլ հսկողությամբ Ստեփանոս աղայի Պալասանյան, որ է առաջին կառավար ուսումնարանիս և պերճիմաստ հոգաբարձուացն ազնվատոհմիկ աղայից, Հովհաննես Նուպարյան և Գրիգոր Կոստանդյան ծաղկեցի օր քան զօր այս նորատունկ տափաստանը գեղեցիկ ուսմանց, ի փառս բարձրելույն և ի պարձանս ազգիս արամյան»:

Պատանի տարիների քաղցր տպավորությունները վերարտադրելիս Ոսկանյանը վկայում է, որ «միշտ համակրոթյուն» է տածել թե՛ Կոստանդյանի և թե՛ Նուպարյանի նկատմամբ. նրանք «հոր պես կխնամեին» աշակերտներին: Ամեն օր էին նրանք լինում Մեսրոպյանում և աջակից էին Ան.Փափազյանին: «Մոլի եռանդի» բորբոքված օրերին, երբ «Իզմիրի հասարակությունը երկուքի բաժնված», «անխնա իրարու միս ուտելու» վրա էին, նրանք աշխատում էին խաղաղեցնել երկու կողմերին: Բայց

¹ Տե՛ս «Արևմուտք», 1864, էջ 27 – 31, 36 – 39, 51 – 53:

² Նույն տեղում, էջ 37:

«Տփրենկները», ինչպես անվանում է ֆրանսերենի հակառակորդներին Ստ. Ոսկանյանը, թեև իրենք թուրքերեն էին խոսում, չէին հանդուրժում, որ «տողաք ուրիշ օտար լեզվի մը բառեր միաբերնուն մեջ տալավորեն»: Ծաղրանքով է Ոսկանյանը վերհիշում այդ հակառակորդներին, ըստ նրանց, «լեզվով թուրք ըլլալը վնաս չունի. թուրքը հողի եղբայր է և ոչ լծադիր ալյազգի մը, բայց Եվրոպայեն ելած բառ կլլել և տեսիլ մարգել աններեղի հանցանք է... Վոյթերի լեզուն բերան առնուլ: Ո՛, սոսկալի հայիոյթյուն...»¹:

Ոսկանյանը վերհիշում է նաև ֆրանսերենի դասավանդումը, որի ծախսերը ստանձնել էր Պետրոս Յուսուֆյանը՝ Տրիեստում հաստատված զմյուռնիացի վաճառականներից մեկը: Դասատուն եղել է Նապոլեոն Բոնապարտի երբեմնի զինվորներից մեկը՝ Պենիսթրան, որը, հավանաբար, Աուստրիցի ճակատամարտում կորցրել էր մի ոտքը և ինչ-ինչ մեղքերի համար արքայից էր Ֆրանսիայից: «Փայտե սրունքով և ժայռի պնդությամբ» այս նախկին զինվորը ֆրանսերենն ուսուցանում էր «զինվորի» պես և գրեթե սլաքի ծայրով: «Այս անձը, – հիշում է Ոսկանյանը, – բարքով թթու էր, կարծիքով բանասեր և ուսումով գրեթե թեթև: Զերականություն մը շիներ էր և զամենքը կռճադատեր, որ իր դրած կանոններն չխոտորեին: Վայ աշակերտին, որ իր կամքն դուրս կելներ և հավնած գիրքը կբանար ու կկարդար»²:

Մեսրոպյանում ֆրանսերենի, հավանաբար, անդրանիկ դասատուն, իբրև պատիժ, աշակերտներին սարսուռ ազդող աղաղակով վռնդում էր դասարանից դա «Միպերիա երթալու ծանրություն ուներ»³: Հակառակ իր դաժանությանը նա աշակերտներին մաքուր ու կոկիկ ֆրանսերեն էր ուսուցանում և «հայու բերանը մաքրեց և ասով մեծ ծառայություն ըրավ սուրբ

¹ «Այլևնուրք», 1864, էջ 31:

² Նույն տեղում, էջ 36:

³ Ստ. Ոսկանյանը, հավանաբար, Սիբիր արքայիցու ծանրության մասին գաղափար էր կազմել դեռևս աշակերտական տարիներին «Արշալույս արարատյանի» 1843թ. մարտի 5-ի համարում տպագրված «Զնուդ ըսված պատիժը Ռուսիայու մեջ» հոդվածից, որտեղ այն համարվում է մահապատժին փոխարինող «վատանուն պատիժ» և նկարագրվում է սարսուռեցուցիչ մանրամասնությամբ:

Մեսրոպի վարժարանին»: Ոսկանյանը ճաշակել է ֆրանսերենի դասատուի դաժանությունը, նկատել է, որ նա «հայ միտքը չկրցավ լայնցնել և Ֆրանսիայի դպրությունով զայն հաստատել»: Նրա «բռնավորությունը և ... խոժոռ դեմքը» Ոսկանյանը տասնյակ տարիներ հետո էլ չի մոռացել. «երբ այսօր կխորհիմ, – գրել է նա 1864-ին, – ինք զինքս կքննեմ կամ ետևս նայելով անցյալին փոշին կխառնեմ, կտեսնեմ, որ բռնության դեմ սիրտիս մեջ գտնված, ինչ կըսեմ քանդակված ատելությունը այն օրերն ի վեր սկսած է: Տղայի անկայուն զգայությունը մարդու անդդվելի համոզում եղավ և դեռ հիմա էլ կտևի»:

Ֆրանսերենը Ոսկանյանը սովորել է Պենիսթրանի դասավորության շնորհիվ՝ Մեսրոպյանի այն հիսուն աշակերտների ընկերակցությամբ, որոնցից ոմանք հետո հասան էֆենդիի աստիճանին: Նա աղքատ ընտանիքից էր, կրում էր արդեն ֆես հագնողների ծաղրի առարկան դարձած լայն ու կապույտ վարտիք և հավանաբար նրա դասագրքերի, գրչի ու թղթի համար վճարում էր դպրոցի հովանավորությունը ստանձնած ընկերությունը: Սակայն, դատելով Մ.Մամուրյանի հուշագրությունից¹, ինչպես և «Արշալույս արարատյանի» այն հաղորդումից, որ 1843թ.¹ փետրվարին տեղի ունեցած Մեսրոպյան տարելերջյան հարցաքննությունների ժամանակ ֆրանսերենից առավել բարձր առաջադիմություն է հանդես բերել ու մրցանակի արժանացել հատկապես Ստեփան Ոսկանյանը², նա հատուկ սիրով էր ֆրանսերենը սովորում, կարդում էր գրքեր, արդեն սկսել էր չափածո թարգմանություններ կատարել ու հրատարակել:

Ինչպես խոստովանում է Ոսկանյանը հետագայում, լինելով ֆրանսերենի կողմնակիցներից մեկը, այն ժամանակ նա գտնում էր, որ նրա դասավանդումը հաղթանակ է ընդդեմ նախապաշարմունքի, որի վրա եղած ամեն հաղթություն՝ լուսավորության մոտ կտանի մարդկությանը, որ ըսել է բոլոր ազգերը»: Բայց այդ հաղթանակի հունդերը տարիներ հետո նաև օտար ծիլեր արձակեցին, երբ «Իզմիրի ժողովուրդը» բռնել էր իր հայությունը մոռանալու ուղին, «ֆրենկոտություն մը երևան եղավ, որ տարա-

¹ «Արևելյան մամուլ», 1898, էջ 872 – 876:

² «Արշալույս արարատյան», 12 փետրվարի, 1843, N 125:

փոխ ախտի պես իր շարավը բոլոր քաղքին վրա տարածեց քիչ ատենի մեջ»: Այստեղից ծայր առած «գարստղությունը» պիտի մշտական տևողությամբ հուզի ու բորբոքի ապագա հրապարակախոսի հոգին ու սիրտը: Ֆրանսերենը նրա համար դարձավ դեպի Եվրոպա ու նրա առաջավոր գաղափարները, առհասարակ դեպի գիտությունները տանող ուղիների բանալի: Նա կատարելապես տիրապետեց ֆրանսերենին, ձեռք բերեց մեծ գիտապաշար, բայց մնաց հայ, ապրեց ու գործեց հայաբար, մինչդեռ իր բուն ծննդավայրում ֆրանսամոլությունը հանգեց, իր իսկ արտահայտությամբ ասած, միմոսության ու ազգության դիմագծի խաթարման:

1840-ին Ան.Փափագյանի ջանքերով և Պ.Յուսուֆյանի նվիրատվությամբ հիմնվեց Մեսրոպյան վարժարանի տպարանը, որ մինչև 1845թ. հրատարակեց տասը անուն գիրք: Տպարանի աշխատանքի ծանրությունն ու գրքերի հրատարակության գործը ստանձնել էր բազմաշխատ մանկավարժը՝ աջակից ունենալով իր սաներին: Այս ասպարեզում ևս նա հարկադրված էր ոչ միայն լուրջ դժվարություններ հաղթահարել, այլև դիմակայել անլուր հալածանքների ու մեղադրանքների: 1843թ. մանկավարժի հսկողությամբ վարժարանի տպարանը հրատարակեց Գր.Նարեկացու «Ողբերգությունը» (303+32 էջ): Գրքի ՀԵ գլխի 8-րդ հատվածում պատահաբար չէր դրված բութի նշանը, և ինչ. դա մեկնաբանվեց իբրև կաթոլիկական գաղափարների տարածելու միտում և նրա շուրջը երկու տարի շարունակ բանակոչվ ու պայքար մղվեց:

Նմանօրինակ անհեթեթ ու անպտուղ պայքարները, որ գրեթե երբեք չեն դադարել գաղթօջախում և մշտապես ջլատել են նրա ուժերը, Ստ.Ոսկանյանի մեջ դեռ դպրոցական տարիներից այն գաղափարն են արմատավորել, որ ազգայինները պետք է վեր բարձրանան ներքին դավաբանական խնդիրներից, որ կրոնավորների գործունեությունը պետք է պարփակվի եկեղեցում: Իհարկե նա մանկուց, հենց Մեսրոպյան վարժարանում, սնվել է կրոնական գաղափարներով ու հավատքով: Տարիներ հետո այդ գաղափարները նա հաղթահարեց, բայց կրոնական հավանքը, եկեղեցու դերի ըմբռնումը պահպանեց մինչև իր կյանքի վերջը: Սակայն դա չի խանգարել, որպեսզի Ոսկանյանը

հետևողականորեն պայքարի ժողովրդին ըստ դավանանքի մասնատելու դեմ, մերկացնի հետադեմ կրոնավորներին, հոգևոր շրջանակներում սահմանափակի կրոնի և եկեղեցու գործունեությունը: Դավանաբանական խնդիրները, մինչև անգամ պատանի հասակից մտքում տպավորված առօրեական փաստերն ու դիպվածները հետագայում նրա հրապարակախոսության մեջ զգալի տեղ պիտի գրավեն, անշուշտ, լայն ընդհանրացումներով ու հատուկ շեշտվածությամբ:

Մեսրոպյան վարժարանում ուսումնառության տարիներից Ստ.Ոսկանյանի ներառած հոգևոր ժառանգության մեջ, ինչպես դա հաստատվում է տարիների նրա հրապարակախոսությամբ ու գործնական ձեռնարկումներով, թերևս առավել ամրասյինդ է եղել լուսավորական գաղափարախոսությունը: Մենք իբրև դրա կոնկրետ դրսևորում ենք համարում այն, որ Ոսկանյանը հայ իրականության մեջ ծավալած ամբողջ գործունեության ընթացքում պրոպագանդում էր լուսավորական գաղափարներ, տգիտության հաղթահարման մեծ մարտիկ էր, բազմիցս մշակութային ընկերություններ հիմնելու փորձեր է արել և, առհասարակ, չափազանցված և հեռանկարային նշանակություն էր տալիս կրթության ու լուսավորության ընդհանուր ծավալմանը: Այդ ամենի համար նրա մղիչ սկզբնաելակետը գալիս էր Ձմյուռնիայից, Մեսրոպյան վարժարանից, հայտնի չափով պայմանավորված նաև Ան. Փափագյանի իրական գործունեությամբ:

Թուրքիայի տիրապետության տակ ընկած հայկական բնակավայրերում, Կ.Պոլսում, Ձմյուռնիայում, մյուս կենտրոնական քաղաքներում և առհասարակ գաղթօջախներում ապաստանած հայությունը դարեր շարունակ տոկում էր գոյատևելու համար: Պետական հովանավորության չարժանանալով, նա իր համար զանազան հենարաններ էր ստեղծում, որպեսզի ուժ գտնի հաղթահարելու կյանքի բոլոր ասպարեզներում ծառացող խոչընդոտները: Նման հենարան էին ամենատարբեր ընկերությունները, որոնք այս կամ այն չափով օգնում էին ընդհանուր ուժերով մաքառել դժվարությունների դեմ, իսկ XVIII և XIX դդ. նաև նպաստում էին ազգային առաջադիմությանը: Դրանով պետք է բացատրել արևմտահայության ու գաղթօջախների հայության շրջաններում զանազան ընկերությունների երևան

գալը՝ պարբերաբար աճող թվերով ու ընդլայնվող խնդիրներով: Թերևս բավական է նշել, որ միայն Կ. Պոլսում մոտավորապես անցած դարում և մեր դարի առաջին կեսում ստեղծվել է շուրջ 700 ընկերություն¹: ‘Դրանք թե՛ նյութական, թե՛ բարոյական և թե՛ կազմակերպական ուրույն հենարաններ են եղել ժողովրդի այս կամ այն հատվածի համար և ծանրակշիռ դեր են կատարել հայ կյանքում առհասարակ, մշակույթի ասպարեզում՝ մասնավորապես: Ընկերությունների շնորհիվ համախմբվում, միասնական գործունեության մղվում, կոլեկտիվ ոգով համակվում և միավորված ջանքերով տոկալու կարողություն էին ձեռք բերում ժողովրդի ցարուցրիվ ուժերը, կարող ու հայրենասեր անհատները:

Հատկանշական է, որ այդ ընկերությունների գործունեության մասին մեծ համակրանքով էին խոսում այլևայլ գաղթօջախների առաջադեմ գործիչները, ինչպես նաև Արևելյան Հայաստանի ականավոր մտավորականները: Հայտնի է այն անկշռելի գերադասությունն, օրինակ, որ հատկացնում էր Չմյուռնիայի հայոց կրթական գործին Գ. Պատկանյանի «Արարատը»: Ամենայն ընդգծվածությամբ էր նույնը մատնացույց անում Խ. Աբովյանը, «Պոլսում, Չմյուռնիայում, – գրել է Խ. Աբովյանը 1840-ականի սկզբներին, – ամտերունչ ազգը կազմում է ընկերություններ, ինքնահորդոր զոհաբերությամբ դպրոցներ է բացում բարբարոսների ժանիքների մեջ, (մինչդեռ) Էջմիածնում ազգի հավատի և լույսի աղբյուրին կից մեծացնում են Գ-ոմշագյուղը և բարեկարգում անասունների գոմը»²: Կարելի է ենթադրել, որ Աբովյանին հայտնի էր մասնավորապես Չմյուռնիայի Մեսրոպյան և Սարգսյան վարժարանների ինչպես և նորստեղծ Սյունյաց ընկերության մասին, որի համբավը ևս հայտնի էր Արևելյան Հայաստանում և գրեթե բոլոր խոշոր հայկական գաղթօջախներում:

Սյունյաց ընկերությունը ստեղծվել է 1841-ի հուլիսին՝ Չմյուռնիայում և նրա շրջակա հայկական գյուղերում ուսումնակրթական գործին սատարելու և նոր թափ հաղորդելու համար:

¹ Տե՛ս Ե. Պողոսյան, Պատմություն հայ մշակութային ընկերություններու հ. 1, Վիեննա, 1957, «Հատաջարան»:

² «Դիվան Խ. Աբովյանի», հ. 2, Երևան, 1948, էջ 52:

Ոսկանյանը հատկանշական անվանում¹ ստացած այդ ընկերության հետ առնչվել է ոչ միայն նրանով, որ սովորում էր Սյունյացի հովանավորած Մեսրոպյան վարժարանում և հավանաբար օգտվել է նրա աջակցությունից, այլ նաև նրանով, որ 1844 հունիսից եղել է ընկերության ատենադպիրը: Դեմոկրատական սկզբունքների վրա հենված այս ընկերության պատմությունը, Ոսկանյանի համար, նույնիսկ, եթե մա անմիջականորեն չառնչվեր ընկերության հետ, ուսուցողական շատ էջեր ուներ և հոգեկան բավարար սնունդ էր տալիս ամեն մեկին, ով իր գործունեության նպատակն էր դարձնում ծառայել հարազատ ժողովրդին, վերապրել նրան վիճակված դառը ճակատագիրը:

Արդեն այն, որ Ոսկանյանն իր առաջին ստեղծագործություններից մեկը՝ գրված 1844-ի հունվարին, նվիրել է Սյունյաց ընկերությանը, ցույց է տալիս, որ նրան հոգեհարազատ էին ընկերության սկզբունքները, հետապնդած նպատակները, եռամյա գործունեությունը:

Ոսկանյանի ոգևորությունն անհիմն չէր, Սյունյաց ընկերությունը հուսադրող մեծ գործունեություն էր ծավալել և հղի էր առավել արդյունաշատ ծրագրերով: Ընկերությունը, կարելի է ասել, Մեսրոպյան վարժարանի զավակն էր, նաև վերափոխող հեմարանը: Նրա հղացման ու ստեղծման պատիվը պատկանում է Ան.Փափազյանին, իսկ հիմնադիրները եղել են նրա սաները: Ընկերության «միակ նպատակը հայոց ազգային ուսումնական հառաջադիմությունն է և մասնավորապես Ջմյուռնիո սուրբ Մեսրոպյան վարժարանը ալ ավելի խաղկեցնելը՝ հարկավոր եղած գրքեր և ուսումնական գործիքներ Եվրոպայեն բերել տալով ու նոր դասատուներ կարգելով, մանավանդ աշխարհագրության, ֆիզիկայի, ալճեպրայի և ուրվագրության»²:

¹ Ընկերության անվանման բացատրականում ասվում է. «Աս ընկերության անունը Սյունյաց ընկերություն դնել արժան դատվեցալ ի հիշատակ այն երևելի դպրատուներուն, որոնք մեր սուրբ քարգմանիչներուն Սահակա և Մեսրոպյա ժամանակը Սյունյաց մահանգին մեջը շինվելով հետզհետե ծաղկեցան մասնավանդ ութերորդ դարուն մեջ մեծ համբավ ստացան» («Արշարլոյս արարատյան», 23 հունվարի 1842, N 70): Նույն բացատրությունը տրվում է նաև ընկերության մասին իրանսերեն հրատարակված բրոշյուրում:

² Նույն տեղում:

Առաջին հովանավորողները եղել են Տրեստում հաստատված հայ երևելիները, որոնց թելադրությամբ էլ ընկերության «գլխավոր վերատեսուչ» է ընտրվել «Արշալույս արարատյանի» խմբագիր Ղ.Պաղազարյանը:

«Սյունյացի» անդամ կարող էր լինել յուրաքանչյուրը (հայազգի կամ օտարազգի), ով կանխիկ կվճարեր տարեկան նախատեսված գումարը՝ 50 դուրուշ (12 ֆրանկ, կամ 10 ռուբլի՝ այն ժամանակվա արժողությամբ): Ըստ այդմ ցանկացողները կարող էին մուծել մեկից ավելի բաժին, որը, սակայն, լրացուցիչ իրավունքներ չէր տալիս: Շուտով ընկերությունը կատարեց իր անդրանիկ քայլերը՝ իր ծախսով աշխարհագրության և երկրաչափության դասատու կարգեց Մեսրոպյանում, պատվիրեց ֆիզիկական գործիքներ և շուտով դրանք ստանալով Եվրոպայից՝ գետեղեց վարժարանի քանգարանում: Ընկերության կառավարումը 1842-ի դեկտեմբերին դրվեց 10 խորհրդական անդամների վրա՝ սահմանելով գանձապետի և հոգաբարձուի պաշտոնները, մշակվեց ու հրատարակվեց ընկերության կանոնադրությունը՝ կազմված դեմոկրատական սկզբունքներով: Շատ չանցած՝ 1844-ի հունիսին, ընկերությունը լույս ընծայեց իր նոր Կանոնադրությունը, որը նախորդի համեմատությամբ ավելի լայն է (22 հոդված), ընդունվել է այդ նպատակով հրավիրված ժողովի «մանրամասն երկար քննություններեն ետքը, բոլոր անդամոց համահավասարությամբը»¹:

Ընկերության կանոնադրությամբ սահմանվում էր, որ բացի Մեսրոպյանից հոգ կտարվի «խեղճ հայազգի գտնված ուրիշ ամեն քաղաքներն ալ դպրատուներ հաստատել»։ Խորհրդակալան անդամները, որոնց թիվը սահմանափակ չէ², պարտավոր են

¹Նույն տեղում, 24 հունիս 1844, N 196 (առաջին կանոնադրությունը տե՛ս նույն տեղում, 1842 դեկտեմբերի 18, N 117):

² «Արշալույս արարատյանի» 1843թ. դեկտեմբերի 3-ի հաղորդման համաձայն, «Սյունյացի» խորհրդական անդամներն էին Հովի. Խումարյանը, Գր. Ապրոյանը, Ստ. Պալասանյանը, Հ.Էրիզյանը, Ստ. Գալֆայանը, Ղ.Գրիգորյանը, Հ.Սիմոնարյանը, Ս.Մարկոսյանը, Հովի. Տիլպերյանը, Առ. Նուպարյանը, Ս.Ղոնճայանը, Հովի. Նուպարյանը, Մ.Ֆիլճյանը (գանձապետ), Ղ.Պաղազարյանը (հոգաբարձու), Ան. Փափազյանը և Գր.Մարկոսյանը: Հաջորդ տարում այս կազմը որոշ փոփոխություն է կրել: Ընկերության կառավարության սկզբնական կազմը տե՛ս թերթի 1842թ. դեկտեմբերի 18-ի (N 117) համարում:

շարքին առնվազը մեկ անգամ խորհրդի հավաքել և քննել ու մեծամասնության հավանությամբ վճռել, ժողովուրդ միջոցները հատկացվում են միայն «ուսումնականությունը ու բարոյական կրթությունը հայոց ազգին մեջ ծաղկեցնելու» նպատակին: Ընկերության կառավարությունը պարտավոր էր ամեն տարի հրատարակել ստացված եկամտի ու ծախսերի հաշվետվությունը, ինչպես և բաժանորդների ցանկը: Նրա անդամները, ներառյալ նաև զանձապետն ու հոգաբարձուն, «ամենեին վարձատրություն մը չեն ընդուներ», բայց 16-րդ հոդվածը սահմանում է, որ ընկերության «Իզմիրու կառավարությունը կպարտավորի մասնավոր քարտուղար մը (սեփրքթեր) ունենալ, ընկերության հարկավոր նամակներ գրելու, ու ըրած վճռահատությունները նշանակելու համար, որուն աշխատության փոխարեն արժանավոր վարձատրություն մը կտրվի»:

Կանոնադրությունը հատուկ սահմանում էր, որ դպրոցականներին տրվող գրքերը «ոխոժիմնական և բարոյական գրքեր պիտի ըլլան», իսկ ինչ վերաբերում է կրոնական բովանդակության գրքերին, ապա դրանք «Հայաստանյաց կաթողիկե սուրբ եկեղեցվո ուղղափառ դավանությանը համեմատ ըլլալու են»: Ընկերությունը զործակալներ է ունենալու օտար երկրներում: Նրա անդամները պարտավոր են ֆորձակցել ընկերության առաջադիմությանը, հասարակությանը մասնակից անել նրա գործունեությանը: Որևէ պատճառով «Սյունյացի» գործունեության դադարման դեպքում նրա ունեցվածքը փոխանցվում է Մեսրոպյան վարժարանին: Կանոնադրության վերջին հոդվածում նշվում է, որ այն կարող է փոխվել խորհրդական անդամների երեք քառորդի որոշմամբ միայն:

Զմյուռնահայության ստեղծած Սյունյաց ընկերությունը հայ մշակութային ընկերությունների պատմության մեջ հատուկ տեղ ունի: Մեզ թվում է նրա ստեղծումը, հետապնդած նպատակները, ներքին, դեռևս չբացահայտված հեռանկարային խնդիրներն իրենց մեջ մեծ խորհուրդ ունեն: Չի բացառվում, որ այդ խորհուրդը պիտի հանգեր ազգային-ազատագրական խնդիրներին, բայց դա ընկերության պատմության ապագա խորագնին հետազոտողին սպասող խոշոր հարց է, այստեղ «Սյունյացը» մեզ հետաքրքրում է սոսկ այնքանով, որքանով

առնչվում է Ստ.Ոսկանյանի գործունեության հետ: Ըստ որում հարցին անդրադառնում ենք լոկ այն *բաց* նյութերի հիման վրա, որոնք տեղ են գտել մամուլում, միաժամանակ նկատի ունենալով ընկերության գրագրության մի քանի պատահիկները, որոնք դարձյալ, այսպես ասած, բաց են:

«Սյունյացի» կանոնադրության վերը հիշատակված 16-րդ հոդվածն անմիջական առնչություն ունի Ստ. Ոսկանյանի հետ: Եռամյա գոյությունից հետո ընկերությունը որոշում է ունենալ, ժամանակակից լեզվով ասած, ազատ աշխատող՝ «արժանավոր վարձատրությամբ»: Ծիշտ է, կանոնադրությունը հետո ընկերությունը որոշում է ունենալ, ժամանակակից լեզվով ասած, ազատ աշխատող՝ «արժանավոր վարձատրությամբ»: Ծիշտ է, կանոնադրությունը սահմանում էր, որ նրա պարտականությունն է զբաղվել անհրաժեշտ նամակագրությամբ և կայացված «վճռահատությունները նշանակելու» գործով, բայց, ըստ երևույթին, «քարտուղարի» վրա էր դրվում ընկերության գործնական ղեկավարությունը. խորհրդի անդամների այլևայլ գործերով զբաղված լինելը, նրա «կառավարչի»՝ Գ.Պալղազարյանի ամենօրյա ծանրաբեռնվածությունն «Արշալույս արարատյան» թերթի խմբագրությամբ ու հրատարակությամբ, ինչպես նաև հասարակական բազմաթիվ այլ աշխատանքներով, իրավունք են տալիս ենթադրելու, որ «Սյունյացի» գործերը փաստապես տնօրինելու էր նրա ատենադպիրը, ազատ աշխատող միակ անձը:

1844-ի հուլիսին, ընկերության նոր կանոնադրության հաստատումից անմիջապես հետո, «Սյունյացի» «կառավարությանը քարտուղար անվանվեցավ պարոն Հայկ Ստեփան Ոսկանյանը»: Տակավին 19-ամյա պատանու կյանքում, այսպիսով, տեղի է ունենում կարևոր շրջադարձ. նա իրապես կյանք է մտնում, կատարում է իր առաջին ինքնուրույն փայլը, սկսում իր հասարակական գործունեությունը: Այսուհետև հայտնի չափով նրա անվան հետ է կապվելու Սյունյաց ընկերության գործունեությունը:

Սյունյաց մշակութային ընկերությունը շատ արագ լայն արձագանք ու մեծ պաշտպանություն է գտել թե՛ գաղթօջախում և թե՛ գաղութահայրության շրջանում: Նրա ընդհանուր հաջողությունը սկզբնապես սպասածից ավելին էր, իսկ բարոյական

ազդեցությունն ու նշանակությունը գրեթե համազգային: Ընկերությունն անդամագրվողների թիվն աստիճանաբար աճում էր, ամսեամիս ընդլայնվում էր աշխարհագրությունը: Ինչպես երևում է ֆրանսերեն լեզվով 1844-ին, 1000 օրինակ սպաքանակով ընկերության հրատարակած հայտարարական տետրակում բերված ընդհանրացված տեղեկություններից, առաջին տարում «Սյունյացի» բաժնեգրության թիվը հասել է 272-ի, իսկ նրան տրամադրված գումարը՝ 13.600 դուրուշի: Հաջորդ տարում այդ թվերն ավելի քան կրկնապատկվել են, բաժնեգրությունների քանակը կազմել է 571, իսկ դրամական եկամուտը՝ 28.550 դուրուշ՝ կամ 6.852 ֆրանկ: Հայրենասիրական մղումներով շատերը բաժնեգրվում էին մինչև 10-20 բաժին, ոմանք միանվագ նվիրատվություններ էին անում: Աճում ու պատկառազուկերպարանք էր առնում ընկերության հովանավորողների կազմը:

1844-ին և 1845-ին՝ մինչև հունիսի 21-ին տեղի ունեցած մեծ հրդեհը, Սյունյաց ընկերությունն ավելի է հզորանում: Այդ ժամանակահատվածում, մինչև Փարիզ մեկնելը՝ 1846թ. ընկերության առօրյա գործերը տնօրինում էր Ստ.Ոսկանյանը և նրա աշխատանքային օրերն, անշուշտ, հազեցած էին «Սյունյացի» գործերով: Նա հաղորդումներ էր ստանում ընկերությանը անդամագրվողներից, մտահոգվում դրանց մասին «Արշալույս արարատյանում» պարբերաբար տեղեկություններ հրատարակելու մասին: Իսկ այդպիսի հաղորդումներ համարյա ամեն օր էին ստացվում, տարբեր կողմներից ու բաժնեգրության տարբեր չափերով: Այդպես, դեռ պատանի հասակից ու միանգամից ընդլայնվում է Ոսկանյանի անձնական շփումների շրջանակը. նա մտնում է հասարակական միջավայր, գտնվում է «Սյունյացի» գործունեության կենտրոնում:

1844-ի հունիսից, երբ Ոսկանյանն արդեն «Սյունյացի» պաշտոնական քարտուղարն էր, ընկերության 24 անդամներ իրենց նախաձեռնությամբ ու միջոցներով հանդիսավոր ճաշկերույթով պատվեցին գաղթօջախի հոգևոր առաջնորդ, օր առաջ Կ.Պոլսի պատրիարք ընտրված Մատթևոս եպիսկոպոս Չուխաջյանին, որի խնդրանքով, ի դեպ, երաժշտությամբ ուղեկցվող այդ ճաշկերույթին մախ Ներսես կաթողիկոսի, ամիրանների, ապա «Մոսքայու վսեմափայլ տեարց Լազարյանց կենդանությանը

գինի խմեցին, բոլոր ընկերությունը ոտքի վրա ելլելով»¹: Շատ չանցած, հուլիսի 17-ին, նորընտիր պատրիարքը պիտի այցելի սուլթանին, բազմի Կ.Պոլսի պատրիարքական աթոռին, իսկ մի շաբաթ անց իր անդրանիկ պատարագի ժամանակ, ռուս-թուրքական պատերազմի օրերից (1828թ.) հետո առաջին անգամ պիտի հիշատակի Ամենայն Հայոց կաթողիկոս, դարձյալ նորընտիր, Ներսես Աշտարակեցու անունը, ապա և հատուկ «շնորհակալության ու հպատակության գիր» հղի դեռևս Պետերբուրգում գտնվող կաթողիկոսին, որով գոհունակություն կպատճառի նաև կայսր Նիկոլայ Ա-ին, քանի որ դրանով ցուցադրվում էր նաև «Տաճկահայոց կողմն էջմիածնի աթոռին հանդեպ» ունեցած վերաբերմունքը»: Այնպիսի ներգործություն ունեցավ դա. որ ցարը կամք հայտնեց պատրիարքին շնորհել սուրբ Ամնայի առաջին աստիճանի շքանշան, բայց դրանից երկյուղած կաթողիկոսը, որ խորհում էր, թե «մի գուցե օսմանյան շրջանակներու մեջ լավ տպավորություն չընե, առաջարկեց իր կողմնն ադամանդյա պանակե հղել»²:

Անկարևոր փաստեր չեն դրանք, զմյուռնահայ գաղթօջախում ու «Սյունյացի» մթնոլորտում . «Մոռանալով» սուլթանին, երաժշտության ուղեկցությամբ, նորընտիր պատրիարքը խնդրում է բաժակ բարձրացնել, ինչպես ենթադրվում է, բարձրագույն դռան հրամանով պաշտոնական արարողությունների ժամանակ տարիներ ի վեր հիշատակել արգելված հայոց կաթողիկոսի, նույնիսկ Լազարյանների կենացը: Այնուհետև աշխարհականներից կազմված մի այնպիսի ընկերություն, որպիսին «Սյունյացն» էր, հանդիսավոր պատվի էր արժանացնում կրոնական առաջնորդին, նաև պատրիարքին՝ «ի նշան մտերիմ

¹ «Արշալույս արարատյան», 8 հուլիսի 1844, N 197:

² *Մ. Օրմանյան*, Ազգապատում, հ. գ. գիրք Ա., Պեյրոք, 1961, էջ 3799 – 3800: Ի դեպ, այստեղ վկայվում է նաև, որ նվերի հետ միասին կաթողիկոսը հղել է նաև պատրիարքի «խոհականությունը» դրվատող կոնդակ, որի հանդիսավոր ընթերցման համար Մատրևոսը հյուսիսից «ազգային մեծ ժողով», որտեղ 1844թ. սեպտեմբերի 14-ին «կրոնականաց և աշխարհականաց բարեհաճությամբ և ստորագրությամբ որոշվեցավ այսուհետև Մայր արո՞ղ կաթողիկոսին անվան հիշատակությունը կատարել առհասարակ եկեղեցիս հայոց օսմանյան տերության, ինչպես որ անխափան կկատարվի մինչև ցայսօր» (էջ 3800):

երախտագիտության Իզմիրու ժողովրդոց վրա ինչպան հիմա ունեցած ազգասիրական հայագութ խնամոցը և ուսումնասիրական ջանքին համար»: Մոսկ հավուր պատշաճի հատուցվող պարտք չէր դա:

Չբացատելով նաև այլևայլ շփումները Ստ. Ոսկանյանի և Մ.Չոլխաջյանի միջև, արձանագրենք, որ տարիներ անց՝ լավահամբավ, նույնիսկ «ժողովրդական կուսակցության մարդ», «ժողովրդասեր անձ» անվանված արքեպիսկոպոսը պիտի աթոռակայի Էջմիածնում իբրև Մատթևոս Ա.Կոստանդնուպոլսեցի կաթողիկոս , իր գլխավորած Սինոդի հետ անօրինակ պահպանողականությամբ պայքար մղի «Հյուսիսափայլի» դեմ, ապա 1860-ից ինքն իրեն մատնի չբացատրված, առեղծվածային մեկուսացման, ստանձնի «Վշտալի» մականունը, հրատարակի անփառունակ «Դաշանց թողթը», բայց և ամենայն համակրությամբ վերաբերվելով Մ.Նալբանդյանի թեժ պայքարին ընդդեմ Գ.Ավազովսկու և օգտվելով հնդկական կտակի առթիվ նրա արտասահման մեկնելու առիթից, նրա իսկ ձեռքով հատուկ կոնդակ պիտի հղի Ստ.Ոսկանյանին, որպեսզի հավաստի ճանաչված հրապարակախոսին ու գործչին, թե «Գրավյալ ունիք զսիրտ» և «ոչ երբեք մոռացյալ զքաղցր ոգի որդեկիդ և ընդ հառաջադիմությունդ ուրախ եղյալ»¹: Առնչակցությունների եզրերն, իհարկե, խիստ բարակ էին՝ ազգօգուտ գործունեություն, պայքար մխիթարությունների պապական գաղափարախոսության և հատկապես Ավազովսկու դեմ, բայց այդուհանդերձ դրանք հանգուցվող թելեր էին և մի ինչ-որ տեղ նրանց ջանքերը մեկտեղում, դեպի միևնույն նպատակակետն էին մղում:

«Սյունյացի» քարտուղարի բազմազբաղ պաշտոնն անձնական շփումներից առավել լայն հորիզոն բացեց Ստ.Ոսկանյանի համար: Մինչև այդ պաշտոնին անցնելը նա բավարար չափով կարող էր ծանոթ լինել Չմյուռնիայի գաղթօջախի ընդհանուր պատկերին միայն, իսկ առավել մոտիկից՝ Մեսրոպյան վարժարանին: 1844-ի կեսերից նա արդեն հնարավորություն ուներ մոտիկից տեսնել զմյուռնահայ ներքին կյանքը, վարագույրի հետևում տեղի ունեցող մեծահարուստների փոխհա-

¹ «Արևմուտք», 1865, էջ 77:

ութերությունները, դրանց հակառակ երեսն ու իրական բնույթը, ըմբռնել, որ բարերարության համար նրանց ցուցաբերած առատաձեռնությունը չնչին չափով կարող է նպաստել այն ահռելի ծանրության թեթևացմանը, այն բանձր տգիտության վերացմանը, որի մեջ գտնվում էր զմյուռնահայությունը:

Ընկերության ճյուղավորությունը միաժամանակ նրա առջև թեկուզև շատ նեղ մի հորիզոն էր բացում դեպի գաղթաշխարհի ու հնարավորություն տալիս գոնե հեռվից հեռու ինչ-որ չափով նկատել համայն հայության թշվառ վիճակը: «Սյունյացը» սեփական միջոցներով, թեև դրանք այնքան էլ կայուն չէին, դպրոցներ էր բացել ու դասատուներ կարգել Չմյուռնիայի մերձակա՝ Մենիմեն, Մանիսա, Պայընսր, Այտըն, Նազլի և Դարդանել գյուղաքաղաքներում, վճարում էր նաև Չանափ-Կալեի, Գրգաղաճի, Ափիհիսարի, Խասապայի, Վառնայի և այլ դպրոցներում կարգված դասատուների աշխատավարձը, գրքեր, թուղթ ու գրիչ և այլ պիտույքներ էր մատակարարում այդ, ինչպես նաև մի շարք այլ բնակավայրերի դպրոցներին: Նա աղքատ երեխաներին դասագրքեր, հագուստ և գրենական պիտույքներ էր տրամադրում, ոմանց դրամական օգնություն ցույց տալիս, տարեվերջյան քննությունների առթիվ պարգևներ էր բաշխում առաջադեմ աշակերտներին և առանձին դասատուների, կարիքավորներից ոմանց որդեգրում և կանոնավոր աջակցում էր նրանց:

Այդ բոլորի մասին, ինչ խոսք, հոգում էր նաև ընկերության քարտուղարը և դրա շնորհիվ ընդլայնվում էր նրա ճանաչողության շրջանակը, խորանում էր բուն կյանքի իմացությունը: Այդ իմաստով նրան, անշուշտ առավել շատ բան էին տալիս մյուս գաղթօջախների կապերը՝ հատկապես տալբեր վայրերից «Սյունյացի» անդամագրվելու հետ կապված կազմակերպական աշխատանքը: Բավական մեծ է «Սյունյացի» բաժանորդների շրջանակը. Տրիեստ, Կ.Պոլիս, Կեսարիա, Ալեքսանդրիա, Կահիրե, Պարսկաստան, Էրզրում, Հնդկաստան, Փարիզ, Լոնդոն, Թիֆլիս, Պետրոգրադ, Հալեպ, Վիեննա, Չավա և այլն:

Առհասարակ «Սյունյացի» գաղափարներն ու ձեռնարկումները, կարելի է ասել, խանդավառությամբ էին ընդունվում, թեև ամեն տարի սպասվածից պակաս բաժնեգումար էր

ժողովում: Կարևոր էր, որ որոշակի եռանդ էր ցուցաբերվում համախմբվելու և միասնական ջանքերով լուսավորական գործ ծավալելու: «Սյունյացի» բաժնեգրվելը և նրան աջակցելը հայկական շրջաններում դիտվում էր իբրև հայրենասիրական պարտք: Այս առումով հատկանշական է, որ կարճ ժամկետով Չմյուռնիա ժամանող, մույնիսկ նրա նավահանգստով անցնող նավերի առանձին ուղևորներ իրենց պարտքն էին համարում բաժնեգրվել ընկերությանը, իսկ հեռավոր քաղաքների հայ բնակիչներն իրենց կարողության չափով օգնության ձեռք էին մեկնում նրան՝ ուղարկելով նվերներ: Բժիշկ Սենիքերիմ Տեր Մինասյանը, որ 1833-ից միսիոներական քարգմանիչ էր Չմյուռնիայում և իր«ուղեգրությունը» հրատարակել էր 1839-ին, «Եղանակ» օրացույցում, յոթ տարի Ամերիկայում սովորելուց հետո Չմյուռնիայի նավահանգստով Կ.Պոլիս վերադառնալիս ընկերությանը բաժնեգրվեց 2 բաժնով: Երկու այլ բժիշկներ՝ Գասպարը և Սերովբե Վիչենյանն անդամագրվել են մույնպես 2-ական բաժին: Խանդավառության ընդհանուր մթնոլորտն ըստ երևույթին ներգործում էր Չմյուռնիայի թուրք իշխանությունների, ինչպես և որոշ օտարերկրացիների վրա: Նրանք, անշուշտ, նպատակ ունենալով շահել վաճառաշահ գաղթօջախի համայնքի համակրանքը, չէին զլանում «առատածեռնություն» ցուցաբերել «Սյունյացի» նկատմամբ: Անգլիացի վաճառականներից մեկն, օրինակ, ընկերության միջոցով Մեսրոպյանին նվիրեց 1200 դուրուշ արժողությամբ վառարան՝ ջերմացույցով, իսկ Չմյուռնիայի քաղաքապետ Ռաշիդ էֆենդին «Սյունյացի» բաժնեգրվեց 12 բաժնով, նրա որդին ու փեսան՝ չորսական բաժիններով, Տրիեստում բնակվող մի հայասեր հույն՝ Ե.Սարիարքը ընկերությանը նվիրեց 1100 դուրուշ դրամագլուխ:

Հետաքրքրությունից զուրկ չէ նաև, որ Լազարյան և Տատյան եղբայրները «Սյունյացի» անդամագրվել են 20-ական բաժնով, մի շարք մեծատուններ 15-ական բաժնով, իսկ տասնյակ ուրիշներ՝ 5 – 10-ական բաժնով: Նույնիսկ թուրք գավառապետը «Սյունյացի» անդամագրվել է 10 բաժնով: Մակայն «Սյունյացի» հիմնական կազմը բաղկացած էր 1 – 5 բաժնով անդամագրվող զմյուռնահայերից՝ բժիշկներ, արհեստավորներ և մանր

առևտրականներ, որոնց թիվը և դրամական ներդրումը գերակշռում էր¹:

Այս տեղեկությունները, ցույց են տալիս, որ «Սյունյացին» անդամագրվողների հիմնական կազմը՝ 85 տոկոսը, բաղկացած էր զմյուռնահայության, եթե ոչ սակավունակ, ապա միջին կարողություն ունեցող զանգվածից: Դա նույնպես բնութագրական է ընկերության համար:

Որևէ հիմք չունենք պնդելու, թե Ոսկանյանի քարտուղարությունը էական դեր է խաղացել ընկերության սոցիալական կազմի նման տեղաշարժի գործում: Սակայն հայտնի է, որ նա չքավոր ընտանիքի զավակ էր, կարուկ վերաբերմունք ու վճռական դիրք ուներ մեծահարուստների նկատմամբ, նույնիսկ ամենից վճռական պահերին մնացել է իր արժանապատվության բարձրության վրա, երես է թեքել նրանցից: Ի դեպ «Սյունյացին» անդամագրվածների ցանկերում մենք չհանդիպեցինք Ոսկանյանի անունը, որը, հավանաբար, միջոցներ չունենալու կամ, թերևս, աշակերտներին չանդամագրելու հետևանք է: Այդպիսի սոցիալական ծագում ու խառնվածք ունեցող քարտուղարը բնականաբար պետք է առավել հոգատար լիներ չքավոր ու կարիքավոր այն աշակերտների նկատմամբ, որոնք սովորում էին Չմյուռնիայի և շրջակա հայկական դպրոցներում: Եվ իրոք, դատելով «Սյունյացի» տարեկան հաշվետվություններից, տարեցտարի ավելի մեծ գումարներ են հատկացվել թե՛ չքավոր ընտանիքների երեխաների հետ պարասպող դասատուներին, թե՛ իրենց՝ կարիքավոր դպրոցականներին՝ առավելագույնի հասնելով այն ժամանակամիջոցում, երբ ընկերության քարտուղարը Ոսկանյանն էր: Ահա մի քանի տեղեկություններ այդ մասին. «Սյունյացի» գործունեության չորրորդ տարում, նախորդ տարվա համեմատությամբ, ընկերությունն ավելի է վճարել՝ դասատուներին ու դպրոցականներին 4.741 դուրուշ, կարիքավոր

¹ Տե՛ս “Societe de Sunie Smyrne, 1844, էջ 16 – 20: Այս աղբյուրի և «Արշալույս արարատյանի» 1844թ. սեպտեմբերի 9-ի համարում հրատարակած տեղեկությունների միջև կա որոշ տարբերություն: Ըստ թերթի, ընկերությանն անդամագրվել էին 421 բաժնով: Մենք տվյալ դեպքում հենվում ենք ֆրանսերեն տեղեկագրի վրա, թեև գտնում ենք, որ մինչև նրա լույս ընծայումը «Սյունյացին» անդամագրվողների թիվը կարող էր ավելանալ և հասնել թերթում մատնանշվող քանակին:

աշակերտներին՝ 1.040. դպրոցականների գրեմական պիտույքների համար 3.037, առաջավոր աշակերտներին խրախուսելու նպատակով՝ 420 դուրուշ: Ըստ այդմ լրիվ կրճատվել են կրոնական արարողության և մանկավարժների խրախուսման համար հատկացումները¹:

Արդեն մատնանշվեց, որ «Սյունյացի» շառավղի ընդլայնումը Ոսկանյանին հնարավորություն էր տալիս որոշ կապեր հաստատել հայոց բնակավայրերի ու նրանց գործիչների հետ: Այս իմաստով ուշագրավ է, որ Թիֆլիսից ընկերությանը անդամագրվել էին ոչ քիչ թվով հայեր, որոնց հետ ընկերության քարտուղարի հավանական գրագրությունն, անշուշտ, նպաստել է նրա հեռակա ծանոթությանը թիֆլիսահայ կյանքին ու ժամանակի մի քանի գործիչների հետ: Կապիտան Ջաքարիա Շահնազարյանը, որ Թիֆլիսում նպաստավոր աշխատանք էր ծավալում հոգուտ «Սյունյացի», կարողացել է ընկերությանը բաժնեգրել 20 բաժին: «Սյունյացի» առաջին անդամագրվողների թվում էին Ստ. Մարտիրոսյան Մատինովը, բժիշկ Տեր-Ղուկասովը, Ե.Հարությունյանը, վարժապետ Առ.Արարատյանը, Գ.Միրզոյանը, Դ.Բոշբեյուք Մելիքյանը, սյունեցի Ղ.Մելիք-Նուպարովը և ուրիշներ: 1844-ի վերջերին թիֆլիսեցիները, նրանց թվում Ղ.Երկայնաբազուկ-Արղությանը, «Սյունյացին» բաժնեգրվել են ևս 18 բաժին և ընկերության միջոցով աղջիկների Մարգսյան դպրոցին են ընծայել 11 անուն գիրք: Մի այլ թիֆլիսաբնակ՝ Գր. Աբելյանը, «Սյունյացին» է ընծայել 400 դուրուշ դրամագլուխ, իսկ Հ.Միրիմյանն անդամագրվել է 5 բաժնով: Շուտով մի խումբ թիֆլիսեցիներ ինը բաժնով անդամագրվում են ընկերությանը: (Փակագծում նշենք, որ զնյունահայերի ու թիֆլիսցի հայերի միջև ստեղծված կապերը շուտով ավելի շոշափելի արտահայտություն ստացան): Իմանալով, որ 1845-ի հրդեհը մեծ վնաս է պատճառել Ջմյունիայի հայ գաղթօջախին, Թիֆլիսի «հայք յուրյանց սեպիական վնաս համարեցան» և հանգանակություն կատարելով պատկառելի գումար ժողովեցին ու առաքեցին զնյունահայերին: Այդ գործը «տիվ և գիշեր» կազմակերպեցին

¹ Հմմ. ընկերության տարեկան հաշվետվությունները «Արշալույս արարատյանի» 1844թ. սեպտեմբերի 9-ի և 1845թ. դեկտեմբերի 14-ի համարներում:

«Սյունյացիներ» բաժնեգրված Ի.Արդությանցը, Գր. Արելյան-Շաղիմյանցը: Ինչպես արձանագրել է Գ.Պատկանյանի «Արարատը», նրանք դիմեցին համաքաղաքացի ազգայինների եղբայրասիրությանը և մարդասիրությանը, կարողացան «Երկու հայոց հասարակությանց մեջ դնել մեկ բարեկամական կապակցություն»¹:

1846-ի վերջերին «Սյունյացի» մասին առանձին հողված է տպագրվում Թիֆլիսում հրատարակվող «Կովկաս» ռուսերեն քերթում: Նրա հեղինակ Գ.Շիրմազանյանց-Վարդանյանցը դրվատում էր ընկերության գործունեությունը: Ի դեպ, նման հողվածներ են հրատարակում նաև Կ.Պոլսի «Հայաստան», Կալկաթայի «Ազգասեր», Մխիթարյանների «Բազմավեպ», «Բանասեր» և այլ պարբերականները, դրանց թվում նաև Հ.Սվանյանի «Սեդուն»²:

«Սյունյացի» նկատմամբ դրսևորվող համակրանքը, դարձյալ հայրենասիրական կերպարանք առած, հասավ մինչև Ռուսական կայսրության քաղաքամայր Պետերբուրգ և Մոսկվա: Մեծահարուստ Հովհաննես և Խաչատուր Լազարյանները «Սյունյացիներ» անդամագրվելով 20 բաժնով, 1845-ին նրան, իբրև «մշտնջենավոր նվեր», հատկացրին 10.000 դուրուշ: Նրանք միաժամանակ ստանձնեցին ընկերության հովանավորությունը, լրացնելով հովանավորողների ազդեցիկ ցանկը, որի մեջ մտնում էին նաև կաթողիկոս Ներսես Աշտարակեցին, Կ.Պոլսի պատրիարք Սատթեոս արքեպիսկոպոսը, մեծահարուստ Խուդաբաշյանները, Յուսուֆյաններն ու Տատյանները, գավառապետ Համտի փաշան ու Չմյունդիայի կառավարչապետ Մուհամետ էֆենդին:

Ինքնին հասկանալի է, որ նման բարձր հովանավորությունները և ակտիվ ու մեծագումար բաժնեգրությունները հեշտությամբ չէին ձեռք բերվում: Պետք է ենթադրել, որ դրանց նախորդում էին կազմակերպման-պրոպագանդման որոշակի ջանքեր, որի ծավալման մշտական կոչերով ընկերությունը դիմում էր հեռաքնակ անդամներին: Նման աշխատանք կատարում էր

¹ «Արարատ», 1850, N 13, էջ 207:

² Տե՛ս «Кавказ», 1846, N 41, «Հայաստան», 1846, N 23, «Ազգասեր», 1847, N 46, «Բազմավեպ», 1844, N 20, «Բանասեր», 1851, N 12:

նաև Ոսկանյանը, թեկուզև պաշտոնի բերումով, նրա ձեռքով էին նամակներ գրվում ու հղվում հայազգի և օտարազգի տարբեր գործիչների: Այդպիսի գրագրություններից որոշ պատահիկներ հասել են մեզ: Մատենադարանի կաթողիկոսական ֆոնդում, օրինակ, պահպանվել է «Մյունխացի» խորհրդական երեք անդամների՝ Ստ. Պալասանյանի, Ղ. Պալղազարյանի և Մ. Պելեճյանի՝ 1844թ. հունիսի 24-ին կաթողիկոս Ներսես Աշտարակեցուն հղած նամակը՝ գրված Ստ. Ոսկանյանի ձեռքով¹: Նրանք պատմում են ընկերության մասին, ապա հայցում կաթողիկոսի «հովանավորությունը ի վերա բարեվախճան ընկերությունս տարածել»²: Ընկերության լոնդոնաբնակ գործակալ-անդամներից զմյուռնիացի Գր. Մարկոսյանը նույնաման նամակով դարձյալ դիմում է կաթողիկոսին և խնդրում, որ հասուկ կոնդակով հորդորի Հայաստանի մեր ազգայիններին՝ նպաստելու ընկերությանը, ստանձնի նրա հովանավորությունը, ինչպես և թույլտվություն է հայցում կաթողիկոսից նրա անունը նշելու «Մյունխացի» պաշտպանների ցանկում, որպեսզի դրանով ընկերությունը գերծ պահվի որոշ հոգևորականների խափանարար և ուսումնատյաց ջանքերից³: Դուրսս Պալղազարյանի մի շարք նամակները նույնպես

¹ Այս նամակի ձեռագրի համեմատությունը Ստ. Ոսկանյանի՝ Օտյանին հղած պատասխան-նամակի ձեռագրի հետ մեզ համոզում են, որ դրանք գրված են միևնույն ձեռքով:

² Մատենադարան, կաթողիկոսական դիվան, ք. 110, վ. 94:

³ Նույն տեղում, վ. 100: Այս վավերագրի Մտերյանների ֆոնդում (ք. 205, վ. 1387, հակառակ երես) պահպանվող ընդօրինակության մեջ որոշ հոգևորականների մասին ակնարկող արտահայտություններից հետո, փակագծերում հավելագրված է՝ «որոնց գլուխն է Մատթեոս արքեպիսկոպոս՝ առաջնորդ Ձմյուռնիոն»: Դժվար է ասել, թե ընդօրինակողը կոնկրետ ինչ է նկատի ունեցել նման հավելագրություն անելիս, բայց կարելի է ենթադրել, որ դա արվել է այն տարիներին, երբ Մատթեոս Չուխաջյանը կաթողիկոս էր ընտրվել ու նրա դեմ պայքար էր հրահրում:

Հավանաբար այսօրինակ վկայություններն էլ հիմք են ծառայել Լեոյի համար, երբ նա գրել է, թե «Մյունխացը» «քայքայվեց հայ կղերի ձեռքով, շնորհիվ այն կրոնական վեճերի, որոնց հարուցողը Ձմյուռնիայի առաջնորդ Մատթեոս կաթողիկոսն էր» («Մուրճ», 1901, N 12, էջ 154): Անաղբյուր և չփաստարկված այս պնդմանը պատմաբանը ոչինչ չի ավելացրել: Մեզ ևս չհաջողվեց նման մեղադրանքը հաստատող որևէ հիմնավորված վկայություն ի հայտ բերել:

Բավականաչափ փափուկ այս հարցի շուրջ կան նաև հակառակը վկայող և բավարար չափով փաստարկված շատ վկայություններ: Նախ շատ լավ հայտնի է, որ Մատթեոս Չուխաջյանը մեծ ջանքեր է քափել հայ լուսավորության, մանավանդ

ցույց են տալիս, որ Սյունյաց ընկերության ամրապնդման համար ընկերության կառավարությունը լայն քայլերի էր դիմում: Անշուշտ այդ նպատակին էր ուղղված նաև նրա աստեճադային ջանքերը:

Մեր ձեռքի տակ կա մի վավերագիր ևս, որ դարձյալ երևան է հանում «Սյունյացի» նպատակների լայնակի սյրուպագանդային և նրա գործունեությանը ավելի մեծ թվով մարդկանց մասնակից դարձնելու ուղղությամբ ծավալված աշխատանքը՝ Ստ.Ոսկանյանի գործուն մասնակցությամբ: Խոսքն ընկերության գործունեության առաջին շրջանն ամփոփող ֆրանսերեն այն գրքույկի մասին է, որ հրատարակվել է 1844-ին: Նախորդ էջերում նրանից քաղվեցին մի շարք փաստեր: Այժմ տեսնենք ինչ գաղափար էր որդեգրել ընկերությունը, գաղափար, որ սկզբնապես արտացոլվելով «Սյունյացի» այս տեղեկագրում, հետագայում զարգացում ստացավ Ոսկանյանի երկերում ու տեսության մեջ:

Ընկերության գլխավոր նպատակը աղքատ երեխաների կրթության գործն էր: Դիմելով մասնավորապես օտարերկրացիներին՝ ընկերությունը հատկապես ընդգծում էր, որ Փոքր Ասիայի բաղաճնեում կան անթիվ չքավոր երեխաներ, որոնց կրթության ու դաստիարակության գործը համարում է իր հարազատ, բայց չիրագործված խնդիրը: Ուսման հիմունքներն «ողբալի վիճակում» գտնվող այդ «աղքատ երեխաների բազմությանը» հաղորդելու համար, ինչպես խոստովանում է ընկերությունը, դեռևս շատ ջանքեր ու միջոցներ են հարկավոր: Դրա

կրթության ծավալման ուղղությամբ գրեթե իր կյանքի ողջ ընթացքում, նաև կարողիկոսական արողին բազմաժամ տարիներին: Նրա այդ գործունեությունը դրական տպավորություն է բողել հայ առաջադիմական գործիչների վրա, որոնք չեն զլսեցել բարի ու մեծարանքի խոսքերով արտահայտվել նրա մասին: Այնուհետև, ինչպես տեսանք, թե՛ Չմյուռնիայի հայոց հոգևոր առաջնորդ եղած ժամանակ և թե՛ պատրիարք ընտրվելուց հետո Մատթեոս Չովաջյանն ամեն կերպ աջակցում ու հովանավորում էր Սյունյաց ընկերությանը: Մասնավորապես կարևոր է, որ նա պատրիարքական հրամանով Մեսրոպյան վարժարանի «ամեն կերպ կառավարությունը» հանձնել է Սյունյաց ընկերությանը, որով ավելի էր բարձրանում նրա հեղինակությունը («Արշալույս արարատյան», 15 դեկտեմբերի 1844, N 221, և 10 մարտի 1845, N 228 և հետո):

Վկայություն կա նաև այն մասին, որ «Հայրենասեր» թերթի դեմ սկսված հալածանքը ղաղարեցվել է և հակամարտ կողմերը հաշտվել են հենց Մատթեոս եպիսկոպոսի ջանքերով (Թ. Զեքուսյան, Հայ տպագրությունը Իզմիրի մեջ):

համար էլ նա կոչ է անում օգնել՝ բաժնեգրվելով «Սյունյացի» կամ նվերներով աջակցել:

Քաղաքակիրթ Եվրոպայի մարդասիրությանը դիմելով, ընկերությունը միաժամանակ իր հույսերը առավել չափով կապում է Թուրքիայի մայրաքաղաքի և գավառների հայության հետ՝ հայցելով նրանց թե՛ նյութական և թե՛ բարոյական աջակցությունը: Նա գտնում է, որ կարիքավորներն իրավունք ունեն պահանջելու այդ աջակցությունը և էամոզված է, որ ազգը բազմապատկված ցուցում կստանա դրա փոխարեն: «Վարի դասակարգին» աջակցելն ու լուսավորելը իրական անհրաժեշտություն է: Հարկավոր է հետևել Եվրոպայի օրինակին և հանրային դպրոցներ հիմնել պետական ծախսերով, նույնիսկ տուգանելով ստիպել, որ ուսման տրվեն երեխաները: Դեպի Արևելք է տարածվում XIX դ. լուսավորությունը, և նրան հաղորդակից լինելը, կրթություն տարածելը ոչ միայն աղքատ դասակարգերի մասնավոր բարօրության հարցն է, այլ նաև «ընդհանրապես հայ ազգի բարգավաճումին և երջանկության խնդիրը»¹:

Հենց այս դիրքորոշումից է տարիներ հետո Ռսկանյանն արծարծելու լուսավորական շարժման խնդիրները՝ վերջ ի վերջո նրա հետ կապելով արևմտահայության, և առհասարակ հայ ժողովրդի, ապագա առաջադիմությունը՝ միշտ նկատի ունենալով թշվառ կացության մեջ գտնվող ամբողջ ազգը: Ինքն իսկ հետագայում խոստովանում է, որ «Հայաստանի այն կողմը... մեր տկար խելքով լուսավորություն կուզեինք հաստատել, երբ դեռ աշակերտ էինք Մեսրոպյան վարժարանի մեջ... «Հայաստանեն դուրս հայերուն լուսավորություն չկա» – մեղ բերնի առօրյա խոսքն էր այն ժամանակ»²:

Մեսրոպյան վարժարանի օգնական դասատուն, հիմնականում ուսումնակրթական գործունեություն ծավալող «Սյունյացի» քարտուղարը, մանկավարժության ու դասատուական աշխատանքի սիրով է ներարկվել հենց իր այդ գործունեության կարճատև տարիներին: Դրան նպաստել է նաև մասնավոր դասեր տալու այն առիթը, որ շուտով ներկայացավ հենց այն

¹ Skit Societe de Sunie էջ 8-9:

² «Արևմուտք», 15 հոկտեմբերի 1859, N 20, էջ 153:

տարիներին, երբ նա դեռևս աշակերտ էր Մեսրոպյան վարժարանում, և Չմյուռնիա էին ժամանել իր հեռավոր ազգակիցները՝ Սկրտիչ Նուպարյանի որդիները՝ Նուպարն ու Առաքելը: Հայտնի վաճառականի զավակները Եվրոպայում կրթություն ստացած լինելով, չէին տիրապետում հայերենին և, վերհիշել է հետագայում Ռսկանյանը, – «մեզի հանձնվեցավ, որ մայրական լեզուն նորեն հիշել տանք այս ազնիվ երիտասարդներուն»¹: Առավել երկարորեն Ռսկանյանը պարապել է կրտսեր Նուպարյանի՝ Առաքելի հետ՝ միաժամանակ նրա աջակցությամբ խորանալով ֆրանսերենում («անդադար կարբագրեր մեր ֆրանսերենի պակասությունները»):

Առաքել Նուպարյանի վաղահաս մահն առիթ է ծառայել, որպեսզի Ռսկանյանը ցերմությամբ վերհիշի իր վաղեմի ծանոթությունը և նրան համարի «իբրև օրինակ հետևելու արժանի»: Առանձնահատուկ վերաբերմունք ուներ Ռսկանյանը Առաքել Նուպարյանի նկատմամբ, և այդ բանում, անշուշտ, որոշակի դրսևորում է գտել երիտասարդական տարիների տպավորությունը, որին, անշուշտ, միախառնվել է օտար մամուլի բարձր գնահատությունը՝ Առաքել պեյ Նուպարի մասին. «L' Orient-ն», օրինակ գրել է, որ նա «ճարտարագույն պաշտոնակալներեն մեկը կհամարվի: Այս կորոստյան դժվարավ տեղը պիտի լեցվի»²: Նշանավոր վաճառականի որդին, ինչպես նկարագրում է Ռսկանյանը, վառվռուն դիմագծեր ուներ, հանդես էր բերում «գարմանալի ըմբռնումը», կատարյալ կիրթ վերաբերմունք, իր՝ Ռսկանյանի հետ «ոչ իբրև ազգական կվարվեր, այլ իբրև ընկեր»:
Նա բավարար չափով սովորեց հայերենը՝ չհետևելով ավագ եղբորը՝ Նուպարին, որ շտապեց Եգիպտոս, ուր նրան սպասում էր ապագա խոստացող պաշտոնը՝ Եգիպտոսի փոխարքայի երկրորդ թարգման՝ տեղակալության աստիճանով:

Մակայն Ռսկանյանի համար առավել էական էր այն ուղեգիծը, որ ընդամենը տասերկու տարում անցել է «հագվազյուտ ձիրքեր – բարի սիրտ» ունեցող հայորդին «իր անուշությամբ և իրավասությամբ»՝ այն էլ մահմեդական շրջապատում:

¹ Նույն տեղում, 1 մարտի 1859, N 5, էջ 34:

² *Վ. Զարդարյան*, Հիշատակարան:

Հենց սա է, որ նա մատնացույց է անում և ընդօրինակելի համարում: Նա մի փոքր ժամանակամիջոցում տիրապետել է լեզվին, ծանոթացել տեղական սովորույթներին ու օրենքներին, «իր հանճարը, դրսևորել քաղաքականության ու տնտեսագիտության ասպարեզում: Այդպիսով նա հասավ Խարթումի ընդհանուր գավառապետի աստիճանին. «Ինք առաջին քրիստոնյան է, որ օսմանյան երկրներու մեջ այսպիսի բարձր պաշտոն մը կընդունի... ու մահմեդական բազմություն մը փորձով համոզվեցավ, թե քրիստոնյա մը կրնա իր վրա իշխել, արդարության սահմանեն չելնել և կրոնը չթշնամանել»: Նա «արթուն և գիտուն պաշտոնակալ» էր, փառքի էր հասել իր պարտավորությունը հավատարմությամբ կատարելու և իր ընդունակությունների շնորհիվ¹:

Այս դիտակետից հայացք ձգելով Առաքել բեյի անցած կարճատև կյանքի վրա, Ռսկանյանը տարիներ հետո հանգելու էր սկզբունքային կարևոր հետևության: Իսկ մինչ այդ կենսագրական այս «մանրունքը» մեզ այլ բան է հուշում. Ռսկանյանի անձնական ու հասարակական բնավորության ձևավորման

¹ Առաքել Նուպարյանը Նուպար փաշայի (1825 – 1899) կրտսեր եղբայրն էր, Սկրտիչ Նուպարյանի որդին: Մահացել է կյանքի 30 տարին հսգիվ բոլորած, 1858թ. սեպտեմբերին: Ծառայությունը սկսել է Եգիպտոսում, եղել է փոխարքա Իբրահիմ փաշայի մերձավորներից մեկը՝ իբրև հատուկ բարգձման: Դրանում դեր է կատարել այն հանգամանքը, որ հայրը երկար տարիներ Եգիպտոսի առևտրական ներկայացուցիչն էր Չմյուռնիայում, ապա Կ.Պոլսում, Փարիզում՝ մինչև մահը, 1841-ին: Սկզբնապես Առաքելը կրթություն է ստացել Փարիզում, որից հետո մի քանի տարի վարել է հոր վաճառատան գործերը Չմյուռնիայում: Եգիպտոսում Առաքելը շուտով ստանում է պեյության աստիճան և տեղակալության պաշտոն, ապա նշանակվում պրուսական կառավարության կից, ներկայացուցիչ, իսկ 1857-ին կուսակալ՝ Մուղանի, Խարթումի և Ֆերզողու գավառների, փաշայական տիտղոսով: Մամուլում արձանագրվել է, որ նա առաջին քրիստոնյան է, որ կառավարիչ է նշանակվել մահմեդական գավառներում, ինչպես և նշվել է նրա արտակարգ հմտությունն իր դժվարին պաշտոնում: «Արշալույս արարատյանը» Առաքել Նուպարյանի մահվան առթիվ արձանագրել է. «Հանգուցելոյն կառավարության ներքև գտնվող ժողովուրդները այն աստիճան գոհ էին անոր մարդասիրական վարմունքեն, որ հայր հասարակաց և արդար դատավոր կկոչեին զինքը, ըստ վկայության այն կողմերեն եկող բազում երևելի ճանապարհորդաց» («Արշալույս արարատյան», 31 հոկտեմբերի 1858, N 583): Այդ առթիվ նյութեր են հրատարակվել օտարերկրյա պարբերականներում և Ստ. Ռսկանյանի «Արևմուտքում» (1859, էջ 36):

իմաստով այդ հանդիպումը հատկանշական է ապագա գործչի ու հրապարակախոսի համար:

Բանն այն է, որ, թեև կարճատև ժամանակով, մտերմացել և փոխադարձ շփման մեջ էին գրեթե հասակակից երկու երիտասարդներ՝ Առաքել Նուպարյանը և Ստեփան Ռսկանյանը, մեկը հարուստ ժառանգության տեր և մեծ ապագայի հույսերով առկեցուն, իսկ մյուսը՝ չքավոր ընտանիքից, անորոշ ապագայով: Ռսկանյանն, իհարկե, արդեն ուռք էր դրել հասարակական կյանքի շեմին և պաշարված էր իր ժողովրդին պարուրած խավարը ցրելու մտահոգությամբ, իսկ Նուպարյանն ապրել էր անհոգ կյանքով, տեսել Եվրոպան և կարող էր ոչ միայն հրապուրել Ռսկանյանին, այլև բեկումնային ներգործություն ունենալ նրա հետագա կյանքի վրա, առավել ևս, որ մեկ-մեկնակ ու դատարկ գրպանով կանգնած էր դեպի ամենուր տանող խաչմե-րուկում:

Առաքել Նուպարյանը, որ, հավանաբար, մույնպես ջերմ զգացմունքներով էր սողորված Ստ. Ռսկանյանի նկատմամբ, առաջարկեց Ռսկանյանին իր հետ մեկնել Եգիպտոս («չատ կուգեր, որ իրեն ընկերանային»): Բայց ուսումնատենչ երիտասարդն արդեն հրապուրվել էր Եվրոպայով. «ականջ չդրինք իր խոսքին»: Այդ պահից ապագա բեյը և հրապարակախոսը բաժանվեցին: Դա սկզբունքային անջատում էր՝ զիտակցված ու անդառնալի:

Վերհիշելով այդ բաժանումը Ռսկանյանը, հետագայում գրել է. «Իր վերջին խոսքն եղավ մեզի... «կարելի է, որ ալ չտեսնվինք»: Եվ արդարև մեյ մ'ալ, զինքը չտեսանք և հարաբերություն մ'անգամ չունեցանք իրարու հետ: Կարծիքներու տարբերությունը թշնամությունն ավելի կբաժանե մարդը: Միտքով տարբեր էինք, բնակությունով հեռու կապրելինք, անոնք կբարձրանային և մինչև բաշաներու աստիճան կելնեին, մենք կիջնեիք մինչև ռամիկներու կարգը, ուր տեսանք, օր մը, ազատության սիրաբույր դեմքը, որ մեր կյանքին երազն է մանկութենեն ի վեր»¹:

Այս պերճախոս ու ինքնաբնորոշիչ տողերով Ռսկանյանը

¹ Նույն տեղում:

մեզ բանալի է տալիս ընթրնելու իր իսկ հետագա գործունեության ու դիրքորոշման մի շարք առանձնահատկությունները, որոնց արմատն, իրոք, սնվում էր նրա պատանեկության ու երիտասարդության օրրանից՝ Չմյուռնիայի հայկական գաղթօջախից ու միջավայրից:

Ինչպես ակնառու է վերը շարադրվածից, Ռսկանյանը Եվրոպա՝ Փարիզ մեկնելուց առաջ, պատանեկության ու երիտասարդական տարիներից զինված էր կայուն սկզբունքներով ու տոգորված որոշակի նպատակամղումներով: Նրա որդեգրած սկզբունքները և հետապնդած ծրագրերը հենվում էին նրա ստացած գաղափարական սննդից ու սկսած հասարակական գործունեությունից բխող հետևությունների վրա: Եվ, ի պատիվ նրա, պետք է ընդգծել, որ նա չդավաճանեց իր դավանանքին, չնահանջեց իր նպատակամղումներից, քանի դեռ ընթռնում էր իր գործունեության անհրաժեշտությունն ու արդյունավետությունը: Ըստ այդմ սկզբնապես նրա ծրագիրը հանգում էր լուսավորական գործունեության ծավալմանը՝ նպատակ, որ նա հետապնդում էր տակավին ուսումնառության տարիներից, ինչպես ինքն էլ խոստովանել է հետագայում: Խոսելով պատանեկության տարիների մասին, մի առիթով Ռսկանյանն ակնարկում է, թե որոշակի «դիտավորություն և փափագ» ունեյր, և՛ որ այդ հայտնի էր նույնիսկ դասընկերներին: Ուրիշ անգամ նա արդեն պարզորոշ գրում է, որ տակավին Մեսրոպյանի աշակերտ եղած տարիներին երագում էր Հայաստանի կողմերում լուսավորություն հաստատելու մասին՝ խորապես համոզված լինելով, թե «Հայաստանեն դուրս հայերուն լուսավորություն չկա», նշանաբան, որ նա կրկնում էր աշակերտական նստարանից սկսած, և որով ներծծված է նրա ամբողջ գործունեությունը¹:

Պատանեկան տարիներից որոշակի դավանանքով տարվելը, նույնիսկ ապագայի ծրագրեր փայփայելը տարօրինակ չէ Մեսրոպյանի և Ան.Փափագյանի սաների համար: Արդեն իր ավանդներն ունեցող դպրոցում, բացառիկ հմտություն ունեցող մանկավարժի ամենօրյա ազդեցությամբ աշակերտները հասարակական-ազգօգուտ գործունեություն ծավալելու սկզբնա-

¹Նույն տեղում, էջ 130, 153:

կան կոփվածք էին ձեռք բերում, գործնականում սառուզում իրենց հակումները, նույնիսկ առաջին քայլերն անում: Վարժարանի և նրա երախտաշատ տեսչի դաստիարակչական աշխատանքի կենտրոնակետը եղել է հայրենասիրության անթեղ դաստիարակությունն աճող սերնդի հոգում և սրտում: Հովհ. Վանանդեցու այդ ուղեգիծը ժառանգելով, Փափագյանը հայրենասիրության պատվաստումը դարձրեց առաջնակարգ նպատակ, որին պետք է նպաստեր դպրոցական և արտադպրոցական ողջ կյանքը:

Ազգային պատմություն դասավանդելով, Փափագյանը հնարավորություն ուներ իր սաների առջև ուրվագծելու հայոց ամբողջ պատմությունը, նրա ճակատագիրը, հերոսական մաքառումները, դյուցազնական էջերը, դարավոր դեգերումները, ինչպես և՜ ցույց տալու նրա տառապալի ներկան: Եվ այդ հնարավորությունից, ինչպես վկայում են նրա սաներն ու ժամանակակիցները, Փափագյանը հմտությամբ ու հիանալիորեն է օգտվել՝ միաժամանակ իր աշակերտներին «հասկացնելով մեր ազգին վերստին կենդանության միջոցները»¹: Հայրենասիրության կրակն իր սաների մեջ վառ պահելու համար, ինքն անձնական օրինակ ցույց տալով և ստանձնելով Ռուբեն երկրորդ անունը, նա հորդորում էր նրանց կրել նաև հայ դյուցազունների անունները²:

Փափագյանի ու նրա սաների համար հատկանշական է գրաբարը սիրելու հետ ջերմ աշխարհաբարյան լինելը: Առհասարակ գաղթօջախում, թերևս ավելի քան հայ մշակույթի արևմտահայ որևէ այլ օրրանում, աշխարհաբարը շատ հարգի էր: Պատահական չէ, ոչ միայն աշխարհաբար գրքերի ու թերթերի առատ երևան գալը Չմյուռնիայում, այլև «Ատվածաշնչի» («Հին կտակուն» – «Գիրք Սաղմոսաց») անդրանիկ աշխարհաբար քարգմանություններից մեկի երևան գալը 1843թ.³ մաքուր գրական արևմտահայ լեզվով, ինչպես նկատել է Հր.Աճառյանը³: Դիշտ է, քարգմանությունն ու հրատարակությունն իրագործել են միսիոներները, բայց այդ գործում ակտիվ մասնակցություն է

¹ (Ս. Փափագյան), նշվ. աշխ., էջ 19:

² «Հունահայ տարեգիրք», Բ տարի, Աթենք, 1928, էջ 18:

³ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 498:

ունեցել Ան.Փափազյանը, որով «կարևոր դեր մը ունեցած է մեր նոր լեզվի զարգացման պատմության մեջ», ինչպես գնահատում է Հր. Ասատուրը¹:

Կաշկանդված լինելով իր ժամանակի տիրող մտայնությանը, նաև երկյուղ կրելով գաղթօջախի հնարավոր ընդվզումից, Ա.Փափազյանը, գիտակցելով հանդերձ աշխարհաբարի նշանակությունը, իրական քայլերի չդիմեց, և չէր էլ կարող, նրան քաղաքացիություն տալու համար, նույնիսկ այն ժամանակ, երբ դա արվում էր դրկից մասնավոր դպրոցում, որ տնօրինում էին Մարկոս Աղաբեկյանը և Մատթեոս Մամուրյանը: Հատկանշական է և այն, որ նա ստեղծագործում, քերթվածներ ու ծոներ էր գրում միայն գրաբար, բայց իր ատենախոսություններն արտասանում էր աշխարհաբար: Ըստ երևույթին Փափազյանն իրավացի էր, երբ ասում էր. «Եթե երբեք աշխարհաբար դասագիրք մտցնեն դպրոցի մեջ, փորձանք պիտի հանեն գլուխս, զիս պիտի ելնեն հալածեն իբրև բողոքական»:

Շուրջ քսանվեց տարի՝ առ 1857թ., Անդրեաս Փափազյանը մոմի պես վառվելով լուսավորեց գմյուռնահայ գաղթօջախը և հանգավ բորբոքված հալածանքի փոթորկից՝ չսպառված ու չգնահատված: Ժամանակակիցների վկայությամբ, նա բարեհամբույր, մեղմ ոճի, շրջահայաց ու տաղանդավոր անձնավորություն էր, բայց հանդգնեց հակառակվել մեծատուն հոգաբարձուների կամքին և դպրոցից վտարեց տաճկերենի ապիկար դասատուին: Իր որոշման մեջ նա համառեց, փորձեց գործադրել տեսչի իր իրավունքները: Հոգաբարձուների դժգոհությունը փոխվեց ցասումի, ապա հասավ զայրույթի, ստիպելով «հին հոշակավոր դյուցազունին», ինչպես բնորոշել է Մ.Նուպարյանը, հրաժարական տալ՝ արցունքն աչքերին, նետեցին կարիքի ճիրանները, ոտնահարեցին մարդու և մանկավարժի նրա արժանապատվությունը: Գաղթօջախն ալեկոծվեց, բաժանվեց երկու հակադիր բանակների. թևածում էր բամբասանքը, գործի էր դրվել սպառնալիքը, իրար դեմ են ելել նույնիսկ եղբայրները, ձեռքից ձեռք են անցել անստորագիր մամակներ ու տետրեր, բայց նոր, լուսամիտ հոգաբարձուների ընտրությամբ, հաղթել են

¹ Հր. Ասատուր, Դիմատվերներ, Կ.Պոլիս, 1921, էջ 197:

առաջադիմականները և «հասարակ ժողովուրդը», որ «ի սկզբանե վարժապետին կուսակից էին և հանհմարինս կգայրանային հոգաբարձուսց վերա»: Անդրեաս Փափազյանը մոտ մեկ տարի հետո վերականգնվել է՝ խուզված իրավունքներով ու կիսված աշխատավարձով, իր հեռացրած ապիկար դասատուի հետ աշխատելու պայմանով: Երկու շաբաթ անց Մ.Մտեփանոսի զանգերը գաղթօջախի հայությանը գուժեցին «Հայր վարժապետի» մահը: Հակադիր բանակները, արդեն համերաշխված, Մեսրոպյանի բակում հողին հանձնեցին կաթվածահար եղած մանկավարժին. «վոխանակ տարապարտ խոնարհությանցս, – գրել է իր հիշատակարանում Ան.Փափազյանը, – վրիժառու եղեն ինձ, այսպես վարձատրեցին զիս հետ 25 ամաց հոգուտ ազգիս ծառայելո, և ավելի ևս ժամանակաց»¹:

Ան.Փափազյանը, որքան էլ դառն են նրա խոսքերը, իրավացի էր. առաջադիմող, մույնիսկ մշակութային ծաղկում ապրող գաղթօջախի տերն ու տնօրենը 50-ական թվականներին, իսկ 40-ականին առավել ևս, խավարամուկներն էին, նրանք, ովքեր «լուսավորության թշնամի» էին և, «Ծաղիկի» արտահայտությանը ասած, կազմում էին «եռապետություն», «սևերամ կուսակցություններ» և գործում էին «ինքնամոլության ախտով բռնված, պժգալի կիրքերու գերի եղած»²:

¹ Այդ «ներքին թշնամու» առկայությունը 40-ական թվականների սկզբներին դեռևս հասարակության կողմից չէր ըմբռնվում, թեև նրա ստորջրյա որոգայթները երբեմն երևան գալով՝ խախտում էին գաղթօջախի կյանքը, իրար դեմ հանում նրա տարբեր զանգվածները՝ երբեմն առիթ ունենալով օտար լեզվի դասավանդումը կամ թատերական ներկայացումը, վրիպած բուքի նշանը կամ լուսավորության տարածման համար ձեռնարկվող այս ու այն քայլը: Իսկ առանձին լուսավորյալ անհատներ, մեծ մասամբ երկրորդ դասից՝ էսնաֆներից, չքավորներից, ժողովրդից սերվածները, որոնք կարող էին տեսնել «ազգային գործերու մեջ իշխան ըսված խել մը մարդերու» զեղծումները, խարդավանքներն ու «վասակորեն» գործելը, ինչպես բացատ-

¹ *Ս. Փափազյան*, նշվ. աշխ., էջ 29, 30:

² Տե՛ս «Ծաղիկ», 1 սեպտեմբերի 1861, N 7, էջ 49, 50:

րում է «Ծաղիկը», կամ ստիպված էին հեռանալ գաղթօջախից և կամ էլ, մնալով տեղում «իրենց ընտանի էության հանգամանքներեն ստիպյալ և կամ դեռ իրենց ծայրը լսելի չըլլալուն պատճառով՝ հուսահատաբար կհեծեին և հարմար ժամանակի կսպասեին»:

Այդ «սպասման» դիմանալու և համբերելու բաժակը, ինչպես նկատում է «Ծաղիկը», լցվել է Ան. Փափագյանին հասցված «անողորմ հարվածից» հետո: Ահա այս առթիվ է արևմտահայ դեմոկրատիայի օրգանը հանդես եկել Գր. Չիլինկարյանի մեծարժեք հոդվածով՝ «Իզմիրի հայոց վեցամյա թշվառության շրջանը»¹: Եզակի մարտունակությամբ գրված այդ ծավալուն հոդվածը հրապարակ է եկել մեզ գրադեցնող ժամանակահատվածից շատ հետո՝ 1861-ին: Բայց Գր. Չիլինկարյանի հետադարձ հայացքը մեզ օգնում է հստակ գաղափար կազմելու այն միջավայրի ներքնաշխարհի մասին, որը պետք է դառնա Սո. Ոսկանյանի քննադատության նպատակակետը՝ «Ծաղիկից» առաջ և սրանից ոչ պակաս սրությամբ ու մարտունակությամբ, թեև այդ ներքնաշխարհին անձնապես չէր առնչվում:

«Ժողովրդի ճշմարիտ շահը մտածողի» մտահոգությամբ Գր. Չիլինկարյանը Փափագյանին համարում է բռնակալության նահատակ և նրա կողքին դնում է նաև երկրորդ զոհի անունը՝ Տեր Մարգար Միրզա Վանանդեցի (1803 \approx 1861), որը ևս իր «ցցուցած ազգասիրության փոխարեն՝ դժնդակ ապաշնորհներն տրված մատնության տրիտուրեն տրտմաբեկ՝ հալ ու մաշ հիվանդության մը մեջ ինկավ ու կնքեց իր մահկանացու ընթացքը ի բերկրության տնօրեններու և ի տրտմության ազգասերներու...»:

Առիթը բավականաչափ ցցուն է, որպեսզի «Ծաղիկը» լուրջ ընդհանրացումներ կատարի, մասնավորապես ցույց տա, թե ինչպիսին է Չմյուռնիայի գաղթօջախի հասարակական մթնոլորտը: Հետադեմ բանակը, եռապետության արբանյակները՝ «ազգ, մարդկություն, խիղճ, հավատք, ամեն բան մոռցած, ամեն բան ոտքի տակ կառնուն, ազգին շահը անձնականին կզոհեն, ամբողջ մարդկային ընկերություն մը տակն ու վրա ընելու համար հսգար

¹ Նույն տեղում, 1, 10, 20 սեպտեմբերի 1861, N 7-9, էջ 49-53, 57-61, 65-68:

ու մեկ սատանություններով իրենց անիծյալ կամքը կատարելու կջանան»: Նրանց այդօրինակ գործելակերպը խանգարում է բուն հայրենասերների գործունեությանը: Ներքին թշնամին ի չիք է դարձնում միություն հաստատելու ջանքերը, թափվող քլտինքը, ստիպում է հային, որ նա «թշվառության ծոցը անդադար մոռնչե» կորցնի իր էությունը՝ հայացքն իր «ավերաշատ հայրենիքին» հառած:

Իր կրակոտ հողվածի ենթատեքստում, Գ.ր.Չիլինկարյանն Մտ. Ոսկանյանին աչքի առաջ ունի այն արժանավորագույն ուսումնական-ուսումնասերների թվում, ովքեր մամուլը զենք դարձրած ձգտում են լուսավորել ազգը, բայց հարկադրված են «աշխարհաշրջիկ կյանք» վարել: Չիլինկարյանն ըստ երևույթին նրան էլ է համարում «մատնվող խմբագիր» և իր հանդեսի՝ «Ծաղիկի» դեմ կատարված մատնության մասին խոսելիս հիշում է Ոսկանյանի խոսքը՝ «Մութին մեջ նաև մուկը կհամարձակի իր ակռաները սրելու», ապա և փափագում, որ նրա «Արևմուտքը» հարություն առնի: Դ-ա, սակայն, վաղվա Ոսկանյանն է, որ այսօր զմյուռնահայ կյանքն ընդունում է այնպես, ինչպես այն ներկայանում է, որի պատանեկան միտքն ու հայացքը դեռևս չեն քափանցում իրօրյա կյանքի ներքնաշխարհը, բայց որն առաջիններից մեկն անհրաժեշտաբար պիտի ըմբռնի և իր քննադատության փաբոսային լույսով լուսավորի ամեն ինչ՝ գրեթե անդրա-նիկը լինելով հայ կրակոտ հրապարակախոսների շարքում:

Դ-րա համար Ոսկանյանը պետք է անցկացներ համարյա մեկ տասնամյակ՝ բուռն իրադարձությունների, լայն շփումների ու համառ ուսումնառության մի ժամանակաշրջան՝ այն էլ Փարիզում, իսկ Չիլինկիրյանը դեռ պետք է սպասեր ավելի քան 15 տարի, որպեսզի կարողանար երևան հանել «Ծաղիկը»՝ դարձյալ հագեցած, խորագնա ու լայնածավալ մի շրջափուլ: Ընդհանրությունը զմյուռնահայ երկու մեծ հրապարակախոսների միջև շատ-շատ են ու որակական իմաստով բավականաչափ նշանակալի՝ սկսած նրանց վիճակված ապրելակերպից ու ընդհանուր միջավայրից մինչև Մ.Նալբանդյանի հետ նրանց ունեցած շրջփուլային հանդիպումները: Իհարկե, փոքր չէ նաև նրանց հրապարակախոսության ժամանակալին ու արժեքային տարբերությունը. Չիլինկիրյանը սկսում էր այն վերջակետից, որ

1859-ին դրել էր Ոսկանյանը, առաջինը գործարար ու դիպուկ հրապարակախոսության մեծ վարպետ էր, հանդես էր հրատարակում ու ինքն էլ գտնվում էր իր չուսաբանած իրադարձությունների կենտրոնակետում, իսկ երկրորդը ավելի շատ տեսական հրապարակախոսության եզակի դեմքերից էր, հսկայական հեռավորության վրա այն բուն միջավայրից, որի կյանքը լուսաբանում էր, և ուր տարածվում էին իր հանդեսները: Չնայած դրան, նրանք պիտի լծակից դառնան, հավասարապես վայելեն բարձր հեղինակության մեծ պատիվը, նաև տարածայնվեն, հեռանան և կողք-կողքի ապրեն երկար տասնամյակներ՝ առանց միմյանց հետ առնչվելու, գրեթե անխոս ու անբառ:

Չիլինկիրյանը Ան. Փափազյանին աշակերտել է այն ժամանակ, երբ Ստ. Ոսկանյանն արդեն ավարտել էր Մեսրոպյանը, բայց մի քանի տարի՝ 1852-ից հետո, լինելով վարժարանի քարտուղարը, ինչպես և Ոսկանյանը, համատեղ աշխատել է հայր վարժապետի հետ: Ուստի և պատահական չէ, որ նրանք համերաշխ են Ան. Փափազյանի գործունեության ու կյանքի վերջին տարիների ողիսականի հարցում: Առավել հետաքրքրական է, որ նրանք համակարծիք են Սյունաց ընկերության գործունեության շուրջ, թեև Չիլինկիրյանը, չի առնչվել ընկերության հետ: Գնահատելով «Սյունյացը», Չիլինկիրյանը ինչ-որ չափով գնահատում էր նրա ատենադպիրի՝ անդրանիկ աշխատանքը՝ նրա նման ու նրա չափ ցավ ապրելով, որ ընկերությունը չափազանց վաղ է դադարել գոյություն ունենալուց: «Սյունյաց ընկերությունը, – գրել է «Ծաղիկը», – ոչ նվազ նպաստած է Իզմիրի հայերուն հառաջադիմության, և եթե Իզմիրի հրդեհը վրա չհասներ, անշուշտ ավելի մեծ ծառայություններ ալ պիտի ըններ...»¹: Մի շարք անգամներ ևս հանդեսը և նրա խմբագիրը նույն կարծիքն են հայտնել, անշուշտ, այս դեպքում ևս սկզբունք ունենալով՝ «խոհեմությամբ ճշմարտությունը ըսել առանց գրգռության տեղի տալու», որ հայտարարվել էր «Ծաղիկի» անդրանիկ համարի ծրագրային հոդվածում:

Ոսկանյանը տեսել ու վերապրել է «Սյունյացի» ծանր հոգեվարքը, իսկ տակալվին 12-13-ամյա դպրոցական Չիլինկիրյանն

¹ «Ծաղիկ», 20 սեպտեմբերի 1862, N 45, էջ 376:

ականատես է եղել նրա մահվանը ու տարիներ հետո է տեղեկացել կատարվածից: Չիլինկիրյանի, ինչպես և իշխող կարծիքի համաձայն, «Սյունյացի» գործունեությունը դադարել է 1845-ի հունիսին տեղի ունեցած հրշեհի հետևանքով: Դա է հավանաբար ճշմարտությունը, բայց ոչ ամբողջական: Ստ. Ոսկանյանը, որ ճշմարտությունն ասելու մեջ թերևս ամենից անշահախնդիր անձնավորությունն էր «Սյունյացի» գործիչներից, օգնում է պարզելու մահ մեղալի մյուս երեսի բովանդակությունը՝ ընկերության քայքայման բուն պատճառն արտաքին և այն էլ պատահական երևույթների փոխարեն տեսնելով նրա իսկ ներսում տեղի ունեցածում:

Կործանարար հրդեհից հետո զմյուռնահայության, ինչպես և նրան աջակցող հեռավոր ու մերձավոր անհատների հոգսերի հոգսը դարձել էր հրո ճարակ դարձած գաղթօջախի վերածնունդը, որը կատարվում էր շատ դանդաղ ու ահռելի դժվարությամբ: Այդ իրադրության մեջ ոչ միայն «Սյունյացը», այլև գաղթօջախի գոյատևման համար կենսական անհրաժեշտություն ունեցող հաստատությունները բնականաբար դուրս էին մղվել ուշադրության ասպարեզից. Չմյուռնիայի համարյա ամբողջ հայությունը գլխավերև տանիք չուներ, ոտքերի տակ Հայնոցի մոխրաշերտն էր: Նույնիսկ մինչ այդ, ասենք 1844-ին, ինչպես տեսանք ընկերության մի գրագրությունից, ցույց տրված աջակցությունը սպասվածից նվազ էր («այս ամ հույժ նվազագույն, քան որչափ ցանկանք»): Որպեսզի հնարավոր լինի «Սյունյացի» նպատակներն իրագործելու անհրաժեշտ միջոցներ գտնել, նրա անդամները հայցում էին ունևոր դասի դրամական աջակցությունը («առդրունս առատաձեռն ազգասիրաց դեզերիմք»), դիմում ազգային ազդեցիկ գործիչներին՝ խնդրելով հովանավորել ընկերությանը («աղաչենք հույժ ծոնարհաբար, զի բարեհաճեսցիք զվեհ Չեր հովանավորություն ի վերա բարեվախճան ընկերությանս տարածել»¹):

Ընկերության գործունեության հիմնգերորդ տարեշրջանում (1845թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1846թ. օգոստոսի վերջը) դրությունն արդեն հոգեվարքային էր: Դատելով Կ.Պոլսի պատ-

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 110, վ. 94:

րիարք Մատթեոս արքեպիսկոպոսի պատասխան նամակից, Սյունյաց ընկերությունն «անբավ վիշտերու և տառապանաց հանդիպելով չարաշուք դիպվածներե, յուր առաջին ճիգը և ազգասիրական վաստակները ի գործ դնելու կտկարանա»: Պատրիարքը զմյուռնահայ հասարակությանն ուղղված նամակում փորձում է քաջալերել, գրելով, թե՝ «միաբանական սերը շատ բարիքներ առաջ կրերե», «ջանացեք սերը և միաբանությունը հաստապինդ արմատացուցանել ի ձեզ, ձեր ընկերասեր, հայրենասեր և ազգասեր համբավը տարածելով ընդ ամենայն, աշխարհ»¹:

Անկասկած, պատրիարքն իզուր չէր «միաբանական սիրո» կոչ անում: Նրա նամակին անդրադարձնալուց հետո ընկերության կառավարիչ Ղ. Պալղազարյանը հենց թերթի նույն համարում գրում է, որ «Սյունյացի» տնօրենները «իբրև իմաստուն նավապետ, խոհեմությամբ և զգուշությամբ վարվելով, միաբան խորհուրդով անհրաժեշտ պարտք համարեցին իրենց՝ ապահով նավահանգիստի մը մեջ քաշել ընկերության նավը, սպասելով որ հողմահար ալեկոծությանցը բարեհաջող եղանակ մը հաջորդե...»:

1846-ի նոյեմբերին գրած այս «մահախոսականն» իրականում ազդարարում էր «Սյունյացի» վախճանը, որը, սակայն, փաստորեն տեղի էր ունեցել գրեթե մեկ տարի առաջ, թեև բաժնեգրությունները շարունակվում էին հետագայում ևս: «Ապահով նավահանգստում» ընկերության նավը դանդաղ ու աննկատ րնկղմվեց՝ չկարողանալով սպասել «բարեհաջող եղանակի»: Գիշտ է, հետագայում նույնպես «Արշալույս արարատյանում» երևացին առանձին հաղորդումներ, նույնիսկ հաշվեցուցակներ, որոնք կարծես թե նրա կենդանության նշաններ էին, բայց դրանք ավելի շուտ թերթի տնօրենի և ընկերության կառավարչի ցանկությունն էին արտահայտում, քան տարեգրում «Սյունյացի» ետմահու կյանքը: Պալղազարյանն ստիպված էր քանիցս ազդարարել, որ ընկերությունը «քանի մը հարկավոր և ազգօգուտ նոր կարգադրություններ հրատարակելու վրա է», որ նա դեռ «կենդանի և առողջ է», որ նրա մեկ-երկու տարվա «անգործությունը պիտի չշարունակվի միշտ»՝ միաժամանակ նոր հորդորներ

¹ «Արշալույս արարատյան», 29 նոյեմբերի 1846, N 273:

ու կոչեր հղելով ընկերություններ հիմնելու արդյունավետության և «Սյունյացը» կենդանացնելու մասին¹: Շատ չանցած արդեն ազդարարեց, որ «Արշալույստ հրատարակիչը յուր պաշտոնին ծանր զբաղմանցը պատճառով բավական ժամանակե ի վեր հրաժարված է *Սյունյաց ընկերության* հոգաբարձութենեն»²:

Ինչպես ակնառու է բերված փաստերից ու վկայություններից «Սյունյացի» վախճանի միակ պատճառը սոսկալի հրդեհը չէր: Ինչ-որ պատճառով ծագած անմիաբանությունը, ներքին պայքարը 1845թ. հունիսից առաջ արդեն սպառնում էր ընկերությանը: Այդ վտանգի մասին ժամանակակիցները բարձրաձայն չեն խոսել, չեն բացել փակագծերը, հավանաբար, ընկերության վախճանը չարագացնելու համար: Չի բացառվում, որ լայնածավալ բնույթ ստացող ընկերությունը կասկածների տեղիք է տվել նույնիսկ սուլթանական շրջանակներում:

Մեկ ու կես տասնամյակ անցնելուց հետո փակագծերը լրիվ չի բացում նաև Ստ. Ոսկանյանը, թեև նա առավել համարձակությամբ է շոշափել «Սյունյացի» գործունեության դադարման դրդապատճառները: Դրանով հանդերձ նա մատնացույց է անում ընկերության ներսում և նրա շուրջ տեղի ունեցածը: Ընդհանրապես խոսելով «հայ ժողովրդին լուսավորության համար» ստեղծված մշակութային ընկերության և «անով ավերայրյաց Հայաստանին մտավոր թշվառության մպաստ մը գտնելու» փորձերի մասին, Ոսկանյանը նշում է երեք հիմնական պատճառ, որոնք մշտապես ստիպում են «ետ քաշվիլ և ամեն հիմնադրություն կիսատ թողուլ»: Դրանք Ոսկանյանի բառարանում «կատաղի թշնամիներ» են, որոնցից «առաջինը եղեր են միշտ տեսակ մը կրոնավորներ... երկրորդ թշնամին եղեր է սնափառությունը... Երրորդ թշնամին եղեր է տեսական դրույթներու պակասությունը»: Որպես կոնկրետ օրինակ նա հիշում է «Սյունյաց և Համազյաց ընկերությունները, որք, երկուքն ալ, կրոնական թշնամությունեն կործանեցան և անհետ եղան», առաջինի մասին ասելով, որ եթե նա «կանգուն մնար, այսօր Փոքր Ասիայի շատ

¹ Նույն տեղում, 4 ապրիլի և 8 օգոստոսի 1847, N 282 և 291, 2 ապրիլի 1848, N 308, 27 մայիսի 1849, N 338:

² Նույն տեղում, 5 հունվարի 1851, N 380, 30 հունվարի 1853, N 434, տե՛ս նաև նույնի N 430-ը:

հայաբնակ քաղաքներ լույս և գիտություն կունենային Իզմիրի արթուն ժողովուրդին խնամքով...»¹:

Ոսկանյանի բացահայտած ճշմարտությունը, որ Սյունյացը կործանվել է կրոնական թշնամության հետևանքով, անսպասելի չէր ընկերության լավատեղյակ անդամների համար: Նրանցից մեկը, արծազանքելով Ոսկանյանին, գրել է. «Այո, իրավունք ունիք ըսելու, թե եկեղեցականի մը թշնամությունը առիթ եղավ մեր կործանման»²: Ո՞ւմ մասին է խոսքը, Ոսկանյանը չի ասում, գտնելով, որ «մասնավոր անձերու վարքը պատմությունը» պետք է քննի: Նա դա չի բացահայտում նույնիսկ «Սյունյացի» «վաղեմի անդամի» նամակը ստանալուց հետո, չնշելով նաև վերջինիս անունը: Բայց նամակի հեղինակը փորձում է ուղղել Ոսկանյանին, նկատելով, թե «հավաստի եղիք, որ այս թշնամությունը միայն կարող չէր գնեզ լուծելու, եթե սոսկալի հրդեհի մը աղետքը ավի մը սոխիք չըներ Իզմիրի հայերուն բարօրությունը: Թշնամիի մը հարվածեն ինկանք վիրավոր, չենք ուրանար զայս, բայց նորեն կանգնիլ մեզի դյուրին էր, եթե բոլոր մեր հասարակությունը տարիներով չցրվեր աստ և անդ...»:

«Սյունյացի» վաղեմի քարտուղարը, որ, անշուշտ, առավել լավատեղյակ էր, համաձայն չի նամակի հեղինակի հետ: Շեշտելով, որ նպատակ չունեն զմյուռնահայությանը մեղադրել կամ նրա արածը «վախկոտություն սեպել», Ոսկանյանը պարզորոշ ազդարարում է. «Հրդեհեն առաջ ընկերության հիմը խախտված էր և հույս չկար, որ հարվածին դիմանա: Թող լավ մը հիշե ամեն պարագաները և կհամոզվի, որ կրոնական թշնամությունը մինչև ի մատնություն գացեր էր...»:

Այսպես Ոսկանյանը բացահայտում է Սյունյաց ընկերության լուծվելու պատճառը՝ երկիցս պնդում իր կարծիքը: Ավելի ուշ՝ 1867-ն, նա «ազգի շահը չխնայողներ» է համարում նրանց, ովքեր «Սյունյաց ընկերության 20.000 դահեկանի պատրաստ գումարը անհետ ըրին, որքին և աղքատին կրթության ծավալումը արգիլեցին և մինչև հիմա հաշիվ չեն ուզեր տալ հասարակության»³:

¹ «Արևմուտք», 1859, էջ 11:

² Նույն տեղում, էջ 56:

³ «Արշալույս արարատյան», 27 մայիսի 1867, N 806 (հավելված):

Կրոնական բշնամանք. Ոսկանյանը մի անգամ չէ, որ Չմյուռնիայում զգացել է նրա խայթոցը, ցասումով ականատես եղել, թե ինչպես է նա պառակտում և իրար դեմ հանում զաղթօջախի ուժերը, շեղում ուշադրությունը, խաթարում, մույնիսկ բռնավորում հավատացյալների առօրյա կյանքը: Ու կրոնական հիվանդոտ ինքնասիրության, վանավորների խարդավանքների դեմ տևական ատելությամբ նա լիցքավորվեց Չմյուռնիայում անցկացրած տարիներին:

* * *

Ոսկանյանը Չմյուռնիայից Փարիզ է մեկնել 1846-ի վերջերին. «Եվրոպային համբավը մեր մոզեր էր», – գրել է նա հետագայում: Կրթությունը կատարելագործելու, զանազան գիտություններին հաղորդակցվելու անհագ փափագով էր նա ոտք դնում Ֆրանսիա՝ հույսը միմիայն իր ուժերի և ունակությունների վրա. «մեր ազատ կամքով և ստակով հայրենիքեն ելանք ու Եվրոպա ուղղեցանք», – բացատրել է Ոսկանյանը հասկացնելով, թե իր մեկնումը տեղի է ունեցել ոչ թե որևէ մեկեճասի, որևէ հովանավորողի կամ աջակցության շնորհիվ, այլ իր իսկ ցանկությամբ, նաև ավելացնելով, թե «մեր մանկությունն ի վեր կաշխատինք անկախությամբ ապրել»¹:

Չկար մեկը, որի օգնությունը նա ակնկալեր. աղքատ ծնողների զավակը գրպանում ուներ սեփական աշխատանքով վաստակած 30² և հորեղբոր՝ Կարապետ Ոսկանյանի (այլ վկայությամբ՝ հոր³) տված ոսկիները: Դրանցով նա պետք է ապրեր մինչև որ աշխատանք գտներ և ուսման նվիրվելու հնարավորություն ստանար: Հավանաբար նա սկզբնապես ցանկություն ուներ ընդունվելու Սենտ-Պարպի անունը կրող վարժարանը, որի տնօրեն Ալեքսանդր Լապրուստը հայտնի էր Թուրքիայում և հայկական շրջաններում, մասնավորապես զմյուռնահայությանը, գուցե և անձնապես ծանոթ էր «Արշալույս արարատյանի»

¹ Նույն տեղում, էջ 34, 130, 136:

² Սյունյաց ընկերության ատենադպիրը, որ Ստ. Ոսկանյանն էր, 1844 – 1846թթ. որպես աշխատավճար ստացել է 6.450 դուրով:

³ Տե՛ս «Բյուզանդիոն», 28 փետրվարի, 13 մարտի 1901, N 1341:

խմբագիր Գ. Պալազարյանին: Այս թերթի էջերում Լապյուստի անունն առաջին անգամ հանդիպում ենք 1845թ. հուլիսի 14-ի համարում, որտեղ նա հիշատակվում է որպես հունիսի 21-ին տեղի ունեցած Չմյուռնիայի մեծ հրդեհից աղետի ենթարկված հայությանն օգնելու համար Փարիզում միջոցներ ժողովելու գործակալ: Դա ենթադրել է տալիս, որ նա անհայտ մեկը չէր, գմյուռնահայ գաղթօջախի հետ ինչ-որ կապեր է ունեցել և որոշակի վստահություն էր վայելում համենայն դեպս աղետ-յալներին օգնելու համար այնտեղ ստեղծված մասնաժողովի կողմից: Հենց Լապյուստի անունով էլ, Չմյուռնիայից մեկնելուց առաջ, Գ. Պալազարյանը Ոսկանյանին մի «փոքր նամակ» էր տվել: Այդ համձնարարականը Ոսկանյանը հասցեատիրոջն է հանձնել Փարիզ ժամանելուց հավանաբար երկու շաբաթ հետո, երբ անձնապես ծանոթանալու առիթ է ունեցել: «Պարոն Լապյուստ օր մը, պ. ֆ. Տատյանին սենյակը տեսնելով զմեզ ու մեր լեզվագիտությունը և ուսումնասիրությունը նշմարելով, հաճեցավ թեթև պաշտոն մը տալ մեզ վարժատուներն դուրս: Արդարև այս մեծ բարերարություն մ' էր և ամեն դյուրություն կուտար ուսումներու զբաղիլ Սորպոնի, Բոլեժ տը Ֆրանսի, Բոնսեր-վաթուար տեղ Ար է Մեթիեի մեջ...»¹:

Ֆրանսիական վարժարանի տնօրենի աջակցությամբ աշխատանք գտնելը Ստ. Ոսկանյանի՝ մեզ հայտնի առաջին քայլն էր Փարիզում: Հայտնի չէ, թե կոնկրետ ինչ էր նա անում, թերևս, ինչպես հաճախ պատահում է իր ուսանել ցանկացողների հետ, մի երկրորդական աշխատանքով էր զբաղված: Բայց դա նրա համար կենսական նշանակություն ունեցող հենց այն գործն էր, որ հնարավոր դարձրեց շարունակել ուսումնառությունը և

¹ Ե. Տեմիրճիպաշյանն իր մի հոդվածում Ստ. Ոսկանյանին համարել է «Սենտ-Պարայի անվանի հայ ուսուցիչ» («Արևիկ», 19 դեկտեմբերի 1898): Ապա այդ փաստը կրկնվել ու մեկնաբանվել է հետագայում, նույնիսկ մեր օրերում: Սակայն Ոսկանյանի հիշատակությունները բնավ տեղ չեն թողնում եհրադրելու, թե նա սովորել առավել ևս դասեր է տվել Սենտ-Պարայիում: Հպարտությամբ նշելով իր մասնավոր դասատվությունների մասին, նա որևէ ակնարկ անգամ չի արել, որ դասատուի պաշտոն է վարել ֆրանսիական դպրոցում, կամ եղել է օգնական դասատու: Ի դեպ, Հր. Ասատուրը ճշտում է. որ Լապյուստը «հսկողի պաշտոն մը կուտա» Ոսկանյանին («Դիմաստվերներ», էջ 105):

միաժամանակ շփվել Փարիզի, հավանաբար նաև Սենտ-Պարպիի ուսանողության հետ՝ առանց այս վարժարանի աշակերտը լինելու. «Կհաստատենք, թե երբեք Սենտ-Պարպի մեջ չմտանք իբրև աշակերտ և երբեք պարոն Լապրուստը այսպիսի դիտավորություն մը չունեցավ մեզի համար... այս վարժարանին մեջ ո՛չ բնակեր և ո՛չ աշակերտներու հետ խառնվեր ենք բնավ», – գրել է Ոսկանյանը («Արևմուտք», 1859, էջ 130):

Չլինելով Սենտ-Պարպիի աշակերտը, Ոսկանյանը, զոհն Ֆրանսիայում ուտք դնելու առաջին շրջանում, շատ մոտ էր կանգնած Ֆրանսիայի հնագույն և առավել մեծ համբավ վայելող դպրոցին: Համենայն դեպս այդ էր նրան պարտավորեցնում «Արշալույս արարատյանի» խմբագրի հանձնարարությունը: Բանն այն է, որ Ղ.Պալղազարյանը որոշակի շահագրգռվածություն հանդես բերելով ազգային լուսավորման հարցերում, նպատակադիր հետաքրքրություն էր ցուցաբերում Սենտ-Պարպիի նկատմամբ և ոչ առանց պատճառի: Նա թերթի 1847թ. ապրիլի 4-ի համարում հաղորդում է տպագրել այն մասին, որ հռչակավոր դպրոցի ընդհանուր կառավարիչ Ալ.Լապրուստն «անցյալներեն վեհափառ կայսեր կողմանե Նիշան Էֆֆիխար ընկալավ»: Թերթի բացառությամբ, ֆրանսիական դպրոցի տնօրենն այդ պատվին արժանացել է «փոխարենը յուր հայրախնամ պաշտպանությանը հայազգի քանի մը երևելի գործակալաց որդվոցը վրա, որոնք նույն դպրոցին մեջ իրենց ուսմունքը լըմնցուցին ու հիմակ օսմանյան կառավարության ծառայություն կընեն»:

Նա իր կողմից երախտագիտություն է հայտնում հայասեր ֆրանսիացուն, նույնիսկ խնդրում չպակասեցնել իր պաշտպանությունը «մյուս հոն գտնվող մերազնյա երիտասարդաց վրա»:

«Արշալույս արարատյանի» այս վերջին խոսքերում հավանաբար առկա է նաև Ոսկանյանի նկատմամբ հոգատարություն դրսևորելու խնդրանքը և, ըստ երևույթին, թերթի այդ համարը Ղ.Պալղազարյանը Ոսկանյանի միջոցով առաքել է Լապրուստին: Իր հաղորդմանը նա կցել է այսպիսի ծանոթագրություն. «Սենդ-Պարպ ըսված հռչակավոր դպրոցին վրայոք ուրիշ անգամ խոսիմք մասնավորապես»:

Սենտ-Պարպի մասին թերթին հողված գրելու խնդրանքով

խնդրագիրը դիմել է հենց Ոսկանյանին: Նրանց անձնական կապից բացի, այդ մասին է վկայում հետագայում թերթում հրատարակված «Մենո-Պարպ» խորագրով հոդվածի ծանոթագրությունը. «Այս նամակը մեզի գրողը Իզմիրի սուլթ Մեսրոպյան դպրոցին վաղեմի հառաջադեմ աշակերտներեն մեկն է»: Ինչպես հայտնի է դառնում «Հարգի հրատարակչին» ուղարկված հոդվածի առաջին տողերից, նրա հեղինակ Ոսկանյանը մի քանի անգամ կրկնված խնդրանքներից հետո է գրել այդ հոդվածը:

Այստեղ, հոդվածի բուն բովանդակությանն անդրադառնալուց առաջ, հարկ է պարզաբանել հետևյալը: Մինչև Ֆրանսիա մեկնելը, ինչպես տեսանք, Ոսկանյանն աշխատակցում էր Ղ.Պալղազարյանի թերթին, հրատարակում թարգմանություններ՝ չափածո և արձակ: «Սյունյացի» քարտուղար եղած ժամանակ նա համատեղ աշխատում էր ընկերության կառավարիչ նույն Ղ.Պալղազարյանի հետ: Նա էլ Փարիզ մեկնող Ոսկանյանին հանձնարարական նամակ էր տվել Լապրուստի անունով: Այս պարագաներն իրավունք էին տալիս «Արշալույս արարատյանի» խմբագրին ոչ միայն առանձին խնդրանքով դիմելու Ոսկանյանին, այլև հուսալու նրա աշխատակցությունը թերթին Փարիզից: Դա անհրաժեշտ էր գավառական թերթի համար և պետք է, որ հաճելի լիներ նաև Ոսկանյանին: Չի բացառվում, որ Պալղազարյանը նման առաջարկ է արել Ոսկանյանին, բայց Ոսկանյանը չի շտապել կատարել Պալղազարյանի նույնիսկ առաջին խնդրանքը, իսկ հոդվածը գրելուց հետո իր ստորագրության փոխարեն նրա տակ դրել է երեք աստղանիշ¹:

¹ Այսպիսով հայտնի է դառնում, որ Ոսկանյանի հոդվածի տակ, նրա անունազանգված փոխարեն, դրված է երեք աստղանիշ: Սակայն դրանից շատ տարիներ առաջ, տակավին 1841-ին ևս «Արշալույս արարատյանում» (N 51, 56), ինչպես և հետագա տարիներին տպագրված շատ նյութերի տակ դարձյալ աստղանիշեր են դրված: Այս դեպքում նման ծածկագրությունը, մեր կարծիքով, առնչություն չունի Ոսկանյանի հետ: Սակայն այն բանից հետո, երբ նա սկսեց թերթում հրատարակել իր չափածոներն՝ ու թարգմանությունները, թերթում հանդիպում ենք աստղանիշերով կամ անստորագիր (երբեմն էլ «աշակերտ ոճն») նյութերի, որոնք կարող են վերագրվել Ոսկանյանին: Հետագայում, իր հանդեսներում և այլ պարբերականներում նա նյութեր է հրատարակել՝ իր անվան փոխարեն դնելով աստղանիշեր կամ չստորագրելով, երբեմն էլ «Հայ ոճն» ծածկանունով:

Կարծում ենք, դա պատահականություն չէ, մանավանդ որ «Արշալույս արարատյանի» էջերում այնուհետև՝ շուրջ քսան տարի դեռ նա Ֆրանսիայում էր, չենք հանդիպում Ռսկանյանի ստորագրությանը: Կարելի է ենթադրել, որ Ռսկանյանը դեռ երիտասարդական տարիներից խուսափում ու սահմանազատվում էր «Արշալույս արարատյանից» ու նրա խմբագրից, որոնց որդեգրած ուղղությունն ու գործելակերպը խորթ ու անհարիր էին նրա ներքին խառնվածքին, իսկ հետագայում՝ նաև նրա դավանանքին առհասարակ: Հակառակ դեպքում, եթե Ղ.Պալղազարյանը վճարում էր տպագրվող նյութերի համար, «Արշալույս արարատյանի» էջերում մենք հաճախ կհանդիպեինք Ռսկանյանին: Գոնե առաջիկա տասնամյակում, մինչև իր հանդեսի հրատարակությունը, նա պետք է, որ եթե ոչ ավարտտի միջոց վաստակելու, ապա տպագրվելու բնական պահանջին տեղի տալով, աշխատակցեր թերթին, դրա համար նա լայն հնարավորություն ուներ, կարող էր առանց որևէ դժվարության պարբերաբար նյութեր առաքել Փարիզից, առավել ևս՝ իր միջավայրի իրադարձություններից:

Նման սահմանազատումը, նույնիսկ դիմադարձ շրջվելը Ռսկանյանին խորթ չէ: Ավելին, հետագայում նա մեկ-երկու անգամ առիթ ունեցավ արտահայտելու իր կարծիքն «Արշալույս արարատյանի» մասին և, ինչպես կտեսնենք, արտահայտվեց շատ կտրուկ, նույնիսկ անողոք՝ հարազատ մնալով ինքն իրեն:

Բայց այժմ՝ 1847-ին, նա տեղի է տալիս Ղ.Պալղազարյանի կրկնակի խնդրանքներին և Փարիզից հողված է ուղարկում «Արշալույս արարատյանին»: Դա Ռսկանյանի ամենից վաղ գրած հողվածն է, նրա հրապարակախոսական առաջին քայլը, որ հնարավորություն է տալիս երևան հանել նրա բարեխղճությունն ու պատասխանատվությունը, որպես մամուլում հանդես եկող լրագրողի:

Սենտ-Պարպի մասին հողված գրելու համար Ռսկանյանը բավարար չափով ուսումնասիրել է հարցը, ծանոթացել է դպրոցի պատմությանը, որ սկսվել է 1430թ.: Համառոտակի ուրվագծելով դպրոցի անցած ուղին և ցույց տալով նրա հիմնական շրջափուլերը, նա արդեն կատարում էր ստացած հանձնարարու-

բյուր: Բայց Ռսկանյանը դրանով չի բավարարվել: Նա ներկա է եղել դպրոցի տարեվերջյան հանդեսին: Ապա հարկ է համարել հողվածին կցել դպրոցի վերակացուի՝ Ալ. Լապրուստի ճառը, որով նա դիմել է ներկա գտնվող «գրեթե 200 ունկնդրաց»: Նյութի նման մատուցումը «Արշալույս արարատյանի» ընթերցողին լրիվ գաղափար է տալիս թե՛ դպրոցի, թե՛ նրա տնօրենի և թե՛ ուսումնադաստիարակչական այն սկզբունքների մասին, որոնք կիրառվում էին ֆրանսիական հնագույն ուսումնական հաստատություններից մեկում:

Չուսպ ոճով, գրեթե առանց մակդիրների է ներկայացրել դպրոցի պատմությունը երիտասարդ լրագրողը: Դպրոցը վեց տարի՝ 1792 – 1798թթ., փակվել է այն խոռովության հետևանքով, որին մասնակցել են նրա սաներն ու դասատուները, և որը «ոչ միայն մայրաքաղաքը տակնուվրա ըրավ, այլև շատ վարժարաններ ցրվեց»: Սենտ-Պարպն այնուհետև դարձել է եղբայրասիրության օջախ, որով «աշխարհքիս օրինակ կրնա ըլլալ» և Փարիզի «առաջին մարտադիրն է ընդդեմ տգիտության»: Դպրոցի սաները («պարպիստներ») 1830-ին հիմնել են ընկերություն: Վերջին տասը տարում նրա վերակացուն է Ալ.Լապրուստը: Ճառը, որով նա հանդես է եկել, բարոյախոսական բնույթ է կրում, բայց և ոգեշնչող է. մեծ համբավ ունենալը, որևէ գործում առաջինը լինելը «Ծանր բեռ մըն է», – ասում է դպրոցի վերակացուն և կոչ անելով միշտ միաբանությամբ հանդես գալ, դիմում է իր սաներին... Աշխարհիս ամենեն մեծ բարիքը բարեկամությունն է և ամենեն գեղեցիկ և օգտակար բարեկամությունը դպրոցին մեջ հյուսված բարեկամությունն է»¹:

Սենտ-Պարպի մասին առանձին հողված տպագրելով, Գ.Պալլազարյանը չի սպառել իր հետաքրքրությունը թե՛ դպրոցի և թե՛ նրա տնօրենի նկատմամբ: Նա ձգտում էր մի կողմից օգտագործել հարմար առիթը պատշաճը հատուցելու Ալ. Լապրուստին, իսկ մյուս կողմից, անշուշտ, ձգտում էր հայ երիտասարդների մեջ դեպի Եվրոպա, Ֆրանսիա մեկնելու և կրթություն ստանալու տրամադրություն առաջացնել, որը բխում էր նրա և

¹ «Արշալույս արարատյան», 14 նոյեմբերի 1847, N 298:

«Արշալույս արարատյանի» լուսավորական նպատակադրումներից:

Լապրուստին թերթի էջերից կրկին շնորհակալություն հայտնելու առիթ Ղ.Պալդազարյանը շուտով նորից ունեցավ: Փարիզից Կ. Պոլիս վերադառնալիս Տատյան Հովհաննես ամիրան որդու՝ Գարեգին Հարություն Տատյանի հետ 1848թ. հունվարի 31-ին եղավ Ջմյուռնիայում: Երիտասարդ Տատյանը ավարտել էր Սենտ-Պարպը և լավատեղյակ էր «բարեհամբավ դպրոցին», գիտեր, որ այնտեղ կան հայ սովորողներ: Տատյանների վկայությունը, որ դպրոցի «առաքինի և հայասեր վերատեսուչ պարոն Ալեքսանդր Լապրուստը մարդասիրական ոգիե շարժյալ հատուկ խնամք մը ունի եղեր հայկազուն աշակերտաց հառաջադիմության վրա», փնտրված առիթ էր, որպեսզի Պալդազարյանն այս անգամ ազգի և իր ու Տատյան ամիրայի անունից հրապարակայնորեն շնորհակալություն հղի հարգարժան տնօրենին¹:

Թուրքիայի եվրոպականացման քաղաքականությունը, որ պատմականորեն անխուսափելի էր և թանձրամաթի տարիներին լայն ծավալ ստացավ, նպաստում էր այն բանին, որ ավելի շատ հայեր կրթություն ստանան եվրոպական կենտրոններում: Մինչև 30-ական թվականների վերջերը, նույնիսկ 40-ականի սկզբներին հազիվ մեկ-երկու տասնյակ թուրքեր, շրջանցելով կրոնական պատնեշը, կարողացան քիչ թե շատ հիմնավոր կապեր հաստատել Եվրոպայի հետ, մինչդեռ ոչ քրիստոնյաները վաղուց ի վեր մշտական ու լայն շփումներ ունեին Արևմտյան Եվրոպայի հետ, ենթարկվում էին նրա բարերար ազդեցությանը:

Ուսում առնելու համար այդ ժամանակներում Ջմյուռնիայից Փարիզ մեկնած հայ ուսանողների թվում Ոսկանյանն առաջիններից մեկն էր²: Բայց արդեն 30-ական թթ. Թուրքիայի հայկական գաղթօջախներում գործունեություն էին ծավալում

¹ «Արշալույս արարատյան», 6 փետրվարի 1848, N 304:

² Հետաքրքրական է, որ դեռևս XVII դարի կեսերին հայ առանձին գործիչներ կրթություն էին ստանում Փարիզում: Նրանցից մեկը՝ Գեորգ վարդապետ Սյալայինը (1781 – 1758) վեց տարի սովորել էր Փարիզում և հմուտ լեզվագետ էր (տե՛ս «Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի», Կ.Պոլիս, 1901, էջ 148):

Եվրոպական կրթություն ստացած ոչ քիչ թվով գործիչներ (ճարտարապետներ, իրավաբաններ, բժիշկներ, մանկավարժներ և այլն): Եվրոպական մշակույթի հետ շփվելու աստիճանաբար ընդլայնվող այն հնարավորությունները, որոնք Թուրքիայում պետականորեն թույլատրվում էին և սկսած 40-ական թվականներից մշտական բնույթ էին կրում, հնարավորություն էին տալիս Իտալիայում, Ֆրանսիայում և այլ երկրներում կրթություն ստանալ նաև հայ երիտասարդներին: Այդ տասնամյակում բարձրագույն կրթություն ստանալու համար Եվրոպա մեկնողների թիվը դեռևս մեծ չէր, որովհետև ուսումնառության համար արտասահման մեկնելը տակավին անհատական բնույթ էր կրում¹:

Մական 1830-ական թվականներին Իտալիայում Մխիթարյանների բացած երկու վարժարանները, դրանց միավորմամբ ստեղծված և 1846-ին Փարիզ փոխադրված Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը, իրենց դավանաբանական սահմանափակվածությամբ հանդերձ, Փարիզում անցած դարավերջից գործող Արևելյան լեզուների վարժարանի հետ միասին հնարավորություն ընձեռեցին հայ երիտասարդությանը կրթություն ստանալու հետ միաժամանակ ծանոթանալ եվրոպական, մասնավորապես ֆրանսիական մշակույթին: 1855-ին, դարձյալ Փարիզում, բացվեց օսմանյան դպրոցը, որտեղ սովորում էին 60 թուրքեր: Ինչպես հաղորդել է «Արշալույս արարատյանը», 1847-ին Փարիզում ուսում էին ստանում 25-30, իսկ 1850թ.՝ 56 հայ երիտասարդներ: «Մասյաց աղավնու» հրատարակած ցանկը վկայում է, որ մինչև 1855-ը Փարիզում բարձրագույն կրթություն էին ստացել ավելի քան 40 հայեր՝ բժիշկ, ճարտարապետ, երկրագործ, բնագետ, վաճառական և այլն²:

¹ Իհարկե որոշ փորձեր են եղել հայ երիտասարդների ոչ մեծ խմբեր եվրոպական ուսում ստանալու ուղարկել առանձին ընկերությունների հոգածությամբ: Ինչպես հաղորդվել է մամուլում, Սյունյաց ընկերությունը որոշել էր արհեստներ՝ կոշկակարություն, դերձակություն և երկրագործություն սովորելու ուղարկել վեց կամ ութ որդեգրված երիտասարդների, որոնք վերադառնալով Չմյուռնիս «պիտի ասացեն այլոց» («Արշալույս արարատյան», 13 հունվարի 1945, N 224):

² Տե՛ս «Արշալույս արարատյան», 6 փետրվարի 1848, N 304, 8 դեկտեմբերի 1850, N 378, «Մասյաց աղավնի», 1855, էջ 124-125:

Եվրոպայում կրթություն ստացած թե՛ թուրք և թե՛ հայ երիտասարդներին վիճակված էր համապատասխանաբար վճռական դեր կատարել թե՛ օսմանյան պետության և թե՛ հայ ազգային կյանքում: Խոսքը մասնավորելով Ֆրանսիայում բարձրագույն կրթություն ստացած և Թուրքիա վերադարձած հայ երիտասարդների շուրջ, պետք է ասել, որ նրանք լավագույն հավատով տոգորված, երկրի առաջադիմությանը նախանձախնդիր, ժամանակի գաղափարները որդեգրած մտավորականներ էին, որոնք, չ.Մրմրյանի պատկերավոր արտահայտությամբ, իրենց ծննդավայրն էին վերադառնում «շալակած իրենց Վոլդերն ու Տիտրոն»¹, գաղափարական որոշակի սնունդ ստացած ու լիցքավորված: Հանավաբար նրանց մեծ մասը չբավոր կամ միջին կարողության ընտանիքներից էր, ապրուստի խիստ համեստ միջոցներով: Նրանց նյութական սուղ վիճակի հակապատկերն էր այն ոգևորությունը և բարոյական ուժը, որով նրանք նվիրվել էին ուսմանը: Այս մասին է վկայում «Մասյաց աղավնիի» հոդվածագիրը, որի հրատարակած ցանկում կա նաև Ստեփան Ոսկանյանի՝ «Գրագետի» անունը. «Այս պատվական երիտասարդաց շատին մեկ հատիկ հարստությունը իրենց բնավորության ազնվությունը, անձնական և ազգային պատիվնին պահելու փույթը, անխոնջ աշխատասիրությունը, երկայնամիտ հարատևությունն ու անպարտելի չարքաշությունն է»²:

Եվրոպական կրթություն ստացած հայ երիտասարդները պաշտոնավարում էին սուլթանական պալատից և օտարերկրյա դեսպանատներից սկսած մինչև ազգային օջախները, կատարում էին մեծագույն այն դերը, որ վիճակված էր ժամանակի չափանիշով կատարելապես կրթված գործիչներին հետամնաց ու խավարի քողով ծածկված այնպիսի կիսաավատատիրական երկրում, որպիսին Թուրքիան էր: Ուստի և պատահական չէ, որ օսմանյան պետության առաջադիմության ակունքներում, մշակույթի ու տնտեսության գրեթե բոլոր ասպարեզները

¹ Չ.Մրմրյան, Թուրքահայ հին վաճառականությունը և վաճառականը, Կ.Պոլիս, 1908, էջ 202:

² «Մասյաց աղավնի», 1855, էջ 125:

ներառյալ, հանդիպում են այդ գործում վճռական դեր խաղացած ոչ քիչ թվով հայազգիներ: Ավելին, եվրոպական բարձրագույն կրթական հաստատություններից վկայված շատ հայ գործիչներ, օսմանյան «բարեխնամ տերության» հավատարիմ ծառայողները լինելու հետ միաժամանակ, որոշակի դեր էին կատարում նաև հայ ազգային կյանքում, ստանձնել էին եթե ոչ նրա ծանրակշիռ գործերի տնօրինությունը, ապա գոնե այդ գործերին վճռականապես միջամտողի դեր՝ կամ անմիջականորեն, կամ միջնորդավորված: Ըստ որում հաճախ թուրքական կառավարությունը խրախուսիչ քայլերի էր դիմում թուրք երիտասարդների հետ միասին հայերին ևս արտոնելով ուսման մեկնել Եվրոպա, նույնիսկ որոշ ծախսեր ստանձնելով ու հատուցելով եվրոպական դպրոցների տնօրեններին:

Բավականաչափ կնճռոտ ու ուսումնասիրության կարոտ հարց է դա, որը պետք է երևան հանի արևմտահայ ազգային կյանքում եվրոպական ուսում ստացած հայ մտավորականության իրական դերը: Մինչ այդ, սակայն, կարելի է արձանագրել, որ Արևմտյան Հայաստանում ազգային կյանքի զարթոնքը համարյա ամբողջապես պայմանավորված էր հենց այն հայ գործիչներով, որոնք ուսում էին ստացել արտասահմանում և իրենց ընդհանուր խնդիրն էին համարում ազգային կայուն պատվանդան ստեղծել արևմտահայության համար: Տարբեր էին նրանք իրենց ծագումով, դավանած գաղափարներով, հետապնդած նպատակներով, առավել ևս սոցիալական իրավիճակով, գործելակերպով, գործունեության ընթացքով ու վախճանով, բայց նրանց ելակետը գրեթե բոլոր դեպքերում նույնն էր. արևմտահայությունը գտնվում է թուրքական լծի տակ, նրա իրական վիճակը ծանր է ու անտանելի, ապագան սպառնալի է ու չերաշխավորված: Նույնքան տարբեր են նաև նրանց գործունեության արդյունքն ու հետևանքները, այն տեղն ու դերը, որ նրանք վաստակել են հայ ժողովրդի տարեգրության ու հասարակական մտքի պատմության մեջ:

Մտ. Ոսկանյանը այդ գործիչներից մեկն էր, և նրա գործունեության ամբողջ կենտրոնակետը եղել է հայ ժողովուրդը, նրա առաջընթացն ու զոյատևումը: Եվրոպան ու ժամանակի մտքի

կենտրոնը հանդիսացող, այլ արտահայտությամբ ասած, «իմացության մայրաքաղաք»¹ Փարիզն այն հնոցներն էին, որտեղ նա պետք է եփվեր ու թրծվեր և երկարատև մաքառումներով հասներ մի բարձունքի, որտեղից իր ձայնը լսելի դառնա իր ազգին: Հազվագյուտ է նրա ճակատագիրը, բայց առավել հազվագյուտ դեմք է նա՝ ինքը: Սակայն երկուսն էլ պայմանավորված են մույն իրականությամբ ու կյանքի ուղեգծով, որ վիճակված էին նրան. Թուրքիա ու Ֆրանսիա, Չմյուռնիա ու Փարիզ՝ հայկական միջավայրով ու հայոց հոգս ու ցավով, առօրյայով ու ճակատագրով:

Ոսկանյանը, ինչպես և հայրենիքից ուսումնառության համար Եվրոպա մեկնած երիտասարդները, 1846թ. Ֆրանսիա էր եկել կրթություն ստանալու և կրկին իր ժողովրդի ծոցը վերադառնալու: Սակայն նա ստիպված եղավ Ֆրանսիայում մնալ ու այնտեղ գործել շուրջ քսան տարի: Ընթռնելու համար այն վերելքը ու հասունացումն իրենց ելևէջներով ու տարաբևեռ լիցքավորումներով, որ ապրեց և վերապրեց Ոսկանյանը, հարկ է ծանոթանալ ոչ միայն փարիզյան միջավայրին, այլ նաև ֆրանսահայ մթնոլորտին:

Ֆրանսիան Ոսկանյանի համար անձանոթ ու հեռավոր երկիր չէր. Չմյուռնիան դարավոր կապերով էր կապված ծովային ու առևտրաշահ խոշոր երկրի հետ: Այնտեղ ամեն օր խարխալս էին ձգում ֆրանսիական եռագույն դրոշ սլարգած ամեն կարգի նավեր, որ ուղիղ գծով նավարկում էին Մարսել-Չմյուռնիա: Բազմալեզու քաղաքում ֆրանկի հետ միասին հնուց ի վեր տիրապետողը ֆրանսերենն էր: Առևտրական, ֆինանսական ու մշակութային Ֆրանսիան ուղղակի և անմիջական ազդեցություն ուներ միջազգային կապերի հանգուցակետ դարձած քաղաքի վրա, ու այդ ազդեցությունը, XIXդ. 30–40-ական թվականներին մեծ լինելով հանդերձ, ավելի ուժեղացավ հետագա տասնամյակներին: Չմյուռնիայի մամուլը երևան է եկել ֆրանսերեն ու երկար ժամանակ՝ 1824 – 1840թթ., միայն ֆրանսալեզու թերթերն

¹ Տե՛ս «Հայրենիք», 23 մարտի 1894, որտեղ արտասույված է Չմյուռնիայում լույս տեսնող «Իզմիրի փոստատար» հունարեն թերթի հոդվածը Ստ. Ոսկանյանի մասին:

էին ընթերցվում գաղթօջախում (թուրքերեն պարբերական Չմյուռնիայում սկսել է հրատարակվել 1881-ից):

Ֆրանսիական ներգործությունը Չմյուռնիայում այնքան մեծ էր, որ քաղաքի երկու խոշոր հատվածներից մեկը և զլխավոր փողոցը կոչվում էին ոչ այլ կերպ, քան «Ֆրանկ», իսկ ծովափը ստացել էր «Մարինա» ֆրանսերեն անվանումը: Դեռ ֆրանսիական միսիոներների՝ Չմյուռնիայում հաստատվելու ժամանակներից, ֆրանսիական գաղթօջախի սովարանալու հետ միատեղ, ֆրանսիական մշակույթը սկսեց մուսաբ գործել զմյուռնացու կենցաղի մեջ, պարբերականներ հրատարակելուց բացի, հիմնվեցին դպրոցներ:

Այդ ամենը պատրաստի գետին էին, որպեսզի Ֆրանսիայում տեղի ունեցած բոլոր իրադարձություններն անմիջական արձագանք գտնեին Չմյուռնիայում: Դրանց ավելանում էր և այն, որ քաղաքական շրջադարձերի հետևանքով շատ տարագիրներ ապաստան էին գտնում մաս Չմյուռնիայի ֆրանսիական գաղթօջախում և շուտով էլ նետվում գործունեության ասպարեզ՝ հանդիպելով լուրջ դժվարությունների, նույնիսկ ենթարկվելով հալածանքի թե ֆրանսիացի և թե՛ թուրք գործիչների կողմից: «Իզմիրցի» թերթի հրատարակիչ Շարլ Մրիկոն առաջին տարում՝ 1824-ին, ստիպված էր դադարեցնել թերթի հրատարակությունը, որովհետև ֆրանսիական դեսպանին թուրքերը պահանջ էին ներկայացրել՝ նկատի ունենալով, որ թերթը հանդես է գալիս հոգուտ հույների՝: Քաղաքական տարագրի որդի Ալ.Բլաքը, որ 1827-ից Չմյուռնիայում սկսեց թերթ հրատարակել և այնպիսի եռանդով թուրքական կողմնորոշում ցուցաբերեց, որ ըստ էության թուրքացավ, ստացավ Բլաք-բեյ անունը և, հակառակ ֆրանսիական դեսպանի բոլոր ճիգերին՝ հաշվեհարդար տեսնել նրա հետ, հրավիրվեց Կ.Պոլիս, սուլթան Մահմադ II-ի աջակցությամբ 1931-ին հիմնեց առաջին թուրքական պաշտոնաթերթը ֆրանսերեն լեզվով՝ «Ազդարար օսմանյան»: Նա նույնիսկ ստացավ «թուրքական ժուռնալիստիկայի հայր» հորջորջումը²:

Երկրից քաղաքական նկատառումներով տարագրվել էր

¹ А. Желтяков, ևշվ. աշխ., էջ 57:

² Տե՛ս Ю.Петросян, А. Юсупов, ևշվ. աշխ., էջ 33-34:

նակ Ստ. Ոսկանյանի ֆրանսերենի դասատուն, «աքսորված էր Ֆրանսայեն», ինչպես նկատում է նրա աշակերտը: Նա, անշուշտ, միայն դաժանության հասնող խստություն չէր ժառանգել իր հայրենիքում: Նա աշակերտներից չէր թաքցնում իր հայացքները և, դատելով Ոսկանյանի ակնարկից, հակաբուժարարության տրամադրություններով էր համակված. «Անշուշտ իր խստությունը և անամոք բարքը, – գրում է Ոսկանյանը, – առիթ եղած են, որ Նաբոլեոն Ա ծուռ կերպով կդադվեր և համակրություն չէր ընդուներ թարմ միտքերու քով»¹:

Բայց Ոսկանյանի մտավոր աշխարհում Ֆրանսիան նախ և առաջ մեծ հեղափոխության հայրենիքն էր, լուսավոր գաղափարների օրրանը, այն երկիրը, որտեղ ավելի քան կես դար առաջ հռչակվել էր «մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիան, և թվում էր հաստատվել էին ավատատիրական-միապետական կարգեր: Օգոստոսի 26-ին հռչակած դեկլարացիայով Ֆրանսիան իր պետական դրոշի վրա դրոշմել էր՝ «Ազատություն, հավասարություն, եղբայրություն: Ֆրանսիացին տապալեց սևռեյլի Բաուտիլն ու աշխարհը մի պահ ցնցվեց, քարացավ: Ֆրանսիան կարծես հնչեցրեց ազատության պայքարի շչակը, որ լսելի եղավ նույնիսկ հեռավոր ծագերում: Ազատաբարձ մարդը ցնծում էր, գոտեպնդվում, ոտքի ելնում, թևածում էր «Մարսելիեզը»:

Ինչու՞ն է Հայաստանում ու հայկական գաղթօջախներում, իսկ Չմյուռնիայում առավել ևս, անտեղյակ չէին ֆրանսիական մեծ հեղափոխությունից: Չմյուռնահայ վաճառականները գրեթե ամենօրյա կապ ունեին Մարսելի հետ ու անտարբեր չէին: Չմյուռնիայի հոգևոր առաջնորդ ու Էջմիածնի նվիրակ վարդապետ Գեղամյանցը Ղուկաս Կարնեցի կաթողիկոսին, առաջինների թվում, 1792թ. օգոստոսին հաղորդելով «գաղղիացոց անկարգություններն ու ապօրինությունների մեջ գլորվելը», միաժամանակ նաև իր վերաբերմունքն էր դրսևորում: Հեղափոխության «սարսափելի անցքերի» մասին լուրերը հասնում էին Հնդկաստանի հայ գաղթօջախները: Շատ չանցած հայ անդրաճիկ պարբերականի՝ «Ազգարարի» էջերում հրատարակվում են

¹ «Արևմուտք», 1859, էջ 36:

տեղի ունեցած իրադարձությունները վերարտադրող Հովսեփ Արղությանի նամակը և բազմաթիվ լուրեր, մեկնաբանություններ: Հանդեսի հրատարակախոսների միջև նույնիսկ բանավեճ է սկսվում հեղափոխությունից ծագող հարցերի շուրջ, ինչպես և դրանք քննվում են առանձին հրատարակություններում¹:

Ֆրանսիական մեծ հեղափոխության թարմ հետքերի հայ իրականության մեջ գտած արձագանքներին հետևեց նրա պատմության արժարժույժը պատմասիրական ու բանասիրական մեծ ու փոքր հրատարակություններում, դասագրքերում, մամուլում, ուղեգրական երկերում: Ոսկանյանն անշուշտ հնարավորություն ուներ գաղափար կազմելու ոչ միայն ֆրանսիական մեծ հեղափոխության, այլև մանավանդ 1830-ականի հզոր հեղափոխական շարժումների ու մարտերի մասին և ճշտելու, լրացնելու այն տպավորությունը, որ ստացել էր անմիջապես ֆրանսիական աղբյուրներից՝ ֆրանսերենի դասատուից ու ֆրանսերեն հրատարակություններից: Նրա մախնական պատկերացումները, սակայն, շուտով պետք է ստուգվեին տեղում, և նա հետագայում շատ առիթներ պիտի ունենա արտահայտվելու «մեծ թվականի» մասին՝ ինքն էլ մի պահ դառնալով հեղափոխական Ֆրանսիայի մարտիկը և աստիճանաբար վերապրելով ու ներառելով Փարիզի առօրյան ու իրօրյա պատմությունը:

Մինչ այդ նրա մտապատկերում Նապոլեոն Բոնապարտն էր, որի աճյունը 1840-ին փոխադրվեց Փարիզ, 1830 – 1840-ական թվականներին իր ճակատագրի համար առատորեն արյուն հեղող ֆրանսիացին, իրար հետևից թագավորներ տապալող, ոմանց նույնիսկ մահվան դատապարտող այն ժողովուրդը, որ մարմնավորում էր նաև Արևմուտք հասկացողությունն իր ամեն ինչով, հատկապես մեծ մշակույթով: Գործում և բացահայտելույթներ էին ունենում կարբոնարները, բուռն իրադարձություններ էին տեղի ունենում համալսարանի շուրջն ու լսարաններում: Ֆրանսիական զենքը խաչվում էր թուրքական յաթաղանի հետ ու ծնկի բերում Եվրոպան նվաճելու մտքից դեռ չհրաժարված

¹ Հանգամանորեն տես *Թ: Ավդալբեկյան*, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 226-242, 243-245: Տես նաև՝ «Եղանակ Բյուզանդյան», 1820, էջ 90 և հետո:

սուրբաններին (Նավարին, Ալժիր): Պարբերաբար մարտնչում էր Փարիզի քաղցած բոկոտն պրոլետարիատը՝ փողոցներում ու բարիկադների վրա՝ ինքնակալների դեմ (1827, 1830 – 1832, 1834, 1839թթ.):

Հաղթանակներին արագորեն հետևում էին ծանր պարտությունները, արյունահեղ մարտնչումները տեղի էին տալիս հարկադրական հանդարտությանը, դեմոկրատիան թևածում էր, բայց և շատ չանցած ջախջախվում: Մահվան տաք վճիռը դյուցազնաբար ընդունող հայրենասերներին՝ ժողովրդի իսկական բարեկամներին ու զավակներին, փոխարինում էին դավաճանները, բարձրանում նախարարական աթոռներին, բայց տարին չբոլորած հատուցում էին սեփական կյանքով: Հրաբուխն ամենուր էր ժայթքում. մայրաքաղաքում ու դեպարտամենտներում, արդյունաբերական կենտրոններում ու գյուղերում գործում էին հակառակորդ կուսակցությունները, գաղտնի ու լեզալ կազմակերպությունները:

Փոքորկող երկիրը ոտք էր դնում աչքերը նոր-նոր բացող, միտքը գերազանցապես խոսքի մի երիտասարդ՝ աշխարհին նոր ընթացք տալու մաքառումներով պրկված ժողովրդի հետ իր ճակատագիրը մի պահ կապելու դեռևս չզիտակցված, բայց անխուսափելի հեռանկարով:

Ֆրանսիայի մասին Ոսկանյանի պայծառ պատկերացումները, պիտի ենթադրել, արագորեն մթագնվել են, երկիրը ճգնաժամ էր ապրում, ֆրանսիացին պրկված էր, մտահոգ ու ընկճված, ինչպես պատկերված է ժամանակի մի դիմանկարում՝ Ժանը ձախ աչքով արտասվում, իսկ աջով ժայտում էր: 1846թ. առաջին տարին, երբ Ֆրանսիա ոտք էր դրել Ոսկանյանը, անբերրի էր. հաց ու կարտոֆիլ չկար, խիստ ցածր էր այգիների բերքատվությունը: Երկիրը ֆինանսական առավելագույն ծանր վիճակում էր:

Հենց դրա հետևանքով ֆրանսիական կաթսայում եռում էր քաղաքական կյանքը՝ հակադիր կուսակցություններով ու տարբեր դասակարգերով: Խոշոր կապիտալն իր բռան մեջ էր հավաքում ոչ միայն թագավորական գերդաստաններն ու պալատը, այլև երկրի ներքին կյանքը՝ ավելի ու ավելի հեռացնելով ծայրաբևեռները և առավելագույնի հասցնելով հակադրությունը

խրճիթների ու պալատների միջև: Աշխատավոր ֆրանսիացու մկանուտ ձեռքերը գործ էին որոնում ու չէին գտնում: Գները շաբթե շաբաթ բարձրանում էին, իսկ աշխատավարձը շարունակում էր ընկնել. 1847-ին մեկ երրորդով կրճատվեց բնակչության բնական աճը:

1840-ական թվականներին կրթություն ստանալու համար Ֆրանսիա հասած երիտասարդությունը, նրանց թվում նաև Ստ. Ոսկանյանը, կամա թե ականա պետք է առնչվեր նույն պայմանականությամբ սովորող, գրքի ու մամուլի հետ կապված Ֆրանսիայի մտավորականության, ինչպես և բանվորության հետ շփվող երիտասարդությանը:

Ոսկանյանի ֆրանսիացի ծանոթների ու մտերիմների շրջանակն առհասարակ բավականաչափ լայն է ու սլառկառելի: Ինչպես իրավամբ նշել է Չմյուռնիայում հրատարակվող ֆրանսերեն մի թերթ, նա Ֆրանսիայում «Բազմաթիվ հանրածանոթ գրական անձնավորությանց մտերիմ ընկեր եղած է»¹: Մակայն նա այդ մասին լոկ կցկտուր հիշատակություններ է արել, այն էլ միայն որևէ առիթով: Դրանցից հայտնի է դառնում, թե ֆրանսիական որ գործիչներին է նա անձնապես ծանոթ եղել կամ ում հետ է շփումներ ունեցել, բայց չի բացահայտվում այդ կապերի բնույթը, մեծ մասամբ անհայտ է մնում նույնիսկ դրանց ժամանակաշրջանն ու տևողությունը: Անկախ դրանից ծանոթությունը ֆրանսիական այս կամ այն գործչի հետ, զանազան շփումները ֆրանսիական հասարակական միջավայրում չէին կարող ազդեցություն չունենալ Ոսկանյանի վրա, հետք չթողնել նրա խառնվածքի ու մտածողության հանգույցներում: Ուստի և թվում է հարկ է ուրվագծել նրա ֆրանսիական միջավայրի մտավոր շրջանակը՝ փոքր-ինչ շրջանցելով ժամանակագրական կարգը:

Սենտ-Պարայի տնօրենից հետո Ստ. Ոսկանյանի հաջորդ ֆրանսիացի նշանավոր ծանոթը եղել է բանաստեղծ Բերանժեն: Դա պատահական հանդիպում չէր. ընթերցանության սիրահար Ոսկանյանն, անշուշտ, ծանոթ էր Բերանժեի երգերին, կյանքին, գիտեր կրած հալածանքների մասին: Իր երկրի հպարտությունը

¹ Տե՛ս «Հայրենիք», 23 մարտի 1894, որտեղ արտատպված է «Իզմիրի փոստատար» թերթում հրատարակված «Ստեփան Ոսկանյան» հոդվածը

դարձած, քաղաքացիական անսպառ եռանդով առլեցուն բանաստեղծը, Ֆրանսիայի դեմոկրատական մշակույթի խոշոր դեմքերից մեկը Ռսկանյանին հարազատ էր նախ իր աղքատ ծագումով ու դժվարին կյանքով, ճակատագրի կամ ցուցաբերած տոկունությամբ, անհաշտությամբ, քաղաքացիական խիզախությամբ ու անկաշառությամբ: 1840-ական թվականներին Բերանժեի պեղծիան հասարակական լայն ճանաչում և հսկայական ուժ էր ստացել: Նա աշխատավորության ցավերի երգիչն էր, տառապող ու մարտնչող ժողովրդի մաքառումների արձագանքը և այդ ժողովրդին դեռ 20-ական թվականներից սկսած նախապատրաստում էր 1848-ի համար: Խորապես ազգային ու մեծ հայրենասեր բանաստեղծը ջերմությամբ է գովերգել հույների հերոսական պայքարը սուլթանական Թուրքիայի դեմ («Անակրեոնի ստվերը»), փառաբանել է հեղափոխական Իսպանիան: Նա հատկապես անողոր ատելությամբ էր սողորված հոգևորականության դեմ, որ փորձում էր ձեռքը վերցնել լուսավորության գործը:

Բերանժեին նվիրված հողվածում Ռսկանյանը ճշգրտությամբ բնորոշում է Բերանժեին և հատկապես նշում, որ նա առաջինն է «բազմության սիրտը արժարժել ազատության սիրով», ապա հաճախ պիտի քաղի բանաստեղծի դիպուկ տողերը: 1846 – 1847թթ. նա ավելի էր հրապուրված հակակղերական և ճիզվիտների դեմ ուղղված մտրակող երգերի հեղինակով: Վկայվում է, որ Ռսկանյանը անձնապես ծանոթացել է Բերանժեի հետ, նրա առջև արտասանել բանաստեղծի մի երգի հայերեն թարգմանությունը և իբրև խրախուսանք արժանացել նրա երգերի գրքին¹: Ծերենցը, որ հավանաբար Ֆրանսիայում ուսումնառության տարիներին՝ 1848 – 1853թթ. է իմացել այդ մասին, կոնկրետ հիշատակում է, որ Ռսկանյանը թարգմանել էր Բերանժեի «Սև մարդիկ ուսկից ելաք» երգը²: Շուրջ երեսուն տարի անցնելուց

¹ Այս փաստն առաջին անգամ հաղորդում էր Հր. Ասատուրը՝ եղբուրյունը կապելով Ալ. Լապրուստի հետ և թվագրելով 1850թ. (Տե՛ս «Լույս», 1908, N 2, էջ 59, Հր. Ասատուր, Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 106): Նա որևէ աղբյուր չի նշում: Սեզ թվում է, որ դա տեղի է ունեցել ավելի վաղ:

² Տե՛ս «Արևելյան մամուլ», 1878, N 7, էջ 113: Ի դեպ, Բերանժեի այդ նույն տողը բերված է նաև «Սեդուի» N 203-ում (11 հունիսի 1863, էջ 166), բայց մի այլ թարգմանությամբ՝ «Արք գիշերադեմք, ուստի ելաներ»:

հետո գրելով այդ մասին, Ծերենցը, սակայն, հիշատակում է ոչ թե Բերանժեի երգի վերնագիրը, այլ նրա սկզբնատողը՝ նկատի ունենալով նաև այն, որ այդ տողը՝ «Արք գիշերադեմք ուստի ելանեք («Օմնը Նոառ տու սողթեվու»», տարիներ անց՝ 1853-ին, Ոսկանյանն օգտագործել է իբրև իր մի պամֆլետի («Ներքին համոզումն») բնաբանը: Իրականում խոսքը Բերանժեի հանրահայտ երգի՝ «Բարեպաշտ հայրեր»-ի (գրված 1819թ.) և շատ արագ մեծ տարածում գտած այն սահեղձագործության մասին է, որ երգվում էր նույնիսկ հեղափոխական վերելքի տարիներին, բարիկադների վրա:

Կրոնական դասի ու կղերական վերնախավի դեմ ուղղված իր ձաղկող բանաստեղծություններով հայտնի երգիչը, որ հատկապես մերկացնում էր պապական-կաթոլիկական եկեղեցու բոլոր դասի գործիչներին որ ենթարկվում էին Հռոմի բանադրանքին, ի սկզբանե հարազատ էր Ոսկանյանին, և նրա այդ բանաստեղծության թարգմանությունը լիովին տրամաբանական է: Ըստ երևույթին դրա արդյունքն է նաև Բերանժեի նվիրված այն հոդվածը, որ 1846-ի օգոստոսի 9-ին (N 265) հրատարակվել է «Արշալույս արարատյանում»:

Կարելի է ենթադրել, որ Ոսկանյանը Բերանժեի բանաստեղծության թարգմանության առիթով եղել է բանաստեղծի մոտ, մտերիմ գրույց է ունեցել նրա հետ, որից հետո էլ, հավանաբար կատարելով Ղ. Պալղազարյանի ընդհանուր խնդրանքը՝ թերթում ներկայացնել Ֆրանսիայի անվանի մարդկանց, հողված է գրել «Արշալույս արարատյանին»: Դա Բերանժեի հետ Ոսկանյանի, այսպես ասած, նախնական ծանոթության արդյունքն է, նրա անցած ուղու հպանցիկ շարադրանքը: Ավելի ուշ՝ 1859-ի հունվարին, «Արևմուտքում» նա հանդես եկավ Բերանժեի նվիրված հոդվածով, որ գրված է խոր իմացությամբ, բանաստեղծի ստեղծագործության ու գործունեության պատշաճ ու անաչառ գնահատությամբ: Մի փոքր ուշ, նույն թվականի փետրվարին, Ոսկանյանն առիթ ունեցավ անդրադառնալու իր վերոհիշյալ հոդվածին, ծածկագրվելով իր ընթերցողներով («Գանգատողներեն մեկը») հրապարակ հանեց Բերանժեի վերը հիշատակված երգի ընդօրինակությամբ՝ «նմանողություն մը *Լե Բեվեհրան* ըսված երգին», գրած իր սատիրական ստեղծագործությունը՝ «Գար-

րիկ» խորագրով: Այդ սատիրական բանաստեղծությունը, որ ուղղված էր Գ.Այվազովսկու դեմ, արագ տարածում և հասարակական արձագանք գտավ, ինչպես Բերանժեի երգը: Մենք դեռ առիթ կունենանք վերադառնալու այդ բանաստեղծությանը, բայց այստեղ հարկ է նկատել, որ Ռսկանյանի առաջին շփումը Բերանժեի ու նրա ստեղծագործության հետ, ինչպես ակնառու է հիշյալ փաստից և մի շարք այլ կովաններից, խոր հետք է թողել նրա երիտասարդ հոգում ու որոնող մտքի ծալքերում:

Առավել հավաստի են տեղեկություններն ուսանողական այն միջավայրի մասին, որտեղ անցել են Ռսկանյանի փարիզյան կյանքի առաջին տարիները:

Շատ բան չէ մեզ հայտնի այն մասին, թե գիտական ու տեսական ինչ հարցեր էին զբաղեցնում Ռսկանյանին փարիզյան կյանքի առաջին տասնամյակում: Գիտենք, որ նա արտակարգ ընթերցասեր էր և ֆրանսերենի իմացությունը, ֆրանսիական առատ գրականությունը նրա առջև լայն հուն էր բացում: Ինքնակրթությամբ զբաղվելը և ընթերցասիրությունը նրան մեծ հնարավորություն էին ընձեռում գիտապաշար ձեռք բերել, ուսումնասիրել տարբեր գիտությունները: Իր խոսքերով ասած, նա կյանք էր մաշում ընթերցանության վրա ու գրքերի աշխարհում: Հավանաբար կոնկրետ մի ուղեգիծ չունենալով կարդում էր ամեն ինչ, ծանոթանում ամեն ինչին: Որոշ ժամանակ նրան հետաքրքրում էր բժշկությունը և սովորում էր բժշկական ուսումնարանում կամ գուցե մի այլ հաստատությունում. «Ես ժամանակավ քիչ մը բուժական արհեստին հետևեր են մարդուն կազմը հասկնալու, քան թե մարմինը դարձանելու համար» («Արևմուտք», 1859, էջ 52)¹: Սորբոնի դասախոսություններին հաճախելը նրան անկաշկանդ հնարավորություն էր տալիս խորանալ հասարակական գիտությունների ասպարեզում: Մի այլ հաստատությունում՝ «Քոնսերվատորար դեզ Ար է Մեթրիկյում» (Արվեստների ու գիտությունների կոնսերվատորիա), ունկնդրելով հանրամատչելի դասախոսություններ, նա արդեն կարող էր

¹ Մի այլ անգամ նա ակնարկել է, որ սովորել է «Բժշկական վարժարանում» հունորով ասելով, թե «եթե պարապ ժամանակ գտնենք նորից այնտեղ կվերադառնանք» («Արևմուտք», 1859, էջ 31):

հաղորդակցվել ճշգրիտ (մաթեմատիկա, մեխանիկա, ֆիզիկա և այլն) գիտություններին ու արվեստագիտությանը: Քուլեժ դը Ֆրանսը հաճախելով՝ Ոսկանյանը հավանաբար ավելի շատ հրապուրված էր փիլիսոփայական գիտություններով, որոնց շուրջ ընթերցվող ազատ դասախոսությունները մեծ հետաքրքրությամբ էր ունկնդրում:

Աներկբա է, որ ուսում առնելու բուռն ցանկությամբ Փարիզ եկած երիտասարդը, կուպիտ ասած, ուզում էր ամեն ինչ սովորել ու բոլոր գիտություններում խորանալ, այլ խոսքով՝ համակողմանի ու հիմնավոր կրթություն ստանալ: Որքան էլ ցրիվ էին նրա հետաքրքրություններն ու խայտաբղետ նրա որոնումների շրջանակը, նա, ի վերջո, հասավ իր նպատակին, ստացավ գիտության ու գրականության ուսումնավարտի վկայագիր, ճանաչվեց իբրև իր ժամանակի առավել զարգացած դեմքերից մեկը: Դեռ 1859-ին, անձնապես ծանոթանալով Ոսկանյանի հետ, Մ. Նալբանդյանն իր հիշատակարանում գրել է. «Փարիզում գտնվում է քանքարավոր պ. Ոսկանյան ուսումնական ազգայինը»¹: «Ստեփան Ոսկան գիտնական մըն է բառին կատարյալ նշանակությամբը», – գրել է նրան մոտիկից ճանաչողներից մեկ ուրիշը², իսկ Ե. Տեմիրճիպաշյանը նկատել է, թե «այն թվականին գրով իր միտքն ավելի հստակորեն հայտնող մարդ չկար և կարծեմ գանկատուփի մը մեջ ալ այնքան միտք չկար այն թվականին»³, կանխելով Հր. Ասատուրի՝ քառորդ դար հետո տված ոչ պակաս պատկերավոր գնահատությունը, ըստ որի, Ստ. Ոսկանյանն ուներ «չքնաղ միտք»⁴: Իզուր չէր, որ Լեոն այնքան հիացած էր Ոսկանյանի մտքի փայլատակումներով և նրան համարում էր հայ զարգացած մտքերից մեկը⁵:

Բայց 1840-ականի երկրորդ կեսի Փարիզն ավելի շեշտված հետաքրքրություն էր ցուցաբերում դեպի սոցիալական ու քաղաքական ուսմունքները, դեպի փիլիսոփայությունը, և դրանք բնա-

¹ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, Երևան, 1945, հ. 1, էջ 338:

² «Մասիս», 1901, N 26, էջ 408:

³ Թեոֆիլ, Ամենուն տարեցույցը, Կ. Պոլիս, 1923, էջ 116:

⁴ Հր. Ասատուր, Դիմաստվերներ, էջ 117:

⁵ Լեո, Ստեփան Ոսկան (տես «Մորճ», 1901, N 11, 12):

կանաքար պետք է հրապուրեին նաև Ռսկանյանի միաբը, որ առավելապես ծարավ էր հասարակագիտության: Այլ է վկայում Ռսկանյանի հետևյալ վերհուշը, որ քաղում ենք հապավումներով.

«Մի կիրակի անցնում էի Պալե-Ռոյալի այգով (Փարիզ) ...Օուլեանի պատշգամբասրահում ես տեսա մի փոքրիկ հայտարարություն, որը հասարակությանը հրավիրում էր պոզիտիվիզմի և պոզիտիվիստական փիլիսոփայության հեղինակ Օգյուստ Կոնտի դասախոսությունները լսելու... Հետաքրքրությունն ինձ դրդեց տեսնել և լսել նրան... Ուստի և քարձրացա Պալե-Ռոյալի երկրորդ հարկը և մտա այն սրահը, որտեղ գտնվում էին փիլիսոփայական այդ նոր տաղանդի պարագլուխն ու կողմնակիցները: Ունկնդիրները ընդամենը մի տաս հոգի էին... Անմիջապես տեղ գրավեցի մի մտարանի վրա և անցա ապագա պոզիտիվիստների շարքերը»¹:

Ռսկանյանի հետաքրքրությունը պոզիտիվիզմով ու նրա հիմնադրի գաղափարներով ավելին էր, քան պատահական հրապուրանքը: 1840 – 1850-ականներին Ֆրանսիայում, և ոչ միայն Ֆրանսիայում, մեծ հետաքրքրություն էր դրսևորվում Կոնտի և նրա ուսմունքի՝ պոզիտիվիզմի նկատմամբ: Դեռևս նրանց արծարծած գաղափարներին խորապես չճանոթացած, առավել ևս չմարսած զանգվածներին թվում էր, թե տարածվող զանազան ուսմունքների շարքում երևան է եկել մի նորը, նույնիսկ այն, ինչ որոճվում էր ու ավելի անհրաժեշտ էր սովյալ ժամանակաշրջանում: Սեն-Սիմոնի նախկին քարտուղարը, փոխ առնելով ուսուցչի որոշ գաղափարները՝ հատկապես նրա գաղափարախոսության թույլ կողմերը, անօրինակ նվիրվածությամբ փորձում էր վերաիմաստավորել մարդկության պատմությունը, հիմնել համամարդկային նոր կրոն, հիմնավորել սոցիոլոգիայի (տեր-

1 E. Oscan (նշվ. աշխ., էջ 3: մեր ձեռքի տակ է սույն բրոշյուրի լուսանկարչական պատճենը և նրա քարգմանությունները, որ կատարել են Կ.Սեդրոյանը՝ ՀՍՍՀ Արխիվային գլխավոր վարչության հանձնարարությամբ և Ա.Կետոյանը՝ բանասեր Ս.Շտիկյանի խնդրանքով: Քաղվածքները կատարելիս օգտվում ենք վերջին քարգմանությունից՝ դրանք համադրելով առաջինի հետ: Բնագրի և քարգմանությունների էջակալման տարբերության պատճառով այսուհետև քաղվածքների էջերը ստիպված չենք նշի:

մինը մտցրել է հենց ինքը՝ Կոնտր) նշանակությունն ու սկզբունքները, իր աշխատություններով, նույնիսկ աշխատավորության համար ձրի դասախոսություններով ու տարբեր տերությունների պարագլուխներին հղած դիմումներով պրոպագանդել ու հիմնավորել պոզիտիվիզմը, ցույց տալ այն նոր ուղին, որով, ինչպես խորապես համոզված էր ինքը, ընթանում է և հարատևորեն պետք է ընթանա մարդկությունը՝ հենված պոզիտիվ գիտությունների և գիտական կառավարման վրա: «Այդ ժամանակ, – գրում է Ռսկանյանը, – դասախոսությունները նորություն էին Փարիզում, իսկ Օգյուստ Կոնտի անվան և նրա տեսության շուրջ մեծ աղմուկ էր բարձրացված»:

Կոնտին ունկնդրում էր 15 մարդ, Ռսկանյանը դարձավ 16-րդը: Նա չկարողացավ ոգևորել ունկնդիրներին. «Ուղեղի խորքում կենտրոնացած նրա միտքը դժվարությամբ էր անջատվում և թափանցում ուրիշի ուղեղ, երբեմն էլ բացարձակապես անհասկանալի էր դառնում: Չնայած դրան, Օգյուստ Կոնտը հետաքրքրեց ինձ իր սիստեմի տարօրինակությամբ և իր հավատորսությամբ»: Սրեք ժամ անընդմեջ, «34 աստիճան շոգի պայմաններում», Ռսկանյանն այդ օրն ունկնդրել է Կոնտին, որ խոսում էր աստվածապաշտությունը մարդկությանը պաշտելով փոխարինելու շուրջ: Նրա ընդհանուր նպատակն էր՝ «ստեղծել գիտական մի քահանայություն և իր վրա վերցնել մարդկության ավագ քահանայի դերը»:

Ռսկանյանը երկար ժամեր խօսիչ է Կոնտի դասախոսության շուրջ, նրա մասին խոսել «ժամանակի փիլիսոփայական շարժմանը քաջատեղյակ մի ուսանող-բժշկի հետ», որը Կոնտի տեսությունների դիպուկ բնորոշումներից հետո խորհուրդ է տվել կարդալ նրա աշխատությունները: Հաջորդ օրը նա Ազգային գրադարանի ընթերցասրահում էր. «Բացեցի առաջին հատորը և սկսեցի կարդալ մեծագույն ուշադրությամբ»: Մեծ դժվարությամբ կարդալով «անվերջանալի նախադասությունները», նա հասավ 51-րդ էջը, որի վրա մատիտով մակագրված էր՝ «Հասնելով այստեղ քունս տարավ և ես փակեցի հատորը», ապա ստորագրված՝ «Հենրի Թեն»:

Փարիզի նորմալ դպրոցի արդեն հայտնի շրջանավարտ, երիտասարդ Հիպոլիտ Թենը, «որն սայդ ժամանակ պատերազ-

մում էր Վիկտոր Կուզենի դեմ և մաս առ մաս ավերում էր Էկլե-տիզմի ճարտարապետների դժվարությամբ կանգնեցրած կա-ռույցը», իր այդ մակագրությամբ անմիջական ներգործություն ունեցավ Ռսկանյանի վրա. «Ինչ թաքցնեմ, նշումը սառեցրեց միտքս և ես ցանկություն չունեցա թերթելու էջը», – խոստովանում է նա:

Հիպոլիտ Թենի հետ այդ ժամանակ Ռսկանյանը հաճախ էր հանդիպում: Հերթական մի հանդիպման ժամանակ Թենը խոստացավ բավարարել Ռսկանյանի հետաքրքրասիրությունը և «Օգյուստ Կոնտի փիլիսոփայությունը մատուցել պակաս տաղտկալի ձևով»: Ու մի հանգստյան օր Հիպոլիտ Թենը, Էդմոն Աբուն, Ալբերը և «մի ուրիշը»¹, որի անունը Ռսկանյանը տարիներ անց մոռացել էր, հավաքվեցին Ռսկանյանի սենյակում: Վերջինները «և ուրիշներ», – ավելացնում է նա, – «հաճախ էին ինձ այդ պատվին արժանացնում»: Մինչև երեկո նրանք բանավիճում էին պոզիտիվիզմի շուրջ, մտերմիկ մթնոլորտում քննարկում Կոնտի փիլիսոփայությունը, որի պարզաբանման համար «շուրջ կես ժամ խոսեց» միայն Հ.Թենը և վերջում ասաց. «Ամեն ինչ չէ, որ վարդագույն է փիլիսոփայության մեջ, և որպեսզի կարողանաք գտնել ճշմարտության մի մասնիկ, հաճախ անհրաժեշտ է լինում ապարդյուն և չարքաշ պեղումներ կատարել»:

Պատահականորեն ներկա լինելով պոզիտիվիզմին նվիրված դասախոսությանը, Ռսկանյանը սկսել է հետաքրքրվել փիլիսոփայական այդ ուսմունքով: Հավանաբար նա կարդացել է այլ պոզիտիվիստների երկերը, շարունակել է հաճախել Պալե-Ռոյալում կարդացվող դասախոսություններին, որքան դա թույլ է տալիս իր գբադվածությունը, ընտելացել է դրանց, մինչև անգամ այցելել է Կոնտի հիմնած պոզիտիվիստական սրբավայրը: Նա հիանալիորեն թափանցել է պոզիտիվիզմի էության մեջ, ճանաչել է նրա հիմնահորը և շատ լավ է արտահայտվել թե՛ մեկի և թե՛ մյուսի մասին (դրան դեռ կանդրադառնանք): Բայց, եթե նա պատահաբար էր ներկա գտնվել Կոնտի դասախոսությանը, ապա լիովին տրամաբանական շրջադարձ է կատարել

¹ E. Oscan, Auguste Conte a Smyrne et l' athéisme, Smurce, 1878, p. 3-6:

պոզիտիվիզմից՝ հենց այն ժամանակ, երբ պառակտում է առաջացել Կոնտի հետևորդների միջև: Այդ մասին Ռսկանյանը գրում է. պոզիտիվիստական միջավայրում «միտքս ժամանակավորապես կանգ էր առել: Անսպասելի մի գժաություն խռովություն գցեց այնտեղ և նորածին ուսմունքը բաժանեց երկու թշնամի ճամբարի: Ես արագ կերպով հավաքվեցի ու մեկնեցի՝ մեջքս դարձնելով երկու ճամփորդներին էլ: Փիլիսոփայական ճշմարտությունը չի կարելի պղտոր ջրում որսալ»:

Հավանաբար ոչ շատ ժամանակ անց, գուցե ուսանողական նստարանին հրաժեշտ տալու պատճառով, Ռսկանյանի մտերմական կապերը Հ.Թենի, Էդ. Աբուի, Ալբերի և նրանց շրջապատի հետ փոխարինվել են այլ կապերով, թեև ոմանք, օրինակ, Էդ. Աբուն, նրա համար մնում էին «սիրելի բարեկամ»¹, իսկ պոզիտիվիզմի տեղը նրա «չարքաշ պեղումներում» հայտնվել են նոր ուսմունքներ: Դրանց մասին Ռսկանյանը կոնկրետ հիշատակություն չի թողել, գոնե այն չափով, ինչ չափով նա դա անելու առիթ է ունեցել Կոնտի ու պոզիտիվիզմի վերաբերյալ: Բայց ֆրանսերեն վերահիշյալ գրքույկում նա չափազանց հետաքրքրական խոստովանություն է թողել:

«Փիլիսոփայական նորությունները, – գրել է Ստ. Ռսկանյանը, – իմ մտքի համար միշտ էլ անդիմադրելի ձգողական ուժ են ունեցել: Նույնիկս այսօր ուրիշ կերպ չեմ կարող բացատրել այն համառությունը, որով աշխատում էի թափանցել այն հասարակական ուտոպիաների գաղտնիքների մեջ, որոնք հայտնվում էին այն ժամանակվա Ֆրանսիայի հորիզոնում: Այդպիսով անցաբոլոր սխառեմներով՝ առանց կանգ առնելու և ոչ մեկի վրա: Ես նման էի այն ճանապարհորդին, որ ներս է մտնում ամեն տեղ օքևան փնտրելու նպատակով, և միջավայրին ծանոթանալուց հետո, անմիջապես մեկնում է: Նա արագացնում է իր մեկնումը, եթե այդ միջավայրը աշխարհագրական կամ հասարակական որևէ հետաքրքրություն չի ներկայացնում կամ՝ եթե որևէ վտանգ է սպառնում նրան»:

Բնորոշ այս խոստովանությանը ծանոթ չլինելով հանդերձ,

¹ «Արևմուտք», 1859, էջ 88:

ակադեմիկոս Ա.Գ.Հովհաննիսյանը խոսելով այն մասին, որ «բարձր կրթութունը միջոց տվեց տաղանդավոր երիտասարդին՝ հաղորդակից դառնալու փիլիսոփայական և դրական գիտություններին», միաժամանակ նկատել է, որ «թափառիկ նրա միտքն անկարող էր մեկընդմիջտ կաշկանդվել փիլիսոփայական որևէ սիստեմի շղթաներով»¹: Այդուհանդերձ Ոսկանյանի հողվածներում հանդիպող մի շարք ակնարկներ և հենց վերոիշյալ նրա խոստովանությունն իրավունք են տալիս ենթադրել, որ նա հայտնի չափով ծանոթացել է նաև քննադատական-ուսույթական սոցիալիզմին ու Սեն-Սիմոնի, Ֆուրիեի ու Կաբեի երկերին: Այս մասին խոսք կլինի իր տեղում, իսկ այժմ մեր նպատակն է ծանոթանալ Ոսկանյանի ֆրանսիական միջավայրին, ավելի ճիշտ պարզել Ֆրանսիայի՝ նրա այն մտերիմների շրջանակը, որոնք կարող էին ներգործել նրա վերջնական գաղափարական հասունացման ու ձևավորման վրա:

Ներգործության այդ շրջագծում հսկայական դեր են կատարել այն դասախոսներն ու գիտնականները, որոնց նա ունկնդրել կամ կարդացել է թե՛ ուսումնառության և թե՛ ինքնակրթության ընթացքում, որը գրեթե երբեք չի դադարել ու չի սահմանափակվել: Շատ ականավորների է ունկնդրել Ոսկանյանը. Վիկտոր Բուզեն, Ժյուլ Սիմոն, Միշլե, Էդգար Բին, Տյուրուի, Պարոշ, Լըպա, որոնցից ոմանց, ինչպես ինքն է գրել, «պատիվ ունեցեր է... դասերուն հետևիլ» կամ «մոտ գտնվեր և նստեր ենք» («Արևմուտք», 1864, էջ 55, 1859, էջ 131), իսկ ոմանց էլ աշխատություններն է քննել հետազայում: Այս վերջին հանգամանքը հնարավորություն է տալիս բազմազիժ զուգահեռներ անցկացնել Ոսկանյանի կրած ազդեցությունների միջև, երբ որ անդրադառնանք նրա հայացքներին, իհարկե, չմոռանալով, որ

¹ Ա.Գ.Հովհաննիսյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 301: Ի դեպ, նշենք, որ Մ.Նալբանդյանը նույնպես, ինչպես դա տեղի ուներ Ոսկանյանի հետ, չի դարձել փիլիսոփայական որևէ համակարգի հետևորդ. «փիլիսոփայական համակարգությանց ժամանակները անցան, այժմ կրիսիկի ժամանակ է... Ինչ որ ինձ է վերաբերվում, ես ոչ մի համակարգություն չեմ ընդունում և ամեն համակարգությանց ստրկաբար հետևողը ծաղրից ավելի ուրիշ բան թող չսպասեն ինձանից» (ԵԼԺ, հ. 3, էջ 294 և 298):

նա ազդարարում էր՝ «մենք մարդու մը ով և ըլլա, հետևիլ չենք ուզեր» («Արևելք», էջ 8): Ուսումնասիրողին ելակետ տվող նման հանգամանքի բացակայությունը գրեթե անհնար է դարձնում պարզել պայմանական այն հնարավոր ներգործությունը, որ կարող էր կրած լինել Ոսկանյանը ֆրանսիացի մի շարք այլ գործիչներից, որոնց հետ նա անձնական ծանոթություն ուներ և որոնք քիչ թե շատ ճանաչված դեմքեր էին կամ հետագայում դարձան այդպիսին:

Քիչ չեն այդպիսի գործիչները, որոնց մասին լոկ այս կամ այն, երբեմն մահվան առիթով հիշատակել է հետագայում Ոսկանյանը: Սոսկ հիշատակություններ են դրանք՝ երբեմն չափազանց քնդհանուր բնութագրումով: Թվարկենք այդ գործիչներից մի քանիսին: Բժիշկ Քենար, որը հատուկ նամակ է հրատարակել Ոսկանյանի «Արևելքում», միաժամանակ ակնարկելով, թե Ոսկանյանը գիտե նաև անատոմիա, բժշկական ակադեմիայի անդամ Հիպոլիտ Բոքսեին («Արևելք», 1855, էջ 319 – 320), ինչպես և հավաստելով իր հավատարիմ բարեկամությունը: Դիվանագետ Էմրան, որ Ոսկանյանի վաղեմի բարեկամն էր և շարունակում էր մտերմական կապերը նրա հետ: «Գաղղիացի բարեկամ մը», որ «քանի մը տարի առաջ» ճանապարհորդել է Կովկասում և նամակներ է հղել Ոսկանյանին՝ պատմելով նաև Խ.Աբովյանի մասին, որի հետ հանդիպել էր ու գրուցել («Արևելք», 1855, էջ 311 – 320, «Արևմուտք», 1859, էջ 94, 43):

Չհիշատակելով Ոսկանյանի ֆրանսիական միջավայրի մի շարք այլ մտերիմների, ասենք, օրինակ, «Արևմուտքի» համարատու Տըլեդրի մասին, փոքր-ինչ մանրամասն, կանգ առնենք Ժորժ Պրուդոնի հետ Ոսկանյանի ունեցած ուշագրավ առնչությունների վրա՝ դարձյալ մի քանի տարով առաջ անցնելով ժամանակագրությունից: Քաղաքական բարդ իրադրության պայմաններում, որ յուրահատուկ էր մանավանդ դարակեսի Ֆրանսիային, Ստ. Ոսկանյանը, ինչպես կտեսնենք ստորև, ձերբակալվեց ու քանտ նետվեց. «Այդ ժամանակ Բ.Մ. Բրուտոն քանտն էր, ուր պատիվ ունեցանք զինքը «ճանաչելու», – գրում է Ոսկանյանը («Արևմուտք», 1865, էջ 87): Ինչպես կարելի է պարզել այլ տեղեկություններից, 1849-ի հունիսի վերջերին կամ հուլիս-

օգոստոսին տեղի ունեցած այդ ծանոթությունը, անկախ Պ.Պրուդոնի քաղաքական-փիլիսոփայական հետազա դիմագծից, պետք է դասել Ռսկանյանի նշանավոր ծանոթությունների շարքը:

Պիեռ Ժոզեֆ Պրուդոնը (1809 – 1865) իր ազատագրության համար հեղափոխական պայքարի եղած ֆրանսիական պրուլետարիատի վրա 1840-ական թվականներին լուրջ ազդեցություն ուներ. մանր գյուղացիական ընտանիքից էր, տպարանի աշխատող, ապա՝ ծառայող, հիմնավոր կրթություն էր ձեռք բերել ինքնագարգացմամբ, սկզբնապես հիմնականում հրապարակախոս էր, գրականագետ, ապա նետվել էր քաղաքական-տեսական պայքարի ասպարեզը: Նա իր առաջին աշխատություններից մեկում՝ «Տնտեսական հակասություն», երևան էր հանում ճնշվող ու կեղեքվող ժողովրդի վիճակի ըմբռնողություն և գրում էր. «Օ՛, աշխատավոր ժողովուրդ, նսեմացված, տանջահար, հալածվող ժողովուրդ, ժողովուրդ, որին զնդանում են բանտերում, որին դատում ու սպանում են, ժողովուրդ, որ ծանակում ու խարանում են: Կղաղարեն արդյոք հավատալ միստիցիզմի հռետորներին, որոնք փոխանակ արթնացնելու քո ձեռներեցությունը, քեզ անդադրում ասում են երկնքի ու պետության մասին..., որոնց բռուն ու հնչեղ ճառերը քեզ իրենց ցանցն են զցում»¹: 1840-ականի կեսերին նա դեռ հանդես էր բերում սեփականատիրության ու սեփականատերերի դեմ պայքարելու հետևողականություն, որով բավական մեծ ազդեցություն էր ձեռք բերել:

Պայքարելու ոգին և ցուցաբերած համարձակությունը իշխող խոշոր բուրժուազիայի դեմ մղվող մարտերում ապահովեցին Պրուդոնի որոշ ժողովրդայնությունը, որն իր դրսևորումը գտավ 1848թ. փետրվարյան հեղափոխությունից հետո՝ հունիսյան իրադարձությունների նախօրյակին նա ընտրվեց ազգային ժողովի կազմում: Ավելին, հունիսյան թեժ մարտերի օրերին բարիկադների վրա մարտնչող հեղափոխական զանգվածները նրան առաջադրեցին ժամանակավոր կառավարության կազմում: Այդ նպատակով կազմված ցուցակը, որտեղ նշված էր նաև Պրուդոնի անունը, որպես ժողովրդի կամքի

¹ :Революция 1848 года во Франции, М.-Л., 1934, стр. 515.

արտահայտություն, բարիկադից բարիկադ էր փոխանցվում՝ «դեմոկրատական և սոցիալական հանրապետություն» ստեղծելու պահանջով:

Հունիսյան իրադարձություններից հետո հրապարակախոսական-խմբագրական լայն գործունեություն ծավալելով, Պրուդոնը հրատարակել է նաև մի շարք աշխատություններ, որտեղ քարոզում էր դասակարգերի Բնուեսական համագործակցություն, ապա և, հարելով անարխիզմին, զարգացնում էր ամեն մի իշխանություն վերացնելու գաղափարը: Սկզբնական շրջանում քննադատելով Լուի Նապոլեոնի գործունեությունը, որի համար նա ենթարկվեց հալածանքի և 1849 – 1852թթ. անցկացրեց բանտարկության մեջ, այնուհետև արդարացրեց նրա հեղաշրջումը, բայց և շուտով սկսեց իր սուր գրչով մերկացնել բռնապարտիզմը: Հատկապես սուր ելույթներ նա ունեցավ կղերականության դեմ, առաջադրելով եկեղեցին բարեփոխելու պահանջ: Կյանքի վերջին տարիներին հարում էր քանվորությանը՝ մտահոգված նրա ազատագրությամբ, բայց անիրականանալի այն ճանապարհով, որ կազմում էր մանր բուրժուական մի կոսանքի՝ պրուդոնիզմի էությունը՝ դատապարտել խոշոր կապիտալիստական սեփականությունը, պաշտպանել շահագործման վրա չիմնված սեփականատիրությունը, մերժել կոմունիզմը, մարդու կատարելագործման, արդարության և բարոյական կատարելության հասնել սոցիալական վերափոխումների ուղիով:

Առաջին երկը, որ հռչակ բերեց Պրուդոնին, հրատարակվել էր 1840-ին: Նրանում հեղինակը «Ի՞նչ է սեփականությունը» հարցին պատասխանել է շատ որոշակի ու կտրուկ՝ գողություն է, բայց նա բուրժուական կարգերը թողնում էր անձեռնմխելի: Անկախ այդ ամենից Պրուդոնի այս գրքույկը մեծ արձագանք է ունեցել:

Իր գործունեության ընթացքում Պրուդոնը մի շարք առիթներով արհաբար հանդես էր գալիս պրոլետարիատի սոցիալական պահանջների օգտին: 1848-ին նա սահմանադիր ժողովում մեծամարտ էր մղում Թիերի դեմ և պաշտպանում, իր կարծիքով, աղքատության, սովի ու ռեակցիոներների մեքենայությունների գոհ դարձած հուլիսյան դեպքերի մասնակիցներին: Հիմնելով «Ժողովրդական բանկ», նա փորձում էր բարեփո-

խություններ կատարել և մանր բուրժուական իր ծրագրերի իրագործմամբ նպաստել արտադրական ասոցիացիաներին: Քաղաքական անկայունության հետևանքով Պրուդոնը 1852-ի սկզբներին հրատարակած նոր գրքով լիովին արդարացնում էր բռնապարտիզմը, նույնիսկ այն դիտում իբրև բանվոր դասակարգի պայքարի արդյունք և սոցիալիզմի իրագործման շրջափուլ: Շատ չանցած նա դիմաշրջվեց բռնապարտիզմից և քննադատության ենթարկեց բռնապարտական դիկտատուրան. 1858-ին հրատարակեց մի նոր գիրք, որի համար երկրորդ անգամ բանտ նետվեց ու արտրվեց Ֆրանսիայից:

Մասնավորապես պետք է նշել, որ Պրուդոնը, իր գործունեության առաջին տասնամյակում որոշակի ազդեցություն էր ձեռք բերել, ընթերցվող հեղինակ էր, մանավանդ, որ հանդես էր գալիս ժողովրդի անունից՝ նույնիսկ իր հրատարակած թերթի ճակատին դրոշմելով նրա անունը՝ «ժողովրդի ներկայացուցիչ», «ժողովուրդ», այնուհետև՝ «ժողովրդի ձայն»:

Արդ Պրուդոնի առաջին բանտարկության ժամանակ, հավանաբար 1849-ի հուլիս-օգոստոսին, բանտում ծանոթանալով նրան, Ոսկանյանը, ինքնին հասկանալի է, երկար ժամանակ եղել է նրա գրուցակիցը և անհավանական չէ ենթադրել, որ նրանք խոսել են քաղաքական-տեսական հարցերի, Ֆրանսիայում ծավալվող իրադարձությունների, հեղափոխական շարժումների, բռնապարտական հալածանքների շուրջ: Թերևս այդ ընթացքում Պրուդոնը, եթե մինչ այդ Ոսկանյանը ծանոթ չէր նրա հրատարակված աշխատություններին, խոսել է բուրժուական սեփականության, իբրև գողության վերացման իր գաղափարների մասին, վերհիշել է «Աղքատության փիլիսոփայությունը»:

Այժմ տեսնենք, թե ինչպես է ըմբռնել իրեն՝ Պրուդոնին Ստ. Ոսկանյանը: Միայն մի անգամ, նրա մահվան առիթով է Ոսկանյանը գրել Պրուդոնի մասին, բայց նրա խոսքը հիմնավոր է ու պարզորոշ՝ «Երևելի հեղինակի» մահախոսականը փոխարինելով նրա դիմաստվերի ուրվագծով. «Մեզի համար, – գրում է նա, – երեք նշանակալի պարբերություն (իմա՝ շրջափուլ – Մ.Հ.) կդիտենք Բ. Ժ. Բրուտոնին կյանքը քննելու ատեն»: Դրանցից առաջինն այն շրջափուլն էր, երբ նա նվիրված էր սոցիալական («ընկերական») գիտություններին: Այդ ժամանակ Պրուդոնը

«բանվորներու իրավունքը ձեռք կառնու և զանիկա կեղեքողներու դեմ անհաղթելի զենքեր կդարբնե» («Արևմուտք», 1865, էջ 87¹): Նա բանվորների «հզոր պաշտպան» էր, թեև տակավին գրեթե անհայտ մի անուն:

Հաջորդ շրջափուլը, ըստ Ոսկանյանի, սկսվել է 1848-ի փետրվարի 24-ից, երբ Փարիզում հաղթանակեց ժողովրդական ապստամբությունը և գահընկեց արվեց Լուի Ֆիլիպը: Վրա էր հասել գործելու պահը, և Պրուդոնը, ինչպես գրում է Ոսկանյանը, «Իր հուժկու գրիչով կնետվի հրապարակի վրա... լրագրության բեմը կընտրե և կսկսի իր անգյուտ տաղանդով նաև թշնամիներու մատ խածոցնել տալ»: Ոսկանյանի վրա առանձնահատուկ տպավորություն է թողել «Լե Մալթյուզիեն» հոդվածը, որն առաջին տպագրությամբ տարածվեց 120 հազար օրինակ տպաքանակով, իսկ հաջորդ օրը նորից տպագրվեց «Այդ» վառվռուն հոդվածից: Նա քաղում է հակառակորդների վրա «ռումբի պես» պայթած խոսքերը:

Երրորդ շրջանում Պրուդոնը, ինչպես նշում է Ոսկանյանը, արտոլված էր, սրտաբեկ, ընկճված և ապրուստի միջոցներ էր հոգում: Այդ շրջանում նրա ստեղծած գրքերը «քննել պատեհ ժամանակ չէ», նկատում է Ոսկանյանը, բայց և նշում է, որ Պրուդոնն «ուրիշ մեծ հատկություն մ' ալ հայտնեց» իր քննադատությամբ: Այդպես արտահայտելով իր վերապահ վերաբերմունքը, Ոսկանյանը Պրուդոնին համարում է «մտքի բանվոր» (արտահայտությունն Ալ. Դյումայինն է) և սոցիալական գիտությունը մշակողների ու «Ժողովրդին վերբերու դարձան մը գտնելու համար» իրենց անձը զոհածների շարքում, նրան առաջին տեղն է հատկացնում, որովհետև նա «մինչև իր ետին շունչը պաշտպանեց» «անմեռ ազատությունը»: «Ասով, – ընդգծում է Ոսկանյանը, – չենք ուզեր բնավ պնդել թե Բրուտոն չսխալվեցավ», ապա և ակնարկում նույնիսկ «ծանրապես սխալվելը»:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Ոսկանյանը գրեթե ճիշտ

¹ «Արևմուտքի» N 11-ը, ուր զետեղված Պրուդոնին նվիրված հոդվածը թվագրված է «հունվարի 15», իսկ Պրուդոնը մահացել է հունվարի 19-ին: Պիտի ենթադրել, որ հանդեսը երբեմն սահմանված ժամկետից ուշ էր լույս տեսնում:

էր հասկացել Պրուդոնին, բայց նրա ծանր սխալների մասին չէր խոսում, որովհետև, մեր կարծիքով, նա գրում էր Պրուդոնին բոլորովին անժանոք արևմտահայ ընթերցողի համար, որովհետև նրա հանդեպ քաղաքական խնդիրների շուրջ գրելու իրավունք չունէր և հրատարակվում էր Ֆրանսիայում: Միաժամանակ ակնառու է, որ նա հարգանքով է տոգորված Պրուդոն գործչի ու անձնավորության նկատմամբ: Նա, ինչպես պատշաճ էր, մահախոսականը ավարտում է Պրուդոնի անձնական հատկանիշները («առաքինի, պատվավոր և համեստ») մատնանշելով ու որպես եզրափակում, գրում է նրա հետևյալ բնորոշիչ խոսքերը. «Հիմա աշխարհ ես կելնեմ միշտ այն աղոթքով, զորն որ մանկութենես ի վեր չդադրեցա ընելէն. թո՛ղ այսուհետև անոթութենես մարդ չմեռնի և աշխատողին արվի իր աշխատանքը»:

Այսպիսով, նա Պրուդոնին նվիրված մահախոսականի միջոցով հայ ընթերցողին ասում էր այն, ինչ իր կարծիքով անհրաժեշտ էր: Նույնիսկ այդպիսով նա հարվածում էր իր իսկ հակառակորդներին՝ քաղելով Պրուդոնի խոսքերն ընդդէմ գրպարտիչների, որոնք չէին դադարում գործել Ոսկանյանի դեմ:

Հայ հասարակական մտքի մակընթացության ծալքերում Պրուդոնի հայացքների ներգործության հետքերի որոնումներն ականա հիշեցնում են Մ.Մամուրյանի հերոսի՝ Վուտի մտորումները. «Բանվորին քրտինքն հարուստին, դրամատերին արյունն է, որով կկենդանանա: Ես չեմ կարծեր, որ Բրուտոն և Լ. Պլան և ուրիշ ընկերահաշտական հեղինակներ, բոլորովին անիրավ են, երբ գործավորին ծանր վիճակին և կրած օրինական հարստահարության վրա կճառին»¹: Եվ դա միակ էջը չէ, ուր առկա է ֆրանսիացի մտածողի կամ ֆրանսիական այլ գաղափարախոսների արձագանքը «Անգոյիական մամականի» հերոսների մտորումներում:

Ի դեպ հայ իրականության մեջ մենք ունենք Պրուդոնով ոգևորվելու առավել ցցուն օրինակ՝ ի դեմս մանկավարժ-խմբագիր Գրիգոր Տեր-Մելիքսեղեկյանի, որը «նոր խոսք» ասելու

¹ Մ.Մամուրյան, Երկեր, Երևան, 1966, էջ 235:

և աշխատավորական խավերի շահերն ու մտորումներն արտահայտելու համար 1880 – 1882թթ., Թիֆլիսում, հայերեն ու ռուսերեն հրատարակում էր «Աշխատանք» շաբաթաթերթը: Դեռ խմբագիր լինելուց առաջ նա հրատարակել էր բնորոշ խորագրով իր գրքույկը՝ «Նվեր քյասիբ գյուղացիներին», որտեղ նա առաջ էր քաշում արմատական հարցը՝ աղքատ գյուղացի, «մինչև ե՞րբ դու պիտի լինես ճնշված անիրավ բուրժուից»: Այդ գործչի մասին իր հուշերում Արկունեղը (Գևորգ Ղարաջյան) վկայում է, որ նա կարողացել է Պրուդոնի «Սեփականությունը գողություն է» գիրքը, նրան համարում է իր ուսուցիչը, սիրահարված էր նրան և հաճախ բացականչում էր՝ «Անմահ Պրուդոն, անմահ Պրուդոն»¹: Նալբանդյանով տարված ուսուցիչը, որ համարձակորեն ու հրապարակավ երգում ու արտասանում էր «Ազատն աստվածը», հավանաբար կրել է Պրուդոնի գաղափարների ազդեցությունը, պրոպագանդել նրա հայացքները, նույնիսկ կրել նրա ազդեցությունը², ինչպես և ծանոթ էր Բյուխենների մատերիալիստական երկերին:

Ոսկանյանի կրած գաղափարական ներգործությունների առավել ազդեցիկ միջավայր էին քաղաքական և կազմակերպական այն ակումբները, որոնք Ֆրանսիայում ակտիվ

¹ Տես *Գ. Լևոնյան*, Հայոց պարբերական մամուլը, Երևան, 1934, էջ 28:

² Գրիգոր Տեր-Մելիքսեղեկյանը (1848 – 1882) ծնվել է Շուվավերում, սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, ասկայն սովորողների խոռուրդյանը մասնակցելու համար հեռացվել է ու չնայած դրան կարողացել է 1868-ին ավարտել այն. կրթությունը շարունակել է արքունական գիմնազիայում: Աշխատել է Ելիզավետպոլի գյուղական դպրոցներում, ապա իր ծննդավայրում: Հրատարակել է «Մի համառոտ հայացք 19-րդ դ. հայ հոգևորականության վրա» (1876), «մեր Կովկասի հիմնկվա լրագրերը» հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն (1878), «Նվեր քյասիբ գյուղացիներին» (1879) գրքույկները, «Աշխատանք – Труд» բերթը (1882 – 1883): Չբարվել է քարզմանությամբ, հանդես է եկել նաև ռուսական մամուլում: Տարվելով լիբերալ-նարոդնիկական հայացքներով, երբեմնի հացբուխը կրել է նաև Նալբանդյանի ազդեցությունը, քայց և կապեր է հաստատել ռուս մանրբուրժուական հեղափոխական գործիչ, անարխիզմի հայտնի տեսաբան, գիտնական Պ. Ալ. Կրոպոտկինի (1842 – 1921) հետ, որի մերձավորներից էր նաև Ալ. Աբաբեկյանը՝ անարխիստական ուղղության անլեզալ «Համայնք» հանդեսի խմբագիրը: Այս առումով հնարավոր է, որ իրար անծանոթ չէին Գ. Տեր-Մելիքսեղեկյանը և Ալ. Աբաբեկյանը, չի բացառվում փոխազդեցությունը նրանց միջև:

գործունեություն էին ծավալում և կուսակցությունների դեր կատարում դեռևս ֆրանսիական մեծ հեղափոխության տարիներից: Չանազան անուններով և իրենց կազմով ու քաղաքական նպատակներով շարունակ փոփոխվող այդ ակումբները էական դեր էին կատարում 1840-ական թվականներին նույնպես, մասնավորապես 1848թ. հեղափոխության ժամանակ՝ քաղաքական կայուն կուսակցությունների ու ընդհատակյա կազմակերպությունների առկայության և ակտիվ գործունեության պայմաններում: Դրանք որոշիչ դեր էին կատարում հեղափոխական խմբորումների ու աշխատավորության գլխակցության ձևավորման և նպատակամղման ասպարեզում: Խայտաբղետ էին այդ ակումբները, երբեմն անորոշ, երբեմն էլ դիամոզ՝ Բայց դեմոկրատական սկզբունքների վրա հենված ու հեղափոխական ծրագրեր մշակող ակումբները թե՛ իրենց ազդեցությամբ և թե՛ գործունեության ծավալով մեծ կշիռ ունեին:

Շատ բան մեզ հայտնի չէ այդպիսի ակումբներին Ռսկանյանի անդամակից լինելու կամ նրանց գործունեությանը մասնակցելու մասին: Ինքը՝ Ռսկանյանը, հասկանալի պատճառներով չի բացահայտել քաղաքական-հեղափոխական ակումբներում իր լինելը՝ մինչև որ այդ մասին չեն խոսել այդ «գաղտնիքին» լավատեղյակ հակառակորդները՝ նրան մեղադրելու և վարկաբեկելու բացահայտ նպատակով:

Անվերնագիր ու անստորագիր մի հոդվածով «Մասիս» թերթը 1859թ. հունիսի 23-ին անդրադարձել է Ստ. Ռսկանյանի հրատարակած հանդեսին և նրա խմբագրի անձնավորությանը: 1848-ից հետո Ստ. Ռսկանյանը, մասնավորապես ասված է այդ հոդվածում, «փողոցներու ատենաբան (օրաբեռո տը քառֆուռ) մը եղավ, գռեհիկ ընկերականաց ժողովականներու (քլյուպ) անդամ եղավ. փողոցներու մեջ ընկերականություն ու տերության դեմ ապստամբություն քարոզել սկսավ»¹:

«Մասիսի» հոդվածին և Ռսկանյանի՝ նրան տված պատասխանին ըստ էության անդրադառնալը հետաձգելով, տեսնենք թե նրանից բերված քաղվածքն իր որ մասով է զրպարտություն, ինչպես այն որակել է Ռսկանյանը, և որ մասով է

¹ «Մասիս», 25 հունիս 159, N 387:

իրական: Դրանում մեզ օգնում է հենց Ոսկանյանի պատասխանը: Նա հերքել է «փողոցների ատենաբան» և «տերություն դեմ ապստամբություն քարոզելու» մեղադրանքը նկատելով. «Այս քարոզիչի պատիվն ալ չունինք, և օտարականի մը դյուրին չէ Բարիզի ժողովուրդին ապստամբություն քարոզել, ասիկա լավ գիտե ապստամբություն ինչ ըսել է և մեր խոսքերու կարոտություն չունի կարծենք» («Արևմուտք», 1859, էջ 131): Իսկ քաղաքական ակումբների անդամ լինելու մասին ասվածը: Ահա ինչ է գրում Ոսկանյանն այդ առթիվ. «*Քլյուպի* անդամ ըլլալը նախատինք մը չէր այն ժամանակ Բարիզի մեջ, ուր ազատությունը ամեն սիյուտեր և միսքեր վեհ տեսիլներով կհուզեր և բռնության դեմ կբորբոքեր, բայց հայտնի կխոստովանինք, որ *քլյուպի* անդամ չեղանք երբեք: Սորպոնի *քլյուպը*, որու նախագահ էր պարոն Լըպա, ընտիր բազմությունն կբաղկանար, հոն կերթայինք և շատ անգամ դիպմամբ պարոն Սթուրմի, Լը Վերիերի, Ժյուլ Սիմոնի պես երևելի անձերու մտտ գտնվեր և նստեր ենք... Ուրիշ *քլյուպ* մը, ուր կերթայինք շատ հեզ նախագահ ուներ Գարոշ, այսօր տերության խորհուրդի նախագահ» («Արևմուտք», 1859, էջ 131):

Ավելին չի ասում Ոսկանյանը, բայց ասածն էլ քիչ չէ: Արձանագրելով, թե իր հաճախած ակումբներին անդամակցում էին այժմանավոր մարդիկ, նա միաժամանակ անսպառնալիքություն չի համարում իր մասնակցությունը նրանց գործունեությանը: Բայց առավել էականը նրա խոստովանությունն է քաղաքական-տեսական հարցերի արժարժման քուրա դարձած ակումբների աշխատանքին՝ հավանաբար Կարեի գլխավորած «Կենտրոնական եղբայրական ընկերություն» ակումբին, քանի որ Ոսկանյանը հանդես է բերում լավատեղյակություն նրա տեսության հարցերում: Այս կամ այն դեպքում այդ խոստովանությունը հիմք է տալիս կարծելու, որ Ոսկանյանն ընդհուպ մոտեցել է սոցիալական ուսմունքների քննարկումներին՝ հենց ֆրանսիական այն միջավայրում, որ ծանրակշիռ դեր պիտի կատարեր հեղափոխական շարժումների օրերին: Այդ միջավայրը Ոսկանյանի համար նախ և առաջ փարիզյան ուսանողությունն էր, մասնավորապես այն երիտասարդ սովորողները, որոնք Ֆրանսիայի XIX դարի պատմության ճանաչված հեղինակի

կարծիքով, «Գտնվում էին հեղափոխական կրքերի ուժեղ ազդեցության տակ»¹:

Մտերմական կապեր ունենալով Փարիզի ուսումնական հաստատությունների առանձին ուսանողների հետ, ինքն էլ լինելով ուսանող, Ոսկանյանը ոչ միայն հաղորդակից ու ակամատես էր, այլ նաև մասնակից ուսանողների շրջանում տեղի ունեցող խմորումներին, նրանց տեսական-գիտական որոնումներին, մինչև անգամ ուսանողական շարժումներին: «Քառասունական թվականների Պարիզը, – նկատել է Լեոն, – այն մեծ Պարիզը, որ սովորում էր Ստեփան Ոսկանը, տեսակ-տեսակ վարդապետությունների, քաղաքական կուսակցությունների մի եռուն կենտրոն էր: Ամենախիստ պահպանողական, հետադեմ հայացքներից սկսած մինչև ծայրահեղ ազատամտական, սոցիալիստական և կոմունական վարդապետությունները գոյության իրավունք էին ստացել իրար կողքի, գործում էին: Հաղթանակը, սակայն, ազատ, առաջավոր հասկացողություններին էր պատկանում... 1847-ին բոլոր քաղաքական ազատամիտ կուսակցությունները, բոլոր այն վարչապետությունները, որոնք ժողովրդի, աշխատող դասակարգերի դատն էին պաշտպանում, միացած էին մի մտքի մեջ, – այն, որ պետք է տապալել միապետությունը և հանրապետություն դնել նրա տեղը»²:

Մասնավորելով իր խոսքն ուսանողության մասին, պատմաբանն ամենայն իրավացիությամբ նկատում է. «Ուսանող երիտասարդությունը անտարբեր հանդիսատես չէր այս պատրաստությունների ժամանակ: Ընդհակառակն: Նա տոգորված էր հեղափոխական մտքերով, նրան դաստիարակում էին ազատ հոգով»: Հենվելով XIX դարի Ֆրանսիայի պատմությանը նվիրված հանգամանակից աշխատության հեղինակ Գրեգուարի վկայության վրա, Լեոն այնուհետև ընդգծում է, որ Կոլեժ դը-Ֆրանսում Միշլեի, Էդ. Բինի և Ադ. Միցկևիչի դասախոսությունները սեր էին ներարկում դեպի հեղափոխական սկզբունքները, տոգորում համակրանքով հարստահարվող

¹ Տե՛ս *А. Грегюер*, *История Франции в XIX в.*, т. II, стр. 418.

² «Մոլոճ», 1901, N 11, էջ 114:

ազգությունների և զրկված դասակարգերի նկատմամբ, ասելու-
թյուն բորբոքում ընդդեմ եկեղեցու և պետական հաստատու-
թյունների: Ինքնին ճշմարտացի այս հետևությունը կարելի է տա-
րածել նաև Փարիզում սովորող հայ ուսանողության, հատկապես
Ստ. Ոսկանյանի վրա: Ավելին, դատելով առանձին ակնարկ-
ներից, պարզվում է, որ ֆրանսիական հեղափոխականների հետ
հայ երիտասարդ ուսանողների ունեցած առնչությունները
գաղտնիք չէին պահպանողական-հետադեմ որոշ հայ գործիչ-
ների համար, և նրանք, հայտնի նպատակներով, այդ մասին
արտահայտվում էին ի լուր ամենքի: «Երևակի» խավարամուլ
խմբագիր Հովհ. Չամուռճյանը, որ ընդհանրապես լավատեղյակ
էր հայկական շրջաններում տեղի ունեցող գաղափարական
խմորումներին, տակավին 1856-ին գրում էր. «Ուսման համար
օտար երկիր գնացող բազմաթիվ երիտասարդների գացած
տեղերնին հեղափոխական գործակալներուն հետ հարաբերու-
թյուն կունենան»¹: Ամբողջությամբ վերցրած այս վկայությանը
դժվար է հավատալ, բայց եթե նկատի ունենանք, օրինակ,
Ոսկանյանին, ապա այն այնքան էլ հեռու չէ ճշմարտությունից:

Արդեն տեսանք, թե ինչպիսի հետաքրքրություն հանդես
բերեց Ոսկանյանը պոզիտիվիզմի նկատմամբ ու ինչպես շուտով
էլ դիմաշրջվեց անդառնալի կերպով: Անկասկած, նա առավել մեծ
հետաքրքրություն է ցուցաբերել դեպի ուսանողության շրջանում
միևնույն տարիներին մեծ տարածում գտած գաղափարները,
պարզապես դեպի այն հարցերը, որոնք հուզում էին ուսանող
երիտասարդությանը: Այս պարագայում լիովին տրամաբանա-
կան է ենթադրել, որ Ոսկանյանը կրել է փարիզյան առաջադեմ
ուսանողությանը համակած հեղափոխական տրամադրություն-
ների նպաստավոր ներգործությունը, որը և նրան տարել է
գործնական պայքարի ուղիով՝ նրան հասցնելով մինչև Փարիզի
բարիկադները և Ֆրանսիայի թագավորի պալատը զենքը ձեռքին
գրոհողների մարտական ավանգարդը:

Այս դեպքում նույնպես մեզ օգնում է ինքը՝ Ստ. Ոսկանյանը,
դարձյալ առիթով՝ պատասխանելով մեղադրող հակառակորդին,
որ նույն «Մասիսն» է, նրա հողվածագիրը: Ահա ինչ են գրել

¹ «Երևակ», 1856, N 131, էջ 401 – 403:

նրանք 1859-ի հունիսին. «...1848-ին հեղափոխություն կծագի և անոր հետ հավասարականության (քոմյունիսմ) ու ընկերակա-
նության (սոսիալիսմ) աշխարհակործան սկզբունքները երևան
կեկեն Գաղղիո մեջ: Ս. Ռսկան՝ այս վնասակար սկզբունքները
քարոզող լրագիրներ ու դիրքեր կարողալով կաշակերտի անոնց
ու ջերմեռանդ ջատագով մը կըլլա նույն սկզբունքներուն, որոնք
1848-ին ու 49-ին այնչափ արյունահեղություններու պատճառ
ըլլալով, հասարակապետությունը ատելի ըրին գաղղիացվաց
ազգին... 1849-ին հունիսի մեջելը Փարիզի ստորին կարգի
ժողովրդյան մեկ մասը ապստամբական շարժում մը ընելով,
Ս.Ռսկան դրոշակակիր հանդիսացավ անոնց: Խռովարարները
բանի մը հազար հոգի խառնածայն աղաղակներով Փարիզի
ծառազարդ մեծ փողոցեն անցած ժամանակնին, Շանկառնեիե
գորապետին ձիավորները ասոնց վրա եկան, խուժամուժ ամբոխը
ցիրուցան ըրին, խռովարարաց գլխավորներն ու խիստ
կատաղիները բռնեցին Ս. Ռսկանն ալ հետ և տարին բանտ:
Ս.Ռսկան վեց յոթն ամիս բանտը մնալեն ետև, պանդուխտ և
արևելքցի ըլլալուն համար հանցանքը ներվեցավ, և տեսչության
հսկողությանը ներքև մնալու պայմանով բանտեն արձակվեցավ:
Այս թշվառությունները չկրցան զինքը զգաստացնել: 1852-ին
նորեն ապստամբական դավակցություններու մեջ բռնվելով՝
Գաղղիայեն արտոբվեցավ, և ետքը ներողությունն ըլլալով նորեն
Փարիզ դարձավ տեսչության հսկողությանը ներքև մնալու
պայմանով, և կկարծենք, որ մինչև այսօր նույն հսկողության
ներքև է իբրև վտանգավոր ու խռովարար մարդ մը»¹:

Ինչ մասնակցություն է ունեցել Ռսկանյանը Ֆրանսիայի
1848թ. հեղափոխությանը և ի՞նչ պայմաններում է դա տեղի
ունեցել:

Արդեն նշվեց, որ 1840-ական թվականների Ֆրանսիան
ապրում էր իր պատմության ամենից բուռն ժամանակաշրջանը
1789թ. հետո, մոտալուտ էր հեղափոխության հրաբխային
ժայթքումը: Տեսանք նաև, որ Ռսկանյանը սոսկ ականատեսի
դերում չէր, ազատագրական գաղափարներով համակված

¹ «Մասիս», 25 հունիսի 1859, N 387:

լինելով՝ մերձավոր կապերի մեջ էր Փարիզի ուսանողության հետ՝ ինքն էլ լինելով ուսանող: Իսկ ուսանողությունը Ֆրանսիայի 1848թ. հեղափոխության մեջ, առավել ևս նրա սկզբնավորման շրջանում, վճռական դեր էր կատարում:

Հենց այն օրերին, երբ ուտքի էր ելել Փարիզը ու բարիկադների վրա մարտնչելով պատմության ասպարեզից դեն էր նետում Հուլիսյան միապետությունը, երբ թեժ պայքարի արյունոտ ալիքներում ծնվում էր երկրորդ հանրապետությունը, Ստ. Ոսկանյանը գտնվում էր բուռն իրադարձությունների կենտրոնակետում: Ինչ-որ չափով դա կարող էր տեղի ունենալ ինքնաբերաբար, ընդհանուր հոսանքի ակամա ազդեցությամբ: Տվյալ դեպքում էական չէ՝ Ոսկանյանն ինքը նետվեց հեղափոխական ալիքների մեջ, թե՞ այդ ալիքներն իրենց հորձանուտի մեջ առան երիտասարդ հայ ուսանողին: Առավել էականը նրա վարքագիծն է, գործելակերպն ու պահվածքը, այն դերը որ նրան էր վիճակված և նրա կատարումն իբրև ներքին պահանջ ու կամքի դրսևորում: Դատելով Ոսկանյանի ընդհանուր դիմագծից, նա կայուն խառնվածքի անձնավորություն էր, ըմբոստ հոգու տեր, գիտեր մեծ գաղափարի նվիրվել և խիզախաբար հանդես բերել իր դիմագիծը: Նա սովերի տակ պահվող, կյանքի թելադրանքին հարմարվող և երևույթների սուկ ընթացակից դարձող անձնավորություն չէր: «Նա, – դիտարկ անկատում է Լեոն, – այնպիսի բնավորություններից չէր, ոչոքնք ձևի համար, օրինավոր մարդու համբավից չզրկվելու համար են մասնակցում մի ընդհանուր շարժման: Հայ երիտասարդը, մի վառվռուն իդեալիստ, հոգով-սրտով էր կպել իր ժամանակի գաղափարներին և ծառայում էր նրանց մեծ ոգևորությամբ ու անկեղծությամբ: Դեռ ուսանող ժամանակ նա քաղաքական գործիչ էր՝:

Որոշ չափազանցությամբ հանդերձ, Լեոնի բնութագիրը հարագատ է բնորդին: Ինքը՝ Ստ. Ոսկանյանը, պատասխանելով «Մասիսին» և նրա հողավաճագրին, այսպես է գրել՝ միաժամանակ ի հայտ բերելով իր ներաշխարհը 1848-ին, երբ բուռն մղումով հայտնվել էր Փարիզի բարիկադների վրա՝ զենքը և ալ դրոշը ձեռքերում.

¹ «Մորճ», 1901, N 11, էջ 115:

«Կհավանինք միայն, որ փետրվարյան ազատության առաջին որոտումը մեր վրային արևելյան գերության մշուշը փարատեց, մեր սիրտը բորբոքեց հրաբուխ սաստկությամբ, անհուն աշխույժ մը տվավ մեզ և գրեթե ակամա ասպարեզի մեջ նետեց: Այո՛, Լուի Ֆիլիպին դեմ ապստամբողներու հետ էինք, այո՛ ըրինք ապստամբության համար ինչ որ ամեն մարդու պարտքն է ընել, և զեն ի ձեռին Թյուլըրի մտնելու պատիվը ունեցանք» («Արևմուտք», 1859, էջ 131 – 132):

Այսքանից ավելին Մտ. Ոսկանյանը չի ասում 1848-ի փետրվարյան հեղափոխությանը իր մասնակցության մասին: Նա, ըստ էության, քիչ բան է ավելացնում նրան, ինչ բացահայտել էր «Մասիսի» հեղինակը: Դա ինքնին հասկանալի է. դուրս չգալով հակառակորդի փաստարկների շրջանակից, որպեսզի նոր կռվաններ չտա նրան, Ոսկանյանը նույնիսկ խուսափել է «հեղափոխություն» բառից, իր մասնակցությունը ֆրանսիական թագավորի պալատի վրա կատարված գրոհին ներկայացնում է իբրև «գրեթե ակամա ասպարեզի մեջ նետվել», թեև մի քանի բառ առաջ խոստովանել է, որ փետրվարյան հեղափոխությունը իր «սիրտը բորբոքեց հրաբուխ սաստկությամբ»:

Սակայն, որքան էլ վերապահումով ընդունենք Ոսկանյանի «բացատրությունը», այնուամենայնիվ, նրա գործածած այդ արտահայտությունները ճիշտ ու գրեթե լիովին են բնութագրում նրա մասնակցությունը փետրվարյան հեղափոխությանը: Դա կարծես թե շուշափելիորեն ակնառու է դառնում, երբ վտորձում ենք մտովին վերադառնալ այն օրերը, զգալ փարիզյան մթնոլորտը:

Ոսկանյանը նրանց շարքում էր, ովքեր զենքը ձեռքին մտան Լուի Ֆիլիպի պալատը: Կամ վկայություններ նաև այն մասին, որ Ոսկանյանը նրանց հետ էր, ովքեր թագավորի գահավորակը պալատից տարան Բաստիլի հրապարակը և հանդիսավորապես հրկիզելով խորհրդանշեցին միապետի տապալումը և հանրապետության հաղթանակը¹: Այդ վկայությունները մեզ հուշում են, որ Մտ. Ոսկանյանը գտնվում էր կապիտան Դյունուարի գործախմբին հարած ուսանողների թվում կամ վերոհիշյալ

¹ Տե՛ս «Ամենուն տարեգիրքը», Բ տարի, Պեյրոթ, 1955, էջ 126, «Մուրճ», 1901, N 11, էջ 118:

իրադարձություններին մասնակցում էր ավանգարդային այդ գորախմբին խիստ մերձավոր դիստանցիայից, ինչպես և գտնվում էր Լուի Ֆիլիպի գահավորակի հետ կապված ամբողջ ծիսակատարության ու հրկիզման հերոսների շարքում: Հավանական այս ենթադրությունը, որ, անշուշտ կարիք ունի առավել հաստատուն կռվանների, մեզ մոտեցնում է պատմական խոշոր իրադարձությունների գոռ շրթայում Ոսկանյանի տեղը որոշելու նպատակին, որը բնավ երկրորդական խնդիր չէ:

Ինքը՝ Ոսկանյանը, երկիցս խոստացել է գրել հեղափոխությանը մասնակցելու մասին: Այդ դեպքում նա անշուշտ կհաղորդեր մանրամասները: Որքան մեզ հայտնի է, նա այդպես էլ չի կարողացել կատարել իր խոստումը և 1848-ի հեղափոխությանը բերած իր մասնակցության մասին խոսել է լոկ պաշտպանվելու նպատակով: «Մասիսի» էջերից իրեն ներկայացված մեղադրանքները ցրելու համար է, օրինակ, Ոսկանյանը գրել հանրահայտ «Քսանեչորս ստություն» վերնագրով պատասխանը («Արևմուտք», 1859, էջ 129 – 136): Դրա համար էլ նա շատ ավելի հեռուն է գնացել, քան պարտավորեցնում էր սովորական պատասխանը: Ակադեմիկոս Ա.Բ.Կարինյանն իր ծավալուն աշխատության մեջ արդեն անդրադարձել է Ոսկանյանի այդ «շատ ուրույն մեղայականին»¹: Մեզ այստեղ հետաքրքրում են այն ինքնասահմանատուները, որ կատարել է Ոսկանյանն իր «խոստովանության» մեջ: Պատասխանելով «Մասիսի» այն հանդգնությանը», ըստ որի, Ոսկանյանը կոմունիզմի ու սոցիալիզմի գաղափարների «ջերմեռանդ ջատագով» է համարվում, նա գրել է, թե «քոմունիզմը մեզմե անհաշտ թշնամի չէ ունեցեր, և ամեն ծանոթ կրճա վկայել, որ Քանթի աշակերտ մը Քապեին սին դյությունը չկրճար ընդունել երբեք» («Արևմուտք», 1859, էջ 130): Այս խոստովանության առթիվ ակադեմիկոս Ա.Գ.Հովհաննիսյանը, անվերապահորեն ընդունելով պաշտպանվելու նպատակով ասված այդ խոսքերը, դիտել է. «Մերժելով Կաբեին նա փաստորեն ընտրություն էր կատարում սոցիալիստական և բուրժուական հանրակարգերի միջև՝ լիովին նախապատվություն տալով այս

¹ Ա.Բ. Կարինյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 460 – 461, 476 – 477:

վերջինին: Նա մերժում է Կաբեին՝ Կանտի իդեալիստական փիլիսոփայության և պրոլետարիատի ելույթից սարսափած բուրժուազիայի դիրքերից»¹:

Ականավոր գիտնականի այս դիտարկումը հանդիպել է ծայրահեղ դիմադրության: Բանասեր Ա.Մակարյանը հրատարակել է ընդարձակ մի հոդված, որտեղ, գիտնականին հակադրվելու միտումով, հանդես է բերել ակնհայտ միակողմանիություն, փորձել է Ոսկանյանի որոշ հայացքները մերձեցնել նույնիսկ Մարքսի և Էնգելսի հայացքներին²: Հիմնավոր փաստեր չունենալով հանդերձ, բանասերը ձգտում է համոզել, թե Ոսկանյանը եղել է «այն սոցիալիստական դեմոկրատներից, որոնք... համակրում էին գիտական կոմունիզմի ռահվիրաներ Մարքսին, Էնգելսին, ընթանում էին նրանց հետքերով», դավանել է ամենահեղափոխական գաղափարներին և գտնվել գործունեության այն ոլորտում, որի մեջ գտնվում էին Մարքսն ու Էնգելսը և նրանց համախոհները, «համընթաց էր գնում Եվրոպայի ամենահեղափոխական ուժերի հետ, արձագանքում էր Մարքսին ու Էնգելսին» և այլն, և այլն:

Երկու դեպքում էլ առկա է կոպիտ ծայրահեղությունը, Կաբեին մերժելը դեռ չէր նշանակում հակադրվել սոցիալիստական ուսմունքին, լինել կոմունիստական գաղափարախոսության հակառակորդ, ինչպես «Կանտի աշակերտ» համարվելը տակավին չի պայմանավորում նրա իդեալիզմին անվերապահ ապավինելը: Մարքսն ու Էնգելսը, ինչպես հանրահայտ է, մերժել են Կաբեի, Ոսկանյանի արտահայտությամբ ասած, «սին դրությունը», իկուրական ուտոպիան, ինչպես և չեն ժխտել Կանտի ուսմունքի մասնավոր առաջադիմական բնույթն ու նշանակությունը, նույնիսկ հնարավոր են համարել երբեմն պարծենալ, որ ծագում են «մաս Կանտից»:

Տարօրինակ որևէ բան չկա նրանում, որ Ոսկանյանը տարվել է մինչև դարակեսերը գրեթե անառարկելի հեղինակություն համարվող Կանտով. դա յուրահատուկ էր ժամանա-

¹ Ա. Գ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 304:

² Տե՛ս ՀՍՍՀ պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածու N 6, մաս 1, Երևան, 1960, էջ 143 – 172:

կաշրջանի բոլոր մտածողներին, նրանց թվում նաև երիտասարդ Մարքսին ու Էնգելսին: Նույնքան տրամաբանական է նաև Կանտից զատվելը, որ Ռսկանյանն, ի դեպ, կատարել է ավելի ուշ՝ 60-ականներին:

Հարկավոր է նաև հիշել, որ Կաբեն, ի հակադրություն Լուի Բլանի, փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո հանդես է եկել կոչով, որտեղ ջնջում էր ամեն մի զանազանություն ֆրանսիացիների միջև, հորդորում էր համախմբվել ժամանակավոր կառավարության շուրջ, նաև, ազդարարելով մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը, խորհուրդ էր տալիս չպահանջել կոմունիստական ուսմունքի անհապաղ կիրառում, ինչպես և գտնում էր, որ չպետք է ցած դնել զենքը կամ թողնել բարիկադները:

Ռսկանյանը մերժելով Կաբենին, ինչպես կարող է թվալ, բնավ չէր այրում այն կամուրջը, որ նրան կապում էր Ֆրանսիայի 1848թ. հեղափոխության, Փարիզի մարտնչող պրոլետարիատի հետ: Այս առումով տեղին են Ա.Մակարյանի առարկումները, բայց այդ մերժումը Ռսկանյանին բուրդովին չի կապում Մարքսի ու Էնգելսի և նրանց հետևորդների հետ, նրան դարձնում վերջիններիս ձայնավող: Դրանք պայմանավորված են այնպիսի իրար բացասող ելակետերով, որոնք միմյանց հետ չփոթելն անխուսափելիորեն հանգեցնում է գոեհկության ու կոպիտ հետևությունների: Ավելորդ ու անապացուցելի է Մակարյանի նաև այն պնդումը, թե իբր Ռսկանյանը «դեռ իր գործունեության արշալույսին հանդես էր եկել ընկերականության (սոցիալիզմի) ու կոմունիզմի գաղափարների քարոզողի դերում»:

Հատուկ շրջահայտությամբ պետք է վերաբերվել նաև Ռսկանյանի՝ վերը բերված արտահայտությանը կոմունիզմի մասին: Անշուշտ այդ առիթով արված դիտողությունը, թե Ռսկանյանը «պաշտպանության համար է արել» իր հայտարարությունը, թե «նույնիսկ մեղադրյալի սեփական խոստովանությունը չի կարող միանգամայն անառարկելի հիմք դառնալ մինչև նույն մեղադրյալի դատապարտության համար»¹, տեղին ու

¹ Ա.Բ. Կարինյան, նշվ. աշխ., էջ 460:

համոզիչ է: Ավելին. Ոսկանյանը թե՛ 1848-ին և թե՛ 1859-ին, երբ գրել է իր «մեղալականը», հատուկ պատկերացում չուներ կոմունիստական ուսմունքի մասին: Նրա երկերից չի երևում, թե նա հաղորդակցվել է, մանավանդ ընկալել է Մարքսի ու Էնգելսի զարգացրած կոմունիստական գաղափարախոսությունը, թեև չի բացառվում նրանց առանձին գաղափարներին ծանոթ լինելը, նույնիսկ որոշ գաղափարներ պաշտպանելը:

Այս և հարակից մի շարք հարցեր, իհարկե, գիտական հիմնավորման և լրացուցիչ որոնումների ու փաստերի կարիք ունեն, բայց մինչ այդ առանց տատանվելու կարելի է արձանագրել, որ հենց միայն այն, որ Ոսկանյանը 1848-ի փետրվարին գեները ձեռքին մարտնչում էր Փարիզի բարիկադների վրա, բավականաչափ կայուն հիմք ու անհերքելի ապացույց է այն բանի, որ ի դեմս քաաներեքամյա Ոսկանյանի, մենք ունենք հեղափոխական ոգով տոգորված, նույնիսկ հեղափոխությամբ խանդավառված մի հայ երիտասարդի, որն իր կյանքը վտանգելով պայքարում է գրկվածների իրավունքների հաստատության համար: Նա միակ հայ մասնակիցն է Փարիզի հեղափոխական գոտեմարտերի և թերևս մեր առաջին գործուն հեղափոխականը¹:

1848-ի փետրվարը վճռեց Հուլիսյան միապետության ճակատագիրը, բայց նորաստեղծ կոալիցիոն կառավարության մեջ տիրապետությունն անցավ բուրժուական հանրապետականներիին, թեև «Ռեֆորմի» թեկնածուն՝ Ռեդրյու-Ռոլեն դարձավ ներքին գործերի նախարար, իսկ բարիկադների առաջադրած բանվորական թեկնածուն՝ Ալբերը, Լուի Բլանի հետ դարձավ անպորտֆել նախարար:

Ինչպես տեսանք, Ստ. Ոսկանյանը փարիզյան իր մտերիմների շարքում, նրանց, որոնց հետ սեփական հարկի տակ երկարատև բանավեճեր էր մղում փիլիսոփայական-սոցիալական տեսությունների շուրջ, հիշատակում է նաև ուսանող

¹ Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը 1848թ. հեղափոխությանը, ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ եվրոպական մի շարք երկրներում, կարող է հատուկ ուսումնասիրության: Այս ուղղությամբ հետաքրքրական փորձ է Հ.Շ. Սիլվանիի «Հայերը 1848-ին» հոդվածը («Բանբեր Հայաստանի արխիվների», 1968, N 3):

Ալբերին: Այդ հիշատակությունը, որ միակն է Ոսկանյանի գրվածքներում, հիմք է դարձել պնդելու, թե խոսքը վերաբերում է Ալեքսանդր Մարտենին (1835 – 1895)՝ բանվոր-հեղափոխականին, որ նշանավոր դեր է կատարել 1848-ի հեղափոխության ընթացքում և որը հայտնի է Ալբեր անունով¹: Մակայն դա ակնհայտ թյուրիմացություն է, որ գալիս է Ոսկանյանի անցած ուղին ճոխացնելու միտումից, ձգտում, որ խոսելի է, ոչ գիտական: Հայտնի է, որ Ալբերը մեխանիկ-բանվոր էր. հիմնել է մասսայական պարբերական, հրատարակել է հանդեսներ, մասնակցել է Լիոնի և Փարիզի հեղափոխական շարժումներին 1830 – 1840-ական թվականներին: Նա է հռչակել ժողովրդականացած պայքարի կոչը՝ «Ապրել աշխատելով կամ մեռնել պայքարելով», մեկն էր «Տարվա նոր եղանակներ» գաղտնի հեղափոխական կազմակերպության ղեկավարներից: Ակտիվորեն մասնակցելով 1848-ի փետրվարյան հեղափոխությանը, այդտեղ հեղինակություն վայելող Ալբերին Բյուլիոնի հյուրանոցի բակում, «Լա ռեֆորմ» թերթի խմբագրության լուսամուտների տակ, Թյուլրիից վերադարձած ապստամբները միահամուռ կերպով առաջադրեցին Երկրորդ հանրապետության անդամ: Ահա այս պահին, թերևս, Ոսկանյանն էլ գտնվում էր Ալբերին կառավարության անդամ հռչակողների մեջ, բայց ոչ ավելին²:

Ստ. Ոսկանյանը, որ ականատես էր այդ ամենին և հավանաբար մասնակից էր խելահեղ արագությամբ իրար հաջորդող որոշ իրադարձությունների, խորապես վերապրել է հեղափոխության պարտության ամբողջ դառնությունը, ծանր է

¹ Տե՛ս «Երեկոյան Երևան», 3 օգոստոսի 1974:

² Ամեն ինչից առաջ հարկավոր է նկատի ունենալ, որ Ալբերի և Ոսկանյանի քաղաքական-գաղափարական աշխարհայեցողության միջև արժատական տարբերություն կարի ի սկզբանե, որ առաջինը սնվել ու աճել է ֆրանսիական բանվորական մթնոլորտում, իսկ երկրորդը նոր էր մերձենում այդ միջավայրին: Ալբերը տասը տարով մեծ էր Ոսկանյանից, և այն ուղին, որին նոր էր ոտք դրել հայ ուսանողը կամ նրան գրեթե հասակակից Հ.Տինդը և Է.Դ.Աբուն, մա վաղուց էր անցել: Այս կամ այն դեպքում մենք դեռևս որևէ կողման չունենք ասելու համար, թե Ոսկանյանը մտերիմ էր կամ շփումներ է ունեցել բանվոր-հեղափոխական Ալբերի հետ, նույնիսկ չենք կարող ճշտել, թե Ոսկանյանն իր մտերիմին Ալբեր անվանելով, նրա անունն էր հիշատակում, թե սզգանումը:

տարել դրա հետևանքները՝ դեմոկրատական նվաճումների կորուստները: Մենք տեսանք, որ «Մասիսի» հողվածագիրը նրան անվերապահորեն համարում էր 1848 – 1849թթ. դեպքերի և իրադարձությունների մասնակից՝ դրանք համարելով «արյունահեղությունների պատճառ»: Պաշտպանվող Ռսկանյանը այն որակում է իբրև գրպարտություն և նույնիսկ, չբավարարվելով հերքումով, ինքնավարկաբեկիչ հայտարարություն է անում, որպեսզի օձիքն ազատի իր նեկա ու անցյալի ամեն մի քայլին հետևող մատնիչից, որ «Թյուրքի զգեստ ունի» և որը պարզերես լինելու համար և հենց այդ նպատակով կանգ չէր առնում նույնիսկ քաղաքական լրտեսության առաջ:

Մեկից ավելի անգամ Ռսկանյանի մոտ հանդիպող նման հայտարարությունները, արված լինելով որոշակի նպատակով, այսօր չունեն այն արժեքը, որ դրանցում դնում էր հեղինակը, առավել ևս չեն կարող խանգարել նրա դերի գնահատությանը: Այսօր առավելապես կարևոր է նրա սրտամորմոք վերաբերմունքն այն ամենի նկատմամբ, որ տեղի ունեցան փետրվարյան հեղափոխությունից հետո: Անքրող խոստովանելով, որ պատիվ ունեցավ զենքը ձեռքին մտնելու Ֆրանսիայի թագավորի պալատը, Ռսկանյանն այնուհետև ասում է, «բայց երբեք, բնավ երբեք հետագա քաղաքական կռիվներու մասն չունինք» և շարունակում. «Ընդհակառակն, մեր համոզումն էր, որ նորեն ապստամբիլ՝ ազատությունը վտանգի մեջ դնել էր. դեպքերը հայտնեցին, որ իրավունք ունեինք...: Տրտմալի սիրտով և արտասավալի աչքերով հանդիսատես գտնվեցանք սոսկալի մարտերու, զորս հայ Թորոսներու պես մարդիկ գրգռել էին նորածին ազատությունը խեղդելու համար: Կարելի է, թե օր մը այս դեպքերու պատմությունը գրենք և այն ատեն Պոլսի հայերը կրնան համոզվիլ, որ հայկա ճշմարիտ թոռ մը ազատության սերը վատությամբ ի գործ չդնեն...» («Արևմուտք», 1859, էջ 132):

Այս տողերն, իհարկե, ավելին են ասում, քան նրանց հեղինակը ցանկանում էր՝ հերքել իր մասնակցությունը փետրվարյան հեղափոխությանը հաջորդած իրադարձությունների: Ռսկանյանը ծարավ էր ազատության և ամբողջապես տոգորված նրանով, լի էր վճռականությամբ նրա համար իրապես մարտնչելու: Այս դեպքում հազիվ թե նա բավարարվեր

ետփետրվարյան փոթորկալի իրադարձությունների «ականատես» ղեկով: Նրա հակառակորդը որևէ մանրամասնություն 1848-ի մարտից մինչև 1859-ի հունիսն ընկած ժամանակամիջոցում Փարիզում ծավալված հեղափոխական շարժումներին Ոսկանյանի մասնակցության մասին չի հիշատակել: Դրանից էլ օգտվելով Ոսկանյանը նրան հերքելիս շրջանցել է այդ 15 ամիսները՝ սոսկ ազդարարելով թե՛ «երեք հետագա քաղաքական կռիվներու մասն չունինք»: Դա լիովին տրամաբանական է:

Այլ է, երբ խոսքը վերաբերում է 1849թ. հունիսին տեղի ունեցած իրադարձություններին, որոնց մասին «Մասիսի» հեղինակն ակնարկում էր Ոսկանյանի անձնական մասնակցությունը ցույց տալու և նրա «Ինչպես մարդ ըլլալը» երևան հանելու նպատակով:

Ֆրանսիական ռեակցիան ձերբակալություններով, բանտարկություններով, մասսայական արտաքսումներով ընկճեց հեղափոխական ոգին, ընկճեց Փարիզի ըմբոստ կամքը և երկիրը «խաղաղեցնելու» հետ մնիասին ազատություն տվեց իր ազրեսիային Իտալիայի դեմ: Հուլիսի 11-ին ֆրանսիական զորքերը ներխուժեցին Հռոմ: Ընկավ հանրապետական Հռոմը: Հակառակ իր ցուցաբերած համընդհանուր դիմադրողականությանը, տասնմեկամյա անհավասար պայքարից հետո, ցամաքից ու ծովից շրջափակված, շարունակ ռմբակոծվող, քաղցի, տիֆի վարակի ու խոլերայի մատնված ու անօգնական մնացած Վենետիկը նույնպես, արդեն օգոստոսի 22-ին, անձնատուր եղավ: Հերոսական պայքարի ելած իտալական ժողովուրդը չկարողացավ անկախություն ձեռք բերել, ազատագրվել օտար լծից, վերջ տալ ռեակցիոն-միապետական կարգերին ու ֆեոդալական մնացորդներին: Վերջապես, նրան չհաջողվեց միավորվել, միասնական պետություն ու կառավարություն ստեղծել: Պայքարի գնով ձեռք բերված, նույնիսկ շատ չափավոր սահմանադրությունը, բացառությամբ Սարդինիայում, վերացվեց: Պիտի անցներ ևս մի տասնամյակ, որպեսզի իտալական ժողովուրդը նորից կարողանար ուժ գտնել ոտքի ելնելու՝ նույն խնդիրներն իրագործելու համար: Ու այդ ժամանակ ևս՝ 1859-ին Ստ. Ոսկանյանը նորից-նոր պետք է համակվի արտակարգ խանդավառությամբ, նոր լիցքով ձայնակցի մարտնչող Իտալիային՝ դարձյալ

ենթանկատակ ունենալով՝ արթնացնել նույնպես օտար լծի տակ կեղեքվող իր ժողովրդին ու պայքարի հորդորելով նրա գավակներին:

Ռսկանյանը գրեթե նույն ժամանակում արծանագրում է իր հայ հերոսի մասին. «Հայրենիքին տխուր պատկերը իր առջև կուգար ականա և զայն Եվրոպայի հետ բաղդատելով կտեսներ, որ տարբերությունը անհուն է ու իր միտքը կզլորեր անմեկնելի վիատության մը ներքև»¹:

Տասը տարի անցնելուց հետո է Ստ. Ռսկանյանը գրել իր այդ տողերը և անմիջապես էլ ավելացրել, «սակայն իր բոլոր զգայությունները և սիրտը հայրենական սիրով կեռային գրեթե կրողոթնին իր անհատության դեմ»: Սեփական հուսահատության դեմ սեփական ուժերով ընդվզվող երիտասարդը ներքին խոր համոզմունքով է մասնակցել նաև հունիսյան դեպքերին, և կարող ենք ենթադրաբար ասել, որ նա այս դեպքում եղել է վերջին մաքառողների թվում, թերևս հենց այն ուսանողների շարքում, որոնք բանվորների հետ միասնաբար գենքը ձեռքներին վճռական դիմադրություն էին ցույց տալիս ցուցարարների դեմ հանված գորքին՝ նույնիսկ այն ժամանակ, երբ նրանց ղեկավարները ձեռքակալվել կամ թաքնվել էին²: Ընդ որում Գերցենը հունիսի 13-ին ցույցի դուրս եկողներին «առանց հավատի» միանալը, երբ նրանց հետ «ընդհանուր գրեթե ոչինչ չունեն», համարում էր հիմարություն, և ցույցի դուրս եկավ՝ մտածելով, որ ինքը ևս զերծ չէ հիմարություն գործելուց: Մինչդեռ Ռսկանյանը հունիսյան ցույցին իր մասնակցելու մեջ, ինչպես կտեսնենք, խորհրդանշական մեծ իմաստ էր դնում՝ այն առնչելով իր իսկ ժողովրդի ճակատագրի և նրա հնարավոր ազատագրության հետ՝ խնդիր, որին ի սպաս դրեցին իրենց բովանդակ կյանքը:

Հենց եռացող սրտով ազատության ու անկախության համար բարիկաղների վրա մարտնչող և ներքին հավատով փողոցային ցույցի դուրս եկող Ռսկանյանին էր «մերկացնում» ու քարկոծում «Մասխաը»՝ առիթ դարձնելով այն, որ «1849-ին

¹ Տե՛ս նույն տեղում և «Արևմուտք», I փետրվարի 1859, N 3, էջ 21:

² Տե՛ս “Семирная история”, т. 6, М., 1959, стр. 341.

հունիսի մեջերը... Ս.Ոսկան դրոշակակիր հանդիսացավ» և ձերբակալվելով բանտ նետվեց՝ «Խռովարարաց գլխավորների ու խիստ կատաղիների» հետ:

Մեղադրվելով այդ իրադարձություններին մասնակցելու մեջ և շրջանցելու կամ խոստովանելու տեղ չունենալով, Ոսկանյանը հարկադրված էր կոնկրետ պատասխան տալ: Ըստ այդմ նրա պատասխանի մեջ, բոլոր քսանչորս «ստություն»-ներից ամենից մեծ տեղը, եթե ոչ ամենից լուրջ նշանակությունը Ոսկանյանը հատկացրել է այդ «մեղադրանքին»՝ 14-րդին, նրան տրամադրելով հանդեսի 17-րդ համարի բոլոր ութ էջերը գրավող պատասխանի մեկ էջից ավելին: Ճիշտ է այս դեպքում Ոսկանյանն ընդլայնել է իր բացատրությունը, անդրադարձել նաև որոշ հարցերի, բայց դարձյալ նրա այս պատասխանն առավել նշանակալի է:

«Հռոմայի դեմ պատերազմին ժամանակը, – բացատրվում է Ոսկանյանը, – բազմաթիվ ուսանողի... Սահմանադիր ժողովին ադերսագիր մը տալու որոշում ըրին... Ադերսագիր տանող բազմության դրոշակիրը մեր բարեկամներն մեկն էր, և որովհետև իրեն քով կգտնվեինք, վայրկյան մը դրոշը մեր ձեռք անցավ շփոթին մեջ և կարող եղանք գայն պաշտպանելու իրև ուսանող և ոչ իբրև մարտիկ ապստամբ» («Արևմուտք», 1859, էջ 132):

Այսպես, Ոսկանյանը ճշգրտում է իր հակառակորդի հաղորդած տեղեկությունները, նաև իր որոշակի տեղը 1849թ. հունիսի 13-ին տեղի ունեցած հակակառուսավարական ցույցում. նա ցուցարարների ավանգարդում էր, ֆյանսիական կառավարության արտաքին քաղաքականության դեմ՝ ի պաշտպանություն իր ազատագրության համար մարտնչող Խտալիայի ցասկոտ բողոք հայտնող ուսանողների դրոշակակիրների կողքին: Համեստությամբ է խոսում Ոսկանյանը տասը տարի առաջ տեղի ունեցած այդ սխրանքի մասին և հավանաբար շատ բան գիտակցաբար չի ասում: Անկախ դրանից և հակառակորդի պնդումը գրպարտություն համարելուց, Ոսկանյանը նրա մեղադրանքը ոչ թե հերքում, այլ հաստատում է՝ իր ճշգրտումներն անելով մանրամասների շուրջ: Այս անգամ ևս նա դրանով չի բավարարվում, ընդհակառակը, դուրս գալով «մեղադրանքի» շրջանակից, ոչ միայն սուր ու դիպուկ իր խոսքն է ուղղում «հայ թորոսներին»,

այլ միաժամանակ դրսևորում է իր հիմնավոր համոզվածությունը ցույցին մասնակցելու ինքնաբուխ անհրաժեշտության, Իտալիայի ազատագրության համար պայքարելու իր քաղաքացիական պարտականության վեհության նկատմամբ: Մենք առիթ կունենանք իր բուն տեղում անդրադառնալու այդ հարցերին, իսկ այստեղ հարկ է ուշադրություն դարձնել Ոսկանյանի կատարած մի էական ճշգրտմանը, որ նա անում իր ձեռքակալության առթիվ՝ պատասխանի հաջորդ կետերում: Նկատի ունենալով հունիսյան ցույցին մասնակցելու համար իր ձեռքակալվելը, Ոսկանյանը գրում է. «Կհաստատենք, որ եղելությունը այսպես չկատարվեցավ, և այս դեպքեն հինգ օր ետքը քսության զոհվեցանք և ոչ թե Շանկարնիե գորապետին զինակիրներուն»: Ապա նա ուղղում է, որ ձեռքակալված է եղել 54 օր և ոչ թե վեց-յոթ ամիս («Թորոսին ամիսը ութ օրե կբաղկանա»), որ բանտից ոչ թե ներմամբ է ազատվել, այլ հանցանքի բացակայության ձևակերպումով, որ հետագայում՝ 1852-ին, չի հետապնդվել կամ բանտարկվել ու արքորվել, ոստիկանական հսկողության չի ենթարկվել և այլն:

Որևէ հիմք՝ չընդունելու Ոսկանյանի այս ճշգրտումները, չունենք: Այլ աղբյուր, որ ավելի ստույգ և մանրամասն տեղեկություններ հաղորդեր նրա հեղափոխական գործունեության, 1848 – 1849-ին Փարիզում ծավալված պայքարին մասնակցելու մասին, հայտնի չէ: Եվ այն ինչ հաղորդում է Ոսկանյանը ոչ միայն հավաստի է, այլ մեզ շատ պակասավոր է թվում այն իրականի հանդեպ, որ նրան վիճակվել էր անել: Նույնիսկ անկախ դրանից, մեր առջև ուրվագծվում է Փարիզի հեղափոխական հորձանուտը նետված հազիվ քսաներեքամյա հայ երիտասարդը, որը գտնվեց իրեն ընդառաջ եկած իրադրության բարձրության վրա և մարտնչող պրոլետարիատի ու օտար լծի տակ հալածվող ժողովուրդներին համակրական ցույցով պաշտպանող ուսանողության առջև վկայեց հայի ազատաբաղձ ոգին և դյուցազնաբար մարտնչելու կարողությունը:

Հունիսյան դեպքերից քիչ անց, Ոսկանյանն, ինչպես ինքն է գրում, մատնության հետևանքով բանտ է նետվել, որտեղ մնացել է մինչև օգոստոսի վերջերը՝ գրեթե երկու ամիս: Պատմությունից հայտնի է, որ ձեռքակալվածներն արքորվել են կամ արտաքսվել երկրից՝ մասնավորապես Բելգիա: Ոսկանյանը,

քանի որ նա բանտից ազատվել էր հանցանքի բացակայության ձևակերպումով, ինչպես և պնդում է նույն պատասխանում, արտորվածների կամ արտաքսվածների մեջ չէր, թեև նա մի այլ առիթով հիշատակում է, որ եղել է Բելգիայում, Բրյուսելում, որտեղ հանդիպել ու գրուցել է գարիբալդիականներից մեկի հետ (տե՛ս «Արևմուտք», 1859, էջ 104): Դա հավանաբար եղել է ավելի ուշ՝ 1859-ից «քանի մը տարի առաջ», մոտավորապես 1855 – 1856-ին, կամ մի քիչ շուտ, մի քիչ ուշ:

Այդպես են անցել Փարիզում Ոսկանյանի գտնվելու առաջին 4 – 5 տարիները. Ոսկանյանը լիովին ու ամբողջապես մխրճվել է ֆրանսիական կյանքի մեջ, ծանոթացել է ոչ միայն նրա մեծ պատմությանը, այլև ներծծվել է նրա առօրյայով, իր ժամանակի հուզումներով. այդօրյա մտավոր կյանքով, ունցել է ֆրանսիացի մտերիմների պատկառելի միջավայր, ինչ-որ չափով դարձել է փարիզցի՝ դրանից բխող պարտք ու պարտականություններով: Ֆրանսիայի պատմության վճռական շրջափուլում՝ 1848 – 1849թթ., նվիրվելով ազատության, դեմոկրատիայի ու մարդկային իրավունքների համար մղված պատմական պայքարին, Ոսկանյանն ամեն ինչից բացի իր ներքին խառնվածքի մեջ է ներառել ֆրանսիական ոգի ու մտածողություն, որ պիտի շաղախվի նրա ամեն հայկականին ու ամրապնդի նրա առնական հրապարակախոսության միջուկը:

Իբրև Ոսկանյանի փարիզյան կյանքի ու գործունեության առաջին ժամանակաշրջանի ընդհանրացում պետք է ասել, որ դա հիմնականում ուսումնառության շրջան էր, գաղափարական որոնումների, ճանաչելու և նոր միջավայրին ու կյանքին ընտելանալու մի շրջան, որի ընթացքում նա գտնվեց պատմության մատուցած իրադարձությունների բարձրության վրա: 1848թ. փետրվարյան հեղափոխությանը և 1849թ. հունիսյան ցույցին մասնակցելը, այդ ընթացքում բարիկադների վրա զենքը ձեռքին մարտնչելը, կառավարության քաղաքականության դեմ դրոշը պարզած բողոքելը հազիվ բսանհինգամյա երիտասարդ Ոսկանյանի կյանքի ու գործունեության պայծառ նշանաձողերն են: Այդ նույն տարիներին հենց Փարիզում քիչ թվով հայ երիտասարդներ չկային, նրանցից շատերն, իհարկե, խորապես կրել են 1848-ի հեղափոխության սքանչելի ազդեցությունը, քայց ոչ մեկին,

նրանցից չի վիճակվել կիսելու Ռսկանյանի վայելած երջանկությունը՝ գործնականում զգալու հեղափոխության շունչն ու բաբախումները, վերապրելու նրա հողմապտույտն ու հանգչելու տառապանքը:

Դրանով էլ հենց Ռսկանյանը դրականապես տարբերվում է իր հասակակից ժամանակակիցներից և մի ամբողջ գլխով բարձրանում ու առաջ անցնում «փարիզյան» հայ երիտասարդներից, թեկուզ մի ժամ, մի օր հեղափոխության վառողի հոտ քաշելը նրան կարող էր իրօրյա հայ ժամանակաշրջանից տասնամյակներով առաջ մղել, և Ռսկանյանն, իրոք, դրա շնորհիվ հայ միջավայրից վեր բարձրացավ մի ամբողջ գլխով՝ իր հեղափոխական մտածողությամբ, իր պայքարող գործունեությամբ, մարտնչող հրապարակախոսությամբ, իր անկուտարում կամքով ու հազվագյուտ տաղանդավոր գրչով: Նա իր ժամանակակիցների մեջ գրեթե բացառություն կազմելով ներծծվեց տիրողների դեմ պայքարելու վառ պաթոսով, ստացավ խառնվածքի առնական կոփվածք, շոշափելիորեն զգաց ազատության կենսարար ուժը, ինչ-որ չափով վայելեց նրա խենթացնող հմայքը, ըմբռնեց հասարակության վերափոխման հեղափոխական գաղափարը, մասնակից եղավ այն գերագույն ու արյունաթաթավ մաքառմանը, որ գործադրում էին երկրի հարստահարված ու ճգնված, բայց ամենագոր ուժով ու կամքով օժտված պրոլետարները՝ հաց և իրավունք ունենալու համար:

Կյանքի ու գաղափարական մեծ դպրոց էր դա և որևէ կասկած չի կարող հարուցել: Սակայն ճշմարտություն է նաև այն, որ հեղափոխական կրքի բուռն դրսևորումները, դրանցից առավել մեծ չափով՝ ֆրանսիական սվիմը ֆրանսիացու արյան մեջ թաթախելը, անլուր դաժանությունները, անխնա սպանությունները, օրենքի անսահմանափակ ուժով կատարված գնդակահարությունները, ձերբակալումները, բանտարկությունները, տարագրությունները, նույնիսկ բարիկադային մարտերի ու փողոցային կռիվների անխուսափելի հետևանքները խորը սպի են թողել Ռսկանյանի սրտում: Նա ծանր է տարել հեղափոխության, այսպես ասած, բացասական դրսևորումներն ու հետևանքները, հատկապես հեղափոխությամբ ձեռք բերվածը նոր հեղափոխական փորձերով վտանգի ենթարկելը, որ տեղի ունեցավ 1848

– 1849թթ., տիրողների դեմ պայքարողների կամքից ու ձգտումներից անկախ, քայց այդ նույն տիրողների՝ ազատության թշնամիների, կամքով ու հրահրումներով: ‘Դա նույնպես անխուսափելի էր, ինչպես անխուսափելի էր, որ Ռսկանյանի գաղափարախոսության մեջ զգացնել տվեց, ժամանակակիցներից մեկի արտահայտությամբ ասած, «Հունիսյան սպանդանոցի» թողած ծանր կնիքը, ինչպես անհաղթահարելի եղավ փարիզցի անմեղ գոհերի հոսող արյան մղձավանջը:

Ասենք, Ռսկանյանը բացառություն չէր:

Ի դեպ, համանման ներգործություն 1848 – 1849թթ. իրադարձություններն ունեցել են նաև մի այլ հայ ուսանողի, տեղի Մուրադյան վարժարանի դասատու Հովսեփ Շիշմանյանի (Ծերենց) վրա: Նա Փարիզում էր փետրվարյան հեղափոխությունից հետո և ականատես է եղել հունիսյան, ապա և հետագա իրադարձություններին: Ըմբռնելով հանդերձ բուրժուական հեղափոխության և ժողովրդական հզոր շարժումների պատմական նշանակությունը, նա ոչ պատահականորեն բացասաբար դիրքորոշվեց այդ շարժումների հետևանքների նկատմամբ, չընդունեց սեփականության ու սեփականատերի դեմ մղվող անզիջում պայքարը, մերժեց հավասարություն հաստատելու գաղափարախոսությունը. «Չէ, մարդս հավասար ըլլալու համար չէ ստեղծված և ոչ երբեք պիտի կարենա ըլլալ» – գրում էր նա: Շիշմանյանը գտնելով, որ աշխարհում գոյություն ունեցող կարգը սահմանել է «աշխարհիքը ստեղծող աջը», նրա դեմ պայքարելը համարում էր հանցանք, իսկ այդ պայքարի գաղափարախոսությունները՝ դատապարտելի:

Հեղափոխության պայծառ բոցը, որ բռնկվեց Փարիզում, համակեց Ֆրանսիան ու տարածվեց գրեթե ամբողջ Եվրոպայում, իրոք, հեղափոխության թշնամիների ջանքերով ոչ միայն մարեց, այլև մթագնվեց, աստիճանաբար թանձրացան նրանեզատիվ կողմերը: Ռեակցիայի համար հեղափոխությունը հարմար առիթ եղավ, որպեսզի հաշվեհարդար տեսնի աշխատավորության հետ, արյան մեջ խեղդի ազատագրական շարժումները, ջլատի ժողովրդի ուժերը և միմյանց հակադրի: Ֆրանսիան աշխատավոր մարդկությանը տվեց հեղափոխական վերելքի սքանչելի օրինակ, իսկ Ֆրանսիական ռեակցիան տվեց հեղափո-

խությունն արյան մեջ խեղդելու, այն կատարյալ սպանդանոցի վերածելու վատթարագույն օրինակը: Խոսելով այդ սպանդանոցի հերոսներից մեկի՝ Շանկառնիեի մասին, Մարքսը նկատում է, որ բուրժուազիան նրան անմիջապես առաջ քաշեց իբրև խոշոր անձնավորություն և, վերհիշելով Հելվիցիասի հայտնի խոսքերն, արձանագրում է, որ դա տեղի ունեցավ ռեակցիոն Ֆրանսիայի բնական անհրաժեշտությամբ, «Հասարակական յուրաքանչյուր ժամանակաշրջան ունի իր մեծ մարդկանց կարիքը և, եթե չկան այդպիսիք, նա հորինում է դրանց»: Հորինյալ այդ «մեծ մարդը», գեներալ-քաղաքական գործիչ միապետականը, որ 1848-ի հունիսյան օրերից հետո դարձել էր Փարիզի կայսրոսի և ազգային զվարդիայի հրամանատարը, Ալժիրում բարբարոսական կռիվներ մղած Կավենյակի հարազատ պատճենն էր և այն, ինչ արեց վերջինս ալժիրցի հակառակորդների դեմ, նույնը նա կրկնեց հարազատ ժողովրդի դեմ Փարիզում՝ այս դեպքում ևս կրկնօրինակելով զինվորական նախարար դարձած և 1848-ի հունիսին բանվորական մասսային դաժանորեն ճնշած Կավենյակին:

Ազատության համար ժողովրդին պայքարելու ու մաքառելու կոչ անող Լամընեն, արդեն ծերունագարդ, նզովելով հանդերձ սպանդի դահիճներին, ստիպված էր ասել ժողովրդին, «Իսկ դու լռի՛ր, դու շատ աղքատ ես, որպեսզի խոսքի իրավունք ունենաս»:

*

* *

Լամընեի խոսքը՝ դաժան ու հատու, ճշմարտացի ու հստակ, ուղղված էր ֆրանսիացիներին և հանճարեղ դիպուկությամբ բնութագրում է այն իրավիճակը, որ տիրում էր երկրում ընդհանրապես և 1848-ի հեղափոխության պարտությունից հետո: Բայց այդ խոսքերը հարազատ էին նաև Ստ. Ոսկանյանին, որ լավատեղյակ էր Թուրքիայում ու Չնյունիայում տիրող նույն իրավիճակին և ինքն էլ շոշափելիորեն զգացել է Լամընեի խոսքերի իրավացիության դառնությունը: Շատ շանցած նա պաշտպան կկանգնի Լամընեին, փայլուն կերպով նրան կներկայացնի հայ ընթերցողին, ամենայն ջերմությամբ ու հաստատականությամբ կարտահայտվի նրա մասին, նաև կխոստովանի՝ «Լամընեն

երկար ատեն մեր սիրելի հեղինակը եղած է» («Արևելք», 1855, էջ 8):

Ոսկանյանի այս տողերն այտացուլել են նրա կրած դառնություններն ու հուսահատ ապրումները Ֆրանսիայում, դրանք մշտապես են սեղմել Ոսկանյանի օձիքը: Նյութական դժվարին կացության մեջ գտնվելով, որի մասին նա հաճախ է ակնարկել, և շարունակ տոկալով, Ոսկանյանը, որքան էլ տարվել է կյանքի հուսանքով, չի շեղվել այն նպատակից, որի համար Ֆրանսիա էր եկել: Ուսումնառությունը նրա գերագույն խնդիրն էր, որ իրագործեց փարիզյան առաջին 5 – 6 տարիներին, «Մասյաց աղավնիի» արտահայտությամբ, «անպարտելի չարքաշությամբ»: Նա, ինչպես նշվեց, սովորել է զանազան ուսումնական հաստատություններում՝ ֆրանսիական քոլեջում, բժշկական վարժարանում, ուր ծանոթացել է, իր խոսքով ասած, «բուժական արհեստին», արվեստների և գիտությունների հաստատությունում, Սորբոնի համալսարանում: Տարբեր ուսումնական օջախներին դիմելը, հասկանալի է, բխում էր նրա մեծ հետաքրքրասիրությունից ուսման և գիտությունների նկատմամբ: Ցավոք, ճշգրիտ հայտնի չէ, թե կոնկրետ ինչ է ուսումնասիրել, որքան է հաճախել այս կամ այն հաստատությունը: Միայն լրագրական մի հաղորդում, որ իր ամփոփած տեղեկություններով եզակի է, օգնում է պարզելու, որ Ոսկանյանը «3 – 4 տարի Սենթ-Պարայի դպրոցը զանազան ուսմանց խիստ հաջողությամբ հետևել են ետև, այժմ դժբախտաբար ստիպյալ է մասնավոր դասատվությամբ յուր ավուր պարենը հոգալ հիշյալ մայրաքաղաքին (իմա՝ Փարիզ – Մ.Հ.) մեջ: Այս քաջ հայկաբան և մաթեմատիկայի ու գաղղիական լեզվին մեջ հառաջադեմ եռանդուն երիտասարդը չկրցավ մինչև ցայսօր ազգասեր բարերար մը գտնել, որ օգնե իրեն, որպեսզի կարող ըլլա *բժշկականության հեղուկի*, թեպետ կխոստանա այս պատվական արհեստը սովորելն ետև, հատուցանել յուր բարերարին իրեն փոխ ս.ված դրամը»¹ (ընդգծումը մերն է -- Մ.Հ.):

¹ «Արշալույս արարատյան», 8 դեկտեմբերի 1850, N 378: Վկայությունը, թե Ոսկանյանը 3 – 4 տարի հաճախել է Սենտ-Պարայի դպրոցը, ինչպես տեսանք, հսկաստուն է Ոսկանյանի պնդմանն այն մասին, որ «երբեք Սենտ-Պարայի մեջ չմտանք իբրև աշակերտ»:

Բազմանշանակ այս հաղորդումը որևէ մեկնության կարիք չունի, մաքառելով էր սովորում Ոսկանյանը և ինքն էր հարթում իր ճամփան քայլ առ քայլ: Լրացնենք, սակայն, որ մեր ընդգծած արտահայտությունը՝ ըստ որի Ոսկանյանը հակում ուներ բժիշկ դառնալու, նրա կենսագրությունը լրացնում է մի նոր փաստով, որ, շատ այլ փաստերի հետ, անհայտ էր: Ասենք և այն, որ հակառակ ծառայած դժվարություններին, թերևս հենց դրանց հետևանքով, նա, այնուամենայնիվ, մի որոշ ժամանակ, հավանաբար ֆրանսիական համալսարանի բժշկական մասնաճյուղում կամ գուցե ինչ-որ վարժարանում, հետևել է բուժական դասընթացներին: Դա հաստատվում է նաև իր՝ Ոսկանյանի երկակի վկայությամբ. «Ես ժամանակով քիչ մը բուժական արհեստին հետևել եմ մարդուն կազմը հասկնալու, քան թե մարմինը դարձանելու համար» («Արևմուտք», 1859, էջ 52, տե՛ս նաև էջ 31): Ենթադրելի է, որ նա չի ավարտել ոչ միայն «բուժական արհեստի» դասընթաց, այլև մյուս հաստատությունները, բացի համալսարանից, որովհետև վկայություն կա, որ Ոսկանյանը, հավանաբար Սորբոնի իռչակավոր համալսարանում, ստացել է «գիտության և գրականության ուսումնավարտի (ըստ այլ հղբյուրի՝ պսակավորի)» վկայագիր¹:

Այդ ուսումնական հաստատություններում, դատելով իր իսկ, ինչպես և կողմնակի վկայություններից, Ոսկանյանն ունկնդրել է ժամանակի հանրահայտ գիտնական-դասախոսների՝ Վիկտոր Բազենին, Ժյուլ Սիմոնին, Միշլեին, Էդգար Բինին, Պարոշին, Լըպային և այլոց: Այդ անունների հիշատակումով Ոսկանյանն, անշուշտ, շատ բան է ասում, և դրանք այնպիսի գործիչներ ու դեմքեր են, որ առանց հատուկ դժվարության կարելի է գուգահեռներ անցկացնել նրանց և ունկնդրի միջև: Բայց ինքը՝ Ոսկանյանը կանխում է այդ. «Մենք մարդու մը ո՛վ և ըլլա, հետևիլ չենք ուզեր, հայսմ մասին մեր կատարյալ ապստամբ է».
– մեկից ավելի անգամ արտահայտած այս գաղափարով Ոսկանյանը որոշակիորեն սահմանազատվում է հնարավոր ամեն մի

¹ Տե՛ս «Բյուզանդիոն» 1901, N 1346 և Հր. Ասպուր, Դիմաստվերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 106:

ուղղակի ներգործությունից: Խոսքն, անշուշտ, ինքնին ընդօրինակելու, այս կամ այն ազդեցության տակ ընկնելու մասին է, որն ինքնին հասկանալի է ու բնական: Աշխատելով մշակել ինքնուրույն ուղեգիծ, անկախ մնալ, Ոսկանյանն, այսուամենայնիվ, ինչպես դա կտեսնենք իր տեղում յուրաքանչյուր առանձին դեպքում, յուրացրել է ֆրանսիական առաջադեմ գաղափարախոսության շատ դրույթներ, պաշտպանել է իր դասախոսների առաջադրած որոշ արմատական սկզբունքներ՝ դրանք մեկնաբանելով ու պրոպագանդելով յուրովի: Այս առումով դիպուկ է Հ. Օշականի դիտարկումը. «Կյանքը կվկայե, թե Ստեփան Ոսկան ոչ ոքի մտիկ ընելու խելքով, հանճարով չէ ծնած»¹:

Պետք է նաև շեշտել շատ կարևոր այն հանգամանքը, որ Ոսկանյանն ուսումնական դասընթացներին զուգահեռ մտավոր զարգացում է ստացել ինքնաշխատությամբ, կյանքը գրքերի մեջ ու ընթերցանությամբ մաշելով:

Կրա համար Փարիզը նրան լավագույն հնարավորություն էր ընձեռում և դրանից նա ազահությամբ էր օգտվում: Այդ մասին նա հաճախ է նշել իր գրվածքներում, և եթե դա էլ չլիներ, այդ մասին է վկայում նրա բարձր զարգացածությունը, որ երևում է համարյա յուրաքանչյուր հոդվածում, նրա ընդհանուր ժառանգության մեջ: Ժամանակակիցները, գրեթե առանց բացառության, համերաշխությամբ են նշել այդ հանգամանքը: Ոսկանյանի հետ Փարիզում հանդիպելուց հետո գրել է. «Իրոք Ոսկանյանը Իզմիր եկավ, և յուր գալուստը տոնախմբություն մ' է քաղաքիս համար: Ինչ որ եղավ Կարիպալտիին այցելությունը Ալպիոնի գավակաց համար, նույնը կըլլա և Ոսկանյանին գալուստը իզմիրցվոյ համար... Ոսկանյանն ալ մտքին լույսով և տաղանդին փալվալումովը արդարև ազգ(ային) հառաջադիմության իբրև արիագույն դրոշակիրը արժանի էր ոչ միայն Իզմիրի հայոց, այլ ամբողջ ազգին գիրկը ընդունվելու և սքողվելու»: Ամենքն էին շտապում դեպի այն միահարկ տունը, ուր Ոսկանյանն էր՝ հանդիպելու «եփուն ուղեղին».

¹ Հ. Օշական, Համայնապատկեր արևմտահայ գրականության, հ. 1, Երուսաղեմ, 1945, էջ 246:

Ոսկանյանը, խոսեցա հետը և առջի անգամին զգացի թե քսանամյա ուսումներով և ընթերցումներով սնված պատկառելի ուղեղի մը հետ է գործս»¹:

Այդ ժամանակ՝ 1865 – 1866-ին, ավելի չափազանցված խոսքերով է գնահատվել Ոսկանյանը, իսկ ավելի ուշ Եղիա Տեմիրճիպաշյանն առավել պատկերավոր է արտահայտել իր հիացմունքը Ոսկանյանով. Հր. Ասատուրի հետ անցած դարակեսի մտավորական շարժման մասին խոսելուց հետո Տեմիրճիպաշյանը գրել է նրան. «Մեր մեջ ալ գրական ու ընկերական շարժումն այն ժամանակ կսկսի որոշապես, որպես և դու կհաստատելիք այսօր: – Չգիտեմ ինչո՞ւ... Ստեփան Ոսկանյանին անունն հիշողությանս կհամագրավե ժամանակե մը հետե: Այն թվականին գրով իր միտքն ավելի հստակորեն հայտնող մարդ չկար, և կարծեմ թե գանգատուփի մը մեջ ալ այնքան միտք չկար այն թվականին: Բովանդակ Չմյուռնիո դպրոցն, որուն ներգործությունը կրեցինք, իր աշակերտը և իր հետևողը եղավ»²:

Բասն երկար ու մաքառումներով հագեցած տարիներ պիտի անցնեին մինչև որ արևմտահայ մտավորականներն այդպես արտահայտվեին զմյուռնահայ երիտասարդի մասին, որ համեստ մի ընտանիքի զավակ էր ու այդպիսին՝ էլ մնաց ամբողջ կյանքի ընթացքում, բայց համբավ բերեց ոչ միայն իր անվան, այլ նաև ազգին, որին պատկանելու մասին մշտապես հպարտությամբ էր հիշատակում օտարի առջև և օտար միջավայրում, որտեղ ևս նա փայլել է դարձյալ շնորհիվ իր բնատուր դիրքերի ու տաղանդի: Դրա հաստատումը պիտի լինի փարիզյան կյանքի նրա երկրորդ տասնամյակը (1855 – 1865): Բայց այդ ժամանակաշրջանում Ոսկանյանի ծավալած գործունեությանն անդրադառնալուց առաջ հարկ է քննել ծառայող մի կարևոր խնդիր՝ ո՞րն էր Ոսկանյանի հայկական միջավայրը Փարիզում, ի՞նչ առնչություն է նա ունեցել հայկականի հետ 1846 – 1854-ին, երբ տարված էր ուսմամբ և դեռ ոտք չէր դրել հասարակական կյանքի մայրուղու վրա:

¹ «Պեգասյան թռչնիկ», I նոյեմբերի 1865, N 41, էջ 321, 322:

² *Թեոդիկ*, Ամենուն տարեցույցը, Կ. Պոլիս, 1923, էջ 115 – 116:

Ինչպես շատ այլ հարցեր, այնպես էլ այս արձատական հարցը դեռևս որևէ ուշադրության չի արժանացել: Ֆրանսիական մամուլի հետ Ոսկանյանի ունեցած ինչ-որ կապերի, այդ մամուլին աշխատակցելու մասին լուր հիշատակվել է՝ առանց փաստարկելու և հիմնավորելու: Նախ անդրադառնանք այս հարցին:

Կան հիշատակություններ, որ Ոսկանյանը հայ հասարակական կյանքում հրապարակախոսական լայն գործունեություն ծավալելուց առաջ ակտիվորեն աշխատակցել է ֆրանսիական մամուլին, հանդես է եկել փարիզյան թերթերում: Առաջին անգամ այդ մասին հիշատակվել է Կ. Պոլսում հրատարակված «Բյուզանդիոն» թերթում, 1901թ. փետրվարին (N 1341)՝ Ոսկանյանի մահվանն արձագանքող մի հոդվածում, ուր ասված է, որ «...Ֆրանսա գտնված ատեն ֆրանսական թերթերու մեջ հողվածներ կգրեր»: Այդ հոդվածի հեղինակ «Գ.Խ.»-ն [Գր. Խորասանճյանը] Ոսկանյանի զմյուռնական բարեկամներից է և լավատեղյակ է նրա կյանքին: Բայց նրա հոդվածում տեղ են գտել փաստական մի շարք անճշտություններ¹, որոնց շարքին պետք է դասել նաև ֆրանսիական թերթերում հողվածներ հրատարակելու մասին հիշատակությունը: Այդ մասին, սակայն, ասվում է նաև նույն թերթի 1346-րդ համարում: Այս անգամ հավանաբար նույն հեղինակը կոնկրետ, նկատի ունի «Նասիոնալ» և «Կոնստիտուցիոնալ» թերթերը: Դարձյալ փոքր-ինչ անց (N 1376) թերթը մեջ է բերել Ջոյուռնիայի ֆրանսիական թերթի մահախոսականը, որտեղ վկայվում է, որ 1848-ին նա միայն «Նասիոնալին» է աշխատակցել: Զաղվածք կատարողը և հոդվածի հեղինակը Ոսկանյանի մտերիմներից մեկն է՝ Գ.Բաբազյանը:

Հավանաբար «Բյուզանդիոնից» էլ սկիզբ է առել ֆրանսիական թերթերին Ոսկանյանի աշխատակցելու վարկածը՝ հասնելով մինչև մեր օրերը: Նույն, 1901թ. վերջերին այդ մասին ընդարձակ գրել է պատմաբան Լեոն և մերկ «Վիաստի» հիման վրա

¹ Հողվածում սխալ է նշված Ոսկանյանի ծննդյան թիվը, «Սյունյացն» անվանված է դարոցական ընկերություն, Ոսկանյանը՝ Մենտ Պարպիի ուսանող և օգնական դասատու, շփոթված է նրա կարևոր հողվածներից մեկի տպագրության ժամանակաշրջանը, ճիշտ չեն նշված Ջոյուռնիա վերադառնալու և մեարտյանում աշխատելու տարեշրջանները և այլն:

պատմական որոշ էքսկուրս կատարել այսպիսի ելակետով. «Այնքան լավ է նա յուրացրել ֆրանսիական լեզուն, որ գրական աշխատանքն էլ դարձրեց ապրուստի միջոց: Աշխատակցում էր ֆրանսիական լրագիրներին, գլխավորապես «Լե Նատիօնալ»-ին: Այս հանգամանքն էլ շատ նշանավոր է: Որոշում է Ոսկանի ոչ միայն քաղաքական դավանանքները, այլև այն դերը, որ նա կատարեց 1848-ի դեպքերում»¹:

Այնուհետև նույնը՝ «Ոսկան կաշխատակցի ֆրանսիական թերթերու», արձանագրում է Հր. Ասատուրը Ստ. Ոսկանյանին նվիրված իր առաջին, ապա և 1847-ին մամուլում հրատարակած հոդվածներում², թեև «Դիմաստվերներում» այդ մասին ոչինչ չի հիշատակում: Նրա հետևությամբ Վ.Զարդարյանը նույն փաստն արձանագրում է «Հիշատակությունում»³: Հակոբ Օշականը իր «Համայնապատկերում» նույնպես մատնանշում է, որ Ոսկանյանը «1850-ին կարող էր իր ֆրանսերենը պարտադրել Բարիզյան թերթերում»⁴, իսկ «Ամենայն տարեգրքի» հեղինակը դրան ավելացնում է նաև գործնական կապը ֆրանսիական մամուլի խմբագրությունների հետ:

Ֆրանսիական թերթերին Ոսկանյանի աշխատակցության մասին վարկածը տեղ է գտել նաև մերօրյա մի շարք ուսումնասիրություններում: Բայց, եթե Ս.Օ. Հովհաննիսյանի և Ա.Բ. Կարինյանի մենագրություններում սոսկ արձանագրվել է փաստը, ապա ուրիշները դրա հետ միաժամանակ հորինել են պատումներ, որտեղ փորձ է արվում ցույց տալ, թե Ոսկանյանն աշխատակցել է ֆրանսիական «ամենաձախ առաջադիմական թերթերին, որով նրա գործունեությունը «նոր իմաստ ու նշանակություն է ստանում»: Բանը նույնիսկ հանգեցվել է նրան, թե Ոսկանյանն «այն սոցիալիստական դեմոկրատներից է, որոնք... համակրում էին գիտական կոմունիզմի ռաիվիրաներին, Մարքսին, Էնգելսին, ընթանում էր նրանց հետքերով, նույնացվել

¹ «Մուրճ», 1901, N 11, էջ 116 և հետո:

² «Լույս», 5 հունվարի 1908, N 2, էջ 60 և «Մարմարա»:

³ Վ.Զ. Արմճյան, Հիշատակարան, Կ.Պոլիս, 1910, Թ. մաս, էջ 4:

⁴ Հ. Օշական, Համայնապատկեր արևմտահայ գրականության, հ. 1, գիրք Ա-Բ, էջ 244:

է «Նասիոնալի» ու «Լա Ռեֆորմի» և Ստ. Ոսկանյանի քաղաքական կողմնորոշումը, Ֆրանսիայի պատմության հեղափոխական ժամանակաշրջանի իրադարձությունները երևակայության ճիգերով վերածնել են Ոսկանյանի չափերով և այլն¹: Ըստ որում վերջիններս անկեղծությամբ խոստովանում են, որ հայտնի չէ, թե ինչ է հրատարակել այդ թերթերում Ոսկանյանը, թե ֆրանսիական մամուլում լույս ընծայած նրա նյութերից որևէ մեկն իրենց ձեռքի տակ չկա:

Այսպիսով, «Բյուզանդիոնից» սկսվել և մինչև մեր օրերը կրկնվել, վերակրկնվել, լայնացվել ու բեռնավորվել է մի վարկած, որը հիմնավորելու համար ոչ մի փաստ, ոչ մի կոնկրետ հիշատակություն չի արվել և ոչ մեկի կողմից: Նրա կողմնակիցները չեն տեսել ֆրանսիական հիշյալ պարբերականներից որևէ համար, որտեղ գետեղված լինի Ոսկանյանի որևէ հոդվածը կամ հիշատակվեր գոնե նրա անունը: Փաստը ստուգելու, հիմնավորելու փոխարեն նրանք սոսկ փոխ են առել չփաստարկված հիշատակությունը: Ըստ այդմ, անտեսվել է կարևոր այն փաստը, որ հիշյալ ֆրանսիական թերթերը որոշ էական հարցերում հակադիր դիրք էին գրավում, որ «Լա ռեֆորմ», օրինակ եղել է անտաղանդ ու անկիրթ թերթը, ինչպես բնութագրել են Մարքսն ու Էնգելսը, իսկ «Նացիոնալը» և «Կոնստիտուցիոնել» թերթերը 1848-ի փետրվարից հետո դարձան ռեակցիոն օրգաններ: Անշուշտ հեշտ չէ հայրենական գրապահոցներում գոյություն չունեցող թերթերի էջերում որոնել Ոսկանյանի հետքերը, մանավանդ եթե հիշենք, որ դարակեսի ֆրանսիական մամուլում նյութերը հրատարկվում էին գերզանցապես առանց հեղինակների հիշատակության: Այս պարագաներում, թվում է ավելի ճիշտ կլինի ձեռնպահ մնալ հիշյալ հարցում, մինչև որ հաստատուն կովաններ կունենանք և հնարավոր կլինի ֆրանսիական մամուլում Ոսկանյանի հանդես գալը հիմնավորել

¹ Տես Ա. Գ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 302, Ա. Բ. Կարինյան, նշվ. աշխ., էջ 435, «ՀՍՍՀ պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի գիտակազմ աշխատությունների ժողովածու», N 6, մաս 1, Երևան, 1960, էջ 143, 148 և հետո, «Պատմա-բանասիրական հանդես», 1974, N 1, էջ 138 և հետո:

կոնկրետ նյութերով, առավել ևս որ ո՛չ Ռսկանյանը և ո՛չ էլ դարակեսի որևէ գործիչ ակնարկ անգամ չեն անում այդ մասին¹:

Հակառակ այն բանի, որ Ռսկանյանի գործունեության նկատմամբ դեռևս մեր դարասկզբից աճող հետաքրքրություն է ցուցաբերվում, վերը նշված արմատական հարցը, ինչպես նշվեց, մնում է չլուսաբանված: Տակավի՛ն որևէ փորձ չի արվել պարզելու Ռսկանյանի հայկական միջավայրը Փարիզում: Ընդհակառակը, կրկնվել ու թանձրացվել է այն կարծիքը, թե Ռսկանյանը կտրված է եղել հայկական կյանքից ու միջավայրից: Ավելին, անհիմն այդ դրույթը տարածվել է Ռսկանյանի փարիզյան շրջանի քսանամյա ամբողջ ժամանակաշրջանի վրա, որքան էլ տարօրինակ է ներառյալ նաև նրա հրապարակախոսությունը: Մոտիկից կատարվող ուսումնասիրությունը, սակայն, ոչ միայն հերքում է նման պատկերացումը, այլև ցույց է տալիս, որ, ընդհակառակը, նա ակտիվորեն միջամտել է Փարիզի հայոց կյանքին, որոշ հարցերում նույնիսկ էական ներգործություն ունեցել հենց 1847 – 1854թթ. տարեշրջանում, որ այժմ զբաղեցնում է մեզ:

Ռսկանյանի մի հոդվածից պարզվում է, որ նա Փարիզ հասնելուց երկու շաբաթ անց եղել է Տատյանների հարկի տակ: Երիտասարդ Տատյաններն իրենց իսկ ձիթերի և անհատական հատկանիշների շնորհիվ որոշակի դեր ու կշիռ ունեին փարիզահայ միջավայրում: Հենց նրանց հարկի տակ, թերևս նաև ընկերակցությամբ է Ռսկանյանը հանդիպել Լապրուսին:

Նույնը պիտի ասել նաև Փարիզում գտնվող և դարձյալ որոշակի դիրք ունեցող Նուպարյանների մասին, որոնց հետ, ի դեպ, Ռսկանյանը մոր կողմից ազգակցական առնչություն ևս ուներ, իսկ նրանցից մեկի՝ Փարիզում գտնվող Նուպարի հետ նույնիսկ անձնական մտերմություն էր հաստատել դեռ Ջմյուննիայում, Փարիզ մեկնելուց ոչ շատ առաջ²: Ինչպես տեսանք նրանք առմիշտ բաժանվել էին առաջին շփումներից հետո: Ու

¹ Մեր փորձերը՝ ի հայտ բերել Ռսկանյանին պատկանող որևէ հոդված ֆրանսիական պարբերականներում, արդյունք չեն տվել:

² Այս առթիվ Հ. Օշականը նկատում է. «Արյան ձայներուն վրա անսասան է իմ հավատքը: Ռսկանի երակներուն մեջ կհոսեր մերձավոր արյուն մը անոր, որ կխոսեր դարձյալ Նուպար Նուպարյանի երակներուն մեջ» (Հ. Օշական, Համայնապատկեր արևմտահայ գրականության, էջ 244):

այդ բաժանումն այնքան վճռական էր, որ Փարիզում կողք կողքի գտնվելով, նրանք այլևս շփումներ չունեցան: Դատապարտելի ոչինչ չկար, եթե նյութական նեղ կացության մեջ գտնվող Ռսկանյանը օգնության հարցով դիմեր Նուպարյաններին: Բայց նա, Մ.Նալբանդյանի խոսքերով ասած, որքան էլ «աղավաղյալ վիճակում էր գտնվում»¹, այդ էլ ճարեց. «Մեր ազգականներեն մեկը՝ Նուպար էֆենտին (այսօր՝ Նուպար պեյ) մայրաքաղաքս կգտնվեր բարձր պաշտոնով, – գրում է Ռսկանյանը: – Ներելի է մեզ կարծել, որ եթե իրեն դիմելու խոնարհեինք և մեր կարոտությունը հայտնեինք վայրկյան մը չէր դեղևեր մեզ օգնելու, իր ազգականության համար չէ նե, զոմե մեզմե առած քանի մը դասերուն համար... Աղքատության մեջ գտնվել ենք, բայց ոչ նվաստության, կյանքը մեզի համար այնքան սիրելի չէ, որ մահեն առաջ նվաստություն ընտրենք...» («Արևմուտք», 1859, էջ 130):

Դա Ռսկանյան մարդու կայուն խառնվածքի դրսևորումն էր, խառնվածք, որ նա անզիջում պահպանեց մինչև կյանքի վերջը: Սակայն այս առումով էլ խոսքը չի կարող վերաբերվել անձնական մտերմությանը, նույնիսկ հոգեկան մերձավորությանը, առհասարակ դժվար է նշել որևէ հայ գործչի, որի հետ Ռսկանյանը անձնական մտերմություն լինի հաստատած: Խոսքը փարիզյան հայկական ընդհանուր մթնոլորտի, նրա միջավայրում ապրող հայության մասին է: Իսկ «Ֆրանսա, մանավանդ Բարիզ այդ տեսակետով 1840-են սկսյալ կդառնար նշանավոր խառնարան մը հայու համար, զի հոն կդարձվեր հեղաշրջումը թրքահայ միտքին, լեզվին և գրականության, վարչական կազմին և բուն իսկ ժողովրդյան կյանքին, որ խորունկ ներգործությունը պիտի կրեր այս շարժման»²: Հայտնի վերապահումով ընդունելով Ա.Ալալոյանյանի այս դրույթը, պիտի խոստովանել, որ արևմտահայ մտավոր կյանքին Փարիզը, ֆրանսիական առաջավոր գաղափարախոսությունը որոշակի սնունդ ու մղում էին տալիս: Ինչպես Մ.Մամուրյանն է նկատել՝ «Ֆրանսան տվավ մեզ միտքի սնունդ, սրտի զգացում, նույնպես և մեր կրից ճարակ...»³: Խոսքն,

¹ Մ.Նալբանդյան, ԵԼԺ, հ. 4, էջ 54:

² Ա.Ալալոյանյան, Ազգային սահմանադրությունը, իր ծագումը և կիրառությունը: Տես «Ընդարձակ օրացույց և Փրկչյան հիվանդանոցի», Կ.Պոլիս, 1910, էջ 231:

³ Վ.Սկուր, Իվանեո, Ջոյուտնիս, 1872, էջ 3 (Առաջաբան):

անշուշտ, գերազանցապես, եթե ոչ միայն, վերաբերում է Ֆրանսիայում ուսում ստացող հայ երիտասարդությանը, ավելի ճշգրիտ՝ երկրի բարձր ուսումնական հաստատություններում սովորողներին, որոնց իրական փափագն էր՝ «նպաստել հայ ժողովրդի ինքնագիտակցության զարգացմանը, կրթության և լուսավորության ծավալմանը հայ իրականության մեջ»¹:

Հիրավի շատ էր շլացուցիչ Ֆրանսիան ասիական միջավայրում ծնված ու սնված հայ երիտասարդների համար: Բայց այդ «ակնախտիղ Ֆրանսիան» դյուրին կերակուր չէր. «Հոն խոշոր քաղաքականություններ կրգգային հայուն համար թելադրիչ, բայց անմերձենալի, հոն կար ընկերական բարդ կյանք մը և խնդիրներ, որոնք հայուն կենցաղակերպին հետ հագիվ թե նմանության եզրեր ունեին և հոն կար նյութապաշտ աշխարհայաց մ' որ հայուն տոհմային կյանքին վրա պատվաստվելով կրնար միայն վրդովիչ տարաբաղադրիչ ազդեցություն մը ունենալ: Բայց ամեն բանե ավելի հոն կային մտավոր և քաղաքական ազատության ձգտումներ, որոնց հպումը բավական էր հայուն կես-գիտակից և զգայուն հոգին թունդ հանելու...»²:

Արևմտահայ գրագետի այս բնութագրությանը կարելի է հավելել արևմտահայ պատմաբան Ալպոյաճյանի նույնպես ճիշտ դիտողությունն այն մասին, որ Ֆրանսիա ուսումնառության մեկնողները հիմնականում «Կարևոր ուժեր, մտքով ընդունակ, ուշիմ և վառվառուն երիտասարդներ էին՝ պատրաստ ծառայելու ազգային լուսավորության գործին»: Խթանող շփումները, գաղափարական լուրջ ներգործումները, գործունեության ակտիվ մղումները միաժամանակ ուղեկցվում էին ֆրանսիական ոգու դրոշմով, որն իրենց հետ Թուրքիա էին բերում ուսում առած հայ երիտասարդները՝ յուրաքանչյուրն իր չափով, նաև ուրույն ըմբռնումով: Այդ ոգու, այսպես ասած, արտածումը Ֆրանսիայի քաղաքականության ելակետային նպատակներից մեկն էր, և այդ մասին ազդարարվում էր ամեն հարմար առիթով ու հրապարակայնորեն: 1850-ի աշնանը Փարիզի առևտրական բարձրագույն դպրոցի ավարտավկայանները և պատվո մեդալներ են ստացել

¹ «Հայ նոր գրականության պատմություն», հ. 2, Երևան, 1962, էջ 15:

² Մ. Հ. Անանիկյան, Զննական ուսումնասիրություններ, Նյու Յորք, 1932, էջ 236:

միանգամից վեց հայ երիտասարդներ (Կ. Պոլսից՝ Կ.Յուրյուն-
յանը, Հ. Ներսույանը, Հովհ. Թույսյուզյանը, Կյուրմյուշյանը և
Կահիրեից՝ Հարություն և Ստեփան Խաչատրյանները): Ինչպես
հաղորդվել է ֆրանսիական «Ժուռնալ տե Տեպա» պարբերակա-
նում, հանդես գալով ճառով, առևտրի պաշտոնյա Դյուման նկա-
տել է, որ «արևելահայ պատանյաց այս օրինակ ուսմանց մեջ
հառաջադիմությունը խիստ բարի հետևություններ պիտի ունե-
նա Արևելքի հետ Գաղղիո ունեցած ամեն կերպ կապակցություն-
ները ավելացնելու համար»¹:

Արևելյան սանիկների նկատմամբ ֆրանսիական գործիչնե-
րի հետաքրքրությունը չէր մարում մահ նրանց վերադարձից
հետո էլ: Կարելի է ենթադրել, որ այդ գործիչներին իզուր չէր
հետաքրքրում, թե ինչով են զբաղված իրենց նախկին ուսանող-
ները, ինչ պաշտոններ են զբաղում, մույնիսկ ինչպիսի ուղեգիծ
են վարում: Դա պարզվում է շատ տարիներ անց, ֆրանսիական
հրապարակախոսների առանձին հոդվածներից, որոնք թարգմա-
նաբար արտատպվում էին ժամանակի հայ մամուլում: «Արշա-
լույս արարատյանում», օրինակ, հրապարակվել է Ժիլե-Տամիթի
ընդարձակ հոդվածը՝ «Գաղղիական քաղաքակրթությունը և
Գաղղի աշակերտները Արևելքի մեջ» խորագրով²: Հոդվածագիրն
ուղղակի նկատում է, որ «Ծերունի» Թուրքիայում ձեռք բերված
«քիչ մը» առաջադիմությունը ներքին կյանքում և արտաքին
հարաբերություններում «միայն քրիստոնեից ձեռք եղած է, թեև
շատ արգելքներու պատահած ըլլան»: Խիստ քննադատելով
սուլթանին, նա դրվատում է Ռեշիդ փաշայի ուղեգիծը, ապա
անդրադառնում հայ այն երիտասարդներին, որոնք Փարիզի
բուհերում և ուսումնարաններում ցուցաբերում են «հազվագյուտ
հաջողականություն»:

«Համաշխարհային մայրաքաղաքում», ինչպես սովորա-
բար անվանում են Փարիզը, հայկական այն միջավայրը, որ
հավանաբար ունեցել է Ոսկանյանը, կայուն չէր: Ընտրյալ ուսա-
նողները գալիս, կյրություն էին ստանում և մի քանի տարի հետո
վերադառնում կամ ուսումնառությունը շարունակում այլուր:

¹ «Արշալույս արարատյան», 29 սեպտեմբերի 1850, N 373:

² Տես մույն տեղում, 5 և 9 սեպտեմբերի 1858, N 579 – 580:

Սակայն հայ ուսանողների միջև պահպանվում էր հաջորդականությունը. այս կամ այն խումբը մի որոշ ժամանակ զուգահեռաբար սովորում էր հաջորդ խմբի հետ՝ կազմելով բնականաբար ստեղծվող այն ընդհանրությունը, որի շաղախն ազդեցությունն էր, լեզուն, ուսանողական կյանքը:

Մի քանի տասնյակի հասնող փարիզյան հայ սովորող երիտասարդները, սակայն, մի միասնություն ներկայացնել չէին կարող: Նրանք, իհարկե, փոխադարձ կապերով ու շփումներով կապված էին միմյանց, ունեին ընդհանուր հետաքրքրություններ, նույնիսկ համանման ազգային նպատակներ և դրանցից առավել՝ ազգային ընդհանրություն: Բայց պակաս չէին նաև նրանց միմյանցից տարանջատող հանգամանքները: Նույնիսկ նրանց մեծ մասի՝ ունևոր, ազդեցիկ ընտանիքներից սերված լինելը չէր կարող կայուն հիմք լինել, որպեսզի նրանք արմատապես միավորվեին: Գերդաստանների, նրանց ծնողների կամ հովանավորող-խնամակալների անմիասնությունը, հաճախ նաև շահերի հակադրությունը, հասարակական անհամատեղելի դիրքորոշումը անխուսափելիորեն իրենց կնիքն էին դնում նաև փարիզյան հայ ուսանողների փոխհարաբերությունների վրա: Բայց դրանից ավելի նրանց տարանջատում էին գաղափարական, երբեմն էլ դավանաբանական զանազանությունը, տարբեր ուսումնական հաստատություններում գտնվելը, ուրեմն նաև՝ տարբեր գաղափարական սնունդ ստանալը, անձնական նպատակամղումները և այլն:

Այս իմաստով վերապահումով պետք է վերաբերվել արևմտահայ պատմաբանի այն կտրուկ դրույթին, թե Փարիզում ուսում առնող հայ երիտասարդները «միևնույն գաղափարներով խանդավառվեցան ու գրավվեցան և միևնույն ներշնչումով վառվեցան»¹: Կտրուկ է նաև Մ.Անանիկյանի հետևությունը, թե իբր «Ֆրանսայեն եկողն ավ՝ եթե մինչև իսկ արմատական ըլլար՝ դարձյալ ուներ ազգասիրական այն վառ զգացումը, որուն մեջ տակավ կհալեր պահպանողականի և արմատականի սուր հակադրությունը»²: Ազգային նպատակամղումը որքան էլ այն

¹ *Ա Ալպոյանյան*, նշվ. աշխ., էջ 234:

² *Մ. Անանիկյան*, նշվ. աշխ., էջ 236:

խմորը տեղը բերող թթխմոր էր, չէր կարող, այսուամենայնիվ, համաձուլել, «բարեխառնել» պահպանողականին և դեմոկրատին, եթե նրանք, իրոք, համոզված էին իրենց դավանանքում: Մյուս կողմից նույնիսկ ֆրանսիական, փարիզյան միևնույն մթնոլորտը, Ֆրանսիայի ընդհանուր մշակույթն ու այնօրյա առօրյան, չմոռանալով նաև նրանց ներքին հակասություններն ու հակադրությունները, տարբեր ազդեցություն թողեցին միասնություն չկազմող հայ ուսանողության վրա: Դ-ա ցցուն ձևով երևան եկավ և դրա հաստատումը եղավ նյւանց հետագա գործունեության տարանջատվածությունը, խճանկարային պատկերը: Հայտնի է, որ նրանցից մի քանիսը (Օտյան, Մերվիլյան, Ռուսինյան և ուրիշներ), իրոք, հայ իրականություն փոխադրեցին ֆրանսիական ազգային, առաջադիմական մտայնությունը, ուրիշները հեռու մնացին հայ հասարակական կյանքից, ազգային շահերի կողքից անցան, իսկ ոմանք էլ համալրեցին հետադիմական ճամբարը, էլ չենք ասում նրանց մասին, ովքեր հարազատ մնացին ավանդական-փաշայական մտայնությանը, ազգությունը պատվանդանին դարձնելով սուլթանական աստիճանասանդուղքի համար նույնիսկ մասնակից եղան հայ դեմոկրատիայի դեմ մղվող պայքարին ու հալածանքներին:

Հայ ուսանողական Փարիզից բացի, նույն 40-ականներին կար նաև մի այլ «հայկական» Փարիզ: Դ-ա հայ վաճառականական խավի Փարիզն էր, նաև այն Փարիզը, որտեղ բարգավաճությամբ գործում էր Մխիթարյան միաբանության ներքո գտնվող հայկական դպրոցը՝ վարդապետ կառավարիչ-դասատուներով և մի քանի տասնյակի հասնող հայ աշակերտներով: Այստեղ նույնպես ֆրանսիական ոգու ու մթնոլորտի ազդեցությունը լավագույն դեպքում այլազան էր, եթե չասենք՝ ոչ նորգործուն, չմոռանալով առանձին դրսևորումներ, որոնք որքան անսպասելի, նույնքան էլ անցողիկ էին, ինչպես դա տեղի ունեցավ Մխիթարյան դպրոցում:

Եվ ահա, ի տարբերություն այդ բոլորի և այդ ամենի, Մտ.Ոսկանյանին մենք տեսնում ենք ֆրանսիական ոգով լիապես ներծծված, Ֆրանսիայում մղվող սոցիալակն-հեղափոխական պայքարի հորձանուտում: Պայքարի ելած ֆրանսիացու հետ նրա միաձուլվելը, որքան էլ դա թեժ ժամանակի արայունք էր, Ոսկան-

յանին դնում է մի եզակի պատվանդանի, որով նա ոչ միայն տարբերվում է յուրաքանչյուր «փարիզցի» հայից, այլև իր գործելակերպով ու գաղափարախոսությամբ, ինչպես կոտսնենք հետագայում, հակադրվում է նրանցից ամեն մեկին: Իզուր չէր, որ նա միակն էր, որ հայտնվեց Փարիզի բարիկադների վրա կամ ցուցարարների հոծ շարքում՝ զինակիր ու դրոշակակիր¹: Դրանով հանդերձ Ստ. Ոսկանյանը մնում էր իր ժողովրդի զավակը, նրա կացությամբ ապրող ու նրա ճակատագրով մտահոգված մի երիտասարդ, որ իր ազգային-հասարակական պարտքը չմոռացավ ոչ մի օր: Այս ևս հետագայում ակնառու կդառնա:

Ու քանի որ նա ազգության շահերով էր ապրում ու շնչում չէր կարող մեկուսացած լինել «փարիզցի» իր ազգակիցներից: Կոնկրետ փաստեր չունենալը չպիտի խանգարի ենթադրել, որ նա գոնե երբեմն լինում էր հայկական միջավայրում, շփումներ էր ունենում և կապեր պահպանում հայ ուսանողների, իր հասակակիցների, առնվազն վիճակակիցների հետ, մտքեր փոխանակում, օր ու ժամ անցկացնում նրանց ընկերակցությամբ: Նման անձնական շփումները Ոսկանյանի համար հավանաբար բուռցիկ բնույթ էին կրում: Մի վկայությունից, օրինակ, հայտնի է դառնում, որ Փարիզում ուսում ստացած և բավականին մեծ համբավ թողած, ապագա անվանի ճարտարապետ Նիկողոս Գալֆայանի հետ Ոսկանյանը միայն մի անգամ է հանդիպել՝ այն էլ «հազիվ թե քանի մը ըուպե»²: Բայց անձնական շփումներից անկախ, տեղի են ունեցել համախմբվելու փորձեր: Այս դեպքում միայն կարող էր առաջանալ որևէ քայլի դիմելու, համատեղ գործելու գաղափարը, որի կոնկրետ իրագործման առաջին նշանակալից փորձի մասին վկայությունները և՛ շոշափելի են և՛

¹ Կան, իհարկե, առանձին հիշատակություններ այն մասին, որ 1848թ. ֆրանսիական հեղափոխությանը մասնակից են եղել Հ.Շիշմանյանը (Ճերենց) և Ի.Արամյանը կամ արևելահայերից Պետրոս Շանշյանը (*Ահովհաննիսյան*, նշվ. աշխ., հ. 2, էջ 54): Չբացառելով այդ, այսուամենայնիվ պիտի նկատել, որ այդ մասնակցության մասին, բացի սոսկ հիշատակությունից, այլ վկայություն և հիմնավորում դեռևս հայտնի չէ, առավել ևս դժվար է խոսել նրանց ակտիվության մասին այն չափով, որքան դա հանդես է բերել Ստ. Ոսկանյանը 1848-ին և 1849-ին: Այլ է մյուս երկրներում ծավալված հեղափոխական շարժումների հայ մասնակիցների, ասենք Հակոբ Մելքոնի կամ ուրիշների հարցը:

² «Արևմուտք», 1 մարտի 1859, N 5, էջ 34:

չափազանց ուշագրավ:

Խոսքն այն մասին է, որ 1849-ի առաջին կեսին Սո.Ոսկանյանը մեկն էր նրանցից, ովքեր Փարիզում նախաձեռնել էին հիմնելու մշակութային ընկերություն՝ նախօրինակ ունենալով Ջոյունիայի Սյունյաց և Կ.Պոլսի Համազգյաց ընկերությունները, որոնք ժամանակին չափազանց արդյունավետ գործունեություն էին ծավալել, բայց կարճատև գոյությունից հետո խափանվել էին: Ավելին, նա, անշուշտ ոչ միայնակ, կոնկրետ քայլերի է դիմել, գրել է ընկերության նախնական հայտարարությունը: Ընկերության հիմնարար կորիզը՝ քսան մարդ, ունեցել է հավաքույթներ, որտեղ քննվել են ընկերության խնդիրները, նրա սկզբունքները, որոնց սահմանման գործում ակտիվ դեր է կատարում Ոսկանյանը: Դժվար է ստույգ մատնանշել ընկերության հիմնադիրների շրջանակը, բայց Ա.Մեզպուրյանը Ն.Ռոսինյանի կյանքի վարիզյան տարիներն ուրվագծելով, գրում է, որ նա «ուսանողության շրջանին կմտերմանա Նիկողոս Պալյանի, Գաբրիել Վ.Այվասովսքիի, Հովսեփ Պեյրանի, Խաչատուր Պարտիզպանի, Հակոբ Արզումանի, Ստեփան Ոսկանի, Խաչատուր Միսաքյանի և ուրիշ մտավորականներու հետ: Ֆրանսիայի ուստանին մեջ ամենքն ալ, իրենց մասնագիտական զբաղումներեն դուրս, կհավաքվին, կխոսակցին, կգրեն, Արարատյան մշակութային միություն մը կհաստատեն, տոհմային դաստիարակության և մանկավարժության նյութերու շուրջ բարեկամական ասուլիսներ տեղի կունենան, զրական խնդիրներ կհուզին և կլուծին»¹: Հավանաբար այդ մտավորականներն էլ կազմել են Արարատյան ընկերության կորիզը:

Սկզբունքային տարածայնության հետևանքով Ոսկանյանը, երբ դեռ ընկերությունը սաղմնային վիճակում էր, հեռացավ: Հավանաբար նա միակը չէր, որ հեռացավ նոր-նոր ստեղծվող ընկերությունից և այն, ինչպես Ոսկանյանն է վկայում, «չժնված մեռավ»: Մեզ համար հետաքրքրական է ոչ միայն Ոսկանյանի փորձը՝ մի շարք ազգակից համախոհների հետ հիմնել առանձին ընկերություն Փարիզում, այլ նաև այն սկզբունքը, որ նա ուզում

¹ Ա Ն. Մեզպուրյան, Հայ և ծագումով հայ բժիշկներ, հ. 1, Իսթանբուլ, 1950, էջ 124:

եր դնել նոր ստեղծվող ընկերության հիմքում: Պարզվում է, որ նա առաջադրում էր կրոնից հեռու մնալու սկզբունքային պայմանը, գտնում էր, որ կրոնավորներին մասնակից չպետք է դարձնել ընկերության գործունեությանը: Մենք դեռ կծանոթանանք կրոնի և կրոնավորների նկատմամբ Ռսկանյանի ունեցած դիրքին: Բայց այստեղ նշենք, որ նա իր լայն գործունեության հենց սկզբնաշրջանում մերժում էր եկեղեցու գործիչների որևէ մասնակցությունը, նույնիսկ որևէ դերը աշխարհիկ գործերին, առավել ևս նրա լուսավորության ասպարեզում: Այդ կարծիքին չէին, սակայն, ընկերության մյուս հիմնադիր նախաձեռնողները, թերևս նրանց մեծամասնությունը: Նրանց մեջ, հավաքությներից մեկի ժամանակ Ռսկանյանը տեսավ այն ժամանակ Փարիզում գտնվող Մխիթարյանների Մուրադյան վարժարանի տնօրեն Գ.Այվազովսկուն և մի այլ կրոնավորի, հավանաբար Ս.Թեոդորյանին կամ Գալֆայան երկու եղբայրներից մեկին՝ դարձյալ վարժարանից, վարդապետական վեղարներով: Դա էլ քավական էր, որպեսզի նա հեռանա, հավանաբար ոչ առանց համառ փորձերի՝ համոզելու իր համախոհներին՝ հեռու մնալ «արատավոր փիլոն» կրողներից: Ռսկանյանը միայն տասը տարի հետո վերադարձավ նոր ընկերություն հիմնելու գաղափարին և ահա այդ առթիվ էլ նա ստիպված եղավ որոշակի ակնարկներով և ուղղակի վկայություններով խոսել 1849-ին ընկերություն հիմնելու անհաջող փորձերի մասին: Այդ ակնարկներն ու վկայությունները ցրված են Ռսկանյանի մի քանի հոդվածներում (տե՛ս «Արևմուտք», 1859, էջ 11 – 13, 56, 153 – 156), որտեղ և նա բացահայտում է այն սկզբունքը, որ պետք է իր կարծիքով դրվեր ընկերության հիմքում: «Համոզված էինք..., – գրում է նա, – թե կրոնքը ավելորդ, չըսենք նեղություն է մեր դրոշին, որ ազատությունեն ուրիշ դրոշմ չէ կրեր երբեք: Համոզված էինք... թե ողորմելի ժողովուրդի մը ապառնի վիճակը հավատքով չպատրաստվեր»: «Անդրդվելի համոզմունք» էր դա, «որ Արարատյան ընկերությունեն հրաժարել տվավ զմեզ, – վերհիշում է Ռսկանյանը, – ...որ քսան հայու առջև, կիրավիրեր, կստիպեր պ. Հ.Կոճիկյանը, կրոնք չխառնել իր շինելիք ընկերության մեջ», սակայն «Կոճիկյան պ. Հակոբը մորուքին հետ սկսավ խաղալ, կրոնամոլությունը չուզեց լսել, և լսել չուզողին ավելի խուլ կա՞»

արդյոք մարդերու մեջ...»: Ըստ երևույթին Կոնիկյանի ազդեցությունը որոշիչ էր և հենց նրա ուղեկցությամբ էին «Գ.Ալվազովսկին և մի ուրիշ կրոնավոր» հայտնվել ընկերության հիմնադիր շարքում:

Մի հետաքրքրական վկայություն ևս թողել է Ստ. Ոսկանյանը: Նշելով, որ խոսքը վերաբերում է տասը տարի առաջ՝ այսինքն՝ 1848-ին կատարված փորձերին, նա «Արևմուտքի» 1859թ. հոկտեմբերի 15-ի համարում ծանոթագրում է. «պ. Թ... պիտի հիշե, որ իր սենյակին մեջ գրեցինք Արարատյան ընկերության, որ այն ատեն ուրիշ անուն ուներ¹, առջի հայտարարությունը... և պ. Մ... պիտի հիշե այս հայտարարության եղած անհեթեթ պատասխանը պոլսեցի հայե մը, որ հիմա...»²:

Ինչպես պարզվում է այդ վկայություններով, խոսքն Արարատյան ընկերության մասին է: Ի՞նչ ընկերություն էր դա:

Ծնվելուց առաջ մեռած այդ ընկերության մասին շատ բան չէ, որ հայտնի է, բայց նրա ծրագիր-հայտարարությունը ժամանակին՝ 1850-ի հունիսին ընդունվելուց մեկ տարի հետո, հրատարակվել է մամուլում³: Հայտարարությունը, որ թվագրված է «7 հունիս 1848», ընկերության անունից ստորագրել են Ոսկանյանի ապագա մտերիմ և «Արևմուտքի» աջակից Հ.Արզումանը (Հովհ. Արզումանյանը)՝ որպես նախագահ և այն ժամանակ Փարիզում սովորող Հ.Շիշմանյանը (հետագայում Ծերենց),

¹ Հետագայում՝ 1864-ին իր հանդեսում տպագրած մի հոդվածի ակնարկներից կարելի է եզրակացնել, որ Ոսկանյանը նկատի ունի Արարատյան ընկերությունը և որ այն սկզբնապես, նախքան կազմակերպորեն ձևավորվելը, կոչվում էր Պարբեյան (տե՛ս «Արևմուտք», 1 փետրվարի 1864, N 1, էջ 5): Այդտեղ նա խոսում է «մեռած ընկերություն մը» մասին, որի անդամն էր նաև Սերովյե Վիչենյանը. «Պարբեյան ընկերության վաղեմի անդամներն մեկուն շնորհքով», – գրում է Ոսկանյանը, – «Հայաստանի կանգնումը կամ վերստին ծնունդը կամ հայությունը» կտեսնենք:

² Ենթադրում ենք, որ խոսքն այստեղ կամ Սարգիս Թեղոդյանի կամ Հով. Թույսյուզյանի (Թ.) և Խաչատուր Միսաքյան (Մ.) մասին է, որոնք այդ տարիներին գտնվում էին Փարիզում և հետագայում մի անգամ չէ, որ առնչվել են Ոսկանյանի հետ, իսկ Թույսյուզյանը, ավելին, համոզեսի աջակիցն էր ու աշխատակիցը: Դժվար է ասել, թե ո՞վ է «պոլսեցի հայը» ինչպես և՛ պարզել նրա պատասխանի բնույթը:

³ Տե՛ս «Արշալույս արարատյան», 23 հունիսի 1850, N 366, նաև *Ա Ալպոյանյան*, Ազգային սահմանադրություն, իր ծագումը և կիրառությունը («Ընդարձակ օրացույց ս. Փրկչյան հիվանդանոցի», Կ. Պոլիս, 1910, էջ 244 – 246:

որպես ատենադպիր: Հայրենասիրությամբ, ազգի հոգսերն ամոքելու, նրան լուսավորելու հոգսով տոգորված մի վավերագիր է դա, որ դրականապես է բնութագրում Արարատյան ընկերության հիմնարարական կորիզի մեջ մտնող փարիզյան հայ ուսանողներին, միաժամանակ լինելով նրանց ապագա գործունեության կանխապես ազդարարված ազգը:

Կազմվելուց և ընդունվելուց մեկ տարի հետո է հրապարակ ելել այդ հայտարարությունը և հավանաբար արդեն որևէ առնչություն չուներ Ռսկանյանի հետ, որը, ինչպես տեսանք, գրել էր ընկերության առաջին ծրագրային հայտարարությունը: Համենայն դեպս նրանում որևէ վերապահում չկա կրոնական գործիչներին ընկերությանը մասնակից չդարձնելու մասին, որ պնդում էր Ռսկանյանը: Բայց անկախ դրանից, հայտարարության և Ռսկանյանի դավանած սկզբունքների ու հետապնդած նպատակների միջև քիչ ընդհանրություն չկա: Ընդհանուր ոգուց բացի, Ռսկանյանին հարազատ էր այն գաղափարը, որ ազգի խեղճ վիճակի պատճառը «ամեն բանն ավելի տգիտությունն է», ընկերության նպատակը՝ գլխավորապես ազգին դաստիարակությունը հառաջացնել», ընկերություններ հիմնելու անհրաժեշտությունը, կրթական գործը բարելավելու և զարգացնելու խնդիրը, գրատպությանը զարկ տալու և գրքերը էժան գնով կամ ձրի բաժանելու պահանջը, «աղքատին քսակին դարման գտնելու», ազգի... «մեկ վերքին տկար սպեղանի մը պատրաստելու» ձգտումը և այլն:

Անշուշտ վավերագիրը հայտնի չափով այլ բովանդակություն ու ոճ կունենար, եթե Ռսկանյանի կազմած սկզբնական տարբերակը հրատարակվեր: Խիստ ընդհանուր են նրա առաջադրանքները և բոլորովին անորոշ այն ուղին, որով ընկերությունը պետք է հասներ իր նպատակներին: Թերևս այդ պատճառով էլ ընկերության գործունեության, նույնիսկ նրա իրական ստեղծման մասին որևէ կոնկրետ վկայություն չկա¹: Ավելի հավանական է, որ այն իրոք, սաղմնային վիճակում էլ մնացել է,

¹ Ծերենցը հետագայում՝ 1879-ին հողված է հրատարակել Արարատյան ընկերության մասին (տե՛ս «Փորձ», 1879, N 1):

թերևս խափանվել տարածայնությունների հետևանքով կամ հակառակորդների ջանքերով: Հենց ընկերության հայտարարության մեջ ասվում է, որ կան ընդդիմացողներ, նույնիսկ ընկերությունն անօգուտ համարողներ, որոնք նաև հայտարարում էին նրա նախաձեռնողներին՝ «Դուք չեք ճանչնար ազգին վիճակը և անոր դարմանը»: Ոսկանյանը, ինչպես տեսանք, վկայում է, որ «պոլսեցի հայը» անհեթեթ պատասխան է տվել հայտարարությանը: Հավանաբար այլ դժվարություններ և խոչընդոտներ էլ են առաջացել, և հակառակորդները միայն անհեթեթ պատասխաններով չեն բավարարվել:

Արարատյան ընկերություն հիմնելու փորձերը, նրա նպատակների սահմանումը, թեկուզ միայն միավորվելու ձգտումն էական նշանակություն ունեցան Ոսկանյանի և ոչ միայն նրա համար. գիտակցվեց ազգության ցավերը կոլեկտիվ ջանքերով ամոքելու, գործելու և «օգտակարներուն մեջեն ավելի օգտակարը և ժամանակին հարմարն» անելու անհրաժեշտությունը: Ըստ այդմ ոչ պակաս էական է այն, որ խոսքը վերաբերում էր ամբողջ հայ ժողովրդի, նրա երկու հատվածների «ուսումնական հառաջադիմությանը», ինչպես դա կարելի է հասկանալ հայտարարություն-ծրագրից: Պատահաբար չէր ընկերությունը կնքվում հայ ժողովուրդը խորհրդանշող «սուրբ լեռան»՝ Արարատի անունով և իզուր չէր հայտարարությունը սկսվում այսպիսի նշանակալից խոսքերով. «Ազգի մը ընտիր մասին սիրտը միայն կզգա ազգ բառին նշանակությունը, անոր միտքը միայն կրնա ունենալ ազնվական և վսեմ գաղափարներ և ինքը միայն հանձն կառնե հայրենյաց համար հոժարությամբ գրկանքներ կրել... Աս ընտիր մասին հետ է ահա մեր խոսքը, որ չեն ալ զարմանար, թե Արարատեն անբավ տարածությամբ հեռու Մեն գետին քովեն կելլեն մարդիկ ան սուրբ լեռանը անունը բարձած իրենց եղբարցը իյնալու համար: Արարատ ականատես հայ փառաց և թշվառությանց, իր անմահ անունովը հավիտենական վկա մ' է հայոց բաղտին: Մենք այս լեռան անունը առնելով մեր ընկերության, մեր ազգին պատմությունը և այսօրվան վիճակին պատկերը առած կիջնանք մեր եղբարցը մեջ...»:

Այս տրամադրությունը Ոսկանյանը ժառանգել էր դեռևս աշակերտական սեղանից, և աստիճանաբար դա վեր էր ածվում

համոզմունքի, որ հետո պիտի բանաձևվի այսպես. «Հայաստանի այն կողմը... մեր սուլար խելքով լուսավորություն կուզեինք հաստատել, երբ դեռ աշակերտ էինք Մեսրոպյան վարժարանի մեջ... «Հայաստանեն դուրս հայերուն լուսավորություն չկա» մեր բերնի առօրյա խոսքն էր այն ժամանակ: Այսօր ևս նույնը կկրկնենք ավելի համոզմունով վասնզի ավելի ուսում առինք և ազգեր տեսանք» («Արևմուտք» 1859, էջ 153 – 154):

Այսպիսով Փարիզի հայկական միջավայրը, նրա հետ Ռսկանյանի ունեցած սերտ շփումները, կոնկրետ՝ Արարատյան ընկերություն հիմնելու ջանքերը, նրա մեջքն ու հայացքը Մենայի ավից բևեռում էին Արարատին՝ Հայոց աշխարհին ու հայ ժողովրդին՝ նրա ցավերն ամոքելու մտահոգությամբ ու նրան աջակից լինելու իղձով. պատասնեկան փափագից ձուլելով համոզմունք, որ պիտի դառնա նրա նշանաբանը:

Փարիզի հայկական միջավայրը, Արարատյան ընկերությունը դարձյալ ոչ պակաս կարևոր մի էական նշանակետ երևան հանեցին Ռսկանյանի կյանքում և ապա գործունեության տևական ելակետ տվեցին. նա, տակավին քսանչորսամյա երիտասարդ, կանգնեց փարիզցի քսան ազգակիցների առջև ու համառությամբ պնդեց իր կարծիքը մի այնպիսի արմատական, դարերի ավանդությամբ կարծրացած հարցում, որպիսին կրոնի ու եկեղեցականների նկատմամբ բռնելիք դիրքը և դիրքորոշումն է: Դեմ առ դեմ նա հակադրվում ու հակաճառում էր հենց կրոնավորներին և այնպիսի մարդկանց, որոնց խոսքը համարյա օրենք էր շրջապատի, մինչև անգամ ամենագոր ամիրաների համար: Դրանք արդեն հայտնի գործիչներ էին, նույնիսկ որոշակի ծառայություն էին թողել քիկունքում, ինչպես կտեսնենք այն ժամանակ, երբ Ռսկանյանը ճակատ առ ճակատ կբախվի նրանցից ոմանց հետ՝ առանց վահանի, բայց սրածայր գրչով: Այստեղ միայն նշենք նրանցից երկուսի անունը՝ Գաբրիել Այվազովսկի և Հակոբ Կոճիկյան: Ռսկանյանը փորձեց նրանց, թերևս երիտասարդական խանդավառությամբ, որ նրա խառնվածքի անբաժան հատկանիշն էր, համոզել, որ ստեղծվող ընկերությունը, որպես սկզբունք հռչակի, թե «կրոնական նպատակ չունի» և երբեք չի ունենա, այլ խոսքով բաժանման պատենշ էր դնում կրոնի ու աշխարհիկ կյանքի, կրոնավորների

ու աշխարհիկ գործիչների միջև: Համոզել նա չկարողացավ, և տարօրինակը հենց այն կլիներ, եթե նրան դա հաջողվեր¹: Չափազանց կանխահաս և արդեն հալածանքով դատապարտված գաղափար ու նպատակ էր դա ոչ միայն հայ իրականության, այլև փարիզահայ լուսավորյալ միջավայրի համար: Այո, անհնար էր մի հարվածով ջարդել ժայռազանգվածը: Մնում էր հրաժարվել սեփական գաղափարից կամ առնվազն համակերպվել: Դա էլ անհնար էր Ոսկանյանի համար: Եվ նա դիմեց իրադրության թելադրած ու միակ հնարավոր քայլին՝ թողեց համախոհ կարծված ընկերներին, որոնք ավելի կամք ունեին, քան թե «համոզումն», ու հեռացավ՝ իր դավանած գաղափարով մնալու և իր ուղիով ընթանալու վճռականությամբ:

Մի հանգամանք ևս. ընկերության հիմնադիր քսան հայագրիներից հազիվ թե որևէ մեկը չգիտեր, որ Ոսկանյանը ֆրանսիական հեղափոխության գործուն մասնակից է, անծանոթ էր նրա սոցիալական ծագմանը: Այս դեպքում քանիսի² համար էր նա հաճելի, առավել ևս ցանկալի գործընկեր. հազիվ մի քանիսի, որոնց հետագայում հանդիպում ենք Ոսկանյանի հետ գործակցե-

¹ Ըստ երևույթին այդ խնդրի շուրջ բուն բանավեճ է տեղի ունեցել: Այկնարկելով ընկերության ժողովներից մեկը, Ոսկանյանը հետագայում գրել է. «Կռնիկյան պ. Հակոբին ըրած ժողովը և իր հոն ըսած ամեն խոսքերը մի առ մի համառոտված ու պահված են» (1859, էջ 46): Նա խոստանում էր «Արևմուտքում» հրատարակել այդ սղագրությունը, բայց դա չի արել:

² Այդ առումով հետաքրքրական է Արարատյան ընկերության նախկին ատենադպիրի վկայությունը. «Արարատյան վաղամեռիկ ընկերության ունեցած բոլոր դրամը, որ յուր վերջին զանձապահը պարոն Ծանիկ Արամի բով ավանդ կմնար ընկերության վաղեմի անդամոց մեծագույն մասին հավանությամբը, զոր պարոն Ծանիկ Արամ գրավ առած է, որոշվեցավ նվիրել ի նպաստ հիմնարկության Փարիզու Արևելք կիսամսյա թերթին, զոր քանի մը ամիս ճաշակեցինք պարոն Հայկ Ոսկանյանի կենդանի գրչին շնորհիվ» («Արշալույս արարատյան», 15 նոյեմբերի 1857, N 558): Մամուլում 1852թ. սեպտեմբերին հրատարակված մի հաղորդումից պարզվում է, որ ընկերության առկա գումարը կազմում է 1208 ֆրանկ: Այդ քայլի և դեպ համապատասխանում էր ընկերության կանոնադրությանը: Այստեղից կարելի է հետևեցնել, որ ընկերության հիմնադիրների մեծամասնությունը 1850-ական թվականների կեսերին համակրանքով է վերաբերվել «Արևելքի» հրատարակության գաղափարին, նրա ատենադպիրը բարձր է գնահատել Ոսկանյանի հրապարակախոսական տաղանդը, իսկ նրա որոշ անդամներ մշտական մտերմություն պահպանեցին Ոսկանյանի հետ: Արարատյանի նախագահ Հ.Արզումանյանը նույնիսկ եղել է «Արևելքի» հիմնադիրներից մեկը, Ոսկանյանի «տասնամյա ընկերը և մտերիմ բարեկամը» (1859, էջ 32):

լիս²: Եվ այդ դեպքում նրա հետանալն Արարատյանից, առնվազն Այվազովսկու և Կոճիկյանի համար ցանկայի լինելուց բացի, կարող ենք վստահությամբ ենթադրել, նաև նպատակ էր, որին նրանք հասան, ինչպես Ոսկանյանն է արտահայտվում, «մոլորքին հետ» խաղալով: «Մեր կուրությունը, – վերհիշում է նա հետագայում, – չներեց, որ իրենց հետևենք: Աններելի կուրություն, որ դավ մը հեռուեն կնշմարե և դուռանի մը սեթևեթեն չխաբվիր... Մեր հայրենասիրական տեսիլը... կրնա սպասել դեռ երկար ատեն, մինչև որ հայերուն կուրությունը բուժի և կրոնքը, այսինքն երկնային խնդիրը չշփոթվի ազգության հետ, որ երկրային խնդիր է միայն... բայց այս առթիվ ծնած գծողությունը այնպիսի պաղություն մը կարտադրե, որ Արարատի սարերու ձյունեն չտարբերիր, այսինքն հալելիք չունի: Ահա քսության արդյունքը...» («Արևմուտք», 1859, էջ 154-155):

Ոսկանյանը չի չափազանցնում. նա, իրոք, չհալչող սառնությամբ է բաժանվել Արարատյան ընկերության հիմնադիրների մեջ հայտնված Գ.Այվազովսկուց ու Հ.Կոճիկյանից¹: Հետագա տարիներին բազմիցս նրանք բախվել են, ճակատ առ ճակատ հանդիպել, և Ոսկանյանը սուր և տաղանդավոր գրչով մերկացրել է նրանց, մտրակել ու պսակագերծ արել: Նրանք երկուսով կամ առանձին-առանձին դարձան նրա ոչ թե սուկ հակառակորդները, այլ ուղղակի ու հետևողական թշնամիները: Նեոգ ու հզոր թշնամիներ էին նրանք, բայց Ոսկանյանը ոչ մի քայլ չնահանջեց իր դիրքերից, մինչև վերջ պաշտպանեց իր դավանանքը: Կարելի է ենթադրել, որ Ոսկանյանը պաղությամբ է բաժանվել նաև Արարատյանի հայտարարությունը ստորագրող Շիշմանյան-Ծերենցիցից: Ծերենցի մասին, որքան հաջողվեց պարզել, Ոսկանյանը ոչինչ չի գրել, բայց Արարատյանի նախագահ Հ.Արզումանյանի մասին միշտ էլ լավ է արտահայտվել: Հակառակ դրան Ծերենցը, որ կաթոլիկական հավատքի էր և Փարիզից Կ.Պոլիս էր վերադարձել 1853-ին, շուրջ երեսուն տարի հետո

¹ Կա չիստատարկված վկայություն, քե իբրև Ոսկանյանը և Փարիզում գտնվող մի շարք հայ գործիչներ, որոնց թվում նաև Այվազովսկին և Կոճիկյանը, մտերմական կապերով էին կապված միմյանց հետ (Ա.Ն.Մեզպուրյան, ԳՎ. աշխ., էջ 145): Հավիվ քե որևէ հիմք կա նման ենթադրության համար:

ուրվագծել է Ռսկանյանի դիմապատկերը, իհարկե, աննպաստ երանգներով, բայց պատկերավոր, ինչ-որ տեղ թերևս նաև ճշմարտացի: «Արևելյան մամուլի» 1878թ. յոթերորդ համարում, հավանաբար տեղի տալով Մ.Մամուրյանին, հանդես է եկել մի հոդվածով, ուր ասում է. «Ահա սա մարդն, որ սկսեր է ալևորել, որ զքեզ չճանչնար և դու զինքը ճանչնալ չես ուզեր և ճանչցած լինելուդ վրա շատոնց զոջացած ես: Ահա դա ան երիտասարդն է, որ ասկեց 28-30 տարի առաջ (իմա՝ 1848 – 1850թթ.) իր երկայն մագերը ձգած՝ թևերը շարժելով փոքրիկ ու մեծին ընկեր-հաշտական քարոզ կկարդար, իր ազգին եկեղեցականները կպարսավեր և կնախատեր *եզվիթ* կանչելով և ասոնց բարև տվողները *ազգայրյաց*, կրոնամուլ, վատ կանվաներ... ետևում»¹: Նման է այդ դիմապատկերը բուն Ստ. Ռսկանյանին՝ մանավանդ, եթե դրանից մաքրվի տասնյակ տարիների փոշին: Անհաշտ ու անզիջող էր Ռսկանյանը, մինչև վերջ չհաշտվեց նա գաղափարական ու գործնական իր որևէ հակառակորդի հետ:

Արարատյան ընկերությունից հեռանալուց միառժամանակ հետո, հավանաբար 1851-ին կամ 1852 – 1853-ի ժամանակահատվածում, Ռսկանյանը թողեց Ֆրանսիան՝ դժվար է ասել իր կամքո՞վ, թե՞ ակամա: Առավել հնարավոր է, որ նա Ֆրանսիայում առանց դատ ու դատաստանի տեղի ունեցող մասսայական արտաքսումների ընթացքում ստիպված է եղել հեռանալ երկրից կամ թերևս ինքը ևս արտաքսվել է: Պատասխանելով հակառակորդներին. նա, ինչպես տեսանք, վկայում է, որ բանտից, ուր նետվել էր «ոչ թե Շանկարնիե զորապետին զինակիրներու» ձեռքն ընկնելու, այլ մատնության զոհ դառնալու հետևանքով, ազատվել է հանցանքի բացակայության շնորհիվ: Նույն առիթով նա հաստատում է, որ ներման չի արժանացել ու ոստիկանական հետապնդումների չի ենթարկվել և պնդում, թե՝ «1852 թվականին հանդարտ Բարիզ էինք և մեր գործերու կզբաղեինք» («Արևմուտք», 1859, էջ 133):

Անկախ այդ վկայություններից, արդեն մի այլ առիթով, Ռսկանյանը 1859-ին նաև վկայում է. «Ասկե քանի մը տարի առաջ... Պրյուսել կզտնվեինք»: Հայտնի է նաև, որ նա 1853 – 1854թթ. եղել է նախ Կ.Պոլսում, ապա Չմյուռնիայում: Կարելի է

ենթադրել, որ Թուրքիա է վերադարձել հենց Բելգիայից, ուր նա հավանաբար մնացել է մի կարճ ժամանակամիջոց: Չուտ կենսագրական այս փաստից առավել կարևոր են այն շփումները, որ նա ունեցել է Կ.Պոլսում ու Չմյուռնիայում, և այն գործերը, որոնց նա ձեռնամուխ եղավ այդ քաղաքներում:

Յրանսիա մեկնելուց հետո, մոտ տասը տարի անց, Ոսկանյանն առաջին անգամ էր Թուրքիա վերադառնում: Շատ բան էր նա տեսել Փարիզում, կատարյալ ուսում էր առել, մասնակցել էր հեղափոխական շարժումներին, շփվել էր ուսանողության ու բանվորության և ականավոր դեմքերի ու գործիչների հետ: Հասուն մտավորականն, անշուշտ, այլ հայացքով էր դիտում իր շրջապատը, քան տասը տարի առաջ: Նույն տեղում չէին մնացել թուրքական իրականությունը, արևմտահայ կյանքը: Պոլսահայ միջավայրում, նաև Չմյուռնիայի գաղթօջախում տեղի էին ունենում լուրջ խմորումներ, հասարակական ուժերի տեղաբաշխումներ: Ի՞նչ խավերի ու գործիչների հետ է հանդիպել, մտքեր փոխանակել Ոսկանյանը: Յավոք, կոնկրետ հիշատակություններ այդ մասին բացակայում են: Միայն երկու վկայություն օգնում են պարզելու, որ նա հանդիպում է ունեցել Օտյանների հետ, եղել է նրանց հարկի տակ և բաժանվել է փոխադարձ համակրանքով:

Այդ մասին առաջին հիշատակությունը հանդիպում է «Մասիսի» էջերում՝ վերը բերված մեղադրական հոդվածում. «Քանի մը տարի առաջ Փարիզեն Կ.Պոլիս եկած ժամանակը երևելի անձի մը տուն այցելության գնաց և սիկառն բերանը հիշյալ երևելի անձին ներկայացավ ընտանյացը մեջ՝ առանց գլխարկը (շապկա) վար առնելու...»: Մյուս վկայությունը, որ կարծում ենք անմիջական կապ ունի նախորդի հետ, թեև առանց ամսաթվի է, կոնկրետ է ու խոստուն: Պատասխանելով Օտյան որդու նամակին, որին կանոդադառնանք հետո, Մտ. Ոսկանյանը վերջում, ի դեպ, վերհիշում է, որ եղել է Օտյանների հարկի տակ, արժանացել է Գրիգորի «Մեծապատիվ հոր» հյուրասիրությանը և այդ առթիվ շնորհակալություն է հայտնում:

Մտ. Ոսկանյանին պատվողը Պողոս Ամիրա Օտյանն էր: «Մասիսի» հեղինակի կարծիքով, եթե նրա ակնարկած «երևելի

անձը» նույնպես այս ամիրան է, Ոսկանյանի վարմունքն արժանի էր այն բանին, որ նա «անմիջապես դռներն դուրս» վռնդվի իբրև «գռեհիկ, կոշտ և վերջին ծայր անքաղաքավար մարդ»: Բայց տեղի է ունեցել ուղիղ հակառակը. մեծապատիվ ու մեծանուն ամիրան «ազնիվ և հյուրասեր բարությանը» է ընդունել Ոսկանյանին, որ թեև ատելությամբ էր լցված մեծատունների նկատմամբ ու մշտական կռվի մեջ էր ամիրայության դեմ, բայց տարիներ հետո էլ հիշում էր: Հարց է ծագում՝ ի՞նչ ընդհանուր բան կարող էր լինել հեղափոխական քուրայով անցած հասուն երիտասարդի և ծերության հասած գորավոր ամիրաներից մեկի միջև:

Պողոս Օտյանը դասվում էր պոլսահայ լուսավոր ամիրաների շարքը, որոնք մասնավորապես հոգ էին տանում հայ առավել ընդունակ երիտասարդներին Եվրոպա ուսման ուղարկելու մասին, ուսումնակրթական բարերարություններ էին անում: Հաստատուն վկայություն կա, որ նա էր խորհրդակիցն ու քաջալերողը սահմանադրական շարժումը սկզբնավորող այն առաջնեկների, որոնք պայքարի էին ելնում հենց ընդդեմ ամիրայական դասի և կրոնական վերնախավի ամենագոր տիրապետության: Ինքը՝ ամիրա Պողոս Օտյանը, մշակույթի մեծ սիրահար էր, նրա բնակարանում ցուցադրվում էին ֆրանսիական դասականների (Ռասսին, Կռոմեյ, Վոլտեր, Մոլիեր) պիեսները՝ որոշակի շրջանների հանդիսատեսությամբ: Նրա որդիներից Խաչիկը կապված էր Սըվաճյանի և մեղվականների հետ, կրել է Մ.Նալբանդյանի որոշ ազդեցությունը, ինչպես կարելի է ենթադրել Մ.Չերազի վկայությունից¹: Մեծապես ուշագրավ են նրա երկու նամակները՝ գրված Հովի. քահանա Մկրյանին, 1862թ. սեպտեմբերի 10-ին և 1864թ. սեպտեմբերի 2-ին՝ Մ.Նալբանդյանի բանտից հավանական ազատվելու մասին: «Կեցցե մեծն Նալբանդյան, կեցցե նա ի պատիվ ազատության և ի պարծանս հայ ազգին», – գրում է նա՝ Նալբանդյանին համարելով «մեր սիրելի և թանկագին բարեկամ»²: Այդ նամակները Մ.Նալբանդյանի նկատմամբ

¹ Տե՛ս «Բազմավեպ», 1917թ., էջ 392 և հետո:

² Տե՛ս Գ.Ստեփանյանի հոդվածը՝ «Նոր նյութեր Մ.Նալբանդյանի արևմտահայ բարեկամների մասին» (ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ. 1961, N 91-96):

Օտյանների ունեցած վերաբերմունքի փայլուն վկայությունն են. «Չիքսրտին, շան սատակ էլնեն ու սատակելեն ետքն ալ իբրև շան դիակ որդերու կերակուր ըլլան ամեն անոնք, որ թշնամի են Նալբանդյանին», – գրում է Խ.Օտյանը իր նամակներից մեկում:

Պողոս ամիրա Օտյանն արժանացել է առաջին սահմանադրական քաղաքական ժողովի անդամ ընտրվելու պատվին: 1862թ. նոյեմբերի 16-ին Մ.Պեշիկթաշլյանի բնակարանում տեղի ունեցած հավաքույթին, որտեղ քննարկվում էին Ջեյրունում տիրող իրավիճակը և առաջիկայում ապստամբություն բարձրացնելու հարցերը, մասնակցում էր նաև Պողոս ամիրան¹: Պատահական չէ, որ երիտասարդ բանաստեղծ Մ.Պեշիկթաշլյանը սրտամորմոք երգով արձագանքել է նրա մահվանը, գրելով «Առ Գ-րիգոր էֆենդի Օտյան» երկարաշունչ քերթվածը: Հետաքրքրական է, որ Օտյանների ընտանիքին սկզբնապես շատ մոտ էր Հ.Սըվաճյանը, իսկ Մ.Նալբանդյանը, որ հետագայում նույնպես հյուրընկալվել է Օտյանների հարկի տակ, հարկ է համարել «Մոս և Վարդիթերի» «կրիտիկան» ընծայագրել ամիրայի որդիներից մեկին՝ Խաչիկ Օտյանին, որին անվանում է «սիրական եղբայր», և որը հայրն է Երվանդ Օտյանի:

Օտյաններից առավել հետաքրքրական դեմք էր Գ-րիգոր Օտյանը, որը և նամակագրություն է ունեցել Ստ. Ռսկանյանի հետ: Տակավին 17-ամյա երիտասարդը ջերմ եռանդ էր ցուցաբերում աշխարհաբարի հաղթանակի, նրա մշակման ու հղկման հարցերում՝ լինելով առաջին աշխարհաբարյաններից մեկը: Նա Ն.Ռուսինյանի մշտական աջակիցն էր դեռ այն ժամանակից, երբ երիտասարդ Ռուսինյանը պատրաստում ու տպագրում էր իր հայտնի «Ուղղախոսությունը» (1853): Ինքը՝ Գ-ր. Օտյանը, նույն տարիներին հրատարակել է «Առաջարկություն աշխարհաբար լեզուն կանոնավորելու և հասարակաց լեզու ընելու վրա» (1851) գրքույկը: Աշխարհաբարի երկու ջատագովների գրքերն արժանացել են գրեթե միանման հավատագրի՝ կրքեր են բորբոքել, տեղիք տվել Չամուռճյանի հալածանքներին, ենթարկվել են բանադրանքի: Գ-եռ 1853-ին Օտյանը՝ Ն.Ռուսինյանի, Ն.Պալ-

¹ Տե՛ս «Ընդարձակ օրացույց ս. Փրկչյան հիվանդանոցի, Կ.Պոլիս, 1910, էջ 327 – 328, Մատենադարան, ձեռագիր N 4177, ք. 26 Բ.:

յանի և այլոց հետ մտնում էր Ռուսումնական խորհրդի կազմի մեջ և երեքով դարձան նրա շարժիչ ուժը: 1855-ի փետրվարին Գր. Օտյանի գրած մամակից ակնառու է, որ նա և իր գործակիցները վճռաբար հանդես էին գալիս խավարամիտների բանակը գլխավորող Հովհ. Տատյան և Պողոս Պալյան ամիրաների և նրանց ծայնափող Չամուռճյանի դեմ¹: Հետագա տարիներին Գր. Օտյանը մշտապես գործակցել է սահմանադրականների հետ, նույնիսկ ընտրվել է ազգային ժողովի ատենադպիր, որի մասին հիշատակելիս Նալբանդյանը նրան կոչում է ոչ այլ կերպ քան «հոյակապ Օ. Գրիգոր էֆենդի»²: Ճիշտ է նա հանդես էր գալիս լիբերալ դիրքերից, բայց և դրական էր կատարում սուլթանական նկրտումներին հակադրվող ազգային ուժերի կազմում: Համենայն դեպս նրա գործունեությունը վաթսունական թվականներին այնքան նշանակալից էր, որ ենթադրել է տալիս, թե «ըստ երևույթին, Նալբանդյանը ոչ միայն անձնական, այլև հասարակական գործակցություն ուներ Օտյանի հետ»³: Կյանքի վերջում, խուսափելով համիդյան հետապնդումներից, անլեզալ անցավ արտասահման և վախճանվեց Փարիզում՝ 1887-ին:

Նկատի ունենալով Օտյանների գործունեության այս կողմը բնավ տարօրինակ չէ, որ Ոսկանյանը հայտնվում է ամիրայական հարկի տակ: Անհիմն չի թվում ենթադրել, որ նրան կարող էր հրապուրել լուսավորյալների բանակում գտնվող և խավարամիտ ամիրանների իշխանության դեմ պայքարող Օտյանների հակումը՝ զարկ տալ ազգային հայրենասիրությանը, նպաստել ազգի լուսավորությանն ու նրա իրավունքների հաստատմանը: Այս ընդհանուր շրջանակում էլ, հավանաբար, Ստ. Ոսկանյանը շփվել է Օտյանների հետ, թերևս նույնիսկ արժարժել առանձին կոնկրետ խնդիրների իր առաջիկա գործունեության, հավանաբար նաև՝ հրապարակախոսական ամբիոն ստեղծելու շուրջ: Այս կամ այն դեպքում նրա շփումը, չնայած թողած լավ տպավորությանը, որևէ չափով տևական կապ չի սկզբնավորել Ոսկանյանի և Օտյանների միջև: Դա է ասում նաև վերը

¹ Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1902, էջ 140:

² *Մ. Նալբանդյան*, ԵԼԺ, հ. 3, էջ 107:

³ *Ա. Հովհաննիսյան*, նշվ. աշխ., հ. 1, էջ 569:

հիշատակված այն նամակը, որով Ռսկանյանը պատասխանում էր Գ.ր. Օտյանին: Համաձայն լինելով իր նամակագրի ընդհանուր հարցադրմանը, իր համերաշխությունը հայտնելով նրա առաջադրած ու հետապնդած նպատակին առհասարակ, նույնիսկ լիարժեք աջակցություն խոստանալով, Ռսկանյանն, այսուամենայնիվ, ընդգծված վերապահում է ցուցաբերում «ազնիվ բարեկամի» ձեռնարկի նկատմամբ՝ գրաբարդ հիմք ընդունելով՝ արհեստականորեն բարեփոխել աշխարհաբարը և «հասարակաց լեզու ընելու» համար այն վերադարձնել գրաբարին ծոցը»:¹ Այսպիսի դիրքորոշումը խիստ բնորոշ է Ռսկանյանին:

Այլ փաստեր Ռսկանյանի ունեցած շփումների մասին, երբ նա Կ.Պոլսում էր կամ Չմյուռնիայում, հայտնի չեն: Անկասկած նա որոշակի նպատակներ ուներ, մտահոգող հարցեր, թերևս նաև որևէ աշխատանք գտնելու բնական փափագ, որի մասին հիշատակվում է կենսագրական նյութերում: Բայց առավել հավանական է, որ նա գաղափարական խնդիրներ էր հետապնդում: Համենայն դեպս Օտյանների հետ ունեցած շփումից և Ռսկանյանի ձեռնարկած հնարավոր ամեն մի քայլից առավել էականն ու նշանակալիցն այն է, որ նա այդ ժամանակամիջոցում, նախ Կ.Պոլսում, ապա Չմյուռնիայում, կատարել է հրապարակախոսական իր անդրանիկ քայլերը: Կ.Պոլսում, Գ.Մարկոսյանի և Ս.Ապրոյանի «Նոյան աղավնի» շաբաթաթերթի տպարանում, 1853թ. Ռսկանյանը հրատարակել է «Ներքին համոզում» պամֆլետը՝ «*Եվրոպա* լրագրոյն ներքին համոզմանը դեմ բուն հայումը ներքին համոզմամբ տված Ա պատասխանը» ենթավերնագրով: Մեկ տարի անց՝ 1854թ. Չմյուռնիայում նա լույս ընծայեց իր երկրորդ պամֆլետը՝ «Հոռմեական պարզև», որի խորագրի տակ դրոշմված է՝ «Շարադրեց չարափառ հայ մը»¹: Այդ «կատարյալ «Բամֆլե»ներով», ինչպես բնութագրել է «Բազմավեպը», Ռսկանյանը հայտնվեց հայ հասարակական մտքի, ավելի ճշգրիտ՝ հայ հրապարակախոսության ասպարեզում, որտեղ նա ուներ որոշակի անելիք: Նախախնամությամբ նրան վերապահված դերն այնքան է նշանակալից այդ ասպարեզում,

¹ *Ս.Ռսկանյան*, Ներքին համոզում, Կ. Պոլիս, 1853, էջ 34 և Հոռմեական պարզև, Չմյուռնիա, 1854, էջ 36:

որ անհնար է նրա մասին ամբողջական գաղափար կազմել առանց Ռուկանյանի հրապարակախոսության, ինչպես անհնար է ճիշտ բնորոշել այդ դերը առանց մուտիկից ծանոթանալու հայ հասարակական մտքի դարեկեսյան երկունքին:

1850-ական թվականներին, ինչպես և՛ նախորդ, և՛ հետագա տասնամյակներում, Թուրքիայի և սփյուռքի հայկական գաղթօջախներում, գրեթե առանց բացառության լուրջ բանակոլիմներ, հուզումներ, հաճախ էլ մեծ ընդհարումներ էին տեղի ունենում մասնավորապես կրոնական-դավանաբանական խնդիրների շուրջ¹: Երկարատև ու բուռն պայքար էր մղվում հայոց լուսավորչական եկեղեցու ավանդական հիմքերն անաղարտ պահպանելու, Հռոմի կաթոլիկ եկեղեցու ամեն մի ազդեցությունից գերծմնալու համար: Այդ պայքարը, վերջին հաշվով, պայքար էր արևմտահայության ու սփյուռքահայության զանգվածների կրոնական ինքնուրույնությունը պահելու, հայ ժողովրդի ազգային դիմագծի հետագա կայունության, առհասարակ հայապահպանության և ազգային ինքնագիտակցության զարթոնքի համար: Կիսաավատատիրական Թուրքիայի պայմաններում, երբ անլուր ճնշման ու հալածանքի հետ միաժամանակ հայ ժողովրդի գրեթե կեսը կազմող արևմտահայությունը կանգնած էր ազգի պահպանության յուրահատուկ հենակետը դարձած կրոնի աղճատման, ժողովրդի զանգվածները տարբեր դավանանքների հետևանքով իրարից բաժանելու և իրար հակադրելու կործանարար հեռանկարի առջև: Կաթոլիկ եկեղեցու միջնաբերդը՝ Վատիկանը, չէր հրաժարվում դարեր շարունակ փայլալից ստրատեգիական նկրտումներից՝ իր փարախն առնել նաև հայ ժողովրդին: Լայն գործունեություն էին ծավալում միսիոներական զանազան խմբեր, ընկերություններ, մեծ թվով գործակալներ ու պրոպագանդիստներ, ոչոնց զուգահեռ նպատակն էր՝ ի վերջո արդարացնել թուրքական լուծն ու գերիշխանությունը:

Այս իմաստով սուր քննադատության տակ էր գտնվում նաև կաթոլիկ եկեղեցու ծոցում ապաստանած Մխիթարյանների հայտնի գործունեությունը՝ հայերին կաթոլիկական ոգի ներար-

¹ Այդ խնդրի շուրջ հրատարակվել են բազմաթիվ գրքեր, երկասիրություններ, բանավիճող տրակտատներ:

կելու, նրանց նկատմամբ դավանաբանական վերաբերմունք ունենալու, հայ եկեղեցու՝ զարեր ի վեր ամրապնդված նորմերը կաթոլիկության սկզբունքների հետ հաշտեցնելու կամ առնվազն՝ կաթոլիկությունն պատվաստելու, հարմարեցնելու ուղղությամբ: Չհերքելով Մխիթարյանների մշակութային գործունեության մեծ նշանակությունը¹, հայ առաջադիմական գործիչներն ու մամուլը տևական ու սուր պայքար են մղել Վասիկյանի հրահանգներով գործող Մխիթարյանների և նրանց ելակետից՝ քողարկված կամ բացահայտ, հանդես եկող գործիչների դեմ, վերջիններիս շարքում նաև Հովհ. Չամուռճյանի և Գ. Այվազովսկու, ինչպես և նրանց համակիր-գաղափարակիցների դեմ: Այդ պայքարի գործնական ու տևական նշանակությունն անժխտելի է հայապահպանության մեծ ու կենսական խնդրի տեսակետից, առավել ևս, որ այդ ընթացքում փաստորեն արժարժվում էին նաև քաղաքական-սոցիալական հանգուցային հարցեր՝ շղարշված կրոնական-դավանաբանական խնդիրներով, քողարկված դավադրություններով, մատուցություններով, քսություններով, զրպարտություններով և նույնիսկ սպառնալիքներով ու ահաբեկումներով:

Հարկավոր է հատուկ ընդգծել, որ հայ իրականության մեջ, մասնավորապես հայ մամուլի էջերում, ծավալված պայքարը կրոնական-դավանաբանական հարցերի ու խնդիրների շուրջ, հասարակական զարգացման իմաստով անխուսափելի էր և ուներ իր որոշակի դերն ու նշանակությունը: Թուրքական բռնատիրության տակ ճնշվող արևմտահայության համար պայքարի այդ ձևն առավել մեծ տարածում ու նշանակություն էր ստանում:

Սակայն որքան էլ սուր էր կրոնադավանաբանական պայքարը, որքան էլ մեծ ծավալ էր այն ստացել, այսուամենայնիվ, կազմում էր լոկ մի ճակատն այն պայքարի, որ մղվում էր հայ իրականության բոլոր ասպարեզներում անցած դարակեսին:

Ոսկանյանի հասարակական բեմելի ժամանակահատվածում՝ 40-50-ական թվականներին, գրեթե ամենուր տեղի ուներ հայ հասարակական մտքի որոշակի բեկում, անկասելի մի շրջադարձ, որ ավելի ցայտուն արտահայտություն պիտի գտներ

¹ Մխիթարյանների մշակութային գործունեության մասին տես՝ *Ա. Կարինյան*, նշվ. աշխ., հ. 2, Երևան, 1960:

60-ականներին: Միջմադարյան սխուլաստիկ մտածողության բուքափուճը կատարվում էր նոր գաղափարների հաստատման համար պայքարով, հին կարգերի վերագնահատմամբ, ազգային մտածողության հստակեցմամբ: Նոր մեկնաբանում էին ստանում ազգ, հայրենասիրություն, լուսավորություն, կրթություն, առաջադիմություն հասկացությունները: Մթափ հայացք էր ձգվում կրոնի, նրա գաղափարախոսության, եկեղեցու և եկեղեցականների գործունեության վրա, ավելի ցցուն կերպարանք են ստանում դավանաբանական դիմակայումները: Հանդես են գալիս նոր ուժեր, նոր մտորումներ ու հոսանքներ, որոնց կրողներն ու գաղափարախոսությունները, քանկ գնահատելով ազգային պատգամներն ու կուռքերը, ջանք ու եռանդ էին գործադրում առաջ մղելու ազգը, արթնացնելու նրա ինքնագիտակցությունը, սերմանելու նրա մեջ քննադատական ոգի, աշխարհիկ մտածողություն:

Հայ հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներն ընդգրկող այդ շարժման մեջ վճռական դեր էր վերապահված պարբերական մամուլին: Մինչդեռ հայ մամուլը դեռևս ապրում էր իր լիմեյիության, հաստատման ու իրական կազմավորման շրջանը: Ծանր երկունքով էր հայ մամուլն ասպարեզ նվաճում: Նրա անհրաժեշտության գիտակցումը տեղի ուներ նրա դերի լուրջ վիճարկումով, երբեմն նույնիսկ անընթացողությամբ: Երկու տասնամյակ շարունակ, 1840 – 1850-ական թվականներին, հայ մամուլը մաքառում էր իր դերի հասարակական ճանաչման և իր սեփական դիմագծի հաստատման համար՝ հալածանքների ենթարկվելով, խափանվելով ու վերածնվելով, կրելով նյութական ու բարոյական անլուր տառապանքներ: Այդպես էլ ամենուր, այդպես էր մասնավորապես Չմյուռնիայի հայ գաղթօջախում:

Նույնիսկ լուսավորական շարժման լայն ծավալման պայմաններում հայ պարբերական մամուլը գաղթօջախում հաստատուն հող չէր գտնում:

Արդեն տեսանք, որ այնտեղ ծնունդ էր առել հայ առաջին ինքնուրույն ազգային թերթը, բայց նրանից հետո երևան եկած «Հայրենասերը» կարողացավ իր գոյությունը պահպանել հազիվ երկուսուկես տարի՝ խափանվեց, հալածվեց ու վերջնականապես փակվեց՝ 1846-ի մայիսին: Ավելի երկարատև չէր գաղթօջախում լույս տեսած հաջորդ պարբերականի՝ «Արփի արարատ-

յանի» (1853 – 1856) գոյությունը: Մանկական կարճակյաց հրատարակություններ էին «Երկասերն» ու «Թութակ Հայկազյանը», որոնք լույս են տեսել 1854 – 1855-ին: Այդպես, շուրջ քսան տարի, գաղթօջախի հայ համայնքը, հաշված նաև «Աստղ» ձեռագիր թերթը, որ նույնպես թիթեռնիկի կյանք ապրեց, հարություն տվեց վեց պարբերականների, որոնցից, սակայն, ապրեց միայն մեկը՝ «Արշալույս արարատյանը», այն էլ շնորհիվ այն բանի, որ դուրս չեկավ պահպանողական շրջանակից: Մինչդեռ հենց Ջմյուռնիայում ամերիկյան միսիոներները, սկզբնավորելով հայ մամուլի ծնունդը գաղթօջախում, իրենց պատկերազարդ պարբերականը՝ «Շտեմարան պիտանի գիտելյաց», ճիշտ է միամյա ինքնակամ ընդմիջումով, հրատարակեցին 1839 – 1846թթ.:

Պատկերը նույնն է մյուս գաղթօջախներում: Եվ այդ պայմաններում գոյատևող հատուկենտ պարբերականների հետ միասին հայ ընթերցող շերտերի վրա իշխող ազդեցություն ունեին Մխիթարյան միաբանության հրատարակությունները, որոնք թափանցում էին երկրի շատ հեռավոր անկյունները և մինչև XIX դարի կեսերը գրեթե հիմնական սնունդն էին հայ գրաճանաչ երիտասարդության»¹: Ավելի դիպուկ ու ավելի ճշգրիտ, ինչպես Մ.Աբեղյանն է բնութագրել, XIX դարի առաջին կեսին Մխիթարյանները բուռն գործունեությամբ «հրապարակը լցնում են իրենց գրական աշխատանքներով և թարգմանություններով, ավելի շատ գրքերով, քան կարդացողներ կային, և շատ-շատ ավելի, քան հասկացողներ»²: Այդ հրատարակություններից առավել տարածում և համեմատաբար լայն ներգործություն ունեին Մխիթարյան երկու պարբերականները՝ «Բազմավեպը»՝ սկսած 1843-ից և «Եվրոպան»՝ 1847-ից:

Հանդես գալով հայ մամուլի իրական կազմավորման սկզբնաշրջանում, «Բազմավեպը» տալիս էր այն բանի կենդանի օրինակը, թե ինչպիսին պետք է լինի հայ պարբերականը, ինչ ուղղության պիտի հարի, ինչ և ինչպես գրի: Նրա դեղատոմսի, գոնե առաջին շրջանում, գրեթե ընդօրինակությունը եղավ չորս

¹ «Հայ. նոր գրականության պատմություն», հ. 2, Երևան, 1962, էջ 47:

² Մ. Աբեղյան, Երկեր, հ. 4, Երևան, 1970, էջ 549:

տարի հետո երևան եկած մյուս Մխիթարյան օրգանը՝ Վիեննայի Միաբանության «Եվրոպա» պարբերականը (1847 – 1863)՝ հավելվածներով հանդերձ:

Կաթովիկ լուսավորչական հայության համատեղ գործակցությամբ ընկերություն ստեղծելը՝ 1840-ական թվականների վերջերին կարևոր նշանաձող էր ժողովրդի մշակութային գործիչների համախմբելու համար ձեռնարկված համազգային ջանքերում, հանուն ազգի և նրա առաջադիմության ու լուսավորության հաղթահարվում էր չափազանց լուրջ այն պատճենչը, որով ոչ միայն բաժանվում այլև հակադիր բարիկաղների վրա էին հայտնվում ժողովրդի տարբեր դավանանքի հետևող հատվածները: Գավանաբանական այդ տարանջատվածությունը մահացու վտանգ էր ազգի ամբողջության, նույնիսկ առհասարակ նրա գոյության համար: Ըմբռնելով այդ վտանգի իրօրյա և ապագա կործանարար հետևանքները, սվյալ դեպքում պոլսահայ երիտասարդ գործիչները, որոնց զգալի մասը, ի դեպ, Մխիթարյան դպրոցների սաներն էին, իսկ առաջին դերակատարը հենց միաբանության վարդապետներից մեկը՝ Պետրոս Մինասյանը (1799 – 1867), որ հայ կլասիցիստական գրականության ճանաչված դեմքերից էր, դասագրքերի ու պիեսների հեղինակ, փորձում էին մշակութային հողի վրա համախմբել ազգային ուժերը և լայն ծրագրով գործունեություն ծավալել ազգի ընդհանուր առաջադիմության ու լուսավորության նպատակով¹: «Մի ազգ ենք և ի մի միաբանության ժողովյալ, երթիցուք ուր ձգիցե զմեզ ճշմարիտ ազգասիրություն», – ազդարարում էր ընկերության պաշտոնական հայտարարությունը:

Վերջին առումով, ավելի ճշգրիտ, հայաբնակ վայրերում իր միջոցներով դպրոցներ հիմնելու² և դասատուներ կարգելու, նույնիսկ հասարակական թանգարան-ընթերցարան հիմնելու

¹ Պ. Մինասյանի մասին տե՛ս *ՎՃերգիրքայան*, Հայ դրամատուրգիայի պատմություն (Երևան, 1959) և *Գ. Սյրևիսյանյան*, Ուրվագիծ արևմտահայ քաղաքացիական պատմության (Երևան, հ. 1, 1962):

² Համազգայաց ընկերության կանոնադրության 3-րդ կետով ուսմանվում էր՝ «Կանգնում է վարժարանաց և դպրոցաց ի քաղաքս և ի գյուղս՝ ի դաստիարակության ուստերաց և դատերաց» («Արշալոյս արարատյան», 19 ապրիլի 1846, N 257):

փորձերով, Համազգյաց ընկերությունը հարազատաբար կրկնում էր Ջնյունիայի Սյունյաց ընկերության որոշակի հաջողությամբ պսակված և գաղթօջախին համբավ բերած փորձը, ինչ-որ տեղ նաև ընդօրինակում էր նյա գործնական-կազմակերպական մեթոդները: Ըստ որում դավանաբանական խնդիրները Սյունյացի գործունեության մեջ որևէ խոչընդոտ չէին հարուցում:

Ինքնին հասկանալի է, որ նման դիմագծով երևան եկած ընկերությունը խիստ անհանդուրժելի էր թե՛ գաղթօջախի կաթոլիկ համայնքի գործիչների և թե՛ նրանց հռոմեական պարագլուխներին, ներառյալ նաև պապի, հավասարապես նաև բուրքական կառավարության համար: Դիմանալ նրանց դավերին, որ գործադրվում էին առերես հանդուրժողականությամբ, ընկերությունը չէր կարող: Ու որքան ավելի ամրանար ու աճեր «Համազգյացի» միությունն ու հեղինակությունը, այնքան ավելի քացահայտ ու դաժան պետք է լիներ նրա դեմ մղվող պայքարը, ինչպես և իրոք եղավ: Շատ կարճ ժամանակահատվածում՝ 1846-ի վերջերից մինչև 1848-ի փետրվարը, «Համազգյացի» հիմնադիր կազմի 76 անդամներից նրան բաժնեգրվածների թիվը անցավ 600-ից: «Արշալույս արարատյանը» ենթադրում էր, որ շատ չանցած այդ թիվը կհասնի 2000-ի (նկատենք, որ անդամագրվելու բաժնեգինը 10 դահեկան էր, ամսավճարը՝ 5 դահեկան):

Տարբեր դավանանքի հայերի միաբան գործունեությունը, իհարկե, որևէ չափով չէր սպառնում Կ.Պոլսի կաթոլիկ համայնքի գոյությանը, և նման նպատակ «Համազգյացը» չէր հետապնդում: Բայց այդ գործունեությունը նպատակ ուներ լուսավորություն տարածել նույնպես առանց դավանական խտրության: Եվ տարբեր դավանանքի հայերի համագործակցությունից ավելի կաթոլիկ եկեղեցուն ու նրա հռոմեական քահանայապետերին սարսափեցնում էր հենց լուսավորության տարածումը, որ ամրապնդող շաղախ պետք է լիներ ազգի միավորման, ազգապահպանության համար: Ահա որն էր «Համազգյացի» հեռագնա նշանակությունը, և ահա ինչն էր ահաբեկում պապական եկեղեցուն ու նրա տեղական ու հռոմեական պարագլուխներին: Եվ բնավ պատահական չէ, որ «Համազգյացի» հիմնարարական գաղափարը չմարեց ընկերության խափանման հետ, այլ

գոյատևեց, նույնիսկ ինքը՝ «Համազգյացը» վերափոխված ու վերակառուցված վերածնվեց տարիներ անց՝ իր բուն նպատակների հետ միասին հետապնդելով նաև ազգային-ազատագրական խնդիրներ:

Հետագա տարիներին ձեռնարկված այդօրինակ փորձերից մենք կանդորադառնանք Սո.Ոսկանյանի գործադրած իրական ջանքերին: Նա, ամենայն իրավացիությամբ, «Սյունյացը» և «Համազգյացը» դնում է իրար կողքի և միևնույն կոչով դիմում ազգայիններին՝ երկու ընկերությունների ոգին վերակենդանացնելու, նմանօրինակ ընկերություն հիմնելու մասին:

Հայ մամուլում Մխիթարյանների դրսևորած միտումների և պապական գործունեության դեմ ծավալված պայքարի ուշագրավ օրինակ է տվել «Արշալույս արարատյան» թերթը: Մխիթարյանների գործունեության ընդհանուր գնահատության հարցում «Արշալույս արարատյանը», այսուամենայնիվ, հրատարակել է բազմաթիվ նյութեր, որոնցում բողոքի ձայն է բարձրացվում Մխիթարյանների միաբանության պապական պրոպագանդի դեմ: Թերթը, նախ «ծաղկաքաղ կամ լավ ևս է ըսել փշաքաղ թարգմանելով», ընթերցողին է ներկայացրել Մխիթարյան միաբանության դեմ ուղղված գրքի շատ էջերը (իտալերեն), մերկացրել է այդ գրքի գաղտագողի հրատարակության հանգամանքները՝ հաճախ այդ նպատակով լույս ընծայելով նաև հավելվածներ¹: «Ազգությունը և կրոնքը տարբեր բաներ են», – հռչակում էր թերթը (N 420): Երբ հրսուպարակ եկավ Մխիթար-

¹ «Արշալույս արարատյանի» N 432-ի (2 հունվար 1853) հավելվածում տպագրված է այն նույն վավերագրորդը, որն ուղղված է Մխիթարյան միաբանության դեմ և կրում է նրա չորս անդամների ստորագրությունը՝ Մեսրոպ Աղաշրաքյան, Թադեոս Ասկերյան, Թոմաս Մաքսեթյան, Սեբովբե Ճևախիրճյան: Թերթն այն վերցրել է իտալերեն հիշյալ գրքից և տվել է աշխարհաբար թարգմանությամբ: Այդ նույն վավերագիրն է բերում նաև Մ.Նալբանդյանը, «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանը» գործում (հ. 2, էջ 193 – 198), բայց մի այլ «աղավաղյալ» թարգմանությամբ և ստորագրությունների փոքր-ինչ զանազանությամբ»: Ի դեպ, Նալբանդյանի երկերի ժողովածուում վավերագիրը չի ծանոթագրված, չի ասված նրա ստեղծման և էության մասին, որը, սակայն, պարզվում է «Արշալույս արարատյանի» էջերում՝ շնորհիվ նրա N 432-ում տպագրված հողվածի վավերագրի հեղինակներից մեկի՝ Ս.Ճևախիրճյանի («Ճիռյա» ստորագրությամբ):

յանների «Ջատագովությունը» գիրքը, որ պատասխան էր իրենց դեմ ուղղված պարսավազրթին, քերթը հանդես բերեց իր որոշակի քննադատական, նույնիսկ դատապարտող դիրքը, գրեթե համարից համար նյութեր գետնդեց ընդդեմ Մխիթարյանների: 1852թ. նոյեմբերի վերջին (N 429) քերթը նույնիսկ հրատարակեց միաբանության ականավոր անդամ Գ.Այվազովսկու նամակը, ուր փորձ էր արվում սքողելով ապահովագրել միաբանությունը: Ապա մի շարք նյութեր տպագրեց Հոռնի կաթոլիկ եկեղեցու միջնաբերդի դեմ: Մեծ մասամբ ծածկանուններով կամ անտորագիր հրապարակված նյութերում ուղղամիտ քննադատության էին ենթարկվում «Եվրոպա» քերթը և «Բազմավեպը», որ չէին բարեհաճում գոնե մեկ անգամ «ազգային անցյալը ձգել և ներկային վիճակը քննել»: Որոշ նյութերում քննվում է Համազգյաց ընկերության խափանման հարցը և լույս է սփռվում նրա պատմության վրա:

Մխիթարյանների և նրանց պարբերականների դեմ «Արշալույս արարատյանը» աշխույժ բանավեճ է մղել մասնավորապես 1853թ. կեսերին: Թերթը Մխիթարյանների հռչակած խոսքը, որ «և բանիվք, և արդյամբք, և գրով» պիտի ջանան դարձի բերել հայ ժողովրդին, վերահաստատելով նրանց, առաջ էր քաշում ազգի հռոմեադավան մասը «պապական լուծեն օր առաջ» ազատելու անհրաժեշտությունը¹:

Վերն արդեն մատնանշվեց, որ Մխիթարյանների պապական պրոպագանդը և գործնական մի շարք քայլերը, մանավանդ «Ջատագովության» գրքույկը, առիթ տվեցին ընդդիմության նույնիսկ որոշ Մխիթարյանների: Այդ ձայնը նախ լսելի եղավ հենց «Արշալույս արարատյանի» էջերում, երբ հրապարակ եկավ Գ.Այվազովսկու նամակը, ապա և նախկին Մխիթարյան Գրիգոր վարդապետ Խախառանի հողվածը՝ արտատպված «Մասիսից»²: Բանը հանգեցնելով ժամանակի պարագաներին, Այվազովսկին Մխիթարյանների հրատարակած գրքույկում տեղ գտած անվանարկումները վերագրում էր լոկ գրքույկի հեղինա-

¹ Տե՛ս «Արշալույս արարատյան», 26 մարտի 1854, N 464:

² Նույն տեղում, 21 նոյեմբերի 1852, N 429 և 30 հունվարի 1853, N 434 (հավելվածը):

կին և ոչ թե նրանում արտահայտված գաղափարները համարում ամբողջ միաբանությանը: Ակամա պարզաբանումը համոզիչ չէր. գրքույկը լույս էր տեսել առանց հեղինակի, միաբանության տպարանում, նրա գիտությամբ: Ավելին, 1853-ի սկզբին Մխիթարյանները նույն գրքույկի ոգով, միաբանության անդամների ստորագրությամբ դավանական հնազանդության ու խոստովանության հայտարարություն մատուցեցին պապին: Նրանում, ի դեպ, կրկին դատապարտվում էր «Համազգյացը», նորից էր հավաստվում Մխիթարյանների կատարյալ հավատարմությունը կաթոլիկ կրոնին ու եկեղեցուն, որը «լիապես զոհ ըրավ» պապին:

Վերոհիշյալ հողված-բացատրականով սկսվեց այն բանավեճ-բանակոռիվը, որ երկար ժամանակ մղվեց մի կողմից Մխիթարյանների և մյուս կողմից Մուրադյան վարժարանում տնօրինող երեք վարդապետների՝ Ս.Թեոդորյանի, Գ.Այվազովսկու և Խ.Գալֆյանի միջև և որն, ի վերջո, հանգեցրեց վերջինների հեռացմանը վարժարանից, ապա և՛ նրանց վերադարձին հայոց եկեղեցու գիրկը:

Այդ պայքարի արդյունքը եղավ Ս.Թեոդորյանի երկհատորյա գիրքը Մուրադյան վարժարանի և նրա շուրջ տեղի ունեցած անցքերի մասին: Երեք վարժապետները հիմնեցին նոր վարժարան, իսկ Այվազովսկին սկսեց հրատարակել նաև «Մասյաց աղավնի» հայերեն-ֆրանսերեն հանդեսը՝ երկուսն էլ կարճակյաց գոյատևումով, Փարիզում: Մի փոքր ավելի ուշ, Մխիթարյան միաբանության ընթացքի բնությամբ հատուկ գիրք հրատարակեց նաև Այվազովսկին:

Բայց Մխիթարյան միաբանության նախկին անդամներից ավելի սուր, ակտիվ ու տևական պայքար պապական գաղափարախոսության, հռոմեական նկրտումների դեմ, հատկապես պապական Մխիթարյանների, միաժամանակ և հասունյան բանակի դեմ մղվեցին հայոց պատրիարքարանը, նրա պաշտոնաթերթը, իսկ վերջիններից ավելի եռանդուն՝ հայ առաջադեմ մամուլն ու հրապարակախոսները, թեև նրանք կրոնական խնդիրներ արժարժելու իրավասություն չունեին: Այդ պայքարի դեռ սկզբնական ժամանակաշրջանում, անշուշտ գուշակելով նրա անցանկալի հետևանքները, պապական պրոպագանդան և ինքը՝ Պիոս IX պապը դիմեցին արտակարգ միջամտության:

Կարդինալների հատուկ ժողովում քննվել են հայոց «թե հին և թե նոր» խնդիրները: Նիստերից մեկին որպես գահերեց, բազմել է ինքը՝ պապը և հայտնել իր կարծիքները: Հատուկ խոսակցություն է գնացել հայ ժողովրդի մեջ տարածում գտած այն գրքերի մասին, որոնք, «հրատարակվելով ազգին կրոնական խնդիրներուն վրա, հայտնապես և հրապարակավ խոսել և վիճել սկսան... և ի լույս բնծայվեցան առանց գիտության և ընդդեմ կամաց այս Առաքելական Աթոռին», – ինչպես ասվում է պապական համառոտագրության մեջ: Կարդինալական ու պապական վերաբնության արդյունքը եղավ այն, որ հատուկ հրովարտակով արգելվեցին հայերեն երկու հրատարակություններ:

Հրովարտակը, որ երկար ժամանակ հրապարակ չէր հանվում, ազդարարում է, որ «ամենապատիվ Կարտինալուց սուրբ ժողովքը» քահանայապետ Պիոս IX պապի գլխավորությամբ «դատապարտեց և կդատապարտե, հետքից և կհերքե, կամ հրամայեց և կհրամայե անլեզալ գրոց ցանկին մեջ անցնել» նաև «Մխիթարյան ս. Ղազարու Վենետիկո» և «Մխիթարյան ս. Ղազարու Վենետիկո գրքին անանուն մատենագրին դեմ...» գրքույկները: Այսուհետև, ինչպես ազդարարում էր հրովարտակը, «ոչ որ՝ ինչ աստիճանի ու վիճակի մարդ որ ըլլա, համարձակի երբեք նախասացյալ դատապարտված ու հերքված գրքերն ինչևիցե տեղ, ինչևիցե լեզվով ասկից վերջը կամ հրատարակել, կամ հրատարակվածները կարդալ և կամ քովը պահել, հապապարտավորվի յուրաքանչյուր տեղվույն եպիսկոպոսացը կամ հերետիկոսական խոտորությանց քննիչներուն ձեռքը հանձնել ընդ պատժովոք՝ որոնք արգելյալ գրոց ցանկին մեջ նշանակված են»¹:

Սարսափազդու այս հրովարտակը կոչված էր նաև ահ ու դող պատճառելու այն գրվածքների հեղինակներին, որոնց նույն ոճով դատապարտում էր պապը՝ խոստովանելով, թե առանց հապաղելու փութացինք բոլոր մեր ճիզն ի գործ դնելու որպեսզի «անոնց բողոքներն արմատուստ խլվին»: Խոսքը վերաբերում էր կրոնադավանաբանական հարցերի քննող այն գրվածքներին,

¹ «Հաջառողագիր Պիոս Թ. . . ս. Քահանայապետի... հանդերձ երեք հավելվածովք», էջ 16:

որոնք «ան դատապարտյալ գրվածներեն կամ հառաջ կամ վերջն ի լույս ընծայված են, թե գրաբար հայերեն, թե աշխարհաբար հայերեն, թե իտալերեն, թե օտարազգիերեն և թե ինչևիցե լեզվով շինված ըլլան»: Պապը, «անցած գացած խնդրոց ու վիճմանց վրա մշտնջենավոր ու բացարձակ լռության» վճիռ կայացնելով, վերջում հռչակում էր, որ իր «խրատներեն ու ազդարարություններեն» շեղվողները «ինչ աստիճանի ու կարգի որ ըլլան՝ ծանր հանցանաց պարտական կգտնվին և չեն կրնար եղանակով կամ պատրվակով մ' իրենք զիրենք՝ արդարացնել, որ հարկավոր խստությունն իրենց դեմ չբանեցվի»:

«Եվրոպայի» կարծիքով, պապական վավերագիրը «ավետաբեր ծիածան» էր: Ավելացնենք նաև՝ գործունեության ծրագիր էր՝ տակտիկական ու ստրատեգիական թելադրանքներով: Բայց ոչ պապական մարգարեությունները, ոչ հաշտաբարական փարիսեցիությունները և ոչ էլ առաքելական օրհնությունները չէին կարող շոյել հայ գանգվածների ազգային-կրոնական զգացողությունը: Ընդհակառակը, պապական կոնդակը, իսկ դրանից առաջ կաթոլիկ եկեղեցու քողարկված ու բացահայտ նկրտումները, ինչպես և «Եվրոպայի» հրահանգիչ հորդորները բողոքի ու ընդդիմադիր պայքարի տևական լիցք հաղորդեցին հայ մամուլին ու գործիչներին:

Առաջինների թվում ընդվզման ձայն բարձրացրեց «Մասիսը»՝ հիշեցնելով ավետարանական հին դրույթը՝ «Ով որ անիրավություն մը կտեսնե ու կլռե, զայն ինքը ըրած կըլլա»: Պատրիարքարանի պաշտոնաթերթը գտնելով հանդերձ, որ կրոնական վարդապետությունների շուրջ հրապարակային բանավեճերից, իրոք, խոհեմաբար պետք է հրաժարվել, ամենայն խստությամբ, նույնիսկ կոպտությամբ դատապարտում է հայ կրոնի դեմ թույլ տրված ոտնձգությունները: Նույն դիրքերից «Մասիսը» դատապարտեց Հյուրմյուզյանի ու Չամուռճյանի և վերջինիս «Չոհալ» թերթի հայոց կրոնի դեմ բռնած դիրքը՝ հրապարակայնորեն առաջադրելով հինգ հանգուցային խնդիրներ, որոնց քննության ընթացքում ազգային-կրոնական դիտակետից հետևողականորեն մերկացրեց թե մեկին և թե մյուսին, ինչպես և Պողոս ամիրա Տատյանի ծանուցագիրը: Անդրադառնալով Մխիթարյանների պապական ջատագովությամբ հրատարակած

«Ընծա» բրուշուրին, «Մասիսը» ոչ միայն դատապարտել է այն, այլև արտատպել է նրա դեմ ուղղված, Թ.Կըլկոիկյան ծածկանունով տպված գրքույկի առաջաբանը: Տևական ու անգիջում էր նրա պայքարը միսիոներության և միսիոներական «Ավետաբերի» դեմ՝ նույն ազգային-կրոնական սկզբունքները հիմնավորելով և պաշտպանելով:

Կարելի է նաև արձանագրել, որ «Մասիսը» երբեմն հանդես էր գալիս շատ կտրուկ և արդարացի ցատունով դատապարտում Մխիթարյանների, պապերի և պապականության կրոնաքաղաքական վարքագիծը: Այս իմաստով ցայտուն է թերթի 1854թ. 114-րդ համարում լույս տեսած «Պապություն և Մխիթարյանք» հոդվածը: Ոչ միայն անստորագիր լինելու, այլև արմատապես հարցերը դնելու շնորհիվ դա խմբագրական էր և արտահայտում էր հայության, այսպես ասած, պաշտոնական կարծիքը: Մխիթարյանները և պապը, ուղղակի արձանագրում է «Մասիսը», «անքաղաքավարությամբ և անիրավությամբ» սկսել են «թշնամանք ժայթքել» հայ ժողովրդի և նրա եկեղեցու դեմ: Կաթոլիկ եկեղեցու պարագլուխ պապը ոչ միայն իրար է հակադրում տարբեր ազգերի, այլև «մեկ ազգի, մեկ գերդաստանի, մեկ հոր և մոր զավակները», նա ուզում է, որ խափանվի ժողովուրդների լուսավորությունն ու քաղաքակրթությունը, որ «հավատաքննության խարույկը վառ մնա, միջին դարու սոսկալի կռիվներն ու արյունահեղությունները նորոգին ու շարունակեն, որպեսզի պապության երկաթե շղթաները Արտավազդա առասպելյալ շղթային պես զորանան...»:

Այդ հնգամյա ժամանակամիջոցում՝ 1853 – 1857-ին, նույն հարցերը՝ ավելի կամ պակաս հետևողականությամբ արծարծվում էին հայ մամուլի էջերում, մասնավորապես «Արշալույս արարատյան» թերթում, որի հրատարակած ոչ քիչ թվով նյութեր, ի դեպ, արտատպվում էին «Մասիսի» էջերում՝ երբեմն բանավիճելով, իսկ ավելի հաճախ հավանություն տալով: Մամուլից ավելի ակտիվորեն, կրոնական-սխոլաստիկյան վեճերի՝ ընթացքում այդ խնդիրները բնավում էին մի շարք հրատարակություններում՝ փոխնիփոխ հարձակումներով, սուր բանավեճով,

¹ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 1, էջ 431:

այլևայլ մեկնություններով ու հերքումներով: Հայ հասարակական մտքի այսօրինակ դրսևորումը մասնավորապես կարոտ է հատուկ ուսումնասիրության: Այստեղ մենք կբավարարվենք սուկ այդ հրատարակությունների հիշատակությամբ՝ նպատակ ունենալով դրանց ընդհանուր հայտարարի մեջ պարզել Ոսկանյանի պամֆլետների տեղը:

Նախ նկատենք, որ առանձին գրքույկներով ընդդիմախոսություն հրատարակելը զուտ տպագրական իմաստով այդ շրջանում ինչ-որ չափով դյուրին էր, քան պարբերական մամուլում քննական-քննադատական նյութեր տպագրելը: Գրաքննական տեսակետից մամուլը մշտական հսկողության տակ էր, իսկ առանձին գրքույկ հրատարակելը գերազանցապես կախված էր տպարանատիրոջ կամքից ու նախաձեռնողի հաստատակամությունից: Բացի այդ, ինչպես տեսանք, նույնիսկ պապական պրոպագանդան, հակառակ պարբերական մամուլի, հասկանալի պատճառներով թույլատրելի ու գերադասելի էր համարում առանձին հրատարակություններով կրոնադավանաբանական հարցերի քննությունը: Թերևս այս պատճառով է, որ 50 – 60-ական թվականներին հրատարակվել են ոչ քիչ թվով գրքույկներ՝ նվիրված զանազան հարցերի, գերազանցապես ընդդիմախոսական և անանուն կամ ծածկանունով: Հաճախ այդ գրքույկները գրվում էին ժողովրդի մեջ, և նրանց մասին կամ ոչինչ չէր գրվում մամուլում կամ սուկ հիշատակվում էր իբրև ձեռքից ձեռք շրջող տետր, որ վաճառվում է այս կամ այն գրավաճառի մոտ: Այնքան սուղ են դրանց վերաբերյալ հաղորդումները, որ դժվար է ի մի բերել դրանք, կազմել նրանց ցանկը, էլ չենք ասում այն մասին, որ դրանք վատ են պահպանվել՝ հայրենական գրապահոցներում հազիվ հնարավոր է գտնել դրանցից մի քանիսը:

Ըստ երևույթին այդ կարգի գրականության շարքում առաջիններից մեկն է Ջմյունհայում 1854թ. լույս տեսած այն գրքույկը, որ ուղղված է Պիոս պապի կոնդակի դեմ¹: Գրքույկի հեղինակը, որ քողարկվել է «Հայու մը» ծածկանվամբ, հավա-

¹ «Լուսավորչակրոն հայու մը ուղիղ դատողությունները Հռովմա Պիոս Թ. պապին Կոստանդնուպոլսի հայագրի պապականներուն ուղղած կոնդակին վրա», Ջմյունհիա, 1854, 14 էջ :

նաբար դրսից է, ինչպես կարելի է ենթադրել նրա պատրաստակամությունից՝ առաքել ըստ հարկի պահանջվող ինչ-ինչ գրքեր: Նա արձանագրում է, որ Հռոմը «արևելյան հավատացելոց մեջ իրեն ապաստարան մը պատրաստելու» նպատակ է հետապնդում. «Այժմյան Հռովմը առաջին դարերու Հռովմը չէ» (էջ 13): Հայ հռոմեադավանները, որոնց ընդհանուր թիվը հազիվ 55-65 հազար է (7-8 հազարը՝ Կ.Պոլսում), ոնց որ «այլակրոններ կատաղությամբ իրարու դեմ կկռվին, զիար կչարայտոսեն, զիրար կհալածեն», մինչդեռ պապը «կիրամայն հիշյալ թղթովն, որ հաշովին և լուռ կենան» (էջ 7): Գրքույկի հեղինակը պնդում է, որ անհնար է կոնդակներով խաղաղություն հաստատել Հռոմին դավանող հայերի միջև, որովհետև կաթոլիկությունը վրդովում է ընտանեկան խռովությունը, միմյանց դեմ հանում եղբայրներին, մայրերին ու դստրերին, հայրերին ու որդիներին, «միշտ և հանապազ խռովության և երկպառակության ծնուցիչ և դաստիարակ եղած է» (էջ 9):

Նա անդրադառնում է նաև Վենետիկի Մխիթարյաններին և շեշտում թե իբրև նրանք ակամա են հայոց դեմ «նոր չարախոսություն» թույլ տվել, այդ քայլին են դիմել «միայն Հասունն հաղթահարելու և զանդիսակալ պապն իրենց կողմն վաստկելու համար: Անտեղյակ չի հեղինակը Մխիթարյանների 150-ամյա գործունեությունից և այն գնահատում է նեգատիվ կողմից: Ավելին, ամեն չափ ու չափանիշ մի կողմ դրած, գտնում է, թե Հռոմի և հռոմեակաճության երեսից հայոց ազգն ավելի շատ «չարիքներ, թշվառություններ, աղետներ, կորուստներ և կործանումներ կրած է և կկրե տակավին, քան որչափ պարսիկներեն, արաբներեն, թաթարներեն և նույնիսկ աշխարհավեր և արյունարբու Լենկ-Թամուրեն...» (էջ 12):

Իհարկե, հեղինակը կուլ է գնում չափազանցության, իր հերթին տարվում է դավանաբանական պայքարով. նա միակողմանի է մոտենում հարցին և իր իրավացիությունը հաստատելու համար միակողմանի է դիտում կաթոլիկությունը ընդունած հայ զանգվածների ուծացումն ու ձուլումը Լեհաստանում, Հունգարիայում և այլուր, հայերի (30.000) գաղթը Կիլիկիայից և այլն, փաստեր, որոնք մոռացության են մատնում Հռոմին

դավանող Մխիթարյանները:

Այս դիրքերից ու այս ձևով մղվող բանավեճը հազիվ թե օգնեի դարավոր հարցերի եթե ոչ լուծմանը, ապա գոնե արդյունավետ քննությանը, մանավանդ, որ այն, ըստ էության, մղվում էր Վատիկանի հազարաթմանիք և բազմապատիկ ճարպիկ, փորձառու, հմտավարժ պրոպագանդի դեմ: Նմանօրինակ պակասություններ բնորոշ են նաև բանավիճական մի շարք այլ հրատարակություններին: Կրոնադավանաբանական բորբոքված պայքարի տարիներին հրապարակ եկած գրքույկների մասին գաղափար տալու համար դիմենք մամուլում հրատարակված հաղորդումներից մի քանիսին:

1853 – 1857թթ. «Մասիսի» հնգամյա հավաքածուում որ, ի դեպ, պակասող համարներ ունի, առաջին այդպիսի հաղորդումը հանդիպում է թերթի 1853-ի առաջին համարում, որտեղ «Ազգային հրավեր խաղաղության» խմբագրականում ավստոսանքով հիշատակվում է այն մասին, որ ոմանք «մեր կյոնը պախարակելու համար ութածալ գրքեր շարադրեցին»: Չհիշատակելով նրանց մասին, թերևս այն պատճառով, որ «գրքերն» անանուն էին, թերթը, դարձյալ առանց կոնկրետ փաստի, նշում է «գաղտնի հարձակմամբ... օտար լեզվով գրքեր տպելու» մասին: Նույն տեղում էլ «Մասիսը» արձանագրում է, որ Մխիթարյան միաբանությունը տետրակ գրեց և ուղարկեց Կ.Պոլիս, որ տպագրեն: Թերթի հունվարի 21-ի համարում խոսվում է «Հայաստանյաց կողմնակցության դեմ գրված և ձեռքից ձեռք անցնող վիճաբատիպ մի նամակի մասին, իսկ փետրվարի 18-ի համարում արձագանքում է հունական «Անաթոլի» թերթին և ընդարձակ խորհրդածություններով անդրադառնում նաև հայերեն մի տետրի քննությանը: Հուլիսի 22-ի համարում «Մասիսը հատուկ հոդվածով անդրադառնում է Մխիթարյանների լույս ընծայած «Աթոռ սուրբ Պետրոսի առաքելապետի...» վերնագրով գրքույկին:

1854թ. ապրիլի մեկի համարում թերթի հրատարակած «Պապություն և Մխիթարյանք» վերոհիշյալ հոդվածի դեմ, ինչպես պարզվում է «Մասիսի» հունիսի 10-ի համարի մի ծանոթագրությունից, լույս են տեսել և Կ. Պոլսի գրավանճառների

մոտ կան ընդդիմախոսական «երկու տետրակ», որոնց պատասխանվել է մի այլ գրքույկով, որ լույս է տեսել հուլիսին (Լւսիմենիտիս ի Վոսբոր)։ Երեք այլ տետրերի մասին ծանուցում է զետեղված թերթի հունիսի 24-ի համարում. դրանք հրատարակվել են Չմյուռնիայում։ Սոցիալ-հասարակական հարցերի քննությունը՝ կրոնադավանաբանական խնդիրների արծարծման ընթացքում, որ սկզբնավորվեց 1850-ական թվականներին և աստիճանաբար կայունացավ, իր հերթին բավականաչափ հաստատուն կերպով նախապատրաստում էր 60-ականներին տեղի ունեցող զարթոնքը հայ իրականության մեջ՝ ներառելով արդեն նրա հասարակական-սոցիալական-տնտեսական-քաղաքական ամբողջ ասպարեզը՝ ընդհուպ մինչև ազգային-ազատագրական պայքարի հզորացումը և նրա գաղափարախոսության նպատակային զարգացումը՝ նույնպես աննախադեպ թափով։

Հենց այդ պատճառով էլ պահպանողական մամուլը, ճիշտ է մեղմաբարո, հանդես էր գալիս այդ գրականության դեմ։ Դեռ 1853-ի մայիսին (N 19-68) «Մասիսում» հրատարակվել է մի նամակ, որի հեղինակը գերադասել է հանդես գալ եռաստղանիշ ծածկանունով։ Նա ահազանգում է այն մասին, որ «քանի մը ատեն ի վեր մեր ազգին մեջ տեսակ-տեսակ գրվածքներ ի լույս կընծայվին»։ Դրանք հեղինակի կարծիքով «անճոռնի գրվածքներ» են, թեև կան այնպիսիները, որ մաս ազգին պատիվ... են և ընդհանուր ազգին հավանության դրոշմը կըկրեն իրենց վրա»։ Իր խմբագրական հավելման մեջ «Մասիսը» «ձախող տետրակներու և գրվածներու» առթիվ նկատում է, թե դրանք նրանով «օգտակար ծառայություն կմատուցանեն ազգին». որ «ընտիր գրվածներու հետ քաղղատվելով անոնց հարզը ճանչնալ կսովորեցնեն»։ Հասարակության դատին հանձնելով այդպիսի «ոչնչին կան անճոռնի գրվածոց հեղինակներին», թերթը կոչ է անում ավելի օգտակար գործով զբաղվել։ Նամակը և «Մասիսի» գնահատությունն ու հորդորները «Եվրոպայի» սրտից էին բխում։ Նա տեղն ու տեղն արտատպեց նամակը, «Մասիսի» հավելումը և իր կողմից դրանց կցեց խմբագրության բացատրականը¹։ Նա

¹ «Եվրոպա», 8 օգոստոսի (27 հուլիսի) 1853, N 32:

հայտարարում է, թե վաղուց միաք ուներ նման հողված հրատարակել և որ «մխիթարանքով և ուրախությամբ» է ընդունել «ծանրակշիռ ու խոհեմ գրվածքը»: Բայց դա քիչ է, «Եվրոպան» կոչ է անում խմբագիրներին՝ «մշտնջենավոր մոռացության տակ իյնալու արժանի հատվածները» հրատարակելու փոխարեն լույս ընծայել վերոհիշյալ նամակի պես նամակներ, ընդհանրապես հրաժարվել ընդդիմախոսություններից, որոնց հրատարակումով «ազգին նախատինք կզրեն»:

Բոլորովին այլ է «Եվրոպայի» դիրքն այն գրքերի նկատմամբ, որոնք կրոնական բովանդակություն ունեն: 1854թ. փետրվարի 13(1)-ի համարում, անդրադառնալով վարդապետ Վ.Շագոթճյանի նորատիպ մատյանին, թերթն այն համարել է «պատվական գործք», որովհետև ամեն բանի մեջ ջանքն ու նպատակը եղած է աստվածային կրոնը՝ փիլիսոփայության հետ քարեկամական կապանքով մը միավորել, որով և արմատքե խլել այն թունավոր նախապաշարումը, որով կաշխատին կրոնը մտաց դեմ ու սրբազան գիտությունը փիլիսոփայության դեմ ճակատացնելու»: Ըստ այդմ նա ընթերցողին ներկայացնում է «Հրահանգ վարդապետության կրոնի» գրքի չորրորդ գլուխը՝ քրիստոնյայի պարտականությունները:

Այլ վերաբերմունք «Եվրոպան», ինչպես և «Մասիսը», չէր կարող ունենալ: Թե՛ Մխիթարյանների և թե՛ Կ.Պոլսի ազգային պատրիարքարանի պաշտոնաթերթերի համար ազգային մտքի արթնացումը, «ազգին մտածմանց և զգացմանց արձագանքը» գրեթե հավասար չափով թուլատրելի չէր:

Ազգի անկասելի կենսունակությունն ազդանշող այդ հզոր ու համընդհանուր տարածում գտած շարժման ակունքում 1850-ականի սկզբներին հայտնվեց նաև Սոտ. Ոսկանյանը, հայտնվեց միանգամից, իր խրոխտ ձայնով, մարտնչող հրապարակախոսի գրչով ու ազատության դրոշով, անկաշկանդ ու ազատամիտ մտածողությամբ, հայ իրականության մեջ թարմ հնչող ու նույնիսկ շատերին ցնցող գաղափարներով: Նա Կ.Պոլսում գտնվելու կարճ ժամանակամիջոցում հրատարակեց իր առաջին երկը՝ Վիեննայի Մխիթարյանների պաշտոնական օրգան, ամիրայական քսակից ու գաղափարախոսությունից սնվող «Եվրոպա»

հանդեսի ու նրա քարոզների դեմ, որոնք բուռն հուզումներ էին առաջացրել հայկական շրջաններում, մանավանդ պարբերական մամուլում ու փոքրածավալ հրատարակություններում: Դա «Ներքին համոզում» խորագրով պամֆլետն էր¹:

Մեծ չէ այդ պամֆլետը՝ ընդամենը 34 տպագիր էջ: Բայց այն կրակոտ խանդավառությամբ գրված մի երկ է, հայ քաղաքական հրապարակախոսության նշանակալից վավերագիր, որ, ցավոք, դեռ չի արժանացել պատշաճ ուշադրության ու գնահատականի: Մինչդեռ այդ «Հոռմեական պարզև» երկերով դրվում է հայ պամֆլետային գրականության ու հայ դեմոկրատական հրապարակախոսության կայուն մի անկյունաքարը: Դրանցում Ռսկանյանը հանդես է գալիս հասուն գաղափարախոսությամբ ու հասարակական մտածողությամբ, չափազանց խոստումնալից գրչով, մինչ այդ անժանոթ եզակի դիպուկությամբ, թարմ գրելաոճով ու հղկված լեզվով՝ աշխարհաբարով: Առհասարակ հազվադեպ է պատահում, որ այս կամ այն հեղինակը միանգամից, իր առաջին գործով ամբողջությամբ ու որոշակիորեն հանդես բերի իր ներքին էությունը, իր տաղանդը, ինքնուրույնությունը, կուռ մտածելակերպը: Ռսկանյանն այդ հազվադեպ հեղինակներից է: Նրա պամֆլետները, իրոք, մեծ կրթով ու սուր մերկացումներով են գրված:

Վեր բարձրանալով ժամանկի ու հայ իրականության թելադրած զուտ կրոնադավանաբանական խնդիրներից, Ռսկանյանն արձագանքել է լուսավորական-դեմոկրատական մտահայեցողությանը, քննել է համազգային նշանակություն ունեցող այնպիսի հանգուցային հարցեր, որոնցով պայմանավորված էին ազգի ոչ միայն սոսկ գոյությունը, այլև առաջադիմությունը և ապագան: Հենց դրանում է Ռսկանյան հրապարակախոսի ուժը, նրա ստեղծագործության իրական արժեքը: Ըստ որում մենք կարծում ենք, որ այդ պամֆլետմները

¹ Ռսկանյանի այդ պամֆլետի լայն ընծայման մասին «Արշալույս արարատյանում» ազդ չի գետեղվել, թեև թերթը մշտապես ծանուցում էր նոր հրատարակությունների մասին: Բայց թերթի խմբագրությանը հայտնի էր, որ Մյուխրայան պրոպագանդի դեմ հատուկ գրքեր և տետրակներ պատրաստված են և լույս պիտի ընծայվեն («Արշալույս արարատյան», 26 մարտի 1854, N 464):

հայտնի չափով նախապատրաստում ու պայմանավորում էին հետագա տարիներին հրատարակված նմանօրինակ երկերի, մասնավորապես նաև «ընդունելության ընծայի» հանդես գալը:

Այդ պամֆլետներով մեր առջև Ստ.Ոսկանյանը հառնում է իր ամբողջ հասակով՝ ուղղաձիգ, առնական, շիտակ ու անգիջում, նոր շավիղ բացող ու նորովի նոր խոսք ասող: Ոչ միայն Ոսկանյանի գրչին պատկանելու, այլ իրենց սուր հարցադրումներով, արմատական խնդիրների շոշափումով, հայ հրապարակախոսության շրջադարձային մի փուլի նշանավորումով, ազգային առաջադիմության ու լուսավորության կենսական շահագրգռվածությամբ այդ պամֆլետները հատուկ տեղ ունեն: Այդ տեղը պայմանավորված է նրանով, որ Ստ. Ոսկանյանի պամֆլետների շնորհիվ հայ հրապարակախոսության, ավելի ճիշտ պամֆլետային գրականության մեջ սկզբնավորվում է մի կարևոր, նրա էությանը բնորոշ ելակետ. պամֆլետը դառնում է գենը՝ կոնկրետ պայքարում, կոնկրետ հարցեր քննելու և համազգային հետաքրքրություն ունեցող խնդիրներին պատասխան տալու միջոց:

Հայ դեմոկրատական հրապարակախոսության զարգացման ապագա պատմաբանն, անշուշտ, ավելի ճշգրտությամբ կորոշի Ոսկանյանի այդ և մյուս պամֆլետների սկզբնարար նշանակությունն ու տեղը՝ մինչև XIX դարի 80-ական թվականները նրա անցած ուղու տարեգրության մեջ: Տարակուսելի չէ, որ իր ոչ մեծ երկու գրքույկներով Ոսկանյանը հայ հասարակական մտքի զարգացմանը նոր խթան է հաղորդում, որոշակի ուղղվածություն է մտցնում գաղափարական պայքարի ասպարեզում:

Մոտիկից ծանոթանանք Ոսկանյանի այդ երկերին և գաղափարական այն արձագանքին, որ գտան դրանք:

«Ներքին համոզում» պամֆլետի դրդակետը, ըստ էության, Մխիթարյանների «Եվրոպա» թերթի 1853թ. մայիսի 16 (4)-ի համարում (էջ 79-80) զետողված «Ազգային» խորագրով հոդվածն է՝ «Ուսումնական» բաժնի ներքո: Նրա վերնագիրը ևս քաղված է այդ թերթի տարեմուտի հայտարարությունից՝ «Ուրիշին մտքին մեջ *ներքին* և *ազայր* համոզում հառաջ բերենք»,

ինչպես և միաժամանակ հիշյալ հողվածից, որտեղ ասված է այն մասին, որ հարկ է քննել, թե ժողովրդի մեջ հուզում առաջացրած «դեպքն արտաքին թշնամանք, թե ներքին համոզում է»։ Առհասարակ, ամբողջապես պամֆլետն ուղղված է «Եվրոպայի» գաղափարախոսության, կոնկրետ՝ այդ երկու հողվածների քարոզած սկզբունքների դեմ, հատկապես պապական այն պնդման դեմ, թե «հռոմեական միութենեն դուրս կեցած» հայերը հերձվածող են, հերետիկոս։

Այդ վիրավորանքները, մանավանդ ազգին հերետիկոս անվանելը ցնցել էր ժողովրդին։ Նրա կրոնական արժանապատվությունը վիրավորված էր։ Եվ Ռսկանյանը գրիչ է վերցրել, որպեսզի պատասխանի Մխիթարյաններին, սրբի ժողովրդին հասցված վիրավորանքը։ Բայց ոչ միայն դրա համար։

Ռսկանյանը նախ դիմում է մեր պատմական անցյալին, որպեսզի բացատրի, որ «հերետիկոսին պատիժն էր հուր ու սուր» և նրան չհավասարվելու համար ստիպված պետք է «կամ մատնիչ կամ դահիճ»... կամ Հուդա և կամ Վասակ» լինել։ Դրանից հետևում է, որ «եթե հավատաքննությունը մինչև ցայսօր տևելու ըլլար, Վիեննայի միաբանությունը կամ մեր ազգը այրել պիտի տար, կամ ինքն իր ձեռք այրեր և մեր Հայկա սերունդը ափ մը մոխիր պիտի դարձներ»¹։

Ռսկանյանը կտրուկ է ու վճռական. «Ըստ իմ կարծյաց, – գրում է նա, – Վասակին և Մխիթարյանի մը մեջ, բնավ տարբերություն չկա։ Մեկը զմեղ պարսկադավան ուզեց ընել և «իբրև զշուն մեռավ... չգտավ տեղի գերեզմանի նորա», կըսե սուրբ Եղիշե պատմիչ, մյուսն ալ պապադավան կուզե կոր ընել մեր ազգը, և չգիտեմ ի՞նչ պիտի ընդունի անկողմնապահ պատմիչե մը» (էջ 7)։ Այսպես ղնելով հարցը, նա միաժամանակ դիմում է նրանց, ովքեր պաշտպանում են Մխիթարյան միաբանությանը, նպաստներ տալիս «գիրք տպելու համար, որ հայոց ազգը լուսավորվի», հավանաբար նկատի ունենալով Հովհ. Տատյանին և այլոց։ Հրապարակախոսը ընդգծում է միաբանության խոստովանությունը այն մասին, որ արտահայտում է իր «ներքին

¹ [Ս. Ռսկանյան], Ներքին համոզում, Կ. Պոլիս, 1853, էջ 6-7։

համոզումը», «կրոնական համոզումը», որ այս «նոր բան չէ», «Իրենց կաթին հեղ ծծած են, իրենց հեղ մեծցած և միանգամայն ասպացուցական գիտություն մը հասած է»: Նույն սկզբունքով էլ Ռսկանյանը հռչակում է իր «նեքքին համոզումը»՝ «պապությունը հերետիկոսութենեն ալ շատ վատ բան է» (էջ 9): Մարդկությունը, նույնիսկ ավետարանը ամբողջ աշխարհում բողոքում են պապության դեմ: Ինչ վերաբերում է Մխիթարյանների պնդմանը, թե իրենց կարծիքը հայ ժողովրդի հերետիկոս լինելու մասին պապականությանը դավանող «երկու հարյուր միլիոն մարդու նեքքին համոզումն է», ապա Ռսկանյանը կասկածի տակ դնելով այդ¹, գտնում է, որ կաթոլիկությունը պաշտոնապես ընդունած երկրներում հազիվ երկու հազար մարդ գտնվի, որ դրականապես վերաբերվի Մխիթարյանների հարցադրմանն ու մեղադրանքին: Գլմենյով իր ընթերցողին նա ասում է.

«Գնա, սիրելի ընթերցող, եթե կարողություն ունիս. ճանփորդություն մը ըրե Գաղղիայի, Իտալիայի, Գերմանիայի մեջ. պատմե այն երկրի ժողովրդցը, թե Արևելքի մեջ խեղճ հիմ ազգ մը կա (իմա՝ հայ ժողովուրդը – Մ.Հ.), որ մեկու մը գեղություն ըրած չունի, որ մեկու մը ծանր խոսք չըսեր – (թե որ իր համբերությունը չի հատուցանեն), որ մեկու մը հեա չկովիր, որ իր ջանիվք վաստակածը խնայողությամբ կուտե երեսին քրտինքովը, սրտին ծարավը անտրտունջ կանցանե, և բարոյապես իրեն միմիայն մխիթարություն մնացեր է իր քրիստոնեական կրոնքը, գորն որ անբիժ պահեց և կպահե այնպիսի պարագաներու մեջ, ուր շատ ազգեր ընկճյալ կորան: Աս քարեպաշտ ազգը Պապին իշխանությունը չուգեր ընդունիլ, վասնզի իրեն նախատինք կսեպե անանկ գեղճ իշխանության մը հայատակիլը, և գիտե, որ եթե անոր հնազանդի, իր նախնիքներեն մնացած ազգային ավանդույթները և սովորությունները բոլորովին պիտի կորսնցնե: Հարցուր անոնց, թե ասանկ անմեղ ու անտրտունջ ազգ մը նախատել և հետերիկոս կոչել կվայելե մի՞ իր պատիվը ճանչցնող մեկու մը» (էջ 9-10):

¹ Վիեննայում 1850-ին հրատարակված աշխարհագրությանը դիմելով, Ռսկանյանը հիշեցնում է, որ ուղղափառ կրոնին հավատացողների քիվը միայն 140 միլիոն է, և ապա հարցնում՝ «վաթսուն միլիոն սուտ գրել կըլլա՞ մի, ով *Եվրոպա* րթագիր» (էջ 11):

Այս է առաջին անգամ իր ժողովրդի պատիվը և իրավունքները հրապարակայնորեն պաշտպանող երիտասարդ հրապարակախոսի հավատամքը, որին մա պետք է նվիրի իր ամբողջ գործունեությունը, թեև շարունակ պիտի հալածվի, քարկոծվի, թեև նրա առջև պետք է փակվի ամեն մի ասպարեզ, նույնիսկ մատնվի սովի ու քաղցի:

Ըստ երևույթին, անհրաժեշտ է առանձին անդրադառնալ Ոսկանյանի երգիծական գրելաոճին և այդ առթիվ ճշտել հայ նոր երգիծաբանության սկզբնավորման տարեթիվը: «Ընդունելություն ընծային» երկը դիտվում է որպես հայ նոր գրականության մեջ երևան եկած առաջին երգիծական ստեղծագործությունը: «Դեռ 1879-ին Ալ.Նրիցյանը գրել է. թե մինչև նրա հրապարակ գալը» հայերեն լեզվով մի այդպիսի սրամիտ կատակներով լի և զվարթ ծիծաղ շարժող գրքույկ չէր երևցած»¹: Այդ վարկածը մեկից ավելի անգամ կրկնվել է տեղ գտնելով մասն ապակառուցի հրատարակություններում: Այդպիսով, փաստորեն, ընդունվել է, որ հայ նոր գրականության առաջին երգիծական երկը Թ.Կրկռիկյան ծածկանունով հրատարակված «Ընդունելություն ընծային» գործն է, որ լույս է տեսել 1856թ.:

Սակայն հայտնի են Աբովյանի շենշող երգիծական ստեղծագործությունները, հայտնի է, որ Մ.Նալբանդյանը երգիծական չափածո գործեր է հրատարակել դեռևս 1851-ին, «Արարատի» սայրիլյան համարներում: «Հիմարաց՝ ուսման վրա ունեցած կարծիքը» և «Հերքումն հիմարական կարծյաց, զոր անմիտք ուինին ի վերա ուսման» ընդարձակ բանաստեղծությունները՝ առաջինն աշխարհաբար, երկրորդը՝ պարզ գրաբար, հենց երգիծական ստեղծագործություններ են՝ գրված թերևս 40-ականի կեսերին: Մյուս կողմից հայտնի է մաս, որ Նալբանդյանից առաջ երգիծական գործեր են գրել ու հրատարակել Մ.Թաղիադյանը և Խ.Աբովյանը:

Արդ, հայ նոր գրականության պատմության մեջ երգիծական անդրանիկ գործերի երևան գալը «Ընդունելություն ընծային», գրքույկի հետ կապելը, իսկ սկզբնավորումը 1856թ. համարելը թվում է ոչ միայն տարօրինակ, այլև ավանդությամբ կրկնվող

¹ «Փորձ», 1879, N 6, էջ

փաստական սխալ, թյուրիմացություն: Ավելին, կարծում ենք, որ այդ թվականը, մանրակրկիտ հետազոտությամբ կարելի կլինի զգալիորեն ետ տանել, իհարկե, անկախ ավելի վաղ շրջանում ստեղծված երկերի գրական մարդկանցից կամ թեմայի հասարակական արժեքից ու հնչեղությունից: Չէ՞ որ հայ ժողովրդին, ստեղծագործող նրա զավակներին, անկախ այն տառապանքից, որ մշտենջնապես ու ամենուր ուղեկցում էր նրանց, հատուկ է եղել հումորը, ծաղրը և աշխույժ երգիծանքը:

Չափազանցություն չի լինի ասել, որ Ոսկանյանը մի ինչ-որ տեղ կարող է համարվել նախորդը նույնիսկ Հ.Պարոնյանի, որ հարգանքով էր վերաբերում Ոսկանյանի գրական վաստակին: Հատկանշական է, օրինակ, այն, որ Պարոնյանը 1888-ին, հանդես գալով «քննադատական զբոսանք» ընդդիմախոսությամբ, դատապարտում է նորելուկ բանաստեղծներին ու բանասերներին, որոնք ծուռ աչքով են նայում մայրաքաղաքներում, մանավանդ «Եվրոպիո այլևայլ մայրաքաղաքներու մեջ» ուսում առած մտավորականներին: «Ասոնց համար, – գրում է Հ.Պարոնյանը, – նշանակություն չունի ո՛չ Ս.Ոսկանյան, ո՛չ էլ Չիլինկիրյան, ո՛չ Պերպերյան, ո՛չ Չերազ, ո՛չ Տեմիրճիպաշյան, ո՛չ Սեթյան, ո՛չ Մամուրյան... և, վերջապես, ոչ մին անոնցմե, որք գրելով կգրեն և ազգային գրականությունը կծաղկեցնեն այսօր»¹:

Գրական-հրապարակախոսական վարպետության տեսակետից հատուկ ուշադրության է արժանի այն, որ Ոսկանյանը իր պամֆլետներում դիմում է երկխոսության և դրանով իսկ հասնում գեղարվեստական բարձր ու դիպուկ արտահայտության: Նա այդ ձևի առաջին կիրառողներից մեկը լինելով մեր մամուլում, ցուցադրել է նրա ճկունությունն ու հեղինակային խոսքի բացահայտման լայն հնարավորությունը: Այդ ձևի լայն ու բազմակողմանի կիրառում է գտել հայ մամուլում և հրապարակախոսության մեջ, հասել է բարձրագույն աստիճանի մասնավորապես հենց Հ.Պարոնյանի մոտ:

Ինչպես պետք էր սպասել, Ոսկանյանի պամֆլետները, մասնավորապես «Ներքին համոզումը» պատկառելի արձագանք են գտել:

¹ Հ.Պարոնյան, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1979, էջ 592:

Նախ նկատենք, որ Ոսկանյանի մոտեցումն ու վերաբերմունքը «Եվրոպայի» 1853թ. մայիսի 16(4)-ի N 20-ում տպագրված «Ազգային» հոդվածի և նրանում արծարծված գաղափարների նկատմամբ լիովին համահունչ է Մ.Նալբանդյանի՝ հետազայում դրսևորած վերաբերմունքին նույն թերթի, նույն համարի նկատմամբ: «Յադագս հայկական մատենագրության» մեջ, որ, ենթադրաբար, գրել է 1854-ին կամ 1855-ին և Նալբանդյանի հրապարակախոսական բեմելի անդրանիկ քայլն է, Նալբանդյանը երկու անգամ հիշատակում է «Եվրոպա» թերթը¹:

Նալբանդյանը հատուկ ուշադրություն է դարձրել Ոսկանյանի «ներքին համոզումն» պամֆլետին և, քաղելով նրա կտրուկ տողերը Մխիթարյանների հասցեին, լիովին հավանություն է տվել դրանց: Այդ վերաբերմունքով և «Հյուսիսափայլում» վերոհիշյալ տողերն արտատպվելու շնորհիվ Ստ. Ոսկանյանի «Ներքին համոզումն» պամֆլետը արժեքավորվելու հետ միաժամանակ արձագանք է գտել ու նորովի հնչել արևելահայ իրականության մեջ:

Դա ոչ միայն Ստ. Ոսկանյանի պամֆլետի առաջին էական արձագանքն է, այլև Ոսկանյանի ու Մ.Նալբանդյանի փոխհարաբերության առաջին վկայությունը, նրանց առնչակցության առաջին էջը: Ոսկանյան-Նալբանդյան փոխադարձ կապի ու ազդեցության թեման պակաս ուշադրության չի արժանացել, նույնիսկ դարձել է հատուկ ուսումնասիրության առարկա²: Անկախ դրանից այս ուսումնասիրության մեջ մենք անհրաժեշտաբար կանդրադառնանք երկու հրապարակախոս-գործիչների

¹ Մ.Նալբանդյան, ԵԼԺ, հ. 2, էջ 41, 46, 192, և հ. 1, էջ 189:

² Այս թեմային անդրադարձել է Ա.Մակարյանը՝ «Միրայել Նալբանդյանի արևմտահայ զինակիցները» (Երևան, 1946), «Մ.Նալբանդյանի և Ստ. Ոսկանյանի փոխհարաբերության հարցի շուրջ» (ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1955, N 4), «Ստեփան Ոսկան» (ՀՍՍՀ պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատությունների ժողովածու N 6, մաս 1, Երևան, 1960) ուսումնասիրություններում, Ա.Հովհյանիսյանը (նշվ. աշխ., հ. 1, և հ. 2), Ա.Բ.Կարինյանը (նշվ. աշխ., հ. 2) իրենց մենագրություններում: Թեման հատուկ ուսումնասիրել է Մ.Դարոնյանը և զեկուցումով հանդես եկել Ստ. Ոսկանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված ԳԱ պատմության և Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտների միացյալ գիտաժողովում՝ 1976թ. հունիսի 25-ին:

փոխհարաբերության փաստերին: Ժամանակագրական իմաստով Նալբանդյանի և Ոսկանյանի գաղափարական փոխհարազատությունն ավելի հին է, քան իրավունք են տալիս դատելու մինչև այժմ երևան հանված կոնկրետ փաստերը:

Հափազանց բարձր է գնահատել Նալբանդյանն «Ընդունելությունը ընծային» պամֆլետը և նրա հեղինակի «ճոխ կատակերգական քանքայր»: «Ներքին համոզումն» պամֆլետի վկայակոչումով, հրավիրել է ընթերցողին ծանոթանալ նրան:

Ստ. Ոսկանյանը քայլ առ քայլ առաջ էր ընթանում իր որդեգրած ուղիով. իր ապագա մեծ գործունեության ասպարեզն էր որոնում՝ այդ ընթացքում ձեռք գարկում նաև քարգմանությունը՝ դարձյալ ֆրանսերենից:

Աշակերտական տարիներին կատարած հիմնականում չափածո քարգմանություններից հետո Ստ. Ոսկանյանը, գրեթե տասը տարի անց, 1853-ին ձեռնամուխ եղավ էժեն Սյուի «Թափառական հրեան» վեպի քարգմանությանը: Հատկանշող ընտրություն էր դա: Նախ Սյուի վեպերը, մասնավորապես «Թափառական հրեան», ժամանակի ամենից շատ ընթերցվող և առավել մեծ հետաքրքրություն առաջացնող երկերն էին: Ֆրանսիական տաղանդավոր գրողի գործերը գրավում էին ընթերցող հասարակությանը, նրանց շուրջ լուրջ և սկզբունքային բանավեճեր էին ծավալվում:

Այնուհետև, հատկապես ընտրելով «Թափառական հրեան», Ստ. Ոսկանյանը քարգմանում էր ոչ միայն հետաքրքրասիրությամբ ընթերցվող մի գործ, այլ նաև հայ հասարակությանն էր ներկայացնում հակակաթոլիկական կրոնի ու եկեղեցու քննադատությամբ հագեցած մի ստեղծագործություն, որի էջերում արձարժվող գաղափարները համահնչուն էին հայ ընթերցողի մտորումներին: 1850-ականին բուռն թափ ստացած կրոնադավանաբանական այն պայքարում, որ տեղի ուներ արևմտահայ զանվածներում, «Թափառական հրեան» ուներ իր ուրույն նշանակությունը, կոչված էր որոշակի դեր կատարելու, և նրա միջոցով Ստ. Ոսկանյանը նոր հարված էր հասցնում պապական պրոպագանդին և Վատիկանի գաղափարախոսությանը, շարունակում էր պայքարը հայ ժողովրդին պառակտելու և դավանափոխության մղելու կաթոլիկական նկրտումների դեմ:

Նրա հրատարակությունը նպաստում էր պատռելու նաև արեղայական խավի գործունեությունը քողարկող վարագույրը: Իզուր չէր, որ Մխիթարյանները վեպն ու նրա հեղինակին նշավակում էին ամենախիստ արտահայտություններով:

Նպատակ ունենալով թարգմանել վեպը, կարելի է ասել, Ոսկանյանը նրա հրատարակության հետ կապում էր այն նույն հույսերը, ինչ Մ.Նալբանդյանն էր փայփայում ավելի ուշ ձեռնամուխ լինելով նույն երկի թարգմանությանը:

Հենց այդ նպատակով էր նա վեպի թարգմանությանը կցում իր «Հառաջաբանը» և «Հիսուսի կյանք» ուսումնասիրությունը¹, որով գուցակշիռ էր անցկացնում Մխիթարյանների և հիսուսյանների միջև: Այդ նույն մոտեցումով էր վեպի թարգմանությանը ձեռնամուխ լինում Ոսկանյանը, որը շուտով իր հանդեսի էջերից հարցնում էր. «Մխիթարա հոգևոր դայակը հիսուսյանը չէ մի²»: Նա մի այլ անգամ համերաշխվում է այն հեղինակի հետ, որը Մխիթարյաններին համարել է «Արևելքի հիսուսյաններ» և այդ «գորշ դրոշմը» համարում «մեծ ճշմարտություն մը», իսկ Մխիթարյանների գործունեությունը քննելիս մասնավորապես շեշտում է, որ Մխիթար արային քահան եմ կարգել հիսուսյանները. «Հիսուսյանք» անոր հաջողակ քլալը տեսնելով իրենց սովորական արհեստին մեջ, կուրախանան և քահանա կօրինեն զանիկա», – գրում է Ոսկանյանը, ապա և եզրակացնում. «Կերևա, քե հիսուսյաններու օրհներքը Մխիթարյաններու վրայե պակաս չէ մինչև մեր օրերը», «Մխիթար հիսուսյանի աշակերտ է»²:

«Թափառական հրեայի» հայերեն հրատարակության, հավանաբար նաև թարգմանությանը ձեռնամուխ լինելու համար

¹ «Թափառական հրեայի» առաջին մասը Մ.Նալբանդյանի թարգմանությանը հրատարակել է 1858-ին Մոսկվայում: Հրատարակությանը կցված «Հիսուսիանք» ուսումնասիրությունը նա թարգմանել է “Отечественные записки”-ի 1844թ. տարեկանարկներում լույս տեսած աշխատությունից, ինչպես պարզել է Ռ. Նամոմյանը (տե՛ս *Ռուզան Նամոմյան*, Ստեփան Նազարյան, Երևան, 1978, էջ 283): Դրանով նա վեպն ուղղում էր Մխիթարյանների դեմ: Մակայն Նալբանդյանին ևս վիճակված չէր գործն ավարտի հասցնել. նրա թարգմանությանը լույս է տեսել նույնպես միայն առաջին հատորը: Հետագայում՝ 1863-ին, վեպն ամբողջապես հրատարակվել է Կ.Փանոսյանի թարգմանությանը Կ.Պոլսում:

² «Արևելք», 15 օգոստոսի 1855, N 4, էջ 116, 133, 168, 169:

Ստ. Ոսկանյանը նախապես բանակցել է հայ անդրանիկ խմբագիրներից մեկի՝ Խաչատուր Օսկանյանի (1818 – 1895) հետ, որ 1850-ականների սկզբներին հրատարակչական աշխատանքով էր զբաղված: Դժվար է որոշել թե նախաձեռնողն ո՞վ էր, ինքք՝ Ստ. Ոսկանյանը, թե՞ Խ.Ոսկանյանը, մանավանդ, որ երկուսն էլ հանդես են բերում ֆրանսիական գրականության լավատեղյակություն, մասնավորապես՝ Էժ. Սյուի երկերի լավ ըմբռնողություն: Տվյալ դեպքում ոչ էական այդ հարցից առավել կարևորը բուն փաստն է. 1853թ. Կ.Պոլսում հրատարակվեց «Թափառական հրեայի» առաջին մասը՝ Ստ.Ոսկանյանի բնագրից կատարած աշխարհաբար թարգմանությամբ:

Ցավոք, այդ հրատարակությունը չկա հայրենական գրապահոցում, ուստի և դժվար է գնահատել թարգմանության մակարդակը, դատել նրա ամբողջականության մասին՝ ուղղակի հիմք ընդունելով գիրքը: Չեոք բերված որոշ նյութեր և մի շարք անմիջական վկայություններ հնարավորություն են տալիս գաղափար կազմել «Թափառական հրեայի» միայն հրատարակության պատմության մասին, որ մեզ ավելի է հետաքրքրում:

Նախ, պետք է նշել, որ «Թափառական հրեայի» թարգմանությունը և հրատարակությունը կիսատ են մնացել: Պատասխանելով «Մասիս» բազմազան մեղադրանքներին ու քարկոծումներին, Ստ. Ոսկանյանը 1859թ. բացատրել է, որ «չորս կամ հինգ տետրի թարգմանության արժեքն ավելի ստակ մը չունցավ մեր վրա»¹: Ուրեմն այդքանից ավելի նա հազիվ թե թարգմանած լինի, քանի որ վեպի առաջին մասի հրատարակությունը նրան խոր հիասթափություն պատճառեց, նույնիսկ պատճառ եղավ, որպեսզի նա մտածի իր պատիվը փրկելու մասին: Ինչպես պարզվում է նույն բացատրությունից, հրատարակիչ Օսկանյանը խախտել է այն երկու պայմանը, որ գործին ձեռնամուխ լինելիս առաջադրել էր Ստ. Ոսկանյանը. «Առաջի պայմանը այն էր, որ մեր թարգմանությունը պիտի տպվի անփոփոխ, երկրորդ՝ մեր անունը չպիտի տրվի հոն: Հրատարակիչը ոտքի տակ առավ այս երկու պայմանները և ոչ միայն բառերու, ոճի, միտքի փոփոխություններ ըրավ, այլև մեր անունը՝ այս կերպ փոխված թարգմա-

¹ «Արևմուտք», 1 սեպտեմբերի 1859, N 17, էջ 136:

նության վրա դրավ, տպեց մեր կամքին դեմ»: Այդպես աղավաղված և իր կամքին հակառակ տպագրված քարգմանությունը Ոսկանյանը թողեց կիսատ և վեց տարի հետո արտահայտեց իր վճռական դժգոհությունը¹: Դատելով Ոսկանյանի դիրքից, քանի որ մեր ձեռքին չկա նրա քարգմանությունը, հրատարակիչը թույլ է տվել կամայական մոտեցում քարգմանչի լեզվի նկատմամբ, որն, ի դեպ, ժամանակի ամենից մշակված, ճոխ ու ճկուն գրական արևմտահայերենն էր, նույնիսկ միջամտել է վեպի բովանդակությանը: Ավելին, նա չի հարգել քարգմանչի՝ իր ժամանակի շատ հարգելի իրավունքը՝ հանդես գալ անանուն: Բնական է, որ Ոսկանյանը չէր կարող հաշտվել դրա հետ, և նրա ընդվզումը գրական ստեղծագործության մմանօրինակ հրատարակության դեմ, պատիվ է բերում նրան: Պաշտպանելով հեղինակային իրավունքը, նա պաշտպանում էր նաև ազատ գրելու, ազատ խոսքի իրավունքը: Ըմբռնելով այդ, նա Ստալի հետ միատեղ կրկնում էր՝ որ «միտքին անկախության կորուստը անոր ամլություն կբերե»:

Ի դեպ նկատենք, որ զարմանալի զուգադիպությամբ ոչ

¹ «Թափառական հրեայի» Ոսկանյանի քարգմանության խափանման առթիվ մամուլում տարբեր կարծիքներ են հայտնվել: «Արշալույս արարատյանի» հաղորդումից հայտնի է դառնում, որ նախատեսվում էր վեպը հրատարակել 16 հատրթի բաժանված՝ յուրաքանչյուր ամիս մեկ հատոր, չորսական նկարով (9 ապրիլի 1854, N 465): Կա հաղորդում, որ լույս է տեսել հինգ հատորը («Մասիս», 15 գուլիս 1854, N 129): Առավել հետաքրքրական է «Սեդուի» հոդվածը հենց «Թափառական հրեա» վերնագրով: Այդտեղ ուղղակի ասված է, որ Ստ. Ոսկանյանի քարգմանությամբ տպատգրվել է «հիանալի գլիքբին... մինչև մեկ երրորդը... Բայց ավաղ, որ (եթե լաժմնիս շիտակ է) հայադեմ ճիզվիքներու թունայից մանգաղը արմատեն խլեց...»: Այնուհետև քննարկությամբ հայտնում է, քն «հարմար ժամանակին պիտի փութանք արգո հասարակության տեղեկություն մը տալ, քն՝ ինչ միջոցով թշնամին արգելեց այս գրքին քարգմանությունն ու տպվելը» (14 մայիսի 1863, N 130): Ցավոք «Մեղուն» հետազայում չի անդրադարձել այդ հարցին, և նրա արժեքավոր վկայությունը մնացել է չփաստարկված: Կարելի է միայն ենթադրել, որ «Սեղուն» նկատի ունի Չամուռյանին, որը նույն 1863-ին «Թափառական հրեան» դատում էր «կեղծ» գրքերի շարքը: Չամուռյանը փաստարկում է, որ էժեն Սյուի վեպը անանուն մի հեղինակ՝ «պարզամիտներուն միտքը եկեղեցականներուն վրա զայրակղեցնելով, այս կուսակցության ընդունելի ծառայություն մը ընելու համար՝ տաճկերեն լեզվի քարգմանելու և... հայու գրով տպելու սկսած է» (տե՛ս Ժեռառ աբբայի «Խորհուրդ գաղտնի ընկերությանց» գրքի ծանոթագրությունը, Կ. Պոլիս, 1863, էջ 1-):

միայն Նալբանդյանի քարգմանության տպագրությունն է կիսատ մնացել, ինչպես Ոսկանյանինը, այլև նրա առաջաբանը եւ արժանացել է գրեթե նույն բախտին, ինչ Ոսկանյանի առաջաբանը: Գրաքննիչը մոտ 30 դիտողություններ է արել Նալբանդյանի առաջաբանին, չի հանդուրժել, որ նրանում «Թարգմանիչը չափազանց ազատ և անպատշաճ է արտահայտվում վեներաբլյան այն աշխատասեր վանականների մասին, որոնք արդեն ամբողջ աշխարհին հայտնի են իրենց անմահ ստեղծագործություններով»: Նալբանդյանը ստիպված էր հրատարակությունը գլուխ բերելու համար հաշվի առնել գրաքննիչ Բերոյանի դիտողությունները և այդպիսով փրկել իր հայտնի առաջաբանը¹: Բայց հրատարակչի «ազատ» մտտեցման հետևանքով «գոհվել» է Ստ. Ոսկանյանի առաջաբանը՝ կցված «Թափառական հրեայի» քարգմանությանը. «Հառաջաբանին մեջ, – վկայում է Ոսկանյանը նույն բացատրության մեջ, – գոր մենք գրելու էինք և գոր ինքը սխալներով զարդարելու համարձակվել էր, ընթերցողը կրնա դուրով նշմարել հրատարակչին տգիտությունը և հետևապես իմանալ, թե ինչու պատասխանատու չուզեցինք ըլլալ»: Այսօր դժվար է պարզել, թե ի՞նչ փոփոխություններ է կրել Ոսկանյանի գրած առաջաբանը, ի նչ «տգիտությունների» մասին է մա ակնարկում: Նույնիսկ հնարավոր չէ պարզել, թե «Թափառական հրեայի» առաջին մասին կցված առաջաբանը Ոսկանյանի գրած և փոփոխության ենթարկված առաջաբանն է. թե՞ վեպին կցվել

¹ Մ. Միփարյան, «Հյուսիսափայլ» ամսագիրը, Երևան, 1958, էջ 41-42:

² Վիեննայի Միփարյանների մատենադարանում պահպանվում է «Թափառական հրեայի» Կ. Պոլսում 1853թ. հրատարակված առաջին հատորում, որ լույս է ընծայել հրատարակիչ Խ. Օսկանյանը՝ ենթատիտղոսում նշելով՝ «Թարգմանեաց ի գաղղիերեն բնագրե Ս. Ոսկանեան»: Բանասեր Ս. Շտիկյանը 1973-ին ստացել է այդ հրատարակությանը կցված նախաբանի լուսատիպը, որի պատճենը նա սիրալիությունքամք տրամադրեց մեզ: (Այստեղ շնորհակալությամբ օգտվում ենք այդ պատճենից, որը օգտագործելու համար մենք ժամանակին տրամադրել ենք Վ. Ղուկասյանին: Դաստեղվ այն բանից, որ այդ նախաբանի էջակալումը սկսվում է «Է»-ով, հավանական ենք համարում, որ վեպի 3-6-րդ էջերում գետեղված է քերևս Ստ. Ոսկանյանի ակնարկած առաջաբանը: Ս. Շտիկյանի ստացածը կրում է «Հառաջաբան հրատարակչին» խորագիրը «Խ. Օ.» (Խաչատուր Օսկանյան) ստորագրությունը (էջ է-ժզ): Ամտեսելով կողմնորոշիչ այս ակնառու հանգամանքները, նա Խ. Օսկանյանի առաջաբանը ամբողջապես վերագրել է Ստ. Ոսկանյանին և քննել իբրև նրա «գրած առաջաբան» (տես «Գրական քերթ», 27 հուլիս, 1973):

է երկու առաջաբան՝ թարգմանչի գրածը և հրատարակչինը²:

Այդ ամենով հանդերձ, մույնիսկ անկախ վեպի հայերեն հրատարակությունը անավարտ մնալուց, «Թափառական հրեայի» թարգմանության և հրատարակության փորձը 1853թ. հայ թարգմանական գրականության վաղ շրջանի նշանակալից քայլերից է, որ պատիվ է բերում երիտասարդ Ստ. Ոսկանյանին, հայտնի չափով, իհարկե, նաև հրատարակիչ Խ.Օսկանյանին՝ առանց անգիտանալու, որ նա ինքնահաճ միջամտություններով փաստորեն խափանել է վեպի ամբողջական հրատարակու-

¹ Նման փորձ է արված Վ.Նուկասյանի «Պոլսահայ մամուլի և հրատարակատուության սկզբնավորումը» գրքում (Երևան, 1975, էջ 110/0 123): Անհիմն է, մանավանդ. Օսկանյանի դերի գերազնահատությունը վեպի թարգմանության գործում. ինչպես և չբաքցված անբարյացակամությունը Ստ. Ոսկանյանի նկատմամբ՝ նրա բացատրության առթիվ:

Առհասարակ հարկ է նշել որ Խ.Օսկանյանի գործունեությունը պետք է քննել ավելի խոր և ավելի լայն առումով, քան դա արվում է հիշյալ գրքում: Բանն այն է, որ իր հրատարակչախոսական գործունեության հենց սկզբնական շրջանում նա հանդես է բերել մամուլը եկամտախիտաբար դարձնելու միտում: Իր հիմնած ընթերցի առաջին համարները հրատարակելով հայերեն, ապա և հայատառ թուրքերեն, նա շուտով իրեն նվիրել է Թուրքիայի, թուրքական կյանքի ու բարքի, մույնիսկ սուլթանների պրոպագանդին՝ արտասահմանում: 1854 – 1856թթ. նա, Ս. Ազնավոյանի հետ, Լոնդոնում հիմնել է թուրքական «տեսարան» (ցուցահանդես), որ ներկայացվել է «տաճկական վարուց և բարուց տեսակ-տեսակ վիճակները»՝ համանից մինչև հարեմ, համալից մինչև սուրան: Լոնդոնից շուտով անցնելով Ամերիկա, Օսկանյանը թուրքական կեցվածք ընդունած շրջել է դահլիճից դահլիճ, քաղաքից քաղաք և հանդես եկել Թուրքիային նվիրված գեկույումներով, ապա և բավական շքեղ ու բազմաթիվ նկարներով զարդարված անգլերեն ծավալուն մի գիրք բնորոշ խորագրով՝ «Սուլթանը և իր ժողովուրդը» (“The Sultan and his people”, New-York, 1857)՝ դարձյալ ամբողջապես տողորված Թուրքիայի պրոպագանդով: Այդտեղ թուրքական լծի տակ ճնշվող այլ ժողովուրդների, նրանց քվում նաև հայերի վիճակը ներկայացված է ծուռ հայելու մեջ: Հետագայում Օսկանյանը ծավալել է միամտերական գործունեություն, պրոպագանդել է Ամերիկան, առքև հայերի գաղթը դեպի ԱՄՆ՝ ինքը լինելով առաջին գաղթողը և գաղթավայր հիմնողներից մեկը, մամուլում փառաբանել է «Նոր աշխարհը»: Ավելի ուշ նա հանդես է գալիս միախոնքների գործունեության քննադատությամբ՝ նկատի ունենալով նրանց անբավարար գործունեությունը: Այս և մի շարք այլ հանգամանքներ չի կարելի անտեսել, երբ նպատակ է դրվում աշտօրվա ընթերցողին ներկայացնել Խ.Օսկանյանի դիմագիծը, առավել ևս, որ նրա առաջին կենսագիրները շեշտում էին նրա «անօրինակ քերականունն», «ամերիկամոլությունը», մույնիսկ «սիրոք» մարդ լինելը: 1890-ին Խ.Օսկանյանը, որպես խմբագրապետ, Հ.Էլիմյանի հետ գործակցած հրատարակել է «Ազատություն» կարճակյաց թերթը, որի էջերում ևս նկատելի է խմբագրի դավանած հայացքների անկայունությունը:

թյունը¹: Կա որոշակի հիմք ենթադրելու, որ Ստ. Ոսկանյանը թարգմանությունը կատարել է ամենայն ջանադրությամբ: Բացի այն, որ Ոսկանյանը, խոսելով վեպի հրատարակված հատորի մասին, նշում է, թե նա «չունի այն դրոշմը, զոր ջանք ըրինք դնել հոն մեր հայերենով», Խ.Օսկանյանը նույնպես բարձր է գնահատում թարգմանությունը, հանգամանք, որ կրկին հաստատումն է այն բանի, թե առաջաբանի հեղինակը Ստ. Ոսկանյանը չէ: Նա վեպին կցված առաջաբանում, որ ի պատիվ հեղինակի, գրված է իմացությամբ, որոշակի սրությամբ ու նպատակասլացությամբ նկատում է, թե «հարզի թարգմանչին հաջողությունը մեզ կպարտավորե մեր գոհությունը հրապարակավ խոստովանել և հուսալ, որ ասանկ դժվար և տաժանելի ձեռնարկություն մը ազգին երախտագիտությամբը պիտի վարձատրվի և անոր պատվովը պսակվի»¹: Այս գնահատությամբ Օսկանյանը, անշուշտ, միայն սեփական հրատարակությունը չէր դրվատում ընթերցողին շահագրգռելու հասկանալի նպատակով, այլ նաև պատշաճն էր հատուցում Ոսկանյան թարգմանչին, որ, իրոք, իր ժամանակի լավագույն գիտակներից մեկն էր միաժամանակ թե՛ ֆրանսերենի և թե՛ աշխարհաբար հայերենի: Բայց ոչ հրատարակչի հրապարակային գոհունակությունը, ոչ էլ նյութական շահագրգռվածությունը, որ երկրորդական դեր չպետք է կատարեր ունեզուրկ, ապրուստի միջոցի կարոտ Ոսկանյանի գրավելիք դիրքում, ետ չեն պահել նրա վճռական դիմաշքջումից: Նրա համար իր սկզբունքից ու խղճից վեր ու գերադասելի ոչինչ չկար: Անհնար համարելով համագործակցել Խ.Օսկանյանի հետ, նա անդարձ խզեց իր կապը, անավարտ թողեց վեպի թարգմանությունը, իսկ հետագայում «Արևմուտքի» էջերից ազդարարեց. «Եվ որովհետև Իզմիրին Պուլխի վրա հսկել կարելի չէր, ստիպվեցանք մեր խոստումը ետ առնուլ և մեր գրագետի պատիվը ազատել անոր ձեռքե»: Այս դիրքորոշումը, որ առհասարակ բնորոշ է Ոսկանյանին, ինչ-որ տեղ մարգարեական էր. Խ.Օսկանյանի հրատարակչական գործունեությունն անփառունակ եղավ: Նա, եթե չենք սխալվում, հայ գրատպության պատմության մեջ այլ հետք, բացի «Թափառական հրեայի» նշված հրատարակությունը,

¹ *Էժ. Սյու, Թափառական հրեա, Կ.Պուլխ, հ. 1, 1853, էջ ԺԵ:*

չթողեց: Ստ. Ոսկանյանը, ընդհակառակը, հետագա տարիներին հանդես եկավ ֆրանսիական մի շարք գրողների երկերի հիանալի թարգմանություններով և դրանով ևս նպաստ բերեց հայ մշակույթին:

Էժ. Սյուլի վեպի թարգմանության առթիվ ականա մի հարց էլ է առաջանում: Ինչո՞ւ նա վեպի թարգմանությունը հրատարակեց Կ.Պոլսում և ոչ թե Չմյուռնիայում, որ իր լուսավորական ձեռնարկումներով, տպագրական հնարավորություններով բնավ չէր զիջում Թուրքիայի մայրաքաղաքին: Հենց 1853-ին, Չմյուռնիայում, Տեսեյան եղբայրներից Տիգրան Հարությունը (1832 – 1868) հիմնեց տպարան, որտեղ ի սկզբանե հրատարակվում էին եվրոպական, մանավանդ ֆրանսիական գրողների երկերը՝ աշխարհաբար թարգմանությամբ: Կոնկրետ վկայություն չունենալով, կարելի է լոկ ենթադրել, որ Ոսկանյանը Թուրքիա վերադառնալով նախ եղել է Կ.Պոլսում, որտեղ էլ, դեռ 1852-ին, պայմանավորվածություն է ձեռք բերել վեպի թարգմանության հրատարակության շուրջ, և երբ Չմյուռնիայում էր, արդեն կաշկանդված էր այդ պայմանավորվածությամբ: Բայց այն բանից հետո, երբ նա հիասթափվեց ու երես շրջեց պայմանագանց հրատարակչից, և Չմյուռնիայում արդեն սկսեց գործել Տեսեյանների տպարանը, նա դարձյալ չի օգտվել վերջինիս ընձեռած հնարավորությունից, թեև նրա «Հռոմեական պարզև» պամֆլետը հենց այդ տպարանում է տպագրվել: Դարձյալ ենթադրաբար կարող ենք ասել, որ նա առմիշտ է հրաժարվել վեպի շարունակության թարգմանությունից ու հրատարակությունից:

«Թափառական հրեայի» թարգմանությունը Ոսկանյանն իրագործել է Կ. Պոլսում և Չմյուռնիայում եղած ժամանակ՝ 1852 – 1853թթ., թեև նա ինքը շփոթությամբ նշում է, որ նրա թարգմանությունը սկսել է 1854-ին¹: Այդպիսով շատ կարճատև ժամանա-

¹ Մի քանի տարի անց՝ 1859-ին, Ոսկանյանը գրել է, թե «1854-ին Իզմիր կգտնվեիս, երբ սկսանք *Թափառական հրեա* անուն վեպը թարգմանել» («Արևմուտք», 1 սեպտեմբերի 1859, N 17, էջ 135): Սակայն վեպի առաջին հատորի հրատարակությունը թվագրված է «1853», իսկ հաջորդ 3-5 հատորները լույս են տեսել 1854-ի հունվար-հուլիսի ընթացքում, ինչպես ծանուցում են «Մասիսը» 1854թ. հունվարի 14-ի, փետրվարի 18-ի և հուլիսի 15-ի (N 103, 108, 129) և «Արշալույս արարատյանը», 1854թ. ապրիլի 9-ի (N 465) համարներում:

կամիջոցում, ինքնուրույնաբար գրական ասպարեզ ոտք դնելու առաջին երկու տարում, Ռսկանյանը երևան է հանում լուրջ գործունեություն ծավալելու հակում ու կարողություն: Դրանից առավել կարևոր է այն, որ Ռսկանյանն իբրև առաջին հրապարակային ելույթներով և էժ. Սյուի վեպի թարգմանությամբ որոշակիերոն կողմնորոշվում է դեպի դեմոկրատական ուղղությունը, որպես գրող և հրապարակախոս զինվորագրվում է այդ ուղղությանը, հանդես է գալիս որպես աշխարհաբարի հաղթանակի առաջամարտիկ:

Հրապարակային լայն գործունեություն ծավալելու համար նա կյոթությամբ ու գաղափարապես լիովին հասունացած էր արդեն և նրա գրչի ու մտքի առաջին արգասիքն իրավունք էր տալիս հանդես գալ ավելի լայն հրապարակում, սեփական ձայնով ու դրոշով: Սակայն Թուրքիայում գտնվող հայկական գաղթօջախներում 1850-ական թվականների սկզբներին հասարակական մթնոլորտն այնքան խավար էր, որ մթագնում էր ամեն ինչ, որ կարող էր լույս ճառագել: Ուստի և տարօրինակ չէ, որ, ինչպես վկայում են, Ռսկանյանը հարմար աշխատանք չգտավ ոչ Կ.Պոլսում և ոչ էլ Չմյուռնիայում: Ավելին. դատելով «Թափառական հրեայի» թարգմանության տպագրության փորձից, նա հենց այդ օրերին էլ պետք է, որ հաճգեր այն համոզման, որ իր առջև կժառանգան անհաղթահարելի խոչընդոտներ:

Նախ, այդ ժամանակաշրջանում մտավոր գործունեությունը Թուրքիայում առաջին քայլերն էր անում կրոնական շղարշից ազատագրվելու համար: Հասարակական մտքի սկսված արթնացումը դեռևս չէր թոթափել միջնադարյան քնկոտությունը, իսկ քաղաքական մտածողությունը դեռևս սնվում էր կրոնական դոգմաներով, Դուրանով: Աշխարհիկ ընթերցանության նյութը դեռևս «Հազար ու մեկ գիշերներն» էր կամ «Խոջա Նասրեդինի անեկդոտները», հազիվ անդրամիկ քայլերն էին արվում գիտական երկերի թարգմանության ուղղությամբ: Դեռևս մի տասնամյակ էլ պետք է անցնե՜ր, որպեսզի Թուրքիայում հնարավոր լիներ անհատական թերթ կամ ամսագիր հրատարակել, կարելի լիներ մամուլում լուրջ բանավեճ վարել: Իր բուն իմաստով հասարակական կարծիք դեռևս չկար:

Ռսկանյանի համար, այնուհետև, չափազանց աննպաստ

Էր թուրքահայ մթնոլորտը: 50-ական թվականների սկզբներին այդ մթնոլորտում նա փաստորեն որևէ հենարան չուներ և չգտավ, թերևս չէր էլ որոնում: Հրատարակվող պարբերականներից և ոչ մեկին նա աշխատակցել չէր կարող. իրենց բուն դրվածքով, դավանած գաղափարախոսությամբ, նույնիսկ բնդհանուր մակարդակով դրանք շատ հեռու էին ասպարեզ որոնող երիտասարդ, կրթված ու մտքի թռիչք ունեցող հրապարակախոսից. կարճատև գոյությունից հետո արդեն մի քանի պարբերականներ («Բանասեր», «Բուրաստան»), որոնք հրատարակվում էին Կ.Պոլսում, հարկադրաբար դադարել էին, իսկ լույս տեսնող «Մասիսը», ինչպես և Չմյուռնիայում տպագրվող «Արշալույս արարատյանը», մասամբ նաև «Արփի արարատյանը», խորթ էին բուրժուական դեմոկրատիայի սկզբունքները յուրացրած գործչին: Ամեն ինչ Մտ. Ռսկանյանին հրամայաբար հուշում էր, որ նա պետք է, այսուամենայնիվ, հայացքը դեպի ետ՝ Փարիզ դարձնի:

* * *

Հավանաբար 1854-ի սկզբներից Ռսկանյանը կրկին Փարիզում էր: Ի՞նչ էր նա անում կոնկրետ այդ ժամանակից մինչև «Արևելքի» երևան գալը՝ հաջորդ տարվա հուլիսի 1-ը: Բիչ բան է հայտնի, բայց այդ քիչն էլ դարձյալ խոսում է ու բնորոշ:

Ակադեմիկոս Ա.Հովհաննիսյանը ժամանակին անդրադարձել է Մատենադարանում պահպանվող մի վավերագրի: Այն Մտ. Ռսկանյանի շրջաբերակսնն է՝ ուղղված հայ ազգին և թվագրված՝ «1854»¹, գրվել է Փարիզում: Հայրենական գրապահոցներում պահպանվող միակ վավերագիրն է դա, որ գրված է Մտ. Ռսկանյանի ձեռքով: Բայց վավերագիրն առավել արժեքավոր է իր բովանդակությամբ, մանավանդ նրանով, որ պայտուհակում է Մտ. Ռսկանյանի հրապարակախոսության սաղմը, ուստի և բերենք ամբողջությամբ.

¹ Տե՛ս Մատենադարան, Կարողիկոսական դիվան Թ. 172, վ. 165: Տե՛ս նաև Ա.Հովհաննիսյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 306: Վավերագրի տակ չի նշված գրության ամսաթիվը: Ենթադրում ենք, թե այն գրվել ու տարածվել է 1854թ. հունիս-հուլիս ամիսներին:

«Առ հայ ազգ

Քանի մը օր կա տրտմալի և գրեթե անհավատալի լուր մը Բարիզի բոլոր հայազգի երիտասարդներու սիրտը տակն ու վրա ըրավ, ինչու որ այս լուրը ընդհանուր ազգին վրա մեծ անպատվություն մը կը դնէր: Եվ հիրավի: Ո՛վ արդոյք կկարծէր, որ այս մայրաքաղաքի մեջ հայկական մատուռ մը կանգնելէ ետև հիմա հոն և ո՛չ հայ մը երթա: Ո՛վ կկարծէր, թէ այնքան սիրով և եռանդյամբ օծվելէ ետև հիմա այն թափուր և գրեթե այրի մնա: Ո՛վ կկարծէր, թէ երկամյա պաշտոնն մը ետև, լուսավորչյան որդի մը անգամ հոն հանդիպիլ չուզէ և իր հայրական հավատը պաշտել:

...Պատճենը ի՛նչն է: Մեր բերանը չհամարձակիր ըսել և մեր գրիչը ակամա կնկարագրէ այսպիսի տրտմալի և անլուր վիճակ մը, որու միմիայն պատճառը է Շահնագարյան Կարապետ վարդապետը: Ասիկա իր շվայտ և ամոթալի բարքովը ոչ միայն մեր բոլոր հակակրոնությունը գրգռեց, այլ և մեր ազգը օտարներու առջևը ծաղր ու ծանակ ըրավ...: Եթէ հիշյալ անարժան վարդապետը մեր եկեղեցին չներկայացներ օտար երկրի մեջ, մեք արհամարհությունն ուրիշ զգացում չէինք ունենար անոր վրա: Այլ որովհետև ազգային հիմնադրության մը համար անիկա Բարիզ կգտնվի, անհնարին է, որ արհամարհությունը բավական համարիմք: Մեր կամքն այն է, որ այնպիսի... վարդապետ մը անպատիժ չմնա, ինչու որ անիկա ազգը անպատիվ ընելէ չերկյավ...: Ուստի կաղաչեմք մեր Սրբազան Հայրապետը, կաղաչեմք պարզևատու բարերարները, կաղաչեմք ընդհանուր ազգը, որ այս վարդապետը ետք կանչվի և ի դատ կոչվի, ու անոր տեղը առաքինի կարգավոր մը առաքվի Բարիզ, որ իր բարքովը մեր եկեղեցվո պատիվ և իր ուսումովը մեր ազգին օգուտ ընէ:

Եթէ ազգապետերու կողմն հայական պատիվը անարատ պահելու անհոգություն մը ցուցվի, զոր բնավ ամենևին չենք հուսար, այն ժամանակ կբռնադատվիմք, թեպետ և ակամա, հիշյալ վարդապետին վարքը և բարքը մի առ մի և անուրանալի պատճառներով գրել, տպել և իբրև բողոք հրատարակել: Անհնարին է, որ լռություն պահեմք այս ծանր պարագայի մեջ, վասնզի մոլության վրա քող մը դնելը՝ անոր շուքին տակը մտնել

է, ուր ոչ մարդ մը և ոչ ազգ մը կրնա իր պատիվը անբիծ պահել: Եվ ով չգիտեր, որ մարդուն կամ ազգի մը համար ամենե նվիրական բանը իր պատիվը է: Այս պատիվը, եթե մեր արյամբը սրբել հարկ ըլլա, պատրաստ ենք...:

Հուսամք թե այս համառոտ հայտարարությունը ամենուն դյուրիմանալի և բավական ըլլա

Բարիզ Բյու տը սենը, 21
1854»:

Ս. Ոսկանյան

Ոսկանյանի հայտարարություն-շրջաբերականը հետա-
քրքրական է նախ իր պարունակած պատմությամբ: Նա ցա-
տումով և ամենայն վճռականությամբ ծառանում է Կ.Շահնազար-
յանի վարքագծի դեմ՝ նպատակ ունենալով պաշտպանել և՛ հայ
ժողովրդի պատիվը, և՛ հայ եկեղեցու առաքինությունը: Իր
վարքագծով վարդապետը, ինչպես վկայում է վավերագիրը,
Փարիզում վարկաբեկում է հայ ժողովրդին, անպատվում հայոց
եկեղեցին: Կոնկրետ՝ Շահնազարյանի որ արարքները նկատի
ունի Ոսկանյանը, հայտնի չէ: Այլ աղբյուրները ևս լռում են այդ
մասին¹, թեև կան հիշատակություններ, որ նրա արարքների դեմ
եղել են նաև այլ բողոքներ՝ Փարիզից, Կ.Պոլսի մեծավորներին²:

Կարապետ վարդապետ Շահնազարյանի կենսագրությու-
նից, սակայն, հայտնի է, որ նա զործում էր Թիֆլիսում, եղել է
Ներսիսյան վարժարանի առաջին հոգաբարձության (խորհրդա-
րանի) անդամ, նրա վերատեսուչն էր և տպարանի վերակազմը:
Այդ պաշտոններում թույլ տված ինչ-ինչ զանցանքների քննու-
թյունից խուսափելով, հակառակ կաթողիկոս Ներսես Աշտա-
րակեցու կամքի, առանց թույլտվության 1849-ին նա հայտնվեց
Կ.Պոլսում, որտեղ, սակայն, ամբաստանվեց Չամուռճյանի կող-

¹ Մ.Նալբանդյանի վկայությամբ, Շահնազարյանը, Հ.Կոնկյանի և այլոց
գործակցությամբ բազմիցս հետամուտ էր եղել «ի ձեռք բերել զգումարն դրամոց
Մ.Բաբաջանյանին», որպեսզի Փարիզում դպրոց հիմնի (ԵԼԺ, հ. 4, էջ 116): Կարելի
է նաև ենթադրել, թե Թ.Կըլոիկյանի գրքույկում «Մյսիթարյան համախոհի»
հասցեին ամանունն արվող ակնարկ-մեղադրանքները վերաբերում են
Կ.Շահնազարյանին: Հավանաբար Մ.Նալբանդյանը դրանք պատահաբար չէր
մեջբերում (տե՛ս ԵԼԺ, հ. 1, էջ 433), թեև շարունակության մեջ նա հարգանքով է
նշում նրա հրատարակչական աշխատանքը:

² Տե՛ս «Արևմուտք», 15 օգոստոսի 1859, N 16, էջ 124:

մից, ենթարկվեց հավատաքննական հարց ու փորձի՝ հատուկ ժողովով: Հրապարակային կրկնակի քննությունը հաստատեց, որ նա «եկեղեցվո օրինավոր, հավատարիմ, կրոնասեր» վարդապետներից է¹, թեև դրանից հետո էլ Չամուռճյանը սկսեց իր պարբերականում հողվածներ հրատարակել ընդդեմ Շահնագարյանի: Սա էլ իր հերթին պատասխանեց Չամուռճյանին՝ «Արշալույս արարատյանի» էջերում՝ «Ոմն յազգասիրաց» ծածկանունով²:

Մի քանի տարի Կ.Պոլսում գրական ու մանկավարժական աշխատանք կատարելուց հետո Կ.Շահնագարյանը 1853թ. անցավ Փարիզ, որտեղ և 1854-ի հուլիսին հիմնեց հայկական մատուռ, ըստ «Արշալույս արարատյանի»՝ թուրքական կառավարության խնդրանքով և ֆրանսիական կառավարության՝ Նապոլեոն III-ի արտոնությամբ³: Այդ մատուռը տնօրինելու ժամանակին էլ վերաբերում է Ռսկանյանի ազդարարությունը, որը, հավանաբար, հասցեագրվել է ազգային գործիչներին ու եկեղեցու պարագլուխներին: Մատենադարանում պահպանվող Ռսկանյանի ինքնագիր ազդին կցված գրությունից պարզվում է, որ այն ուղարկվել է նաև «վեհապատիվ իշխան Խաչ. Լազարյանին»՝ մեկ այլ անձնավորության կողմից⁴: Գրության հեղինակն իր հերթին ևս գտնում է, որ ազգը խայտառակվում է, որ

¹ Այդ հարցաքննությունը՝ «Միջնադարյան ատյան մը» վերնագրով, հրատարակվել է «Արևելյան մամուլի» 1875թ. հունիս-հոկտեմբեր համարներում (տե՛ս էջ 218-225 և հետո):

² Տե՛ս «Արշալույս արարատյան», 23 նոյեմբերի 1857, N 403. և հետո:

³ Տե՛ս *Մ. Օրմանյան*, Ազգապատում, Երուսաղեմ, հ. 3, 1927, էջ 3846-3847 և 3887-3889, նաև «Արշալույս արարատյան», 2 հուլիսի 1854, N 471: Կ.Շահնագարյանը (1810 -- 1865) նախ Փարիզում, ապա Մանչեստրում, ծավալել է քարգմանչական հրատարակչական օգտակար գործունեություն, հրատարակել է մի շարք գրքեր և «Երկրագունդ» հանդեսը (1863): Նրա և Նուպար Նուպարյանի (Նուպար փաշա) կտակով հիմնվել է Կ.Պոլսի Շահնագարյան-Նուպարյան վարժարանը: Նալբանդյանը դրվատանքով է արտահայտվել նրա կողմից հրատարակվող «Շատ հայ մատենագրացի» մասին (I, 437):

⁴ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, ք. 172, վ. 165: Ի դեպ, Մատենադարանում պահպանվող Ղ.Պալղազարյանի մի նամակից հայտնի է դառնում, որ նա 1857թ. Մ.Մսերյանից ստացած ինչ-որ նամակ ուղարկել է Փարիզ՝ Սոս.Ռսկանյանին, որպեսզի նա հանձնի Խ.Լազարյանին (տե՛ս Մատենադարան, Սևերյանների ֆոնդ, ք. 205, վ. 1041):

անհրաժեշտ է ներգործել Կ.Պոլսի պատրիարքի վրա, դիմել ինչ-որ միջոցների: Համեմայն դեպս հայտնի է, որ լուրջ փորձեր են արվել կանխել Ոսկանյանի հետագա քայլերը և հարցը նեղ շրջանակում լուծել: Հետագայում, անդրադառնալով այդ խնդրին, Ոսկանյանը քացել է որոշ փակագծեր: Պարզվում է, որ ազդից հետո Ստ. Ոսկանյանին է դիմել Կ.Պոլսի ազդեցիկ սեղանավորներից մեկը՝ Պ.Խորասանճյանը՝ իր պաշտպանության տակ առնելով «Խայտառակությունը»: Նա գրել է. «Մենք ատվարդապետին վարուցը վրայոք մտերմական նամակներ առած էինք և ասանկ ծանր պարագայի մեջ արժան եղած զգուշավոր խոհեմությամբ, բանը չհամձնելով (բանը տանիքներու վրա կքարոզվեր) կարգի դնելու անօրինություններ ըրած էինք գայթակրության պատճառը ատկեց վերցնելու համար (Անտարակույս Բարիզեն հասնելով Պոլիս իր տունը տանելու համար)¹ և հոս գտնվող մեր բարեկամներուն ալ գրեր, աղաչեր էինք, որ աշխատին հնար եղածին չափ ծածկելու եղած անցքերը (եթե երբեք այսպիսի անցքերու հոտը կրնա ջնջվիլ ծածկույթի ներքև), մինչև որ մենք ատկեց պետք եղածը ի գործ դնելով ձեր օրինավոր ակնկալությունը լեցնենք և գայթակրությունը իսպառ սպուռ վերանա առանց անոր սահմանը ընդարձակելու» (1859, էջ 96 և էջ 125): Սեղանավոր ամիրան այնուհետև ավստում է, թե ինչու իր ազդարարությունից առաջ Ոսկանյանը «մտերմարար» չի գրել իրեն «անարժան վարդապետի» մասին և վերջում հորդորում է Ոսկանյանին՝ «հաճեցեք ուրիշ ծանրագույն միջոցներու ձեռք չզարնելու, որոնցմե ազգին պատվոյն նախատանց ավելի մեծնալը ձեր ԱԶԳ-ԱՄԵՐ սրտին ալ մեծ ցավ պատճառելուն տարակույս չունիմ»: Ամիրան նաև ցավ է հայտնում այն առթիվ, որ կարծիք կա, թե ինքը «ԱՆԱՐԺԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ» պաշտպանն է:

Հայտնի չէ, թե ինչ է պատասխանել Ստ. Ոսկանյանը Պ.Խորասանճյանին, բայց սա մի նամակ էլ է հղել Ոսկանյանին, սպա և Փարիզ մեկնող զմյուռնացի, «մեծապատիվ Հովսեփ

¹ Փակագծերում տրվող մեկնաբանություններն, անշուշտ, Ոսկանյանինն են, ուղիղ փակագծերի մեջ ասվածը նույնպես նրա ծանոթագրությունն է, որ տրված է տողատակ: Այստեղ և ստորև զլխագիրը նույնպես «Արևմուտքի» խմբագրինն է:

Չելեպիին» պատվիրել խնդրի շուրջ անձնապես բանակցել Ոսկանյանի հետ, նրան հաստատել, որ «հանցավորը» իր բարոյական պատիժը պիտի ընդունի և «խայտառակության» արմատը պիտի խլի ի սպառ» (1859 –, էջ 125)¹:

Այդօրինակ աղերսներից, իր «մեծապատիվ քաղաքակցի» հավաստիացումներից հետո և «ազգի պատիվը պաշտպանելու համար միայն գրիչ» վերցրած Ոսկանյանը հոժարակամ զիջեց, ապա և լռեց, նույնիսկ ներեց, ինչպես խոստովանում է հրապարակայնորեն: Բայց հանուն ազգի կատարված այդ զիջողությանը հետագայում չզնահատվեց նույնիսկ Պ.Խորասանճյանի կողմից: Անկախ դրանից 1854-ին Ոսկանյանը հասավ իր նպատակին: Երբքաղրում ենք, որ ազգային գործիչներն, իրոք, ինչ-ինչ միջոցներ են ձեռնարկել, որովհետև Կ.Շահնագարյանը շուտով թողնում է Փարիզը և փոխադրվում Անգլիա:

Արդեն այն հանգամանքը, որ ազդեցիկ ամիրաները մտահոգվել են Ոսկանյանի հարուցած խնդրով և շտապել են նամակներ հղել նրան, ներկայացուցչական բանակցության են դիմել նրա հետ, ասում է այն մասին, որ նոր-նոր հասարակական ասպարեզ մտնող Ոսկանյանը և հանձին նրան լայնածավալ գործունեություն սկսող դեմոկրատական երիտասարդությունը որոշակի ուժ էր ներկայացնում, որ նրա հետ ստիպված էին հաշվի նստել: Ամիրայական դասի ներկայացուցիչները արդեն փորձեր են անում «լեզու գտնել» եվրոպական մթնոլորտում աճող ապագա գործիչների հետ: Մինչ այդ ամիրանքը միայն մի լեզվով էին խոսում նրանց հետ՝ իրենց ազդեցիկ դիրքի և քսակի լեզվով: Ամիրայական գերիշխանության ժամանակը մոտենում էր վախճանին: Ըստ որում ամիրայական գերդաստանների առանձին երիտասարդ ներկայացուցիչներ երբեմն գործում էին երևելիների կամքին ու թելադրանքին հակառակ: Հենց հիշատակված Խորասանճյան ամիրայի որդին՝ Միքայելը, որ ուսանում էր

¹ Հովսեփ Չելեպի Յուսուֆյանը ամիրա Խորասանճյանի փեսան էր, զմյուռնացի մեծահարուստ Պետրոս Եուսուֆյանի որդին: Նա Փարիզ է մեկնել մշտական բնակության՝ 1854թ. սեպտեմբերին: Այդ ժամանակ էլ նա, իբրև հիշյալ ամիրաների փաստական ներկայացուցիչ, բանակցություններ է վարել Ա. Ոսկանյանի հետ («Արշալույս արսրատյան», 24 սեպտեմբերի 1854, N 477):

Փարիզում, աջակցում էր Ռսկանյանին և սկզբնական շրջանում մտերիմ էր նրան, նույնիսկ «Արևմուտքի» հիմնադիրներից մեկն էր (1859, էջ 32):

Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Ռսկանյանը հանդես է գալիս ոչ թե սոսկ իր անունից, թեև ազդը ստորագրում է միայնակ, այլ «Բարիզի բոլոր հայազգի երիտասարդների» կողմից, արտահայտում է նրանց զայրույթը Կ.Շահնազարյանի գործելակերպի հանդեպ: Նրանք համախոհներ էին, և դա կարևոր հանգամանք էր հետագա համագործակցության համար: Այս առիթով և հենց այստեղ պետք է նշել, որ Ռսկանյանը 1850-ականի սկզբներից արդեն տպագիր օրգան ստեղծելու անհետաձգելի պահանջ էր զգում՝ իր խոսքն անկաշկանդ ասելու և իր պայքարն ընդլայնելու համար: Այդ պահանջի առաջին դրսևորումները նրա պամֆլետներն էին, ապա և վերը բերված ազդ-հայտարարությունը, ինչպես դիտել է Ա.Հովհաննիսյանը: Ունևոր լինելու դեպքում Ռսկանյանի համար դժվար չէր լինի հիմնել իր սեփական պարբերականը: Բայց նա իր օրվա ապրուստն աղի քրտինքով էր վաստակում: Մնում էր միայն մի միջոց՝ համախմբել համախոհ ընկերներին և միացյալ ուժերով ու միացյալ միջոցներով տպագիր օրգան հիմնել: Արդեն այն, որ Ռսկանյանն ազդարարում էր այն մասին, որ հարկադրված կլինի վարդապետի «վարք ու բարքը մի առ մի հանուրանալի պատճառներով գրել, տպել և իբրև բողոք հրատարակել», ցույց է տալիս, որ նա ընդհուպ մոտեցել է տպագիր խոսքին դիմելու անհրաժեշտությանը:

Եվ, վերջապես, ազդ-հայտարարությունը ներգծված է վճռականությամբ ու հանդգնության հասնող հաստատակամությամբ: Նա պատրաստ է նորից հանդես գալ և ավելի լայն հրապարակայնություն տալ խնդրին: Ճիշտ այդ ձևով Մ.Նալբանդյանն իր «Երկու տող» կրակոտ երկում առաջարկություններ անելով կրոնական ժողովին և պահանջելով հատուկ շրջաբերականով սահմանափակել հոգևորականների կամայականությունները, այնուհետև ազդարարում էր. «Եթե այս շրջաբերականը դուրս չգա, այն ժամանակ (այժմեն հայտնում ենք հրապարակավ)... մենք կհանենք մի շրջաբերական, բայց բոլորովին հակառակ բովանդակությամբ: Նորանից ծագելու

հետևանքը, հանցանքը և մեղքը, այս օրից, դնելով կրոնական ժողովի զանցառութեան վերա: Այս խոսքերը ասում ենք ամենայն լրջութեամբ և ծանրութեամբ: Կրոնական ժողովը լոկ սպառնալիք չհամարե կամ բուպեական վաղանցուկ կրքի ծնունդ, ո՛չ, ո՛չ: Այժմ և մինչև մեր գերեզմանի ափը վրեժխնդիր և նախանձավոր հասարակ ժողովրդի իրավունքը պաշտպանելու և այս խորհրդով ամենայն բանի ընդունակ»¹:

Նալքանդյանը, ինչպես ակնառու է, ավելի մեծ ընդհանրացման հասնելով, խնդիրը հանգեցնում է ժողովրդի իրավունքի համար կյանքի գնով մարտնչելու պարտքին: Նույն ձևով Ռսկանյանը պատրաստ էր պայքարել ազգի պատվի համար: Նա նույնպես հանդես էր բերում ազգային կրքոտ ու անաղարտ պատվասիրություն, անկոմպրոմիս հայրենասիրություն և անզիջում հակակդերական մի տրամադրություն, որ մինչև այդ անծանոթ էր հայ գործիչներին: Ակնառու է, որ նա գրոհի է նետվել հաղթանակի հասնելու կամքով և այնպիսի ներքին մղումով, որ պատրաստ է ազգին հասցված անպատվությունը «արյամբ սրբել»: Այստեղ, իհարկե, աչքի է զարնվում Ռսկանյանի տաքարյունությունը, որ առհասարակ բնորոշ է նրա խառնվածքին, բայց եթե ինչ-որ տեղ, մանավանդ համազգային հարցերում, դա մերժելի է, ապա պետք է նաև նկատել, որ այդ էր պահանջում ազգի կացությունը, նրա իրական վիճակը: Չի կարելի միաժամանակ չընդունել, որ նա հանդես էր գալիս լիովին ազնիվ մղումներով, համազգային շահերի թելադրանքով՝ այնպես, ինչպես ինքն էր ըմբռնում ազգի պատվի համար պայքարելու իր պարտքն ու պարտականությունը, նույնիսկ կանգ չառնելով վարդապետին «ի դատ» կանչելու պահանջ առաջադրելու առջև²:

Այդ ըմբռնումով էլ Ռսկանյանը ոտք էր դնում հայ հրապարակախոսության բնագավառը 1850-ականի կեսերին: Դա մի ժամանակ էր, երբ հայ մամուլի ասպարեզը տակավին գրավել էին «Արշալույս արարատյանն» ու «Մասիսը» Արևմտյան Հայաստանում, «Բազմավեպը»՝ Եվրոպայում, իսկ Արևելյան

¹ Մ. Նալքանդյան, ԵԼԺ, հ. 3, էջ 29:

² Ինչպես հայտնի է, հետագայում՝ 1860-ի վերջերին, նման ձևով էր հարցը դնում «Մեղուն»:

Հայաստանում հայ մամուլը դեռ նոր-նոր էր փորձում ուսքի կանգնել. «Արարատից» (1850 – 1851) հետո դեռ պիտի անցնեին 7-8 տարի, որպեսզի հանդես գալին արևելահայ հաջորդ պարբերականները՝ «Հյուսիսասփայլը» (1858 – 1864) և «Ճուաքաղը» (1858 – 1862), «Մեղուն» (1858 – 1886):

Թվով շատ չէին Ոսկանյանի համախոհ երիտասարդները, բայց անշափ մեծ էր նրանց խանդավառությունը՝ հրատարակել կրոնական վերնախավի հսկողությունից, ամիրայական-աղայական կամայականությունից ազատ օրգան՝ ազգը լուսավորելու, նրա շահերը պաշտպանելու համար: Նրանց մեջ Ստ. Ոսկանյանը, ըստ երևույթին, ավելի պատրաստված-կրթված էր, հրապարակախոսական-խմբագրական գործունեության համար առավել օժտված: Համենայն դեպս նա իր պամֆլետներով, որոշ չափով նաև թռուցիկ-ազդով երևան էր հանել ինքնուրույն ոճ, հրապարակախոսի անառարկելի տաղանդ և ազգի շահերի համար անձնվիրաբար մարտնչելու հաստատուն կամք:

Եվ ահա շուրջ մեկ տարի նախապատրաստական աշխատանքից հետո, փարիզահայ «արի և գոտեպինդ» երիտասարդները հիմնում են հայ առաջին ազատ պարբերականը Եվրոպայում՝ այն կնքելով «Արևելք» բնորոշ անունով: Յավոք շատ քիչ բան է հայտնի հայ ազատ հրապարակախոսական մտքի անդրանիկ պոռթկումը նշանավորող այս հանդեսի ստեղծման ու հրատարակման պատմությունից: Նույնիսկ նրա երախտապաշտ հիմնադիրներից ոչ բոլորի անունն է պարզված: Տարբեր առիթներով, այն էլ հետագա տարիներին, Ստ. Ոսկանյանը հանդես հրատարակելու հորդորներով իրեն դիմող բարեկամներից հիշատակել է վաղամեռիկ բժիշկ Հակոբ Արզումանյանին (Հ.Արզուման), Հովհ. Քյաթիայանին, Լիվերպուլում գործող վաճառական Կոստանդ Գասպարյանին: Կարելի է ենթադրել, որ նրանց հետ էին հավանաբար նաև Հովհ. Թյույսյուզյանը, Տ.Փեշտիմալձյանը, Տ.Յուսուֆյանը և էլի մի քանի երիտասարդներ, որոնք սովորում էին Ֆրանսիայում: Հանդեսին հետագայում նյութական աջակցություն էր ցույց տալիս Նշան Շիրինյանը (էջ 321):

Դժվար է ասել, թե «Արևելքի» բոլոր հիմնադիրները հավասարապես ու ամբողջ խորությամբ ըմբռնում էին իրենց ձեռ-

նարկի հասարակական-քաղաքական եզակի նշանակությունը: Նրանք, ինչպես նշեցինք, Ոսկանյանի մերձավորներն էին ու համախոհները և պարբերական հիմնելով ու նրա «առաջին շարագիրը», «խմբագրապետը» կարգելով Ստ. Ոսկանյանին, դրանով իսկ բացառիկ նշանակություն ունեցող քայլ էին կատարում: Բայց նրանցից և ոչ մեկին հետագա տարիներին մենք չենք հանդիպում ոչ միայն հրապարակախոսության ասպարեզում, այլ գրեթե նաև հայ հասարակական կյանքում: Ավելին, ինչպես վկայում է Ոսկանյանը, նրանցից «մեկ քանին... իրենց բաժինը չվճարեցին» (էջ 135): Անկախ այս հանգամանքից նրանց չբացահայտված դերը չափազանց մեծ է հայ հասարակական միտքը խթանելու տեսակետից: Ըստ որում, պետք է նաև ընդգծել, որ նրանք հանդես են բերել իրենց նպատակին հասնելու կամք և տոկոսություն: «Ամեն բան, հայրենիքի սերն գատ, կպակսեր», – վկայում է Ոսկանյանն «Արևելքի» անդրանիկ հոդվածում. հանդես հիմնելու նրանց երկու փորձերն ապարդյուն են անցել, հարկ եղավ «ամեն բան հնարել»: Գործելով օտար երկրում և չունենալով նյութական հարկավոր միջոցները, «Արևելքի» հիմնադիրները «արյուն ու քիթք թափելով» ստիպված էին «ոչնչե բան մը հառաջ բերել», «ճշմարիտն ըսելու է, – գրում է Ոսկանյանը, – մենք հուսաբեկ հրաժարեր էինք և ուրիշ նյութերու կգրադեինք, երբ մեր բարեկամները, մեզմե ավելի արի և գոտեպինդ, մեզ նորեն քաջալեր և հույս տվին, և այս անգամ իրենց հարատև ջանքով և նվիրական սիրով ամեն քարընդոտն անհետ եղան»¹:

Հայ հրապարակախոսության ապագա պատմաբանը, հավանաբար, ավելի ճշգրիտ կորոշի «Արևելքի» հիմնադիրների, հանդեսի և նրա խմբագրի դերն ու տեղը հասարակական մտքի ընդհանուր պատմության մեջ: Բայց մինչ այդ հարկ է անվարան ընդգծել «Արևելքի» և նրա խմբագրի հիմնարարական և սկզբնավորող դերը հայ քննադատական մտքի որակական

¹ «Արևելք», էջ 1-2: Հանդեսի համարները սկզբից մինչև վերջ էջակալվել են աճող թվերով՝ շարունակաբար: Դ-ա մեզ հնարավորություն է տալիս հղումները կատարելիս նշել միայն համապատասխան էջը, որն այսուհետև ցույց կտրվի փակագծերում, տեքստի մեջ:

ցատկի ասպարեզում, ինչպես և Ստ. Ոսկանյանի հետ միասին պատշաճը հատուցել հանդեսի հիմնադիրներին: Առանց չափազանցության կարելի է ասել, որ հայ քննադատական միտքը, մեր հրապարակախոսությունն առաջին անգամ քնատարած ճախրել են «Արևելքի» էջերում, իրենց լինելիության իրավունքը հաստատել են նրա շնորհիվ և, այսպես ասած, քաղաքացիության իրավունք ստանալով, դարձել են գործող ուժ հայ իրականության մեջ: Բայց ոչ միայն դրանով, այլ առավել շատ իր դերով ու առաքելությամբ է նշանավոր «Արևելքի» երևան գալը. հանդեսի հիմնումն ու հրատարակությունը հայ հասարակական մտքի, մասնավորապես մամուլի պատմության մեջ եզակի նշանակություն ունեցող փաստ է: Այն, իրոք, դարձել է հայ ժողովրդի հնչեղ գանգակը, նրա անկաշկանդ ու առնացի խոսքը: Ոսկանյանը փարիզահայերի համար չէր հրատարակում իր հանդեսը, նրանց թիվը հագիվ մի քանի տասնյակի էր հասնում, և «Արևելքի» բաժանորդներ Փարիզում դարձյալ հագիվ մի քանիսն էին: Հանդեսի խոսքն ուղղված էր համայն հայությանը, նրա նշանակետերը հայ գաղթօջախներն էին: Ոսկանյանի հրապարակախոսությունը նախ և առաջ Թուրքիայում և այլուր բնակվող հայությանն էր հասցեագրված, և նրա ճակատագիրն էր հանդեսի ընդհանուր մտահոգության առարկան: Դա, իհարկե, չէր նսեմացնում նրա նշանակությունը ամբողջ հայ ժողովրդի համար: Հայ մամուլի հաստատումով, որ իրապես տեղի ունեցավ անցած դարի 50-ական թվականներին, փաստորեն հայ իրականության մեջ հանդես էր գալիս հասարակական մի նոր ուժ, որ այսուհետև որոշակի դեր էր կատարելու հայոց կյանքի բոլոր ասպարեզներում, դառնալու էր ոչ միայն տարբեր հոսանքների ու գաղափարների պայքարի արձանագրման ամենաճշմարտացի վավերագիրը, այլ դրա հետ միասին նաև՝ այդ պայքարի գործող ղեկն ու օբյեկտը: Երկարատև պայքարով է հայ իրականության մեջ մամուլը հաստատել իր իրավունքն ու դերը: Եվ այդ պայքարը, գրեթե ամենուր քիչ «գոհեր» չի խել: Ժամանակագրական կարգով և իր կատարած դերով «Արևելքը» եղել է այդ պայքարի առաջամարտիկներից ու առաջին «գոհերից» մեկը:

«Արևելքի» կատարած այդ դերին նպաստել են առնվազն երկու կարևոր հանգամանք:

Նախ՝ «Արևելքը» հիմնվել ու հրատարակվել է Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում: Դա, ինքնըստինքյան, պայմանավորում էր այն կարևոր պարագան, որ նա հարաբերականորեն ազատ էր Թուրքիայում, ներառյալ նաև հայկական համայնքներում, իշխող ճնշումներից ու հալածանքներից: Հանդեսը փաստորեն չէր կրում այն սահմանափակումները, որոնց ենթարկվում էին Թուրքիայում հրատարակվող պարբերականները: Նրա համար պարտադիր էին Ֆրանսիայում հաստատված օրենքները, իսկ այդ օրենքները ձեռք էին բերվել մամուլի ազատության համար մղված երկարատև պայքարում և, ենթարկված լինելով հաղթանակած բուրժուազիայի շահերին, մեծապես առաջադիմական բովանդակություն ունեին այն օրենքների (ավելի ճիշտ անօրինությունների) համեմատ, որոնց ենթարկված էր հասարակական կյանքը կիսաավատատիրական Թուրքիայում: Ըստ էության ֆրանսիական հողի վրա հրատարակվող «Արևելքը» պարարտ միջավայրում էր հարություն առել, օգտվում էր այն արտոնություններից, որոնք ձեռք էր բերել մամուլը Ֆրանսիայում: Մյուս կողմից, հայ ընթերցողի համար հրատարակվելով, հանդեսը հայտնի չափով իր մեջ ներառում էր այն ավանդները, որոնք կուտակել ու ժառանգաբար ընդունել էր ֆրանսիական մամուլը: Հանդես հրատարակելու խմբագրական-ժուռնալիստական հարուստ փորձը, հրապարակախոսության ստուգված վարպետությունը կամա թե ակամա ֆրանսիական մամուլից անմիջականորեն փոխանցվելով «Արևելքին», նրա էջերից ներթափանցում էր հայ իրականություն: Այնուհետև՝ «Արևելքի» հանդես գալը և գոյատևելը, թեկուզ մի կարճ ժամանակամիջոց, նախապատրաստված էր հայ կյանքով, մասնավորապես հայ մամուլի անցած վաթսունամյա ուղիով: Մի առիթով Ստ. Ռսկանյանը նկատել է. «Հունդը օղին մեջ չբուսնիր, հարմար տեղ մը պետք է, որ ծլի և արդյունավորի»: Դա վերաբերում է նաև «Արևելքին», իբրև հայ մամուլի հասունացման շրջանի այն հունդի, որ, իրոք, արդյունավորեց մեր հրապարակախոսության անդաստանը:

XIX դարի առաջին կեսին հայ ժողովրդի արևելյան

հատվածը, Ռուսաստանի այլևայլ կողմերում հաստատված հայկական համայնքներում, մանավանդ Պետերբուրգի, Մոսկվայի, Թիֆլիսի, Ռոստովի և մի շարք կենտրոնական քաղաքների հայկական օջախներում մշակութային կյանքը բռնել էր վերելքի ուղին: Բարձրագույն կրթությամբ հատուկենտ գործիչների կողքին իրենց գործունեությունն էին սկսում Պետերբուրգում, Մոսկվայում և Դորպատում հիմնավոր կրթություն ստացած ոչ քիչ թվով երիտասարդներ, որոնք հայ իրականություն էին փոխանցում ռուսական մշակույթի նվաճումները, առաջավոր գաղափարախոսությունը: Աննախադեպ առաջընթաց է ապրում գրատպությունը, կրթական գործը: Թեև վեհերոտ, իր առաջին քայլերն է անում արևելահայ մամուլը և աստիճանաբար նախապատրաստում այն պատվանդանը, որի վրա պիտի վեր խոյանար «Հյուսիսափայլը»՝ նշանավորելով հայ մամուլի որակական առաջընթացը:

Դարի առաջին կեսին հայ մշակույթը որոշակի զարգացում ապրեց նաև Սփյուռքում և Արևմտյան Հայաստանում: Մխիթարյան միաբանությունում, հնդկահայ գաղթօջախում, Կ.Պոլսում, Չմյուռնիայում, Փարիզում և այլ հայաշատ վայրերում կայունորեն գործում են հայկական տպարաններ, հրատարակվում են աշխարհիկ բովանդակությամբ ինքնուրույն ու թարգմանական գրքեր, պարբերականներ, հիմնվում են նոր դպրոցներ, կանոնավորվում են եղած դպրոցները, ստվարանում է եվրոպական քաղաքներում կրթություն ստացած երիտասարդների ջոկատը: Մինչև «Արևելքի» երևան գալը «Ազդարարից» ու Մխիթարյան պարբերական հրատարակություններից բացի տարաշխարհիկ գաղթավայրերում լույս են տեսել ազգային ճշտորոշ դիմագիծ ունեցող մի շարք թերթեր ու հանդեսներ՝ «Հայելի կալկաթյան» (1820), «Շտեմարան» (1821 – 1823), «Արշալույս արարատյան» (1840-ից), «Հայրենասեր» (1843 – 1846), «Ազգասեր. (1845 – 1848), «Ընտանի իմաստասեր» (1854 – 1855), «Հայաստան» (1846 – 1852), «Ազգասեր արարատյան» (1848 – 1851), «Բանասեր» (Մադրաս, 1848 – 1849), «Ուսումնասեր» (1849 – 1853), «Արարատ» (1850 – 1851), «Հայրենասեր» (1850 – 1853), «Բանասեր» (Կ.Պոլիս, 1851 – 1852), «Մասիս» (1852-ից), «Նոյան աղավնի» (1852 – 1853), «Արփի

արարատյան» (1853 – 1856): Անկախ այն բանից, որ այդ պարբերականները հանդես էին գալիս տարբեր դիմագծերով, հետապնդում էին այլևայլ նպատակներ, գոնե իրենց իսկ հռչակած ծրագրերով ձգտում էին նպաստել ազգի առաջադիմությանը, նրա մտավոր զարթոնքին ու լուսավորությանը: Նրանց հրատարակության իրական փաստն արդեն, հաճախ նաև նրանց բուն բովանդակությանը նպաստ էին բերում հայ մամուլի, մասնավորապես հրապարակախոսության հաստատմանը:

Խոսելով հայ հրապարակախոսության սկզբնավորման մասին, ակադեմիկոս Ա.Հովհաննիսյանը շեշտում է, որ այն ծայր է առել հայկական բնաշխարհից դուրս, փաստարկում է հնդկահայ մամուլի, ապա և Կ.Պոլսում լույս տեսած պարբերականների օրինակով: Մամուլում հանդես են գալիս հայ կյանքի միապաղաղությունը վեր հանող նյութեր, քննադատվում են եկեղեցին ու եկեղեցականները, մշակութային հարցերը լայն քննարկման են արժանանում, բացահայտվում է կղերաամիրայական դասի գործունեությունը ու հայացքների արատավորությունը, սկիզբ է առնում պապականության և Մխիթարյանների քննադատությունը պարբերականների էջերում: «Հակակղերական մարտնչող հրապարակախոսությունը, – նշում է Ա.Հովհաննիսյանը, – արտահայտություն գտավ, մանավանդ, Ստ. Ոսկանյանի խմբագրությամբ Փարիզում լույս տեսած «Արևելքի» և «Արևմուտքի» և Հ.Սըվաճյանի «Մեղուի» էջերում, որ հրատարակվում էր Պոլսում 1856թ. ի վեր: 1858թ. Մոսկվայում հիմնադրված «Հյուսիսափայլը» հանդիսանում էր պրոգրեսիվ հրապարակախոսության հաջորդ, առավել կորովամիտ և արգասավոր օրգանը»¹:

Լիովին ընդունելի այդ դիտարկմամբ պատշաճն է հատուցվում Ոսկանյանի պարբերականներին, որոնցից, սակայն, «Արևելքը» պետք է առանձնացնել՝ նկատի ունենալով նրա լույս տեսնելու ժամանակամիջոցը՝ 1855-ի հուլիս – 1856-ի հունվար, երբ դեռ խոսք չկար հիշատակված մյուս պարբերականները հրատարակելու մասին: Այսպիսով «Արևելքը» գրավում է իր տեղը «մարտնչող հրապարակախոսություն» ծավալող պարբերական-

¹ Ա.Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 132:

ների առաջին շարքում, այն օրգանների, որոնք նախորդել և հայտնի չափով նախապատրաստել են «առավել կորովամիտ և արգասավոր» «Հյուսիսափայլի» երևան գալը: Սակայն «Արևելքն» իր հերթին ունեցել է նախորդներ:

Վերջին առումով, եթե կոնկրետ փաստերին դիմելու լինենք, պետք է նշել, որ իբրև «Արևելքի» նախորդներ առանձնակի տեղ ունեն նախ հենց Ջյուռնալայում լույս տեսած «Հայրենասեր» թերթը, որ վրիպել է պատմաբանի ուշադրությունից, ապա մանավանդ հայ մամուլի ծննդավայրում հրապարակ եկած «Բանասերը», մի քիչ ավելի ուշ՝ 1848-ին:

Արդեն նկատեցինք, որ «Հայրենասերը» և մասնավորապես նրա որոշ նյութեր կարող էին գաղափարական ազդեցություն ունենալ տասնութամյա Ստ. Ոսկանյանի վրա: Նրա հավանական ընթերցողը լինելով, Մեսրոպյան վարժարանի սանն ու օգնական դասատուն, անշուշտ, ավելի մոտիկից գիտեր թերթի մասին, անտեղյակ չէր նրա հրատարակիչների գործունեությանը, հաս նրանց վիճակված դառնություններին: Դիմակայման այն փորձը, որ մատուցում էին «Հայրենասերի» անձնվեր ժուռնալիստները, կարող էր Ոսկանյանի համար հրապարակախոսության առաջին դասը լինել, այն տոկունությունը, որ նրանք էին ցուցաբերել, վատ օրինակ չէր:

Հրապարակախոսության առավել ներգործող դասեր կարող էր Ոսկանյանը ստանալ «Բանասերից» ու նրա մարտնչող խմբագրից, եթե, իհարկե, նա Փարիզում գտնվելով, ինչ-որ կերպ հաղորդակցվեր Մադրասում թերթի շուրջ տեղի ունեցող իրադարձություններին: Բայց որևէ կովան ասելու համար, նրան հայտնի էր «Բանասերի» մասին, չունենք. «Բանասերի» որոշ ընդդիմությունն «Արշալույս արարատյանին» և այդ առթիվ վերջինիս էջերում գետնովոդ առանձին նյութերը չէին կարող Ոսկանյանին մինչև անգամ մոտավոր գաղափար տալ մադրասահայ թերթի իրական վիճակի վերաբերյալ, թեև նվազ հիմք չէին կողմնորոշման, նաև վերաբերմունքի համար: Սակայն այս իմաստով էլ Ոսկանյանը որևէ ակնարկ չի արել: Բայց, այսուամենայնիվ, «Բանասերը» բարոյական հող է պատրաստել «Արևելքի» և Ստ. Ոսկանյանի համար:

Ինչպես ամեն տեղ, այնպես էլ հայ իրականության մեջ

մամուլը սկզբնապես կատարել է տոսկ լրատուի դեր՝ մի տեղ կարճ ժամանակամիջոց, մի այլ տեղ՝ երկար տասնամյակներ: Մեզանում այն այդ դերի մեջ էր մոտավորապես քառասուն-հիսուն տարի և իր այդ սկզբնական դերակատարումից առաջընթաց քաջ է կատարել «Բանասերով», 1848 – 1849թթ.: Դա հայ մամուլի առաջին պատմաբանի՝ Գ. Գալենքարյանի հետևությունն է, որ կարելի է ընդունել հայտնի վերապահումով. «Հայ լրագրությունն ալ ունեցավ յուր հեղափոխության օրերն: Ճիշտ այն տարին, երբ Եվրոպա հեղափոխական խռովության մեջ կծփար՝ Արևելք, Հնդկաստանի Մադրաս քաղաքին մեջ հայ լրագրության հեղափոխության դրոշը պարզեցավ: Այն լոկ լրատուական ոճը, որով մինչև այն ժամանակ քաղաքական հայ թերթերեն տեղական ազգային լուրերն կուտային, չէին քաղաքական լրագրի մը կոչման պարտավորությամբ լիովի գոհացումն: Վասն զի լրագիր մը, որ չունի կարծիք, որ չունի որոշ սկզբունք, որ չի դատեր, որ կշողորոթե միայն յուր կողմնակիցը՝ այս կամ այն կողմանե, այն՝ հասարակության առաջ, նորդարյան գործը չի կատարեր, այլ լոկ լրատուի, որ այսօր այս և վաղն այն լուրը կու տա, առանց անկե բան մը զգալու և զգացնելու»¹:

Ուրույն ձևով է Մխիթարյան պատմաբանը հասկանում հայ մամուլի «հեղափոխության օրերը», «քաղաքական լրագիրը», բայց նա անպայման իրավացի է իր դիտարկման մեջ և հարցադրումով: Անհիմն չէ նաև նրա այն կարծիքը, որ հայ լրագրության սկզբնական ընթացքը միանգամից փոխելը հեշտ չէր, «տոկուն հարատևության և մեծամեծ գոհերու պետք կար, դժվարին էր մանավանդ այս կետին մեջ խոհեմության առաջնորդության հետևիլ և այնպիսի սաստկությամբ չհարձակիլ, որ նպատակին անդին անցնվի՝ չափազանցությամբ, և հանկարծական բռնութենե փութով ուժաբափ լքվի, մանավանդ, որ փափուկ ձևուց վարժ թիկնաց հարկ պիտի ըլլար տալ հարվածները»:

«Բանասերը», Մ.Թադիադյանի «Ազգասերի» և «Ազգասեր արարատյանի» անմիջական փոխանցմամբ, որոնք ևս մեծ ավանդ ունեն հայ հրապարակախոսության զարգացման ու մաքառումների ասպարեզում, իրոք, ժառանգել է ազդարարյան

¹ Գ. Գալենքարյան, Պատմություն հայ լրագրության, Վիեննա, 1893, էջ 107-108:

հրապարակախոսության սովանդները, նոր շավիղ է ուրվագծել հայ հրապարակախոսության մեջ: Քաղաքական, գրագիտական և առևտրական այդ տասնօրյա թերթի ու նրա խմբագիր Ս.Պ.Հովհաննեսի անվան հետ կապելով հայ իրականության մեջ առաջին անգամ հրապարակախոսության երևան գալը, Լեոն, ընդօրինակելով Գ.Գալենքարյանին, հետևյալ բնութագիրն է տալիս «Բանասերի» խմբագրին. «...Ապրել հասարակության մեջ, խիստ լեզվով ու համարձակ քննադատել նրա պակասությունները, տպագրությունը դարձնել մի խարազան և հարվածել նրանով անբարեխիղճ հոգևորականներին, ազգային ցեց աղաներին և ապա տեսնել իր շուրջը փրփրած կատաղություն, լսել ատամների կրճտոց, բայց չընկճվել, տեղի չտալ հասարակության տրամադրության, այլ համարձակ առաջ տանել կռիվը հանուն արդարության, հանուն հասարակական և ազգային շահերի, – ահա ինչ էր այդ մարդը»¹:

Եվ, իրոք, Ս.Պ.Հովհաննեսի պարբերականը, լույս տեսնելով Մադրասի գաղթօջախում, հանդես է բերել մարտական ոգի, ամեն մի քննադատական խոսքից հետո նա բաժանորդներ էր կորցնում, ազատախոսությունն ու համարձակությունն ամեն անգամ շուտ էին գալիս նրա վեմ, «ճշմարտասեր և ուղղադատ» ընթերցողները նրան ոգևորում էին, բայց դա քիչ էր ամոքում այն հալածանքի դառնությունը, որին ենթակա էր «ծառն ու ազատ տպագրություն ի Մադրաս» դալար պահելու պարտք ստանձնած խմբագիրը: Գերագույն ճիգեր է նա գործադրում, որպեսզի պահպանի իր թերթի ինքնուրույնությունը, կարողանա արտահայտել իր կարծիքը, քննադատական խոսք ասի: Թերթի յուրաքանչյուր համարից հետո նրա բաժանորդները պակասել են, ինչպես խմբագիրն է գրում՝ «վաղվաղակի թողին զմեզ քանի մի ստորագրողը»: Թերթի հազիվ քառասուն համարն է հրատարակվել, որից վեց համար կա հայրենական գրապահոցներում, իսկ երեքը՝ Վիեննայի Մխիթարյանների մատենադարանում²: Այդ համար-

¹ «Մուրճ», 1901. N 11, էջ 111:

² «Բանասերի» 1848թ. N 17-19 և 21-22-ը կա Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (Գ-ԱԹ), իսկ N 37-39-ը՝ Վիեննայի Մխիթարյանների մատենադարանում («Հայ պարբերական մամուլի մատենագիտություն», Երևան, 1970, էջ 59):

ներից կամ դրանցից արված քաղվածքներից ակնառու են դառնում «Բանասերի» քննադատական ոգին, խմբագիր-հրապարակախոսի մարտնչումները: Դրանք ուղղված են գրեթե մասնավոր թերությունների դեմ, թերթի հողվածներում հասարակական խոշոր հարցեր չեն արծարծվում, բայց նույնիսկ այդ դեպքում մադրասահայ ընթերցողներին խորթ էր քահանայի հասցեին դիտողություն անելը, ազգային պաշտոնյային որևէ հորդորով դիմելը, ազգային դրամարկղին ձեռք մեկնելու դեմ բողոքելը, մինչև անգամ պատվելի պարոնի անվանման հիշատակությունն առանց «զպատվո ածական»՝ քաջափայլ և իմաստնապերճ»: Տեսնելով հանդերձ, որ իր թերթի քննադատական ոգին աստիճանաբար վանում է բաժանորդներին, զգալով թերթի դանդաղ մահը, Ս.Պ.Հովհաննեսը գրեթե մինչև վերջին համարը տոկում էր: «Բայց և այնպես այդ ամենայն անհաջող ելք վաստակույս, ոչինչ զարհուրեցուցանեն զմեզ, հաչս մեր խրտվելիք են այդոքիկ, որք երկիցուցանեն զմանկտի միայն և զանաբանս ի կենդանյաց: Այլ մեր սրտապնդյալ ի քաջալերութենե ճշմարտասեր և ուղղատ բարեկամաց հանապագորդեսցուք երկս մեր աներկյուղ»¹: Սակայն խմբագրի աներկյուղությունն օգնել չէր կարող, պարբերականը մնում էր առանց բաժանորդի: «Լրագիրն դադարեցավ ի 15 հունիս ամսո ի կարոտութենե քաջալերության», – ազդարարեց խմբագիրը: Ըստ երևույթին այլ վախճան չէր կարելի սպասել. ինչպես բացատրում է Մինգապուրում հրատարակված «Ուսումնասերը», «անաչառ էին բանք նորին է ամենեքյանք անսատարությանք լքին, թողին մեռանել և ոչնչանալ»: Մամուլը մեզանում դեռ չէր նվաճել «խարագանողի» իր իրավունքը, քննադատությունը ընթերցողի համար դառը դեղաբաժին էր, որ դժվար էր մատուցել նրա դարմանող հատկությունը դեռևս չգիտակցող հիվանդին: Մատուցման ինչ ձև էլ որ ընտրեր խմբագիրը, մինևույն է՝ նրա թերթը դատապարտված էր օրորոցային մահվան. «Բաժանորդը իրենց դրամովն հանդիմանություն գնել չուզելով», ինչպես նկատում է

¹ Այս և ստորև քաղվող մեջբերումները տես Պ. Գալեմքյարյանի նշված գրքում, էջ 112-113:

Գալենքյարյանը, պիտի լքեին իրենց օգնությունը հայցող պարբերականը: Նրան չէր փրկի նույնիսկ այն խորհուրդը, որ տալիս էր նույն Գալենքյարյանը՝ «խմբագրական ճարտարություն պետք է շատ անգամ դառն դեղահաբերն զգուշությամբ և սիրուն եղանակով պարուրելու... գաղտնյաց շղարշով ծածկելու դառն ճշմարտություններն, գորոնք կամաց-կամաց և զգուշությամբ պարզել միայն կրնա օգտակար ըլլալ»:

Իշխող իրավակարգը, ժամանակն ու մթնոլորտը ոչնչով չէին նպաստում հայ հրապարակախոսության արմատակալմանը՝ նույնիսկ հայ մամուլի բազմաճյուղի պայմաններում: Առանձին բացառություններով հանդերձ, այդ վիճակը գոյատևեց գրեթե մինչև դարավերջ: Այդ վիճակն ըմբռնել ու արձանագրել են հենց մեր ականավոր հրապարակախոսները, օրինակ, Գ.ր.Չիլինկիրյանը, որ իր գործունեությամբ հաջորդել է Մ.Պ.Հովհաննեսին՝ մի տասնամյակ հետո, և Մտ. Ռսկանյանին՝ գրեթե անմիջապես: Բնութագրելով հայ մամուլը, մասնավորապես նրա վիճակը Թուրքիայում, տակավին 80-ական թվականների սկզբին, Չիլինկիրյանն արձանագրել է, որ «նոր միտքն» «ամբարբար», այլ անընդհատ նահանջող» «հին մտքի» դեմ մղվող պայքարում ձեռք է բերել «անընկճելի աջակից մը»՝ մամուլը: Այդ «տիտանական աջակիցը» անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում «ընկերային ուժ» է, «քաղաքակրթության և լուսավորության գորավոր գործիք» է, մեծ ազդեցություն է ունենում «հասարակաց կարծիքին վրա և իբրև ասոր թարգման իր երկրին իշխանության առջև ազդարար գորություն մը կդառնա»: Բայց այլ է մամուլի վիճակը Թուրքիայում և առհասարակ հայ իրականության մեջ, հայը «շատ պատճառներ ունի վայ կարդալու հայ մամուլին վրա», որովհետև «*հայ մամուլն ամուլ է*»: Բայց ոչ միայն մամուլը, Նալբանդյանը ցավով գրել է. «Արյուն է կաթում մեր սրտից, երբ նայում ենք ազգի ամայի և ամուլ կյանքի վրա»¹:

Դրա պատճառը Չիլինկիրյանն իրավամբ համարում է այն, որ «բեղմնավորության պայմանները կպակսին» և թերթերը, «սակավաթիվ բացառություններով» հանդերձ, դարձել են «վճարողին արբանյակը», լրագրողները տեղի ունեցող իրա-

¹ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 3, էջ 29:

դարձությունները քննում են «շահը մտքին և վախը խղճին իբր կողմնացույց» գործածելով, ծամծմում են «հայրենիք, ազատություն, լուսավորություն, իրավունք և ասոնց նման մեծ բառեր», ներհակ ընթացք են բռնում պարզապես լռում՝ «վտանգավոր դրության մեջ չգտնվելու համար»: «Մեր ազգին մեջ անգործ գրիչ մ'երևան կելեն և թերթ մը կիրատարակե *ազգին առաջադիմության ծառայելու առերևույթ* պատրվակով, այլ իրապես *փառք շահելու* կամ ապրուստ ճարելու նպատակով»: Լավ գրվածքը մեզանում զնորդ չունի, իսկ մյուս կողմից՝ «բարության և նյութական կյանքի մշտատև կռիվներուն» մեջ հայ խմբագիրներն «հոգին և մարմինը» «Թուրքիայի մեջ գոց են, վասնզի մամուլի *ազատություն չկա*»: «Տպագրական օրենքի խստությունն և վարչության կամածին տնօրինություններն իբրև Տամոզեաի սուր գրողներուն գլխուն վերևը կախված կմնան և ամենեն ժիր մտքերը կջլատեն»: Ազատ գրելը ոչ թե իրավունք, այլ պարտք է, իսկ իրենց կարծիքը, համոզմունքներն իբրև պարտք արտահայտողները տեր և մխիթարող չունեն: Չիլինկիրյանն այնուհետև գրում է. «Բայց Թուրքիայի մեջ տերության և հայոց կրոնական իշխանության գործերուն խառնվիլն և կարծիք հայտնելն եթե վտանգավոր է, ոչ նվազ և շատ անգամ ավելի վտանգավոր է ժողովրդին կարծյաց և համոզմանց հակառակ խոսիլ, և, ըստ իս, բռնության ամենեն անտանելին այս վերջինն է»¹:

Այսպիսի պայմաններում նույնիսկ 1880-ականին հայ մամուլը ծանր երկունքով էր հարությւն տալիս մասնավորապես հրապարակախոսությանը: Այս դեպքում առավել ուշադրության են արժանի բացառություն կազմող այն պարբերականները և հրապարակախոսները, որոնք, այսուամենայնիվ, կարողացել են ազատ խոսքը հասցնել ընթերցողին, հաստատել են մամուլի իրավունքն ու դերը, ծավալել են հայ հրապարակախոսությունը՝ անելով գրեթե անհնարինը: Այդպիսի բացառություններից էր «Արևելքը»: Այդպիսինն էր «Արևելքի» հրապարակախոս-

¹ *Գրիգոր Չիլինկիրյան*, Ուղևորություն ի Կոստանդնուպոլիս, Չմյուտնիս, 1883, էջ 68-88:

խմբագիրը: Ստ. Ոսկանյանն իր համախոհների մեջ առավել պատրաստ էր հրապարակախոսական գործունեության, հանդես վարելու համար և, անկասկած, ավելի տաղանդավոր գրիչ ուներ: Համենայն դեպս «Արևելքի» ամբողջ ծանրությունը նրա վրա էր, և նրան են պատկանում հանդեսի գրեթե բոլոր հիմնական հոդվածները, այլևայլ նյութերը: Առանց վարանելու կարելի է «Արևելքը» համարել Ոսկանյանի բուն երախալորիքը:

Ստ. Ոսկանյանի «Արևելքը», լինելով հայ առաջին ազատ խոսքը Եվրոպայում, հայացքն ուղղել էր հայ զանգվածներին, ստեղծված էր հայ կյանքը լուսաբանելու, ազգը նոր լույսով լուսավորելու, նրա պակասությունները բացահայտելու, խոցերը բուժելու ծրագրով: Խմբագիրը «Արևելքը» բացող «Հառաջաբանում» սեղմ ու պարզորոշ է շարադրել հանդեսի նպատակները. նրա հավատամքն էր՝ «Հայաստանի լուսավորությունը», նպաստել նրա «քայլ մը առաջ երթալուն», նրան պատող մշուշի մեջ «կայծի նման քիչ մը լույս տալ»: Հստակ է ներկայացված նաև հանդեսի գործելակերպը. «Հուսամք, – ասված է «Արևելքի» «Հառաջաբանում», – թե ազգը քսան տարիե ի վեր իմաստակներու սուտումուտ զովեստը և անամոթ շողոթոթությունը լսելե ետև, քիչ մ' ալ ճշմարիտ քննության և անշահասեր խրատի ականջ պիտի դնե, և իր էական պակասությունները պիտի շտկե: Այնքան շոգմոզ գրվածներե բան մը չբուսավ, պտուղ մը չեղավ և հիմա ամեն մարդ կզգա, թե երբ սուտ ազգասերները ազգը երկինք կհանեին, երկրի վրա իր մերկ ոտերու համար տեղ մը չկար»: «Մեղը բերան» չի լինելու համդեսը և «քանի մը մարդերու հաճելի ըլլալու համար ճշմարտության երեսը չպիտի թքնե կամ մրոտե», նրա նպատակն է լինելու, որ մեր ողորմելի ազգը իր այժմյան բուն վիճակը իմանա և իր մահաբույր վերքերու դարման մը տանի» (էջ 3):

Վեհ ու հերոսական նպատակադրում էր դա: Դարի, ժամանակաշրջանի, տեղի ունեցող իրադարձությունների, դրանց թվում նաև ռուս-թուրքական դեռ չավարտված պատերազմից բխող հետևությունների թելադրանքն էր այդ, որ ըմբռնեց Ոսկանյանը և թեկուզ կես մամփին ընկնելու վճռականությամբ պարտք ստանձնեց պատերազմ հայտարարել ազգային

պակասությունների դեմ և որոնել դրանց բուժման միջոցներ: Ոսկանյանը դրանով իր ձեռքը հպում էր ժողովրդի ցավոտ վերքին, նրա զարկերակին:

Այս իմաստով նա հանդես էր գալիս իբրև մի այնպիսի գործիչ, որի դերը դեռևս ըմբռնված չէր, բայց որի հավաքական կերպարը ճշգրտությամբ պիտի ուրվագծեր Բաֆֆին ավելի քան երկու տասնամյակ հետո: Խոսելով «*ինքնաքննության*» անհրաժեշտության մասին, որ ընդգծում էր նաև Գր. Արծրունին՝ «Մշակում»¹, և բացատրելով ժողովրդի մեջ նրա երևան գալու հանգամանքները, Բաֆֆին նկատում է. «բայց դժվար կարելի է գտնել ամբողջ մարդկության մեջ մի ժողովուրդ, որ ինքն իրան ճանաչեր – նրան ճանաչում են և քննում են նույն առաջավոր մարդիկը, զարգացած մասը, որպես բժիշկը՝ հիվանդներին: Եվ այս վերջինները հաղորդում են ժողովրդին նրա թերությունները, նրա պետքերը, և միևնույն ժամանակ հնարներ՝ նույն պետքերին բավականություն տալու: Դրանք կոչվում են զանազան անուններով՝ ժողովրդական գործիչներ, առաջնորդող մարդիկ – գրավոր և բերանացի խոսքը նրանց գլխավոր զենքն է, – նրանք ներկայացնում են ժողովրդի մտավոր գործությունը, – նրա *ինքնելիզենցիան*»²: Նույն այս գաղափարը Ծերենցը Հյուզոյից քաղած տողերով այսպես է բանաձևել 1876-ին «Ամբոխք և ոգիք» հոդվածում՝ «Ի՞նչ հիմնել: Ո՞ւր հիմնել: Ինչպե՞ս հիմնել» հարցերին պատասխանելով՝ «ժողովուրդը հիմնել: Հիմնել զայն հառաջադիմության մեջ: Հիմնել զայն լուսով»³:

«Արևելքով» Ոսկանյանը զինվորագրվում էր ժողովրդի այդ «առաջավոր մարդկանց» բանակին, նրանց, որ ուզում էին «ժողովուրդ հիմնել»:

Ի տարբերություն շատ պարբերականների, «Արևելքը», որ երևան էր գալիս ամիսը երկու անգամ, մեծադիր ծավալով ու խնամքով տպագրված, հավատարիմ է մնացել իր դավանած ծրագրային սկզբունքներին, որդեգրած գործելակերպին: Հետագայում Ստ. Ոսկանյանը հանդեսի էջերում առաջ է քաշել

¹ «Մշակ», 1878, N 123:

² Բաֆֆի, ԵԺ, հ. 9, Երևան, 1964, էջ 473, 486 (կամ 487):

³ «Արևելյան մամուլ», 1876, N 3, էջ 12 կամ 13:

մի շարք նոր սկզբունքներ ու խնդիրներ, պարզել է խմբագրական աշխատանքի մի շարք առանձնահատկություններ ու ելակետեր: «Արևելքի» օգոստոսի 1-ի համարում, օրինակ, նա տեղեկացրել է, որ ինքը իբրև «առաջին շարագիր» «ուրիշի մը գրվածի ոչ պատասխանատու կուգե ըլլալ և ոչ պաշտպան» և ապա ազդարարել. «Արևելքը անփակ ասպարեզ մ' է նաև թշնամիներու համար»: Ինչ վերաբերում է նրա էջերում հաղթանակ տանողին կամ պարտվողին, ապա այդ «դատը հասարակության կվերաբերի», նա կորոշի: Խմբագիրն հայտարարում էր, որ «ամեն հողված անփոփոխ կիրատարակվի» (էջ 65): Թերևս սա պատահական լրացում չէր. Ռսկանյանն իրեն ազատելով ուրիշների (հավանաբար նաև հանդեսի մյուս խմբագիրների) գրածների համար պատասխանատու լինելու պարտքից, նախ զատվում էր «Արևելքի» հիմնադիրների որևէ այլ կարծիքից, որի հետ կարող էր համաձայն չլինել և, այնուհետև սկսելով հանդես գալ ծածկանուններով, խոսում է ավելի ազատ ու համարձակ՝ թողնելով այն տպավորությունը, թե ինքն իր կարծիքներում միայնակ չէ: Իզուր չէ, որ հենց այդ համարից երևան է գալիս նրա առաջին ծածկանունն «Արևելքում»՝ «Հարմա», իսկ երբեմն էլ սա մի հողվածի տակ միաժամանակ ստորագրում էր երկու ծածկանունով:

Ավելի ուշ նույնպես լրացվել ու ճշտվել է հանդեսի դիմագիծը, առաջադրվել են այլ սկզբունքներ: «Արևելքը» ձգտում էր «կրոնական խնդիրներն հեռու կենալ... ազգայիններու միտքը և ուշը քաղաքական խնդիրներու վրա կոչել»: Եվ ապա՝ հենց նույն համարում... *Արևելքը* ի լույս կելլե և հայրենական սիրով սպառնագեն՝ կաշխատի «մեր ազգին իրավունքը, պատիվը, անունը, կրոնքը, ավանդությունները, փլատակները պաշտպանել...» (էջ 322 – 329): Նոր տարեթվի՝ 1856-ի շեմին հանդեսը, խոսելով ազգի մատաղ սերնդի ուսուցման թերությունների և այդ առթիվ լավող հանդիմանությունների մասին, իր մի աշխատակցի՝ Թյուսյուզյանի լեզվով ադարարել է. «Ասոր համար *Արևելքը*, որուն նպատակը հիդրային (hydre) գլուխը ջախջախել է, միշտ հասպարեզ կիրավիրե բոլոր գրիչ գործածող և ազգին կերպով մը ծառայելու կարող եղողները: Ժամ է արդարև մեկ

դրոշակի տակ գումարվելով անհաղթելի պատճեն ճի կանգնեցնել, մի սիրտ և մի՝ հոգի ըլլալ և արշավել լուսավորության օրինյալ եզերքները, *վասուզի* միությունն է ուժ տվողը (l' union fait la fora)» (էջ 359):

Այդպես, մի քանի բարեկամների և նույնքան էլ «հայրենասեր օգնականներու» հետ «Արևելքը», «ամեն քարընդոտ» արգելքներ հաղթահարելով, ելնում էր ընդդեմ իմաստակների ու շողոքորթության՝ հանուն ճշմարիտ քննության ու քննադատության, ընդդեմ անպտուղ գրվածքների և սուտ ազգասերների՝ հանուն ճշմարտության ու լուսավորության, որպեսզի օգնի ազգին ջախջախելու հիդրային, բուժելու իր վերքերը և տեղ գտնելու «երկրի վրա իր մերկ ոտերու համար»: Ազգի հեռանկարը նրան մուտք ու վտանգված էր երևում: Դրա համար էլ նա շարունակ գործելու կոչ էր անում հայրենասեր ազգայիններին, որոնք, եթե պատճեն չդնեն ազգին սպառնացող վտանգի առջև, ապա նրա «ապագան ներկային պիտի նմանի, այսինքն միշտ տրտմալի և անհուսալի պիտի ըլլա» (էջ 198): Նման նպատակ այն ժամանակ մեզանում մի այլ հանդես կամ հրապարակախոս չէր դնում իր առջև:

Նոր հանդես, նոր սկզբունքներ: Ժամանակակիցների համար «Արևելքը» ինչ-որ չափով սպասված հանդես էր, իսկ նրա որդեգրած դրույթները, նրա հետապնդված նպատակը՝ հայտնի չափով՝ ցանկալի: Այդպես էր, սակայն, սուկ առաջին հայացքից, այսպես ասած, տեսականորեն, քանի դեռ հանդեսը չէր կատարել քայլեր, չէր ծավալել իր սուր քննադատությունը: Բնորոշ է, օրինակ, «Արշալույս արարատյան» թերթի դիրքորոշումը հանդեսի և նրա առաջ քաշած սկզբունքի նկատմամբ: Ծանոթանալով հանդեսի առաջին համարին՝ թերթի խմբագիրը գրել է. «Տարակույս չկա, որ «Արևելք ազատախոս և համարձակարգիչ հրատարակություն մը պիտի ըլլա, քանզի անոր ուսումնական խմբագրին՝ Ոսկանյան հարգո պարոն Մտեփանին ազատասեր և վառվռուն ոգին ծանոթ է շատերուն: Այդ ոգին հայտնի կտեսնվի հետևյալ հոդվածոյն մեջ, որ յուր հառաջաբանութենն հանելով կդնենք այստեղ ի տեղեկություն հասարակության»:

Պալրագարյանը չի բավարարվել Ոսկանյանի նախաբանի

եզրափակիչ պարբերության մեջքերումով, այն հիմնարարական սկզբունքի կրկնումով, թե «Արևելքը» խնդիր ունի վեր հանելու «ազգային պակասությունները»։ «Արևելքը, – շարունակում է նա, – ուրիշ նոր ճամբա պիտի բռնե ազգային հառաջադիմությանը նպաստամատույց ըլլալու և անոր պակասությանցը, որչափ որ կարելի է դարձան մը տանելու համար։ Այս ճամբան, այս ընթացքը պիտի հաջողի¹, թե ոչ, մենք հիմնիվընե չենք համարձակվիլ և չենք կրնար դատողություն մը ընելու։ Ժամանակը պիտի ցուցնե։ Բայց երկբայություն չունիմք, որ «Արևելքին» ճգուները՝ ճշմարիտ ազգասիրութենե ի գատ ուրիշ նպատակ պիտի չունենա, թեև զանիկա ի գործ դնելու կերպին մեջ, իբրև մարդ սխալելու ըլլա երբեմն»¹։

Ավելի բարեկամական վերաբերմունք իր հանդեպ և իր հանդեսի ուղեգծի հանդեպ այդ թերթից Ռսկանյանն ակնկալել չէր կարող, թեև ակնառու է, որ Պալլազարյանի խոսքում ավելի զգալի է անձնական համակրանքը, քան սկզբունքային ու սրտչակի վերաբերմունքը հենց այն հարցում, որ առավել կարևոր էր «Արևելքի» համար։ «Արշալույս արարատյանը» ռեկլամում էր հանդեսը, համոզմունք հայտնում, որ «հասարակությունը յուր ձեռնտվությունը չպիտի խնայե» նրա համար։ Դա էլ քիչ չէր, եթե նկատի ունենանք, որ «Արշալույս արարատյանը» մեծ տարածում ուներ։ Ըստ էության «Արևելքի» դավանանքը հակոտնյա էր «Արշալույս արարատյանի» ընդհանուր և անփոփոխ ոգուն, վերջինիս խմբագրի հանդուրժողական վերաբերմունքը, տվյալ դեպքում դրական նշանակություն ուներ և նպաստավոր հանգամանք էր նրա համար. մեծ ժամանակը գալու և հաստատելու էր Ռսկանյանի ուղեգծի ճշմարտացիությանը՝ իր ճամփի վրա շատ գերեզմաններ թողած։ Որոշ ժամանակ անց՝ 1857-ին, երբ «Արևելքն» արդեն դադարել էր, անստորագիր մի հոդվածով՝ գրված բավականաչափ համարձակ տոնով և ակնառու առաջադիմական հարցադրումներով, թերթն անդրադարձավ ազգային առաջադիմության կարևոր հարցերին։ Այլևայլ հարցադրումների շարքում «Արշալույս արարատյանը» նաև հարցնում էր՝ «ուր է Փարիզի Արարատյան ընկերությունը և նույն մայրա-

¹ «Արշալույս արարատյան», 29 հուլիս, 1855, N 499:

քաղաքին ազատախոս Արևելքը» (N 538): Ակնարկն այն մասին է, որ ազգի առաջադիմությանը և «ճշմարիտ լուսավորությանը» նպաստող գործոնները չեն գոյատևում, կարճատև կյանք են ունենում:

Ստ. Ոսկանյանի մասին ժամանակին ասվել է, որ նա իր դարի հետ չէր ընթանում, այլ «քանի մի դար դեպի առաջ կապրի»¹, կամ «իր գաղափարները կանխահաս էին մեր միջավայրի համար»²: Ինքը՝ Ոսկանյանը, մի առիթով նկատել է, թե «ժամանակեն առաջ իրավունք ունենալը աններելի հանցանք մ' է և անհնարին էր, որ նախատինք չբերեր մեզ»³: Այս ճիշտ է միայն այնքանով, որքանով նրա հայացքն ուղղված էր ապագային: Գրում, տպագրում և իր խոսքը հայոց ցիրուցան գաղթօջախներ՝ Ֆրանսիա, Թուրքիա, Եգիպտոս, Ռուսաստան և այլ վայրեր էր հասցնում, որպեսզի նպաստի հայության համախմբմանը, նաև լիովին համոզված, որ դրանով օգնում է ժողովրդին նախապատրաստվելու գալիք ժամանակներին, արձագանքում է ռամկերի ցավին, պատռում է ազգը մոլորեցնող, նրա մտքի «հալևմաշ» դիմակը, նաև նրան եվրոպական լույս բերում և շիտակ քայլել սովորեցնում: Այդ համոզմունքը շատ կարևոր էր՝ մեծ գործունեության բեմելից առաջ: Կյանքը նրա առջև դեռ տեսակտեսակ խնդիրներ պետք է ցուցահաներ, հազար ու մի որոգայթներ դեռ պիտի հայտնվեին, և նա նոր հարցեր ու սկզբունքներ պիտի առաջ քաշեր, ամեն անգամ պիտի զարնվեր վեղարակիր հրեշների ու ոսկեկուռ թմբերի, քանիցս պիտի ընկներ ու դարձյալ ելներ՝ նորից նոր ուժով գրիչ բռնելու և իր սեփական ոտքերի վրա ամուր կանգնելու, կրկին հին ու անսպառ հավատով և համոզմունքով՝ մոռացած իր անձը, մտորումներով միշտ ժողովրդի հետ: Այդ ամբողջ ընթացքում նա սրտի ու մտքի բաբախումներով իր ազգի, մասնավորապես նրա արևմտահայ զանգվածների հետ էր, մտահոգված էր ժողովրդի ապագայով: Մասամբ դրա համար էլ նրա պայքարը չէր ընկալվում իր իրական իմաստով, ավելանում էր հակառակորդների թիվը: Այս իմաստով

¹ Ն. Մամուրյան, Երկեր, Երևան, 1966, էջ 408:

² Հր. Ասապուր, նշվ. աշխ., էջ 115:

³ «Արևմուտք», 15 հոկտեմբերի 1859, N 20, 15 156:

բնորոշ է, որ նույնը տեղի ուներ հենց Նալբանդյանի հետ. «Մեր սիրտը լցված է արյունով, – գրել է Մ.Նալբանդյանը, – մենք այստեղ չենք ծառայում մեր ախտերին, ինչպես մի քանի գիշերադեմ մարդիկ հայիոյեցիկ մեզ, այլ սպասավորում ենք ազգի օգտին, գուցե մեղավոր ենք նրանով, որ մեր աչքի առջև են հայոց ազգի համար, սորանից հարյուր տարի հետո գալոց օրերը...»¹:

Առաջ քաշելով այդ սկզբունքը, Ոսկանյանն իր հերթին, Նալբանդյանն՝ իր, հռչակում էին իրենց ժամանակաշրջանի հրատապ լոզունգներից մեկը: Մի փոքր ուշ՝ 1860-ին, ժամանակի այդ պահանջը ավելի շեշտված կարտահայտի հայ երիտասարդ հրապարակախոսներից ավելի երիտասարդ տարիքում հեղափոխական-դեմոկրատիայի դրոշակակիրներից մեկը դարձած Դոբրոլյուբովը: «Հարկավոր է, – ազդարարել է նա, – ընթերցողների ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, ինչ նրանց շրջապատում է, հարկավոր է նրանց աչքը խոթել ամեն մի գարշանք, հետապնդել, տանջել, հանգիստ չտալ մինչև այն աստիճան, որ ընթերցողին գարշելի դառնա կեղտի այդ ամբողջ հարստությունը և որպեսզի նա, ի վեջո, խորը խոցված, մոլեգնորեն ոտքի ցատկի...»²:

Ընթերցողը պետք է «մոլեգնորեն ոտքի ցատկի», – մեծ ու գերազույն խնդիր էր դա, որ իր առջև դնում էր իր էությանը նոր մամուլը: Նույն խնդիրը հասունանում էր նաև հայ իրականությունում, սակայն այն տարբերությամբ, որ նույն այդ ընթերցողը դեռ պատրաստ չէր մոլեգին ցատկումների: Ավելին. դեմոկրատական մամուլը դեռևս չուներ իր լայն ասպարեզը, նա չուներ ընթերցողների անհրաժեշտ շրջանակը: Անառարկելի է Ա.Հովհաննիսյանի դիտարկումը. «Նոր հայ մամուլն ու գրականությունը կանխում էին ընթերցողին, նրանք ծայր առան նախքան առկա էր ընթերցողների կոնտինգենտը»: Իրոք, հրապարակի վրա արդեն հայտնվում էին ավելի շատ գրքեր ու պարբերականներ, «քան թե ընթերցողը կային հայերի մեջ», ինչպես նկատել է տարիներ հետո Ստ. Նազարյանը: Դեռ հարկ էր նախապատրաստ

¹ Մ.Նալբանդյան, ԵԼԺ, հ. 1, էջ 444:

² Добролюбов, Собр. соч., т. 9, стр. 408.

տել, ստեղծել ցանկալի ընթերցողներին, հունցել «այն հումուրը, որից պիտի խմորվեր գիտակից ու ներգործուն ընթերցողի միտքը»¹: Այդ խնդիրը նախ և առաջ ծառայել էր Ստ. Ռսկանյանի և նրա «Արևելքի» առջև:

«Արևելքը» Ռսկանյան խմբագիր- հրատարակախոսի երախայրիքն է՝ հրատարակվել է 1855թ. հուլիս – 1856թ. հունվար ժամանակամիջոցին, 14 համար, 448 էջ, յուրաքանչյուր համարը, հաճախ՝ յուրաքանչյուր հոդված, արժանի հատուկ ուշադրության: Հանդեսն ավելի քան հարյուր տարի գտնվում է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Առավել հանգամանորեն նրա մասին գաղափար են տալիս ակադեմիկոսներ Ա. Հովհաննիսյանի և Ա. Կարինյանի աշխատությունների համապատասխան գլուխները²: Սակայն «Արևելքը» և Ռսկանյանի գործունեությունն ընդհանրապես կարոտ են հանգամանալից քննության: Հետագային թողնելով Ռսկանյանի գաղափարախոսությունն իր ամբողջության մեջ և աստիճանական զարգացման ընթացքում ու ելևէջներում քննելու խնդիրը, փորձենք ուրվագծել Ռսկանյան խմբագիր-հրատարակախոսի դիմագիծը: Ամենից առաջ, որ նկատելի է Ռսկանյանի հրատարակախոսական գրչի բազմաբեղունությունն է: Նա գրել է ոչ մեծ վիպակներ, հրատարակախոսական ցատումնալի հոդվածներ, ուրույն գրախոսական ուսումնասիրություններ, ընդհանրացնող առաջաբաններ, տեսություններ, կատարել է թարգմանություններ, հանդես եկել չափածո գործերով, հմտությամբ ընտրել ու կազմել է միջազգային կյանքն արտացոլող լուրեր ու հաղորդումներ՝ գերազանցապես ունենալով հայ իրականությունը և ընթերցողին: Նրա խմբագրած հանդեսն ուներ ազգային, գիտական, դատական, վիպական, բանահյուսական, պատմական, գրագիտական, թատերական, երկրագործական և լրատու՝ «Այլևայլ» խորագրով բաժիններ:

Այդպիսի լայն ընդգրկումով, աշխարհիկ բովանդակությամբ մեծադիր հանդես հայ իրականության մեջ առաջին անգամ

¹ Ա Հովհաննիսյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 193:

² Ա Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, Երևան, հ. 1, 1955, էջ 300 – 320, Ա Կարինյան, նշվ. աշխ., էջ 431 – 477:

էր երևան գալիս, անշուշտ, օրինակելով եվրոպական նման տիպի հանդեսները: Թեկուզ միայն իր դիրքով և դիմագծով «Արևելքը» ուրույն մի ցասկ էր հայ մամուլի ու հրապարակախոսության մեջ, իսկ իբրև ազատ խոսքի արտահայտություն, իբրև բուն ազգային խնդիրներին նվիրված տպագիր օրգան նրա տեղը, դերն ու նշանակությունը 1850-ական թվականների հայ հասարակական մտքի զարգացման պատմության մեջ բավականաչափ կայուն ու անհերքելի է: Ըստ որում հանդեսի հիմնական հեղինակը և առավել արժեքավոր հոդվածներ գրողը խմբագիրն էր:

Ինչպես տեսանք հայ գաղափարական կյանք Ստ. Ռսկանյանը մուտք էր գործել դեռ սեփական պարբերական ստեղծելուց առաջ՝ հանդես գալով ազգապահպանության հրատապ խնդիրների շուրջ¹: Բնականաբար այդ խնդիրն էլ պետք է դառնար նրա հրապարակախոսության կարևոր առանցքը: «Հայր Ագուլիկ» – այսպես է վերնագրել իր առաջին ելույթը Ստ. Ռսկանյանը Մխիթարյանների դեմ, այս անգամ նույնպես շոշափելով նրանց դավանաբանական գործունեությունը: Դա փաստորեն փոքրիկ վիպակ է, այն երկերից մեկը, որով մեզանում մուտք էր գործում ու հաստատություն գտնում գրական ժանրը, ինչպես նշվել է հայ գրականության ընթացքն ուրվագծող մի հոդվածում²:

Երկխոսության միջոցով «Հայր Ագուլիկում» Ռսկանյանը հանդարտ գրույց է վարում Մխիթարյանների ու նրանց պաշտոնական հանդեսի դավանանքի շուրջ՝ այդ ընթացքում մերկացնելով Հռոմի պապականությանը: Նա պահանջ է առաջադրում քողարկված գործելու փոխարեն բաց ասպարեզում երևան հանել Մխիթարյանների բուն «դիտավորությունը և նպատակը», ապա բանակոթիվ վարել և ոչ թե «մուր քսել» նրանց վրա, ովքեր քննադատում են ազգը հարյուր հիսուն տարի շարունակ մոլորեցնող քարոզիչներին: Բանավիճող երիտասարդը գայրույթով հայտարարում է՝ «հեռի ինն այն հայը, որ ազգու-

¹ «Արևելքում» Ստ. Ռսկանյանն իր նյութերի տակ սովորաբար ստորագրում էր՝ Ս. Ռսկանյան կամ Ս. Ռ., բայց ավելի հաճախ հանդես է եկել ժածկանուններով՝ Հարմա, Հրանտ, Վահե, Ա. Գ., Վ. Մ. ծածկանուններով:

² Տե՛ս «Հայկազյան հայագիտական հանդես», 1971, էջ 215:

թյունը կուրանա, ի՛նչ կըսեն, ազգը էյոռնի կզոհե, և անգթաբար հոշ-հոշ պատառելով զանիկա կտոր մը կառնե Հոռմա աթոռին առջև կնետե»: «Դիմակով կրոնական որսի ելնելու» դեմ բուրքելով, երիտասարդը պահանջում է սլատասխանել իր առաջադրած հարցերին:

Նույն պայքարը շարունակելով՝ Ոսկանյանը շուտով իր ձեռքն է վերցնում ազգին թողած կտակների գործադրման խնդիրը, որին 4-5 տարի հետո պիտի նվիրվեր Մ.Նալբանդյանը: Ոսկանյանն անդրադառնում է «Մուրատյան վարժարան» խորագրով գրքույկին՝ ուղղված Վենետիկի վանքում տիրող ներքին կռիվների ու վանապետ Հյուրմյուզյանի վարքուբարքի դեմ¹: Նրա համակրանքը գրքույկի հեղինակի կողմն է և, ծայնակցելով նրան, մերկացնում է Հյուրմյուզյանի գաղտնի մտադրությունը՝ «Մուրատյան վարժարանը Հոռմ տանիլ... ազգային շենք մը հռոմեական տուն մը ընել և կտակ մը նենգել»:

Այդպիսով, հրապարակախոսի հակակղերական պայքարի առանցքը դառնում է Փարիզում գործող Մուրատյան վարժարանը և նրա հիմնադրման համար թողնված կտակի ճիշտ ու նպատակին գործադրության խնդիրը: Նա «Արևելքը» հայտնի չափով ի սպաս է դնում այդ խնդրի իրագործմանը:

Կեղեքվող և ամենուր հարստահարվող հայ ժողովրդի համար կարևոր աղբյուր էին այս կամ այն, մանավանդ նրա գավակների կրթության նպատակով թողած կտակները, որոնք հաճախ կողոպտվում էին, վատնվում, դառնում առանձին անհատների էլ ավելի ուռճանալու աղբյուր: Հայտնի է այն բուռն պայքարը, որ մղել է Մ.Նալբանդյանը նման մի կտակ փրկելու և իրոք ազգին հասցնելու համար, որը նրան հասցրեց մինչև Հնդկաստան: Նրանից առաջ այդպիսի պայքար էր մղում հենց Ոսկանյանը՝ ազգին հատկացված կտակն իրավամբ դիտելով նրա անձեռնմխելի հարստությունը, որը պետք է փրկվի Մխիթարյանների ուսնձգություններից և գործադրվի ամենայն

¹ Ուշագրավ է, որ նա հաղորդելով վարժարանում տիրող «անյուր և անտես դեպքերի» մասին տպագրում է նաև Հյուրմյուզյանին նվիրված սատիրական երգը, որ սույում էին աշակերտները (էջ 215 – 217): Սահուն այդ երգը թերևս պատկանում է Ոսկանյանի գրչին:

ճշգրտությամբ: Ահա ինչու նա ազգի հրապարակախոսի մեծ իրավունքով այսպես էր հայտարարում ու պահանջում. «Արևելքը» անտարբեր չկրնար մնալ... Ժամանակը եկավ, որ ամեն բան հայտնվի, և ամեն պարագա ճշտիվ նշանակվի, և մեկ լումայի մը անգամ ուր երթալը բնտուվի...» (էջ 78):

Ասեմք նաև, որ խնդիրը ոչ միայն կտակված գումարը հափշտակությունից փրկելն է, այլ նաև Մխիթարյանների վարած խտրականությանը և ձեռնարկած ոտնձգությանը վերջ տալը: Հակառակ կտակողի կամքի և ազգային շահերի, Մխիթարյանները փորձում էին Մուրատյան վարժարան ընդունել միայն այն երեխաներին, որոնց ծնողները հավատքով կաթոլիկներ էին՝ մերժելով լուսավորչական դավանանքով ընտանիքներից սերված երեխաներին: Հանդիպելով բուռն դիմադրության, նրանք արդեն կոնկրետ քայլերի էին դիմում վարժարանը Փարիզից Հռոմ փոխադրելու ուղղությամբ, որպեսզի անարգել իշխեն նրա վրա, ծառայեցնեն կաթոլիցիզմին: Այդ առթիվ վարժարանի շուրջ տեղի ունեւ երկարատև մի գոտեմարտ, որ վերածվեց առաջադիմականների և կղերապահպանողական խավերի միջև մղվող սկզբունքային պայքարի: Ինչպես Նալբանդյանի, այնպես էլ Ոսկանյանի համար այդ պայքարը միաժամանակ ազգի շինքին նստած աղայական խավի դեմ պայքարելու միջոց էր՝ հանուն ժողովրդի ամբողջականության և նրա կենսական շահերի:

Ոսկանյանը պատիվ ունեցավ լինելու այդ պայքարի առաջամարտիկներից մեկը և մարտնչում էր վճռաբար ու անզիջում: Հանդեսի 4-րդ համարի գլխավոր հոդվածը՝ «Վենետիկի վանքին նենգությունը», նա նվիրեց Մուրատյանի կտակին, որ «հայ ազգին եղած է», և մերկացրեց Մխիթարյան միաբանությունը (նաև Հյուրմյուզյանին), որ «կամավ կտակը կենեզե», կտակված միջոցներով հիմնել է ոչ թե ուսում տվող վարժարան, այլ «կրոնական դարան»: Նույն համարում էլ նա, արդեն ծածկանունով, հրատարակում է երկրորդ հոդվածը՝ «Գիշերադես միաբանություն մը», որտեղ «բոլոր ազգասեր հայերու ուշադրությունը» հրավիրում է «Եվրոպա» հանդեսի, Վենետիկի վանքի որոշ վավերագրերի և այլ պաշտոնական հրատարակությունների կղերակաթոլիկական դրոյթների վրա, որպեսզի այնու-

հեռև Մխիթարյաններին ազդարարի, որ «անախ կերդումք ի տապանակիրն Ալրարատ և հավերսկս Հայաստան աշխարհի, գրով, խոսքով և գործով ձեր անիրավ կամքին դեմ զինիլ և մինչև մեր արյունի ետին կաթիլը կռվել ազգը ձեր ճիրանե ազատելու համար» (էջ 118)¹: Հաջորդ համարի առաջնորդող հոդվածը՝ «Վեներտիկի վանքին բարոյականը», արդեն ավարտվում է ուղղակի կոչով հայ ժողովրդին՝ ուրքի ելնել, պաշտպանել իր պատիվը:

Այսպես, համարից համար, Ոսկանյանը «գրով, խոսքով և գործով» մարտնչել է արևմտահայությանն ալեկոծած խնդրի համար իր հանդեսում հրապարակելով նաև հետևյալ նյութերը. «Վեներտիկի վանքին բարոյականը», «Մուրատյան կտակը», «Մխիթարյան ուխտին նպատակը», «Հյուրմյուզյանին տետրակը», չափածո ընծայագիր «Մուրատյան ոգի» խորագրով, «Մուրատյան կտակը և Հյուրմյուզյանը», «Մխիթարյանին վատությունը» և այլն²: Հոդվածից հոդված լուսաբանելով միևնույն խնդիրը, քննելով նրա տարբեր հանգույցները հրապարա-

¹ Այստեղ Ոսկանյանը շրջադարձումով կրկնում էր հենց Մխիթարյաններին խոսքերը՝ նրանց հրատարակած գրքից, ուր ասվում էր, թե «ոչ երբեք պիտի դադարին աղոթելու, քարոզելու և բանիվք և արդյամբք և գրովք հոգալու, որ ան մոլորայր ի միմիայն Հիսուս Քրիստոսի փարսխը դառնան»՝ նկատի ունենալով հայությանը, որ դեռ Կապական կրոն չի ընդունել:

² Տե՛ս «Արևելք» (1 սեպտեմբերի 1855, N 5), 15 սեպտեմբերի 1855, N 6, 15 հոկտեմբերի 1855, N 8, 1 նոյեմբերի 1855, N 9, 1 դեկտեմբերի 1855, N 11:

Նկատենք նաև, որ այդ ժամանակ, վարժարանից ազատվելուց հետո, վարժարանի և Հյուրմյուզյանի դեմ նյութերով հանդես էր գալիս նաև Գ.Ավագովսկին՝ «Սասյաց աղավնի» հանդեսում: Սակայն «Սասյաց աղավնիի» հունիսյան համարի «Հարկավոր ծանուցում մը» խորագրով ազդից իմանում ենք, որ Ավագովսկին հանդես էր գալիս միայն իրեն արդարացնելու համար: Այդտեղ էլ Ավագովսկին տեղեկացնում է, որ բանակոթիվ երկու կողմերի միջև դադարեցվել է «վսեմափայլ Ալի փաշա մեծ վեզիրին հզոր միջամտությամբը»: Սակայն շատ չանցած բանակոթիվը նորից է բորբոքվել, «Ուստի և Օսմանյան դրսև դեսպան վսեմափայլ Մեհմեդ Կեյ, – բացատրում է Ավագովսկին, – ստիպյալ է քախսանձանաց Հյուրմյուզյանց՝ հատկապես ապապրեց, որ այսուհետև, անոնց դեմ բան չգրենք և ոչ իսկ ինքզինքնիս արդարացնելու համար... անոր համար մեր կողմանե սիրով խոստացանք, որ ասկեց ետըք նոր հրատարակություն մը չենք ընեն Հյուրմյուզյանց հակառակ...» «Սասյաց աղավնի», 1855, էջ 164): Հայտնի չէ, թե մեզան «ապապրանք» Ոսկանյանին արվել է թե ոչ, բայց նա «Արևելքում» շարունակում էր իր խիստ բանակոթիվը:

կախոսը, աստիճանաբար նախապատրաստելով ընթերցողին, դրանով նաև հայ հասարակության կարծիքը, հանգում էր լուրջ ընդհանրացումների, անուր սկզբունքային հետևություններ: Այդ ընթացքում Ոսկանյան խմբագիր-հրատարակախոսը դրսևորել է մասնավոր հարցը, ինչպիսին էր Մուրատյան կտակը, համագ-գային մակարդակի հասցնելու եզակի հմտություն: Շնորհիվ դրա, նա կարողացել է ամենայն վարպետությամբ քննել բուն ժողովրդի վիճակը և նրա առջև դնել գոյատևելու, ազգապահպանության այն հրատապ հարցերը, որոնք այն ժամանակներում դեռ քչերն էին ըմբռնում: Նրա պայքարը՝ ուղղված պապական կղերականության դեմ, փաստորեն պայքար էր նաև լուսավորչական կղերի և, վերջին հաշվով, հայ զանգվածների ամեն մի ներքին և արտաքին թշնամու դեմ: Եվ, պայքարի կոչ անելով, նա իր խոսքն ուղղում էր ամբողջ ժողովրդին՝ վկայակոչելով նաև նրա հերոսական անցյալը. «Հայ ազգ, զարթի՛ր, խղճմտանքդ վտանգի մեջ է. ելի՛ր, պաշտպանե՛ զայն արիաբար, որ մարդկության մեջ տեղ մը ունենաս, այսպիսի նահատակություն մը միայն քեզ քու հին փառքդ կրնա տալ և աշխարհի սիրելի և ընդունելի ընել քու անունդ» (էջ 133): Ակնհայտ է. Ոսկանյանը, օգտագործելով կրոնադավանաբանական խնդիրը, ոչ միայն կրոնի անադարտությունը պաշտպանելու կոչ էր անում, այլ ակնարկում նաև ազգի պահպանության և ազատագրության համար ելնելու խնդիրը: Եվ որքան նա ավելի էր խորանում այդ հարցում, այնքան ավելի որոշակի ու զորեղ էին հնչում նրա այդօրինակ կոչերը: Ոսկանյանը հարցնելով, թե «հույս կա մի՞, որ օր մը ազատության սերը զարթնու հայկա թոռերու սիրտին մեջ», պատասխանում է. «Այո՛, և մենք բան մը չպիտի խնայենք մեր կողմե, որ այն վեհ օրը իր ավետաբեր լուսովը հալածական տանի գիշերադեմ Մխիթարյանը և Հռոմայի բոլոր լրտեսները, այո՛, հույս կա, և մենք կանգուն և մեր մատերը շարժուն, Մխիթարյանը չի պիտի կրնա զրպարտության կուռքը մեր ազատ եկեղեցվո մեջ կանգնել, մենք կանգուն, մեր համազգիները ծունր չի պիտի դնեն Մխիթարյանին աստուծո առջևը. մենք կենդանի, անիկա չի պիտի կրնա հայերը համոզել, թե իրմե գատ թերահավատ և անհավատ մը կա մեր ազգին մեջ. ո՛հ, ոչ բնավ.

չի պիտի կրնա, Հայաստանի նահատակներու արյունը և ոսկորտիքը թող վկա ըլլան...» (էջ 330 – 331):

Այդպիսի վճռականութեամբ գրելով ու արտահայտելով, Ռսկանյանն այդ խնդրի շուրջ ընդհանրացումներ կատարելիս, հարցը հասցնում է համազգային մակարդակի. «Բողոքենք Ասիայի մեջ, բողոքենք Եվրոպայի կողմերը, բողոքենք ամեն տեղ այսօր, վաղը և հարաժամ, բողոքենք մինչև արդարության ատյանը...» (էջ 165): Նաև. «Մեր ազգին արտաքին թշնամիները բազմաթիվ ու ահարկու են արդարև, այլ ներքին թշնամիները ավելի վնաս կուտան և մեր էությանը ուղղակի կսպառնան հիմա, և եթե դարձան մը չի տարվի, հայ անունը լիաջինջ պիտի բառնան երկրի երեսէ...» (էջ 324), «Ե՞րբ, – հարցնում է նա, – հայ ժողովուրդը ուշաբրի, պիտի արդյոք և բարեկամը՝ թշնամիէ, ազատականը՝ բռնակալէ, հավատավորը՝ խաբեբայէ, բամբասանքը՝ ճշմարտութենէ, սուտը՝ իրավէ որոշէ պիտի արդյոք» (էջ 330): Ու մի այլ առիթով, բայց դարձյալ նույն խնդրի կապակցութեամբ. «Արևելքը վերջին անգամ կաղաչէ հայրենասերները, որ զաթնուն և այս անարժան մարդերու հարվածը դարձանեն. գիտենք, որ ժամանակը դժվար է, այլ ազգին անունը, պատիվը. էութիւնը քանի մը զոհ կ'պահանջեն...» (էջ 389): Ի դեպ, Միքայել Նալբանդյանը նույնպէս անդրադառնալով այդ հարցերին, արդէն 1859-ին, «Հիշատակարանի» տասներորդ հատվածում գրել է. «Այո, ես պատահեցա Փարիզում և հայկական Մուրադյան վարժարանին, և նոցա մասին միտք ունիմ առանձնապէս խոսել, մանավանդ այն խնդրի վերա, թե արժանախիշատակ Մուրադը նվիրած լինելով մի ժառանգություն ընդհանուր հայոց ազգի զավակների կրթության և դաստիարակության համար, ինչու միայն որպէս մի մասնավոր առանձնաշնորհություն հասնում է այդ բոլորը պապական հայերին: Ինչու համար ազգը լուռ ու մունջ նստած, սառն հանդիսատես է այդ անիրավությանը և այն ծայրացյալ անիրավության: Ազգի արժաթը ծախսվում է, որ պապականությունը առավել խոր տարրանա ազգի անմեղ զավակների սրտի մեջ, որոնց առավոտ և երեկո աղոթք են կարդացնում, որ հայերը դարձի գան և դուրս գալով հերետիկոսությունից մտանեն պապի գիրկը և արժանի լինին փրկության: Այդ աղոթքը գրված է Մխիթարյանց ձեռքով և որպէս մի

նոր և հավաստի նշան միաբանության հարազատ պապականության, ներկայացուցած է Վատիկանին և արժանի է եղած առանձին ինդոլգենցիայի: Ազգը այսքան տարիներով լուռ է և յուր լուրջամբ շատացնում է ազգի զավակներից պապականության գնացած զոհը Հյուրմյուզների ձեռքով, որ սոքա կարողանան այդպիսի ծանր գնով զնել կարդինալական գլխարկը»¹: Նալբանդյանն ապա դիմում է նորընտիր կաթողիկոս Մատթեոսին, որ նա «առաջը փակե այս բանիս, որ մեծ և մեծ վնասակարներից մինն է»: Հետագայում ևս, գտնվելով բանտում, նա գրել է, որ «...յուրյանց անձը լուսավորյալ մարդերի շարքում կարծող Մխիթարյանք մի կռվածադիկ ժողովի պատճառով դանակ են սրում, որ ազգի վերջին շնչի պահպանման անոթը (իմա՝ կրոնը – Մ.Հ.) ևս փողոտեն»²:

Այնպիսի ընդհանրացումներ ու հարցադրումներ, որոնք առկա են Ռսկանյանի 1855թ. հրատարակած նյութերում, հանդիպում են նաև Հ.Սվաճյանի հոդվածներում, բայց դարձյալ մի քիչ ավելի ուշ, երբ հրապարակ է գալիս «Մեղուն»: Եվ վերջապես, թե ինչ հասարակական արժեք ունեին Ռսկանյանի բարձրացրած հարցերը, ակնհայտ է թեկուզ նրանից, որ շատ տարիներ հետո էլ, տակավին 1868թ. մարտին, «Արշալույս արարատյան» թերթը «Մասիսի» օրինակով, ինչպես և շատ այլ պարբերականներ մինչև այդ և դրանից հետո էլ, բողոքում էին, որ Մուրադյան վարժարանում սովորելու են ընդունում հռոմեադավան ընտանիքի երեխաներին, իսկ լուսավորչական հավատքի և աղքատ ծնողներին՝ մերժում են³: Մի քանի տարի անց վարժարանի հարցը դարձյալ ազգային խնդիր դարձավ, դատական հարուցումների առիթ տվեց, նորից զբաղեցրեց մամուլը, բայց դարձյալ ապարդյուն⁴:

Սակայն Ռսկանյանն ավելի ու ավելի խորանալով իր բարձրացրած խնդիրների համազգային նշանակության մեջ, Մխիթարյանների գործունեությունը քննում էր ոչ միայն

¹ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 1, էջ 420 – 421:

² Նույն տեղում, հ. 3, էջ 220:

³ Տե՛ս «Արշալույս արարատյան», 16 մարտի 1868, N 827:

⁴ Տե՛ս Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 4362 – 4363:

Մուրադյան կտակի կապակցությամբ, այլ առհասարակ և նույնիսկ բոլոր առումներով: Նա մասնավորապես այդպիսի փորձ է կատարել «Մխիթարյան ուխտին նպատակը» հողվածում, որ հրատարակել է «Դատական» խորագրի ներքո»¹: Հենց հողվածի առաջին տողերում Ոսկանյանը պապականության քայլն ուղղում է հենց նրա դեմ՝ ցույց տալով, որ նրա՝ Մխիթարյանների նկատմամբ տածած կասկածով անուղղակի ծառայություն մատուցեցին մեր ազգին: Հարյուր հիսուն տարի հավատ ենք ընծայել Մխիթարյանների բարեմասնությանը և «ո՞վ գիտե դեռ քանի տարի... պիտի համոզյալ «մնայինք, եթե նրանք պապի վատահոթությունը վայելելու համար զաղտնի գիրք չտպեին նրա և «քանի մը պաշտոնակալ հռոմեականներու համար»: Գաղտնաբար արդարանալով պապի առջև և այդ նպատակով ամբաստանելով հայ կրոնն ու եկեղեցին, Մխիթարյանները մերկացրել են իրենց իսկ եությունը:

Իգուր չէր Ոսկանյանը անդրադառնում երեք տարի առաջ հրատարակված՝ «Վեներտիկու Մխիթարյան...» գրքին. մինչև այժմ նա հնարավորություն չէր ունեցել նրա մասին արտահայտվելու, մյուս կողմից բուռն պայքարը Մխիթարյանների դեմ շարունակվում էր. դրանցից բացի, նա ասելիք ուներ:

Հասունյանի գիրքը, որ ուղղված է Մխիթարյանների դեմ, Ոսկանյանի լակոնիկ բնորոշմամբ «այլանդակ գիրք» է: Նրան հաջորդած «Պարսավագիրքը» «որու նման հրեշային բան չգտնվեր Եվրոպայի մեջ», առիթ է տվել «Հայտարարությանը»: Դրանք բոլորն էլ «փտուն և ապականակիր դեպքերով լի են», – այսպես բնութագրելով կրոնադավանական փոխադարձ մերկացման նպատակով հրատարակված գրքույկները, Ոսկանյանը շեշտում է այն հանգամանքը, որ Մխիթարյանները առիթ են տվել տևական «անակնկալ փոթորկին», որի վերջը դեռ չի երևում: Դա նախ և առաջ «բարոյական մահ մ’ ալ տվավ» Մխիթարյաններին «Հանդարտ սիրտով քննելով «փոթորիկի» սկզբնապատճառ գիրքը, որ ստացել է «Ջատագովություն» անունը, Ոսկանյանը մերկացնում է նրա հեղինակին՝ «այսինքն բոլոր վանքը», մեկ առ մեկ քանդում է այն հանգույցները, որոնց վրա Մխիթարյան-

¹ 15 սեպտեմբերի 1855, N 6, 15 161-175:

ները կառուցել են իրենց արդարացումները՝ կաթոլիկության հարելու և հանուն կաթոլիկության գործելու իրենց իսկ խոստովանած «հանցանքներում»: Վերուրվագծելով Մխիթարյանների գործունեության քայլերը՝ սկսած Մխիթար աբբայից, Ոսկանյանը ընթերցողի ուշադրությունը բևեռում է այն բանի վրա, որ նրանք և նրանց հոգևոր հայրը այլ շահ չեն ունեցել, բացի «*Հռոմեակաև շահը*», որ նրանց համար չկա «ազգ, հայրենիք, գիտություն» հասկացությունները: Նրանք, գործելով «գաղտնի կերպով», ուզում են շահել հայի՝ իրենց կարծիքով «մոլորյալ սիրտը», նույնիսկ փորձում են «քաղաքական կրթություն» տալ՝ միշտ և ամեն ինչում հետապնդելով նույն նպատակը՝ ազգը Հռոմին հպատակ դարձնել. ո՛չ, հռչակում է Ոսկանյանը, «մենք բարության լուծը չենք ուզեր և բնավ չուզենք պիտի, մեր ճիտը առնիլ», իսկ Մխիթարա ախտին արհամարհանքն ուրիշ պարտավորություն մը չունինք հայտնելու» (էջ 174): Նա մերժում է նաև այն փառավոր «վերադիրները», որոնք Մխիթարյաններն ընծայում են Մխիթար Աբբային՝ «սուրբ, մեծ, լուսանորոգ», «Հայաստանի առաքյալ», դրանց փոխարեն նա մի ածական է շնորհում՝ «Հայոքսակ Մխիթար»:

Այսպիսով, պարզ ու որոշակի նպատակ դնելով իր առջև՝ ցույց տալ, որ Մխիթարյանները սկզբից ևեթ պապադավան էին ու հայությանը պապադավան դարձնելու նպատակ են հետապնդում, Ոսկանյանը, Մխիթար Աբբայի և Մխիթարյանների գործունեությանն անդրադառնալիս, զուտ դավանաբանական տեսանկյունից է քննում հարցը և, տեղի տալով առօրեական խնդրին, թույլ է տալիս չափազանցություն ու միակողմանիություն՝ ամենայն անկեղծությամբ հավատացած լինելով, որ պաշտպանում է հայ ժողովրդի բուն շահը, նույնիսկ ինքնուրույն գոյության իրավունքը:

Մյուս հանգուցային հարցը, որ ջանք պահանջեց Ոսկանյանից և ի վերջո դարձավ «Արևելքի» խափանման պատճառը, դարձյալ անմիջականորեն առնչվում է հայ ժողովրդի ապագա ճակատագրի, գոյատևման նրա իրավունքի պաշտպանության հետ:

Ամիսներ առաջ Թուրքական կայսրության վառողապետ, համբավավոր Պողոս Տատյան ամիրայի (1800 – 1863) ստորա-

գրությանը ֆրանսերեն լեզվով լույս էր տեսել մի տեսարակ¹: Սեպտեմբերի 8-ին այցելելով Փարիզի արքեպիսկոպոս Սիպուրին, ամիրան այն ընծայել էր կաթոլիկ կղերականին միաժամանակ հայտարարելով, թե ինքն էլ Փարիզի արքեպիսկոպոսի չափ կաթոլիկ է: Դրանով ամիրան, Չամուռճյանի հետևությամբ, ջնջում էր երկու կրոնների միջև եղած տարբերությունը և ուրույն ուղի էր հարթում նրանց համատեղման համար: Դա ամիրայի հին ծրագիրն էր: Վաղուց ի վեր Տատյան ամիրայի առանձնատունը դարձել էր հատուկ ժողովատեղի, որտեղ քննվում էին դիվանաբանական հարցեր, նույնիսկ հարցաքննվում էին կասկածելի կրոնավորները, ներառյալ վարդապետները՝ պարզելու համար նրանց հավատարմության աստիճանը հայոց եկեղեցուն: Նման դեպքերում տոն սովորի ու գլխավոր քննիչ-դատախազի դերում, ինչպես տեսանք, հանդես էր գալիս մոլի հետադեմ Հովհ. Չամուռճյանը: Դա էլ, ըստ երևույթին, իրավունք է տվել Տատյան ամիրային, որն առհասարակ կրոնական հարցերում խտրություն չէր դնում, հանդես գալ հայ եկեղցու և հայկական կրոնական հավատքի շուրջ: Բայց ահա ամիրան հրապարակ է գալիս ոչ թե անձամբ իր անունից, այլ՝ ազգի: Ժամանակին նրա ուղեգծին հավանություն էր տվել Հռոմի դեսպան և քահանայապետ Ֆերիերը: Այժմ նա իր տեսարկում, ինչպես և բանավոր խոսքում, որ շուտով տեղ էին գտնում ֆրանսիական մամուլի էջերում, պնդում էր, թե հայ և հռոմեական եկեղեցիների միջև եական տարբերություն չկա, որ հայ ամիրան պապական արքեպիսկոպոսի չափ կաթոլիկ է²: Նայատակը պարզ էր. հայ ժողովրդին նետել պապի գիրկը:

¹ “Note presentee se gpendeur Mge. I’ Archeueque de Papis”, par B. Dabian, Paris, 1855, 23 p. Այս գրքույկի առթիվ Հր. Ասատուրը նկատում է, որ նրա «հեղինակն է աներկբա Այվազովսկի Գաբրիել վրդ., որ զայն իր հանդեսին մեջ կիրատարակե» («Լույս», 5 հունվարի 1908, N 2, էջ 61): Դրանից առաջ՝ 1859-ին, Խ. Սիսաքյանը գրել է, որ այդ տեսարակը հորինվել է Կ. Պոլսի ազգային պատրիարքարանում և թելադրվել է Փարիզում («Սասիս» 12 նոյեմբեր 1859, N 407):

² Ի դեպ. Պողոս ամիրա Տատյանն այնքան էր թեքվել Հռոմի կողմը, որ նրա դագաղի վրա վեճ է բորբոքվել այն մասին, որ նա ընդունել է պապական վարդապետությունը: Վեճը հօգուտ ուղղափառ եկեղեցու լուծվել է Ֆուադ փաշայի միջամտությամբ:

Վաղուց էր արևմտահայությանը հուզում կաթոլիկական դավանանքի խնդիրը, գրեթե նրա երևան գալու հետ միասին: Արտաքննապես այն ուներ կրոնական կեղև, բայց ավելի հաճախ խնդիրը ստանում էր սոցիալ-քաղաքական թեքում, որին խառնվում էր նաև օսմանյան տերությունը՝ ունենալով որոշակի նպատակներ, այն է՝ կրոնադավանաբանական խնդիրներով հուզել հայ զանգվածները, ապա և՛ հայությունը պառակտել ընդդիմադիր մասերի և այդպիսով ավելի դյուրին իրականացնել հայահալած իր քաղաքականությունը: Տարբեր դավանանքի հայ ազդեցիկ գործիչներն ու համայնքները, տարվելով միմյանց դեմ մղվող այդ պայքարով, ակամա նպաստում էին թուրքական նենգ քաղաքականությանը և պարսկական նկրտումներին: Ազգավնաս այդ պայքարի մի էջին մենք ծանոթանանք: Այժմ, երբ հանձին Տատյան ամիրայի ձեռնարկի կարծես թե հայ զանգվածներին պապությանը մերձեցնելու, ապա և նրա գիրկը նետելու գործնական քայլ է կատարվում, երևան է գալիս այդ պայքարի մի այլ, ոչ պակաս կարևոր էջը՝ դարձյալ արժանի առանձին ուշադրության:

Խնդիրը շատ պարզ սխեմայով հանգեցվում էր պապի գերագույն իշխանության ընդունմանը՝ լուծված համարվելով մյուս կարևոր հարցը՝ Հոռմը «ուղիղ և անմուլար» է ճանաչում հայ եկեղեցու «դավանությունը, ծեսերն ու արարողությունները: Տատյան ամիրան էլ այժմ իր զենքերն ուղղում էր այն բանին, որ վերացվի հայոց եկեղեցու հռոմեականի հետ մերձեցումը, ապա և միաբանմանը խանգարող գլխավոր արգելքը: Որքան հաջողվեց պարզել, ամիրայի քայլին առաջինն արձագանքեց նրա գործակից հայ եկեղեցու ավանդական սկզբունքների նկատմամբ իր արտակարգ նախանձախնդրությամբ շինծու համբավ վայելող, իրականում տարեցտարի ավելի ու ավելի դեպի Հոռմ հակվող Հովի. Չամուռճյանը: Նա «Զոհալի» 16-րդ համարում տեղեկացրեց ամիրայի տետրակի մասին՝ նկատելով, թե «Հայաստանյաց և Հոռմի եկեղեցիներում մեջ հավատո էական վարդապետությանց տարբերություն չկա»: Ապա խնդրին, սկսած 1855-ին նույնքերից, լայն տեղ հատկացրեց «Մասիսը», որի խմբագիր Կ.Յությունյանը համարվում էր նման միաբանությունն անհնար համարողներից մեկը: Նրա թերթը

երբեմն հանդես էր գալիս կղերական-ամիրայական հայացքների դեմ, քննական դիրք էր գրավում պապականության և մխիթարյանների հանդեպ¹: Նա հանդես եկավ Մխիթարյան միաբանության արքեպիսկոպոս Հյուրմյուզյանի ու Չամուռճյանի դեմ, ապա հերքեց Կ.Պոլսում լույս տեսնող «Բռևս տ' օռիա» ֆրանսերեն թերթի հաղորդումներն այն մասին, թե ազգային պատրիարքարանում հրավիրված ընդհանուր ժողովը քննում է «հռոմեական եկեղեցու հետ միության» խնդիրը: Գեկտեմբերի սկզբին թերթը նորից է անդրադարձել ֆրանսերեն թերթի պնդումներին, արտատպել է նրա N 100-ում հրատարակված նամակը՝ «Լրագրոյդ բաժանորդ հայ մը» ստորագրությամբ և ապա զետեղել խմբագրի լայն բացատրությունը²: Այդպես սկսվել է տևական մի բանակռիվ «Մասիսի» և «Չոհայի» միջև³: Այդ պայքարին է միացել նաև «Արշալույս արարատյան» թերթը՝ իր հերթին մերկացնելով պապական միտումները⁴: Այդպես գրեթե մի ամբողջ տարի, 1856թ., այդ և արևմտահայ մի շարք թերթերի գլխավոր թեման օսմանյան արքունիքի վառողապետ, շատ ազդեցիկ ամիրաներից մեկի՝ Պողոս ամիրա Տատյանին հուզած խնդիրն էր և նրա հետ առնչվող հարցերը, մասնավորապես ֆրանսիական մամուլում լույս տեսած նյութերը:

¹ Ա Հովհաննիսյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 131 – 132:

² Տե՛ս «Մասիս», 25 նոյեմբերի և 8 դեկտեմբերի 1855, N 200 և 202:

³ Նույն տեղում, 5 հունվարի, 2 փետրվարի, 15 մարտի, 11, 19 ապրիլի 1856, N 206, 210, 216, 221 և հետո:

⁴ 1856թ. «Արևելքի» անդրանիկ համարում Ոսկանյանը «Մասիսի» և «Արշալույս արարատյանի» այդ պայքարը համարել է «արի ընդդիմություն», որը հուսատու է և բաջալերիչ (տե՛ս էջ 417): Այդ ժամանակ Կ. Պոլսի և Չմյուռնիայի երկու հիմնական թերթերը, կարծես թե իրար հետ համագործակցած, հանդես էին գալիս ընդդեմ «Հռոմի»՝ Վատիկանի, քննադատական սուր հոդվածներով մերկացնում էին Ա. Հասունյանի ամբողջ գործունեությունը, թերթ առ թերթ քննում ու ծաղկում էին նրա հրատարակած գիրքը, Մխիթարյանների դեմ ուղղված նյութերում մերկացնում էին նրանց պապական պրոպագանդը, աբբահայր Հյուրմյուզյանի «Յայտարարությունը», միաբանության լույս ընծայած «Չատագովություն» ինքնափառսբանող գրքույկը, ինչպես նաև բողոքի ծայն էին բարձրացնում փարիզյան «Յունիվեր» և այլ պարբերականների դեմ, ծաղկում էին Պողոս Տատյան ամիրայի վարքագիծը և սլապադալան քայլերը, «Չոհայի» ու Չամուռճյանի ազգադավ գործունեությունը:

Այդ ժամանակ «Մասիսիում» երևան է գալիս նաև մի կարևոր հանգամանք. բանակոթիվ մղելով հայ եկեղեցու իրավունքների և ինքնուրույնության համար, «Մասիսը» աներկբա համակրանք է դրսևորում Ստ. Ոսկանյանի «Արևելքի» նկատմամբ: Թերթը 1855թ. դեկտեմբերի 1-ի համարում արտատպում է «Արևելքի» հոկտեմբերի 1-ի խմբագրականի երկրորդ կեսը («Ազգային»): Հայ ազգի զարթոնքի շուրջ Ոսկանյանի արտահայտած խորհրդածությունները և այն Եվրոպայում ճանաչելի դարձնելու անհրաժեշտության հարցադրումը «Մասիսը» ներկայացնելով իր ընթերցողներին, նշում է, որ դրանք արժանի են ուշադրության: Մի այլ անգամ «Մասիսն» «Արևելքից» արտատպում է Ստ. Ոսկանյանին հղված նրա մտերիմ ֆրանսիացի բժշկի նամակը՝ ուղեկցելով դրվատական խոսքեր հանդեսի հասցեյին¹: «Մասիսը» մասնավորապես նկատում է, որ «Արևելքը» իր «ազգասիրական եռանդուն ոգով և գեղեցիկ ու վառվռուն ոճովը հետզհետե հասարակության համակրությունը գրավելու վրա է... Արդեն մեծ վստահություն կուտա, որ ազգին օգտին ու սլատվոյն համար ունեցած զովելի նախանձը անկողմնասիրությամբ և խռիեն չափավորությամբ շարունակելով, օրըստօրե իր հարզն ու համարումը պիտի ավելցնե ազգին առջև»: Նա միաժամանակ ծանուցում է հանդեսին բաժանորդագրվելու հնարավորության մասին Կ.Պոլսում, զովերգում է նրա գործակալ Նշան աղա Շիրինյանին, նույնիսկ հաղորդում, որ «Արևելքի» «հինգերորդ ու վեցերորդ թիվերը, որ Փարիզեն եկած ու հոս կորսված էին, վերստին բերել տրվելով քիչ օրեն բաժանորդներուն պիտի խրկվին»: Կ.Յությունյանի թերթը հատկապես նշում էր, որ «վերջին քանի մը ազգային հողվածները ուշադրությամբ կարդալու արժանի են»:

Թվում է՝ պարզ է, «Մասիսի» նաև «Արշալույս արարատյանի» և «Արևելքի» ելակետը Պողոս ամիրա Տատյանի հուզած դավաբանական խնդիրներում ինչ-որ տեղ նույնանման էր, և դա Ոսկանյանը շիտակությամբ արձանագրել է այսպես. «Երկու հայ օրագիրներու, «Մասիս» և «Արշալույս», արի ընդդիմությունը

¹ Նույն տեղում, 1 դեկտեմբերի 1855, 19 հունվարի 1856, N 201 և 208:

տեսնելով, հույս կառնումք և ճշմարիտ վստահություն մը կզգամք... հույս կառնումք և կքաջալերվիմք...» (1856, էջ 417): Բայց Ռսկանյանը հարցերը դնում էր ավելի կտրուկ և շատ ավելի լայն, քան դա արվում էր «Մասիսում» և դա այն դեպքում, երբ «Արևելքը» կրոնական խնդիրներով զբաղվելու արտոնություն, նաև ձգտում չուներ:

Չշտապելով հանդես գալ, Մտ. Ռսկանյանն ամիսներ հետո էլ լռում էր, թեև լավատեղյակ էր կատարվածին, գիտեր, որ հայ զանգվածներն ալեկոծվում են, օտար մամուլը թմբկահարելով ամիրայիին, վիրավորանք էր հասցնում ուղղափառ հայ հավատացյալներին: Գիտենալով՝ համբերում էր: «Արևելքի» ընթերցողները, սակայն, անկարող էին համբերել, «կզարմանան, թե ինչո՞ւ կլռենք, ոմանք ալ կկասկածին՝ ըսելով, թե չի տեսնելու կզարնենք», – գրում է Ռսկանյանը և ապա բացատրում, որ «Արևմուտքը» ցանկանում էր հեռու մնալ կրոնական հարցերից և «չէր ուզեր, որ այս կռիվը իր էջերու մեջ սկսի», որ գերադասելի էր քաղաքական խնդիրների վրա ուշադրություն դարձնել, և որ հանդեսը սպասում էր մինչև որ Փարիզի արքեպիսկոպոսը, որին ընծայվել է Տատյանի տետրակը, «*հրապարակալ՝*» իր հավանությունը տար»: Բայց այլ դիրք էր գրավել հենց Փարիզում հրատարակվող «Մասյաց աղավնի» կես հայ-կես ֆրանսյան հանդեսը, որի խմբագիր Գ.Այվազովսկին էլ գործակցում էր Պողոս ամիրայիի հետ, խմբագրել էր նրա տետրակը և շտապել էր ծանուցել, որ ֆրանսերեն «Հանդես արևելիցում» հրատարակվել է Տատյանի գրվածքը Հայաստանյաց եկեղեցու դավանանքին վրա», ինքն էլ իր հերթին դրվատանքով արտահայտվել¹: Այդ երկու պարբերականներից բացի նույն խնդրին անդրադարձել էր նաև «Աթենեոմ ֆրանսե» շաբաթաթերթը (էջ 323):

¹ «Մասյաց աղավնի», 1855, էջ 240: Ի դեպ, 1861թ., «Երկու տող» որկում Մ.Նալբանդյանը մերկացնելով Այվազովսկուն, որ «Հյուսիսափայլին» մեղադրում էր «որպես կրոնադրոժ», գրել է. «Եվ ով է այս դատապարտողը, որ արդեն երկու անգամ փոխել է յուր կրո՞նը, որ տպագրությամբ հրատարակել է «Կաթոլիկ ծնած են և կաթոլիկ պիտի մեռնին». որ Տատյան Պողոս բեյին համար տետրակ գրելով մերկայացրել է Փարիզի արքեպիսկոպոսին, հայոց եկեղեցին հռոմեական խոստովանելու համար...» (ԵԼԺ, հ. 3, էջ 32): Այստեղ Նալբանդյանը հավանաբար հենվել է «Արևելքում» Ռսկանյանի տպագրած հոդվածների վրա:

Եվ «Արևելքը» խախտում է իր լուծությունը. «Մասյաց աղավ-
մին» արդեն արտատպել էր Տատյանի տետրը և գովերգել, ֆրան-
սիական մի հանդես հատուկ հոդված էր նվիրել ամիրայի քայլին,
իսկ բուն հայության մեջ «նորեն հավատքի կոչվր սկսավ... մերին-
նեղ տակավին միջին դարու ազգավեր փափագով կեռան ու
կզեռան», իսկ «Յունիվեր»¹ թերթը սկսել էր «հայ եկեղեցին թշնա-
մանալ և անոր իրավունքները ուրանալ» և այդ բոլորը «Պողոս
ամիրային տետրակին պատճառավր»: Ու Ոսկանյանը հանդես
է գալիս «Տ. Պողոս ամիրային տետրակը և *Յունիվերը*» հոդվա-
ծով:

Քիչ է պատահում մեր հին մամուլում որևէ ամիրայի դեմ
ուղղված հոդված. ամիրան անձեռնմխելի էր ու ամենակարող, և
ամիրայության կամայական հարվածները քանիցս անխնա իջել
են հայ պարբերականների ու խմբագիրների գլխին²: Իսկ Պողոս
Տատյանն իր գերդաստանով, ամիրայական փառքից բացի,
վայելում էր սուլթանի հատուկ բարեկամությունն ու վստահու-
թյունը, և կայսրության վառողապետն էր: Նման մեկի դեմ հան-
դես գալու համար ծուռ պետք էր լինել, և Մտ. Ոսկանյանն
այդպիսի «ծռություն» ունեցավ: Նա, պատմելով եղելությունը,
մերկացրեց կաթոլիկության փարախը նետվող ամիրային, նրա
տետրակը փառաբանող ֆրանսիական թերթը, որն, ի դեպ,
գովերգում էր նաև Հովհ. Չամուռնյանին, որովհետև սա էր
«հիմնավորում» այն թեզը, թե էական տարբերություն չկա հայոց
եկեղեցու և կաթոլիկական կրոնի սկզբունքների միջև: Այդ
հոդվածում էլ Մտ. Ոսկանյանը առաջին անգամ հայ դեմոկրա-
տական մամուլում ծառանում է Գաբրիել Այվազովսկու դեմ.
«Հռոմեական գայլի»՝ Պողոս ամիրայի գործակիցը, կաթոլիցիզմ
քարոզող նրա տետրակի «սրբագրողը» և ուղեկցողը նա էր:
Ամենայն համարձակությամբ խարազանելով նրանց, Ոսկան-

¹ «Յունիվերը» Փարիզում հրատարակվող կրոնական պարբերական էր:

² Բանը նրբեմն հասնում էր ֆիզիկական հալածանքի: «Ծաղիկ» հանդեսը
1899 թ. հունվարի 16-ի (N 28) համարում զետեղել է հոդված «Ապտակը մեր բարբերու
մեջ» վերնագրով, որտեղ, ի դեպ, պատմում է նաև այն մասին, որ 1859թ. Տատյան
Պողոս ամիրան ապտակել է «Մյունստի էրծիասի» հայատառ թուրքերեն թերթի
խմբագրին:

յանը «Արևելքի» էջերից հրապարակ գալու մարտահրավեր հղեց նրանց՝ բնավ չկարկամելով այն բանից, որ գործ ունի անասհմանափակ ազդեցություն ունեցող Տատյան ամիրայի հետ, որ նրա «թարգմանը» դարձյալ բավական լայն կապեր ունեցող և մեծապես ազդեցիկ Գաբրիել Այվազովսկին էր՝ բազմաթիվ ծավալուն աշխատությունների հեղինակը և «Մասյաց աղավնի» նորաստեղծ հանդեսի խմբագիրը: «Անհոգությունը աններելի է և հաղթվելու նշան կրնա համարվել. լռել չըլլար, վասնզի մենք ալ ըսելիք ունինք»¹, – այսպես է ավարտում իր խոսքը Ոսկանյանը:

Դա Պողոս ամիրայի դեմ ուղղված «Արևելքի» առաջին հոդվածն էր՝ նրա խմբագրի ստորագրությամբ՝ «Ս. Ոսկանյան»: Մի ամիս հետո, հանդեսի նոր տարվա համարի հենց առաջին էջում, նա ազդարարեց, որ շարունակում է բողոքներ ստանալ Պոլսից և այլ քաղաքներից, որ դրանցից մեկը «հոժար սրտիվ» կհրատարակի հաջորդ համարում՝ այն, որի տակ «ստորագրողներուն թիվը ահագին բազմության մը կհասնի»: Չբավարարվելով այդ ազդով, Ստ. Ոսկանյանը հենց այդ համարում՝ «Վահե» ծածկանվամբ գետեղում է իր հոդվածը՝ «Յունիվերը և Տատյան Պողոս ամիրային տետրակը»²:

Ֆրանսիական թերթը նոր հոդված էր հրատարակել հայ ժողովրդի դեմ՝ դարձյալ առիթ ունենալով ամիրայի տետրակը և հենվելով Պոլսից ստացած մի նամակի վրա, որտեղ ասվում է, թե արծարծված խնդիրը «մեր ժողովուրդը տակ ու վրա ըրավ», բաժանեց երեք ընդդիմադիր մասերի: Ոսկանյանը քննում է, թե ովքեր են այդ երեք խմբերը կազմում և ամեն անգամ հակադրվում «Յունիվերին», որն, ի դեպ, սկսել է «*Znhu!*» անուն օրագիրը գուվել ու երկինք հանել և Չամուռճյանի պես մարդու մը երևելի փիլիսոփայի և մատենագրի պատվանունը տալ»: Ավելին. ֆրանսիական թերթը, ինչպես պարզվում է «Արշալույս արարատյանի» հրապարակումից, նույնիսկ բացեփրաց գրել էր, թե Կիլիկիան այն դեպքում ինքնուրույն մարզ կարող է դառնալ,

¹ Նույն տեղում, I դեկտեմբերի 1855, N 12, էջ 324:

² «Տետրակ» բառը Ոսկանյանի բառարանում ունի նաև «պամֆլետ» իմաստը (տե՛ս «Արևելք», էջ 74):

³ «Արշալույս արարատյան», 9 մարտի 1856, N 515:

երե հայոթյունն այնտեղ պապական կրոնն ընդունի³:

Վառնությամբ է համակվել Ոսկանյանն այդ ամենից, նա կծու խոսքեր է հասցեագրում ամիրային, «ինչպես կլսենք, կփափագի գրական փառք ու պատիվն ալ ունենալ ազնվականի շուքին հետ»: Եվրոպայում և եվրոպացիների առջև թշնամանք է հարուցվում հայ ժողովրդի դեմ, զրպարտություններ են թխվում լրտեսների կողմից... «հայու մը ձեռքով»: Խնդիրը հասել է օսմանյան տերությանը, և փայլալավում է այն հույսը, թե արևմտահայ հատվածին Էջմիածնի ներգործությունից համելը «տաճիկ դուռին շահավետ է»: «Ազգերնուս տունը կփլե», – բացականչում է Ոսկանյանը և իր հանդեսի կողմից ազդարարում. «Յուշ, հուշ հռոմեական գայլը մեր մեջն է. Մամիկոնյանք հիմա թոռներ ունիք մի⁴, որ ձեր պատերազմի այս ձայնը լսեն...» (էջ 392):

Ոչ միայն հրապարակախոսի իր հզոր գրչով, այլ նաև գեղարվեստական վարպետ խոսքով Ոսկանյանը մտրակում է պապական կղերականությունն՝ այս նպատակով դիմելով նաև պատմական անցյալին և վերհիշելով Կ.Պոլսի պատրիարք Ավետիք Եվդոկիացու (1675 – 1711)՝ պապականության կողմից կրած անողորք հալածանքները և նենգաբար առևանգվելը, Բաստիլի «ահարկու բանտում» տարիներ շարունակ արգելափակվելը, հարկադրաբար կաթոլիկ դառնալը¹: Այդպիսով նա պատմավավերական մի ընտիր երկ է ստեղծել «Հռոմեական եկեղեցու երդվյալ թշնամի Ավետիք պատրիարքի ողիսականի շուրջ» «Հայ

¹ Այս առիվ տես չ. *Անասյան*, Հայկական մատենագիտություն, հ. Բ, Երևան, 1976, էջ 980 /0 1009:

² Տես «Արևելք», 1 հունվարի 1856, N 13, էջ 392 – 400:

Ի դեպ, պատրիարք Ավետիք Եվդոկիացու շուրջը ստեղծված բավականաչափ մեծ գրականության մեջ հատուկ ուշադրության է արժանի Մարիոս Թորինի գիրքը, որն ունեցել է մի քանի հրատարակություն, իսկ նրա 11-14-րդ գլուխները՝ նվիրված Ավետիքի հարցին, հրատարակվել են նաև հայերեն, Կ.Ս.Յուրյուճյանի թարգմանությամբ և առաջաբանով (տես «Երկարի դիմակով մարդը և հայոց Ավետիք պատրիարքը»: Գրեց Պ.Մարիոս Թորեն և թարգմանեց գաղղիական բնագրեն Կ.Ս.Յուրյուճյան: Կ. Պոլիս, 1870, 123 էջ): Դա ցույց է տալիս, որ խնդրի նկատմամբ հասարակական հետաքրքրությունը դեռևս մեծ էր: Անդրադառնալով այդ հրատարակությանը «Հույս» հանդեսը նկատել է, որ այդ «քանկագին հրատարակությունը» լույս է սփռում «ճիզվիթրության սև և անթափանց քողի ծածկված» մի էջի վրա, ապա և եզրակացրել «ճշմարիտ կյստսի Մորիոս և կըստն «Չամչյան» («Հույս», 1870, N 54, էջ 284 – 285):

պատրիարք մը ի Պասֆիլ»², ակնհայտ մտադրությամբ՝ մերկացնել Հռոմի քողարկված դեմքը, հարվածել պապականությունը սրբագործող «սևադեմ կրոնավորներին»։ Եվ դա նրան հաջողվել է։

Հայոց «անկախ և ազատ եկեղեցու պատվի և էության» շուրջ բորբոքված պայքարը գնալով ավելի բուռն կերպարանք էր ստանում։ Կ. Պոլսից ստացված բողոքներին ավելանում են Չնյունոնիայից և Եգիպտոսից ստացվածները։ Հայ պարբերականները՝ «Մասիսը», «Արշալույս արարատյանը» իրենց հերթին բողոքի ձայն են բարձրացնում։ Ոսկանյանն «Արևելքի» էջերում լայն տեղ է տալիս Կ. Պոլսից ուղարկված ընդարձակ բողոքագրին՝ ուղղված պատրիարքին, ազգային գերագույն և հոգևոր անդամներին¹։ Բողոքագիրը, որ ինքնին հետաքրքրական մի վավերագիր է, մերկացնում է «Չոհայի» խմբագիր Չամուռճյանին, վառողապետ Տատյան Պողոս ամիրային, ինչպես և վարդապետ Գաբրիել Այվազովսկուն, որն ըստ էության, ամիրայի անունով հրատարակված տետրակի երկրորդ հեղինակն էր։ Վավերագրի ստորագրողները (այն կրում է «Ծառայք...» ստորագրությունը, որտեղ երեք աստղանիշը կարծես թե մատնում են Ստ. Ոսկանյանին՝ իբրև բողոքագրի 17 հարցումների նախաբանի և վերջաբանի հեղինակներից մեկի կամ գուցե շարագրի)² պահանջում են «օր առաջ», «ժամ առաջ» պարզաբանել և տնօրինել հարցը³։

¹ Տե՛ս նույն տեղում, 15 հունվարի 1856, N 14, էջ 418-423։

² Խ. Մինասյանը որոշակի ակնարկով այդ առթիվ գրել է, թե Ոսկանյանը «վախճանական և վճռական բողոք մըն ալ ազգին կողմն հրատարակելու պատեն» առիթ ունեցավ («Մասիս», 12 նոյեմբերի 1859, N 407)։

³ Ավելի քան վեց տարի հետո Հ. Չամուռճյանը «Երևակում» անդրադարձել է այդ խնդրին։ Նա, վերհիշելով իր հրատարակած «Չոհայի», և «Մասիսի» հին վեճը, պատմում, որ պատրիարքը նամակով դիմել է իրեն և կից ուղարկել 17 հարցում՝ խնդրելով պատասխանել դրանց առանց «Չոհայում» սույազրելու։ Չամուռճյանը, ինչպես ինքն է գրում, հարկ չի համարել պատասխանել առաջադրված հարցերին, նույնիսկ պատրվակով հրաժարվել է ներկայանալ պատրիարքարան։ Ուստի և բողոքագրի հեղինակներն այն ուղարկել են Փարիզ՝ «Արևելքին», որը և սույազրել է «սրբազանին այն պատճենը մեզի խրկել են 32 օր ետքը»։ Նրա կարծիքով, բողոքողները և «Արևելքը» «խարդախ միջոցների» են դիմել հրապարակ հանելով բողոքագիրը՝ անհապաղ պատասխան պահանջող հարցումներով (տե՛ս «Երևակ», 16 մարտի 1862, N 126, էջ 181-184)։

Երկու շաբաթ հետո՝ փետրվարի 1-ին, պետք է լույս տեսնեն «Արևելքի» հաջորդ՝ 15-րդ համարը, որտեղ զետեղված էր նաև Ստ. Ռսկանյանի հերթական հոդվածը ամենագոր ամիրայի և նրա արքանյակ Այվազովսկու դեմ: Ըստ երևույթին դա մի հզոր բողոք էր, արտակարգ մի ցույց, որի համար, ինչպես երգիծանքով նկատում է Խ.Միսաքյանը. «բանակ և տորմիղ ունենալու է» («Մասիս», 12 նոյեմբերի 1859, N 407): Բողոք-հոդվածն ուղարկվեց տպարան, շարվեց, սրբագրվեց, և «Արևելքի» 15-րդ համարը, որտեղ զետեղված էր այն, շուտով պատրաստ էր տպագրության, քեև հիվանդությունը հանդեսի խմբագրին գամել էր անկողնում: Բայց հանդեսի հերթական ազդանմուշը ստանալու փոխարեն նրան առաքվեց «օսմանյան դեսպանատունեն դրոշմը կրող» լակոնիկ մի նամակ: Չպահպանված այդ նամակը, նրանից արված քաղվածքներից դատելով, ազդարարում էր Ստ. Ռսկանյանին. «...Ձեր լրագրո բերանը փոխեք... Որևիցե կրոնական բանակովություն չըներ... Միմիայն բարեկամական ազդարարություն մ' է այս և բանի տեղ չդնելու ալ խոսք չէ... Թե որ հորդորս կամ առաջարկությունս ի գործ դնել... ըլլաք, հիրավի գոհ պիտի ըլլամ և արդեն իսկ շնորհակալ ալ կըլլամ»¹: Նամակի տակ դրոշմված էր՝ «Ողջ լեր ի սեր Հակոբիս Կոճիկյան»:

Հակոբ Կոճիկյանն անհայտ անձնավորություն չէր Ստ. Ռսկանյանի համար²: Նա Փարիզում էր 1835-ից և թեև ի

¹ Վերականգնել ենք ըստ Ստ. Ռսկանյանի կատարած քաղվածքների (տե՛ս «Արևմուտք», 1 ապրիլի 1859, N 7, էջ 49-54):

² Հակոբ Կոճիկյանը (1806 – 1865) սկսել է գործել իբրև Ռեշիդ փաշայի ուղեկցող՝ իբրև նրա որդիների դաստիարակ և ցվերջ վայելել է նրա վստահությունը: Որպես քարգման և խորհրդատու երկար տարիներ ղյվանագիտական աշխատանք է կատարել Փարիզում, Լոնդոնում, Վիեննայում և Կ.Պոլսում: Մերձավոր կապեր ունենալով Ռեշիդ և Ալի փաշաների հետ, որոշակի դեր է կատարել այն բոլոր միջոցառումների մշակման և իրագործման ընթացքում, որոնք ձեռնարկում էին բուրքական կառավարության այդ բարձրաստիճան պաշտոնյաները երկրի արտաքին և մանավանդ ներքին կյանքում: Հիմնականում դրանք առաջադիմական նշանակություն ունեցան Օսմանյան կայսրության համար: Փարիզում գտնված տարիներին հետևում էր բարձրագույն ուսումնական դասընթացներին և հակում ուներ դեպի անտեսագիտությունը: 1844թ. «Արշալույս արարատյանում» (տե՛ս 12 օգոստոսի, N 203 և հետո) սկսել է հրատարակել «Համառոտ պատմություն շերամի» ուսումնասիրությունը, որը հետագայում Գր.Աղաթոնի և Գ.Աբիմարձյանի

պաշտոնն գործում էր դիվանագիտական վերնախալի շրջանում, կտրված չէր հայկական կյանքից ու փարիզաբնակ ազգակիցներից. միջամտում էր ուզած հարցին և չափազանց ճարպիկ էր: Նրա անմիջական միջամտությամբ էլ, ինչպես նշում է Ստ. Ոսկանյանը, «Արևելքի» 15-րդ համարի տպագրությունը դադարեցվեց, որով և խափանվեց նրա հրատարակությունը: Ի՞նչ է կատարվել:

«Արևելքը», որ հրատարակվում էր Ֆրանսիայում իշխող օրենքների համաձայն, ենթարկվել էր հայ ամիրաների և կղերի գործակիցների անլուր կամայականությանը: Գաբրիել վարդապետ Այվազովսկին «Արևելքը» հրատարակող տպարանում, որտեղ տպագրվում էր նաև իր «Մասյաց աղավնի» հանդեսը, տեսնելով Տատյան Պողոս ամիրայի և հենց իր դեմ ուղղված Ստ. Ոսկանյանի հոդվածը, որոշում է նենգաբարո խափանել նրա տպագրությունը և օգնության է դիմում Կոճիկյանին, որը և իսկույն գործի է անցնում: Նա, ինչպես տեսանք, հորդորով դիմեց Ոսկանյանին, բայց նույն պահին, միևնույն սուրհանդակի միջոցով էլ կրոնի շուրջ վեճեր տպագրելուց զուշացնող (խոսքն, անշուշտ, «Արևելքի» մասին էր) նամակ հղեց նաև տպարանատիրոջը՝ Ճանիկ Արամյանին¹: Ավելին, Այվազովսկին չբավարարվելով դրանով, գործողության մեջ է դնում իր հին ու նոր գործակից Ամբրոսիոս Գալֆայանին, որը Կ.Պոլիս

աշխատակցությամբ լույս ընծայեց առանձին գրքով («Մետաքսարանություն», Կ.Պոլիս, 1847):

Ինքնին հետաքրքրական այդ գործը հրատարակվել է նաև ֆրանսերեն, տաճկերեն և հունարեն: Ունի նաև այլ գործեր:

Կոճիկյանի կենսագիրները (Վ.Ջարդաբյան, Մ.Օրմանյան, Ա.Ալպոյանյան) նրան յուր ղեր են վերագրում ազգային գործերում, մասնավորապես ազգային հաստատություններ՝ հոգևոր և աշխարհիկ ժողովների հաստատման և ազգային սահմանադրության երևան գալու գործում: Երբ Թուրքիայում կատարվեց ակադեմիա հիմնելու առաջին փորձը, Կոճիկյանը միակ հայն էր, որ ընտրվեց նրա կազմում: Իբրև պետական պաշտոնյա 1847-ին ընտրվել է Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի գերագուն ժողովի անդամ՝ ատանճնելով ատենապետության՝ ղիվանը վարելու պարտականությունը՝ լուրֆետի տիտղոսով. որ սահմանվել էր հատուկ նրա համար:

¹ Այդ նամակ-ազդարարությունը հետո ձեռքից ձեռք էր շրջում, նույնիսկ հյուստարակվել է, ինչպես նշում է Ստ. Ոսկանյանը:

«հասնելեն, կերթա *Արևելքին* գործակալը կգտնե, ասոր մեջ տպվելիք ՉԵՌ-ԱԳ-ԻԲ հողվածի մը էութունը կհայտնե, կքարոզե, կհամոզե և շատ չերթար իրեն կմխտե զանիկա: Երկուքն ալ խոսք կուտան, խոսք կառնուն, որ եթե *Արևելքը* ուրիշ տեղ մը տպվի և իր մեղավոր հողվածով Պոլիս դրկվի, ծրարները սուրհանգակեն առնվին և այն թիվը պահեն, չհրատարակեն: Պարոն Ամբրոսիոսը բանը այսպես կապելեն ետքը Բարիզ կգրե պ. Գ.Այվազովսքիին՝ «չառնել պատասխանի հողվածո Ռսկանյանի» և «բուլոբովին անհոգ ըլլա այս կողմեն»¹: Այվազովսկին միաժամանակ այցելում է Ռսկանյանին, երեսպաշտությամբ փորձում սիրաշահել, անշուշտ, ժամանակ շահելու և իր մտադրություններն իրագործելու համար: «Գ.Այվազովսքի պարոնը... քսան օրեն ետև մեր սենյակը գալով չամչցավ զմեզ բերնով ևս խաբելու աշխատիլ երկու երիտասարդի առջև... Պ.Գ.Այվազովսքիին նպատակը կրկին էր. ժամանակ շահիլ իր ուրացությունը պատրաստելու համար և մեր գերանը խփել, որ իր դարանները տպագրությամբ չհայտնվին»²: Հենց մնան խարդավանքներն ու բանասարկությունները նկատի ունեւ Մ.Նալբանդյանը, երբ «Հյուսիսափայլում» հետագայում գրում էր «Արևելքի» մասին՝ «Խափանված մի հայ ճիզվիթի դարանագործությամբ, ամոթ և խայտառակություն այդ սևահոգի անպիտանին»³: Այդ «հայ ճիզվիտը» Գ.Այվազովսկին էր, որի մասին Ռսկանյանը «Արևմուտքի» 1859թ. օգոստոսյան համարում գրել էր, որ «պարոն Գ.Այվազովսքի անուն կրոնավորը, մեր առջի հրատարակությունը կործանելեն և մեզ վնաս տալեն ետև, սկսեր էր գրքի մը մեջ, զմեզ թշնամանել և վատհամբավել: Պատասխան տվինք հրապարակավ, մեր պատիվը պաշտպանեցինք և իր ինչ աստիճանի մարդ ըլլալը զևս մը հայտնեցինք: Երկդիմի կրոնավորը մեր փաստերուն առջև լռեց և դեռ կլռե»⁴:

¹ «Արևմուտք», 1 սեպտեմբերի 1859, N 17, էջ 134:

² Նույն տեղում, 15 մարտի 1859, N 6, էջ 44, 1 սեպտեմբերի 1859, N 17, էջ 134:

³ *Մ.Նալբանդյան*, ԵԼԺ, հ. 1, էջ 438:

⁴ Ռսկանյանը նկատի ունի Գ.Այվազովսկու գրքույկը և իր պատասխան հողվածը՝ համանուն վերնագրով՝ լռես «Արևմուտք», 15 մարտի 1859, N 6, էջ 43-47 (նաև՝ էջ 30):

«Արևելքի» ու նրա խմբագրի դեմ լարված դավերը դրանով չավարտվեցին: Գործի դրվեց նաև խաբեության գործիքը, նույնիսկ օգտագործեցին Ոսկանյանի մտերիմներին, նրանց թվում և հանդեսին աշխատակցող և խմբագրին մոտ կանգնած Հովհ. Թյույսյուզյանին, որի միջոցով հաղորդվեց Ոսկանյանի հողվածքը չտպագրելու որոշումը: Կամայականության գոհ դարձած այդ հողվածքը այդպես էլ չիրատարակվեց, բայց այն հարցը, որ քննվում էր նրանում, ի դեպ, շարունակում էր հուզել հայ հասարակությանը, նույնիսկ ավելի քան մեկ տասնամյակ հետո արժարժվում էր ֆրանսիական մամուլի էջերում: Ֆրանսիական թերթերից մեկը 1867թ. հրատարակեց մի հողված նվիրված Տատյան ամիրային ու նրա տետրակին: Այդ հողվածն արտատպվել է «Արշալույս արարատյանի» նույն տարվա օգոստոսյան համարում:

Այդպես, հայ մամուլի ազատ և առաջադեմ օրգանի ու նրա խմբագրի դեմ էին ծառայել հետադեմ կղերամիրայական գործիչները: Բայց Ոսկանյանը վարդապետական հալածանքների, ամիրաների և վաշանների հովանավորչալների առջև տեղի տվող մարդ չէր: Նա պայքարի նետվեց, սակայն, ապարդյուն, տպարանատեր Ճանիկ Արամյանը¹ հյու-հնազանդությամբ տեղի էր տվել, հակառակ իր սկզբունքի տպագրել ամեն ինչ, որ չի հակասում Ֆրանսիայի օրենքներին: Անհավանական չէ, որ նրա վրա Կոճիկյանից բացի, թերևս հենց սրա միջոցով ճնշում է գործադրել թուրքական դեսպանատունը գուցե և հիշատակված Մեհմեդ պեյը: Տպարանատիրոջ դեմ Ոսկանյանը ոչինչ անել չէր կարող: «Արևելքը» մեկընդմիջտ լռեց. «Օտարներեն շնորհված ազատությունը հայու ձեռքով կսպանվի», «Արիաբար հաղթվիլ ավելի պատիվ կընե, քան թե վատորեն հաղթել, – ավելի ուշ գրել

¹ Ճանիկ Արամյանը (1820 – 1879) 1846-ից Փարիզում էր, որտեղ 1855-ին (և ոչ թե 1859-ին, ինչպես նշվում է «Հայկական սովետական հանրագիտարանի» 1-ին հատորի 686-րդ էջում) հիմնել է տպարան, որն այդտեղ գործել է մինչև 1862թ.: Ստեղծել է «Արամյան» տպատառերը, որոնք մինչև հիմա էլ գործածության մեջ են, հեղինակ է մի շարք գործերի, տպագրել է Մ.Նալբանդյանի երկու աշխատությունը: Իբրև ազատ տպարանատեր արժանացել է Մ.Նալբանդյանի ջերմ վերաբերմունքին:

է Ռսկանյանը («Արևմուտք», 1859, էջ 51, 1):

Հետագայում Ռսկանյանը երեք անգամ փորձեց վերսկսել հանդեսի հրատարակությունը. հիմնադիրներն էին փափագում, նոր աջակցողներն էին համոզում, նույնիսկ գտնվեցին երեք տարվա տպագրական ծախսերը հոգացողներ՝ Չմյուռնիայից: Չորս լուսավոր գործիչներ՝ Յ.Նուսուֆյանը, Ա.Ապրոյանը, Գր. Կոստանդյանը և մեկ ուրիշը, որի ազգանվան կամ անվան առաջին տառն է միայն նշվում՝ «Ա», խոստացան իրենց վրա վերցնել «Արևելքի» եռամյա տպագրության ծախսը»: Բայց, ինչպես նախորդ անգամներին, այս անգամ նույնպես Ռսկանյանի առջև դրվեցին այնպիսի պայմաններ, որոնք նա չէր կարող ընդունել: Վերջին անգամ՝ 1857-ի մայիսին, երբ արդեն որոշակի համաձայնություն էր կայացված, Ռսկանյանը նույնիսկ տեղի տալով, չընդդիմացավ վերահրատարակության պատրաստվող «Արևելքի» առաջաբանից «քանի մը խոսք հանելու, որպեսզի տեսակ մը հայեր թյուր մեկնություն մը չտան անոնց», դարձյալ խոչընդոտներ հարուցվեցին: Տպարանատեր Կ.Շահնազարյանը փորձեց Ռսկանյանին «գործի դնել» և հասկացնել, որ խմբագրի նամակը Հ.Կոճիկյանի դեմ հաճելի չէ: Այս դեպքում ևս Ռսկանյանն անգոր էր: Նրան մնում էր ետ վերցնել տպագրության ներկայացրած նամակը. «Չկրցանք միտքի իրավունքը ազատել, գոնե չթողուցինք, որ առաթուր կոխվի այն սև կրոնավորներե», – ցավով նկատել է նա այդ առթիվ՝ արդեն 1859-ին¹:

Հենց Փարիզում, որտեղ մամուլի ազատության պահանջը օրվա լուրնգն էր, հայ մամուլի ազատ օրգանն այդպես խեղդվեց հայ հետադիմության ճիրաններում: Հետագայում, երբ «Արշալույս արարատյանում» հաղորդում երևաց, թե «Արևելքը» նորից պիտի հրատարակվի, Ռսկանյանը հանդես է եկել հատուկ ազդարարությամբ, որտեղ նա գրել է. «Արևելքը» նորեն չպիտի հրա-

¹ «Արևմուտք», 1 ապրիլի 1859, N 7, էջ 49: Իր նոր հանդեսի այս համարում Ռսկանյանը գետեղել է «Արևելքին վերջը» խորագրով հողվածը՝ կցելով «Առ պարոն Հակոբ Կոճիկյան» խորագրով նամակ-պամֆլետը, որ նկատի ուներ տպագրել վերահրատարակվելիք «Արևելքի» առաջին համարում: Դա երգիծանքով, ամենայն կրքոտությամբ ու գրչի խոյանքով գրված պամֆլետ է, «Արևմուտքի» լավագույն նյութերից մեկը:

տարակվի անոր շարագիրը չուզեց, չուզեր և չպիտի ուզե իրեն հանձնված դրոշը քանի մը վարդապետներու առջև ծալել: *Արշալույսին* հարզի կամքին հնազանդիլ: Ինչ որ մարդկորեն կարելի էր ըրավ, որ միտքի ազատությունը հաղթե, բայց իզուր...: Հայ մը չգտավ իրեն ձեռնառու, ընդհակառակն շատ ազգայինը ամեն դարան ի գործ դրին, որ իր հրատարակությունը խափանվի և ինքը անհարիր կործանի: Այս անգամ ևս բռնությունը իրավունքին հաղթեց և այնպիսի կերպով մը, որ մամուլի տարեգիրներու մեջ իր նմանը չունի...: *Արևելքին* միմիայն արժեքն էր իր ազատությունը, անով և անով միայն կրնար պարծիլ ուրիշ օրագիրներու քով: Այս ազատությունը իրեն չթողուց կրոնամուսն ոգին... .. .:

Ինչո՞ւ, օր մը կըսենք: Ինչպե՞ս, օր մը կնկարագրենք, ամեն բան ժամանակ ունի, առայժմ մեր ձեռքերը կապված են¹:

«Արևելքը» գոհ դարձավ հետապնդումների, հալածանքի ու դավերի, բայց դրանք անգոր եղան ընկճելու նրա խմբագրին: Նա մնաց կանգուն և շատ չանցած նորից ասպարեզ ելավ: Ոսկանյանի գործունեության այդ նոր էջին անցնելուց առաջ անդրադառնանք նրա այն նյութերին, որոնք նույնպես հրատարակվել են «Արևելքում»: Դրանցից հատուկ նշանակություն ունեն «Ազգային» ընդհանուր խորագրի տակ հանդեսի տարբեր համարներում զետեղված հոդվածները: Նվիրված լինելով առավել հանգուցային հարցերին, այդ նյութերը երևան են հանում Ոսկանյանի աշխարհայեցությունը որպես ազգային գործչի, որ հայտնի չափով արտացոլում է ժամանակի ու ժամանակակիցների գաղափարները սեփական դիտակետից:

Հանդեսի յոթերորդ համարի առաջաբան-հոդվածում Ոսկանյանը շարադրել է իր մտորումները հայ ժողովրդի ապագայի շուրջ մոտակա ժամանակաշրջանում, ելնելով այն իրավիճակից, որ կստեղծվի տեղի ունեցող Դրիմի պատերազմից հետո: Հարցը լուսաբանելու նրա ելակետն անգլիական քաղաքագետի խոսքերն են այն մասին, որ պատերազմը չթողուր ազգ մը այն վիճակի մեջ, ուր կգտնվի պատերազմն առաջ»՝ «թե քայի և թե հողի» իմաստով: Պիտի փոխվի նաև «Արևելքը» և

¹ «Արևմուտք», 15 հունվար 1859, N 2, էջ 16:

«իր հին ու պատառուն կեղևը պիտի թոթվե» բնական օրենքով: Իրավունք չունենալով հարցն ավելի մանրամասն քննել, որովհետև «Արևելքը» քաղաքական հարցերով զբաղվելու արտոնություն չուներ, Ռսկանյանը ծանրանում է հայ ժողովրդի ապագայի վրա: Նրա մեկնակետն այն էր, որ «մեր ազգին վիճակն ալ պիտի փոխվի, հարկավ պիտի փոխվի, ասոր վրա վայրկյան մը տարակուսելը հիմարություն է», հետևապես հարկավոր է «ապագային վրա խորհիլ և զան պատրաստել իսկ»:

Խնդրի նման ըմբռնումը և գործելու ապագան պատրաստելու մղումները կարևոր էին հասարակական միտքն արթնացնելու և առաջ մղելու համար: Եվ նրա կոչը, թե «սպասելու չէ, որ բանը բանն անցնի... կամ ուրիշները զան և մեզ օգնություն ընեն», խնդիր ուներ ընդհանուր շարժման ու գործունեության նպատակամղել ազգի բոլոր ուժերը: Նրա բուն նպատակն էր, որ օտար ազգերի առջև, Եվրոպայում գաղափար տրվի մեր ժողովրդի իրավական վիճակի մասին. «Եվ եթե տակավին լռենք և մեր հիմօրյա վերքերը պահենք, եթե տակավին ահաբեկ մեր դառն արտասուքը ընպենք... եթե մեր օրերու մեջ ալ անհոգ նիրհենք, այս հանցանքը աններելի կըլլա»: Ինքը՝ Ռսկանյանը «գրեթե ամեն օր» էր մտահոգված դրանով, բայց «մասնավորի ուժը» անկար էր, «բոլոր ազգը» այնտեղ է մտահոգվի իր վիճակով: Նա բննադատում է ֆրանսիական հանդեսում տեղ գտած հիմնովին «այլանդակ» նյութերը, «սուտումուտ դրույթները», նրա հարձակումներից պաշտպանում է նույնիսկ հայոց պատրիարքին, որին դիտում էր իբրև «չորս միլիոն ազգի» գլուխ կանգնած անձնավորություն (էջ 196): Շուտով նա հատուկ հոդվածով հիշեցնում է հայոց Տրդատ թագավորի մասին, մանրամասն ու հիացմունքով ներկայացնում Լուվրում գտնվող նրա կիսանդրին, շրջահայաց քննում Խորենացու նրան նվիրված էջերը, որտեղ «Խորենյան պատմագիրը» «բանի մը երձսի մեջ թե՛ գովեստի և թե՛ պարսավի սահմանն դուրս կելեն», թերևս ոչ առանց «հիմ մը ըլլալու», ապա չբավարարվելով ասվածով, կիսանդրուն է ձոնում թախմայի երկու քառյակ (էջ 225-228), իսկ հետագայում ձոնում է նորը՝ նոր բովանդակությամբ նախատիճքի հետքն անգամ նոր քառյակում չկա, իշխում են հայրենիքի կարոտն ու բաղձանքը, հայոց ոգու արթնացման փափագը՝

Սև հողին ներքև երեկ ևս նկուն,
Այսօր Լուվրի մեջ եմ փառքով կանգուն:
Շնորհ հյուրասեր Ֆրանսայի ունեմ,
Բայց սիրտ հայերու է բնիկ տուն իմ¹:

Ազգային ոգու արթնացման հետևողական իր հետապնդումներում Ռսկանյանը գրեթե մշտապես խվում էր միևնույն նպատակակետին՝ հայ ժողովրդին ճանաչել տալ թե՛ իր հայ ընթերցողներին և թե՛ Եվրոպային: Նրա հանդեսը «բերկրալի սիրտով» է հայտնում, որ որևէ հայազգի Եվրոպայում կրթություն է ստացել (էջ 92), նաև ցավում է, երբ փարիզյան բարձրագույն դպրոցներում մրցանակի արժանացողների մեջ կամ իգական սեռի սովորողների թվում հայազգիներ չկան (էջ 124): Նա համոզմունքով զանում էր, որ կրթություն ստացող ամեն մեկը «մեր ազգին հառաջադիմություն պիտի աշխատի» (էջ 93):

Մի առիթով նա հիշեցնում է հին հռոմեացիների դեմ սպառնալից խոսող հայազգիին և ապա ընդգծում, «թե հայք որչափ հզոր և անահ են եղեր այն ատեն»՝ խոսքն ավարտելով կախման կետերով (էջ 113):

Ֆրանսիական «Միերլ» օրագիրը «Ծանր խոսքեր» է ասել հայերի մասին. Ռսկանյանը կասկած է հայտնում թե նա հանրապետական օրգան է, «ազատասեր կկոչվի» և նրա «տգիտաբար» ասածը հերքելով, նկատում է. «օր մը պիտի գա արդյո՞ք, որ մեր ազգը իր պատիվը ճանչնա և պաշտպանե՞»՝ դարձյալ կախման կետերի օգնությանը դիմելով (էջ 119):

Նա փափագում է, որ Ֆրանկլինի «սիրուն» գրվածքները տարածվին հայերի մեջ, որովհետև նրա հեղինակը «մարդկության փառքն է և անոր ազատության և բարօրության համար աշխատող նահատակներեն ամենե երևելին»:

Ռսկանյանն ընդվզում է նրանց դեմ, ովքեր «կապիկի պես» ընդօրինակում են օտար լեզուների բառերը, որով «հայ լեզուն կայլակերպեն» (էջ 282):

¹ «Արևմուտք», 1 մայիսի 1864, N 7, էջ 55: Տրդատի կիսանդրիի մասին, սխալմամբ համարելով Տիգրանիինը, խոսել է նաև Նալբանդյանը՝ հիանալով կերտողի վարպետությանը (ԵՄԺ, հ. 1, էջ 422 և 537):

Տեղեկացնելով ուս գորավար Բեհրուդյանցի մասին, նա շեշտում է «պայազատ քաջին հայ ըլլալը» և փափագում, որ նա չմոռանա «Թշվառ Հայաստանի պատիվը և շահը», ափսոսանքով հայտնում է, որ Ռուսաստանում բնակվող հայերից «ամենևին տեղեկություն մը չունինք» (էջ 286):

Հայոց Ապոխսար քազավորի դրամի հայտնաբերման մասին հաղորդելով, Ռսկանյանը հրավիրում է հայ հնագետներին բննել հայտնված կարծիքը «և մեր պատմության մեջ տեղ մը տալ» նրան (էջ 412):

Որոշակի միտումով «Արևմուտքում» տեղ են գտնում Ֆրանսիայում սուրճի սովորությունը տարածած Մահիպյանի մասին «ազգային վեպը», տորոնի մշակույթը ևս հայի կողմից Ֆրանսիայում տարածվելու և նրա հուշարձանի մասին հիշատակությունները (էջ 425-426), հաղորդումն այն մասին, որ Արևելքում հրատարակվող պարբերականների ցանկում «հայերեն օրագրաց թիվը ավելի է քան թե մեկալ ազգաց»: Միաժամանակ հանդեսը ցավ, «անպատմելի ցավ» է հայտնում, որ որոշ օրագրեր «տաճիկի լեզուն կբանեցնեն» և հրամայական պահանջ է սեպում, որ «հայ մը նախ իր ազգության առաջին նշանը ունենա, որ է իր ազգին սեպիական լեզուն խոսիլ» (էջ 430), իսկ տաճիկի լեզուն գործածելը դիտում է իբրև «արտառոց, ազգատյաց ձեռնարկություն»:

Եվ վերջապես, «Արևելքի» վերջին համարում Ռսկանյանը «հրապարակավ աղաչանք» է հղում հայրենասերներին, որ նրանք «Հայաստանի վրա ճիշտ տեղեկություններ ժողովելու սկսին»՝ թե հանդեսի և թե «օտարազգի հմուտներու հաղորդելու նպատակով» (էջ 438):

Այս բոլոր մտորումները, որ ցրված են հանդեսի տարբեր համարներում ու ծնվել են ամենազանազան առիթներով, մշտապես թևածում էին մի առանցքի շուրջ, դա Հայաստանն է: «Արևելքի» հատակագիծը՝ «Հայաստանի լուսավորությունը», նրա գրեթե բոլոր նյութերի մեխն էր: «Երանի՛ թե մեր ազգայինները..., – փափագում էր նրա առաջին շարագիրը, /0 քիչ մը Հայաստանը հիշեին և անոր վեհ ավերակներու մեջ գաղթական ընտանիքներու փռչին և ոսկրտին բնտռեին...» (էջ 332):

«Արևելքի» հրատարակությանը զուգահեռիպել է Ղրիմի պատերազմի ժամանակաշրջանին, ավելի ճիշտ՝ նրա վերջին փուլին: Նրա քաղաքական պրոպագանդաներին ու հետևանքներին հանդեսն անդրադառնալու իրավասություն չի ունեցել, բայց, քանի որ պատերազմը շոշափում էր նաև հայ ժողովրդին, տեղի ուներ նրա հայրենիքում ևս, Ոսկանյանը մի քանի առիթներով քննել է հարակից որոշ հարցեր՝ ի հայտ բերելով իր դիրքորոշումը: Ուղղակի ասած նրա դիրքը, թեև համահնչուն է որոշակի շրջաններում իշխող դիրքորոշման հետ, նպաստավոր չէ նախ իր համար՝ իբրև մտածող, իբրև իր ժողովրդի ճակատագրով մտահոգված հրապարակախոսի: Ավելին, նա երբեմն նույնիսկ հասնում էր ծայրահեղության, ինչպես դա նկատելի է Սևաստոպոլը գրավվելու ոռթիվ ֆրանսիական մի թերթում Կ.Պոլսից ստացված նամակի տպագրության նրա արձագանքից, Ոսկանյանը փորձում է հերքել «պաշտոնական օրագրին թղթագիրի» հաղորդածն այն մասին, թե հույների հետ հայերը համապիտո են «և անոնց պես կտրտմին եղեր, որ Սեպասթրոլ հիմնահատակ եղավ»: Չափից ավելին վերցնելով իր վրա, Ոսկանյանն իրեն թույլ է տալիս պնդելու, թե Ֆրանսիայի և Անգլիայի մղած պատերազմը վարվում է «ազատության և լուսավորության» նշանաբանով, ուստի և, գրում է նա, «չենք ուզեր երևակայել անգամ, որ մեր հայրենակիցները ազատությունը կատեն» (էջ 213): Երկու կարծիք լինել չի կարող: Ոսկանյանը մոլորվում է, կարծելով, թե Ռուսաստանի դեմ ի պաշտպանություն Թուրքիայի պատերազմող Ֆրանսիան ու Անգլիան ինչ-որ ազատություն կբերեին հայերին: Դա Ոսկանյանի քաղաքական կողմնորոշման լուրջ սխալն էր:

Ոսկանյանը, իհարկե, բավարար ուշադրությամբ հետևում էր Ղրիմի պատերազմին, լուրեր տպագրելով՝ արձագանքում է նրա գլխավոր իրադարձություններին, բայց իր դիտակետից: Կարսի անկման առթիվ, քանի որ նահանգում կար 130 հազար հայ, նա համեմատաբար հանգամանորեն անդրադառնում է պատերազմին. Եվրոպան դեռևս անհոգ է Հայաստանի նկատմամբ. Ռուսաստանը ձգտում է տիրել նրան՝ բնավ ոչ «ազատության և մարդկության սիրո համար». նա ատում է

ազատությունը, «մարդկությանն ալ շատ չի սիրեր», այլ «քաղաքական խորին նկատառումով մը կաշխատի Հայաստանի և Կովկասյան նահանգներու ժողովուրդը իրեն օգնական, ... գործի մը բնել. Խաբեքա կերպով և պատիվներով թե՛ կյանքի և թե՛ ազատության պաշտպան և առաքյալ կքարոզե զինքը, թեպետ և, Եվրոպայի մեջ, ազատությունը չընդունե և անոր անդրանիկ քույրը, միտքի թույլտվությունը, հալածե անխնս» (էջ 355-356):
Դրանից առաջ Ռսկանյանը սուր ծաղրի էր ենթարկել օտար մամուլի Ռուսաստան մուտք գործելու դեմ հարուցված արգելքները, հենց սահմանի վրա կատարվող գրաքննությունը, որի մեջ թերացողներին սպառնում էր Սիբիր արտարվելը (էջ 217-218):

Այսպիսով, Ռսկանյանն ըմբռնում է ցարական Ռուսաստանի, Եվրոպայի ժանդարմի, ժողովուրդների բանտ Ռուսաստանի «երկդիմի պատրվակները», որոնց հետևանքով փոքր ազգերը զոհ են գնում «խաբեքա և զաղտնի քաղաքականության»: Միաժամանակ նա անտեղյակ չէ, որ ցարական Ռուսաստանի արտաքին քաղաքականության նպատակը զավթողական է, լավ գիտե, որ «զգույշ և հեռատես» Անգլիան ձգտում է «Ռուսիայի դիտավորությունը պարապի հանել»: Երկու կարծիք լինել չի կարող. հակացարական իր կողմնորոշման համար Ռսկանյանը բավարար հիմք ուներ և այդ բանտում նա չէր սխալվում: Այս առումով անհիմն է, թե այն կարծիքը, ըստ որի «նա դրանով Ռուսաստանի հանդեպ պաշտպանում էր Թուրքիայի ռազմական դիրքերը»¹, թե այն վարկածը, որի հեղինակը հակադրվելով, իրոք, ծայրահեղ այս եզրակացությանը, զանում է, թե «Ռսկանը այս հարցում ևս համընթաց էր գնում Եվրոպայի ամենահեղափոխական ուժերի հետ, արձագանքում էր Մարքսին ու Էնգելսին: Դրանով իսկ ամբողջ գլխով վեր էր բարձրանում հայ մյուս հրապարակախոսներից, որոնք պաշտպանողական դիրք էին բռնել»²:

«Արևելքի» էջերում Ռսկանյանի դրսևորած վերոհիշյալ դիրքորոշումը, պիտի ասել, ուներ մի փոքր նախապատմություն: Հայտնի է, որ Ֆրանսիան որոշիչ դեր էր կատարում հակա-

¹ Ա Հովհաննիսյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 308:

² Ա Մակարյան, նշվ. աշխ., էջ 161:

ուսական այն դաշնագրության մեջ, որ իրական կերպարանք ստացավ և կոնկրետ դրսևորում գտավ 1850-ական թվականների կեսերին: Հենց այդ ժամանակ էլ Ռսկանյանը շփում է ունեցել ֆրանսիական դիվանագիտական շրջանների հետ և, կարելի է ենթադրել, ինչ-որ տեղ նաև կրել է նրանց ազդեցությունը: Դա եղել է 1854թ. վերջերին: Արձանագրելով Կարսի «կիսամեռ անկումը», Ռսկանյանը 1855թ. դեկտեմբերին գրել է. «Այս մեզի զարմանք մը չէ պատճառներ, որովհետև անցյալ տարի Ֆրանսիայի արթուն և մարդասեր կառավարության խնամքը, անուղղակի կերպով, այս կողմերու վրա կիրավիրեին, մոտակա վտանգը, որ դաշնագիր տիրությունները կապառնար, երևան հանելով» (1855, էջ 353): Այս տողերին Ռսկանյանը կցել է խոսուհի մի ծանոթագրություն, որ վրիպել է ուսումնասիրողների ուշադրությունից. «Պ. տը Շալեի և իր ատենադպրին ձեռքով հայ ազգին վրա հիշատակագիր մը տվինք Ն. վսեմության արտաքին գործերու պաշտոնյային» (հավանաբար նախարարին):

Մի քանի տարի անց՝ 1859-ին, այս առթիվ, պատասխանելով իր հակառակորդին ու մեջբերելով նրա արտահայտությունը նա գրել է. «Սակայն «հայ անվանը նախատինք և ամոթ բերող» երիտասարդը այն ուսումնականն է, որու Էրզրումի հյուպատոսը կղիմեր քանի մը տարի առաջ և կաղերսեր, որ զիջանի իրեն հետ աշխատիլ և Հայաստանի վրա տեղեկություն տալ Բրիմի պատերազմին ատեն» (1859, էջ 134): «Իր բոլոր գործերը թողած», Ռսկանյանը, հանուն ազգի նկատմամբ ունեցած սիրտ, ինչպես ինքն է վկայում, աշխատել է հյուպատոսի և նրա քարտուղարի հետ՝ պատրաստելով պահանջվող տեղեկագիրը, ապա և «Ֆրանսիայի երևելի պաշտոնավարն մը շնորհակալություն ընդունեցավ հիշատակագրի մը պատրաստության համար»:

Ինչպես նկատում է Լեոն¹, Ռսկանյանի մասնակցությամբ կազմված տեղեկագրի և նրա ներկայացրած հիշատակագրի մասին, չունենալով այլ տեղեկություն, դժվար է դատել²: Անշուշտ

¹ Տե՛ս «Մուրճ», 1901, N 12, էջ 147:

² Ամենայն հավանականությամբ, այդ վավերագրերը պահպանվում են Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության արխիվներում: Մեր փորձերը՝ ձեռք բերել դրանց պատճենները, ցավոք, ապարդյուն են անցել:

դրանց հիմնական ոգին հայ ժողովրդի ազատագրության հոգսն էր, որ առհասարակ պաշարել էր Ռսկանյանին: Կարելի է նաև հավանական համարել Լեոյի ենթադրությունը, թե Ռսկանյանը հակադիր կողմնորոշում ուներ պահպանողականության այն դիրքի նկատմամբ, ըստ որի արևմտահայության դրությունը բավարար է: Մյուս կողմից, նկատի ունենալով Ռսկանյանի դիրքորոշումը դեպի Յարական Ռ-ուսաստանը, հավանաբար նա պրոֆրանսիական կողմնորոշում է հանդես բերել այդ վավերագրերում:

Պատմության հետագա ընթացքը ցույց տվեց նման դիրքորոշման անհեռանկար լինելը: Բայց Ռսկանյանը 1850-ականի կեսերին, Ղրիմի պատերազմի ժամանակաշրջանում, նույնիսկ անկախ իրենից, այլ դիրք գրավել չէր կարող: Եվ ոչ միայն նա, այլև առաջադիմական շատ գործիչներ դեռևս չէին ըմբռնում այն դերը, որ վերապահված էր Ռ-ուսաստանին՝ բուրքական լծի տակ գտնվող ժողովուրդների պատմական ճակատագրում: Դրանով հանդերձ, պետք է նկատել, որ Ռսկանյանի դիրքորոշումը բոլորովին այլ բնույթ ու այլ շարժառիթ ուներ և որևէ առնչություն «Ֆրանսիայի և Անգլիայի ձայնատարի դերի» հետ չուներ¹, առավել ևս հեռու էր մարքսիստական տեսանկյունից Ռ-ուսաստանի քաղաքականությունը դատապարտելու, նրա պարտությունը ցանկալի համարելու դրույթից: Ռսկանյանը պարզապես չէր տեսնում երկու Ռ-ուսաստան և իր մտորումներում աչքի առաջ ուներ միմիայն այն Ռ-ուսաստանը, որտեղ ցարի գլխավորությամբ խեղդվում էր ազատ խոսքի ամեն մի դրսևորում, որտեղ մոլեգնում էր մեծապետական շովինիզմը, որի պաշտպանությունն էին հայցում սեփական երկրում բռնկող ազատագրական պայքարից սարսափած եվրոպական երկրները, որտեղ իշխում էր Նիկոլայ 1-ինը, որը ծծում էր ռուս ժողովրդի և հպատակ մյուս ժողովուրդների արյունը, որի կրմկի տակ շարունակում էր տառապել հայ ժողովրդի արևելյան հատվածը, որը «ի վաղուստ անտի անգութ և անողորմ բռնավորներու կամ իշխաններու ներքին ճնշյալ ճնշյալ կիսամահ կտառապեր» (էջ 356): Այդ Ռ-ուսաստանի դիմաստվերը դեռևս շատ և շատ հեռու էր իր

¹ Ա Հովհաննիսյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 308:

դարաշրջանի մտահայեցությամբ ձևավորված Ռսկանյանից, թեև երկու-երեք տարի անց մա նկատում է, որ արևմտահայության մեջ «մտական հարության բարի նշան» է երևան եկել, մատնացույց է անում, որ «Հյուսիսեն կվայլի լույսը»¹:

Ահա ինչու իր ժողովրդի գոյատևմամբ մտահոգված և նրա ազատագրության մասին երազող հրապարակախոսը իմանալով, թե 400 հայ ընտանիք գաղթել են Ռուսաստան, գտնում է, որ «հիմա Ռուսիա ապավինելը կույրկույրության անել խորխորատի մեջ նետվիլ է. եթե մահ չգտնվի հոն, գերությունը պատրաստ է» (էջ 219), կամ ստանալով ոչ ստույգ հաղորդում, թե Կարսի տակ «ազգակեր Ռուսիան» իբրև թե պարտություն է կրել, 1855թ. նոյեմբերի 1-ին գրում է. «Բռնասեր Ռուսիան Ասիայի մեջ ալ իր պատիժը առավ: Այրի Հայաստանին հողը սուտ և նենգավոր տերության պարտունք ստեսավ և անոր զինվորներու արյունը ծծելով հիմա իր վրեժը կառնու: Ազատություն խոստացավ Ռուսիայի հայերու և տվավ... շղթա: Եթե հայերուն քով վրեժառու վեհ ոգիի մը ստվերը կա, ասկե մեծ պարագա չէ գտնվեր երևան ելնելու և դաշնադիր տերություններու ետևէ զեն ի ձեռին Ռուսիային համար (իմա՝ հաշիվ՝ – Մ.Հ.) պահանջելու...» (էջ 280):

Ավելի է թանձրանում Ռսկանյանին պատած թախիծը, երբ մա վերհիշում է հայ ժողովրդի կրած հալածանքները, յուրաքանչյուր հայ ընտանիքին բաժին ընկած նահատակները, «Պարսկաստանի և ուրիշ մոտակա (իմա. Թուրքիայի) երկիրներու... ապուշ և անխոհեմ քաղաքականությունը», որով «ատելի և թշնամի եղան» «նահատակ ժողովուրդներու»: Մյուս ժողովուրդներից առավել նահատակվել են հայերը «և Ռուսիայի բարեկամության հավատալով և կարծելով, թե հիրավի այս տերության հովանին գիրենք իսպառ պիտի ազատե այն անտանելի տառապանքներե, որովք եոթ, ութ հարյուր տարիե ի վեր կտառապին երկրի երեսը, բերանալիր ուրախությունով անոր զալուստը բարեցին: Հայերը ոչ միայն հավատացին Ռուսիայի խոստումներու, այլև կողմնապահ եղան անոր, այլև արյուն թափեցին անոր համար, այլև հայրենիքնին թողին և միահամուռ, չըսենք կույրկույրյան, անոր գիրկը ինկան... Պատմությունը օր

¹ «Արևմուտք», 15 մայիսի 1859, N 10, էջ 79:

մը պիտի ըսէ, թէ ի՛նչ գտան հոն և թէ ի՛նչ բարիք տեսան ռուս հովանիէն... Պատմությունը իր վճիռը պիտի տա օր մը, հավաստի ենք» (էջ 356-357):

Եթէ փորձելու լինենք բացատրել Ոսկանյանի այդքան կտրուկ դիրքը Ռուսաստանի նկատմամբ, հայ ժողովրդի ռուսական հովանու ներքո ապավինելու հարցի շուրջ, ապա նախ և առաջ կարծում ենք, թէ պետք է նշել, որ այդ դիրքորոշումը կրում է ֆրանսիական պաշտոնական քաղաքականության որոշակի ազդեցությունն այդ նույն հարցերում: Ավելի քան տասը տարի սովորով ֆրանսիական գաղափարախոսությամբ, Ոսկանյանը չէր կարող չենթարկվել նաև նրա արտաքին քաղաքական կուրսի ազդեցությանը: Իսկ Ղրիմի պատերազմի տարիներին, ինչպես և դրանից առաջ ու հետո, Ֆրանսիան վարում էր հակառուսական բացահայտ քաղաքականություն՝ ի դեմս դրան տեսնելով իր վտանգավոր մրցակցին Արևելքում: Դա Ֆրանսիայի ավանդական քաղաքականությունն էր:

Մյուս կողմից, Ոսկանյանը եղել է հայ ժողովրդի համախմբման, նրա համայն ազգովի ազատագրության ի ներքուստ համոզված կողմնակիցը և ազգի գոյությանը սպառնացող վտանգ էր տեսնում հայ ժողովրդի աշխարհով մեկ ցրվելու մեջ: Ընդհակառակը, նրա հայացքը մշտապես ուղղված էր «թշվառ Հայաստանի» կողմը և հայության տեղաշարժի միակ կայանը համարում էր Արարատյան աշխարհը, որ պետք է վերակենդանանա ու դառնա համայն հայության օրրանը: Ցաք ու ցրիվ սփռվել աշխարհով մեկ, կամ լուծվել ռուսական անձայրածիր տարածքներում նրա կարծիքով նշանակում էր կանխապես մատնվել կորստի: Դրա համար էլ նա վճռաբար դեմ էր գաղթին, ուր էլ որ ուղղվեին քարավանները: Ավելի որոշակիորեն նա իր այդ վճռականությունը հանդես է բերել Ռուսաստանի հարցում. նախ, որովհետև մեծ էր Ռուսաստան գաղթողների թիվը, ապա, որովհետև, ինչպես նշվեց, նրան հայտնի էր միայն ցարի կրնկի տակ դարակեսին տնքացող Ռուսաստանը: Այդ դիրքորոշումը ցցուն դրսևորում գտավ Ղրիմի պատերազմի տարիներին: Եվ դա նույնպես առանց դրդապատճառի չէր:

Ղրիմի պատերազմի ժամանակամիջոցին առհասարակ

արևմտահայ որոշակի շրջաններում ցայտուն դրսևորում գտավ հակառուսական միտվածությունը: Դա իրական փաստ է՝ կարոտ հատուկ պատմագիտական ուսումնասիրության ու պարզաբանման:

Արևելյան հարցը, Մերձավոր Արևելքում տիրապետող ազդեցություն ձեռք բերելը, դարակեսին դարձել էին իմպերիալիստական բախումների կիզակետը: Հարցի լուծման փորձը անխուսափելիորեն հանգեցրեց բանակների բախմանը: Անգլիան, Ֆրանսիան և Թուրքիան մի կողմից, Ռուսաստանը մյուս կողմից գավթողական պատերազմի ելան՝ յուրաքանչյուրը, նույնիսկ դաշնակցող կողմերը, գատ-գատ ունենալով իրենց հակադիր շահերը: Երկու գլխավոր ռազմաճակատներից մեկը պատմական Հայաստանն էր: Պատերազմն ուղղակիորեն առնչվում էր հայ ժողովրդի ու նրա ճակատագրի հետ, նրա դառնակսկիծ վիճակն ավելի ու ավելի էր ծանրանում, խաղաղ հայ ժողովուրդն ուղղակի ոտնատակ էր լինում: Թատերաբեմում նվաճվող հաղթանակները ճակատ առ ճակատ մղված մարտերում, հայազգի զորավար գեներալ-լեյտենանտ Վ.Բեհբութովի քաջագործությունները, զնդապետ Լորիս-Մելիքովի աչքի ընկնելը, Կարսի անկումը, թուրքական զորաբանակների մեծ կորուստները, անշուշտ, ոգևորում էին հայ աշխատավորությանը՝ Արևելյան և թե Արևմտյան Հայաստանում, թուրքական գաղթօջախներում և այլուր: Մեծ թվով հայ կամավորներ, մի շարք հայկական ջոկատներ անմիջական մասնակցություն ունեցան ռազմական գործողություններում և ձեռք բերված հաղթանակներում:

Թուրքական լծի տակ հեծող հայ աշխատավորության արևմտյան հատվածը, ավանդական հույսեր տաժելով թուրքական լծից օր առաջ ազատագրվել, ամբողջությամբ վերցրած թևավորված էր արևելահայ հատվածին միանալու իրական հեռանկարով: Սակայն այլ տրամադրությամբ էին համակված հայ զանգվածների, այսպես ասած, վերնախավը: Հարցն, իհարկե, կարոտ է մանրազնին ուսումնասիրության, բայց առանց դրա էլ կան ակնառու փաստեր, որ հաստատում են, թե հայ կղերական հոգևորականությունը, Կ.Պոլսի պատրիարքարանը

և նրա պաշտոնական օրգան «Մասիս» թերթը հանդես էին բերում ընդգծված հակառուսական դիրքորոշում, նույնիսկ թուրքական տիրապետությունը գերադասելի էին համարում՝ ի հակակշիռ հայ աշխատավորական խավերի բուն տրամադրությունների:

Այս առումով, եթե այլ փաստեր վկայակոչելու չլինենք, բնորոշ կարելի է համարել «Մասիսի» մի շարք նյութեր, որոնք չեն արժանացել ուշադիր քննության: Ջուտ կրոնական խնդիրներով և լեզվագրական հարցերով տարված պարբերաթերթը, թերևս ոչ առանց ճնշման, 1853 – 1854թթ. կտրուկ շրջադարձով ավելի ու ավելի մեծ ուշադրություն դարձնելով Ղրիմի պատերազմի հետ կապված իրադարձություններին, սկսում է ընդհուպ շոշափել նաև արևմտահայ վերնախավի տրամադրությունները, մերձենում է Թուրքիայի հետ պատերազմող Ռուսաստանի նկատմամբ վերաբերմունքի հարցին: 1854թ. ապրիլի 1-ի համարում «Մասիսը», հենվելով օտարերկրյա դիվանագիտական գրագրությունների վրա, արդեն պնդում էր, թե Ռուսաստանի զաղտնի նպատակն է «Օսմանյան կայսրության ավերումն ու կործանումը», որին իբր ընդդիմանում է Անգլիան: Թերթը պնդում է, թե Ռուսաստանը բացահայտորեն կիրառում է Պետրոս I-ի «անհատ աշխարհակալության դրությունը», գործում է՝ «միջոցներն արդարացնում են նպատակը» սկզբունքով, կրոնական պատրվակը լոկ քոդ է նրա համար: Հաջորդ համարից թերթն իբրև «անհրաժարելի պարտք» սկսում է հրատարակել ինչ-ինչ վավերագրեր, որոնք, ըստ թերթի պնդման, մերկացնում են ռուսական զաղտնի քաղաքականությունը, ապա և նյութեր է հրատարակում և «ծափաձայն ուրախություն» արտահայտում թուրքական բանակի հաջողությունների առթիվ: Նման է թերթի դիրքը նաև 1855-ին: Տարեվերջյան համարներում «Մասիսը» գետեղում է «Ռուսիա, արևմտյան տերությունք և Տաճկաստան» ծավալուն հոդվածը, որի վերջին հատվածում թերթը մասնավորապես ընթերցողին ներկայացնում է «Ռուսիո այն սոսկալի վիճակը, որուն մեջ մեր ազգին մեկ մասն ալ դժբախտաբար կհեծե ու օրըստօրե փճանալով կկորսըվի»¹: Այդ հոդվածի շարունակաբար տպագրվող վերջին հատվածներից մեկում

¹ Տե՛ս «Մասիս», 1 ապրիլի, N 114, 6 հոկտեմբերի 1855, N 205:

փորձ է արվում պատկերել Ռուսաստանի ներքին դրությունը և ասվում է այն մասին, թե այն «աշխարհի մեջ եղած բռնավորությանց և բարբարոսական դրությանց ամենն սոսկալին ու անտանելին է: Ազատությունը, լուսավորությունը և ընկերական հառաջադիմությունը իբրև մահաբեր ժանտախտներ հալածված են այս երկրեն և մարդկային սրտին ամենէն նվիրական և սուրբ զգացմունքները անխնա ոտնակոխ եղած են... Ժողովուրդը գուրկ է ամեն բարոյական զգացմունքե... կույր ու անզգա գործիք մըն է կառավարության ձեռքին»:

Գիտակցաբար թանձրացնելով վիճակը, «Մասիսի» ուղղակի նպատակը չէր, անշուշտ, քննադատել ցարական Ռուսաստանում իշխող վիճակը: Նույնիսկ այն դեպքում, երբ նա խոսում է տիրող վիճակը ըմբռնողների, բայց հարկադրաբար լռողների կամ երկրից տարագրվողների մասին, նա դարձյալ նպատակ ունի այդ ֆոնի վրա ցույց տալ հայ ժողովրդի արևելյան հատվածի ողբալի վիճակը. «Մեկ խոսքով, – տեղն ու տեղը նկատում է Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի պաշտոնաթերթը, – հայությունը փճանալու և բնաջինջ ըլլալու վտանգի մեջ է... Ռուսիո քաղաքականությունը... հարկ սեպած է, որ այն դժբախտ ժողովուրդները իրենց ազգային զգացմունքը կորսունցունեն, կյանքնին, ավանդություննին, բարքերնին ու սովորություննին մոռնան, վերջապես կատարյալ ռուս ըլլան: Ռուսաց Հայաստանի բաժին ալ այս վիճակին մեջ ինկած է: Հայերը ռուս ընելու համար միջոց չկա, որ Ռուսիո կառավարությունը ի գործ չդնե»¹:

Ռրքան էլ ցանկանանք մեղմացուցիչ հանգամանքներ որոնել, հաշվի առնենք նույնիսկ այն, որ թերթը հրատարակվում էր Թուրքիայի մայրաքաղաք Կ.Պոլսում, որ Ռուսաստանում այդ ժամանակ ժողովուրդը գտնվում էր անտանելի վիճակում, դարձյալ պիտի արձանագրենք, որ «Մասիսն» իր այդ գաղափարներով ակնհայտորեն ծուռ ու խեղաթյուրված էր ներկայացնում պատկերը, ակնհայտ միտումներով արևմտահայությանը վանում էր Ռուսաստանից և արևելահայ զանգվածից: Նման գաղափարներ երևան հանելով կրոնական պաշտոնաթերթը փաստորեն բացահայտում էր թուրքական պաշտոնական

¹ Նույն տեղում, 25 դեկտեմբերի 1855. N 205:

ճայնափող դառնալու իր հսկումը: Դրա համար էլ նա նույնիսկ կանգ չի առնում առհասարակ ռուսական բարքն ու կենցաղը վարկաբեկելու առջև, բարբաջում է այն մասին, թե կառավարությունը «անսահման ազատություն տված է զգացական հեշտությանց և անպարկեշտ վարուց», թե «ռուսական դաստիարակության տակ դրած է դպրոցները», մինչև անգամ հայ կրոնը «վերցնելու և զանոնք օրթոսոքս ընելու կաշխատի զանազան խորամանկ միջոցներով» և արդեն «Ռուսիո տիրապետութենն ի վեր ծնած սերունդներուն գրեթե հայերեն լեզուն և կրոնքը անծանոթ եղած է»: Ավելի հեռու գնալով «Մասիսը» կաչում է ազգության պահպանության առավել սուրբ ստեղծերին և պնդում, թե հատուկ քաղաքականություն է վարվում հայ աղջիկների դաստիարակության հարցում, որպեսզի «կրթյալ մայրեր չգանվին Հայաստանի ժողովրդի մեջ»: Նույնպիսի քաղաքականություն է կիրառվում նաև տղաների ուսուցման ու դաստիարակության հարցում:

«Արևելքի» 1855թ. նոյեմբերի 1-ի համարում նա մի ինֆորմացիայում խոսում է ռուսերեն առաջին պարբերականի մասին, հաղորդում է, որ այն պետք է վերատալվի, միաժամանակ տեղեկացնելով, որ ցարն «իր ձեռքով կարբագրեր» լրագիրը: Մամուլի նկատմամբ այդ հարգանքը մատնացույց անելով հայերին, Ռսկանյանը նաև ավելացնում է. «Երանի թե մեծն Պետրոսի ըրածն խրատ առնեին» (էջ 279): Ռսկանյանի մոտեցումն ավելի պարզորոշ է դառնում, երբ ներկայացնում է Ղրիմի պատերազմի կովկասյան թատերաբեմի փառապասակ զորավար Բեհրուքովին: Հենվելով ֆրանսիական մամուլի նյութերի վրա Ռսկանյանն իր ընթերցողներին հակիրճ տեղեկություններ է տալիս «Բեհրուքյանց իշխանի» մասին: Անգլիական մի նկարագարդ թերթում տեսնելով զորավարի նկարը, Ռսկանյանը խանդավառությամբ է նկարագրում նրա դիմագիծը, ցավով գրում, որ իր հանդեսը, դժբախտաբար, չի կարող արտատպել նրա կենսագրականը (էջ 286): Երեք տարի անց Ռսկանյանն այդ էլ արեց. նա «Արևմուտքում» առավել հանգամանորեն ծանոթացրեց իր ընթերցողներին «Ռուսիայի տերության ամենեն նշանավոր զորապետներեն մեկին».

յան բանակի դեմ, գերագնահատում է նրա հաղթանակների նշանակությունը, հուշում է հրատարակել նրա կենսագրությունը: Դրվատելով օտար երկրներում աչքի ընկնող հայերին, Ոսկանյանը սուրբ պարտք էր համարում իր ժողովրդին չմոռանալը և ակնարկում, որ նշանավոր զավակներ պետք է ունենալ նաև բուն Հայաստանում, որ նրանք պետք է գործեն հանուն իրենց ժողովրդի փրկության՝ մանավանդ թուրքական լծից¹:

Ասեմք և այն, որ Ոսկանյանը համոզված էր, թե ժամանակը դատ կբացի և հաշիվ կպահանջի նրանցից, ովքեր կարճատեսությամբ «ազգը Ռուսիայի խորխորատը առաջնորդեցին» և, ինչպես տեսանք, խորապես վստահ էր, թե պատմության վճիռն իր տեսակետի օգտին կլինի: Ոսկանյանը ազատագրական պայքարի ջերմ ու հետևողական ջատագով էր, նույնիսկ զինված պայքարի կոչեր էր հղում «Հայկա թոռերին»: Նրա գլխավոր մտահոգությունը, մանավանդ այն բանից հետո, երբ ուսսական գորամասերը քաջաբար գրավեցին Կարսը և իրական կերպարանք առան Հայաստանի արևմտյան հատվածը ազատագրելու հույսերը, հայ ժողովրդին ոտքի հանելն էր, հայ հայրենիքի փրկությունն ու ազատագրությունը: Նա Կարսի գրավումը համարելով «ազգային դեպք մը», ընդգծելով Եվրոպայի անհոգությունը, դատապարտելով օտար տերությունների շահադիտական քաղաքականությունը, հավասարապես նաև նրանց համար գործիք դառնալը, ի վերջո, «ճշմարիտ ազգասերների» ուշադրությունը բևեռում է այն բանի վրա, որ «գերությունը նախատինք չէ մեզի, երբ տարաբախտ նախնիքներե կուգա այն, այլ ճշմարիտ նախատինք է Հայկա թոռերու տաս և իններորդ դարու մեջ բռնակալության ԳՌԲԻ ՄՐ ՌԼԼԱԼ»: «Արարատա զավայբեր հայու անունը կարատեք», – իր վերջին գրչահարվածն է հասցնում Ոսկանյանը, դրանից առաջ խորհրդավոր կերպով խոստովանելով, որ «առաջմ ասկե ավելի չենք կրնար ըսել...» (տե՛ս էջ 533-538): Ավելին. շատ չանցած նա սկսեց նկատել առաջադիմական, լույս ճառագող Ռուսաստանը, ազատագրության համար պայքարող նրա ուժերին: Դա նրա լուրջ

¹ «Արևմուտք», 1 մարտի 1859, N 1, էջ 33-35:

առաջընթացն էր, քաղաքական կողմնորոշման այն բարձրակետը, որից նրան իր իսկ անցած ուղին ինչ-ինչ հարցերում այլ կերպ էր երևում արդեն: Իր վերոհիշյալ տողերից տասը տարի անց, մի առիթով Ստ.Ոսկանյանը գրել է այն մասին, որ իր խոսքը «առայժմ շատերուն անմեկնելի է», բայց «իր փոքր արժեքն ունի», «եթե երբեք պատմությունը հավանի արձանագրել», «*եթե երկիրասարդի անզոչությունով գրվածը սրկվի ու օր մը մեկնվի...*»¹: Մեր համոզմունքն այն է, Ոսկանյանը նկատի ուներ եթե ոչ առաջին հերթին, ապա դրանց թվում նաև վերևում բերված տողերը:

* * *

Դեռ իր հրապարակախոսության արշալույսին Ստ.Ոսկանյանը հստակորեն նկատում ու պարզորոշ արձանագրում էր իր ժողովրդի՝ միշտ նկատի ունենալով նրա արևմտյան հատվածը, սոցիալ-քաղաքական ու տնտեսական անտանելի կացությունը, նրա ճնշված ու հալածված վիճակը, որից ազատագրվելու ելքը նա տեսնում էր ազգի «բազմաթիվ և ահարկու» թշնամիների դեմ պայքարի ու զենքի դիմելու մեջ: Այդ գաղափարը նա իր պարբերականի էջերում բացեիքաց արտահայտել չէր կարող, որովհետև նրա հանդեսը հիմնականում տարածվում էր Թուրքիայում, որի մայրաքաղաքում միայն ուներ 160 բաժանորդ, իսկ առանց խստագույն գրաքննության տպագիր որևէ բան, դեռ 50-ական թվականների սկզբներից, Թուրքիայում մուտք չուներ: Հանդեսի տարածման հնարավոր արգելքը, որը պետք է նույնիսկ ականա նկատի ունենար խմբագիրը, առավել ևս հովանավորող խումբը, ամեն մի առանձին դեպքում և ընդհանրապես, ստիպում էին իր խոսքն ասելու խելացի ձևեր որոնել: Նման միջոց էր, օրինակ, այս կամ այն գաղափարը թարգմանական գրականության միջոցով հաղորդելը: Հենց այդ եղանակով Ստ. Ոսկանյանը կարողացավ արևմտահայ իր ընթերցողներին պայքարի տրամադրություն հաղորդել՝ «Արևելքի» հենց առաջին համարում տպագրելով Լամընեի «Արի

¹ «Արևմուտք», 1 փետրվարի 1864, N 1, էջ 1 (ընդգծումը մերն է):

զինվորը»։ Դա բանաստեղծական շարունակ աճող շնչով գրված, փոքրածավալ, բայց և վեհ պաթոսով սողողված մի երկ է, ուր պայքարի, ըմբոստության և զենքը ձեռքին մարտնչելու կոչ է աճում։ Ահա մարտի գնացող զինվորի պատասխանները.

«...Արի զինվոր հո՞ երթաս,

Արդարությունը, ազգելու սուրբ իրավունքը և մարդկության նվիրական օրենքները պաշտպանելու համար կռվելու կերթամ:

...Բռնակալներու ճիրանե իմ եղբայրները ազատելու, անոնց շղթաները և աշխարհի շղթաները խորտակելու կերթամ:

...Անիրավ մարտերու դեմ կռվելու կելլեմ. տկարը, որ իրենց ներքև առներ ոտնահար կենն, պիտի պաշտպանեմ...

...Երթամ աղքատի համար կռվիմ...

...Հյուղերն անոթությունը հալածելու կերթամ...

...Երթամ արյուն թափեմ, որ միտքը, բարբառը, խիղճը ազատ ըլլան և մարդու ճիրանի տակ չմաշվին:

...Բնության հավիտենադիր օրենքները... պաշտպանելու համար սպառազեն կռվելու կերթամ:

...Արի զինվոր հո՞ երթաս,

Երթամ արյուն թափեմ, որպեսզի ամեն մարդ Աստված մը երկնքի մեջ և հայրենիք մը երկրի վրա ունենա:

Օրինյալ ըլլան, եոթ անգամ օրինյալ ըլլան քո զենքերը արի զինվոր» (էջ 9-10):

Այսպես Լամբնեի «Արի զինվորը» հայ մամուլի էջերում ստացել է ազատագրական պայքարի կոչ աճող երկի հնչեղություն¹:

¹ «Արևելքից» քացի Լամբնեի «Արի զինվորը» նոր թարգմանությամբ ու այլափոխված խորագրով՝ «Երիտասարդ զինվորը», 1912թ. հրատարակել է Մուշեղ եպիսկոպոսը (Արտաշես Սերոբյան – տե՛ս «Ամենուն տարեցույց», 1923, Կ.Պոլիս, էջ 153): «Ամերիկահայ տարեցույցում» (Պոստոն, 1912, էջ 316-318)՝ ողնկցելով հատկանշական վերտառությամբ՝ «Նվեր հայ զինվորներուն»: Այս թարգմանությունը իր գրական արժեքով զգալիորեն զիջում է Մտ. Ոսկանյանի թարգմանությանը:

Լամբնեի ստեղծագործության նկատմամբ Ոսկանյանի ցուցաբերած վերաբերմունքին համարժեք վերաբերմունք է դրսևորել նաև Հ.Սվաճյանի «Մեղուն», որի 1863թ. ապրիլի 9-ի համարում հենց «Արևմտքից» արտատպվել է Լամբնեի նույն ստեղծագործությունը: Իզուր չէր, որ Ե.Տեմիրճիպաշյանն անդրադառնալով Հ.Սվաճյանին նրան բնութագրում է որպես «ազատախոս և ազատախոս երիտասարդ, հայրենասեր և արդարասեր, արի զինվոր-Լամբնեի զինվորին նման,

Հետագայում Ստ. Ոսկանյանի գրչով նման ուղղակի կոչերը կրկնվել են, իսկ առայժմ «Արևելքում» ամեն կերպ ու ամեն միջոցով նա ձգտում է բարձրացնել հայոց ազգային արժանապատվությունը, նրան ճանաչել տալ Եվրոպայում: Այս տեսակետից բնորոշ է նրա վերաբերմունքը եվրոպական տերությունների վերնախավերում հարություն առած և շրջանառության մեջ դրված Լևոն իշխան մականվանյալ քաղաքական բախտախնդրի նկատմամբ: Սա իրեն ներկայացնում էր իբրև հայ իշխան, հայկական թագավորական ծագում ունեցող մեկը, որին, սակայն, ռուսական իշխանություններն իբրև թե զրկել են կալվածքներից, ունեցվածքից, տոհմական պատկանելությունից:

Այդ ստահակ քաղաքական «պուպրիկին» ասպարեզ հանելով, անգլիական, ապա ֆրանսիական կառավարական շրջանները հետապնդում էին որոշակի նպատակներ, փորձում էին նրան իբրև գործիք օգտագործել Արևելքում իրենց ազդեցությունն ավելի ուժեղացնելու համար: Զաղաքական այդ խաղը սուր ծայրով ուղղված լինելով Ռուսաստանի դեմ և նպատակ ունենալով ահաբեկել թուրքական սուլթանին, միաժամանակ թղթախաղի առարկա էր դարձնում հայ զանգվածների ազգային զգացմունքներն ու ազատագրական պայքարի ձգտումները:

Ստ. Ոսկանյանը ֆրանսիական «Իրավունք» («Թրուա») թերթից թարգմանաբար տպագրում է Լևոն Լուսինյանի արկածախնդրական անցյալն ու սնանկությունը մերկացնող հոդվածը¹, ապա ավելացնում դիպուկ մի տող, «Թշվառ Հայաստան, նայե՛ ուրկե ուր կիյնա պատիվդ և մեկը չելլեր զան պաշտպանելու համար...»: Դրանից անմիջապես հետո նա գետեղում է կարճառոտ մի հաղորդում այն մասին, որ Բեռլինում խաղացված մի պլենսի դերակատարը փոխելով բնագրի խոսքերը ծաղրական ակնարկն ուղղել է «հայ իշխանի մը՝» Լևոն Լուսինյանի դեմ: «Լևոն սուտանուն իշխանին պատճառով հայու անունը

որ երբեմն անվեհեր կպաշտպաներ Երևնը՝ անօրենի ղեմ, ճշմարտությունն ընդդեմ մոլորության, հալածիչին դեմ հալածյալն, Պապին դեմ առաքյալն, Տերոյենց պատվելիքին դեմ Սինաս Չերազ և Փորթուգալյան...» (*Ազատախոսյան*, Փիլիսոփայական բառարան ժողովրդական («Փորձ»), Կ. Պոլիս, 1879, էջ 46-47):

¹ Տե՛ս նաև «Մասիս», 10 նոյեմբերի 1855, N 198:

մինչև թատրոնի մեջ կխայտառակվի» (էջ 254-255), – եզրակացնում է Ռսկանյանը: Այդ լակոնիկ արտահայտությունները ցուցահանում են նրանց հեղինակի բարձր ազգային արժանապատվությունը, իր ժողովրդի ճակատագրով նրա հետևողական մտահոգությունը: Դրանց մի այլ առավել ցայտուն դրսևորումը եղավ նույն Լևոն իշխանին սուր երգիծանքով մերկացնող «Ազազուն իշխան» պամֆլետը, որ երևան պիտի գար գրեթե մեկ տասնամյակ հետո:

«Արևելքը» նախ և առաջ գրական հանդես էր: Դրա համար էլ նրա համարները գերազանցապես բովանդակում են գեղարվեստական նյութեր, գրականագիտական հոդվածներ, չափածո ստեղծագործություններ: Ըստ այդմ հանդեսի գրական նյութերը, նաև գրադատականները նույնպես գրեթե լրիվ պատկանում են Ստ. Ռսկանյանի գրչին: Դրանց նշանակությունը՝ թե հայ գրականության, թե իսկական գրականագիտական մտքի սկզբնավորման ու զարգացման տեսակետից անհերքելի է: Ստ. Ռսկանյանն այդ ուղղությամբ առաջին հաջող քայլերն անողներից մեկն էր: Եվ իրավացի է Ա.Ալպոյաճյանը, երբ, խոսելով մինչև 1850-ական թվականների կեսի արևմտահայ գրական ընթացքի և պարբերականների մասին, նշում է. «Սակայն բոլոր այս լրագիրներուն և հանդեսներուն մեջ գրական տեսակետով աներկբա առաջին տեղը բռնեց Ստեփան Ռսկանյանի *Արևելքը*.. սուր գրիչ մըն էր Ռսկանյան, պայքարի մարդ մը...»¹:

Ռսկանյանի անդրանիկ գործի՝ «Հայր Ագուլիկի» մասին արդեն խոսք եղավ: Նույնարժեք գործեր են նաև «Տիկին Լավալեթին արիությունը» վերնագրով նմանողությունը, «Ամիսի կամ սիրո նահատակ օրիորդ մի» փոքրիկ վիպակը, «Հայ պատրիարք մը ի Պասթիլ» պատմավավերագրական երկը: Անշուշտ ուշագրավ են Ռսկանյանի արևմտահայ գրական լեզվով գրած սահուն, թեթև շնչով, հաճախ լավ հանգավորված չափածո գործերը և քառյակները՝ երբեմն երգիծական և գրված կոնկրետ առիթներով: Դրանք գրականագիտական ուշադիր քննության ու մեկնության կարոտ գործեր են:

¹ «Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի», Կ.Պոլիս, 1901, էջ 152-153:

Պետք է հատուկ շեշտել Ոսկանյանի առանձնակի մտահոգությունը հայ ժողովրդի մեջ երգեր տարածելու, երգելու հին սովորույթը վերականգնելու նկատմամբ: Այդ մասին նա համարյա միշտ էր մտածում և երբեմն-երբեմն երգերի տեքստեր հորինում-առաջարկում՝ դրանք ուղեկցելով ուրույն նախաբաններով, որտեղ լուրջ ընդհանրացումներ էր կատարում հայ ժողովրդի նույնիսկ ընդհանուր վիճակի շուրջ: Այդպիսի մի նախաբան նա կցել է ընթերցողին առաջարկվող «Ապականություն» խորագրով երգին, որ հրատարակել է հանդեսի հենց առաջին համարում:

«Մեր ազգը, – գրում է Ոսկանյանը, – այնքան լացավ, որ հիմա ո՛չ կլս և ո՛չ կերգե. և ի՞նչ արդյոք երգե թշվառը... իր հալնմա՜յ աչերու մեջ արտոսը մը չկա, և սրտի մեջ բերկրություն մը չունի¹: Այլ Հայկա որդիքը միշտ այնպես եղած չեն, և պատմությունը կվկայե թե երգել, քաջ երգել գիտեին, երբ երկրի շատ ազգերը դեռ անհող կխորդային»: Չգտելով ազգայիններին նորից վարժեցնել բանահյուսությանը (պոեզիային), որը «Մեր նախահայրերու անծանոթ չէր», Ոսկանյանը համոզմունք է հայտնում, թե իրենց թոռները «լույս առնելով հույս ալ պիտի առնեն» և «իրենց սրտի հուզումը մարդկային սեռին պիտի հայտնեն»: Դրան հասնելու համար «Արևելքը բան մը չպիտի խնայե» (էջ 24):

Մտ. Ոսկանյան ստեղծագործողի մասին չափազանց նպաստավոր է խոսում «Թշվառության հառաջը» ավելի քան հարյուր տողանոց բանաստեղծությունը, որի տակ, սակայն, իր ծածկանունից՝ «Հարմա» առաջ նա դրել է «Թարգմանություն»՝ առանց նշելու աղբյուրը: Հակված ենք ենթադրելու, որ այն Մտ. Ոսկանյանի ինքնուրույն ստեղծագործությունն է, առավել ևս, որ նրանում նշմարելի են իր կյանքի որոշ ելևէջները: Արևելքից մինչև արևմուտք բանաստեղծը նկատում է միայն «ահռելի մութ»: Թոչնո՞ օրը իր հետ տանում է նաև բանաստեղծի վշտերը՝ «մաս

¹ Նկատենք, որ Մ.Նալբանդյանը նույն մտահոգությունն էր դրսևորում հայ երգի նկատմամբ և նույն ձևով էր արտահայտվում «Մեռելահարցուկում», որ գրել է 1859թ. «Մենք», – գրել է նա, – չունինք ազգային երգեր, չունինք ազգային երաժշտություն, չունինք բանաստեղծություն...» (ԵԼԺ, հ. 1, էջ 282, տե՛ս նաև էջ 21):

մը վատուն և ահադեմ», ուրեմն «օր վշտատար, գնա բարյալ»:
Բայց անցնող յուրաքանչյուր օր, որ միշտ էլ սև է, թողնում է
«մահաբույր հետք»:

*Որքան թշվառ ինձի նման
Անոր կըսես գնա չարյալ:
Նայե մեյ մը իր թևը լայն
Որչափ քեռներ ունի անբալ:*

«Հեզ անիծյալ» մարդկանց համար օրվա ահեղ քայլը ծանր է. նրանք երկրի վրա տեղ չունեն և ամեն անցնող օրվա ու-ժամվա հետ գերեզմանին են մոտենում, բայց և մաղթում են, որ օրը շուտ անցնի, որովհետև կյանքը «փշահյուս և անբերրի» է և «մարդ է դահիճ, դահիճ ազահ»: Ի դերև ելավ «երանելի օրվա» հույսը, որ պիտի ծագեր խավարից, և ճակատագիրն ավետում է՝

*Թե ես թշվառ պիտի մեռնիմ
Ինչպես թշվառ աշխարհ եկա:*

Բանաստեղծը փափագում է, որ լույսն անցնի և մութը գա, որպեսզի ինքը շուտ մահանա: Մարդու մասին նրա հագուստով են դատում, և եթե «հնոտի է քու վըրա՝ մարդ քու երեսը ալ չընայի»,

*Գիշեր գոնե իս կը ծածկե,
Գոնե գիշեր ինձ քուն կուտա:
...Լռե՛ հարուստ, լռե՛ դաժան
Գեղնի վըրա թշվառը ննջե.
Հանգիստ քիչ մը թող առնե ան
Վիշտերը հոն են արթըննա նե:
...Ո՛հ երանի թե չարթըննա (էջ 110)*

Անհատի վիշտը, այսպիսով, ընդհանրացվելով, հասցվում է սոցիալական չարիքի աստիճանին, և մարդը մաղթում է, որ վշտակիր օրը վերջինը լինի, և ինքն էլ նրա հետ թոչի երկրից, մահ գտնի:

Նույն տրամադրությամբ է շաղախված նաև «Կես գիշեր-Նոր տարի» բանաստեղծությունը՝ ստորագրված Ա.Գ., որ Ռսկանյանի ծածկանունն է անշուշտ¹: Սեփական ստորագրությամբ բանաստեղծություն չիրապարակելու պատճառը հավանաբար այն է, որ նրանում դառն մատրումներն են իշխում, նույնիսկ ամանորի գիշերը «տրտում ու թշվառ» է հեղինակը: Անցած տարիներին նա տեսել է ազատության հոգեվարքը, «արյան հեղեղ և դահիճ», մահվան «անհույս անկյալ» մահճի մեջ գտնվող «անմեղ շատ սիրտեր»: «Կյանքի թույնը» ճաշակած հեղինակն այլևս գիտե, որ եկող նոր տարին, ինչպես սիրուն բույսն է թույն արտադրում, «սև օրեր և ապագա անհամբույր» կրեթի. «Երսուն անգամ տարի նոր (Տեսավ ակն իմ հույսով լի) երեսուն անգամ երթալով (Տարին եղավ վշտալի» էջ 374): Ներկան նույնպես «մահավոր» է, «ապագան դատարկ»:

Տարի եկո՛ւ կամ գնա՛

Այսուհետև հոգ չէ...

Հնչե՛ գանգակ կամ լռե՛

Տարի եկո՛ւ կամ գնա՛

Այ չև՛ համբեր. և գրիչ

Եվ թուղթ ձեռքես արդ կիյնա:

Առհասարակ Ռսկանյան-բանաստեղծին, ի հակադրություն հրապարակախոս Ռսկանյանի, բնորոշ են թախիժը, ծանր ապրումները, անհուսալի վիճակը, թեև այն դեպքում, երբ նա երգեր է գրում, հանդես է բերում կենսուրախություն, աշխույժ հումոր:

Բնորոշ է և այն, որ Ռսկանյանը երբեմն-երբեմն բա-

¹ Ստեղծագործության լեզուն, ոճը, վարպետությունը ռսկանյանական են: Հեղինակի տարիքը՝ երեսուն տարեկան, ուրեմն և 1825-ին ծնված լինելը նույնպես հուշում են, որ Ռսկանյանին է, թեև բանաստեղծությանը կցված նախաբանում ասվում է, թե այն «ասկե քանի մը տարի առաջ շինվեր է մեր բարեկամներն մեկին» (էջ 372): Նման խոսուսգրությամբ Ռսկանյանը հաճախ է շեղում ուշադրությունը, որպեսզի չբացահայտվի ծածկագրված երկի հեղինակային պատկանելությունը: Բայց, չափածոյի ընդհանուր ոգին շատ համահնչյուն է «Հարմա» ծածկանունով Ռսկանյանի տպագրած «Թշվառության հառաջը» բանաստեղծությանը, իսկ ստեղծագործական մտահղացմամբ մեկը մյուսի կրկնությունն է: Դա ևս հաստատում է, որ երկու ստեղծագործությունների հեղինակը նույն ստեղծագործողն է՝ Ռսկանյանը:

նաստեղծություններ էր գրում տեղի ունեցող կոնկրետ դեպքերի առթիվ, ինչպես դա անում էր դեռ Մեսրոպյան վարժարանի աշակերտ եղած ժամանակ: Այս անգամ նա չափածո տողեր է նվիրում իրեն անդունդը նետած Ներվալին (էջ 54-55), Մուրադյան վարժարանում՝ աբբահայր Հյուրմյուզյանի դեմ կատարված դեպքերի առթիվ ծաղրում ու ծանակում է Մխիթարյան վանահորը (էջ 215-217), քառյակներ է ձոնում հայոց Տրդատ քազավորի կիսանդրուն (էջ 228), ձոներգում է ազգին մեծ կտակ քողած Մուրադյան բարերարին՝ «Մուրատյան ոգի» (էջ 231-237), որտեղ, քե՛ն տուրք է տալիս մեծահարուստ հանգուցյալին, ընդգծում է ազգի հոգսերը դարմանելու կարևորության գաղափարը: «Արևելքում» Ստ. Ոսկանյանի հրատարակած չափածո ստեղծագործություններն արդեն, դրանց ավելացրած նաև նրա չափածո թարգմանությունները, իրավունք են տալիս նրան դասել հայ նոր պոեզիային նպաստ բերած սակավաթիվ ստեղծագործողների շարքը:

* * *

Բեղմնավոր ու հմուտ էր Ոսկանյան թարգմանչի գրիչը: Հազիվ յոթ ամսում, երբ լույս էր տեսնում «Արևելքը», նա թարգմանել է Լամբեհից, Դյուրայի (1778 – 1827) «Ուրիքա» ոչ ծավալուն վեպը, Ֆլորիանիի (1755 -- 1794) «Ժանոն և Քուլեն» կատակերգությունը, Շատոբրիանիի «Հետին Ապենտերանժ» վեպը, որ հանդեսի դադարման պատճառով լրիվ չի հրատարակվել: Բայց առավել բեղմնավոր և բազմերանգ էր գրականագետ Ոսկանյանը: Նրա քննած հեղինակների լոկ թվարկումից էլ դա ակներև է. Ժիրարդեն, Ժերար դը Ներվալ, Տեղանելի, Դյումա-Որդի, Լաշամպուտի, Հեժեզիբ Մորո, Միցկևիչ և ուրիշներ: Իր «դատականներում»¹ և տեսություններում, ի տարբերություն հայ մամուլում մինչև այդ արված փորձերի, Ոսկանյանը

¹ «Արևելքում» առաջին «դատականը» լույս է տեսել հանդեսի հենց անդրանիկ համարում (էջ 7-9): Այդ տերմինը, որ շրջանառության մեջ է մտցնում Ոսկանյանը, հավասարագոր է «գրաքննադատություն» (գրախոսական») տերմինին՝ այսօրվա բովանդակությամբ, կամ Մ.Նալբանդյանի գործածած «կրիտիկա» տերմինին: Արևմտահայ մամուլում գործածական է նաև «բանադատ» (քննադատ) տերմինը (տե՛ս «Շաղիկ», 1861, N 15, էջ 114):

չի բավարարվում այս կամ այն գրողի, այս կամ այն երկի մասին ծանոթություն տալով, երկերի բովանդակության վերարտադրությամբ, թեև երբեմն գոհամում է միայն այդքանով: Նրա գրականագիտական նյութերը ուրույն տեսություններ են՝ ժանր, որ նրանով է մուտք գործում մեր իրականությունը, գրողի դիպուկ գնահատությամբ, երկի արժեքավորմամբ և, որ առավել կարևոր է, հմուտ քննությամբ՝ սեփական կարծիքով հաճախ հակադրվելով այս կամ այն կարծիքին:

Այդպիսին է հենց Ֆեյխտե Ռոբեր Լամընեի (1782 – 1854) գործերին կցված նրա նախաբանը, որտեղ նա մերժում է հայտնված կարծիքներն այն մասին, թե նա եղել է «*դրոշակիր անհշիասնության*», թե «*աննշան փողոցներու մեջ մեռավ*»: Դրանք, ըստ Ռսկանյանի, «անվանարկ մակդիրներ» են, որոնք Լամընեին անձանոթ հայ ընթերցողին ծուռ գաղափար են տալիս»¹: Իրականում նա պապության թշնամի էր և «բռնակալները չէր սիրեր», «անգյուտ և երևելի» հեղինակ է: «Չկա գրագետ մը, – նկատում է Ռսկանյանը, – որ Լամընեին հանճարը չգովե և հիշատակը չպաշտե, քահանայական կողմն զատ մեկը չհանդգնիր իր անարատ ճակատի վրա մուր քսել»: Ինքը՝ Ռսկանյանը նույնպես նրա բոլոր տեսակետները չէ որ ընդունում է, կամ միշտ չէ որ կուրորեն հետևում է նրան. «Մենք մարդու մը ով և ըլլա, հետևիլ չենք ուզեր... և շրջկե շիտակ կըսենք, թե այս հեղինակի փիլիսոփայական դրությունը մեզի անթերի չերևար, և մենք ասկե շատ հեռու ճամբայի մեջ կգտնվիմք և գրեթե հակառակ կողմը կարշավենք»²: Այսուամենայնիվ Լամընեն Ռսկանյանի երկարատև սիրելի հեղինակն է, նրա երկերը, գրում է նա, ոչ միայն ոգերու ճարակ մը տվեր են մեր միտքին, այլև մեր սիրտը սփռիներ են այնպիսի դառն վայրկյաններում մեջ, ուր հուսահատության տակ ճնշյալ երկբայի ալիքներու մեջ կծփայինք»: Եվ, որպեսզի «ամեն հայ» ընթերցող ճիշտ գաղափար

¹ Այստեղ Ռսկանյանը հավանաբար բանավիճում է Գ.Այվազովսկու դեմ՝ ակնարկելով լոկ «հայ բանասիրական ամսագիրերե մեկը»:

² Ռսկանյանի այս երկակի վերաբերմունքը Լամընե գրողի և փիլիսոփայի նկատմամբ իրավունք է տալիս ասել, որ նա մերժում էր ֆրանսիացի մտածողի հայացքները հասարակության զարգացման տեսական հարցերում:

կազմի իր «որդիաբար սիրած» հեղինակի մասին, գողարիկ թարգմանությամբ ներկայացնում է նրա երկու արձակ բանաստեղծությունը՝ բանաձևելով «Լամընեի պաշտպանը ինքը Լամընեն է», նաև խոստանալով մի այլ անգամ «երկարորեն» գրել նրա մասին (էջ 8), որը, ցավոք, չի արել և եթև գրեր, անշուշտ, պիտի ցույց տար, որ նա բուրժուական կարգերի, իր ժամանակի իրական գոհը եղավ:

Նույնպիսի նախաբան է կցել Ոսկանյանն «Ուրիքա» վեպին և ծանոթություն տալով նրա հեղինակ՝ «համեստ գրագիտուհի» Դյուրայի մասին, «բառ առ բառ» թարգմանել ու տպագրել է վեպը: Նա ընթերցողին է թողնում «սիրել կամ պարսավել», բայց և խնդրում է «վեր ի վերո դատում մը չընել, և արևելյան ապակիով մը այս քնքուշ հեղինակի մտային բարակ գույները չզննել»: Որոշակի նպատակ ունի թարգմանիչը. նա ուզում է, որ հայ օրիորդներն «իրենց թմբությունը» թողնեն և ծանոթանալով վեպին, Եվրոպայից «Նյութական զարդերի» հետ միաժամանակ ձգտեն «մտային զարդեր առնել և քիչ մ'ալ անով պճնիլ ու երբեմն-երբեմն գրագիտական հայելիի մեջ նայելով իրենց գլուխի պակասությունները անհետ ընել... ժամանակը եկավ, որ դեմքը միտքին հարմարի» (էջ 14):

Ոսկանյանի բնորոշմամբ տիկին Էմիլ Ժիրարդենը «սիրուն միտք մը, վառվռուն երևակայություն մը և վեհ սիրտ մը» ուներ: Մահն անգոր է նրա անվան դիպչել. նա «մեր դարի ամենն երևելի կիներու կարգը կրնա դրվիլ», ճիշտ է «վիպական և դատական սեռի մեջ» զիջում է Սանդին և Ստալին, բայց իբրև կին, արի ու վեհ կին, մինչև անոնց աստիճանը կհասնի»: Ժիրարդենը երգել է ազատությունը, հայրենիքը, սերը, «Ծափահար կըլլար հույներու ապստամբության, հայրենասեր կտրիճներու մեկ ձեռքով քաջալերի երգեր կառաքեր, մեկալ ձեռքով ազատության դրոշակին համար ստակ կժողվեր, հայրենիքեն վտարանդիներու իր թևը կկարկառեր... արի բանահյուսը»: Բարձր է գնահատում նաև վիպագիր, մանավանդ հրապարակախոս Ժիրարդենին, նրա «Նամականի բարիզյանը», ինչպես և՛ դրամատուրգ հեղինակին, որը վալյեցրել է կատակերգությունը: Ահա ինչպես է բնութագրում Ոսկանյանը «Լեդի Տարտյուֆը», «...Որքան սուտ հավատա-

վորներ, երկդիմի հրեշներ, վատ բնություններ, և զեռնային բարբեր կանե, կառնե, կհեզնե, կպատժե, կվիրավորե և, կատակի կծու լեզվով մահ տալով, արհամարհի աղբեխն վրա կնետե զանոնք, որ տեսնողը սուկա և վատութենե խորշի» (էջ 32):

Խոր կսկիծով է Ռսկանյանը նկարագրում Շերար դը Ներվալի (1808 – 1855) ողբերգական մահը՝ ինքնասպանությունը: Նա այդ առթիվ հիշատակում է, որ «անմսեի բանաւիումներու կյանքի» բնորոշ երևույթ է. «Ապաշնորհ մարդկությունը, – ընդգծում է Ռսկանյանը, – որչափ անոնք կենդանի են, անոնց երեսը չնայիր, և երբ հուսաբեկ, կամ վշտահար սև հողի ներքև կիջնեն այն ժամանակ ոչ գովեստը կպակսի և ոչ հիշատակարանը... Այսպես է մարդկային սեռը: Մարդ կա, հանճար կա, որ մահե ետքը միայն ապրիլ կսկսի»:

Բուրժուական ապականված հասարակարգը մերկացնող իր այս խոսքերից հետո Ռսկանյանը ցույց է տալիս այն հուսահատությունը, այն պատճառները, որոնք «ի մահ տարան» Շերար դը Ներվալին՝ քնելու տեղ չունենալով, առանց մի գրոշի: Ռսկանյանը գուրգուրանքով վերապատմում է Շերար դը Ներվալի կյանքը, նրա գրական գործունեությունը, հպանցիկ կանգ է առնում նրա գործերի, հրապարակախոսության վրա: Նա հատուկ արժեքավորում է Գյոթեի «Ֆաուստի» «ճիշտ և ազնիվ ոճով» բարգմանությունը, որ արժանացավ հեղինակի «շնորհակալու նամակին»: Մասնավոր ուշադրությամբ նա խոսում է Ներվալի ճանապարհորդությունների մասին, հիշեցնում է, որ եղել է Կ.Պոլսում և վերարտադրում է հայերին նվիրված նրա էջերը: Հատուկ սեր արտահայտելով հեղինակի հանդեպ, Ռսկանյանը փափագում է, որ պարզվի, թե հայերից ով է նրա հետ տեսնվել, նստել, խոսել, ապա և Ներվալին է ձոնում մի քերթվածք, որով ավարտում է իր հոդվածը (էջ 54):

Վերջին իմաստով հատկանշական է Ռսկանյանի ընդարձակ տեսությունը Տեշանելիի հրատարակած «երկու պզտի սիրուն հատորների» առթիվ (էջ 78-91): Դրանք կանանց մասին հայտնված «թեր և դեմ» կարծիքների ժողովածուներ են, որոնցից նա հաճույքով շատ բան թարգմանելով «անանուն հայի մը բերնե» (էջ 87), որը, Հր. Ասատուրի կարծիքով, հենց ինքը՝ Ստ.

Ոսկանյանն է¹, ավելացնում է երեք պարսավող և գովեստի մի չափածո խոսքեր: Ի դեպ, այս առիթով Ոսկանյանը կնոջ վիճակը համարում է «տրտմալի տեսարան»:

Բավականաչափ հանգամանորեն ներկայացնելով Կոոնեյին, նրա կատակերգությունները, Տիգրան Փեշտիմալճյանը անշուշտ, Ոսկանյանի օրինակին հետևելով, ծանոթագրություններում ուշադրություն է դարձնում դրամատուրգի այն էջերին, որոնք առնչվում են հայերի հետ, նույնիսկ դրանց հիման վրա հետևություններ անում, հուշում «նոր ոճով մը» թարգմանել նրա առանձին գործերը:

Նպատակալացությունը, որ առհասարակ Ոսկանյանի հրապարակախոսության բնորոշ գիծն է, հաճախ իշխող է դառնում նաև առանձին հեղինակներին նվիրված գրական տեսություններում: Դա մասնավորապես ակնառու է Դյումա-Ռոդու «Կես-աշխարհ» թատերգության բովանդակության վերաշարադրության մեջ: Այնտեղ Ոսկանյանը, «Փարիզի իլը ծիլը քաջ» իմացող հեղինակի պիեսից ելնելով, ընդգծում է այն գաղափարը, թե չպետք է կուրորեն հետևել եվրոպական լուսավորությանը, որը «երես ետև ունի», իսկ «Եվրոպա՝ երեսը անարատ, սիրտը որդնահաբ էակի մը կնմանի»: Այս հարցադրումը նրա համար էական է, և նա, համառոտակի քննելով հարցը, ցույց է տալիս «լուսավոր Եվրոպայի՝ հիանալի երես մը, և զարհուրելի կեղտեր ունենալը»: Նա այդ առթիվ գրում է. «Ազգ մը, ինչպես մերը, որ կջանա լուսավոր Եվրոպայի շավիղին հետևիլ, անհնարին զգուշություն ընելու է, որ կույր զկուրան այն շավիղին չհետևի և լույս առնելու փափագով անել ճամբայի մը մեջ չիյնա և չկորսվի: Ասով չենք ուզեր ըսել, թե այն լույսե խորշելու է. ո՛չ բնավ, այլ երբեք մոռանալու չէ, որ լույսը հրդեհ ալ կրնա տալ» (էջ 176):

Հեղինակին ներկայացնելու, նրա գործերի ընդհանուր թերությունները մատնանշելու, արժանիքները վեր հանելու և գրողի տեղը գրականության մեջ ճիշտ որոշելու տեսակետից լավ օրինակ է Ոսկանյանի «Լաշամպոտի առակները» հոդված-տեսությունը, որ հանդեսում գրավում է ընդամենը յոթ էջ (էջ 203-209):

¹ Հր. Ասատրյու, նշվ. աշխ., էջ 107: Այստեղ, հակառակ բնագրի, նշվում է «Հայու մը կողմն» ձևով:

Նախ արժեքավոր են առակի ժանրի նրա գրականագիտական ըմբռնումը և դիտողությունները: Ապա նրա կարծիքով որևէ հեղինակի գնահատելու համար հարկ է ուշի-ուշով զննել նրա գործերի «հյուսը և կերպը», լավ պետք է քննել «արտաքին գեղը» և «ներքին շենքը»: Այլ կերպ վարվելը և դատողություններ անելն «անիրավ» է և «անբերրի», հղի է նույնպիսի սխալով, որ թույլ տվեց Շլեգերը Մոլիերի գնահատության ժամանակ: Լաշամպոտիի «առակները ոճով և հյուսով գրեթե կատարյալ են», բայց հնարքով թերի, նյութով հին և երբեմն էլ ընտիր չեն: Պակասավոր են նաև քաղաքական սկզբունքներով, որոնք հաճախ են հիշեցվում ու վնասում գործին: Իրոք, առակագիրը ձգտում է նպատակն անուղակիորեն խոցել, առակը չի կարող «պռռալ և գոռալ», այլաբանությամբ է խոսում, որ ընթերցողի միտքը հեղինակի կողմն է թեքվում: «Լաշամպոտին ազատությունը, մարդկային ազգը շատ կսիրե, թշվառ մարդերու և հարստահար ազգերու վրա շատ կգթա... այլ կտարակուսինք, որ առակագիրը ազատության ճշմարիտ թշնամին ճանչցած և մարդկային սեռի հառաջադիմության բուն արգելքը գտած ըլլա»: Դա չի խանգարում նրան բարձր գնահատել. «Լաշամպոտին ինք իրմե և իր քիրտով հառաջ եկած հեղինակ մ' է: Թշվառ ընտանիքի որդի...»:

Ոսկանյանը հիացած է այն բարոյականով, որն ընկած է Լաֆոնթենի «Ճպտոն ու մրջյունն»¹ առակին Լաշամպոտիի արած լրացման հիմքում. աղավնին կեր է տալիս անոթի ճպտոնին, որին մրջյունը չտվեց ոչինչ. «սա սիրուն հնարք է»: Եվ առհասարակ նա բարձր է գնահատում առակագրին, միաժամանակ մերժելով Լաֆոնթենին և Լաշամպոտիին իրար հետ համե-

¹ Ժամանակին, երբ դեռ սովորում էր Մեսրոպյան վարժարանում, Սո. Ոսկանյանն առաջինը մեզանում թարգմանել է «Ճպտոն ու մրջյունը» առակը (Տե՛ս «Արշալույս արարատյան», 12 օգոստոսի 1844, N 204): Այս առիթով նա քննադատեց և խոսում նրա տպագրության մասին: Այդ առակը մեզանում ունեցել է բազմաթիվ թարգմանություններ, որոնց համադրական քննությունը հետաքրքրական կլինի: Ի դեպ, Հ. Պարոնյանը «Ծիծաղում» քննադատի բերանով անդրադառնում է Լաֆոնթենի առակի այդ բարոյականությանը՝ նկատելով թե «ասիկա պարզապես թշվառն դատապարտել է» (Հ. Պարոնյան, ԵԺ, հ. 5, Երևան, 1965, էջ 130):

մատելու ֆրանսիական գրականության մեջ արված փորձերը: «Այսպիսի համեմատություն մը, – գրում է նա, – մեզի հիմնովին անտեղի կերևա. ամեն գովեստի չափ մը կա, անկե դուրս դատումը իր սահմանե կելլե... Իր սեռին մեջ Լաֆոնտեն անմասն և միակ է, անոր հետևի կարելի է, այլ հավասարվիլ ամենևին» (էջ 206): Ոսկանյանն իր տեսության մեջ «բառ առ բառ» քարգմանելով, տպագրում է «Ճպուռն ու մրջյունը» առակի Լաշամպոտիի լրացումը, «Փայտ և ածուխ», «Ծաղիկ ու ամպ», «Կաթիլ ջրո», «Գառնուկ և թուփ» առակները:

Հետաքրքիր դատողությամբ է Ոսկանյանը սկսում Հեծեզիք Մորոյին (1810 – 1838) նվիրված իր տեսությունը. «Հեղինակ կա հիմա Ֆրանսիայի մեջ, որ կենդանի աչքով իր գրագիտական մահը կդիտե և իր գիրքերուն փտելը կողբա: Ընդհակառակն անժանոթ անուններ կան, որ գերեզմանի մեջե կելնեն, և ոսկրերու փոշին թոթվելով, հարություն կառնեն իրենց գիրքերով: Հեծեզիք Մորոն այս ետքի կարգեն է»: Թշվառականի կյանքով է ապրել Մորոն, և կենդանության օրոք նրա անունը հազիվ էր լավում, բայց նա «ճշմարիտ հանճար մը և ահարկու դաս մը կպարունակե»: Դրա համար էլ նա Ոսկանյանի համար «կրկնակի» ուշագրավ է: «Ծաղիկ հասակում» մահացած հեղինակը հավատում էր, որ «ապագա սերունդը, ներկայեն ավելի արդար պիտի ըլլա»:

Ոսկանյանը գտնում է, որ նրա ոճը մեղմ է, պատկերները թարմ են, գույնը մաքուր է, «այլ իր նյութը մահ ու վրիժառու... և երբեմն ճշմարտություն է, իսկ հեռի կիյնա և կփրփրա»: Հանցանքը հեղինակինը չէ, «անոթութենե մեռնող հեղինակ մը այնպիսի իրավունք մը ունի»: Նրա թշվառության պատճառն, ըստ Ոսկանյանի, «ազատության անհազ սերն» էր, պատվի կիսաներ, եթե շողոքոթություն աներ և Լուի-Ֆիլիպին երգեր: Բայց «Հեծեզիք ավելի լավ համարեց ազատ և թշվառ մեռնիլ, քան թե իր քնարը արատել և սիրտը վաճառել: Ազատության ճշմարիտ սիրահարները մեկ ապավեն մը ունին միայն՝ մահը» (էջ 265): Այսպիսով, «վաղավեր կյանքով» ապրած քանաստեղծի մահը Ոսկանյանը դատավճիռ է դարձնում ընդդեմ նրա պատճառը եղող իրավակարգի, նույնիսկ Եվրոպայի, չոր միայն արտաքննապես է փայլում:

Գրական դեմքերին նվիրված տեսությունների շարքում առանձնահատուկ տեղ ունի Ադամ Միցկևիչին (1798 – 1855) նվիրված Ստ. Ռսկանյանի հոդվածը: Լեհ ականավոր գրողի ու գործչի կենսագրությունը, նրա ստեղծագործության քաղաքական երանգը կանխապես տրամադրել են Ռսկանյանին՝ ջերմությամբ, սիրով ու գուրգուրանքով գրել Միցկևիչի մասին, նաև առիթ տվել երևան հանել իր մտահայեցությունը: Ռսկանյանը Միցկևիչին համարում է «Երևելի բանահյուս», նրա մահը Լեհաստանի համար «անդարմանելի կորուստ մ է», մեծ հարված նրա վտարանդի հայրենակիցների համար: Նա դարաշրջանի լեհական «առաջին կարգի հեղինակն է», «անվանի անձ», նրա «վառվառն և սիրուն երևակայությունը» քչերն ունեն:

Ռսկանյանը մատնանշում է, որ «իր հայրենիքը սիրելուն» և անոր ազատությունը փափագելուն համար «Միցկևիչը ենթարկվել է «անխնա» հալածանքի, բանտարկվել, արքայի դատապարտվել: Արտասահման անցնելուց հետո էլ Միցկևիչը շարունակել է պայքարը. 1830-ին նա այն լեհ վտարանդիների հետ էր, որոնք գեներ ձեռքներին իրենց «ազգություննին և ազատություննին խնդրեցին»: 1840-ից նա Ֆրանսիայում, էր և դասավանդում էր կոլեժ դը Ֆրանսում, Միշլեի և Քինեի բարեկամն ու մտերիմն էր: Բայց, կրոնական հալածանքի ենթարկվելով, նա դասատուի պաշտոնը կորցրեց: Ռսկանյանին հայտնի է նաև, որ Միցկևիչը ֆրանսիական կառավարության հանձնարարականով է մեկնել Թուրքիա, որտեղ և մահացել է. «Շատ հույս կար, որ իր ուղևորությունը ունայն չպիտի ելլեր», – գրում է Ռսկանյանը՝ առիթ տալով ենթադրելու, որ իր համար գաղտնիք չէր Միցկևիչի առաքելության նպատակը և որ համակրանքով է վերաբերվում նրա գործունեությանը, թեև Թուրքիայում ապաստանող լեհ տարագիրներից լեզեոն ստեղծելու նրա ջանքերը, Գերցենի արտահայտությամբ, «անհեթեթ գործի» մասնակից դառնալուց ավելին չէր: Նույն միտումն է նա երևան հանում, երբ թվարկում է Ադամ Միցկևիչի գործերը, այն գրքերը, որոնք լեհերը «կարգե դուրս կսիրեն»: Ռսկանյանը սիրո մեծ արտահայտություն և

գրողի հիշատակի գնահատություն է համարում, որ «Բարիզի մեջ արքայալ լեհագրիները... քանի մը օրեն 100.000 ֆրանք ժողովեցին»¹ բանաստեղծի ընտանիքի համար (էջ 380)¹:

Նույնպիսի միտվածությամբ է Ոսկանյանը լուսարանել նաև հայտնի քանդակագործ Դավիթ դը Անժեի (1808 – 1856) կյանքն ու գործունեությունը՝ դարձյալ մահվան առիթով: Նա հարկ է համարում հիշատակել, որ քանդակագործի թաղմանը ներկա էին Քավենյակ գորավարը, Բերանժեն, Միդլեն, Պ.Դյունան՝ «Գրեթե բոլոր երևելի հանրապետականները», ավելացնենք՝ նաև ինքը՝ Ստ. Ոսկանյանը, որ անձնապես ծանոթ էր Դավիթ դը Անժեին, առավել ևս նրա գործերին: Համենայն դեպս նա հնարավոր մանրամասներով ու որոշակի միտումով է ներկայացնում քանդակագործի ուղին: Այլ կերպ Ստ. Ոսկանյանը վարվել չէր կարող: Ահա Դավիթ դը Անժեն Ոսկանյանի ներկայացմամբ.

Թաղմանը մասնակցող «ընտիր բազմությունը» պատվում էր ոչ միայն քանդակագործին, այլ նաև «ազատական, հայրենասեր և վեհ բարքի տեր մարդու մը»: Ապագա քանդակագործը Փարիզ է ոտք դրել գրպանում ունենալով 50 ֆրանկ, իր գոյությունը պաշտպանել է աշխատանքով՝ վաստակելով օրական մեկ ֆրանկ: Շուտով Դավիթ դը Անժեն արժանացավ Հռոմի մրցանակին, իսկ 1825-ին՝ Պատվո նշանի, մի տարի հետո ընտրվեց ճեմարանի, իսկ 1848-ին՝ ազգային ժողովի անդամ: Բայց այդ տեղեկությունները Ոսկանյանը հաղորդում է ճեպընթաց: Նրան ավելի հետաքրքրում են քանդակագործի կյանքի դիմագիծը. «1830-ին ազատության համար սպառնազեն՝ նահատակներու հետ թև առ թև կկռվեր... 1851-ին ազատության համար արքոր կերթա Վ.Հյուկոյին,

¹ Ոսկանյանի ջերմ գնահատությունը, ինչպես և Սենտ-պարալիում նրա սովորելու վարկածը, առիթ է տվել որպեսզի աստիճանաբար ամրապնդվի կարծիքն այն մասին, թե նա անձնապես ծանոթ է եղել Ադամ Միցկևիչի հետ: Սակայն որևէ փաստական հիմք դրա համար չկա, վերոհիշյալ հողվածից նույնպես չի երևում, թե Ոսկանյանը որևէ անմիջական շփում է ունեցել լեհ գրողի հետ: Այս պատճառով տեղին չպիտի համարել Ս.Շտիկյանի նամակի երևան գալը. "Дружба народов" հանդեսում (1978, N 5)՝ լեհ բանասերներից ուղղված կոչով՝ երևան հանել Ոսկանյանի և Միցկևիչի բարեկամական կապերը:

Թիերին և այլն հետ»:

«Զինքը մեկ անգամ տեսեր ենք, այլ այնպիսի վեհ պարագայի մեջ, որ բնավ չի պիտի մոռնանք», – գրում է Ռսկանյանը՝ չբացատրելով «վեհ պարագան», հասկանալ տալով ընթերցողին, թե խոսքը սովորական հանդիպման մասին չէ, նաև խոստանալով «ուրիշ անգամ» խոսել քանդակագործի ստեղծագործության մասին: Բայց և շեշտում է, թե «Ֆրանսիայի, որ կողմը դառնաս իր ճարտար մատերու արդյունքը կգտնաս»: Նա հիշեցնում է քանդակագործի մասին հայտնված կարծիքները: Գուստավ Բլանշը, օրինակ, նկատի ունենալով Հունաստանի ազատագրական պայքարի վեհ հերոս Մարկոս Բոցարիսի մահարձանը, որ Դավիթ դը Անժեն նվիրել է Հունաստանին, ասել է. «Եթե այս արձանը օր մը փլատակներու մեջ թաղվի և անհետ ըլլա ժամանակ մը, նորեն գտնվելու ատենը անտարակույս արհեստավորները հին հրաշակերտ մը պիտի համարին զան...»: «Այս երևելի անձի» մյուս «ընտիր և հրաշալի» գործերից Ռսկանյանը շեշտում է Փարիզի «Պանթեոնի ճակատը», որին փորագրված է՝ «ՎԵՀ ՍԱՐԴԵՐՈՒ ԷՍՅՐԵՆԻՔՆ ԵՐԱԽՏԱԳԵՏ»: Այս գործի առթիվ Ռսկանյանը իր լակոնիկ ոճով գրում է. «Անհնարին է, որ ճամբորդ մը զան տեսնելով ի բերան չի զմայլի»:

Նկատելով, որ Դավիթ դը Անժեի գործերին «գրեթե թիվը չի կա», Ռսկանյանը դրանցից շեշտում է միայն այդ երկուսը, անշուշտ. դրսևորելով իր միտումը՝ պատշաճը հատուցել ազատության համար պայքարի զոհերին մեծարող արվեստագետին: Այս նույն տեսանկյունով է նա վերհիշում քանդակագործի մասին շրջող «հազար և մի» լեզենդներից մի քանիսը: Այդ լեզենդները նույնպես վկայում են նրա «հայրենասիրության և բարերարության» մասին: Հիշատակվող լեզենդներից մեկում պատմվում է այն մասին, թե ինչպես է նա օգնել «Մարսելեզի» հեղինակ Ռուժ դը Լիլին, երբ նա կիսամեռ վիճակում էր, որով նրան «մահեն կազատի և իր հայրենիքը ապագա նախատինքն մը, որ քսան տարի անոր երգով աշխարհի հաղթել էտև հեղինակը երեսի վրա թողեր էր»: Մյուս պատումը նույնպես սքանչելի է բնորոշում Դավիթ դը Անժեին, և Ստ. Ռսկանյանը դա ևս հիշատակում է իր իսկ բուն վերաբերմունքն արտահայտած լինելու համար. «Տա-

վիտ Իտալիայի մեջ իր ուսումը կատարելե ետև, – պատմում է Ռսկանյանը, – Լոնտրա կերթա և այն աստիճան թշվառության մեջ կիյնա, որ հացի կկարտոխի: Այն ատենները Անկլիան Վուադեյլոյի պատերազմին համար հիշատակարան մը կանգնել կուզե: Երևելի մարդիկ կուզան Տավիտին կառաջարկեն անոր կատարումը. ասիկա կմերժե և հայրենիքին հիշատակը հավերժացնելու ճամբով ստակ շահելի իրեն անարժան համարելով, հագուստը կվաճառե և Ֆրանսա կդառնա»: Վերջում քանդակագործի դիմագծին Ռսկանյանը լոկ մի խոսուն շտրիխ է ավելացնում՝ «հանրապետական էր...» (էջ 383)¹:

Ռսկանյանի նպատակը հայ ընթերցողներին Ֆրանսիայի, իր խոսքով ասած, երևելի գործիչներին ներկայացնելը չէր միայն: Նա, ինչպես տեսանք, գիտակցաբար ընտրում ու պրոպագանդում էր այնպիսի օրինակներ, որոնք նրան օգնում էին վեհ հատկանիշներով սոցորել հայ ընթերցողներին, ամրապնդել բուն հայրենասիրությունը, ներշնչել պայքարի ոգի, ազատասիրություն: Միաժամանակ նա փորձում էր տեսական հասկացություն տալ առանձին կատեգորիաների, ասենք ազատության մասին: Այս դեպքում նա դիմում է բուրժուական քիչ թե շատ հայտնի մտածողների, օրինակ Ժյուլ Միժնի օգնությանը: Առհասարակ իր մյուս ուսուցիչներից Ստ. Ռսկանյանն ամենից շատ ենթարկվել է ֆրանսիական բուրժուական այս գաղափարախոսի ազդեցությանը, որից, կարելի է ասել, նա չի ազատագրվել նույնիսկ մինչև կյանքի վերջը: «Մենք, – խոստովանել է Ռսկանյանը, – իր հանճարին և մանավանդ անձին վրա շատ համարում ունինք»:

Ժյուլ Միժնը «նշանավոր գիրք է հրատարակել «Պարտ» («Պարտականություն») խորագրով: Այդ գիրքը «հասարակությանը հաճելի եղավ», և ֆրանսիական ակադեմիան արժանացրեց մրցանակի: Ռսկանյանի համար դա բավարար առիթ էր և՛ հեղինակին, որ իր դասախոսն էր, և՛ նրա գիրքը հայ ընթերցու-

¹ Ռսկանյանի ընդգծված ջերմ վերաբերմունքը Դավիթ դը Անժեի նկատմամբ ավելի ակնառու է դառնում, երբ նրա հողվածը համեմատում ենք Գ. Այվազովսկու «Մասյաց աղավնիի» 1856թ. առաջին համարում (էջ 12) լույս տեսած հողվածի հետ, թեև վերջինս ևս նշում է նրա «հասարակապետական» կարծիքները: Ըստ որում Այվազովսկին հանդես էր գալիս «Արևելքի» հողվածից մեկ ամիս հետո:

ղին ներկայացնելու համար: «Վ.Մ.» ծածկանունով առանձին հոդված հրատարակելով, նա հպանցիկ տեղեկացնում է, որ Ժյուլ Միմոնը Փարիզի համալսարանի «գիտուն դասատուներն մեկն էր», փոխարինել է Քուզենին՝ դասավանդելով փիլիսոփայություն, որ ունկնդրել է նաև Ոսկանյանը: Ինչպես ուսանողական տարիներին, այնպես էլ սույն հոդված գրելու ժամանակաշրջանում, «Քուզենի փիլիսոփայությունը չենք ընդունիր, եթե երբեք այս երևելի իմաստակը փիլիսոփայությունն մը ունեի իր կյանքի մեջ»: Ժյուլ Միմոնը, որ քաղաքական պատճառներով թողել է դասախոսական աշխատանքը, իր սկզբունքներով «շատ հեռու» է Քուզենից: Դա «ճշմարիտ ուրախություն» է պատճառում Ոսկանյանին, թեև տրտմում է տեսնելով, որ նա երբեմն «Քուզենին ետևե կքալեր», «Ետադեն մարդերու ձեռք կկարկառեր»: Այդուհանդերձ, նա բարձր է գնահատում իր ուսուցչի գիրքը, որ գրված է «վառվառն ոճով», հստակ սկզբունքներով, ազատ ու ճշմարիտ քննության հիման վրա:

«Ի՞նչ է ազատությունը» գլխավոր հարցին պատասխանելով, գրքի հեղինակը խնդիրը քննում է բազմակողմանիորեն: Ոսկանյանը, սակայն, ընդգծում է հեղինակի այն դրույթները, որոնք նվիրված են մարդու մտքի ազատությանը. «Մարդու միտքը միշտ ազատ է, նաև բանտին հատակը, շղթաներու ներքև և կապերու մեջ: Ամենն ահարկու բռնակալը անոր մարմինը միայն գերի կընե, անոր կամքը զսպել կընա, այլ միտքը անըմբռնելի է»: Այս գաղափարն իր ընթերցողներին պրոպագանդելով, ինքը՝ Ոսկանյանը թերևս նրանցից ավելի հաստատորեն է ժառանգել ու կիրառել՝ իբրև գործունեության ելակետային սկզբունք: Իր հիմքով իդեալիստական այդ սկզբունքը, սակայն, նա ավելի շուտ գործնական նպատակով էր որդեգրում, քան իբրև տեսական դրույթ: Արևմտահայ ընթերցողը դեռևս չէր թոթափել միջնադարյան խավարի կնիքը և սուլթանական Թուրքիայի պայմաններում գտնվելով, անհետաձգելի կարիք ուներ նման դասերի. նա պարզապես պետք է սկսեր մտածել՝ գիտակցելով մտածելու, միտքը շարժելու իր իրավունքն ու կենսական անհրաժեշտությունը:

Այդ նպատակով էր հենց Ոսկանյանը թարգմանում և իր

ընթերցողներին մատուցում Ժյուլ Սիմոնի հետևյալ խոսքերը. «Ազատության հավատքը ջնջե՛, և մարդկային ընկերությունը հիմն ի վեր կթավախի: Առանց ազատության ոչ իրավունք կա, ոչ պարտք (Levoirs), ոչ երդում, ոչ արդարություն, ոչ պարտավորություն, ոչ ոճիր, ոչ առաքինություն, ոչ ներում և ոչ տրիտուր... Չեմ կրնա սիրել, չեմ կրնա պաշտել (adorer), չեմ կրնար աղոթել, եթե ազատ չեմ»:

Հեղինակը, ըստ Մտ.Ոսկանյանի, միայն գովեստի է արժանի և նա հրավիրում է «բոլոր ուսումնականները այս գիրքի վրա խորհիլ, երկարորեն խորհիլ, վասընզի, վերիվերո կարդալը չի բավեր»: Այլ է վեպ կարդալ, այլ՝ փիլիսոփայական երկ ընթերցել, փիլիսոփայության շնորհիվ մարդու միտքը «կմխիթարվի, կսքափի, կքաջալերվի և ազնիվ կիրքերը կարթնցնե, որք մեր ժամանակը և մանավանդ մեր ազգին մեջ կիսամեռ կխորտան»։ Նա ցանկանում էր, որ «մեր ազգայինները» իմանան ու զինվեն բարոյական սկզբունքներով, որպեսզի «ազգին վերքերու վրա ուրիշ վերք մ'ալ չավելանա» (էջ 379):

Այդ նույն մտահոգությամբ էր Ոսկանյանը ձեռք գարկում նաև Ֆրանկլինի մի գրվածքին ու հրատարակությանը՝ փոքրիկ նախաբան կցելով թարգմանությանը: «Արևելքի» ընթերցողներին նա տեղեկացնում է, որ Ֆրանկլինը նաև փիլիսոփա-բարոյագետ է. նրա գրվածքները «ճշմարիտ սփոփանք կտան», որովհետև դրանցում կան «բարության սերը և ազատության փափագը», հաստատվում են հավասարության ճշմարտությունը, ազատության, պաշտպանության անհրաժեշտությունը. իբրև փիլիսոփա, գիտուն և բարոյապես Ֆրանքլեն ընդհանուր մարդկության փառքն է և «անոր ազատության և բարության համար աշխատող նահատակներեն ամեններևելին»: Ահա ինչու Ոսկանյանը գրում է, թե «կփափագեհինք, որ Ֆրանքլենի ընտիր բարոյականը, որ իր սիրուն հողվածներու մեջ կտեսնվի և որ իր ազնիվ սիրտին օրինակն է, մեր ազգին մեջ տարածվին» (էջ 147): «Քաղաքական խնդիրներու վրա գրելու իրավունք» չունեցող հանդեսի խմբագիրն այսպիսի ձևերով և այսպիսի հմտությամբ պրոպագանդում էր այն գաղափարները, որոնք նպաստում էին հայ հասարակական և ազգային-ազատագրական մտքի հասունացմանն ու ծավալմանը:

Ոսկանյանն իր բեղմնավոր գրիչն ի սպաս է դրել հայ ժողովրդին: Բայց նրա համար գրելով, հրապարակախոսը հաճախ ակնարկում էր, որ հենց դրա պատճառով իր գրիչը կաշկանդված է, չի կարող ամեն ինչ գրել և գրել այնպես ինչպես կցանկանար: «Հայ բանադատը, – գրել է Ոսկանյանը» – հետաքրքիր վիճակի մը մեջ կգտնվի մեր օրերը և ստուգիվ ո՞ր կողմը դառնալը և ի՞նչ կերպով իր պաշտոնը կատարելը ինքն ալ լավ մը չիտե: Եթե փորձի հեղինակի մը գիրքը դատել կամ բանասերի մը հողվածը քննել, եթե քիչ մը ազատորեն իր կարծիքը հայտնե և եթե պակասություն կամ թյուր կարծիք մը երևան հանե ու հերքե, շուտով ինքը թշնամի կհամարվի, կամբաստանվի և կդատապարտվի անողորմաբար: Հայու մը համար գիրք մը քննել և անոր դեմ ուղիղ դատում մը ընելը հեղինակին թշնամություն ընել կամ անոր հողը փորել է՝ չար միտքով և չար կամքով» (էջ 294):

Այդ ծանր վիճակում էր գտնվում նաև Մտ. Ոսկանյանը: Նա պետք է հաշվի առներ բոլոր այդ պարագաները, նաև հայ գրաքննադատական միտքը խթանելու համար շիտակությամբ բացահայտեր տիրող իրավիճակը: «Դատական» ընդհանուր վերնագրով նրա հողվածը հենց դրան է նվիրված: Նա տարանջատում է հեղինակի անձնավորությունը նրա իսկ գրքի «տեսիլներից»: Առաջինը կարող է շատ հարգելի լինել, իսկ գրքի սկզբունքները՝ «արատավոր», «Հայը չի հասկանար կամ չուզեր հասկնալ այս հասարակ ճշմարտությունը, գովե՛ կամ լռե՛. ահա այս է իր այժմյա կամքը»:

Հայ գրաքննադատության այդպիսի վիճակն արձանագրելով՝ նա ծառանում է նման «բռնակալ կամքի մը» դեմ և հարցն ուղղակի դնում. «Լռե՛ կամ գովե՛ այլ երբ գովելը դժավարին է և լռելը անհնարին, ի՞նչ ընելու (է) արդյոք»: Հարցը՝ «Ինչ ընելու է», գրեթե ճակատագրական էր Մտ. Ոսկանյանի համար ու մշտապես ուղեկցել է նրան: Իսկապես, ի՞նչ պետք է աներ հրապարակախոսը. «Չի հասկանալու գուրկ, կըսե հայը, այսինքն կամալ տգետ եղիր»: Ոչ, -- հռչակում է Ոսկանյանը և բացատրում. «Այլ սօգիտությունը ամոթ է և երբ մեկը արյուն ու քիրտ քափեր է լուսավորվելու համար, երբ մեկը գիտություն մը ունի,

չի հասկնալը նախատինք է և հետևաբար անհնարին»։ Չտեսնելու դնելը կույր ձևանալ է, բայց «ամեն մարդու տվյալ չէ կույր ըլլալ», մանավանդ, որ կուրությունը տանում է դեպի խորխորատը, «սուտ գովեստը փաղաքշություն է», իսկ «լռությունը համր վիճակ»։ «Ի՞նչ կուզե թող սեպվի, գլուխ մի ցավցներ, կըսե հայր, և կսկսի սալառնալ»։ Գրաքննադատն այդպես վարվել չի կարող և «երբեք Եվրոպայի մեջ հանձն չառնուր զանի»։

Նույնքան դժվար է նաև օտար հեղինակների գրքերը գրախոսել, քննել և հայ ընթերցողին ներկայացնել. ընթերցողը չգիտե «ոչ գիրը, ոչ հեղինակը և ոչ անոր ոճը»։ Գրաքննադատը «ի՞նչ օրենքով դատե և ի՞նչ կերպ վճիռ տա, երբ հայը իր կամքը օրենքի տեղ կդնե և խոսք մտիկ ընել չուզեր» հարցադրումով, ավելի է սրում խնդիրը և ցույց տալիս, որ «Ասիայի այլանդակ կերպերու հպատակվելու» պահանջն անընդունելի է և «մարդը մարդութենե կհանե»։ Գիտություն ձեռք բերած մարդը, եթե գիտակցում է իր արժանապատվությունը, «ադամանդե շոթայի մը անգամ ներքևը չի մտնար», իսկ եթե նա իր գիտելիքներն անարժան ձևով գործածի, ապա նա գերիեն ալ վար է ու ներում չունի»։ Այդ դեպքում «հրաժարիլը ընտրելի է», սակայն, «երբ թշվառ և անապավեն ազգի մը ապագա գրագիտությունը անբերրի փուշերով կպաշարվի և երբ այն փուշերը միտքը ու սիրտը խեղդել կապառուան, հայրենասեր սիրտ մը անզգա չի կրնար մնալ և հրաժարումը տալե առաջ վայրկյան մը կխորհի և իր չորս դին կնայի»։ Այդ դեպքում նա պահանջ է զգում «վտանգի զանգակը» մի անգամ ևս հնչեցնել՝ հուսալով, թե զուցե «այն զանգակը հարության հնչյուն մը տա»։

«Արևելքի շարագիրը այս վիճակի մեջ կգտնվի հիմա», – բացելիքաց գրում է Ռսկանյանն իր մասին։ Հակառակ իր անձնական շահերի, նրան մտահոգում է գրաքննադատության զարգացումը, որովհետև համոզված է՝ քանի դեռ «դատականը մեր ազգին մեջ չի մտնա, արմատ չի գտնե, չի մշակվի, մեր ազգը ոչ առաջ երթալիք ունի և ոչ տոհմային գրագիտության մը տեր ըլլալու է երբեք»։ Ուստի և նա ուշքի գալու կոչ է անում, գտնում է, որ պետք է վերանալ անձից և նրա «տեսիլը քննել», որ «ճշմարիտ և հուռթի բանակոխվը մեր մեջն ալ մտնա և զմեզ անձնական կռիվներն ազատե»։ Նման զոհ ազգի շահն է պահանջում,

անհրաժեշտ է ազատվել սոցիալիստական խավարից և ըմբռնել, որ «լուսավորությունը կարծիքներու ընդհարումն ծագելու է»:

Գալով կոնկրետ փաստերին Ռսկանյանը հիշեցնում է, որ մեկուկես դար է, ինչ Մխիթարյանները «ապականում» են հայ ժողովրդի միտքը, ձգտում են այն տուգորել «հռոմեական թքվաշ խմորով», «պատմությունը, փիլիսոփայությունը, գրագիտությունը կենեզեն... մորալ ճամբա մը ցույց կուտան անոնք և ռամիկը համոզել կջանան, ճշմարտության արահետն է այն...»: Ու Ռսկանյանը մեկը մյուսի ետևից մեջտեղ է հանում փաստերը:

Հրատապ խնդիր համարելով գրաքննադատության՝ «արիաբար» մեր ժողովրդի մեջ ներդնելը և այն «ազգին արտաքին ու ներքին թշնամիներու դեմ» գործադրելը, Ռսկանյանը նշում է նաև այն բնագավառները, որտեղ «ճշմարիտ գրագիտությունը» անհետաձգելի անելիքներ ունի. հեռացնել «հռոմեական որոմը», տարածել «ճշմարիտ գրագիտությունը և փիլիսոփայությունը», ազատել «հայկական միտքը... սուտ կարծիքներու» գերությունից, օգնել թափառական ազգին գոհնե մտքով «կանգնի» և «ազգության արտաքին շենքը ու շնորհքը առնն»:

Իր հարցադրումները՝ ժողովրդի լուսավորության համար գրաքննադատության ունեցած նշանակությունն ու անհրաժեշտությունը համարձակորեն առաջ քաշելիս, Ռսկանյանն ուներ նաև, այսպես ասած, անձնական պատճառներ: Նրան ինչ-ինչ մեղադրանքներ էին ներկայացրել իր գրադատականների առթիվ, և նա գրում է, թե հայերը «տակալիին ազատությունը կատեն և չեն ներել, որ բանասեր մը երկու տող ազատ բան մը գրեն և այն՝ երբ Ֆրանսայի տերությունը կներեն և օսմանյան պետությունը չընդդիմանար»: Այդ ելակետից էլ նա կոչ է անում հայրենակիցներին՝ «հերիք է, ժամանակը եկավ, որ սքափինք, նայինք դեպի ապագան և ոչ դեպի սուտ նախապաշարումները»... ազատասեր լինենք, որ ազատության արժանանանք (էջ 299):

Հայ քննադատական մտքի զարգացման վաղ շրջանի պատմության մեջ իսկ «հայ իրականության մեջ այն ժամանակ քննադատություն չկար»¹, չափազանց սակավաթիվ են այնպիսի օրինակները, երբ միանգամայն ճիշտ դիրքերից վեր է հանվում

¹ «Հայ նոր գրականության պատմություն», հ. 2, Երևան, 1962, էջ 231:

գրաքննադատության ընդհանուր և գործնական դերը մեր ժողովրդի առաջադիմության, նրա տեսական մտքի արթնացման ասպարեզում: Դրան զուգընթաց, Ոսկանյանն իր հանդեսի էջերում զարգացնում էր հայ քննադատական միտքը, ծավալում առողջ գրաքննադատություն՝ գրեթե սնդրանիկ քայլերն անելով այդ ուղղությամբ: Այդ ընթացքում նա, անշուշտ, ընկել է ծայրահեղության մեջ, իսկ Մխիթարյանների մշակութային գործունեության գնահատության հարցում նույնիսկ գրավել է ժխտողական դիրք՝ թույլ տալով անգիջում խիստ դատողություններ, որ մերժելի են: Բայց տվյալ դեպքում նա ղեկավարվում էր կրոնադավանաբանական գաղափարախոսության դեմ պայքարի տրամաբանությամբ և ոչ թե մշակութային արժեքների և առհասարակ գրական հրատարակությունների պատմական նշանակության գնահատության սկզբունքով: Այդուհանդերձ, գրաքննադատական իր տեսություններով Ոսկանյանը նշանավորում էր հայ քննադատական մտքի լինելիության ու հասունացման շրջանը, իսկ շատ չանցած, երբ երևան եկավ հայ նոր գրականության դարակազմիկ առաջին երկը՝ Խ.Աբովյանի «Վերք Հայաստանին», առաջինը նա եղավ, որ հանդես եկավ ծանրակշիռ գրաքննադատական ծավալուն քննությամբ, որ նրա գրականագիտական մտքի պսակն է և որով, կարող ենք ասել, նա հիմք դրեց հայ նոր գրաքննադատությանը՝ մերօրյա արժեքագիտությունը այդ բնագավառում լծակից դառնալով Մ.Նալբանդյանին՝ բնավ չհասավ նրա գեղագիտական ըմբռնումների մակարդակին:

Մ.Նալբանդյանը, ինչպես Ստ. Ոսկանյանը, գրաքննադատության ասպարեզում ոտք դնելիս գտնվում էր դժվարին վիճակում: Ստ. Նազարյանի աշխատասիրության գրախոսականը, գրած 1857-ին, նա ստիպված էր ուղեկցել նախաբանով, որպեսզի բացատրի գրաքննադատի վիճակը: «Մեր ազգի մեջ, – գրում է նա, – մի սխալ կարծիք է տարածված, թե կրիտիկական վատ բան է, թե նա մարդ է խայտառակում, թե նա, հեղինակի պակասությունները երեսին զարկելով, ծիծաղում է նորա վերա և ցույց է տալիս հասարակությանը մի այսպիսի հեղինակի տգիտությունը որևիցե բանի մեջ»: Այդ վիճակը պարտավորեցնում էր երկարորեն բացատրել գրաքննադատության (կրիտիկա) դերն ու նշանակությունը՝ ասելով, որ այն «մի սուրբ և անկողմնապահ

դատաստան է», «բացում է ընթերցող հասարակության աչքը», «իսկույն փակում է մոլորյան ճանապարհը», «գարթեցնում է ընթերցողների հոգին, գրգռում է և ջերմացնում է նոցա սիրտը», «բարոյապես սրբում է աշխատողի ճակատի բրտինքը և քաջալերություն է տալիս նորան», «լինում է զգուշացուցիչ առաջնորդ հասարակության համար»: Գրաքննադատությունը, ըստ Նալբանդյանի, ինչպես և դա դիտում էր Ստ. Ոսկանյանը, բացահայտում է տվյալ ազգի «տեսության և հայացքի պարզությունը կամ պղտորությունը». «Այն ազգը, որ չունի կրիտիկա, չունի և մատենագրություն», – հռչակում է Նալբանդյանը և «սիրտը արյունով» լի հայտարարում, որ չի կարող ասել, թե «մեր ազգը ունի մատենագիտություն»: Այստեղ էլ նա, ինչպես արել էր Ոսկանյանը, անդրադառնում է «վիեճնացուն», որ «բարձրաձայն գոռում է», «թե կար մատենագրություն և այն շատ ծաղկած, Մխիթարյանց շնորհքով»¹:

Եվ այսպես, թեև 2-3 տարով իրարից բաժանված, կարծես ձեռք ձեռքի տալով, Ոսկանյանն ու Նալբանդյանը, ճիշտ է, ոչ համահավասար մակարդակով, դնում էին գրաքննադատության տեսական ու գործնական հիմքերը և իրենց գրախոսականներով նպաստում թե՛ այդ գրական սեռի և թե՛ նոր գրականության զարգացմանն առհասարակ: Ասենք և այն, որ նրանք հատուկ ուշադրություն էին դարձնում նաև թատրոնին՝ «ապոլոնյան հայելուն», ինչպես ասում էր Նալբանդյանը: Այն ժամանակ, երբ գրում էր Ստ. Ոսկանյանը, ճեռ իսկական իմաստով հայ թատրոն չկար և, ի տարբերություն Նալբանդյանի, որ 1859-ին Մոսկվայում, իսկ 1861-ին՝ Կ.Պոլսում դիտել էր հայկական թատերական ներկայացումներ և դրանց նվիրված հոդվածներում իր հայացքներն արտահայտել թատրոնի մասին, Ստ. Ոսկանյանը՝ մման առիթներ չունենալով, թատրոնի մասին արտահայտվում էր առհասարակ և պիեսների թարգմանությամբ նրա զարգացմանը անուղղակի նպաստելուց բացի, ընդգծում էր նաև նրա դերն ու նշանակությունը՝ միշտ հետապնդելով նույն նպատակը՝ սատարել հայ դրամատուրգիայի ու թատրոնի առաջընթացին ու նրանց դերի ըմբռնմանը:

¹ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 2, Երևան, 1947, էջ 142-146:

Դյումա-որդու կատակերգությունը վերաշարադրելուց հետո Ոսկանյանը ցանկություն ուներ արտահայտել նաև իր խոհեքը, բայց գտնում էր, որ ասվածից ավելին գրելը «ներելի չէ, վասնզի մեր մեջը ոչ թատր կա և ոչ թատրերգու հեղինակ մը, հետևաբար անօգուտ բան մը կըլլա եթե երկար ու մանր դատում մը ընել ուզենք»: Յավով նա արձանագրում է, որ «հայ ազգին համար գրելու ատենը գրիչ մը միշտ գերի կմնա» (էջ 179), հակառակ դրան, Ոսկանյանը խնդրում է ֆրանսերեն իմացող հայերին՝ «ուշի ուշով կարդալ» պիեսը, որովհետև «աղվոր գրված և ճարտար հյուսված» լինելուց բացի, այն Փարիզի վարք ու բարքը «ճշդիվ կը հայտնեն և կնկարագրեն», այսինքն՝ ռեալիստական է: Նա Ֆրանսիայի իրօրյա դրամատուրգիան բաժանում է երկու խմբի՝ մեկը որ հիմնված է «տեսաբանի զարդերու, պետկերներու և կեղծիքներու» վրա, մյուսները, որ «գրական... սիրուն հյուս և ճարտար շենք մը ունին... և միայնության մեջ անգամ գրագետի ճշմարիտ զրոսանք կուտան»: Քանի որ հայկական թատրոն չկա, գերադասելի են վերջինները, թեև սակավաթիվ են: «Արևելքը, – նույն «գերի գրչով» գրում է Ոսկանյանը, – կջանա երկրորդ տեսակի հեղինակները մեր ազգին ճանչցնել և հույս ունի, որ իր ջանքը ի դերև չի պիտի ելլէ, վասնզի թատրը լուսավորության և արհեստի (իմա – արվեստի – Մ.Հ.) վառարան մ՝ է և այս վառարանը մեր մեջն ալ հարկ է, որ գտնվի, եթե ի բոլոր սրտե կվափագինք մեր գրագիտության ոգի մը տալ» (էջ 404):

Այդպիսով, թատրոնի նշանակությունն ընդգծելու հետ միաժամանակ, Ոսկանյանը շոշափում էր նաև դրամատուրգիայի, հետևապես նաև թատրոնի՝ բեմական արվեստի ուղղության հարցը, որ պետք է ունենա «ճշմարիտ շենք մը» և դառնա «լուսավորության և արհեստի վառարան մը»:

Ինչպես տեսանք «Արևելքը» ստեղծել էին մի խումբ համախոհ, բայց ոչ լիովին համակամ և համամիտ երիտասարդներ: Դա նկատելի է հանդեսի էջերում բառամեջ երբեմն արվող այն ակնարկներից, թե հանդեսի բոլոր խմբագիրները մինևույն կարծիքին են կամ նրանից, որ մերթընդմերթ նյութերում խոսվում է «առաջին շարագրի»՝ Ոսկանյանի անունից: Հյուսիսի այդ հիմնադիրներից նրա էջերում նյութեր էին հրատարակում միայն

մեկ-երկուսը: Ավելի հաճախ էր հանդես գալիս Հ. Թյուսյուզյանը¹: «Արևելքի» օգոստոսյան համարում նա հրատարակել է «Մարդաբանություն» նկարագրական ոչ մեծ հոդվածը, ապա փոքրիկ հաղորդումներով՝ վաճառվող ապրանքների զների քանկության և դեպի Ալժիր կատարվող հայերի գաղթի մասին: Ավելի արժեքավոր է նրա ծավալուն ուսումնասիրությունը լեղակի մշակության և արտադրության մասին, որ հրատարակվել է «Երկրագործական» ընդհանուր խորագրի տակ՝ «Արևելքի» N 12-14-ում: Հանդեսի խափանման պատճառով ուսումնասիրության տպագրությունը մնացել է անավարտ: Մի քանի հաղորդումներ նա զետեղել է հանդեսի վերջին՝ 14-րդ համարում՝ բոլորն էլ գիտական բնույթի:

Այնուհետև հանդես են եկել Տ.Յուսուֆյանը՝ «Կարմիր ֆոսֆորի» մասին հաղորդումով, Տ.Փռշտիմալ՝ Կոռնելին նվիրված հոդվածով, Հ.Փիրիմյանը՝ թարգմանություններով: Ուրիշ հեղինակ կամ աշխատակցող «Արևելքը» չի ունեցել (մեկական անգամ հանդիպող «Ա.Գ.» և «Վ.Մ.» սկզբնատառերով ծածկանունները ևս պատկանում են Ստ. Ոսկանյանին):

Այդպիսով, «Արևելքը» գրեթե ամբողջապես գտնվում էր Ոսկանյանի տնօրինության ներքո և հանդեսի ընդհանուր դրվածքը, նրա բուն դիմագիծը Ոսկանյանի խմբագրական գործունեության ու հմտության արդյունքն են: Դա եվրոպական տիպի հանդես էր՝ նորություն մեր մամուլի պատմության մեջ: «Արևելքը» հրատարակվում էր ժողովրդատարական մեծ վարպետությամբ, նյութերի հստակ տարանջատումով, այն ժամանակի համար լավագույն տպագրությամբ:

¹ Հովհաննես Թյուսյուզյանը (1830 – 1898) Փարիզում էր 1848-ից, սովորել է Փարիզի առևտրական և երկրագործական դպրոցներում, 1857-ին հրատարակել է աշխատություն՝ նվիրված խաղողի հիվանդության և բուժման, հանդես էր գալիս նաև ֆրանսիական մամուլում: Լինելով Ստ. Ոսկանյանի երկար տարիների մտերիմը, Թյուսյուզյանը Փարիզում հանդիպել է Մ.Նալբանդյանին, որը «Հիշատակարանում» նրան համարել է «ազգային արգո և պատվելի» անձնավորություն, որ վաճառականական «մեծակշիռ գործեր» է կատարում, նաև ցանկություն է հայտնում, որ հայ վաճառականները կապեր հաստատեն նրա հետ՝ տալով Փարիզի նրա հաղցեն (ԵԼԺ, հ. 1, էջ 438-440): «Շոցատետրի նկատողություններից պարզվում է, որ Նալբանդյանը նամակներ է հղել Թյուսյուզյանին (ԵԼԺ, հ. 4, էջ 261-264): Նրա մասին տե՛ս Գ.Սյրեփանյան, Կենսագրական բառարան, հ. 1, Երևան, 1973, էջ 364, իսկ ինքնակենսագրականը՝ «Մասիս» 1898թ. համարներում:

Առհասարակ հայ ընթերցողը ջերմությամբ է ընդունել «Արևելքի» հանդես գալը: Ժամանակակիցները բարձր են գնահատել նրա հայտնվելը: Չանագան կողմերից «Արևելքին» և նրա խմբագրին էին դիմում ընթերցողները, Ոսկանյանը մշտական կապ ուներ Չմյուռնիայի ու Կ.Պոլսի հետ, իր հանդեսի շապիկին ամեն համարի հետ ազդարարում էր, թե «ինչ-որ շարադրությանը կվերաբերի առ Ս.Ոսկանյան առաքելու է»՝ նշելով նաև հասցեն: Նա պարբերաբար տեղերից ստանում էր նամակներ, երբեմն նաև նոր լույս տեսած գրքեր, իսկ առանձին դեպքերում նույնիսկ ֆրանսիացի բարեկամներից: Հատկանշական մի հանգամանք ևս, ի տարբերություն իրօրյա շատ խմբագիրների, որոնք կույր հավատով էին վերաբերում և պատասխանատվությունն իրենցից զգելով հաճույքով էին տպագրում նույնիսկ անանուն նամակներն ու թղթակցությունները, Ոսկանյանը անզիջում հետևողականությամբ տեղավորում էր միայն այն նյութերն ու հաղորդում այն տեղեկությունները, որոնց հավաստիությունը կասկածի տեղիք չէր տալիս: Նրա հանդեսի յուրաքանչյուր համարի շապիկին, սկսած երկրորդ համարից, դրոշմված էր. «Անանուն հողված մը չհրատարակվեր»:

Պահպանվել է «Արևելքի» հրատարակության ամիսներին Մտ.Ոսկանյանի գրագրության մի բացառիկ նմուշ, որն առնչվում է արևմտահայ մշակութային կյանքի մի կարևոր դրվագի և միաժամանակ բնութագրում է Ոսկանյան մտածողին ու խմբագրին: Օտյանների հետ ունեցած շփման առթիվ արդեն խոսվեց այդ նամակի մասին: Բայց դրանից ավելի շուտ այդ վավերագիրը հետաքրքրական է աշխարհաբարի շուրջ ծավալվող պայքարում Ոսկանյանի դիրքը պարզելու և նրանում «Արևելքին» վերապահվող դերը որոշելու տեսակետից: Բերենք այդ նամակը.

«Ազնիվ բարեկամ

Քանի մը օր պ. Մյուհենտեսը¹ երկարորեն պատմեց մեզ

¹ Հուլի. Մյուհենտեսյանը թողնելով ոսկերչությունը, 1843-ից զբաղվում էր տառերի ձուլումով և տպագրությամբ, Կ.Պոլսում հիմնել է տպարան: Այստեղ, սակայն, խոսքը հավանաբար վերաբերում է Մարտիրոս Մյուհենտեսյանին, որը տպագրել էր Ռ-ուսիյանի «Տարեցույցը»:

ձեր գովելի ջանքը, որ կընեք հայ լեզուն կարգադրելու համար: Պ.Մյուհենտեը *Suaptegnoyğ*¹ մը և ուրիշ *Shuyruasy* մը միայն ինձի տվավ, որ կարդամ և տեղեկանամ. չեմ ուզեր հառաջվընե դատել և *ուղղագրութունը*² չի տեսնելով կարծիք մը երևան հանել, նպատակնիդ ազգաշահ և բարի է, այս կբավե, որ հեռվե ծախահար ըլլամ և գովեմ: Տրտմեցա, երբ այս բարեկամ ճամբորդե լսեցի, որ *կհալածվիք*. հալածում գրական, արդարև այս անհավատալի կերևա մեզ առջի բերան և չեմք կրնա երևակայել. քե ինչ պատճառով *կրոնավորները* լեզվի նորոգում մը կջանան արգելու...: Ինչևէ, ազնիվ բարեկամ, մի վիատիք. ես միշտ հալածյալներու կողմն եմ՝ ընդդեմ բռնավորներու, ուստի եթե կհաճիք զձեզ պաշտպանել կամ ձեր դրութունը ծավալել *Արևելքը* ամեն հողվածնիդ անփոփոխ կիրատարակե:

Պ.Մյուհենտեը բերնով կրնա ըսել՝ որքան հարգ և ունինք այն անձերու համար, որ մեր դժոխսալուր լեզուն կուզին մաքրել:

Այս երկտող նամակը ավարտելն առաջ կաղաչեմ, որ հաճիք մեր երախտավետ շնորհակալությունը ընծայել ձեր մեծապատիվ հոր, որ այնքան ազնիվ և հյուրասեր բարությանք զմեզ պատվեց, երբ մենք Ասիայի մեջ կգտնվո՞ինք:

Մնամ միշտ բարեկամ սիրտով՝ նվաստ

Ս.Ոսկանյան

Արգո Օտյան (որդի), Պոլիս»³:

Վավերագիրը չի թվագրված, բայց, պարզ է, գրվել է

¹ «Տարեցույց» 1855թ. համար կազմել էր Ն.Ռուսինյանը: Կ.Պոլսի հոգևոր ժողովն այն արգելեց:

² Հավանաբար պետք է լինի «Ուղղախոսություն»: Խոսքը վերաբերում է Ն.Ռուսինյանի գրքին՝ «Ուղղախոսություն արդի հայ լեզվին» (Կ.Պոլիս, 1853), որը ևս արգելվեց իբրև դասագիրք օգտագործել 1854-ին:

³ Նամակը հասցեագրված է Գրիգոր Օտյանին՝ Խաչիկ Օտյանի (Երվանդ Օտյանի հոր) եղբորը, որի նկատմամբ ջերմ վերաբերմունք ուներ Նալբանդյանը: Վավերագրի բնագիրը (վնասված) պահպանվում է Փարիզի Նուպարյան մատենադարանում, որտեղից ստանալով և լուսանկարչական պատճենը հանելուց հետո վերադարձրել ենք: Նամակի տեքստը հրատարակվել է Մ.Չերազի «Սուր և գրիչ» գրքում (Կ.Պոլիս, 1881, էջ 7-8), լուստիայը՝ Վ.Չարդարյանի «Հիշատակարանում» (Թ.մաս, Կ.Պոլիս, 1910, էջ 149): Սա Ստ. Ոսկանյանի մեզ հասած ինքնագիր երկրորդ վավերագիրն է:

«Արևելքի» հրատարակության ժամանակամիջոցին՝ 1855-ի հուլիսից 1856-ի հունվար: Այդ ժամանակ Ն.Ռուսինյանի գրքերի ճակատագիրը լուծված էր արդեն, իսկ իր՝ Գր.Օստյանի 1851թ. լույս բնծայած՝ «Առաջարկություն աշխարհաբար լեզուն կանոնավորել և հասարակաց լեզու ընելու վրա» գրքույկի դրույթները, նորություն չլինելով հանդերձ, արդեն մոռացության էին տրվում: Դա, անշուշտ, լավ հայտնի էր Ստ. Ոսկանյանին: «Մասիսում» արդեն հրատարակվել էր Կ.Պոլսի պատրիարքարանի 1855թ. հունվարի 25-ի հայտարարությունը, որով ազդարարվում էր այն մասին, թե «Տարեցույցի» «անսովոր լեզուն» և պարունակած «փոփոխությունները կամ նորաձևությունները» պատճառ են եղել, որպեսզի նրա տպագրության նախնական թույլտվությունը մերժվի պատրիարքարանի կողմից, բայց այն տպագրվել է: Նույն ձևով արգելվել է նույն հեղինակի՝ Ռուսինյանի «Ուղղախոսությունը» նույնպես, բայց այն էլ տպագրվելով, մի քանի դպրոցներում գործածվում էր իբրև դասագիրք: Ապա պատրիարքարանն ազդարարել է, որ «բերկա ամսույս 18 թվականով գումարված հոգևոր և աշխարհական ժողովաց որոշմամբը և ազգային ուսումնականաց խնդրանքը արգելեցինք և հաստատեցինք, որ թե *Տարեցույցը*¹ և թե *Ուղղախոսությունը* դպրոցները չի մտնեն, դաս չտրվին»:

Այդ նույն հայտարարության մեջ պատրիարքարանը, ելնելով կրոնը ժողովրդին հասկանալի լեզվով մատուցելու իր մտահոգությունից և աշխարհաբար-գրաբար բանակովում իր բռնած միջին դիրքից, նաև ազդարարում էր. «Մեր ազգային աշխարհաբար լեզվին հիմը՝ գրաբարն է, և հիմակու աշխարհաբար լեզունուս անկարգությունն ու անհամությունը միջի օտար բառերն են, ուստի անոր մաքրությանը և գեղեցկությանը օգնել ուզողը՝ միայն պետք է, որ անոր մեջն օտար ու խորք բառերն ու ոճերը դուրս ձգե ու հնար եղածին չափ անոնց տեղը գրաբար բառեր ու ոճեր մտցնելով՝ գործածած լեզունիս մեր երանաշնորհ նախնյաց բուն լեզվին մոտեցնե: Ահա այս է խնդրոյն վրա ազգին

¹ Խոսքը մասնավորապես 1793թ. ֆրանսիական մեծ հեղափոխությունից հետո ընդունված տոմարի հիման վրա հայկական տոմարի մեջ որոշ փոփոխություններ մտցնելու մասին է:

կամքն ու պարտքը, և այս պետք է որ ըլլա բոլոր ուսումնականաց ալ ջանքը ի պատիվ ազգին»¹:

Այդ հայտարարությամբ և դրան նախորդած ու հաջորդած «քննություններով»՝ ընդդեմ արգելված գրքերի ու նրանց հեղինակի², գրապայքարը բուռն ընթացք ստացավ և դարձավ ժամանակի կենտրոնական հարցը: Ահա այդ պայքարի սկզբնաշրջանում էլ դիմելով Ստ.Ռսկանյանին, Գ.ր.Օտյանը ակնկալում էր նրա պաշտպանությունը թե անձնապես և թե իբրև «Արևելքի» խմբագրի³: Եվ ահա Ռսկանյանն ի հայտ է բերում իր դիրքորոշումը երկու առումով էլ: Նախ նա նորից վկայում է, որ իր խմբագրությանը և տնօրինությանը հանձնված հանդեսի մուտքը բաց է իրենց կարծիքները և սկզբունքները պաշտպանել ցանկացող առաջադիմական գործիչների, նույնիսկ հակառակորդների առաջ, որ նման դեպքերում նրանց նյութերը կտպագրվեն անփոփոխ: Դա առհասարակ «Արևելքի» սկզբունքն էր, որը Ռսկանյանը հաստատել էր նաև հանդեսի էջերից՝ այլ առիթներով՝ այս կամ այն դեպքում վերապահությամբ հայտարարելով, թե անձնապես վստահ չէ հրատարակվող նյութի ստուգությանը կամ չի բաժանում որևէ հոդվածի դրույթները: Այնուհետև, նա, ինչպես ակնառու է, չի շտապում իր անձնական կարծիքը հայտնել Ն.Ռուսինյանի հրատարակած գրքույկների մասին, բայց սկզբունքորեն գտնում է, որ աշխարհաբարի կարգավորման և հղկման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը «ազգաշահ և բարի» են: Նա վճռաբար մերժում է աշխարհաբարյանների նկատմամբ կիրառվող հալածանքները, ինչպես և կրոնավորների միջամտությունը լեզվական խնդրին. «Ես միշտ հալածյալներու կողմն եմ՝ ընդդեմ բռնավորներու», – հռչակում է Ռսկանյանը:

¹ «Մասիս», 27 հունցվարի 1855, N 157:

² Այս առիթով տե՛ս «Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի», Կ.Պոլիս, 1901, էջ 240-241, նույն տեղում՝ Կ.Պոլիս, 1910, էջ 326-345:

³ Նկատենք, որ Գ.ր.Օտյանն այդ ժամանակամիջոցին շահախնդիր էր ընդարձակելու իր «Ուղղախոսության» կողմնակիցների շրջանակը: Այդ շրջանակի մեջ էին նաև Ն.Ռուսինյանը և, Կ.Ութունյանի վկայությամբ, նաև Հ.Սըվաճյանը (տե՛ս Հ.Սըվաճյան, Տասնևիններորդ դար և Հովհ. Պրոսպերի Տերոյնեց, Կ.Պոլիս, 1908, էջ 110):

Այսպիսով, Ոսկանյանն առաջին անգամ երևան է հանել իր անվերապահ դիրքորոշումն աշխարհաբարի և ընդհանրապես հայոց լեզվի հարցում, արևմտահայերենը մշակելու և կատարելագործելու համար պայքարողների, այդ պայքարին խոչընդոտողների նկատմամբ:

Ստ. Ոսկանյանը երիտասարդական տարիներին իր գրական սկզբնաքայլերը կատարել է գրաբար թարգմանություններով: Սա, իհարկե, չի նշանակում, թե նա գրաբարյան էր կամ ոգևորված էր դասական հայերենով, պարզապես Մեսրոպյան վարժարանում ուսուցումը տարվում էր գրաբար լեզվով, և այն ժամանակ նրան գրաբարն էր հարազատ, գրաբարն էր բանաստեղծության լեզուն: Նույն տարիներին էլ հենց նա սկսեց աշխարհաբար լեզվով թարգմանական ոտանավորներ ու արձակ նյութեր հրատարակել նույն «Արշալույս արարատյանում»: Դրանով նա արդեն 1840-ական թվականների կեսերին կողմնորոշվում էր դեպի աշխարհաբարը և դարձավ նրա տքնաջան մշակող-հղկողներից մեկը, ինչպես և լավագույն գործադրողն ու պաշտպանը:

Ոսկանյանի համար գրաբար, թե՞ աշխարհաբար հարցը գոյություն չի ունեցել, նա անվերապահորեն և հենց սկզբից աշխարհաբարի կողմնակից էր, արևմտահայերեն է գրել նույնիսկ երիտասարդական տարիներին: Ոսկանյանը չի մասնակցել գրապայքարին, որևէ հատուկ հոդված չի նվիրել այդ խնդրին, այլ ուղղակի դարձել է նոր-նոր կազմավորվող ու հաստատվող արևմտահայերենի մշակը՝ նրա հղկման համար տքնելով շուրջ երկու տասնամյակ և մեծագույն նպաստ բերելով աշխարհաբարին: Իր առաջին գործերը՝ պամֆլետները, հանդեսը՝ «Արևելքը», իսկ հետո նաև «Արևմուտքը», Ոսկանյանը հրատարակեց մաքուր արևմտահայերենով: Դրանով արդեն նա նպաստ էր բերում աշխարհաբարի զարգացմանն ու տարածմանը: Մյուս կողմից, գիտակցելով, որ «մեր դժոխալուր լեզուն, կարիք ունի հղկման ու մշակման», Ոսկանյանն անդադրում կերտում էր արևմտահայերենը, գործնականորեն նպաստում էր նրա հաղթանակին:

Չանդրադառնալով Ոսկանյանի պամֆլետների լեզվին, որ ինքնին աշխարհաբարի հինօրյա նվաճումների շարքը կարելի է

դասել, նշենք, որ Ոսկանյանի «Արևելքը» գրական արևմտահայերենի լավագույն հուշարձաններից է, որ վեր է խոյացել տակավին գրապայքարի բուռն ժամանակամիջոցին: Մինչև «Արևելքը», իհարկե, աշխարհաբար էին հրատարկվում ոչ միայն մեծ թվով գրքեր, այլև մեր պարբերականների հիմնական մասը: Մական «Արևելքի» լեզուն՝ իր ճկունությամբ, ճոխությամբ, պատկերավորությամբ ու հղկվածությամբ դրականապես զանազանվում է արևմտահայերեն լույս տեսած նախորդ բոլոր պարբերականներից՝ սկսած «Շտեմարան պիտանի գիտելացից», «Արշալույս արարատյանից», որոնք հրատարակվում էին 1839 և 1840 թվականներից, մինչև «Մասյաց աղավնին» ու «Սեղուն», որոնք սկսեցին լույս տեսնել 1855-ից: Ռոշ ակնարկներից բացի Ոսկանյանը «Արևելքում» չի խոսել ո՛չ գրաբարի, ո՛չ աշխարհաբարի և ոչ էլ նրանց փոխհարաբերության մասին: Բայց իր առաջին նյութերից սկսած նա բառերի կերտման ու բառերի կիրառման, ոճի հղկման ու լեզվի պատկերավորության, առհասարակ գրավոր խոսքի հղկման ուղղությամբ հետևողական ջանքեր է թափել, որոնց ընդհանուր արդյունքը հարստացրել է հայոց լեզվի գանձարանը. դա հատուկ ուսումնասիրության նյութ է¹:

Ստ. Ոսկանյանն, իրոք, փայլեցրել է աշխարհաբարը, արևմտահայերենը հասցրել է մի աստիճանի, որ իր պարզությամբ, պատկերավոր ոճով ու դյուրաճկունությամբ անկրկնելի է: Առանձնահատուկ ուսումնասիրության կարոտ նրա լեզուն այսօր իսկ լավագույն օրինակ է: Տարբեր առիթներով Ոսկանյանի աշխարհաբարի մասին շատ է խոսվել ու արձանագրվել: Բերենք մեկ-երկու կարծիք: 1907թ. արևմտահայ հայտնի թարգմանիչ-հրապարակագիր Մ.Նուպարյանը «Իզմիրի հայոց զարգացումը ասկե կես դար առաջ» հոդվածում նկատել է. «Ստեփան Ոսկանյան, այն փայլուն գրագիրը, որ այնքան հստակ ու ներդաշնակ կգրեր, այն ժամանակները տակավին անմշակ մեր աշխարհիկ և որ նույն թվականներուն և իր հռչակա-

¹ Ստ. Ոսկանյանի հանդեսների լեզուն ու բառամբերքը մասամբ ընկնել է Վ.Աճեմյանի «Գրական արևմտահայերենի ձևավորումը» (Երևան, 1971) գրքում:

վոր «Արևելք» հանդեսը և անկէ ետքը իր ոչ նվազ հռչակավոր «Արևմուտքը» կիրատարակեր Բարիզի մեջ: Իր գեղեցիկ աշխարհաբարին ամենամեծ գաղտնիքն էր խժալուր հնչյուններէ խնամով զգուշացում, ու կարճ քաներու ու ձևերու ուշադիր գործածում»¹: Ավելի ուշ՝ 1921-ին, Հր. Ասատուրը Ոսկանյանին նվիրված իր փաստառատ ակնարկում գրել է, որ «Ոսկան համոզված աշխարհաբարյան մըն է, թեև քաջ հմուտ գրաբարի: Իր աշխարհաբարը հատուկ դրոշմը ունի: Կհետևի քերականություն մը զոր ջանացած է գործսարդել ամենուրեք, և որուն օրենքները քիչ կտարբերեին արդի աշխարհաբարի քերականության օրենքներէն»²: Արևմտահայ մտավորականների այդ խոսքը հավաստվում է մի հեղինակավոր վկայությամբ: Դ-ա Աշ. Հովհաննիսյանի բնութագիրն է. «Իր՝ Ոսկանյանի լեզուն աշխարհաբարի մեջ նրա նկատած թերությունների հաղթահարման լավագույն փորձերի շարքին կարելի է դասել: Նրա թեթև, պարզ, դիպուկ, կարճաբան և պատկերավոր ոճը, նրա աֆորիզմների հանգող մտածելակերպը, համարձակ, կտրուկ, շանթահարող և թունացայտ նրա գրիչը մեզանում գերազանցեց միայն Նալբանդյանը»³: Սկզբից ևեթ Ոսկանյանը եռանդազին պաշտպանել է աշխարհաբարը⁴: Շուրջ երեսուն տարի, քանի դեռ առերևույթ չէր դադարել հայերեն գրել և հրատարակել, նա մնաց արևմտահայերենի նախանձախնդիր մշակն ու կերտողը: «Արևելքից» հետո՝ «Արևմուտքում» նա նոր աստիճանի հասցրեց գրական արևմտահայերենը, իսկ 1866-ից, առաջինն արևմտահայ և սփյուռքահայ իրականության մեջ, աշխարհաբարը դարձրեց պաշտոնական դասավանդման առարկա: Այդ ուղղությամբ նրա կատարած մեծ աշխատանքին դեռ հարկ կլինի անդրադառնալ, բայց հիմա նշենք, որ նա 1853 – 1856թթ. ավելին կատարեց աշխարհաբարը ժողովրդականացնելու և մշակելու գործում, քան նրանցից շատ-շատերը, որոնք հայ մշամուլի էջերը ոլողել են այդ

¹ «Տարեցույց Նշան-Պապիկյան», 1907, Կ. Պոլիս. Բ. մաս, էջ 13:

² Հր. Ասատուր, նշվ. աշխ., էջ 116:

³ Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 312:

⁴ Աշխարհաբարի մշակմանը և արևմտահայերենի զարգացմանը Ոսկանյանի մատուցած ծառայությունները դրվատանքով է նշել Ե. Տեմիրճիպաշյանը:

խնդրին նվիրված նյութերով, մինչդեռ Ոսկանյանը երբևիցե հատուկ հոդվածով հանդես չի եկել այդ հարցի շուրջ:

Ստ. Ոսկանյանի խմբագրական-հրատարակախոսական վարպետությունն ու լայն ընդգրկումը ցույց տալու համար պետք է հատուկ ուշադրություն դարձնել «Արևելքի» այն «մանր» նյութերին, որոնք հանդեսում պարբերաբար հրատարակվել են «Այլևայլ» խորագրի տակ՝ դրանք համարելով Ոսկանյանի գրչին պատկանող ուրույն տեսություններ: Եվ իրոք, սխալված չենք լինի, եթե Ոսկանյան-խմբագրի հմտությունը փորձենք ցուցադրել մասնավորապես հենց այդ՝ ինֆորմացիոն բնույթ կրող բաժնի հիման վրա: Առհասարակ լինելով ակտիվ խմբագիր, որ ըստ անհրաժեշտության միջամտում էր տպագրվող նյութերին՝ հատուկ ազդով, ծանոթագրություններով նա պաշտպան էր ազատ խոսքի: Նրա ակտիվությունը թերևս առավել անմիջականորեն հանդես էր գալիս զանազան աղբյուրներից ու «սեփական» ուղիներով ստացած լուրերի ընտրության ժամանակ և հաճախ դրանց առթիվ տրվող հակիրճ, բայց դիպուկ մեկնությունների ընթացքում: Դրանցից մեկ-երկուսին մենք անդրադարձանք, այժմ մի քանի օրինակներով փոքր-ինչ մոտիկից ծանոթանանք այդ «Այլևայլին»:

Նախ նկատենք, որ այս կամ այն լուրը, հաղորդումը «Արևելքում» տեղ էր գտնում միայն այն դեպքում, եթե սուկ հուշագրություն լինելուց բացի, կարող էր հնչել հայ ընթերցողների շրջանում: Այդպիսին են, օրինակ, Դրիմի պատերազմին նվիրված որոշ հաղորդագրություններ, զանազան լուրեր ֆրանսիական մամուլից: Զուգահեռաբար Ոսկանյանն այդ հաղորդում-լուրերն ուղեկցում էր անմիջականորեն հայ ընթերցողին հասցեագրված մեկնաբանություններով, որոնք մեզ համար ավելի հետաքրքրական են, քանի որ երևան են հանում Ստ. Ոսկանյանի վերաբերմունքը, նրա մտահայեցությունն ու մտահոգությունը:

Թե որքան հմտությամբ էր Ոսկանյանը կարողանում սովորական, այսպես ասած, առօրյա տեղեկություններին մեծ հնչեղություն հաղորդել և դրանք ընդհանրացնել, ապա և սկզբունքային հարցեր առաջ քաշել, ակնառու է «Այլևայլի» հետևյալ նյութերից. «Էսթաֆետ օրագիրն հետագա տեղեկու-

թյունը կհավաքենք- պատասխանատու չենք ըլլար: «Ռուսիայի մեջ Հայաստանի կրոնքը 619 եկեղեցի ունի, 510 մատուռ, 1507 քահանա, 1717 երգակ, չորս վանատուն կամ կրոնական վարժատուն, 52 թեմական վարժատուն, 40 եպիսկոպոս, 133 կրոնավուր, 24 հավատուհի: Այս առթիվ հրապարակավ կաղաչեմք ճշմարիտ հայրենասերները, որ Հայաստանի վրա ճիշտ տեղեկություններ ժողովելու սկսին: Ժամանակը եկավ, որ օտարներու ճանչնալ տանք ոչ միայն մեր եությունը այլև մեր ավերակները, որ մեր նախահայրերու նահատակության անմոռունչ և անբարբառ վկաներն են: *Արևելքը* միայն հետաքրքրության համար այս աղաչանքը չի հրատարակեր, այլ օտարազգի հմուտներու հաղորդելու նպատակով կփափագի տեղեկություն ստանալ Հայաստանի բնակներն» (էջ 437-438):

Հազիվ 10-15 տողով, այդպիսով, հմուտ խմբագիրը կարողացավ հերքել արևմտահայ որոշ պարբերականների, մասնավորապես «Մասիսի» հերյուրանքը, թե Ռուսաստանում վտանգված է հայ կրոնը, հայերը ռուսանում են, և դա Գրիմի պատերազմի օրերին, երբ նման լուրերը որոշակի միտում էին հետապնդում: Այնուհետև Ոսկանյանը երևան հանեց իր դիմագիծը. Նրա տողերը ցույց են տալիս, որ նա հայացքով միշտ դեպի Հայաստանի կողմն է դարձած, որ նրա համար թանկ են հայրենիքի մասունքները, որ նա փափագում է օտարների առջև իր ժողովրդին ներկայացնել նրա իրական ու վեհ պատկերով: Եվ դա եզակի դեպք չէ, այլ Ոսկանյան-խմբագրի բնորոշ գիծն է, որից նա չիրաժարվեց հրապարակախոսական իր ողջ գործունեության ընթացքում:

Ժուռնալիստ-հրապարակախոսի խմբագրական աշխատանքի մասին գաղափար տվող այս հունդերի միագումարը լրացնում են Մտ. Ոսկանյանի 1855 – 1856թթ. գործունեության ընդհանուր դիմագիծը, որ իր ամբողջության մեջ մնայուն հետք է թողել հայ հասարակական մտքի պատմության մեջ՝ լիովին արժանի գնահատության ու երախտագիտության:

«Արևելքով» ավարտվում է Մտ. Ոսկանյանի ձևավորման ու գաղափարական հասունացման շրջանը: Նա արդեն լավ փորձ է ձեռք բերում, ճշտում է իր սկզբունքները, ուրույն ձևով փոր-

ծարկում է իր տաղանդը, դավանած սկզբունքները, ձեռք բերում մարտական կոփվածություն՝ հետագա գործունեության համար, որ առավել բեղմնավոր ու նշանակալից եղավ:

«Արևելքը» յոթամսյա իր գոյությամբ և Ստ. Ոսկանյանը հրապարակախոսական գործունեության առաջին շրջանով հայ գաղափարական կյանքում իրար դեմ պայքարող կողմերի բաժանման գիծը դարձրեցին հստակ: Մի կողմում «Արևելքն» է ու Ստ. Ոսկանյանը՝ հանձին նրանց՝ առաջադիմական-դեմոկրատական սկզբնավորող հայ մամուլը և հրապարակախոսխմբագիրները, մյուս կողմում՝ «Բազմավեպը», «Եվրոպան», «Չոհալը», «Մասյաց աղավինին» և պապականություն քարոզող Մխիթարյանները, Տատյան Պողոս ամիրան, Հովհ. Չամուռճյանը, Գ.Այվազովսկին, նաև Հ.Կոճիկյանը և Կ. Շահնագարյանը՝ հանձին նրանց՝ կղերաամիրայական գաղափարախոսությունը և նրա պարագլուխներն ու ներկայացուցիչները, դրանց ամեն կարգի արբանյակները:

Այդ պայքարը շարունակվեց դեռ երկար տասնամյակներ՝ ելքեմն բուռն, ելքեմն «հանդարտ»: Նրա ասպարեզներում շատ սրեր խաչվեցին, ու հայ մամուլի, գրականության ու պատմագրության բազում էջեր արտացոլում են այդ պայքարի դրվագները, ելքեմն ներկված բոսորով: Մ.Նալբանդյանի շնորհիվ հայ դեմոկրատական հրապարակախոսությունն ընդլայնեց ու խորացրեց այդ պայքարը՝ նրան հաղորդելով հայ ժողովրդի ազատագրության խնդրի իրագործման նպատակամղվածություն: Ստ. Ոսկանյանն այդ պայքարի առաջամարտիկներից մեկն էր, Մ.Նալբանդյանին արևմտահայ դեմոկրատիայի հետ կապող օղակներից, որ կրել է հեղափոխական-դեմոկրատի չափազանց բարերար ազդեցությունը, իր հերթին փոխազդելով մեծ հրապարակախոսի վրա: Ոսկանյանն իր «Արևելքով» փաստորեն բացում էր այն ուղու առաջին ակոսը, որով պետք է ընթանար հայ առաջադիմական-դեմոկրատական մամուլը: «Արևելքը» ազատ խոսքի և դեմոկրատական պայքարի ամբիոն էր, նրա խմբագիրը՝ կղերաամիրայական ռեակցիայի դեմ ճակատ առ ճակատ մարտնչող առաջին խիզախ հրապարակախոսն էր, ազատության մեծ ջատագովներից ու ոգեշնչողներից մեկը 1850-ականների կեսին:

Որքան էլ կարճատև եղավ Ռսկանյանի հանդեսի գոյությունը՝ ընդամենը յոթ ամիս, այսուամենայնիվ այդ ընթացքում «Արևելքը» հայ իրականություն ներմուծեց քննադատական ոգին, քննվող հարցերը բարձրացրեց հասարակական, համագային աստիճանի, հաստատեց մամուլի որոշիչ դեր խաղալու, հասարակական կարծիքի կազմավորման և նրան հուզող խնդիրների լուծման ասպարեզում:

«Մեղուն», որ իր հրատարակության ժամանակաընթացքով ավելի մոտ էր «Արևելքին», հրապարակ գալով ըստ էության երգիծանքի մտրակով սկսում էր այնտեղից, որտեղ ընդհատվել էր Ռսկանյանի հանդեսը:

«Մեղուն» հայտնի չափով շարունակում ու լրացնում էր «Արևելքի» ուղեգիծը: Սըվաճյան խմբագիրը նույնպես դատում էր այնպես, ինչպես Ռսկանյանը, երբ դատապարտում էր «ձեռքը գրիչ առնողները», մատնանշելով, որ նրանք «անտեղի շողոքորթությամբ» ծածկում են ազգի պակասությունները: «Մենք կկարծենք, – գրում է Սըվաճյանը, – թե լրագրագետ ըլլա, հեղինակ գինքք, ինչ անուն պիտի տա անոր. ինքը պարտավոր է ազգին կատարելությունները գոված ատենը, պակասություններն ալ հաշվելու և ցուցնելու: Շարունակելով իր միտքը, նա բացատրում է, որ ազգի թերությունները բացահայտողը չպետք է ակնկալի շնորհակալության խոսքը լսել, ինչպես բժիշկը ու վիրաբույժը հայիոյանքի են արժանանում բուն բուժման ընթացքում, իսկ հետո միայն շնորհակալ են լինում ցավ պատճառող բժշկից: Այսպես էր դատում նաև Ռսկանյանը:

* * *

Ռսկանյանի գործունեության հաջորդ ժամանակաընթացքին անցնելուց առաջ հարկ է անդրադառնալ մի էական փաստի: «Արևելքից» հետո, շուրջ երեք տարի՝ 1856 – 1858-ին, Ռսկանյանը հավանաբար որոշակի զբաղմունք չունեի, թեև, դատելով նրա իսկ վկայությունից, պարապ չէր: Ըստ երևույթին հենց այդ տարիներին էլ նա, ինչպես նկատում է Հր.Ասատուրը «Լույսում» հրատարակած իր հոդվածում Հունաստանի արտաքին գործերի

նախարարի ազգականների դասատուն ու դաստիարակն էր¹: Այդ առթիվ դարձյալ պատասխանելով «Մասիսի» հոդվածագրին, որ նախատինքով էր խոսել Ոսկանյանի անցյալի մասին, գրում է. «Սակայն մույն երիտասարդն է, որ հույն տերության արտաքին գործերու պաշտոնակալին² երկու ազգականները կհանձնվին, որպեսզի Ֆրանսիայի դպրությունը և լեզուն սովորեցնել անոնց» (1859, էջ 134): Մեծ հպարտությամբ է Ոսկանյանը այդ փաստը հիշատակում. «Պղատոնի թոռ մը կգիջանի Մեսրոպի թոռեն լուսավորության և փիլիսոփայության բնդունել»:

Ոչինչ ավելին, քան Ոսկանյանի հաղորդածը, այդ մասին հայտնի չէ: Սակայն այդ վկայությունը իրավունք է տալիս ենթադրելու, թե Ոսկանյանը մոտ էր կանգնած Հունաստանի փարիզյան հյուպատոսությանը, շփումներ է ունեցել դեսպանի և դեսպանատան աշխատակիցների հետ, հավանաբար գրուցել հույն ժողովրդի ազատագրական պայքարի և այլ հարցերի շուրջ: Այդ մերձավոր շփումների արդյունքը պետք է համարել այն, որ նա հատուկ ուշադրություն է դարձրել հունական դեսպան Էմ.Եմենիցի պատմավավերագրական ակնարկներին, որոնցից առաջինի՝ «Ֆոթոս Յավիլասի» ֆրանսիական «Ռեվյու տե տես մոնո» հանդեսում հրատարակվելուց շատ կարճ ժամանակ անց թարգմանաբար հրատարակվեց «Արևմուտքում»³, նշանակալից նախաբանով: Թե՛ թարգմանությանը և թե՛ մանավանդ նրան ուղեկցող առաջաբանին՝ կապված ազգային-ազատագրական գաղափարների Ոսկանյանի քննության հետ, կանդրադառնանք իր տեղում: Հիմա կարևոր է նկատ ունենալ, որ Ոսկանյանը որոշ շփումներ ուներ դիվանագիտական աշխատողների հետ: Որքան էլ սակավ են հայտնի տեղեկություններն ու փաստերն այդ շփումների շուրջ, այսուամենայնիվ որոշակի ժամանակներում

¹ Հր. Ասատուրը և նրա հետևորդամբ Վ.Չարդարյանը (տես Վ.Չարդարյան, նշվ. աշխ., էջ 148) սխալմամբ գրում են, թե Ոսկանյանին աշակերտել են Հունաստանի արտաքին գործերի նախարարի գավակները:

² «Պաշտոնակալ» բառն արևմտահայ հին մամուլում գործածվում էր «նախարար» իմաստով (տես Վ.Աննյան, Գրական հայերենի ձևավորումը, Երևան, 1971, էջ 190-191 և 199):

³ «Արևմուտք», 1 և 15 դեկտեմբերի 1859, էջ 23 և 24, էջ 177-184 և էջ 186-194:

դրանք զբաղեցրել են Ոսկանյանին, որոշ դեր կատարել նրա կյանքում, եթե չասենք, որ նման կապերը հավանաբար ինչ-որ նպատակներ են հետապնդել:

«Արևելքը», որքան էլ մեծ է նրա դերը, մասամբ կարճատև գոյության պատճառով, չդարձավ այն հանդեսը, որի պահանջն ըմբռնում էին ոչ միայն Ստ. Ոսկանյանը, ոչ միայն նրան աջակցող խումբը, այլև հրամայաբար առաջադրում էին այրժնացած ու զարգացող հայ հասարակական միտքը, այն պայքարը, որ շարունակ բորբոքվում էր առաջադիմության ու խավարամտության միջև: Այդ պայքարում առաջադիմականների դրոշը ի սկզբանե եղել է լուսավորությունը, որ հավասարաչափ բնորոշ է ամբողջ հայ կյանքին՝ թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ և թե՛ սփյուռքահայ: Դարաշրջանի ոգին էր դա, որ աստիճանաբար, բայց և հաստատուն քայլերով մուտք էր գործում հայոց կյանքի ոլորտները: Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ այդ շարժման առավել գայտուն դրսևորումը կրթական գործի ծավալումից հետո, եղավ հայ պարբերական մամուլը:

Այսպես, եթե 1841 – 1850 թվականների ընթացքում լույս տեսան 16 անուն նոր պարբերականներ, ապա հաջորդ տասնամյակում այդ թիվն անցավ երեք տասնյակից: Հատկանշական է նաև, որ 1850 – 1860-ական թվականներին մեծապես ընդլայնվում է հայ մամուլի աշխարհագրությունը. առաջին անգամ հայերեն պարբերականներ են երևան գալիս Մոսկվայում, Թեոդոսիայում, Նիկողիայում, Փարիզում, Վանում, նոր պարբերականներ են հրատարակվում Թիֆլիսում, Վիեննայում, Կ.Պոլսում, Չմյուռնիայում: Լուսավորություն տարածելու միտում, հայ ժողովրդի կրթությանը նպաստելու անկեղծ փափագ – ահա այդ պարբերականների ընդհանուր բնորոշ գիծն՝ անկախ նրանց հրատարակության վայրից, նույնիսկ բնույթից: «Լուսավորություն, կրթություն քարոզելը» եղել է Կ.Պոլսի «Բանասեր» ամսատետրի բուն նպատակը: Նույն տեղում հրատարակվող «Նոյան աղավնին» խնդիր ուներ կարելիին չափ «գիտելիքներու վրայոք» գաղափար տալ, իսկ «Արծվի Վասպուրականը» մտահոգված էր «համազգի գյուղացվոց կրթության» հարցով: Փարիզյան «Մասյաց աղավնին», եվրոպական քաղաքականությունը

վոխանցելու միջոց, նույնպես փափագում էր, որ «գիտությանց լույսովը լուսավորվի հայոց ազգի միտքը»:

Բայց բանը միայն ազգի լուսավորության նկատմամբ ցուցաբերվող ընդհանուր մտահոգությունը չէ. 50-ական թվականներից երևան է գալիս այն բարիկաղը, որի հակադիր կողմերում հանդես են գալիս հայ մամուլի տարբեր օրգաններն՝ առաջադիմական և հետադիմական որոշակի դիմագծով, «Մեր ազգի մեջ, – գրել է Նալբանդյանը 1858թ., «Հյուսիսափայլի» 10-րդ համարում, – այժմ կան հայացքներ, կան ուղղությունք, կան ուրեմն և դրոշակներ, կա պատերազմ: Օտարոտի մի բան էր հերքել այս. նույնպես օտարոտի էր ցանկանալ մի տեսակ միավորություն հակառակող բաժինների: Այդ վնասակար էր մեր ազգին: Պատերազմը հետևանք է շարժողության, իսկ շարժողությունը – կյանք է»¹: Մկսած այդ պատերազմ-շարժողությունը երևան գալուց, հենց 50-ականներից, հայ մամուլը, հայտնի չափով նաև հայ հասարակական միտքը, հայ կյանքը զարգանում են այդ երկու գլխավոր ուղղություններով: Մամուլի էջերում տևականորեն մղվող այդ պայքարը հայ ժողովրդի ազատագրական պայքարի բաղկացուցիչ, հաճախ նույնիսկ էական մասն էր՝ առաջադիմական-դեմոկրատական մամուլի ծանր մաքառումներով, աստիճանաբար ամրապնդվող նրա ազդեցության աճով, դավանած գաղափարների տարածումով, երբեմն էլ հաղթանակներով:

Եթե որոշակի առաջադիմական դիմագծով հայ մամուլի առջնեկներից մեկը համարելու լինենք «Արևելքը», իսկ դա, իրոք, այդպես է, ապա կարող ենք նաև ընդգծել, որ հայ մամուլի պատմության մեջ նախ կայուն դիրք են նվաճել առաջադիմական պարբերականները, որոնք արձագանք էին առաջադիմության ձգտող ժողովրդական մասսաների բնական հակումների: Այլ կերպ, թե՛ նրանց երևան գալը և՛ թե՛ կարճատև կամ երկարատև գոյությունը որևէ հենակետ չէր գտնի: Համենայն դեպս առաջադիմական, ապա և դեմոկրատական պարբերականների խմբագիր-հրատարակիչները, նրանց աշխատակցողների զգալի մասը, նաև բաժանորդների ճնշող մեծամասնությունը կամ ժողովրդական բուն խավերից կամ նրանց հետ մերձավոր կապերով

¹ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 2, էջ 262:

առնչվող գործիչներ էին: Այլ հարց է, որ այդ մասսաների ներքին ուժերը դեռ թույլ էին դրսևորվում, որ նրանք դեռևս ի վիճակի չէին կայուն և տևական դիմադրություն ցույց տալ հետադիմությունը՝ հանձին ուռճացած ամիրաների ու աղաների, կղերականության ու ավատատիրության և նրանց ծայնավող-գաղափարախոսների, որոնց ոգեկոչած մամուլը, ոչ անհայտ միջոցների ուժով թեև կարողանում էր գոյատևել, մաս տարածում գտնել, մնայուն ազդեցություն չունեի ժողովրդական խավերում: Դ-ա, եթե ոչ առաջին հերթին, ապա հավասար չափով վերաբերում է զանազան պաշտոնական օրգանների («Շտեմարան պիտանի գիտելյաց», «Բազմավեպ», «Եվրուպա», «Հայաստան» և այլն):

Կ. Պոլսում, որ բավական տարիներ առաջ դարձել էր հայ մշակույթի ու մտքի կարևոր կենտրոններից մեկը, 1856-ի սեպտեմբերի կեսին երևան եկավ «Մեղու» թերթը, որին վիճակված էր դառնալ արևմտահայ դեմոկրատիայի նշանակալից օրգանը: Թերթը կարծես թե հանդես էր գալիս փակելու այն բացը, որ առաջացել էր հայ առաջադիմական մամուլի անդաստանում «Արևելքի» խափանումով՝ 1856-ի փետրվարից: Այդպիսի տպավորություն է թողնում նպատակների այն ընդհանրությունը, որ նույնիսկ առաջին հայացքից նկատելի է երկու պարբերականների միջև:

Շուտով՝ 1858-ի հունվարից, հայ հասարակական մտքի ասպարեզում փայլատակեց մաս մոսկովյան առաջին հայերեն պարբերականը՝ «Հյուսիսափայլը»՝ Ստ. Նազարյանի խմբագրությամբ և Մ.Նալբանդյանի աշխատակցությամբ: Հենց առաջին համարներով «Հյուսիսափայլը» ճեղքեց հայ կյանքի թանձր խավարը և իրենով նշանավորեց մի նոր դարաշրջան հայ մամուլի պատմության մեջ՝ երկար ժամանակ մնալով միակը արևելահայ առաջադիմական-դեմոկրատական մամուլի ուրվագծվող անդաստանում: Միքայել Նալբանդյանի աշխատակցությամբ հանդեսը դարձավ հայ կյանքի առաջադիմության դրոշակակիրը, ստեղծեց ավանդություններ, մշակեց ու գործադրեց սկզբունքներ, որոնք կազմեցին հայ առաջադիմական մամուլի զարգացման ակունքը՝ շնորհիվ հենց այն բանի, որ և՛

Նալբանդյանը, և՛ Նազարյանը, և՛ հանդեսի ոչ քիչ թվով աշխատակիցներ սերտ շփման մեջ էին ռուսական առաջադիմական մտքի ու դեմոկրատական գաղափարախոսությունը կրողների և արտահայտողների հետ: Հանդեսի կապերը հարսզատ բնաշխարհի հետ ավելի ամուր էին, քան մինչ այդ լույս տեսած որևէ պարբերականի, և իր ժողովրդի համապարփակ լուսավորությանը զինվորագրված լինելու շնորհիվ նրա յուրաքանչյուր համարը լուրջ արձագանք էր գտնում ոչ միայն ընթերցողների, մտավորականության, այլ նույնիսկ պաշտոնական շրջաններում: Նա բացառիկ տոկոսությամբ հարսզատ մնաց համարի ճակատին դրոշմված նշանաբանին, որի տակ դրված էր Ստ. Նազարյանի ստորագրությունը. «Այսուհետև ոչինչ եզիպտոսյան խորամանկ քուրմեր, որ կամեին լինել գիտության միայնակ պահապանքը, այսուհետև ոչինչ չինեական պարիսպ, որ պիտու է փակել լուսավոր գաղափարների մուտքը ազգերի մեջ: Այսուհետև լույս և ճշմարտություն և ազատություն խավարի բաբելոնյան գերութենից»: «Ընդհանուր ազգային լուսավորության և դաստիարակության» հանդեսը միաժամանակ խնդիր ուներ արձագանքել Արևմտյան Եվրոպայի լուսավորության, ինչպես մեկնաբանել է նրա «Ծանուցումը» Մ.Նալբանդյանը «Նամակ խմբագրին» հոդվածում, 1857թ. դեկտեմբերին, կամ, ինչպես Նազարյանցն էր շեշտել նույն «Ծանուցման» մեջ, նույն նպատակին հասնել «մի մտավորական կամուրջ ձգելով ասիացի հայերի և եվրոպական ազգերի մեջ»:

Մամուլի նոր, հայ իրականությանը դեռևս ոչ լրիվ ծանոթ դրսևորում էր «Հյուսիսափայլն» իր ամբողջությամբ վերցրած: Նա, իրոք, գաղափարական մարտիկ էր, որ տարիներ շարունակ չզիջեց բարիկադների վրա գրաված իր դիրքը, չդադարեց մարտնչելուց, թեև եմբարկվեց ժամանակի ծանր ճնշմանը, հալածանքների, երբեմն ստիպված էր երեքալ: Ու որպես այդպիսին նա տվեց իր ժամանակի լավագույն օրինակն այն բանի, թե ինչպիսին պետք է լինի մարտական օրգանը, որն է մամուլի ու հրապարակախոսության բուն խնդիրը: Ահա ինչպես էր այդ դերը հասկանում և գրում իր «Հիշատակարանում» Կոմս Էմմանուելը՝ 1858թ. սպրիլի 14-ին՝ ի պատասխան այն տրտուներների, թե «մինչև ե՞րբ պետք է նախատանաց, բամբասանաց և

գրպարտության պարսաքարեր և թուք ու մուր արձակվին ազգի վերա».

«Ազգը էապես անարգողը չեն նոքա, որոնցից զանգատ ունիք, որովհետև մերկացնում էին ծածուկ պահած ազգի վերքերը, վիրաբուժական դարմաններ մատուցանելով... այլ այն սուտ ազգասերը, որ... անարգում են ազգի անունը ամենայն եվրոպացի մարդու առջև, չունեն ուրեմն և սեփական արժանապատվություն: Հայերի միջից շատ մարդիկ անպատճառ կամենում են, որ թագավորն սուտը և թաքնությունը, բայց ամենայն բանիմաց և ճշմարտասեր հայի վերա պարտականություն կա պատժել և պատուհասել բերանով և գրչով ազգի պակասությունը, հրապարակել նրանց այնքան մինչև որ ազգը տեսանելով յուր վերայի կեղտը զզվի, գարշի և խնամ տանե լվանալու և մաքրելու յուր անձը, որպեսզի արժանի լինի լուսափայլ դեմքով մասնակից լինել եվրոպական մարդության բարիքին: Եթե մենք, որպես անդամ ազգի ճանաչում ենք մեր արժանապատվությունը, պիտո է ուրեմն խոստովանենք մեր ունեցած պակասությունը... Առանց որևիցե փոքրոգի կասկածամտության պիտո է հանդես հանել ազգի առջև նորա խավար կողմերը... ճշմարտության պաշտոնյա լինել մի հատիկ խորհուրդն է մի բարոյական մարդու... Մտույզ ազգասերը պիտո է խոսի ճշմարիտը...»¹:

Հայ առաջադիմական-դեմոկրատական մամուլին, որ պարզում էր լուսավորության դրոշը՝ իբրև ազգային-ազատագրության միջոց, և որպես նշանակետ իր համար ընտրում էր ազգային պակասությունների սուր ու անզիջում քննադատությունը, իբրև «ազգի ապագա բարերարությունը և լուսավորությունը» պայմանավորող գործոն, կրնկակոխ հետապնդում էր հետադիմական մամուլը՝ տրամագծորեն հակադիր սկզբունքների վրա հենված: Ըստ որում մի առաջադիմական «օրգանի դեմ ասպարեզի վրա գործում էին հակառակորդների 4-5 օրգաններ»²:

1857-ի հունվարից ի հայտ եկավ Հովհ. Չամուռճյանի «Երևակը»: Դեռ դրանից առաջ Չամուռճյանը խմբագրում և

¹ Մ Նալբանդյան, ԵԼԺ, հ. 1, էջ 314-315, 316:

² Ա Հովհաննիսյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 215:

հրատարակում էր թրու պահպանողական-ամիրայական «Հայաստան», ապա և «Զոհալ» թերթերը: Հարցը նրա նոր պարբերականի կրոնական ուղղությունը չէ, անշուշտ: Չամուռճյանն իր երկշարաթերթը գրեթե առաջին համարից դարձրեց հայ առաջադիմության դեմ մարտնչող օրգան՝ կրոնաստվածաբանական դոգմաներն անմնացորդ ուղեգրած ծրագրով ու հետադեմ սխրանքներով: Եվրոպական ոգին, որ անկասելի կերպով մուտք էր գործում հայկական շրջանները, նրա համար ուրացություն էր, անաստվածություն: Հայր, նրա կարծիքով, պետք է սմվեր կրոնական-եկեղեցական անձեռնմխելի գաղափարներով, հավատար դեերի ու չար ոգիների գոյությանը. ով չի հավատում կրոնին, նա խարխալում է ազգի հիմքերը, կործանում է նրան: Հավասարության գաղափարը նրա համար սոսկալի է, իսկ ազատության ձգտողները, ազատության համար պայքարողները (Մաձինի, Գարիբալդի և ուրիշներ) և նրանց հետևողները պատճառ են աշխարհի ավերման: Եվ այդ գաղափարաբանության լույսով նա իր պարբերականում մոլեռանդ, հաճախ նաև ստոր պայքար ծավալեց այն ամենի դեմ, ինչ առաջադիմական էր, բոլոր նրանց դեմ, ովքեր դուրս էին գալիս աստվածաշնչյան քարոզների կաղապարից՝ սկսած Ֆիզիկա Պողոսից, որ դեռևս 1839 թվականին դարձավ նրա դավանաբանական նենգ պայքարի գոհը, արաշխարանքի աքտրվեց Կ.Պոլսից, մինչև Մ.Նալբանդյանը, Ստ. Ոսկանյանը, Հ. Սըվանյանը, նույնիսկ ազգային սահմանադրությունն ու սահմանադրականները:

Չամուռճյանական պարբերականներից՝ իրենց գաղափարախոսությամբ ու հետապնդած նպատակներով շատ հեռու չէին Սսերյանների հրատարակած «Ճռաքաղը» (1858), որ լույս էր ընծայում քահանա Ստ. Մանդինյանը՝ Թիֆլիսում, նաև «Եվրոպա» և «Մասյաց աղավմի» հանդեսները, որոնք ասպարեզ իջան Վիեննայում ու Փարիզում, կղերապահպանողական ընդգծված ուղղությամբ:

Այդ պարբերականների հրատարակած ոչ քիչ թվով նյութեր, անշուշտ, արժեքավոր էին և իրենց օբյեկտիվ նշանակությամբ ադերս ունեին ընթերցողներին գիտելիքներ հաղորդելու հետ: Բայց նրանց ընդհանուր ոգին, հետևողականորեն

քարոզած գաղափարախոսությունը հենց ի սկզբանե հակոտնյա էին այն ոգուն ու գաղափարներին, որոնց ծարավ էին հայ զանգվածները, և որոնց իրական այլձագանքն էր հայ առաջադիմական մամուլը: Եվ ինչպես «Երևակը», նույնպես և այդ պարբերականները՝ յուրաքանչյուրն իր չափով ու շրջանակում, թեև տակտիկական տարբեր մեթոդներով, դարձան «Մեղու» – «Հյուսիսափայլ» ուղղության հակառակորդներ՝ պայքարի միջոցների միջև խտրություն չղնող իրենց խմբագիր-տնօրենների եռանդագին ջանքերով երբեմն վերածվելով թշնամական օրգանների:

Առաջադիմական հայ մամուլի և հրապարակախոսների դեմ իր ծավալուն նենգամիտ պայքարով ավելի հեռուն գնաց Գ. Այվազովսկին, որ համահավասար եռանդով գործում էր թե՛ կրոնակեղեցական և թե՛ աշխարհիկ միջավայրում՝ օբյեկտիվորեն հակասելով պատմաբանասիրական, մանկավարժական-խմբագրական իր իսկ գործունեությանը, որով հայ մշակույթին նպաստ բերած հաշվեկշռով պակաս ծառայություն չի մատուցել իր գործունեության առաջին շրջանում, նույնիսկ «Մասյաց աղավնին» հրատարակելու որոշ տարիներին: Եվ սխալված չենք լինի, եթե ասենք, որ որպես գործչի նրա օրինակը թերևս մի ավելորդ անգամ ցույց է տալիս, թե ուր է հասցնում ի բնե օժտված մտավորականներին կղերապահպանողական գաղափարախոսության ծանր նստվածքը, որ տվյալ դեպքում ժառանգել էր Այվազովսկին Մյուխրայան վանքում:

Առաջադեմ ու հետադեմ հայ մամուլի ուժերի այդ փոխհարաբերությունը, որտեղ գերակշռությունը թեկուզ քանակի, առավել ևս տայաբանակի տեսակետից, որն, իհարկե, ինքնին չէր լուծում ազդեցության հարցը, խախտելու էր գալիս Մտ. Ոսկանյանն իր նոր պարբերականով, որին վիճակված էր հայ առաջադիմական-դեմոկրատական մամուլի հաշվեկշռում լուրջ միավոր կազմելու:

Ոսկանյանը, նրա մտերիմ բարեկամները՝ Հովհ. Թյույսյուզյանը, Հովհ. Բյաթիայանը, Մ.Խորասանճյանը և ուրիշներ, հաշտվել չէին կարող «Արևելքի» նկատմամբ կատարված հաշվեհարդարի հետ և, իրոք, չհուսալքվեցին հանդեսի անժամանակ վախճանից, չհնազանդվեցին հալածանքներին ու հետա-

պնդումներին, ավելի քան երկու տարի նոր համախոհների հետ մեկտեղ միջոցներ ու հնարավորություններ էին որոնում նոր հանդես հրատարակելու համար: Այդ նպատակով նրանք հիմնեցին ընկերություն, որը ստացավ ապագա հանդեսի անունը՝ «Արևմուտք»: Խորհրդակցելով միմյանց հետ, իրենց դիտարկությանը տեղյակ դարձնելով փարիզաբնակ և Կ.Պոլսի «քանի մը անձերու»: Սկզբնապես նրանք հինգ հոգով էին, բայց շուտով «գտան իրենց համամիտ ուրիշ վեց անձինք»: Նրանք էլ՝ տասնմեկ համախոհներով հիմնեցին նոր հանդեսը: Ընկերությունը ստանձնում էր «Արևմուտքի» հրատարակչական-ուպագրական հոգսերը՝ չխառնվելով խմբագրական գործերին, ստեղծագործական աշխատանքին: Հանդեսի խմբագրի պարտականությունը ստանձնեց Ս.Ոսկանյանը՝ պայմանով, որ այդ պաշտոնը կվարի մեկ տարով՝ 1859թ.:

Այդպիսով առաջին անգամ հայ իրականության մեջ երևան է գալիս ազատ խմբագիր, որ միմիայն պետք է զբաղվի հանդեսի խմբագրությամբ: Այդ պաշտոնը Ոսկանյանը վարում էր դեռ 1855 – 1856թթ.՝ «Արևելքի» հրատարակության ժամանակ, բայց ոչ միայնակ և հանդես էր գալիս որպես «առաջին շարագիր», երբեմն տարակարծիք լինելով մյուս խմբագիրների հետ: Այժմ նա միանձնյա է տնօրինում «Արևմուտքի» խմբագրական-ստեղծագործական ամբողջ գործը: Այդ աշխատանքի համար նա պետք է վարձատրվեր հանդեսի բաժանորդագրությամբ ստացված գումարից, սակայն նա, չնայած որոշակի պայմանին, աշխատավարձ չստացավ¹: Դժվար չէ պատկերացնել, թե որքան

¹Ստ. Ոսկանյանը 1859թ. հոկտեմբերի վերջերին հրաժարվեց «Արևմուտքի» խմբագրի պաշտոնից: Հանդեսում սուպագրված «Ազդից» (1859, էջ 161), պարզվում է, որ նա առանց վարձատրության է աշխատել (բայց այդ պատճառով չէր հրատարակում, դա այլ հարց է, որին կանոնադաշտներ հետո): Ընկերության «Հայտարարությունից» (1859, էջ 185-186) հայտնի է դառնում, որ Ոսկանյանը պետք է վարձատրվեր հանդեսի բաժանորդագրության գումարի կեսի չափով՝ յուրաքանչյուր եռամսյակ: Առաջին եռամսյակում ստացված «գումարը շատ փոքր ըլլալուն համար, ընկերությունը չի տվավ ամոր կեսը պ. Ոսկանյանին, իսկ տարեկեսին հավարված գումարից նա «չընդունեց իր մասը, ըստելով, թե տարվան վերջը ամբողջ հաշիվը կտեսնանք»: Տարին չավարտված Ոսկանյանը հրաժարվեց խմբագրի պաշտոնից: «Պ. Ոսկանյանը, – հայտարարել է «Արևմուտքի» ընկերությունը, – քող ձրի չաշխատելը, տարվան վերջը սպասեր, ընկերության հետ ունեցած իր պայման-

անձկալի էր Ոսկանյանի կացությունը: Նա ապրուստի որևէ միջոց չուներ, ամենայն արժանապատվությամբ մերժում էր մեկն ու մեկի մեկենասական աջակցությունը: Անձնական ապահովությունը կարծես թե նրան երբևիցե չի հուզել. գաղափարի ու մտքի մարդ էր, իսկական մտավորական:

Իրեն նվիրելով զուտ խմբագրական աշխատանքին և դրանով ակնկալելով վաստակել իր ապրուստը, Ոսկանյանը լուծում էր սկզբունքային մի հարց. գրական-խմբագրական աշխատանքը ևս հասարակականորեն անհրաժեշտ զբաղմունք-մասնագիտություն է, զրչի մշակ լինելու իրավունքը քաղաքացիություն պետք է ստանա: Մտավորականն ավանդական զբաղմունքով պարապողների հետ հավասարազոր իրավունք ունի հասարակության մեջ ու նրա համար: Հասել է ժամանակը, որ հայ մտավորականը տեղ գրավի ժողովրդի մեջ, դադարի հարուստի ձեռքին նայելուց, դառնա ինքնուրույն անհատականություն և ոչ թե երկատվի՝ մի որևէ զբաղմունքով ապրուստ հայթայթի ու լոկ «ազատ ժամերին» մշակութային գործունեություն ծավալի: Մամուլը, լրագրությունը, հրապարակախոսությունը ևս գործ է՝ արժանի ժողովրդական հոգատարության: Մամուլը ժողովրդի կրթարանն է, ինչպես վարժարանը երեխաների ուսուցման ու դաստիարակության օջախը: Լրագրողը, հրապարակախոսը, ինչպես ուսուցիչը, հասարակության դաստիարակ է, ուսուցող: Եվ որքան նա բարոյական ու նյութական իմաստով ազատ լինի, այնքան ավելի լավ կկատարի իր պարտքը հասարակության, ժողովրդի առջև: Նա ինքնուրույնություն և անկախություն պետք է ստանա: Ոչ ոք իրավունք չունի նրան թելադրելու, իր կամքը փաթաթելու նրա գրչին: Անկախությունից, ազատությունից է ամբողջապես կախված հրապարակագրի որպիսությունը, նրա արիությունը՝ հասարակական կյանքում:

ներուն դեմ իր պաշտոնեն հրաժարելու տեղ: Դատը կրողանք հասարակության»: Դրանով հարցը սպառվել է: Հետագայում, երբ Ոսկանյանը կրկին խմբագրում էր վերահրատարակվող «Արևմուտքը», և առհասարակ նա որևէ դժգոհություն անգամ չի արտահայտել վարձատրություն չստանալու առթիվ, ոչ մի պահանջ չի ներկայացրել հանդեսի ընկերությանը, բնավ հոնորարի հարց չի հարուցել: Այստեղ էլ նա անաղարտ պահեց իր արժանապատվությունը: Գերադասելի էր պանիր-հացով ապրելը, քան նվաստությունը:

Այսպիսի սկզբունքներ առաջադրելով և այդ պայմաններով դառնալով «Արևմուտքի» հիմնադիրներից մեկը, ապա և ստանձնելով նրա խմբագրի պաշտոնը, Ոսկանյանը հանդեսի ընկերության հետ միայն մի սկզբունքային հարցում էր կոմպրոմիսի մեջ մտել. «Կրոնի և անձնական խնդիրներն են զգուշանալ»: Մնացած հարցերում նա ազատ էր և միայն պետք է ենթարկվեր մամուլի համար սահմանված այն օրենքներին, որ գործում էին Ֆրանսիայում և ընդհանուր էին բոլոր պարբերականների համար: Ընկերությունը, նրա անդամները՝ հանդեսի հիմնադրողներից որևէ մեկը իրավունք չունեին միջամուխ լինելու հանդեսի ստեղծագործական-խմբագրական աշխատանքի մեջ, անկախ այն բանից, որ խմբագիրն իր աշխատանքի համար նրանց միջոցով է վարձատրվելու: «Արևմուտքի» խմբագրումն այդ պայմաններով ստանձնելով, Ոսկանյանը վերջ էր տալիս մամուլի և հրատարակագիր-խմբագիրների այն ստրկական վիճակին, որի մեջ նրանք գտնվում էին: Մամուլը միայն հասարակության («հանրության») առջև է պատասխանատու և հաշվետու: Այդպիսով Ոսկանյանը մեզանում հիմնադրում էր ազատ մամուլը: Եվ ոչ միայն մամուլը, նա ինչպես կտեսնենք, առհասարակ մտավորականի ազատության ջատագովն էր, գրչի ու մտքի մշակի անկախության նախակարգապետը:

Թե՛ առաջադրված սկզբունքների ու հետապնդված նպատակների և թե՛ նյութական միջոցների անձկության հետևանքով «Արևմուտքի» ընկերության հիմնումը և նույնանուն հանդեսի հրատարակելը չէր կարող հեշտությամբ գլուխ գալ: Համախոհ հիմնադիրների միակ հարստությունը կամքն էր: Ունևոր անձինք մոտ չէին գա ու չէկան, նրանք լավ գիտեին «Արևմուտքի» խմբագրին, որպեսզի նրա գաղափարների, մանավանդ քննադատության համար դրան չհատկացնեն, իսկ եթե ոճանք, այնուամենայնիվ, աջակցելու միտք էին հայտնում, ապա առաջադրում էին այնպիսի պայմաններ, որոնք անընդունելի էին. դրամի հետ մեջտեղ էին դնում նաև իրենց կամքը:

Դեռ այն ժամանակ, երբ ջանքեր էին գործադրվում վերսկսել «Արևելքի» հրատարակությունը, զմյուռնահայ մի շարք «հարգելի անձեր», փափագելով, որ հանդեսը վերահրատարակվի, ստանձնելով նրա ծախսերը, առաջադրում էին որոշակի

պայմաններ: Դրանք, ըստ երևույթին, այնքան էլ ծանր չէին և ընդունելի էին հանդեսի հրատարակիչներին համար և, ինչպես կարելի է ենթադրել Ստ. Ռսկանյանի որոշ արտահայտություններից, հանգում էին «մեկ-երկու բառերու»¹, որ տպարանատերը պահանջում էր փոփոխել: Սակայն նույնիսկ այդ դեպքում անհնար եղավ վերսկսել հանդեսի հրատարակությունը, որովհետև «տեսանք, որ ազատությունը չգտնվիր այն շնորհին քով», ինչպես շեշտում է Ռսկանյանը (1859, էջ 135): Ավելին. տպարանատեր Կ.Վ.Շահնազարյանը, որ կրկին Փարիզ էր վերադարձել, իրավունք վերապահեց միջամտել տպագրության ներկայացված հատվածի լեզվին ու ոճին, թեև ոչ մի առնչություն չուներ հրատարակվելիք հանդեսի հետ: Ռսկանյանը չէր կարող տեղի տալ: Ազատ, անկաշկանդ պարբերական հրատարակելն «Արևելքի» խմբագրի համար մնում էր ամեն ինչից գերադասելի նպատակ, հրատարակության ազատությունը բոլոր պայմաններից առաջինն էր, պայքար ծավալելու գրավական: Նոր պարբերականի հրատարակությանը ձեռնամուխ եղողները քաջ գիտեին, որ «ներքին թշնամին... անպակաս է», կրոնական խնդիրները պատրվակ բռներով, «բոլոր ազգը ամխնա կվորով»: Այդ թշնամին նոր չէ, վաղուց ի վեր հայտնի են նրա ոճրները. «Հայ պատմության ամեն էջերու վրա իր արյունալի շավիղը կնշմարվի»: Հիմա էլ նա գործում է: Ինչպես վարվել՝ անտեսել անհնար է, արհամարհելը չի ներգործում, ազգասիրություն չի լինի, եթե սպասեն, որ ժամանակն անի իր անելիքը... «Տապալ առ արմին կա...»: Այդ թշնամին թշնամի է նաև մարդկության և լուսավորության, ուստի և նրա առջև ներքալ չի կարելի, պետք է ոգորել նրա դեմ, գոտեմարտել, մաքսառել, մարտնչել: «Տաժանալի պաշտոն մ՝ է այս, գիտենք, այլ գիտենք նաև որ մեր պարտավո-

¹ «Արևմուտք», 1 սեպտեմբերի 1859, N 17, էջ 135: «Արևմուտքը» լույս է տեսել երկու տարեկրթան՝ 1859-ին և 1864/0 1865թթ.՝ հերթական համարակալումով և աճող էջակալումով՝ N 1924, էջ 1-196 և N 1-12, էջ 1-96: Նպատակահարմար ենք գտնում նրանից րադվածքներ անելիս նշել հանդեսի միայն տարբերիլը և համապատասխան էջը՝ մեջբերումից անմիջապես հետո, փակագծերում: Որևէ առանձին հոդված վկայակոչելիս էջատակում կնշենք լրիվ աղբյուրը (հանդեսը, ամսաթիվն ու տարբիվը, համարն ու էջը: Այս դեպքում ավելորդ ենք համարում առանձին նշել յուրաքանչյուր մեջբերման տեղը):

րությունն է, և պարտավորութենն վեհ քան չկա աշխարհի վրա, եթե անշահասեր և արի կերպով կատարվի այն» (1859, էջ 1):

Այս մտորումները չափազանց բնորոշ էին արդեն ասպարեզում եղած ու դուրս մղված թե՛ Ստ. Ռսկանյանին և թե՛ նրա շուրջը խմբված գործիչներին: Բայց և առավել բնորոշ է նրանց վճռականությունը և պայքարի ասպարեզում արիաբար ոտք դնելու, նաև արիաբար այդ ասպարեզից ելնելու նրանց կամքը. «Արիաբար հաղթվիլ ավելի պատիվ կընե, քան թե վատորեն հաղթել», -- «Արևմուտքի» անդրամիկ համարում գրում է արդեն մի անգամ հպարտությամբ պարտված խմբագիրը՝ վերհիշելով «ամեն ամոթ» մոռացող զրաբանությունը, «հանդգնության եզր» չճանաչող մուլի եռանդը, պարծենկոտ ու փառավորվող իմաստակությունը: Նա նաև լավ գիտե, որ «հայ թերթերը *սպրիմ մեռնին*» ծաղիկի նման «հազիվ թե օր մը կփայլին և... կանհետին», որ ազգի մեջ կան «Ժեզվիթներ և ժեզվիթության պաշտպաններ»: Բայց դրանով հանդերձ միշտ չէ որ հրատարակիչները գիտության պաշարով են հանդես գալիս. «Մի՞թե այնքան մեռած օրագիրներու մեջ ամենքն ալ սպրելու արժանի են...: Չենք կարծեր»: Նորից հրապարակ իջնող հրապարակախոսն այն խորին համոզման է, որ այնտեղ «ուր միաբը կթունավորվի և իր ազատությունը անագորույն սիրտով կգոհվի, հոն ազգ մը չկրնար լուսավորվիլ և եթե լուսավորված է՝ կխավարի»: Այդ թունավորումից զուշացնելու համար էր «Արևելքը» հրատարակվում, և հենց դրա համար է նորից պայքարի ասպարեզ իջնում հրապարակախոսը: Նախկին փորձությունները չեն խախտել նրա վստահությունը, անգոր են եղել հարկադրելու նրան փոխել իր կարծիքները, հրաժարվել իր գաղափարներից. «Մեր զգեստը փոխվեցավ, մեր դեմքը թմրեցավ, բայց սիրտերնիս մինևույնը մնաց», – բազմանշանակ ասում է հրապարակախոսը և այդպիսով կամրջում «Արևելքն» ու «Արևմուտքը» (1859, էջ 2): «Միտք և ազատություն» նշանաբանով կյանքի կոչելով նոր պարբերականը, խմբագիր-հրապարակախոսը հավատում էր ապագա հաղթանակին: Նա վստահ էր, որ «հիշյալ անըմբռնելի թշնամիին գենքը օր մը պիտի խորտակվի ճշմարտության վահանին վրա և ի վերջե հայրանսերքը պիտի սթափին»:

«Սուտ ազգասիրությունը», ինչպես համոզված է իր հրա-

պարակախոսական գործունեությունը վերսկսող Ստ. Ոսկան-
յանը, «այս անգամ ևս թշնամություն ու նախատինք չպիտի
խնայեք»: Բայց նա լի է վճռականությամբ «ոչ միայն նվիրվիլ, այլև
հարատևել ամեն պարագայի մեջ»: Եվ նա վերհիշում է պարտ-
ված Լենկթեմուրի հետ կապված գեղեցիկ ու խոսուն լեզենդը.
պարտություններից վիատված և խոր մտատանջության մեջ
ընկած Լենկթեմուրը նկատում է իր տաղավարի վրայով դեպի
վեր մագլցող մի մրջյուն, հրում ու ցած է նետում: Բայց ակնթաթ
հետո այն նորից է դեպի վեր սողում: Նորից է ցած գլորում ու
նորից նկատում, որ մրջյունը կրկին դեպի վեր է մագլցում: Մի
քանի անգամ նույնը կրկնվելուց հետո Լենկթեմուրը խորհում է
մրջյունի համառության շուրջ և ութսուն անգամ այն գլորելուց և
նրա վեր ելնելու եռանդը նկատելուց հետո այլևս ձեռք չի տալիս
մրջյունին, եզրակացնում է՝ «Տկարին համառությունը տվավ
հաղթություն»: Եվ նա «ամենեմ տկար կենդանիին տված լռին
խրատը ընդունելով» կարողանում է հաղթել, ամբողջ Ասիան
հնազանդեցնել, աշխարհակալի պսակ նվաճել:

Նման համառությամբ է ձգտում խմբագիրը ծառայել
«Հայրենիքի և միտքի ազատության» գաղափարին՝ տեսակ մը
հայերի» նախատինքն իր համար փառավորություն համարելով
(1859, էջ 2):

Այսպիսով, Ստ. Ոսկանյանը հրապարակ էր հանում իր նոր
հանդեսը նույն խնդիրներով ու նույն մարտունակությամբ, որ
որդեգրել էր 1855-ին, և որի արձագանքն էր «Արևելքը»: Եվ ոչ
միայն հրապարակախոսի հետապնդած խնդիրներն էին նույնը,
այլև նույնն էին նաև թշնամիները՝ ազգի իրավունքները սեփա-
կանած ամիրաները, կրոնական-դավանաբանական պայքար
հրահրողները, ազատ խոսքը ճնշող և ժողովրդի միտքը կաշկան-
դել փորձող գործիչները, նրա ազատագրությանը խոչընդոտող
«սուտ ազգայինները»:

«Արևմուտքը», ինչպես և «Արևելքը», երկշաբաքյա հանդես
էր՝ լույս էր տեսնում յուրաքանչյուր ամսվա 1-ին և 15-ին, սակա-
վաթիվ էջաքանակով՝ 8 էջ, բայց մեծ դիրքով: Կանոնավոր հրա-
տարակվելով, նա բոլորել է իր տարեշրջանը՝ լույս ընծայելով 24
համար, որից հետո դադարել է մինչև 1864-ը: Նրա ենթատիտ-
ղոսն էր՝ «Արձագանք Եվրոպայի լուսավորության»: Հանդեսի

բոլոր համարները հրապարակ էին եկել առանց խմբագրի ստորագրության, բայց նրա էջերում բազմիցս նշվել է, որ նրա խմբագիրն է Ստ. Ոսկանյանը: Նրա գրչին են պատկանում հանդեսի համարյա բոլոր նյութերը՝ խմբագրականներից մինչև ինֆորմացիոն հաղորդումները և զանազան լուրերի մեկնաբանությունները¹, բացառությամբ հանդեսի վերջին չորս համարներում տպագրված նյութերի. այդ համարների հրատարակման գործում, սակայն, մեր կարծիքով նույնպես մասնակցել է Ոսկանյանը:

1859-ին՝ «Արևմուտքի» հրատարակության տարեշրջանում, Փարիզում հայերեն որևէ ուրիշ պարբերական լույս չէր տեսնում, իսկ այլ վայրերում գոյություն ունեին: Վենետիկում՝ «Բազմավեպը», Թիֆլիսում՝ «Մեղու Հայաստանին», Մոսկվայում՝ «Հյուսիսափայլը» և «Շռաքաղը», Թեոդոսիայում՝ «Մասյաց աղավնին», Վիեննայում՝ «Եվրոպան», Կ.Պոլսում՝ «Մասիսը», «Ավետաբերը», «Մեղուն», «Երևակը» և «Զնար արևելյանը», Վարազում՝ «Արծվի Վասպուրականը», Ջնյուռնիայում՝ «Արշալույս արարատյանը»՝ ընդամենը 14 թերթ և հանդես: Դրանցից իրենց առաջադիմական գաղափարախոսությամբ «Արևմուտքի» հետ միասին առանձնանում են միայն 2 պարբերական՝ «Մեղուն», «Հյուսիսափայլը»՝ «Երկունսն էլ «Արևելքի» արժանավոր հաջորդներ, երկունսն էլ իրականության խիստ քննադատներ, առաջադիմության ճանապարհը մտրակով և հնությունները քանդող քարոզով հաղթողներ» (Լեո)²: Դրանց կարելի է ավելացնել նաև «Արծվի Վասպուրականը»: Եթե նկատի ունենանք, որ դրանց զգալի մասը՝ 10 ամուն, լույս էր տեսնում Թուրքիայի հայկական միջավայրում և սփյուռքում, ապա կարելի է ասել, որ Կ.Պոլսում հրատարակվող Հ.Մըվաճյանի «Մեղուն» և Փարիզում տպագրվող Ստ. Ոսկանյանի «Արևմուտքն» իրենց

¹ Ստ. Ոսկանյանն «Արևմուտքում» հանդես է եկել Ս.Ո., Մ.Ոսկանյան ստորագրությամբ, անստորագիր, ինչպես նաև «Ժլիլ», «Հրակո», «Ժ.Դ.», «Օ.Օրպել», «Օ.Օ.» և եռաստղանիչ (***) ծածկանուններով: Վերջիններիս Ստ. Ոսկանյանին պատկանելու հիմնավորումն ըստ անհրաժեշտության կտրվի համապատասխան տեղում:

² «Մուրճ», 1901, էջ 12, էջ 148:

դավանամ գաղափարներով այս կամ այն չափով հակակշում էին 7-8 պարբերականների:

Անշուշտ հետաքրքրական կլինեիր համադրել հիշյալ պարբերականների տպաքանակը և տարածման շրջանակը, սակայն, ցավոք, այդ մասին բավարար տեղեկություններ չունենք¹: Բայց առանց դրանց էլ հասկանալի է, որ առաջադիմական պարբերականները գտնվում էին չափազանց աննպաստ պայմաններում, շարունակ ենթարկվում էին հալածանքների, հանդիպում էին զորեղ դիմադրության, խափանվելու մշտական վտանգը ուղեկցում էր նրանց, բաժանորդներից կախված նրանց նյութական վիճակը մշտապես սպառնում էր պարբերականների գոյությանը և խմբագիր-հրատարակիչներին, եթե չխոսենք տպագրական ու տարածման դժվարությունների, հաճախակի կրկնվող կամայականությունների, մինչև անգամ՝ սպառնալիքների մասին: Այս պայմաններում հրատարակվող առաջադիմական-դեմոկրատական պարբերականները՝ «Մեղուն», «Հյուսիսափայլը» և «Արևմուտքը», ինչպես նաև «Արծվի Վասպուրականը» հայ կյանքի իրական պատկերն արտացոլելու, ժողովրդական խավերին իրենց խոսքը հասցնելու համար իրենց խմբագիր-հրատարակիչների գերագույն ջանքերի շնորհիվ անում էին գրեթե անհնարինը, ցուցաբերում էին եզակի տոկոնություն: Այդպիսին էր մասնավորապես «Արևմուտքը» և նրա խմբագիր Ստ. Ոսկանյանը:

Արևմտահայ մտավորականությունն արդեն ծանոթ էր Ոսկանյանին, ընթերցողը նրան գիտեր «Արևելքի» էջերից և գիտեր որպես ազատամիտ հրապարակախոսի, որ հանդես էր գալիս առանց երկընտրանքի՝ ամենայն համարձակությամբ մտրակահարելով ամիրաներին ու կրոնավորներին, ազգի շլինքին փաթավողներին: Հաղորդումը, որ նրա խմբագրությամբ նորից Փարիզում պետք է հրատարակվեր «Արևմուտք» հանդեսը,

¹ Որպես կանոն, 1850 – 1860-ական թվականներին հայ պարբերականների տպաքանակը չէր անցնում 300-400-ից: «Հյուսիսափայլը» 1858-ին լույս էր տեսնում 300, իսկ 1859-ին՝ 340, իսկ 1862-ին արդեն 170 օրինակ տպաքանակով: Եվ դա այն դեպքում, երբ սկզբնական շրջանում հանդեսի տարածմանն աջակցում էին պաշտոնատար անձինք:

ինքնըստինքյան հասկանալի էր դարձնում, որ նա շարունակելու է գրեթե երեք տարի առաջ խափանված «Արևելքի» ուղղությունը, հանդես է գալու իր՝ արդեն ծանոթ ձայնով: «Անոր հիմա նորեն կերևինք», – հռչակել է ինքը՝ Ոսկանյանը: Դա այնքան պարզ էր, որ «Արշալույս արարատյանի» խմբագիրը, թեև քաջածանոթ Ոսկանյանին և հավանաբար լավատեղյակ նոր հանդեսի հրատարակության նախապատրաստությանը, հասուկ հաղորդում զետեղելով, գրեց՝ «Կլսենք թե «Արևելք» անուն հայերեն շաբաթական լրագիրը մոտերս դարձյալ պիտի հրատարակվի Փարիզի մեջ, խմբագրությանը գիտնական երիտասարդի զմյուռնացի տյառն Ստեփան Ոսկանյան»¹: Գ.Պալդազարյանը շփոթել է երկշաբաթյա «Արևմուտքի» մասին էր:

«Արևմուտքի» առաջիկա հրատարակության կամ նրա լույս տեսնելու կապակցությամբ ազդեր են հրատարակել նաև այլ պարբերականներ: Բայց հարցը այդօրինակ ազդերը չէին, դրանք սովորաբար արվում էին ամեն մի նոր հրատարակության դեպքում: Առավել կարևոր է սկզբունքային վերաբերմունքը «Արևմուտքի» ուղղության նկատմամբ: Այստեղ էլ առաջիններից մեկը եղավ հենց «Արշալույս արարատյանը»: Հայտնի է թերթի և նրա խմբագրի պահպանողականությունը, նրանց ընդդիմադիր դիրքը առաջադիմական գաղափարախոսության հանդեպ: Բայց ահա այլ դիրքորոշում է հանդես բերվում Ոսկանյանի, նույնիսկ նրա դավանած ուղղության նկատմամբ: Արդեն անսանք, որ պահպանողական խմբագիրն անձնապես առանձնահատուկ վերաբերմունք ունեցավ դեպի Ոսկանյանը: Թերևս հենց այդ վերաբերմունքի նոր արտահայտությունն է Գ.Պալդազարյանի և նրա «Արշալույս արարատյանի» բոլորովին ուրույն ու ուշագրավ մոտեցումը Ոսկանյանի դավանած գաղափարախոսությանը: Դեռ «Արևելքի» երևան գալու առթիվ, 1855թ. հուլիսի վերջին Գ.Պալդազարյանը, «Արշալույս արարատյանում» առանձին հոդված տպագրելով, ծանոթացրել ընթերցողներին Ոսկանյանի հանդեսին, նկատել է, որ «տարակույս չկա, որ *Արևելքը* ազատախոս և համարձակագրիչ հրատարակություն պիտի ըլլա»: Նման ազդարարության համար Պալդազարյանի

¹ «Արշալույս արարատյան», 28 նոյեմբերի 1858, N 585:

համար հիմք էր նոր հանդեսի խմբագրի «ազատասեր և վառվռուն ոգին»: Յուզադրելու համար այդ ոգին նա արտատպել է Ռսկանյանի ծրագրային հողվածի մի ծավալուն հատվածը, որի վրա էլ հենվելով նկատել է, որ «Արևելքը նոր ճամբա պիտի բռնե ազգային հառաջադիմությանը նպաստահատույց ըլլալու և անոր պակասությանը, որչափ որ կարելի է, դարման մը տանելու համար»: Շարունակելով իր մտորումները՝ Պալոագարյանը գրում է. «Այս ճամբան, այս ընթացքը պիտի հաջողի», թե ոչ. մենք հիմակվեն չենք համարձակիր և չենք կրնար դատողություն մը ընելու: Ժամանակը պիտի ցուցնե»: Իր տարակուսանքն ու հանդուրժողականությունը նա ավարտում է վստահեցնելով, որ «Արևելքին» ճգունքը՝ ճշմարիտ ազգասիրութենե ի գատ ուրիշ նպատակ պիտի չունենա»¹:

Այդ տողերից երկուս ու կես տարի էր անցել, և Պալոագարյանին քաջ հայտնի է «Արևելքի» ճակատագիրը, մանավանդ Ռսկանյանի դավանանքը, նրանց դեմ իր իսկ պաշտելիների մղած պայքարը: Բայց դրանից չի փոխվել տակավին պահպանողական խմբագրի վերաբերմունքը: Գրեթե նույն ձևով ու բառերով է նա արտահայտվում Ռսկանյանի նոր հանդեսի երևան գալու մասին:

«Այս համարձակ դրությունը, – գրում է թերթի խմբագիրն այն բանից հետո, երբ ծանուցում է «Արևմուտքի» նպատակների մասին, – որ նոր բան մըն է արևելյան ժողովրդոց և մանավանդ հայոց համար, որոնք սովրած չեն ճշմարտությունը մերկ տեսնել և լսել. այս համարձակ դրությանը հետաքրքրությամբ և մեծ ուշադրությամբ կսպասենք տեսնելու, թե ինչպես պիտի ընդունվի հասարակութենեն: Կճանաչենք ի վաղուստ անտի Արևմուտքը նորահաստատ լրագրույն գիտնական խմբագրին անկեղծ և անշահախնդիր բնավորությունը և ազատամտությունը: Կճանաչենք նաև իր ճշմարիտ ազգասիրությունը, սակայն ազգային հառաջադիմության իր գաղափարները և իր կարծիքը տարբեր են ազգայնաց շատերուն գաղափարներեն և կարծիքեն: Ո՞ր դրությունը, որ շավիղը ավելի օգտակար է արդյոք ազգին լուսավորության և քաղաքականությանը համար: Այս խնդրույն

¹ Նույն տեղում, 29 հուլիսի, 1855, N 499:

լուծուճը անշուշտ խիստ դժվար է և ժամանակը միայն կրնա որոշել զայն»¹:

«Արշալույս արարատյանի» և նրա խմբագրի ընդհանուր պահպանողականության ֆունի վրա այս մտտեցուճը ռացիոնալ է ու խոսուճ: Դ-ա ընդունուճ է նաև Ոսկանյանը. նա նույնպես գտնուճ է, որ «Ժամանակը պիտի որոշէ», նույնիսկ արտատպուճ է Դ. Պալդազարյանի վերը բերվաճ խոսքերը: Մակայն դավանաճ սկզբունքների հաղթանակի արձանագրուճը ժամանակին վերապահելը բնավ չէ նշանակուճ հնազանդվել, առավել ևս գերի դառնալ ժամանակին, ընդհակառակը, Ոսկանյանին բնորոշը ժամանակի դեմ մարտնչելն է, նրա ընթացքի վրա ներգործելն ու խթանելը: Ահա ինչու նա իր նոր հանդեսուճ ավելի համարձակությամբ է առաջ տանուճ իր սլայքարը, ավելի վստահությամբ երևան հանուճ իր տեսակետներն ու սկզբունքները: Դ-ա ակնառու է «Արևմուտքի» յուրաքանչյուր հողվաճից, նրա ամբողջ հավաքաճուճից, բոլոր 36 համարներից: Հանդեսի, ավելի ճիշտ, Ստ. Ոսկանյանի նրանուճ հրատարակաճ հիմնական նյութերի ոգին, առաջադրաճ գաղափարները և պաշտպանաճ սկզբունքները հիրավի պայմանավորվաճ էին «Արևմուտքի» ընդհանուր դիմազճով և այն ծրագրուճ ու դավանանքուճ, որ կրկին, բայց ավելի լայնակի հռչակել են նոր հանդեսը, նրա ինքնուրույն հրատարակությունը ձեռնարկաճ հիմնադիրները և հենց ինքը՝ «Արևմուտքի» խմբագիրը: Այդ հարցերն ուղղակի առնչություն ունեն մամուլի դերի ոսկանյանական ըմբռնման հետ, հաճախ նույնիսկ սլայմանավորվաճ են հասարակության կյանքուճ պարբերական օրգանին վերապահվաճ առաքելության ճիշտ ընկալմամբ: Ոստի և առավել նպատակահարմար է դրանք բննել համատեղ, զուգահեռաբար:

Արդեն նկատեցինք, որ Ոսկանյանն «Արևելքն» ու «Արևմուտքը» կամրջուճ էր միմյանց: Այլ խոսքուճ, դա նշանակուճ էր, որ վերջինի դիմազիճը, եթե չի նույնանուճ առաջինին, ապա

¹ Նույն տեղուճ, 9 հունվարի 1859, N 588: Նկատենք, որ թերրի այս խոսքերը, ժամանակ անց, «Մասիսուճ» քննաբանությամբ հանդես եկող Խ. Միսաքյանը վերհիշեց իբրև գովասանք՝ դիտել տալուճ, թե Ոսկանյանը կարող է հանդես գալ նրա էջերուճ, մի բան, որ նա չի արել («Մասիս», 3 դեկտեմբերի 1859, N 410):

նրանից այնքան էլ տարբեր չէ, հենվում է նույն սկզբունքների վրա: Եվ դրա պատճառը ոչ այնքան այն է, որ երկու հանդեսների մայրը միևնույն հրապարակախոսն էր, կայուն հետևողականությամբ գործող Ոսկանյանը, իսկ դա պակաս կարևոր չէր, որքան այն, որ հայ կյանքի ու իրականության թելադրած պահանջներին համապատասխան սահմանված «Արևելքի» սկզբունքները քննություն էին բռնել, որ «Արևմուտքի» ընթերցողը նույնն էր, ինչ որ «Արևելքինը», որ երկու հանդեսների միջև ընկած ժամանակաշրջանում՝ 1856 – 1858թթ. էական փոփոխություններ չէին կատարվել նրանց ընթերցողի հասարակական մտածողության և սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքում:

Այս հարցի լուսաբանումը սկզբունքային նշանակություն ունի Ստ. Ոսկանյանի, և ոչ միայն նրա, այլև ամեն մի խմբագրի ու բուն հրապարակախոսի, մամուլում ծավալած գործունեությունը ճիշտ գնահատելու և արժեքավորելու համար: Բանն անշուշտ լոկ այն չէ, որ այս կամ այն պարբերականը հիմնելով, նրա խմբագիր-հրատարակիչը հետապնդում էր որոշակի նպատակներ, ցանկանում էր պրոպագանդել այս կամ այն գաղափարը, որով համակված էր ոչ միայն ինքն անձնապես, այլև մերձավորների մի որոշակի խումբ: Որպես կանոն, այս կամ այն պարբերականի գործունեությունն ամենից առաջ, թերևս նաև ամենից շատ, պայմանավորված է այն ըմբռնումով, թե տվյալ ժամանակաշրջանի իրադրության մեջ ինչ դեր է հատկացվում մամուլին, ինչպես է ընկալվում հրապարակախոսի բուն առաքելությունը, հասարակական որ խավերի վրա է նա հենվելու, ում շահերը և ինչ գաղափարներ է պաշտպանելու: Հենց այնպես, ինքն իր համար, որևէ խմբագիր թերթ կամ հանդես չի հրատարակել և ոչ էլ որևէ հրապարակախոս ինքնանպատակ գրիչ չի վերցրել: Նրանք գրեթե առանց բացառության պաշտպանել են մի որոշակի գաղափարախոսություն, հակադրվելով մի այլ գաղափարախոսության, եղել են այս կամ այն խմբակցության, եթե չասենք դասի շահերից՝ ընդդեմ դարձյալ որոշակի մի խմբակցության ու խավի: Ինքնին հասկանալի է, որ միատարր չէր նաև ընթերցող հասարակությունը, նա ևս տրոհված էր որոշակի հակումներով՝ իր մեջ ունենալով դեռևս լիովին չկողմնորոշված, թերևս ավելի հոծ մի խավ, որը հենց մամուլի շնորհիվ դեռ պետք է սնվեր

հայտնի գաղափարներով, հոգեկան սնունդ ստանալ, կողմնորոշվել հասարակականորեն, ուժեղացնել այս կամ այն խավը կամ խմբակցությունը:

Հարցն այստեղ ակամա հանգում է հայ մամուլի և հայ հրապարակախոսության դերի ընդհանուր ըմբռնմանը, որի լուսաբանումը, սակայն, սովյալ դեպքում դուրս է մեր նպատակների շրջանակից: Ուստի և կսահմանափակվենք մամուլի և հրապարակախոսի այն դերի ըմբռնման մասին գաղափար տալով, որ ի հայտ է բերել Ոսկանյանը մասնավորապես «Արևմուտքում», այդ ըմբռնումն է ընկած նրա ամբողջ գործունեության հիմքում, ինչպես և այդ ըմբռնման ճիշտ մեկնաբանությունն է վստահելի հնարավորություն ընձեռում լիամիտի գաղափար կազմելու այդ գործունեության մասին:

Նախ պետք է նկատենք, որ Ոսկանյանն «Արևմուտքում» քիչ առիթներ է ունեցել հայ մամուլի և հրապարակախոսության մասին իր ըմբռնումները հատուկ շարադրելու համար և այդ հարցին առանձին, նպատակային հոդված չի նվիրել: Դրանով հանդերձ նա այս կամ այն խնդիրը շոշափելիս ստիպված է եղել դրսևորել իր վերաբերմունքը մամուլի, ինչպես և առանձին տպագիր օրգանների նկատմամբ, երբեմն նաև նրանց կոնկրետ դերի շուրջ: Այդ ընթացքում նրա արտահայտած կարծիքները, նրա գաղափարներն արժեքավոր են այդ նույն խնդրի ընդհանուր լուսաբանման համար, խնդիր, որը տակավին մնում է չլուսաբանված, նույնիսկ՝ գրեթե չշոշափված:

Հայ մամուլի, նրա վիճակի ու դերի մասին իր կարծիքներն արտահայտելու համար Ոսկանյանը բնականաբար առիթ է ծառայեցրել հենց «Արևմուտքի» հրատարակությունը, նրա մղած պայքարը: Հետևելով մամուլում ստեղծված ավանդույթին, հանդեսի անդրանիկ համարի «Հառաջաբանը»¹ նա սկսում է ուղղակի հայ մամուլի վիճակի արձանագրմամբ: Այնուհետև (գերմանացի) մի բանասեր նկատել է «Հայ օրագիրներու անհաստատությունը», որից էլ հանգել է այն կարծիքին, թե «հայերը տակավին խակ ժողովուրդ մ' են գրական հրապարակումներու համար»: Ոսկանյանի համար ծանր է նման կարծիքը, բայց նա

¹ «Արևմուտք», 1 հունվարի 1859, N 1, էջ 1-2:

ևս արձանագրում է, որ վիճակն, իրոք, այդպիսին է, «այլ միթե հանցանքը միշտ հայ ժողովուրդին խակությունն է»։ Խարցն այսպես դնելով, Ռսկանյանը ոչ միայն հակադրվում է վերոհիշյալ բանասերին, պաշտպանում ժողովրդին, այլև առաջադրում է խնդրի էությունը պարզաբանող հարցեր։ Նա մասնավորապես շեշտում է. «Կհավանինք մտադյուր թե հասարակորեն հայ մամուլը իր պարտավորությունը չկատարեր և գովելու ազատությունը մինչև ի շողոքորթություն կտանի» (1859, էջ 1)։ Այդ շողոքորթության դեմ, խլրտացող անձնական շահամոլության, ամոթը մոռացած զրաբանության, ոչ մի սահման չճանաչող մոլի եռանդի, պարծեցող ու փառավորվող իմաստակության դեմ պետք է պայքարի մամուլը և պաշտպանի թունավորող և գոհ դարձող միտքը։ Դա Ռսկանյանի ներքին համոզումն է և ինքն անձնապես դրա համար էր նորից հրապարակ իջնում և ձեռնամուխ լինում «Փոքր հրատարակումի մը»՝ չմոռանալով «մրրիկին ուժգնությունը, վատության սաստկությունը, միտքի հալածումը», որ հրապարակախոսին դարձրել են փորձառու, համառության դասեր են տվել նրան։ Դառն է եղել այն դասը, որ պարտադրել են հակառակորդներն «Արևելքի» խմբագրին, բայց դա չի սասանել նրա վճռականությունը, առավել ևս անկարող էր հարկադրել նրան փոխելու իր սկզբունքները։ Հրապարակայնորեն բողոքելով հանդեսի թշնամիների տարածած «անհիմն լուրերի» դեմ, Ռսկանյանն ամենայն փտահոթյամբ ազդարարել է բաժանորդներին, թե «որչափ որ այ. Ռսկանյանը իր պաշտոնի մեջ մնա (ինա՝ «Արևմուտքի» խմբագիրը լինի – Մ.Հ.), փոփոխություն մը չպիտի կրե այս նկարագիրը, որ է միտքի ազատություն և հայրենիքի լուսավորություն» (1859, էջ 48)։ Ավելին. նրան չէին սարսափեցնում սպառնալիքները, նա չէր տատանվում ոչ մի փտանգի առջև։

Ռսկանյանի պատկերացմամբ մամուլը, տվյալ դեպքում «Արևմուտքը», իր հույսը պետք է կասյի «ուսումնական և ազգասեր անձերու» հետ, ոչ միայն նրանցից աջակցություն հայցի, այլ իր համար պատիվ համարի նրանց պաշտպանելը, նվիրվի նրանց դատին (1859, էջ 13)։ Ռսկանյանն առհասարակ մամուլը դիտում էր որպես հասարակական խնդիրների դատավոր և աշխատում էր, որ «Արևմուտքը» դառնա այդպիսին։ Ահա ինչ է

գրում նա մի առիթով. «Արևմուտքը պարտք կհամարի արձագանք ըլլալ ճնշյալ իրավունքի մը և ժողովուրդին դատը խնդրել... Եթե իր էջերը չբավեն կխոստանա օտար օրագիրներու նպաստը ուզել, մինչև որ ճշմարտությունը հայտնվի... հասարակության կարծիքը աշխարհիս թագուհին է, ըսավ հեղինակ մը, և, կհավելցնենք, օրագիրն է իր արձողը: Ազգայինք հոն պետք է որ դիմեն... Արիեստավորք մամուլին հարելու է, եթե կուզեք կանգնիլ և առաքուր չկոխվիլ ամենեմ. հոն է իրավունքին խարխալը, ինչպես մարդկության լույսը: Անկե ուրիշ զենք չունիք... անկե ուրիշ ապավեն չկա... Իրավունքը ինք իրեն միայն կապավինի մեկ ձեռքը մամուլին վրա...» (1859, էջ 47): Այսպիսով մամուլն, ըստ Ռսկանյանի, հասարակության արթնացման միջոց է, ժողովրդին առաջ մղելու, գործունեության հրահրելու խթանիչ, որ պետք է զգաստացնելու համար նաև խայթի քնկուտությունն ու անտարբերությունը, մանավանդ «վատությունն» ու «զևզելությունը, ահազանգի մոտեցող վտանգի մասին և ցույց տա, թե որտեղից ու ինչպես է այն մոտենում, հնչեցնե «վտանգի զանգակը՝ հուսալով, որ թերևս «այդ զանգակը հարության հնչյուն մը տա»: Ինչպես նա է արձանագրել, «օրագիր մը հասարակության շահը պաշտպանելու համար կտպվի և կտարածվի բազմության մեջ»: Մամուլը միակ զենքն է, որով կարելի է պաշտպանել հասարակության շահն ու իրավունքը, «անկե ուրիշ ապավեն չկա»:

Մամուլի հասարակական դերի այսօրինակ ըմբռնումը, որ, ի դեպ, համահնչյուն է Հ.Սըվաճյանի¹ և Մ.Նալբանդյանի² ըմբռնումներին, նորություն էր հայ հրապարակախոսության մեջ: Այդ սկզբունքը Ռսկանյանի գործունեության անկյունաքարն էր և, ամենադժվարին պայմաններում նույնիսկ, նա ձգտել է մինչև հնարավոր վերջին պահն իր պարբերական հրատարակություններն ի սպաս դնել ազգի շահերին և դրանց պաշտպանության համար իր ծավալած պայքարին, որպես «անկեղծ և անշահասեր» հրապարակախոսի»³: Եվ դա այն դեպքում, երբ,

¹ Տե՛ս Հ.Սըվաճյան, Հրապարակախոսություն, Երևան, 1960, էջ 39-42, 45-48, 95-118 և հետո:

² Տե՛ս Մ.Նալբանդյան, ԵԼԺ, հ. 3, էջ 111-112:

³ Տե՛ս «Արշալույս արարատյան», 9 հունվարի 1859, N 588:

ինչպես ինքն է գրում, «մեր ձեռքերը կապված են» (1859, էջ 16), երբ, դարձյալ իր խոստովանությամբ նա իրեն չէր համարում իր խմբագրած հանդեսի տերն ու տնօրենը՝ «Մուտ է ըսել, թե «Արևմուտքը պ. Ոսկանյանին է: Ասիկա շարագրութենն ուրիշ բանի չխառնվիր և խառնվելու ալ փսփագ չունի» (1859, էջ 48):

Անցյալի մեր մամուլի առջև, անկախ այս կամ այն պարբերականի հրապարակության վայրից, խմբագրի կամ հրատարակչի, նաև աշխատակիցների կամքից, ծառայել է միևնույն գորղյան հանգույցը՝ կրոնական հարցը, որ ժամանակ առ ժամանակ կատարյալ փորձաքայլ էր թերթերի ու հանդեսների համար՝ նույնիսկ նրանց ամեն մի դիմագծի դեպքում: Կրոնական հարցերը լափել են մեր մամուլը, հյուծել ու դավանաբանական կռիվների դաշտում թաղել տասնյակ պարբերական հրատարակություններ: «Կրոնական կռիվը»..., – ինչպես նկատում է Ոսկանյանը, – միշտ կապրի հայտնի և անհայտ կերպով, մտքերը կժանգոտե, սիրտերը կմաշե և սերը կթունավերո անդուլ» (1859, էջ 50 և 47): Հայ մամուլի պատմության մինչև անգամ հարևանցի ծանոթությունից դա այնքան ակնառու է դառնում, որ օրինակների կարիք չի զգացվում. «Կրոնքի դեմ չգրել», – այս էր նորահաստատ ազգային սահմանադրությամբ կարգված քաղաքական ժողովի՝ հայ մամուլի համար նախատեսող օրենքի առաջին ու կարուկ պահանջը¹: Հաճախ բանը հանգում էր նրան, որ պարբերականների գոյատևելու անհրաժեշտ պայման էր դառնում կրոնական խնդիրներ չարծարծելը, որ թերթերի ու հանդեսների խմբագրությունները խոստանում էին նախապես՝ իբրև ծրագրային դրույթ ու անխախտելի պարտականություն:

Չգրված այդ օրենքը շրջանցել չէին կարող ոչ «Արևմուտքը», ոչ էլ Ոսկանյանը և նրանք, իրոք, չեն անտեսել այդ աքսյունը՝ մանավանդ «Արևելքից» հետո: Նրանց առջև դրվող հիմնական պահանջներից մեկը մշտապես եղել է «կրոնական վեճերից հրաժարվել»: Ահա ինչու «Արևմուտքի» էջերում կրկնվում ու երեքկնվում են՝ «այլ է ազգություն, և այլ է կրոնք» (1859, էջ 12), և ապա ի լուր ամենքի, մասնավորապես «անհիմն լուրեր»

¹ Տե՛ս Հ. Արվանյան, Հրապարակախոսություն, էջ 334 և Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 3, էջ 110:

տարածողների, ազդարարվում՝ «Արևմուտքը կրոնքի մը հակառակ չէ»: Այսպես ասած. այս «չեզոք» դիրքը, սակայն, խիստ պայմանական էր, որը ևս հրապարակայնորեն ծանուցվում է. երբ կրոնավորի գործունեությունը հակոտնյա է ազգի շահերին, ապա «Արևմուտքը» «պարտք կհամարի զանիկա հալածական վանելու և բռնադատելու, որ եկեղեցվո բակը մտնե համեստությամբ՝ առանց երկյուղ զգալու բանադրանքից, որ «իրեն փառք կսեպե» (1859, էջ 48):

Ավելի հետևողական ու ավելի վճռական է Ոսկանյանն իր որդեգրած այն սկզբունքում, որ մամուլը չպետք է ընկրկի հայ առփրաների ու մեծատունների, այս կամ այն պաշտոնյայի առջև, եթե նույնիսկ նրանք օգտվում են կառավարական հովանավորությունից: Այստեղ ևս նա կանգ չի առել որևէ արգելքի առջև, ինչպես «Արևելքն», այնպես էլ «Արևմուտքը» դարձրել է մարտական օրգան՝ ընդդեմ ազատ մամուլի իրավունքները սահմանափակողների, հրապարակախոսի հետ «իբրև տեր առ ծառա» վերաբերվողների, իրենց այդ մամուլից վեր դասող ամեն մեկի՝ ներառյալ բուրբակյան բարձրաստիճան փաշաների հովանավորությամբ զրահավորված ազգայինների՝ լինի դա դիվանագիտական ծառայող կամ ազգային ատենապետ: Ոսկանյանի բնորոշմամբ այնպիսի վիճակ էր տիրում, որտեղ «քանի մը մարդու կամքը օրենք կսեպի» և նրանք հանդգնում էին այս կամ այն խմբագրից, հենց Ոսկանյանից պահանջել՝ «ձեր լրագրոքերանը փոխեցեք», «որևիցե կրոնական բանակոություն չընեք» (1859, էջ 51): Նման պահանջները Ոսկանյանը կտրականապես մերժում է՝ ազատ ու անկախ մամուլի և հրապարակախոսի իրավունքը վեր դասելով ամեն ինչից: Այսպիսի դեպքերում նա «խրատատու է.ֆենտի»-ների երեսին էր շարտում իր ցասկոտ խոսքը. «Եթե էֆենտիությունը պատվանուն մ՞ է ձեզի համար, անկախությունը ոչ նվազ պատվանուն է ինձի համար: Դուք ձեր էֆենտիությունը պահեցեք և անով ուզածիդ չափ փառավորվեցեք, բայց մի գաք... մեր սանկախությունը թշնամանելու» (1859, էջ 52):

Դրան հակառակ Ոսկանյանը մեծագույն հարգանքով է վերաբերվում հասարակության՝ ժողովրդի կարծիքին, մամուլի նկատմամբ նրա ունեցած իրավունքին: Այստեղ հրապարակա-

խոսքը հնագանդ է, հանդուրժող ու ականջալուր. «Ամեն հայ, – ասում է նա, – իրավունք ունի մեր հողվածները հերքելու, մեր կարծիքները դատելու և հանուն ճշմարտության զաննոնք դատապարտելու ևս, եթե սխալ դրություններու արձագանք են անոնք» (1859, էջ 73):

Ոսկանյանն արտակարգ ոգևորությամբ էր գնահատում այս կամ այն ազատ օրգանի երևան գալը՝ հաճախ դրա մեջ տեսնելով ավելի մեծ բան, քան սոսկ մի պարբերականի հրատարակությունը: Այդպիսին է նրա խոսքը «Հյուսիսսփայլի» հրատարակության առթիվ, դա նրա համար «միտքի ազատության և լուսավորության տեսիլների» երևան գալ է, «գրական անհոգության» փարատում, «մշտական հարության բարի նշան», արդյունքներ խոստացող հրատարակություն, որ պետք է տարածում գտնի նաև Թուրքիայի հայության շրջանում: Միաժամանակ նա կոչ է անում Ջմյուռնիայի, Կ.Պոլսի և այլ քաղաքների հայերին ընդօրինակել արևելահայերին: Ոսկանյանը մեծ հպարտությամբ է արտատպում փարիզյան մի թերթի հաղորդումը, թե Ռուսաստանում լեհական մի թերթ փակվել, իսկ խմբագիրը բանտարկության է դատապարտվել, բայց հայազգի Դեյլանովը հանդես է եկել նրանց պաշտպանությամբ, նույնիսկ պահանջելով, որ անմեղ խմբագիրն ազատ արձակվի և «անոր տեղ ինք անցնի»: Այս վեհանձնությունը, ակնհայտ է, Ոսկանյանը հակադրում էր իր և «Արևմուտքի» դեմ դավեր նյութողներին (1859, էջ 79 և 80): Նա, օրինակ, նշավակում է Խորասանճյան ամիրային այն բանի համար, որ նա պաշտպանում, հովանավորում է «Մասիս» անուն խայտառակ թերթը» (1859, էջ 96):

Մամուլի և հրապարակախոսության դերի նման արժեքավորումը և հակառակորդներին այդպիսի բարձրությունից, նույնիսկ այդ ձևով պատասխանելով Ոսկանյանը կրկին ու կրկին հաստատում էր իր նվիրվածությունը հասարակ ժողովրդին, որին պետք է ծառայեն մամուլն ու հրապարակախոսը՝ տեղի չտալով երբեք հակառակորդների առջև: Բայց այդ հակառակորդները շատ են գորեղ, գործում են դարանակալ, բառացիորեն չխորշելով ոչ մի միջոցից. դավեր, հալածանք, մատնություն, լրտեսագրեր, զրպարտություն, բամբասանք – պարբերաբար կրկնվող այս միջոցներով էին պայքարում նրանք՝ վայելելով ամիրայական

ամենակարող հովանավորությունը, ստանալով կղերականության մշտական աջակցությունը:

Առաջադիմական մամուլի պարտությունը տվյալ պայմաններում անխուսափելի էր, և քանիցս «պարտվել» է նաև Ստ. Ռսկանյանը, խափանվել են նրա հրատարակությունները: Բայց դա նման է այն պարտության, որ կրում է բարիկառի վրայից մինչև վերջին փամփուշտը պարպող ռազմիկը, դա պատվավոր պարտություն է՝ առանց տեղի տալու, առանց պարզաժ դրոշը խոնարհելու: Վաստակած իրավունքով նա արձանագրել է. «Եթե չկրցանք միտքի իրավունքը ազատել, գոնե չթողուցինք, որ առութուր կոխվի» (1859, էջ 49): Այս գաղափարը մի անգամ չէ, որ ստիպված է եղել կրկնել Ռսկանյանը՝ տալով հրապարակախոսի իր որդեգրած գաղափարներում աներեր ու անզիջում մնալու օրինակ:

Հրապարակախոսը, ինչպես ուսուցում է Ստ. Ռսկանյանն իր օրինակով, պետք է կարողանա դիմակայել հակառակորդներին, լինի անվախ ու բացարձակապես անկախ: Նա պետք է կարողանա արհամարհել նրանց, ովքեր «ածուխ ի ձեռին կուզեն անվանարկ մրոտել» հրապարակոխսին, և համարձակորեն պատասխանել նրանց, երկյուղ չկրի նրանց նույնիսկ նենգ գործելակերպից «որչափ ուզեն, ինչպես ուզեն և երբ ուզեն գործածել զայն», հետևողականորեն մերկացնի «հասարակության դատաստանեն» վախեցողներին (1859, էջ 123, 126):

Անուղղակիորեն հրապարակախոսի դիմագիծն է տալիս Ստ. Ռսկանյանը՝ պատասխանելով՝ իր հակառակորդներին, պարբերաբար մերկացնելով այն նենգությունները, տմարդությունները, խարդավանքն ու զրպարտությունը, որ իր դեմ էին հարուցվում, և որոնք նրա բառարանում ստանում են հավաքական մի անուն՝ «վատություն»: Վերոհիշյալ իմաստով բնութագրական են հակառակորդներին ուղղված պատասխաններից քաղվող նրա հետևյալ խոսքերը՝ զրված այն պահերին, երբ նրա առջև հառնում էին «տգիտությունը կամ իր թողը՝ զևզեկությունը», «կրոնամոլությունը և կույր եռանդը, որ իր հետևությունն է», «աղվեսի թշնամությունը», երբ ստիպված էր գործ ունենալ «ծալկամուտ» գործող «Ավետիքների» ու «Թորոսների» հետ:

Նման պարագաները նրան հարկադրում էին գրել՝

«համեստությունը մոռանանք, քողը խզենք և հասարակության ատյանին առջև գոչենք ուժգունակի. «Մեր կյանքին մեջ գրվածներեն ո՛չ տառ մը, ո՛չ կետ մը և ո՛չ շեշտ մը կուրանանք. ինչ որ ըսինք, գրեցինք և հրատարակեցինք, նորեն ըսելու, գրելու և հրատարակելու պատրաստ ենք, եթե նույն դեպքերը պատահին» (1859, էջ 126): Հրապարակախոսի պարտքն է «ազգին պատիվը պաշտպանել և ճշմարտության ծառայել», իր «գրիչը և համոզումը» ոչ մի գնով ու ոչ մեկին մա չպիտի վաճառի (1859, էջ 126, 135):

Արուսթուստ այնպես է թվում, թե Ռսկանյանը հակառակորդների դեմ պայքարին չափից ավելի ուշադրություն է դարձրել: Ինչ-որ տեղ դա այդպես է, սակայն մա չի տարվել այդ պայքարով, առավել ևս այն չի դարձրել իր նպատակը: Ընդհակառակը, մա այդ պայքարը ծառայեցրել է իր նպատակին: Ճշմարտությունն այն է, որ մա գրեթե ոչ մի անգամ, այսպես ասած, նախահարձակ չի եղել, այլ համարյա միշտ հարկադրված էր պատասխանել իր կամ «Արևմուտքի» դեմ ուղղված հարձակումներին: Նաև պիտի խոստովանել, որ հենց այդ պատասխանների շնորհիվ է, որ մենք այսօր գաղափար ենք կազմում նրա մղած պայքարի բուն էության մասին, նյութեր քաղում Ռսկանյան անձնավորության ու հրապարակախոսի վերաբերյալ: Ըստ երևույթին Ռսկանյանի նկատմամբ կիրառելի է հայտնի այն դրույթը, թե մարդը պայքարի մեջ է լիովին դրսևորում իրեն. այդ պայքարում, իյոք, առավել ցայտուն է երևան եկել նրա հրապարակախոսական խառնվածքն ու դիմագիծը, մամուլն իբրև պայքարի ասպարեզ նրա ամբողջական ըմբռնումը:

Այստեղ ամենից առաջ պետք է շեշտել նրա սկզբունքային դիրքորոշումը, այսպես ասած, անձնական բանակովի համդեպ, իսկ նման ընդդիմախոսություններով մեր մամուլն, իրոք, շատ է առատ: Դա, նրա պատկերացմամբ, լոկ անձի պաշտպանություն չէ, եթե պայքարը մղվում է սկզբունքի համար, հասարակական նշանակության խնդիրների շուրջ, առաջադիմական գաղափարների ու նպատակների պաշտպանության համար: Նա գտնում էր, որ մամուլում ծավալվող բանավեճի հիմքում պետք է դրվեն հասարակական հարցերը, ուստի և, եզրակացնում է Ռսկանյանը,

«անձնական կռիվի ներքև, որ միշտ արտմալի է, իրավունքի և ազատության խնդիր կա, սրա համար կռվիլ փառք, մանավանդ թե պարտք է ամեն սրտոտ մարդերու» (1864, էջ 1): Ըստ այդմ նա գտնում է, որ ազգային վեճերին կարելի է վերջ տալ միայն «վիճելու ազատությունով: Բանակռիվ մը խափանել, գայն հարատևել է» (1859, էջ 51): Բայց, եթե մամուլը ծառայեցվում է սոսկ մեկի շահին, անձնապես մեկն ու մեկի համար է բանավեճ մղվում, ապա վնասում է քննդիհանուրին: Հրապարակայնորեն, հասարակության առջև մղվող ամեն մի բանավեճ պետք է ծառայի հասարակության օգտին: «Անձնական վեճը այն ատեն ներելի է, երբ նպատակ ունի բազմության շահը» (1859, էջ 117): Ամբարված գայրույթով է Ռսկանյանը մերժում հակառակորդի դեմ պայքարելու իշխող այն մեթոդը, որի նպատակն է դառնում «հողվածները և կարծիքները թողուլ և գրողին պատիվը մրտոել» (1859, էջ 73): Նրա հետ հենց այդպես էր վարվել Հ.Փափագյանի տպարանում (Կ.Պոլիս) տպագրված «Կես թերթ մը» անվանված թուրքիկի հեղինակը, որը նաև կոչ էր անում «Արևմուտք» լրագիրը էրեցեք...», և որին պատասխանելով, Ռսկանյանը հրապարակախոսի բարձր արժանապատվությամբ գրել է հատկանշական իր խոսքերը:

«Բանադրանքի սպառնալիքը ոտքերնուս ներքև դրինք. հրաբուխ սպառնալիքին վրա կթքնենք: Մեր լրագրին փոշին, օր մը մեզ ավելի պատիվ պիտի ընե, քան մեր դույզն և պակասավոր աշխատասիրությունը: Թյուրքերը գրատուն մ' այրեցին բաղնիք տաքցնելու համար: Թյուրքի հպատակ պոլսեցի քանի մը հայեր օրագիր կայրեն իրենց կասրադությունը մարելու համար: Կերևի թե լուսավորչյանք բավական լույս չունին և կրակի տրված օրագիրներու լույսով կուզեն լուսավորվիլ: Այս կերպով *Արևմուտքին* թերթերը գոնե վայրկյան մը լույս տված եղան» (1859, էջ 118):

Ստանձնելով 1864-ի փետրվարից վերահրատարակվող «Արևմուտքի» խմբագրի պարտականությունը, Ռսկանյանը սակայն դոգմա չի դարձնում իր նախկին «անձնական կռիվը». տարիներ են անցել, «անգութ դեպքեր» են տեղի ունեցել և հակառակորդները «խոնարհություն» են ի հայտ բերում: Ուրեմն,

այսպես կոչված, անցյալի «անձնական կոիվները» արդեն երկրորդական նշանակություն ունեն, դրանց մասին կարելի է մոռանալ, լռություն պահել»։ «Հիմա խոսիլ, – բացատրում է Ռսկանյանը, – հայրենիքի վնաս տալ է և երբեք *Արևմուտքը* հայրենիքի շահը չուզեր վտանգի մեջ դնել քանի մը մարդերու համար», նա «Կխավարվի՝ չմոտավիր, կկործանվի՝ չանարգվեր, կլռե՝ չմատներ» (1864, էջ 1)։

Այս ելակետով 1864 – 1865թթ. «Արևմուտքում» Մա. Ռսկանյանն ավելի հստակ ու խորությամբ է շարադրում մամուլի ու հրապարակախոսի՝ հասարակական կյանքում ունեցած դերը։ Վերահրատարակվող հանդեսի հենց անդրանիկ համարում նա այն միտքն է հայտնում, որ պարբերական հրատարակության համար «հայրենիքի շահը ամեն ակնածությունեն վեր» է, որ նրա պարտքն է և իրավունքը՝ «Հայաստանի շահը կամ փառքը իր շահու կամ փառքի» գոհողների դեմ ծառանալ, նրանց ներկայացնել հասարակության դատին «և բոլոր ազգը հրավիրել, որ դատե և եթե պակասավոր գտնվի, դատապարտել իսկ» (1864, էջ 5)։ Ռսկանյանի խոսքը տվյալ դեպքում վերաբերում է «Արևմուտքին» և հասցեագրված է ազգի նորընտիր ատենապետին՝ ուրեմն և բոլոր մակարդակի ազգապետերին, որոնց գործունեությունը քննելու և գնահատելու համար «*Արևմուտքն* ալ չափ ունի և զայն վավերացուցեր է Բարիզի պատերու (իմա՝ բարիկադների – Մ.Հ.) վրա դրված մեթրով»։

Մամուլի դերի և իրավունքների այս հռչակումով Ռսկանյանը արձագանքում էր Մ.նալբանդյանին, որ «Նկատողությունք», «Նամակ «Մեղուի» խմբագրի», «Ազգային թշվառություն», մամավանդ «Երկու տող» երկերում ու մի շարք նամակներում, «Մատանայի պաշտոնական հանդեսում» և «Հիշատակարանում», Ռսկանյանի հետ միասին, գրեթե նույն ժամանակաընթացքում ամենայն կրթությունամբ պաշտպանում է հայ օրագիրների իրավունքը, հռչակում «Թող ապրի հրապարակա՝ խոսությունը» լոգունգը և փափագում, որ ազգի մեջ մղվող «օրհնյալ պատերազմը» լինի «հզոր, անխնա, ազնիվ և բարեխիղճ»¹։

¹ Մ.Նալբանդյան, ԵԼԺ, հ. 2, էջ 302 և 263։

Ոսկանյանը նույնպես մամուլի ասպարեզը համարում էր «աշխարհիս ամենն վրդովալի և փշոտ դաշտ», որտեղ պետք է ոտք դնել ամրապնդված, կայուն սկզբունքներ քարոզելու և պաշտպանելու համար: Հայ ասպարեզում երևացող «մանրմունք քերթերու բազմությունը լուսավորության ավետիք» չէ, այլ «խմաստակության փթթելու նշան է»: Այդպիսի անտաղանդ հրատարակությունները չեն նպաստում գրագիտության տարածմանը և գաղափարախոսության երևան գալուն, դրանց հետևանքով «հասարակության թուիքը օրեօր կապականվի և թմրած հոետորություն մը կտիրեն միտքերու մեջ»: «Միտքը գորություն մ' է», – հռչակում է Ոսկանյանը և խնդիր դնում այդ ուժը ամփոփել, ի մի գումարել, որպեսզի հնարավոր լինի «Նշանավոր բան մը արտադրել ու ընկերության ծառայել»: Մամուլը մեծ դեր ունի կատարելու այդ ասպարեզում, մանավանդ հայ մամուլը, որովհետև «հայ ազգը շատ ցրված է, անտարակույս, քայց հայու միտքը ավելի ցրված կգտնենք հիմա և կտրտմինք»: հարկավոր է բեղմնավորել այդ միտքը և ոչ թե սատարել նրա ամլությանը (1864, էջ 10, 13):

Մամուլի խնդիրն է՝ ամեն ինչից վեր դասել «Հայրենիքի շահը» և ազգին անկեղծորեն հայտնել «իր վիճակին ծանրությունը»: Այդ իմաստով մամուլը նման է «պահնորդ զինվորի. կհարկադրվի անդուլ հսկել ու վտանգ մը դիտած ժամանակ ձայն տալ, որ օգնության հասնին»: Նրա ահագանգը պետք է շարժի հասարակությանը, նրա ձայնը պետք է տեղ հասնի (1864, էջ 17): Հրապարակախոսի, այս կամ այն պարբերականի խնդիրն է «հայրենիքին շահից» ելնելով, եթե այլ հնարավորություն չունի, գոնե «վտանգի զանգակը մեղմիկ հնչեցնել» (1864, էջ 4), թեև «երբեմն բիրտ ձեռք առնելու է, որ տրված հարվածները զգալի ըլլան և սթափություն բերեն» (1864, էջ 1):

Բայց հայ մամուլի դերի հաստատման համար պայքարը միայն «Արևմուտքի» էջերից չէր մղվում: Առհասարակ XIX դարի 60-ական թվականները կարելի է վճռական ժամանակաշրջան համարել նաև հայ իրականության մեջ մամուլի սկզբունքների հաստատման տեսակետից: Հայ մամուլը, հատկապես դեմոկրատական պարբերականները, նրանցից մանավանդ «Ծաղիկը», մարտնչում էին մամուլի դերի ըմբռնման ու հասարակական ճանաչման համար: Առաջադիմության, ազգային ազատա-

գրության տեսակետից սկզբունքային նշանակություն ունեցող մի պայքար էր այդ, որտեղ էական դեր են կատարում նաև «Արևմուտքը» և նրա խմբագիր Ստ. Ոսկանյանը: Օգտվելով ֆրանսիական մամուլի համար սահմանված բուրժուական ազատությունից, որ մեծապես նպաստավոր էր մամուլի համար Թուրքիայում գոյություն ունեցող իրավիճակից, դեմոկրատական «Արևմուտքը» և նրա հրատարակատեսակ խոսքը ձգտում էին մամուլի դերի և իրավունքների եվրոպական սկզբունքներն արմատավորել հայ իրականության մեջ, գործում էին այդ սկզբունքներով ու պայքարում դրանց կիրառման համար:

Բնականաբար հայ մամուլը հաճախ էր զինվում արևմտաեվրոպական մամուլի զենքերով և նրա օրինակով առաջադրած դրույթներով հիմնավորում մամուլի դերի իր ըմբռնումը: Դեմոկրատական «Ծաղիկի» մշտական բնաբանն էր Վ.Հյուգոյի նշանավոր խոսքերը «Մամուլը ընկերային աշխարհի լույսն է...» (N 147, էջ 386), իսկ հանդեսում տպագրվում էին մամուլի սկզբունքների մասին շարունակվող հոդվածներ: Իր վերոհիշյալ կտրուկ հարցադրումից անմիջապես հետո, իրենց հաջորդ համարում Ստ. Ոսկանյանն ուրախությամբ որդեգրում է անգլիական պաշտոնատար անձանց արտասանած խոսքերը մամուլի մասին՝ դրանք վերահասցեագրելով հայ գործիչներին: Ոսկանյանը նախ հիշեցնում է «մամուլը միտքի ռումբ է» ասույթը, որպեսզի ճշտի, թե մամուլն «այսօր սպաս ունի միտքի սուրհանդակը ըլլալ և շոգիի թևով զինված՝ անոր խորհածը չորս դին ծավալել»: Ահա և լորդ Բալմիստոնի խոսքերը, որոնց վրա է բևեռում իր ընթերցողների (նաև հակառակորդների) ուշադրությունը «Արևմուտքի» խմբագիրը:

Մամուլը դիտելով իբրև հասարակության հենարան և նրա շահերի պաշտպանության ատյան, Ոսկանյանը դեմոկրատական հունի մեջ էր դնում հայ պարբերական հրատարակությունը, հրատարակատեսակ գործունեությունը: Ծակատագրի հարվածները ցիրուցան են արել հայերին: Այդպես ցրվել է նաև ազգային միտքն ու մտածողությունը: Մամուլով պետք է մեկտեղվի ազգը, ամփոփվի նրա միտքը, որ գորություն է, ուժ: Ոսկանյանի այս գաղափարների տրամաբանական հետևությունը հանգում է

բնական այն պահանջին, որ մամուլը պետք է համախմբի ազգին և ժողովելով նրա միտքը, արգասավորի այն և դրանով իսկ գորացնի նրան: Այդ իմաստով հայ մամուլը պետք է կատարի գաղափարների սուրհանդակի դեր, ինչպես և լինի «պահնորդ գինվոր», անդուլ հսկող մարտիկ, որը, աչալլօթյամբ կատարելով իր պարտականությունները, ահագանգում է, թե որտեղից և ինչ սպառնալիք է սպասվում: Հրապարակախոսի համար հասարակական ամբիոնը՝ մամուլը, նույն արժեքը և նշանակությունն ունի, ինչ որ ազգային ամենից բարձր աթոռը՝ «ազգության և պատվի խնդիրներում»: Նրանց՝ մամուլի ու հրապարակախոսի ձայնը պետք է ունկնդրվի ուրախությամբ:

Մամուլին վերապահված այդ առաքելությունն այնքանով միայն հաջողությամբ կատակվի, որքանով իրենց դերում գտնվեն պարբերականները, խմբագիր-հրատարակիչները, հրապարակախոսները. մամուլը միայն արժանավոր ժողովախոսներով և գիտուն խմբագիրներով է մամուլ: Հայ մամուլը կարող է իրենց դերը լավ ըմբռնող և համարձակությամբ կատարող հրապարակախոսների, որոնք կարող են երևան գալ միայն հասարակության հոգատարությամբ: Նրանք պետք է աներեր մնան «ուկեկուռ գրահների», «լրտեսներ ու մրտեսների» հանդեպ ու մարանչել կարողանան իրենց միակ ու միակ զենքով՝ գրչով. բարոյական արիությունը մամուլի աշխատողի անհրաժեշտ հատկանիշն է, ամեն մի պարբերականի հաջողության գրավականը:

Այժմ տեսնենք, թե ինչպես էր Ռսկանյանն «Արևմուտքում» կիրառում իր որդեգրած սկզբունքները, ինչ հրապարակախոսական գործունեություն է ծավալել, ինչ՝ և ո՛ւմ դեմ է պայքարել, ինչ գաղափարներ է արծարծել ու պաշտպանել, նաև որքան հետևողական էր իր հայացքներում և դեմոկրատական դավանանքում:

Ճակատագրի քերումով «Արևմուտքում» Ստ. Ռսկանյանի ծավալած հրապարակախոսության մեկ երրորդ մասը, հանդեսի 1864 – 1865թթ. 12 համարները հայրենական գրապահոցում չլինելու պատճառով, նախորդ ուսումնասիրողներին անհայտ է մնացել: Չմայած դրան, գնահատելի բացառությամբ հանդերձ, նրանք հնարավոր են համարել առաջ քաշել անհիմն ու

պատշաճաբար շփաստարկված վարկածներ Ոսկանյանի 1860-ական թվականների հրապարակախոսության, նույնիսկ, առհասարակ գործունեության շուրջ: Հենց սկզբից ասենք, որ «Արևմուտքի» երկրորդ տարեշրջանի այժմ արդեն մատչելի հավաքածուի՝ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանդեսի մեկ-երկու հոդվածների, մինչև անգամ դրանցից կորզված առանձին քաղվածքների հիման վրա արված ենթադրություններն ու ընդհանրացումները հակադիր են «Արևմուտքի» ու նրա խմբագիր-հրապարակախոսի ընդհանուր ոգուն, աղավաղումների կամ կանխակալ մոտեցման հետևանք են: Ինչպես շատ տարիներ առաջ, այնպես էլ վերջին տարիներին արված նման փորձերն այնքան են հեռու գիտությունից ու գիտակցությունից, որ դրանց, գոնե այստեղ, չարժե անդրադառնալ...

Ոսկանյանի «Արևմուտքը» նախ և առաջ նրա իսկ հրապարակախոսության, հայտնի չափով նաև ընդհանրապես հայ հրապարակախոսության ցայտուն դրսևորումն է՝ անկախ հանդեսի կարճատև գոյատևումից: «Արևմուտքի» գրեթե բոլոր նյութերը նույնպես պատկանում են Ստ. Ոսկանյանին, որը, ինչպես և «Արևելքում», հանդես էր գալիս ոչ միայն իր սովորական ստորագրությամբ՝ Ս.Ո., Ս.Ոսկանյան, այլ նաև ծածկանուններով՝ Հրանտ, Օ.Օրպել կամ Օ.Օ. և այլն, ավելի հաճախ՝ անստորագիր: Նրա հրապարակախոսության բնորոշ առանձնահատկությունն առաջադիմական-դժնկրատական գաղափարախոսությունն է, ազատաբաղձ ու մարտաշունչ ոգին, թուրքական լծի տակ հեծող արևմտահայության ազատագրության հոգսով տոգորված լինելը, նրան լուսավորելու, նրա միտքն արթնացնելու, նրա ներքին ու արտաքին թշնամիներին մերկացնելու

¹ Մենք 1970թ. Փարիզի Նուպարյան մատենադարանից, նրա տնօրեն Ս.Գարտաշյանի հոգացողությամբ ստացանք «Արևմուտքի» 1865թ. հունվարի 1-ի համարի լուսատիպը: Այնուհետև՝ 1971թ., Անթիլիասի Հակոբյան մատենադարանից, Խ.Հակոբյանի շնորհիվ ստացանք հանդեսի 1864 – 1865թթ. լույս տեսած 12 համարների (N 1-12) լուսատիպ պատճենը (հետագայում այդ համարների ընդօրինակությունը ստացվել էր Գ.Ա. գիտական ինֆորմացիայի բաժնի հասցեով, սակայն այժմ հայտնի չէ, թե ում ձեռքին է): Այդ տարեշրջանի «Արևմուտքի» շուրջ մենք հրատարակել ենք «Արևմուտքի» նորահայտ համարը» և «Ստեփան Ոսկանյանի «Արևմուտքը» (1864 – 1865 թվականների), (տե՛ս «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, N 2 և «Պատմա-բանասիրական հանդես», 1974, N 3):

հետևողական ձգտումը, հայ ժողովրդի շահերն ու պատիվը մշտաբար «պահապան գինվորի» պես պաշտպանելու կորովը, որ դրսևորվում է յուրաքանչյուր առանձին դեպքում:

Ամենից առաջ պետք է ընդգծել, որ «Արևմուտքում» Ստ. Ռսկանյանը մեծ տեղ է հատկացրել ազգային-ազատագրական պայքարի խնդիրներին և հարցերի արծարծումն աստիճանաբար հանգեցրել է զինված պայքար մղելու գաղափարին, այդ պայքարին խորքից նախապատրաստվելու ծրագրին, թեև երբեմն էլ ոտքի ելնելու ուղղակի կոչեր էր արել: Այդ է ցույց տալիս նրա հանդեսի ամբողջական և առավել ուշադիր քննությունը՝ նկատի ունենալով այն ընդհանուր գաղափարախոսությունը, որ նա հետապնդում էր իր հրապարակախոսության ամբողջ ընթացքում:

Ստանձնելով «Արևմուտքի» խմբագրման գործը, նրա հենց անդրանիկ խմբագրականում Լենկթեմուրի հետ կապված լեզենդը վերապատմելով, հասկացրել է, որ ստիպված է մրջյունին հատուկ համառությամբ տոկալ «Հայրենիքի և միտքի ազատության» համար¹: Այդ տոկումն «Արևելքի» հրատարակության ամիսներին չի ըմբռնվել «տեսակ մը հայերի» կողմից, բայց այժմ՝ «Արևմուտքի» հիմնադրման ընթացքում, լավ են հասկացել, թե որն է այդ «համառության բուն նպատակը»: Այդ համոզումով էլ ձեռնամուխ լինելով նոր պարբերականի լույս ընծայմանը, Ռսկանյանը խոր վստահություն ուներ նաև, որ «ի վերջե հայրենասերք պիտի սթափին և մեր հայրենիքին զարգանալուն համար պիտի ընդունին այն ամեն օրենքները, որք Եվրոպայի լույս, ուժ և բարօրություն կուտան» (1859, էջ 2):

Հայրենիքի ազատության ու զարգացման խնդրով տոգորված հրապարակախոս-խմբագիրը «Արևմուտքի» երրորդ և չորրորդ համարներում հրատարակել է գողտրիկ մի երկ՝ «Հայ դյուցազնուհի մը» վերնագրով²: Գրական առումով լուրջ ուշադրության արժանի այս պատմվածքում Ռսկանյանն ուրույն ձևով ցուցադրում է այն թշվառ վիճակը, որի մեջ գտնվում են Հայաստանը և հայ ժողովուրդը, արծարծում հայրենիքի

¹ Լեոն Ռսկանյանին նվիրված իր ուսումնասիրության մեջ ամբողջապես բերել է այդ «սքանչելի պատմվածքը», նկատելով, թե այն «շատ լավ բնորոշում է Ռսկանի պես գործողներին» («Մուրճ», 1901, N 12, էջ 149-150):

² «Արևմուտք», 1, 15 փետրվարի 1859, N 3, 4, 15 21-24, 27-29:

ազատագրության գաղափարը: Ինչ-որ չափով պատմվածքում առկա է ինքը՝ Ռսկանյանը, որ հանդես է գալիս իբրև «հայ երիտասարդ մը», որ տասը տարի Ֆրանսիայում գտնվելուց հետո, Մարսելից նավով հայրենիք է վերադառնում: Նկարագրվում է մի քանի տարի առաջ՝ հավանաբար 1856-ին, նավում տարեց անգլիացու ու նրա դստեր և հայ երիտասարդի միջև տեղի ունեցած զրույցը, որը և կազմում է պատմվածքի հենքը:

Ծանր մտորումների մեջ է Եվրոպայում ուսում ստացած երիտասարդը. «Ասիա այն մայրերու կնճանի, որք ծնել կրնան, բայց որք անկարող են իրենց արգանդի պտուղը բարգավաճել: Մարդկային ամեն տեսիլներ հոն կյանք առին, այլ և ոչ մեկը արմատ ձգելով մեծցավ հոն»: Եվրոպան դայակի դեր ունի, դրա համար էլ առաջադեմ է և կատարելություններ է ձեռք բերել՝ ի հակակշիռ խորթ մոր՝ Ասիայի: Հայրենիքի տխրալի պատկերը մտաբերելով, նա անհուն տարբերություն է տեսնում ու «անմեկնելի վիստության» մեջ ընկղմվում, բայց «իր բոլոր զգայությունները և սիրտը հայրենական սիրով կեռային և գրեթե կբողոքեին իր անհուսության դեմ»:

«Մտքի և սրտի այս դառն հակասությունների» մեջ գտնվող հայ երիտասարդը, և փորձություններից ու «սուսկալի վտանգներից» ազատված անգլիացին, որ մեկ տարիի չափ Հայաստանի կողմերը ճամբորդություն» է կատարել ու Վանի մերձակայքում վայելել է հայոց խնամքը, մեծ համարում ունի հայերի նկատմամբ, զրուցում են Հայաստանի շուրջը: Այնտեղ «ավերակե և թշվառությունն ուրիշ բան չեն նշմարվիր»: Անգլիացի ճամփորդը նույնպես նկատում է. «Ասիայի այս կողմը ողորմելի տեսարան մը կրնձայե, ամեն տեղ թշվառություն, փլատակ, ոսկրոտի և փոշի կպատեն իր երեսը, բայց հայ տոհմը դեռ կապրի այսպիսի ավերալայաց հողի վրա»: Սակայն չպետք է վիստվել, ամեն տեղ էլ քաջությունը իր դերն ունի, – խորհուրդ է տալիս անգլիացին և ավելացնում, թե «բավական է, որ ազգ մը կամք, անքայքայելի կամք մը ունենա, օր մը ավերակ և տատասկ, թշվառություն և տգիտություն կվերանան այն կողմերե: Հայաստանը կրնա նորեն ծաղկել և հինգդարյա խավարումն ետև, լուսավոր երևիլ և բազմիլ ազգերու մեջ...» (1859, էջ 22):

Իր մտորումները անգլիացու բերնով արտահայտելիս Ոսկանյանը նաև նկատում է, որ գրուցակիցն ավելի լավ գիտե Հայաստանը, քան հայագիցն և որ «հարյուր հային իննսունը իր վիճակի մեջ կգնվի և հայրենիք չճանչնար: Աններելի պակասություն մ' է այս, – նկատում է նա, – որ հայերուն վեր ի վերո կրթության ծիծաղելի կողմը և ժողովրդին անվերապահ չըլլալը կհայտնե»: Հայրենիքը ճանաչելը, այսպիսով, Ոսկանյանի համար դառնում է կարևոր նախապայման նրա առաջադիմությանը լծակից լինելու համար. բավական չէ հպարտանալ «տապանակիրն Արարատով», կամ կրկնել Երևան քաղաքի անվանման ստուգաբանությունը՝ «*երևակ* ելավ ջրհեղեղե ետև»: Օտարականն ավելի լավ գիտե Երևանը և նրա շրջակա տեղերը: Նա եղել է Երևանում, դիտել է Ջանգուն և «այն համբավվոր բերդը, որ իր անունը Բասկևիչ գորավարին տվեր էր», ականջալուր է եղել մի պատմություն, որը և նա վերհիշում է:

Պատմությունը, եթե երկու խոսքով ասենք, հետևյալն է. ԿԱՄՐՋԸՆԿԵՅՑ Երասխին մերձակա գյուղերից մեկում մի «գեղանի օրիորդ» սպասում էր իր հարսանիքին համագյուղացի այն երիտասարդի հետ, «որու քաջությունը և անահ վարքը քյուրտերուն սոսկում կուտային»: Բայց օրիորդը հանկարծ անհետանում է: Նրան առևանգած, Երևանի բերդին իշխող Հյուսեին բեյը երկար օրեր վորձում է համոզել, հնազանդեցնել հայուհուն, սպառնում է, անհատնում խոստումներ տալիս, բռնություններ գործադրում՝ «Օրիորդը հավալիելու և իր սիրամոլ կամքը կատարելու համար»: Բայց դյուցազնուհի հայը «անզգա քարի պես կմնար հոն, ամեն խոստում ոտքի տակ կառնուր և արհարամարհանքի վսեմ դեմք մը իր ներսի արիությունը կհայտնե... կամ մահ կամ ազատություն կգոչեր առնաբար անիկա. ո՛չ մահ, ո՛չ ազատություն կպատասխաներ Հյուսեին այլայլմե. կամքս կատարե հիմա, եթե ոչ՝ հարատև բանա քեզի»: Նույնը կրկնվում է մի քանի անգամ, մինչև որ պարսիկ տիրակալը աղաչանքով իր սերն է խոստովանում, իսկ արմենուհին մերժելով՝ ասում է, թե «որ ազատություն չկա, սեր չկրնար ըլլալ» (1859, էջ 27): Ինչ-որ տեղ դյուցազնուհին հայ կնոջ առաջին ներկայացուցիչն է հայ նոր գրականության մեջ: Ոսկանյանի կերտմամբ

նրա մեջ արտացոլվել է դարերի ծանրության տակ կքամ հայ կինը, որը գիտե նվիրվել իր սիրուն, տոգորված է անմնացորդ նվիրումով, բայց ճակատագրով դատապարտված:

Գյուղում իմանում են օրիորդի բերդարգելության մասին և, հարևան գյուղացիների հետ խումբ կազմելով զինված գալիս բերդի վրա, իսկ հայկյան դուստրը, լսելով իր սիրածի ձայնը, ցած է նետվում բերդի պատուհանից: Բելոդապահների հետ մարտի բռնված «ազգային քաջերը» պարտություն են կրում: Երկու տեղից վիրավորվում է «օրիորդին սիրեկանը և իր սիրուհին քիչ մը հեռու կիյնա կիսամեռ»: Իմանալով տեղի ունեցածի մասին, Հյուսեին խանը. ներում է և ազատություն շնորհում՝ «ամենեւն վատ մարդու սիրտին մեջ խորշ մը կա միշտ, զոր բնական օրենքը գերծ կպահե ապականությունեն»:

Ռոմանտիկ պատմությունն իր ռոմանտիկ հանգուցալուծումով առիթ է տվել Ռսկանյանին առաջ քաշել ազատագրական գաղափարներ: Անգլիացի գրուցակցի բերնով Ռսկանյանը հայ դյուցագնուհու մասին պատմությունը համարում է «բարոյական և սիրաբույր» և նկատում, որ երիտասարդները «կբորբոքին վեհ քաջության առջև: Հոն է ճշմարիտ մարդկություն և հոն պատկեր և օրինակ սուրբ կրքերու, որով բարի սիրտերը կապրին և կսփոփին»: Եվ ոչ միայն երիտասարդները պետք է հավատով լցվեն նման պատմությունից, այլև տառապող հայ ժողովուրդն իր գոյատևումով իսկ պետք է հպարտանա և «անդրդվելի» էություն ստանա: Ահա ինչպես է դատում Ռսկանյանի գրուցակիցը հայ ժողովրդի մասին.

«Երբ կմտածեմ, թե տասը դար է, որ Հայաստան պարսիկ, արապ և ուրիշ խուժադուժ ազգերե (իմա՝ թուրքերի – Մ.Հ.) կնահատակվի, մեծ զարմանքով կհափշտակվիմ հայերուն էության վրա: Այո, զարմանալի բան է, որ հայ սերունդը, ամեն տեսակ վիշտեր և հալածանք կրելէ ետև անհետ չեղավ իր ավերակներու մեջ ուրիշ շատ ազգերու պես. ինչ բարոյական և քրիստոնեի արիության ոգի մը պիտի ունենար անիկա, որ մինչև մեր օրերը մնա, խլրտի, շարժի և փլատակներու մեջ են կենդանության ձայն տա... Արամյան ոգին ինձ միշտ կերևեր շատ բարոյական առաքինություններով զարդարուն և սպառազեն...» (1859, էջ 24):

Լավ է ըմբռնել Ոսկանյանը ազգային ոգու ուժը և այն զգաստ պահելու անհրաժեշտությունը: Իր խոսքը թուրքական լծի տակ հեծող հայությանն ուղղելով, այլաբանական ոճով նրան կայունության ու դիմացկունության ոգի ներարկելով, նա անուղղակիորեն մերկացնում է թուրքական տիրապետության էությունը. «Պարսիկները, – ասում է նա, անշուշտ նկատի ունենալով թուրքերին, – կզգային զայս և իրենց կատաղությունը ավազակի անազորույն հափշտակության կերպերը առեր էր: Կառավարել չէր միտքերնին, հապա թալլել, ավերել և արյուն թափել: Բայց... արյուն ազգի, սերմն ազգի»: Արյուն թափելով է ազգը պահպանել իր գոյությունը. «Արիությունը պետք է, որ տա վստահություն», – նորից ընդգծում է «Երևանյան դյուցազնուհուն» սիրով ու հպարտությամբ փառաբանող Ոսկանյանը (1859, էջ 28):

Մի կողմից մերժելով հուսահատությունը և արհանալու կոչ անելով, վեր հանելով հայ օրիորդի դյուցազնությունը, ընդգծելով նրա սիրած քաջորդու «վրիժառու ոգին» ու կոչ անելով օրինակ վերցնել իր պատմությունից, Ոսկանյանը մյուս կողմից առաջ էր քաշում միավորվելու, բարոյական անքակտելի կապով համախմբվելու, ինչպես և բուն հայրենիքի սիրով տոգորվելու գաղափարը: Չբավարարվելով պատմվածքում արտահայտված այդ գաղափարով, նա վերջում դիմել է չափածո խոսքի ներգործուն ուժին՝ ձոներգելով հայրենիքը, որի սիրով առլեցուն հեղինակը մոռանում է՝ «ալիք, անդունդ, մահ անգամ», շտապում է ժամ առաջ ոտք դնել մայր երկրում և բացականչել. «Զեզ բարև, հող, որ տվիր ինձ արև»:

Ոսկանյանի այս գողտրիկ երկում արծարծված գաղափարները, նրա հայրենասիրական մեծ շունչը երկարատև ազդեցություն ունեին հայ իրականության մեջ: 1885թ., պատմվածքը լույս տեսնելուց ավելի քան քառորդ դար հետո, արևմտահայության ազատագրության դառին նվիրված Մ.Փոքրուզայանը Մարսելում առանձին գրքույկով վերահրատարակեց Ոսկանյանի երկը՝ չնշելով հեղինակի անունը, բայց խորագրի տակ նշելով՝ «Արտատպված *Արևմուտք* լրագրեն»: Դրանից ավելի քան քառորդ դար անց՝ 1912թ. (մի տասնամյակ առաջ Ոսկանյանը մահացել էր), դարձյալ Մարսելում, նույն Մ.Փոքրուզայանը գրքույկը լույս ընծայեց երկրորդ հրատարակությամբ՝ այս

անգամ նրան կցելով «Երկու տող Բ տպագրության առթիվ» բացատրությունը: Այստեղից պարզվում է, որ «Հայ դյուցազնուհի մը» երկը հրատարակելու համար Փոթթուզայանը 1885թ. նամակով դիմել է Ռսկանյանին և թույլտվություն խնդրել: Ահա ինչ է պատասխանել Ռսկանյանը 1885թ. հուլիս 4-ին.

«Սիրելի հայրենակից: Հունիսի 20-ին գրած ձեր նամակը հուլիսի 2-ին ընդունեցի, կփութամ պատասխանել, որ կրնաք «Արևմուտքի» հոդվածներն հրատարակել, բայց կաղաչեմ անունս չի հիշատակեք ձեր թերթին մեջ, որուն կբարեմաղթեմ երկար օրեր և մեծ հաջողություն»¹:

Իր բացատրականում էլ Փոթթուզայանը պատասխանում է օրինական այն հարցին, թե ինչու է Ռսկանյանը հրաժարվել իր անունը հիշատակելուց: «Մեծանուն հրապարակագիրը և գործիչը, – գրում է նա, – համիդյան ռեժիմից զուշանալով էր, որ չէր ուզում իր անունի հիշվիլը իր գործերեն արտահանություններ ընելուս առթիվ»: Ցավոք Փոթթուզայանը չի ասում, թե իր հրատարակությամբ լույս տեսած Ռսկանյանի երկն ինչ ընդունելություն կամ արձագանք է գտել, բայց այն, որ նա «Հայ դյուցազնուհի մը» պատմվածքը երկրորդ անգամ է հրատարակել, ինքնին պատասխան է այդ հարցին: Դրա հետ միաժամանակ մենք ունենք մի հեղինակավոր վկայություն այն մասին, թե ինչ գնահատականի է արժանացել այդ երկը՝ Փոթթուզայանի երկու հրատարակություններից անկախ՝ 1901թ.:

Խոսքը վերաբերում է Լեոյի անդրադարձին՝ Ռսկանյանին նվիրված ուսումնասիրությունում: «Հետաքրքրությամբ է կարդացվում այդ փոքրիկ գրվածքը», – գրում է Լեոն և հանգամանորեն վերարտադրում «վեպիկի» բովանդակությունը, բավարար քաղվածքներ կատարում, ապա նկատում, «Այս պատմությունը կերպարանափոխում է հուսարեկ հայ երիտասարդին, քիչ առաջ նա չէր հավատում թե իր խավար հայրենիքը, այդ խորք մայր Ասիան կարող է հայրենասեր սրտի համար հրապույրներ ունենալ: Բայց այժմ... Հայ հերոսուհին մի անուշ տպավորություն է թողնում նրա վրա, տաքացնում է նրա սիրտը, և նա երգում է»:

¹ Տե՛ս «Հայ դյուցազնուհի մը», հրատարակություն Մ.Փոթթուզայանի, Մարսել, 1912 (չէջակալված):

Մի արժեքավոր վկայություն ևս տալիս է Լեոն. բերելով Ոսկան-
յանի վերոհիշյալ բանաստեղծությունը գրեթե ամբողջապես՝ նա
ծանոթագրում է. «Ոսկանի այս ոտանավորը տպված է շատ
երգարանների մեջ»: Սա ևս իր հերթին ապացուցում է, որ
Ոսկանյանի ստեղծագործությունը տևական ներգործության ուժ
ունեի և ժողովրդականություն էր վայելում¹:

«Հայ դյուցազնուհի մը» պատմվածքից արդեն ակնհայտ
է, որ ազատագրական պայքարի հարցերն առաջադրելիս
Ոսկանյանի հայացքն ուղղված է նաև մայր հայրենիքի՝ Հայաս-
տանի կողմը: Դ-ա ակնառու է ոչ միայն ընդհանրապես խնդիրը
քննող հոդվածներից, այլ երբեմն նաև կոնկրետ փաստերին
նվիրված նյութերից: Վերջին առումով բնորոշ է, որ Ոսկանյանը
հատուկ անդրադարձել է Բեհբությանի մահվանը: 1858թ. մահա-
ցած երեք նշանավոր հայերի թվում նա, որքան հնարավորություն
էին տալիս օտար աղբյուրները, ներկայացրել է ականավոր զո-
րավարի անցած ուղու մեկ-երկու դրվագը: Բայց առավել իմաս-
տալի է փաստն ինքնին:

Բարսեղ Բեհբությանը (1791 – 1858) մասնակցել է ֆրան-
սիական զորասյուններին 1812թ. Ռուսաստանում ջախջախելու
և դուրս վճռոգելու համար մղված պատերազմին: Առավել ակտի-
վությամբ է նա մասնակցել ռուս-թուրքական պատերազմին՝ 1828
– 1829թթ., նշանակվել է Հայկական մարզի կառավարիչ, ղեկա-
վարել է ռուսական զորքերի դժվարին մարտերը Շամհիի դեմ, իսկ
1853 – 1856-ին, որպես Կովկասյան կորպուսի հրամանատար,
փայլուն հաղթանակների է հասել թուրքական զորամասերի դեմ
տարված ճակատամարտերում, միջազգային համբավ է վաս-
տակել:

Նրա անվան լոկ հիշատակությունը նշանակում էր վերհիշել
մի քանի տարի առաջ թուրքական զորքերի կրած ծանր պար-
տությունները: Բայց Ոսկանյանը կարծես գիտակցաբար, հենց
այդ անելու համար է անդրադարձել Բեհբությանին. «Ճշմար-

¹ Լեոն կամա քե ակամա Ոսկանյանի պատմվածքը քննում է որպես հայ
ընտանիքի առաքինությունը և հրապույրը պատկերող երկ: Գուցե նա դա արել է
գրաքննական հնարավոր արգելքը ձկատի ունենալով (տե՛ս «Մուրճ» 1901, N 12, էջ
160-162):

տություն մը հայտնելու համարձակություն պետք է ունենա մեկը, երբ բազմության կխոսի», նկատում է Ռսկանյանը հենց այն հոդվածում, ուր խոսվում է թուրքերին պարտության մատնած հայազգի զորավարի մասին: «Ռուսիայի տերության ամենեն նշանավոր զորապետներեն մեկը, – գրում է նա... – Խրիմի պատերազմի ժամանակ... Օսմանյան բանակին դեմ կռներ: Պայազատի հաղթությունը ոչ միայն Ասիայի, այլև բոլոր Եվրոպայի մեջ մեծ ազդում ըրավ և իր անունը փառքով պսակեց... Իր բնական ծիրքերը բազմաթիվ էին և իր բոլոր կյանքը արիության և բարության հյուս մ' է, որ իր անունը անմոռանալի պիտի պահե Կովկասյան տարեգիրներու մեջ»: Ռսկանյանը թելադրում է Թիֆլիսի հայերին՝ «իր վարքը տպել տալ: Պետութֆին հիշատակարանը անկե ուրիշ զարդ չպահանջեր»:

Մակայն հարցը միայն թուրքական բանակին կործանիչ հարվածներ հասցնող «հայկազն զորապետին» ներկայացնելը չէր: Գեռ բուն պատերազմական գործողությունների օրերին, «Արևելքի» 1855թ. նոյեմբերյան համարում, Ռսկանյանը հատուկ անդրադարձել է Բեհբությանցի գործողություններին, օտար մամուլից քաղել և իր հանդեսում տեղեկություններ է գետեղել «պայազատ քաջի» մասին, նույնիսկ նկարագծել է նրա դիմապատկերը, ապա, հավատարիմ մնալով իր սկզբունքին, շեշտել՝ «կփափագեինք, որ Ռուսիային ծառայելը մոռանալ չի տար՝ այս ընտիր և արի զորակալին, թշվառ Հայաստանի պատիվը և շահը»¹: Այն ժամանակ նա ափսոսում էր, որ «Արևելքը» «դժբախտաբար» չի կարող թարգմանաբար արտատպել անգլիական օրագրի հոդվածը՝ նվիրված Բեհբութովի «քաջություններու պատմությանը»: 1859-ին, արդեն մահվան առթիվ, Ռսկանյանը կատարում է իր փափագը և միաժամանակ վերադառնում է իր վաղեմի գաղափարին, շեշտում մարդկության, «ճշմարիտ ծառայություն» մատուցած գործիչներին մեծարելու անհրաժեշտությունը: Նա իր փոքրիկ հոդվածում նշում է, որ «ծանոթ և փորձառու անձերը» և «ակամատես վկա մը» իրեն պատմել են Բեհբությանի ռազմագիտության և թաղումը «կարգե դուրս շքեղությամբ կատարելու» մասին. նշանակում է նա հատուկ

¹ «Արևելք», 1 նոյեմբերի 1855, N 9, 15 286:

հետաքրքրություն է դրսևորել «վեհ քաջի» նկատմամբ, մտորել է նրա անցած ուղու շուրջ: Խոսելով օտար երկրում անուն ու փառք վաստակած հայազգիների մասին, Ոսկանյանը գտնում է, որ այդպիսիները, իրոք, պետք է «ամեն պաշտոն հանձն առնուն և վերջին հավատարմությամբ կատարեն զայն»: Դրա հետ միասին նա ցավով է արձանագրում, որ հայազգիները փառք են բերում մյուս երկրներին՝ մեկը պատերազմում հաղթանակ է նվաճում, երկրորդը, երրորդը «կարգ կանոն կհաստատեն... արվեստի շենք մը կկանգնեն սուլթաններու համար» մինչդեռ «Հայաստանի ժողովուրդը հյուղերու և փլատակներու մեջ կտապլտկի, զինակիր մը չունի, որ իր գործերը վարե Եվրոպայի լուսավորության օրենքներու համեմատ»: Այդպիսով, անդրադառնալով «Արևելքում» ծավալած գաղափարին, նա դատապարտում է ազգային գործերում հանդես բերվող ծուլությունը և նախապաշարումը, մանավանդ նրանց, որոնք «Հուդայի դեմքով օտարներու մեջ կտեղավորվին» (1859, էջ 35): Գործունեության կոչ անելով, Ոսկանյանն այսպիսով, ամուղղակի ձևով առաջ էր քաշում ազգային գործիչներ, նրանց թվում նաև ռազմագետ և «զինակիր» ունենալու անհրաժեշտությունը, գործիչներ, որոնք ազգին ղեկավարեն եվրոպական սկզբունքներով, գործեն միատեղ: Դառն է նրա հետևությունը, որ նա արձանագրում է ծանր սրտով. «Հայերը ավելի հաջող են օտարներու, քան թե ազգին ծառայելու ժամանակ»:

Ազգի շնորհալի գավակների գործունեությունը դրվատելուց և այդ գործունեությունը ազգի օգտին նպատակամղելու կոչից զատ, իբրև նույն ազգի փրկության որոշիչ գրավական, Ոսկանյանը ընթերցողներին ներարկում էր համախմբվելու և միասնաբար գործելու գաղափարը, ձգտում էր դրանով տոգորել ամբողջ ժողովրդին:

Ուազմագետ, քաղաքագետ, արվեստագետ երեք նշանավոր հայերի դրվատականը «Արևմուտքի» էջերում զուգադրվելով միական ու միասնաբար գործելու «աստվածային» գաղափարը հաստատող «առակին», ինչպես ակնկալում էր Ոսկանյանը, պետք է, որ հուշեր, թե ինչպես ծառայել ազգին, և ուղի ցույց տար, թե ինչպես կարելի է աջակից լինել պատմական իր դժվար ուղին անցնող հայ ժողովրդին:

Այդպիսի այլաբանական ձևերով էր ստիպված իր խոսքն ասում Ոսկանյանը, որովհետև նա գիտեր, որ իր հանդեսը կարդում ու տնտղում էին այնպիսի ազգայիններ, որոնք «Հուդայի դեմքով օտարներու մեջ» տեղավորվելով, թեև իրենց քրիստոնյա են համարում, մոռացել են հստակ այն ճշմարտությունը, որն ավետում է՝ «Ոչ ոք կարե երկուց տերանց ծառայել»։ Բայց երբ հարմար առիթ էր ներկայանում նա բավականաչափ հստակությամբ էր դիմում ընթերցողին՝ արդեն անտեսելով իր հոդվածը թարգմանաբար թուրքական իշխանություններից ներկայացնելու վտանգը։ Նման մի առիթ էր Խ.Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի հրատարակությունը, որին Ոսկանյանն անդրադարձել է երեք հոդվածով։ Հայ գրականագիտության մեջ նշանավոր այդ փաստը դեռևս հավուր պատշաճի չի գնահատվել ու արժեքավորվել։ Հետաձգելով այդ խնդիրը, այստեղ պարզենք լոկ այն, թե ինչպես է Աբովյանի վեպի քննության ընթացքում Ոսկանյանը շոշափել հայ ժողովրդի ազատագրության և ազգային փրկության գաղափարը, քննել վեպի, իր խոսքով ասած, ազգային արժեքը։

Ոսկանյանը լիակատար ըմբռողություն է հանդես բերել Խ.Աբովյանի ճակատագրի և վեպի ազգային նշանակության հանդեպ։ Նա գրել է. «Իր հրաբորբոք ազգասիրությունը ունենալ և չտեսնել իր ժողովուրդին մեջ կետ մը որու վրա վստահի, այնպիսի տրտմություն մը կպատճառե, զոր այն սիրտերը միայն կրնան զգալ, որ հայրենիք ինչ ըսել է գիտեն» (1859, էջ 42)։ Այդպիսի հայրենասիրությամբ տոգորված գրողն ազգի նկատմամբ իր պարտքը կատարել է նրանով, որ «օտար ժողովուրդներու դյուցազները թողլով, կամք ըրեր է մեր քաջերեն մեկը ընտրել, անոր վարքը վիպական ձևերով զարգարել և ազգին առջև դնել, որպեսզի տեսնե, կարդա և սփոփվի» (1859, էջ 54)։ Աբովյանը ցուցաբերել է «շատ հեռատես ազգասիրություն», նա շոշափել է ժողովրդի վերքը, ըմբռնել է, որ գեղջուկի վարը» քաջություն և վստմություն» է պարունակում։ Քաջագուն Աղասուն և նրա հարյուր քաջերին վեպի հերոս դարձնելով ու նրանց կերպարը մարմնավորելով՝ Աբովյանը, ինչպես նկատում է Ոսկանյանը, «Իր անձր կատարելապես կհայտնե և մեր համակրությունը՝ բոլորովին կզրավե»։

Ոսկանյանն այսպես է բնորոշում այն մեծ իմաստը, որ տեսնում է Աբովյանի վեպի երևան գալու մեջ. «Ժամանակը եկավ, որ հայ *ռամիկն* ալ զգա, որ իր ռամկությունովը մեծ բաներ կրնա ընել և ուրիշ ժողովուրդներե վար չմնար թե ազգային և թե օտարազգի բռնավորներու դեմ զինելու տեսն...» (1859, էջ 55): Ավելի ճշգրիտ բնորոշում հազիվ թե կարելի էր տալ. Ոսկանյանը, շեշտելով *ռամիկի* ռամկությունը, «մեծ բաներ» անելու առաքելություն է նրան վերագրում, մանավանդ, երբ նա զենքի է դիմում, ոտքի է կանգնում ազգային և օտարազգի բռնավորների դեմ: Եթե բացելու լինենք այն բազմակետը, որով, ինչպես շատ անգամներ, այնպես էլ այս դեպքում կիսատ է թողնում իր խոսքը Ոսկանյանը, ապա, անտարակույս, երևան կգա նրա իսկ հրաբորբ հայրենասիրությունը, հայ ժողովրդին իր իրավունքի ու գոյության համար զենքը ձեռքին մարտնչելիս տեսնելու իղձը: Ուսմիկի, նրա «մեծ բաներ» անելու կարողության փառաբանությամբ Ոսկանյանն անվերապահորեն կանգնում է հայ ժողովրդի ազգային-ազատագրության ուղու վրա, Փարիզի հեղափոխական շարժումների զինակիրն ու դրոշակակիրն ամբողջ հոգով Աբովյանի հետ էր ու Ադասու կողքին: «Իր աշակերտները և այս տողերը գրողը իր վրա պիտի գթան միշտ». – հայտարարել է նա (1859, էջ 42). Աբովյանի հետ վիավագելով, որ ամեն ինչ արվի ու ամեն ինչ տրվի, որպեսզի ազգը «մեկ լավ օր քաշի»:

Աբովյանի նկատմամբ ոսկանյանական վերաբերմունքի մեջ աչքի է զարնվում նպատակադիր վերաբերմունքը՝ հենց ազգային-ազատագրական պայքարի առումով: Ոսկանյանն իր հողվածի երկրորդ հատվածի բնաբան է ընտրել Աբովյանի հայտնի քառատողը, որտեղ բանաստեղծ-գրողը ձաղկում է ազգը և նրա երկիրն անտեր թողնելու չափ դրսևորվող անտարբերությունն ու անհոգությունը.

Վա՛յ էն ազգին, որ աշխարքումս անտեր ա,
 Վա՛յ էն երկրին, որ թշնամուն գերի ա,
 Վա՛յ էն խալխին՝ որ ինքն իր կյանքն, աշխարքը
 Չի պահանիլ ու հարամու ձեռ կուտա¹:

¹ Տե՛ս «Արևմուտք», 1 ապրիլի 1859, N 7, էջ 54 և *Խ.Աբովյան*, ԵԼԺ, հ. 3, Երևան, էջ 51:

Այնուհետև նույն առումով Ոսկանյանը ընտրել ու «Արևմուտքի» 10-րդ համարում գետեղել է «Վերք Հայաստանի» հատկանշական մի հատվածը՝ եպիսկոպոսի ու ժողովրդին մոտ կանգնած արքայանական մարդկանց միջև տեղի ունեցող զրույց-բանավեճը: Այդ ընտրությամբ Ոսկանյանը Խ.Աբովյանի լեզվով ոչ միայն դատապարտում է եկեղեցու և կրոնի քարոզը՝ համբերել, դիմանալ, անհիշաչար լինել, այլև առաջ է քաշում ոտքի ելնելու, ստեղծված իրավիճակից թրի ուժով ազատվելու, տիրող կարգերից ու կեղեքողներից ազատագրվելու գաղափարը:

Այսպիսով, դիմելով Խ.Աբովյանին, Ոսկանյանը նրա վեպի օգնությամբ նույնպես առաջ էր տանում ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունը: Իր հանդեսի էջերից նա կարծես թե տեղյակ էր դարձնում արևմտահայ ընթերցողին, որ ազատագրական մտորումներն ու խոհերը համակել են նաև արևելահայ զանգվածներին: Միաժամանակ նա արևմտահայությանը ծանոթացնում էր մեծ լուսավորիչ ու հայրենասեր Աբովյանի հետ: Նա առաջինն էր արևմտահայ ու սփյուռքահայ աշխարհին լայնորեն ներկայացնում Աբովյանին¹:

, Հասարակական այս կամ այն գործչի մասին դատելիս հաճախ կովան է դառնում նրա իրական ու կոնկրետ վերաբերմունքը ժամանակաշրջանի կամ իր միջավայրի կարևոր իրադարձությունների, սոցիալական երևույթների նկատմամբ: Ստ. Ոսկանյանը, լինելով հասարակական ակտիվ խառնվածքի անձնավորություն, հենց դրա շնորհիվ դարձավ Ֆրանսիայի մայրաքաղաքում ծավալված հեղափոխական շարժումների գործուն մասնակիցը, անխազելիորեն կապված լինելով իր ժողովրդի հետ, ոչ պակաս ակտիվությամբ մխրճվեց ազգային կյանքի ոլորտները: 1859թ. հրատարակելով «Արևմուտքը», նա բնականաբար չէր կարող անտարբեր դիտողի դերում լինել նույն թվականին ծավալված իտալական ազգային-ազատագրական շարժման նկատմամբ: Եվ ոչ միայն այդ, Ոսկանյանն առհասարակ առանձնահատուկ վերաբերմունք ուներ դեպի Իտալիան:

¹ Դեռ 1851թ. «Արշալույս արարատյանը» տպագրել է մի հատված Խ.Աբովյանի գրվածքներից՝ գաղափար տալու համար «Երևանցի հայոց» (արարատյան) րարառոից (տե՛ս «Արշալույս արարատյան», 31 մարտի 1850, N 360):

Նա, ինչպես տեսանք, իբրև ցուցարար և դրոշակակիր մասնակցեց Իտալիայի հետ համերաշխության այն ցույցին, որ տեղի ունեցավ Փարիզում 1848թ. հունիսին, հանդես գալով՝ ի պաշտպանություն իտալական ժողովրդի շահերի փողոց դուրս եկած ֆրանսիական ուսանողության շարքում, պայքարի դրոշ էր պարզում հանուն մյուս ազգերի իրավունքների: Դա նա անում էր իբրև քաղաքացիական, իբրև մարդկային պարտք՝ հիմքում ունենալով նաև իր ազգային պարտքն ու պարտականությունը, որ նա չէր մոռանում ոչ մի պարագայում, առավել ևս, երբ հարցն ինչ-որ չափով առնչվում էր հայ ժողովրդի ազատագրության հույսերի հետ:

Թերթելով «Արևմուտքը», նկատում ենք, որ Ռսկանյանը լավ ծանոթ էր իտալական մշակույթին, վկայակոչում է իտալացի գրողներին՝ նրանց այս կամ այն ասույթն ուղղակի հասցեագրելով իր հայ ընթերցողներին: Ուշագրավ է, օրինակ, որ նա դեռ 1855-ին՝ «Արևելքում», խոսելով հայերի «ճմլյալ և ճնշյալ կիսամահ» վիճակի, 7-8 հարյուրամյակ շարունակ կրած տառապանքների ու հալածանքների մասին, հիշեցնելով օտար տերությունների կրկնակի լծի տակ «անգութ և անողորմ» ճնշվելը, Ռսկանյանը հարցնում է հայ «ճշմարիտ ազգասերներին. «Ի՞նչ, մի՞թե այն աստիճան ինկանք, որ իդալյան մատենագրի մը խոսքը կրկնելու անգամ արժանի չենք. «ենք գերի, այո՛, այլ գերի միշտ դժկամակի»¹: Գերությունը իբրև նախնիներից մնացած ժառանգություն համարելով և բնավ այն նախատինք չսեպելով, Ռսկանյանը նախատինք էր համարում այդ վիճակի հետ հաշտվելը և իտալացիների օրինակով դրա դեմ չպայքարելը: Ավելին. «Հայ դյուցազնուհի մը» պատմվածքում անգլիացի ճանապարհորդների հետ գրուցող հայ երիտասարդը, և «շատ կարելի է, որ Ստեփան Ռսկանյանը իրան է պատկերացրել այդ երիտասարդի մեջ», ինչպես նկատել է Լեոն², ասում է՝ «հայրենիքես Ֆրանսա գալու ժամանակ Իտալիայեն և Ալմանիայեն անցա և բավականատեն պտտեցա հոն» (1859, էջ 22): Եթե իրոք այդ երիտասարդը պատմվածքում ներկայացնում է Ռսկանյանին, ապա հավա-

¹ «Արևելք», 15 դեկտեմբերի 1859, N 12, էջ 357-358:

² «Մուրճ», 1901, N 12, էջ 160:

նական պիտի համարել, որ նա 1846-ին լինելով Իտալիայում անմիջականորեն ծանոթացել է Իտալիային: Այս կամ այն դեպքում Ոսկանյանը «Արևմուտքում» հանդես է բերել ջերմ սեր ու մեծ համակրանք Իտալիայի, նրա ժողովրդի և հատկապես իտալական ազգային-ազատագրական պատերազմի նկատմամբ:

Դեռ 1859թ. մայիսից առաջ, երբ Ֆրանսիան անմիջական պատերազմական գործողությունների մեջ մտավ ընդդեմ Ավստրիայի, Ստ. Ոսկանյանը մի տեսակ նախապատրաստում էր ընթերցողներին: «Արևմուտքի» փետրվարյան համարում նա առանձին հաղորդում տպագրեց Սարդինիայի թագավորական ընտանիքի մասին՝ հատուկ շեշտելով, որ Վիկտոր Էմմանվելի դուստրը ամուսնացել է Իշխան Նապոլեոնի հետ, և որ վերջինս «Ֆրանսիայի կայսերության ամենեն ազատամիտ պաշտպանը կեսպվի» (1859, էջ 31): Հաջորդ համարում, շեղվելով իր արտոնության սահմաններից, մի հաղորդման մեջ Ոսկանյանը մեջ է բերում Ֆրանսիայի թագավորի «ազդու և ազնիվ ճառի» այն խոսքերը, որոնք ազդարարում են, թե «Ֆրանսիայի շահը կպահանջե, որ ներկա գտնվի հոն, ուր արդարության և լուսավորության իրավունք մը կերևի և պաշտպանություն կխնդրե» (1859, էջ 33):

Ոսկանյանը որոշակիորեն համակրում է երիտասարդ Նապոլեոն իշխանին և Իտալիայի ազատագրության գործում նրան որոշ առաքելություն է վերագրում: Այդպիսին էր ոչ միայն նրա, այլ նաև Ֆրանսիայի հասարակական կարծիքը, քանի դեռ հայտնի չէր դարձել բռնապարտական իշխանի իրական դեմքը պատմական դեպքերի իրական ֆոնի վրա: Մինչ այդ Ոսկանյանն, իրոք, առիթ ունեցավ նույն ոգով Վիկտոր Էմմանվելի անվան հետ բազմիցս հոլովել նաև Նապոլեոն իշխանի անունը, երբ սկսվեցին պատերազմական գործողությունները Ավստրիայի դեմ՝ Իտալիայի ազատագրության և ինքնուրույնության համար: Այդ մասին հաղորդումներ տպագրելու համար, բուն գործողությունները սկսվելու պահից իր հանդեսի ֆրանսիացի համարատուի միջոցով Ոսկանյանը հատուկ թույլտվություն է ստացել: Այդ արտոնությունից էլ օգտվելով, մինչև պատերազմի ավարտը, նա «Արևմուտքում» լուսաբանել է իտալական ժողովրդի ազատա-

գրական պատերազմը: Դա կարող էր մեզ հետաքրքրել սուկ այնքանով, որքանով այդ լուսաբանումը զբաղեցրել է հանդեսի 6-7 համարները, քանի որ տպագրվել են «քաղաքական մանր լուրեր» և «պաշտոնական գրվածներ»: Մակայն Ռսկանյանը հանդես է բերել խմբագրի ու հրատարակախոսի մեծ հմտություն և, ստացած արտոնությունից օգտվելով, բուն պատերազմական լուրերի մեկնաբանման ընթացքում և դրանց արանքում շոշափել է ազգային-ազատագրական պայքարի որոշ հարցեր, խոսքն ուղղել է հայ ընթերցողին՝ անուղղակի ձևով հաճախ նրան շատ բան ասելով ու հասկացնելով:

Իտալիայի ազատագրության և ինքնուրույնության համար երկար տասնամյակներ մղվող պայքարը 1860-ական թվականներին հասավ իր ավարտական բարձրակետին և պսակվեց հաղթանակով: Այդ հաղթանակի գործում կարևոր փուլ էր 1859թ. Իտալիայի կողմից մղված ազգային-ազատագրական պատերազմը, որով սկզբնավորվեց Իտալիայի միավորումը, այսպես ասած, վերևից:

Ֆրանսիայում հրատարակվող «Արևմուտքի» խմբագիրը սկսված պատերազմը դիտարկում էր լույ կնի կողմից՝ Իտալիայի միավորման ու ազատագրության առումով: Այդ տեսակետից էլ նա լուսաբանում էր պատերազմական իրադարձությունները, Ֆրանսիայի խաղացած դերը: Հենց առաջին հողվածում, որ լույս է տեսել պատերազմը սկսվելուց անմիջապես հետո, հանդեսը ցույց է տալիս, որ համակրանքով է վերաբերում իտալական ժողովրդի պայքարին, նրան ազատագրական պատերազմում աջակցող Ֆրանսիային, որի «բոլոր ազգը, ազգային ժողովրդ, ծերակույտը միասիրտ հավանություն կուտան վեհափառ կայսեր խոհեմ և ազգու քաղաքայանության... Վայրկյան մը չենք տարակուսիր և հառաջմե կըսենք, որ քիչ ատենեն Իտալիան իսպառ պիտի ազատի օտարին անտանելի լուծեն»: Մեծ էր Ռսկանյանի ոգևորությունը, նա քաղում է ֆրանսիական գորավարի խոսքերն՝ ուղղված զինվորներին՝ «Ալ ետ չնայինք, խոսելու ժամանակը անցավ», նշում է «տկար, բայց ազնիվ ազգ մը գերութենեն ազատելու» համար դեպի մահ նետվողների «մեծ աշխույժը և աննկատելի զվարթությունը», ժողովրդին վարակած խանդավառությունը, բազմության հետ միասին նա էլ կայարան է գնում

ճանապարհելու «օրինավոր կամ կամավոր զինվորներին», թարգմանում և հանդեսի ինֆորմացիայի բաժնում զետեղում է իր ունկնդրած երգի երկտողը՝ «օ՛ն երթանք առաջ ուրախ և միշտ քաջ»: Ոսկանյանը նույնիսկ տալիս է զորախմբերի բաժանումը, նշում նրանց հրամանատարներին, քաղում է Սարդինիայի թագավորի խոսքերը, որով նա դիմել է «պատվո և փառքի դաշտը» մեկնող զինվորներին, ծաղրում է Ավստրիայի թագավորի կոչը, որ Իտալիան համարում է իր բանակի հայրենիք. «Օ՛հ, ոչ, – գրում է հանդեսը, – այս խոսքը ալ չպիտի գրվի թերթերու վրա: Ֆրանսիային թուրը պիտի չթողու, որ մեյ մ՛ ալ կրկնվի Եվրոպայի մեջ»:

Քննվող հոդվածը, թեև գրված է լրագրական զանազան հաղորդումների հիման վրա, լիովին երևան է հանում Ոսկանյանի ինքնուրույն մոտեցումն ու դիրքորոշումը հանգուցային հարցերում: Նա պարզապես ներկայանում է որպես Իտալիայի ազատագրությանը նվիրված մարտիկ-հրապարակախոս, իր միավորման ու անկախության համար պատերազմող իտալական ժողովրդի եռանդուն ջատագով:

Ոսկանյանն անկասկած «մի և անկախ հայրենիքի» համար պատերազմի ելած իտալացիներին փառք տալով, «կիսամեռ ազգերու» թվում նկատի ուներ նախ իր ժողովրդին և նրան անուղղակի կոչ էր հղում՝ հետևել այն ամենին ինչ տեղի ունի Իտալիայում, մատնացույց էր անում այն օրինակը, որին պիտի հետևի «մի և անկախ հայրենիք» երսզող հայ ժողովուրդը: Այս միտումը, ինչպես կտեսնենք, ավելի ու ավելի ցցուն ձևով է դրսևորվում «*որոշ նպատակով ընդրված*»¹ պատերազմական լուրերի մեջ:

Արևմտահայությանն ազատագրության գաղափարով տոգորելու սևեռուն նպատակը Ոսկանյանը երբեմն զուգակցում է կոնկրետ և չափազանց ներգործուն օրինակների պրոպագանդին, որով աներկբա ուսուցում է, թե ինչպիսին պետք է լինի իր իրավունքները վերահաստատելու համար պայքարի ելնող ժողովուրդը: Նա դա անում է Տոսկանայի ժողովրդական ոգևորությանը հայ զանգվածներին հաղորդակից դարձնելու միջոցով:

¹ Մ. Կարինյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 472:

Այդ առթիվ նրա հրատարակած բազմաթիվ «մանր լուրերի» մեջ հատկապես ուշագրավ է «Արևմուտքի» նշված համարում գետնեղված հաղորդումը: Գ-ավառի ժողովուրդը պատերազմական գործողությունները սկսվելու պահից պատրաստվում է մասնակից լինել Իտալիայի ազատության ու անկախության մարտերին, Լոմբարդիա է ուղարկում իր զնդերը, որ միանան Գարիբալդիի բանակի՝ «Ալպյան որսորդը ըսված դյուցազնյա շահատակներու հետ»: Փառաբանելով վերջիններին, Ոսկանյանը լիահույս է, որ Տոսկանայի զնդերը՝ «Արենյան որսորդը արժանի կհանդիսանան իրենց ընկերներուն և կշարունակեն արյունարբու թշնամիի մը որսը»: Չբավարարվելով դրանով, Ոսկանյանը ցույց է տալիս, թե ովքեր են այդ զնդերի մեջ մտնում, ինչ ոգևորությամբ են նրանք մարտադաշտ ուղարկվում: Ահա ինչ է գրում Ոսկանյանը.

«Որսորդները մեծ մասով ազնվական և պատվավոր ընտանիքներն են և հայրենական սուրբ սիրո համար կկռվին: Մայր մը իր երեք որդիքը *որսորդ* ըրեր է և իր բոլոր եկամուտը *որսալու* զենքի համար կնվիրե: Փափկասուն քույր մը իր ձեռքով բաներ է դրոշը, որ իր եղբոր հանձնվեր է: Բայց որ ավելի զարմանալի է, նաև երևելի անձեր, նշանավոր հեղինակներ իբրև պարզ զինվոր կժառայեն իոն և հրանոթներով կվարժվին: Մեկ օրինակ միայն հիշենք: Պ.Մոնդանելի, որ ժամանակավ արտաքին գործերու պաշտոնյա եղած է և որ քաղաքական մեծ աստիճան ունի, հիմա հրացան ուսին վրա կրթություն կընե և վաղը լեռն լեռ պիտի վազե իր գորապետին հետ, բարբարոսները հետաջինջ ընելու համար Իտալիայեն» (1859, էջ 104):

Այս տողերը Ոսկանյանն ուղղակի հղում էր հայ ընթերցողին: Ռ-ազմի դաշտ գնացող իր եղբոր համար դրոշ հյուսած քրոջ մասին հաղորդելով, նա ծանոթագրությամբ հիշեցրել է Նդիշեի հայտնի խոսքերը՝ դրանք շրջադարձումով հղելով իտալացի կանանց՝ «Տիկնայք փափկասունք *Իտալիո* աշխարհին, որք գրգեալք և գգուեալք էին...»¹: Ավելին. հիշյալ հաղորդումը

¹ Նկատի ունենալով Ոսկանյանի հաղորդածը եղբոր համար դրոշ հյուսած քրոջ մասին և դրան կցված ծանոթագրությունը, մենք հանգել ենք այն եզրակացության, որ դրանք ստեղծագործական խթան են եղել Մ.Նալբանդյանի՝ «Իտալացի աղջկա երգը» գրելու համար (տե՛ս «Սովետական գրականություն»,

Ոսկանյանը ավարտում է այսպիսի բնորոշ խոսքով. «Ահա ճշմարիտ հայրենասիրություն և երբ հայերը կուզան անոր ասոր, պ. Կոճիկյանին կամ պ. Ապիտոնիկին ազգասեր կըսեն, անհնարին է մեզի չժպտիլ և չտրամբիլ»:

Դժվար չէ պատկերացնել այն խորը դառնությունը, որ, իրոք, ապրում էր Ոսկանյանն իր ժողովրդի վիճակի առթիվ: Դրան համապատասխան էլ խորն է նրա ատելությունն ավստրիական զավթիչների, մի այլ ազգի ազատությանը բռնացող, անկախությունը ոտնահարող տերության նկատմամբ: Այս դեպքում ևս կարելի է ենթադրել, որ Ոսկանյանը «ասատիկ բառեր» հասցեագրելով Իտալիայի մի շարք գավառներին իշխող Ավստրիային, տողամեջ նկատի ուներ Արևմտյան Հայաստանը զավթած Թուրքիան:

Ճիշտ է, նա, ինչպես տեսանք, այն կարծիքն է հայտնել, թե քչերն են հասկացել, «թե ինչ ըսել ուզեցինք և ինչ ըսինք», բայց նայնպես արևմտահայ ընթերցողն, անշուշտ, հասկացել է նրան՝ պարզ տրամաբանությամբ համադրելով իր և իտալական ժողովրդի հարանման վիճակը:

Սխալված չենք լինի, եթե Ոսկանյանի ազգային-ազատագրական գաղափարախոսությունը դիտարկենք նաև մի շարք գործիչների նկատմամբ նրա դրսևորած վերաբերմունքի կապակցությամբ, մասնավորապես այն համակրանքում, որ ցուցաբերել է ազատագրական պայքարի մի շարք հերոսների հանդեպ: Արևմտահայ, եթե չենք սխալվում, նաև առհասարակ հայ իրականության մեջ Ոսկանյանն առաջինն է մամուլում մեծարել

1978, N 2, էջ 145-149): Հայտնի է Նալբանդյանի խոր ակնածանքը նախնի հայ կնոջ ու մայրերի նկատմամբ, նրա ընդգծված դիրքը մանավանդ դեպի Եղիշեի փառաբանած հինգերորդ դարի հայ կինը, որի «սիրտը զարկում էր ազգության համար», և որն իր քաջությամբ ամուսնու հետ և նրա կողքին մասնակից էր «ազգին հասած հարվածներին»: «Հինգերորդ դարում, – գրել է նա, – երբ հայոց ընտիր որդիքը գոհ գնացին պարսկական վիշապին, նոցա մայրերը, կանայքը, բույրերը և դստերքը պակաս չերևեցան այն քաջերից, որ ազգի պահպանության համար քաջությամբ ընկան պատերազմի դաշտումը: Նոքա մոռացան յուրյանց կանացի տկարությունը, յուրյանց փափկատուն կյանքը, դուրս եկան յուրյանց փառահեղ բնակարաններից և պարզ երկնքի տակ, գետնի վերա տարածվելով չարչարակից գտնվեցան առաքինի զինվորներին... Սե՛ծ և անմերժելի պարտականություն կա ձեր վերա նմանել նոցա...» (ԵԼԺ, հ. 1, էջ 455-457):

և ջերմությամբ ներկայացրել Իտալիայի ժողովրդական հերոս Ջ.Գարիբալդիին (1807 – 1882): Իտալական հեղափոխական-դեմոկրատական շարժման առաջնորդներից մեկին՝ Իտալիան «ցածից» միավորելու պայքարի ականավոր ղեկավարին ու գորահրամանատարին պատերազմական առաջին իսկ լուրերի մեջ Ոսկանյանը ներկայացնում է «Արևմուտքի» ընթերցողներին: Ապա հանդեսում հրատարակվում է նրա հայտնի կոչը լոմբարդացիներին. «Թշնամին միևնույն է՝ միշտ դժնյա, արյունարբու, անողորմ, ավարառու... Ջենք առեք, ուրեմն: Սարկությունը պիտի դադրի, ով որ զենք մը կրնա առնուլ և չառնուր, ով որ կրնա շարժիլ և երևան չելներ, մատնիչ է... Իդալիա պիտի գիտնա նորեն ելնել այն աստիճանը զոր մախախնամությունը իրեն սահմաներ է ազգերու մեջ» (1859, էջ 96): «Արևմուտքի» նույն՝ 12-րդ համարում Ոսկանյանը պատմում է Գարիբալդիի «անակնկալ քաջությունների» մասին: Դյուցազուն Գարիբալդին «հագիվ թե չորս-հինգ հազար կամավոր զորք ունի և ահա լեռներե, գետերե, քաղաքներե անցնելով Միլանեն տասերկու ժամ հեռու կգտնվի այսօր: Թևավոր արշավանք մ՝ է այս... անհնարինը հնարին կըլլի հայրենական դրոշին ներքև» (1859, էջ 93): Նա նկարագծում է դյուցազն գորահրամանատարի «ազատության դրոշը» ծածանող մարտական ուղեգիծը. «Ուրկե և անցնի ժողովուրդը իր շունչը կզգա, օդը իր համբավը կծավալե, արծազանքը իր խոսքերը կկրկնեն: Կռիվեն ետև կխոսի, և իր ձայնը սիրտերը կշահի, խոսելեն ետև կկռվի, և հաղթությունը կքոչի իր գլխուն կուզա: Մարդ կզարմանա – ըսինք և գրեթե ականա հին աշխարհակալի մը խոսքը կհիշե. Եկի, տեսի, հաղթեցի»:

Օգտագործելով առիթը՝ Ոսկանյանը համառոտակի տալիս է Գարիբալդիի կենսագրությունը¹, հատուկ շեշտում ոչ միայն նրա քաջագործությունները, այլև «ազատասերներու ապստամբության մասնակից լինելը 1834-ին, 1848 – 1849թթ. հեղափոխական-ազատագրական պայքարում ակտիվ դեր կատարելը: Հռոմեական «նորահաստատ տերության գորքերում վրա դրվելով, անհնարին դյուցազնությամբ պաշտպանեց հանրապե-

¹ Գարիբալդիի ընդարձակ կենսագրականը (1861թ. N 3-4 և 7-8...) հրատարակել է «Հյուսիսափայլը»՝ քարգմանելով «Սովորեննիկից»:

տությունը Ֆրանսիայի բանակին դեմ», – արձանագրում է Ոսկանյանը և, իր անհուն համակրանքն արտահայտելով հայրենիքի սիրուց շարունակ անհանգիստ վիճակում գտնվող զորապետի նկատմամբ, նրա արիությունը օժում է «հայկական» ամականով. «Հայկական քաջություն մը, կարգե դուրս անվախություն մը, հրաբուխ ազգասիրություն մը և ռազմագիտական անգյուտ ոգի մը, – ահա Կարիպալտիին հատկությունները: Քանի հոգի կա Եվրոպայի մեջ, որ զանոնք ունենա և գործ ածե...: Կարիպալտին և իր դյուցազգի գունդը Իդալիայի անունը կվառավորեն և հիշել կուտան, որ մեռած չէ քաջությունը անոնց սիրտին մեջ» (1859, էջ 96):

Հարցն, իհարկե, գործածությունը չէ. Ոսկանյանը Գարիբալդիին «հայկական քաջություն» վերագրելով, ուրույն ձևով նրան մոտեցնում է հայ ընթերցողին և, մատնանշելով, որ իտալացիների սրտերում «մեռած չէ քաջությունը» ակնարկում էր իր փափագը, որ Հայկի նոր սերունդը դյուցազուն (սախնիների ոգին անմահ պահի իր սրտում, որ ծնվեն ու երևան զան նոր դյուցազուններ, ինչպես նա քանիցս շեշտել է ուղղակի խոսքով: Տեսանք արդեն, որ Ոսկանյանն ընդգծված վերաբերմունք ուներ Գարիբալդիի «*Ալպյան որսորդներին*» նկատմամբ: Նա առհասարակ բարձր էր դասում նրա զորաբանակը և, կանխելով հայ ընթերցողներին, գրել է. «Չկարծե մեկը, թե Կարիպալտին անկանոն զինակիրներու կիրամայե և *Որսորդը (քաջիարորի)* տեսակ մը պաշլպագութ են¹: Ոչ, Կարիպալտիին խստությունը և վարժը այնքան սաստիկ են, որ նաև կարգավոր բանակներու մեջ չեն տեսնվիր» (1859, էջ 104): Ոգևորությամբ է Ոսկանյանը տեղեկացրել ընթերցողին, որ Գարիբալդիին արժանացել է ոսկե մեդալի, որ «կարգե դուրս պատվո նշան կսեպվի», զետեղում է ազատագրված «*հայրենասեր Պրեշիա*» քաղաքի բնակչությանն ուղղված նրա կրակոտ կոչը². «Հայրենիքին վրիժառու կամքը կատարելու թույն հասավ. հիմա է ժամանակ պատերազմի

¹ Ժամանակի, մասնավորապես ֆրանսիական մամուլում տպագրվել են ոչ քիչ նյութեր, որոնցում գարիբալդիականները ներկայացվում էին իբրև ելուզակներ:

² Այդ կոչը 1859թ. հուլիսի 15-ի համարում (N 14, էջ 108) հրատարակել է նաև «Հյուսիսափայլը»:

դաշտին և Մանթուի կախաններու վրա մեռած մեր եղբայրներու անունին համար սպառազեն կռվիլ: Չեր փառավոր ավանդու-
թյունները շարունակելու օրը հասավ. մի թեթևիք, անցյալը
մոռցուկ չէ փառքին համար: Եռագույն դրոշը, որ ձեր սիրտին
կուռքն է, հողմալիք կծփի գլուխնուդ վրա և կպատվիրե ձեզ հայ-
րենասիրություն ու քաջություն... Ազատվողք արժանի են ազա-
տողներուն» (1859, էջ 108):

Ժամանակ անց, արդեն 1864-ին, Ոսկանյանը նորից է
անդրադարձել Գարիբալդիին՝ Անգլիա կատարած նրա
այցելության առթիվ: Մեծ շուքով է նա ընդունվել՝ «ազնիվ և
ռամիկ, այր և կին, օտար և բնիկ ամենքը միաբերան զինքը օրե-
րով գովելե, փառավորելե և երկինք հանելե շղաղրեցան»: Դրանց
«Իտալիայի զավակը» հավատ ընծայեց ու «սկսավ քարոզել այն
սկզբունքը, որու համար իր կյանքը անթիվ վտանգներու մեջ
նետած է»: Ցավ է դա պատճառում Ոսկանյանին, քանի որ «Կա-
րիպալտիին ազնիվ և պարզ սիրտը չզգաց, որ Անգլիայի երկդիմի
քաղաքականության գործի մ' էր»: Արձանագրելով, որ Անգլիան
քաղաքավարությամբ արտաքսել է Գարիբալդիին, Ոսկանյանը
դառնությամբ նկատել է. «Մարդ չգիտեր, թե որու վրա ավելի
զարմանա. Կարիպալտիին պարզամտության, թե Բալմերսոնի
երկդիմության...» (1864, էջ 72)¹:

Ինչպես ակնառու է, Ոսկանյանը ոչ միայն դրական ու ջերմ
վերաբերմունք է հանդես բերել Գարիբալդիի նկատմամբ, այլև
հիացած էր նրանով, նրա գլխավորած շարժումով, նրա
զինակիցներով: Որքան հնարավորություն էին տալիս
«Արևմուտքը» և նրան տրված ժամանակավոր ու սահմանափակ
արտոնությունը, նա հայ ընթերցողներին է ներկայացրել ազգա-
յին-ազատագրական պայքարի դյուցագնի գործողությունները,

¹ Հանդես գալով «Պեգասյան քոչնիկում», Պերճը (Գր. Չիլիկիթյան) Սո.
Ոսկանյանի վերադարձը հայրենի Ձմյունիա քաղաքը համարել է նույնը, ինչ
Գարիբալդիի այցն էր Ալպիոնի որդիների համար: Նա, միաժամանակ վերհիշելով
Գարիբալդիի այցը Մեծ Բրիտանիա, նկատել է, որ Իտալիայի քաջագունը
«հասկցավ անշուշտ, թե միամտություն էր լորտերու համակրական ցույցերուն
հավատալը: Ոսկանյանը նույնպես քաջապես գիտե անշուշտ և կզսանազանե կեղծը
անկեղծեն, շահախնդիրը անշահախնդիրեն» («Պեգասյան քոչնիկ», 1 նոյեմբերի
1865, N 41, էջ 321-322):

նրա ազատատենչ գաղափարները: Իր ունեցած լեզուի հնարավորություններով Ոսկանյանը առաջ է տարել ազգային-ազատագրական գաղափարախոսությունը, նպաստել է հայ զանգվածների մեծ զարթոնքին: Ստ. Ոսկանյանի հանդեսում «Գարիբալդիին և գարիբալտիական գործամասերին նվիրված բոլոր նկարագրական էջերը այնպես էին կերտված, – գրել է Ա.Բ.Կարինյանը, – որ կարող էին միայն այրել արևմտահայ երիտասարդ ընթերցողների սիրտն ու հոգին»¹, ավելացնենք՝ նաև տողորել ազատագրական պայքարի պաթոսով, ինչպես և ներգործել հայ հասարակական-քաղաքական մտքի ձևավորման վրա: Այն բանում, որ 1860-ականի մի շարք հայ պարբերականներ, մասնավորապես դեմոկրատական «Մեղուն» և «Շաղիկը», լուրջ տեղ են հատկացրել գարիբալդիական շարժմանը, ազդեցիկ դեր է կատարել «Արևմուտքի» օրինակը, որով հակակշռվում էր հետադիմական-ամիրայական մամուլի բացահայտ բացասական դիրքը Գարիբալդիի ու նրա գլխավորած շարժման նկատմամբ:

Հայտնի է, թե որքան ջերմ էր Մ.Նալբանդյանի վերաբերմունքը Գարիբալդիի ու իտալական շարժման նկատմամբ: Նա, ինչպես նկատել է Ա.Գ. Հովհաննիսյանը, ազգի ազատագրության հեռանկարը կապում էր նաև Գարիբալդիի գլխավորած շարժման հետ, երազում էր, որ Արարատի խառնարանից նույնպես հրաբուխը ծխի, ինչպես Լեռնայից ու Վեզովից, իր մոտ պահպանում էր «սուրբ Գարիբալդիի» լուսանկարը:

Ակնառու համարելով Գարիբալդիի ու նրա գլխավորած շարժման նկատմամբ Ոսկանյանի ու Նալբանդյանի վերաբերմունքի ելակետային մերձավորությունը, մենք, այսուամենայնիվ, հեռու ենք Ոսկանյանի վերաբերմունքի մեջ ավելին տեսնելու միտումից, քան հնարավորություն են տալիս «Արևմուտքի» նյութերը, որոնք, ինքնին շատ բան են ասում: Միաժամանակ չենք կարող շնչել, որ եթե Ոսկանյանը հնարավորություն ունենար, ապա շատ ավելի ազատորեն կորսնորեր իր այդ վերաբերմունքը:

Իր ժամանակավոր արտոնությունից և ներկայացած առիթից օգտվելով Ոսկանյանը, թեև ոչ լիաձայն, բայց բավականաչափ ուշագրավ վերաբերմունք է ցուցաբերել նաև

¹ Ա.Բ. Կարինյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 474:

հունգարական ազգային-ազատագրական շարժման և նրա հերոսների նկատմամբ՝ այս դեպքում ևս դրսևորելով ազգային-ազատագրական պայքարի իր գաղափարախոսության որոշ նրանգները: Նախ նշենք, որ Ոսկանյանը մի փոքր, բայց տպավորիչ շփում է ունեցել 1848 – 1849թթ. հունգարական հեղափոխական շարժումների մասնակիցներից մեկի հետ. «Ասկե քանի մը տարի առաջ, – գրել է Ոսկանյանը 1859-ին, – երբ Պրյուսել կգտնվեինք, երիտասարդ պաշտոնավար մը ճանչցանք, որ յոթը վերքով վտարանդի կխուսեր օտար երկրի վրա: Պրյուսել հասնելէ ետքը ոստիկանությունը պահանջեց, որ իր թուրը չկրէ քաղաքին մեջ պտտելու ատեն: Անհնարին եղավ մեզի զինքը համոզել, որ հնազանդի ոստիկանին: «Այս թուրը Քոսսյութ ինձ տվավ, կըսեր արի երիտասարդը, և ինքը միայն կրնա զայն ձեռքես առնուր», և անդուլ կկրկներ հրաշունչ ձայնով. «Է՛լիեն Քոսսյութ, է՛լիեն Քոսսյութ», որ կնշանակէ՝ ա՛պրի Քոսսյութ: Ավելի լավ սեպեց Պելժիգատեն հեռանալ քան թե իր թուրը վար դնել» (1859. էջ 104):

Պատահական այս հանդիպումը, բնականաբար, մեծ տպավորություն է թողել Ոսկանյանի վրա: Այդ մասին, սակայն, Ոսկանյանը վերհիշում է բնավ ոչ պատահաբար: Իտալական ազատագրական պատերազմի օրերին ազատագրական պայքարի ոգին ալեկոծել էր Հունգարիան, ոտքի հանել նրա հայրենասեր զավակներին՝ 1848 – 1849թթ. հեղափոխության հերոսներին: Հունգարական հեղափոխության մեծ զավակը՝ Լաոշ Կոշուտը (1802 – 1894), որ հեղափոխության պարտությունից հետո տարագրվել էր երկրից, 1859-ի հուլիսին, Ավստրիայի դեմ մղվող հերոսական մարտերի օրերին, Լոնդոնից ժամանեց Փարիզ, որպեսզի այնուհետև միանա իր հայրենակիցներին: Իմանալով այդ մասին, Ոսկանյանը հաղորդում է զեռեղում «Արևմուտքում», նաև ավելացնում. «Ավելորդ է ըսել, որ, ինչպես Իտալիայի, նույնպես և Մաճառստանի, նույնպես ամեն նկուն ազգերու անկախությունը կուզենք, և ի բոլոր սրտե պիտի բերկրինք, երբ լսենք, թե մաճառները ոտքի ելեր են իրենց ազգության անմեռ իրավունքը կպաշտպանեն: Եվրոպա մեծ համակրություն ունի այս ազգին զավակներու վրա, որք քաջության այնչափ վսեմ օրինակներ տվին աշխարհի: Հավաստի ենք,

որ Քոսսյութին ներկայությունը նորեն պիտի արծարծե ազգային հուրը մաճառներու սիրտին մեջ»: Այսպիսի խանդավառ արձագանքից հետո է, որ Ոսկանյանը վերհիշում է «հրաշունչ ձայնով» Կոշուտին փառաբանող ծանոթ հունգարացուն, «եթե արքորը և իր վերքերը զինքը կենդանի պահեցին, Քոսսյութին հետ թուր քաշողներեն առաջինը ինք պիտի ըլի անտարակույս» (1859, էջ 104):

«Արևմուտքի» հաջորդ համարում իսկ մա զետելեց Կոշուտի համառոտ կենսագրությունը և այդ առիթով դրսևորեց իր վերաբերմունքը հունգարական ազգային-ազատագրական պայքարի և «երևելի հայրենասերի» նկատմամբ: Նա նշում է Կոշուտի «տաղանդը և ճարտարախոսությունը», «հայրենիքի ազատությանը» օգնելու կամքը: Հայրենասիրական պարբերական հրատարակելու և «իր ազատասիրության» համար Կոշուտը դատապարտվեց չորս տարվա բանտարկության: Հայրենասեր Հունգարիան նրան ազգային ժողովի անդամ ընտրեց «և այն ատեն, մեկ կողմն իր լեզվանի ու հզոր ճառերով հասարակության համակրությունը գրավեց բոլորովին»: 1848-ին նա էր «ոզի ընդդիմության, որ կուզեր Ավստրիայի անտանելի լուծը թոթվել»: Հունգարիայի անկախությունը նվաճվել էր, բայց ցարական զինվորական ճնշման և դավաճանության հետևանքով հեղափոխությունը պարտություն կրեց, «մաճառ ազգը արյունի, սուզի, գերության և սուսկալի աղեթքներու» մատնվեց, «նախնի արտոնությունները, ազգային էությունը» վերացվեցին, երկիրը դարձավ ավստրիական գավառ. «Ավստրիան իր բռնամուլ կամքը կատարեց» (1859, էջ 110):

Մի այլ առիթով ևս Ոսկանյանը առանձնահատուկ համակրանք է հանդես բերել Հունգարիայի անկախության համար զենքը ձեռքին մարտնչած հերոսների նկատմամբ: Մամուլում հաղորդում է երևացել այն մասին, որ «մեկ քանի երևելի մաճառներու» շարքում Իտալիա է մեկնել նաև Գ-իլ անուճով մի զորապետ, «Արդյոք, – հարցնում է Ոսկանյանը, – այս անձը ազգականություն ունի այն քաջ հայկավան զորապետին հետ, որ Մաճառստանի կռվին ատեն հռչակավոր եղավ և որ ազատության սիրով բորբոքելով, Ավստրիայի դեմ զինվեցավ»: Ոսկանյանին հայտնի է, որ էրնեք Կիշը (Քիշյան-Պատիկյան) հեղափոխության

պարտությունից հետո հունգարական բարձրաստիճան մի խումբ հրամանատարների հետ «սպանվեցավ զնդամահ»։ Անշուշտ իր հայ ընթերցողների վրա ավելի ուժեղ ներգործելու համար Ոսկանյանն իր լակոնիկ հաղորդումն ավարտում է այսպես. «Ավստրիան Հայկազն քաջին արյունը ծծելով զոն չեղավ, գանձերն ալ հափշտակեց...» (1859, էջ 95):

Հունգարական հեղափոխության ուրիշ հայ մասնակիցների մասին, սակայն, Ոսկանյանին հայտնի չէր, ոչ Լազար Վիլմոշի, ոչ Հովհաննես Յեցի, ոչ Ալեքսանդր Լուկաշի, ոչ Իշտվան Գորովեյի (Ստ. Կորովյան) մասին նա որևէ ակնարկ չի անում¹: Որքան էլ տարօրինակ է, նա առհասարակ որևէ ակնարկ չի արել նաև լայն գործունեություն ծավալած Հակոբ Մելիքի մասին, թեև մի որոշ ժամանակ Փարիզում գործել են կողք-կողքի: Տարակույս չի կարող լինել, որ Ոսկանյանը հնար ու ձև կգտներ նրանց օրինակն արևմտահայությանը մատնացույց անելու համար:

Այն առումով, որ Ոսկանյանը ազգային-ազատագրական գաղափարներն արժարժում էր հենց որ հարմար առիթ էր ներկայանում, հետաքրքրական է Մետերնիխի մահվան առթիվ նրա գրած հոդվածը²: Հենց միայն նրանով, որ Ոսկանյանը ներկայացներ Մետերնիխի կենսագրական մերկ փաստերը, որոնք բավական ցցուն են, արտահայտած կլիներ իր վերաբերմունքը: Բայց նա այդպիսի լոյալ դիրք չի գրավել: Ոսկանյանն իրեն հատուկ հակիրճությամբ քննել ու ձաղկել է Մետերնիխի գործունեությունը, միաժամանակ տալով հիանալի օրինակն այն բանի, թե ինչպես կարելի է հրապարակախոսական հմտությամբ որևէ գործչի կենսագրությունը անդրադարձնել միջազգային կյանքի դիտակետից՝ հանդես բերելով ինքնուրույն մտահայեցություն և նպատակասլացությամբ արժարժել որոշակի գաղափարներ³:

¹ Հունգարական ազատագրական-հեղափոխական շարժումներին հայազգի գործիչների մասնակցության մասին տես «Հայ ժողովրդի պատմություն», հ. 5, Երևան, 1974, էջ 504-511, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1968, N 3, 1977, N 3, «Литературная Армения», 1971, N 11, ԳԱ «Լրաբեր» հաս. գիտ., 1970, N 7, 1972, N 3: Տես նաև «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 3, էջ 181:

² «Արևմուտք», 1 հուլիս 1859, N 13, էջ 100-101:

³ Հետաքրքիր կլինի համադրել Մետերնիխին նվիրված Ոսկանյանի և Պիսարևի («Русское слово», 1861, N 11-12) հոդվածները:

Այլ պարագաներում հազիվ թե Ոսկանյանն անդրադառնար Մետերնիխի նույնիսկ մահվան փաստին: Բայց Ավստրիայի դեմ թեժ մարտեր էին մղվում Իտալիայի ազատագրության և ինքնուրույնության համար, և նա արտոնություն էր ստացել անդրադառնալու քաղաքական հարցերին:

Ոսկանյանը լիիրավ արգահատանքով խոստովանում է, «Իր անունը մեզի համար, կնշանակե՝ թշվառ ազգերու ստրկության հաղթողին ներքև, և իր քաղաքավարությունը, մեր առջև, կերևի իբրև անողորմ և անհամբույր մեքենա մը, որ փոքր ժողովուրդները կառնու, կճմլե, կճնշե, կարորե և անարգ մարմին մը ընելով կկայցնե հաղթողին վրա: Եթե Մեթերնիկին ազգակեր փափագը կատարվեր, այսօր իդալիանք Ավստրիայի արյուն կունենային և արևելյան քրիստոնյա ժողովուրդները (իմա՝ նաև հայերը – Մ.Հ.) կստիպվեին թուրքի սիրտ կրել»:

Մտրակահարող այս խոսքերից հետո Ոսկանյանը, դարձյալ կռնկրետ պատմական փաստերը նկատի ունենալով, վերհիշում է Մետերնիխի դիրքը մյուս ժողովուրդների նկատմամբ. նա էր, որ հայտարարեց, թե Իտալիան սոսկ «աշխարհագրության անուն» է, գուրկ է ազգությունից, նա էր, որ դատապարտեց Հունաստանի անկախությունը, նա էր, որ փափագում էր հունգարների նկատմամբ «հուր և սուր գործ ածվի»: «Մենք, – շեշտում է Ոսկանյանը, – որ ազգերու իրավունքը և անկախությունը կսիրենք, մենք, որ ազգերու հավասարությունը կպաշտպանենք մարդկության մեջ, կատենք Մեթերնիկի դրությունը իբրև անհիմն և անիրավ քաղաքավարություն և, կարծենք, պարտավորություն իսկ ունինք ատելու, վասնզի ողորմելի և կիսամեռ ազգի մը անդամ կզտնվինք այս երկի վրա»:

Մետերնիխի քաղաքականությունը Ոսկանյանի համար խորապես ատելի է ոչ միայն այն պատճառով, որ ուղղված էր մասնավորապես փոքր ազգերի, դրանց թվում նաև հայ ժողովրդի դեմ: Նա 1848թ. հեղափոխության կատաղի թշնամին էր և ստիպված էր տարագրվել Անգլիա՝ «ոչ որպես դեսպան, այլ իբրև վտարանդի»: Այնտեղ նա տեսավ, բայց բնավ չհամոզվեց, որ «ազատությունն է միայն հարատև այս աշխարհիս մեջ», իսկ «բռնության ճարտարապետը» սոսկ նման է այն մարդուն, որն

ավագի վրա է հիմքեր դնում: Մետերնիխի մահը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ Իտալիան հարություն էր առնում: Հազիվ թե նա մահից առաջ հասկացավ, որ Իտալիան լույ «աշխարհագրական անուն» չէ, որ նրա ժողովուրդը «միասիրտ ու միակամ» ուրքի է ելել սրբելու ավստրիական ստվերը Իտալիայի վրայից. «ուր իր անագոյություն *սայրանությունը* անմեղի ոսկր սերմանեց» և ուր «հասկ մը չկա, որ նահատակի արյունով ոռոգված չըլլա»:

Իր ակտիվ դիրքի դաստորմամբ լուսաբանելով իտալական ազատագրական պատերազմը և նրա հետ առնչվող մի շարք լուրեր, Ռսկանյանն ավելի բացորոշ ու նպատակասլաց է հանդես բերել իր մոլորմները, երբ, դուրս գալով չոր հաղորդման ու փաստերի շրջանակից, հայտնել է իր կարծիքը, ինքնուրույն մեկնաբանել այս կամ այն լուրը, երբեմն էլ ընթերցողին հասցրել սեփական մտքերն ու մտորումները՝ միշտ տողամեջ նկատի ունենալով հայ կյանքն ու իրականությունը:

Ցույց տալով, որ ավստրիական ավելի քան քառասնամյա ճնշումը, այսուամենայնիվ, չի կարողացել ընկճել իտալացիների ազգային ոգին, Ռսկանյանը նկատում է՝ խոսքն, անշուշտ, ուղղելով հայությանը. «Որչափ, որ այս արիությունը պահվի ազգության մը մեջ՝ վտանգե մը վախ չկա, վասնզի ամեն մարդու սիրտը փոքր հայրենիք կդառնա և անկախության սուրբ ավանդը կկրե մինչև հարության օրը» (1859, ջ 87): Արիության ոգու հետ ժողովրդի պահպանության կարևոր գրավականն է ազատության ձգտումը, որը ևս Ռսկանյանը համարում է ամեն մի ազգի էական հատկանիշը, որ պետք է դրսևորվի սեփական անկախության ու ազատության համար մղվող պայքարում. «Ազատության շունչը, – գրել է նա, – լեռները անգամ կխոնարհե և բռնության ձեռքով շինված բերդերը անդրդվելի չեն կրնա մնալ անոր դեմ» (1859, էջ 92):

Բննադատելով իշխող և իր ազգին ճնշող տիրակալներին, Ռսկանյանը հասկանալի, բայց անուղղակի ձևով մտրակահարում էր հայ ժողովրդին բռնատիրոջներին: Նա գրել է. «Երբ իշխան մը իր ժողովուրդեն կատվի և պսակավոր իշխաններեն կդատապարտվի իբրև կարգե դուրս բռնակալ – պատմությունը չուշանար իր անեղծանելի դատակնիքը դրոշմել անոր անունին

վրա» (1859, էջ 95): Նույն դատակնիքն էր Ոսկանյանը դրոշմում նաև Ավստրիայի ճակատին՝ իբրև բռնություն գործադրողի, մի այլ ժողովրդի ճնշողի ու հալածողի: Եվ այդ անելով, նա իր մտորումներն այնպես էր մատուցում, որ դյուրին կերպով հասկացվում էր, թե խոսքը վերաբերում է նաև Թուրքիային ու թուրք բռնատիրոջներին, որոնցից ազատագրվելու համար, ինչպես գտնում էր Ոսկանյանը, հարկավոր է միության հաստատել «իբ հողին վրա»՝ «վեհ տեսիլով» ու «ազատություն և հայրենիք գտնելու համար» (1859, էջ 102): Առանց միության ու հայրենասիրության անհնար է հաջողության հասնել: Հիշեցնելով հունգար հեղափոխականների խոսքը՝ «Անձնատուր եղանք, այլ չհաղթվեցանք», Ոսկանյանը դրանք լռելյայն հասցեագրում էր հայ ընթերցողին՝ թուրքական տիրապետության տակ ընկանք, բայց մի՛ պարտվեք, մի՛ ընկճվեք, միավորվե՛ք և զորացե՛ք, որպեսզի հաղթեք: Նա դատապարտում է հսկայագումար միջոցները պատերազմին և մյուս ժողովուրդներին ճնշելու նպատակին հատկացնելը. «հինգ տարիի մեջ մարդիկ և չեզոք տերությունները ստիպվեցան տաս միլիարդ ֆրանք վատնել... Այս կկատարվի տաս և իններորդ դարու մեջ...», – դիտում է Ոսկանյանը (1859, էջ 94):

Ավստրիայի դեմ մղվող պատերազմի անխուսափելի արդյունքն Իտալիայի ազատագրությունն ու անկախությունը հուսալով, ինչպես և համոզված լինելով, որ Արևելքը, այսինքն Թուրքիան, «պիտի փոխվի», Ոսկանյանն Իտալիայի մղած ազատագրական պատերազմին մվիրված լուրերի արանքում «թաքցրել» է բավականաչափ ուրույն մի հաղորդում Էրզրումի գավառի հայերի վիճակի մասին և այն ավարտել ազատագրական պայքարի ելնելու դարձյալ ուրույն կոչով, որով աներկբա դրսևորել է ազգային-ազատագրական զինված պայքարի իր հավատամքը: Դիմենք այդ հաղորդմանը:

Ֆրանսիական մամուլից Ոսկանյանին հայտնի է դաժել, որ Էրզրումի գավառում քրդերը մորից են սկսել ասպատակել, որ երեք հազար հայ ընտանիք թշվառության է մատնված՝ «ամեն բան կապտեցին, կողոպտեցին, աղջիկներու, տղաներու անգամ չխնայելով»: Դրանից Ոսկանյանը եզրակացնում է. «Ինչպես

ուրիշ տեղ, հոս ալ թյուրքի պետությունը անկարող է իր հպատակներուն պատիվը, կյանքը ինքը հարգել տալ»: Թուրքական կառավարությանը բնորոշող դիրք է գրավել Էրզրումի քաղաքապետ Ալի փաշան, տեղի ունեցածի առթիվ արված զանգատներին նա, «իր սովորության համեմատ», պատասխանել է՝ «*Տաղ չափալարզ օլմազ*»: Նույն այդ փաշան, ինչպես հաղորդվել է ֆրանսիական թերթում, Էրզրումում, հունիսի 2-ին տեղի ունեցած երկրաշարժից գլուխն ազատելով, «ամեն բան ձգեր և շատ հեռու տեղ ապավիներ է տաղավարի ներքև»: Սի այլ հաղորդման մեջ այդ մասին պատմելով՝ Ռսկանյանն ամենայն համարձակությամբ գրում է. «Բարձրագույն դուռը այսպիսի բաշա մը դատաստանի առջև տանիլ կպարտավորի և ռազմական օրենքով դատել զանիկա, վասնզի բաշա մը, որ իր քաղաքը կթողու, դասալիք զինվորե մը ավելի հանցավոր է»: Փաշայի արտահայտությունը հետադարձ հասցեով ուղղելով, հրապարակախոսը հավասարության նշան է դնում ասպատակող քրդերի և նրանց հովանավորող թուրքերի միջև. «Կերևի, որ ոչ միայն լեռները, այլև քաղաքները առանց *չաքալի* չեն կրնա մնալ», – գրում է Ռսկանյանը և տեղնուտեղը շրջադարձելով հայտնի խոսքերը՝ դրանք հասցեագրում է Թուրքիային՝ «Ողբամ զքեզ *Թուրքսց* աշխարհ...»:

Այդպես դատակնիք դրոշմելով Թուրքիայի ճակատին, Ռսկանյանն այնուհետև երևան է հանում իր «թաքուն» կարծիքը. «Այս անարժան բաշային խոսքը արձանագրելու արժանի է և օսմանյան տերության մեծ պատիվ կընե: Հայ բազմությունը *որս* կսեպվի օսմանյան պաշտոնավորե մը և *որս...* քյուրտերու: Ողորմելի հայեր չաքալներու բերան ինկեր եք և ձեր հայրենակիցք Այվազներու խնկաման շնորհելու ետևե են տակավին: Վառողի աման պետք է, խնկաման կպատրաստեն: Վայ Հայկին թոռեր, վայ» (1859, էջ 109, 110):

Ազատության ու հավասարության միաձույլ պրորբլեմը Ռսկանյանի համար «երևելի և խորին փիլիսոփաների» առաջադրած տեսական խնդիր չէր, այլ գործնական և առաջնահերթ հարց, որը նա առաջ քաշեց նաև թուրքական սուլթանի առաջ, երբ նա 1864-ին հանդես եկավ Թուրքիայի բազմազգ ժողովուրդ-

ների հավասարության մերկապարանոց հայտարարությամբ: Այս խնդրին է նվիրված Ստ. Ոսկանյանի «Սուլթան Ապր-յուլ-Ազիզ և հավասարություն» չափազանց ուշագրավ հոդվածը¹, որին կանոդրապաշտաններ իր տեղում:

Իր էությամբ և դավանած գաղափարներով ինտերնացիոնալիստ լինելով, Ոսկանյանը Իտալիայի ջերմ հայրենասերն էր, նրա ազատության ու անկախության ջատագովը: Նա փառաբանում է Քավուրին, որ պատերազմի հանկարծակի ավարտից անմիջապես հետո հրաժարվեց Իտալիայի արտաքին գործերի նախարարի պաշտոնից: Դա Ոսկանյանի և Իտալիայի հայրենասերների համար ցավալի է, որովհետև Քավուրը վարել է խելամիտ քաղաքականություն, որով փառք է բերել իր տերությանը, «ազդու և վարպետ կերպով պաշտպանել» է Իտալիայի իրավունքը: Նրա քարոզած միության գաղափարը Իտալիան չի մոռանա (1859, էջ 119): Իտալացիների հետ հավասարաչափ վերապրելով Իտալիայի ցավերն ու դժբախտությունները, Ոսկանյանը դառնությամբ նկատում է. «Դժբախտությունը, այս աշխարհի մեջ, ոչ միայն մարդերու ճակատագրին մասն կսեպվի, այլև ազգերու, այլև քաղաքներու...» (1859, էջ 114):

Ոսկանյանի այդ համակրանքը իտալական ժողովրդի նկատմամբ գլխավորաբար պայմանավորված էր երկու կարևոր պարագայով. նա ազատասեր էր և ճնշվող ու հալածվող, ազատությունն ու անկախությունը կորցրած հայ ժողովրդի գավակը, որն իր մարդկային ու քաղաքացիական պարտքն էր համարում պաշտպան կանգնել օտար բռնության տակ գտնվող ամեն մի ժողովրդի: Այդ ըմբռնումով էլ նա իբրև դրոշակակիր 1849-ին գտնվում էր ի պաշտպանություն իտալական ժողովրդի հակակառավարական ցույցի դուրս եկած Ֆրանսիայի երիտասարդության շարքերում: Նույն գիտակցությամբ էր նա 1859-ին «Արևմուտքի» համարները տրամադրում իտալական ազատագրական պատերազմի լուսաբանմանը՝ սեփական մտորումների լայնակի արձարծումով:

Դրանք Ոսկանյանի գործունեության ու հրապարակա-

¹ «Արևմուտք», 15 ապրիլի և 1 մայիսի 1864թ., N 6, 7, էջ 41-43 և 49-51:

խոսության պայծառ էջերից են, և նա հպարտությամբ էր գիտակցում այդ: «Մասիսում» հրատարակված հոդվածում, որին անդրադարձանք, Ոսկանյանը մեղադրվում էր 1849-ի հունիսյան ցույցին մասնակցելու համար: Պատասխանելով այդ մեղադրանքին, Ոսկանյանը գրել է. «Տասը տարի անցան այս փոքրիկ դեպքին վրա և դեռ այսօր գոջում մը չենք զգար մեր դրածին: Ո՞ր և գտնվինք ազատության հետ պիտի մնանք և բռնությունը չպիտի սիրենք երբե՞ք, թե՛ հայերու և թե՛ օտարներուն մեջ: Մեզի համար ազատութենեն դուրս լուսավորություն չկա... և եթե այս մեր *հսնցանքը* կխոստովանինք, մեղա չենք ըսեր մեկու մը առջև: Մեղա ըսելու սովորություն չունինք, վասնզի ազատությունը ուրանալու փափագ մը չենք զգար...»: Ոսկանյանը գրեթե թվարկում է բոլոր «մեղքերը», որոնց համար մեղադրվում է. «Այսպես, ուրեմն, պոլսեցի Թորոս մը մեզ ամոթ կսեպե ազատություն սիրելը, ազատության համար մեր կյանքը վտանգի մեջ դնելը... մեր ուժին չափ ազատությունը պաշտպանելը... ազգային նպատակի մը ընտրության արդյունավետությունը պատրաստելու (ձգտումը)... Հռոմայի բռնասեր իշխանության դեմ բողոքելը: ...Բարին դեմ եղողներուն հետ օր մը միաբանելը... նախատինք և ամոթ է մեզ Իտալիայի վրա համակրություն զգալը, 89 անմեռ թվականին սկզբունքը ընդունիլը, մարդկային վեհ տեսիլներու սիրահարիլը, ազգություններու իրավունքը գովելը և կրոնավորության կուռքը ուրանալը հոգվով և սրտով» (1859, էջ 133-134):

«Իտալիայի վրա համակրություն» ունեցող հրապարակախոսը, հայտարարելով, որ «ազատությունը ուրանալու փափագ մը չենք զգար», այնուհետև ամենայն հստակությամբ հռչակել է իր, այսպես ասած, իտալական անհողողող հավատամքը. «Զիդալիա կսիրենք, միշտ սիրեր ենք, Իդալիա իր արյունաթաթավ ճակատով միշտ երևում է մեզ իբրև կենդանի պատկեր նկուն ազգերու: Այս սերը և ազատության ավյունը զմեզ թշվառության մեջ գլորեցին: Տթե այս թշվառությունը նախատինք է, հայու մը բերնե չպիտի վիժեր այն և մեր անունը աղոտտել, վասնզի Հայաստանի ավերաբայաց վիճակը իր զավակներու վրա պարաք կդնե՝ թշվառ ժողովուրդներու կարեկցիլ: Նկուն ազգերը մյուս ազգերու համակրությամբ միայն կրնան վերականգնիլ: Ով գիտե

գուցե օր մը Իդալիայի գավակ մը մեք գերության և թշվառության դեմ բողոքե ինչպես մենք իրեն համար բողոքելու զորությունը ունեցանք!... Իդալիայի համար հնչված տիեզերական համակրությունը մեր արդարացումն է... Աշխարհը համայն ծափ կգարնե Իդալիայի զինվորներուն, բոլոր Բարեգ կտոնախմբե այսօր այն դյուցազունները, որի Իդալիայի համար արյուն թափելէ ետև հայրենիք կդառնան առոք փառք... և մենք, որ դիտմամբ նվաստ զինվոր մը եղած ենք վայրկյան մը նույն սուրբ իրավունքին, պարոն Թորոսի պես հայու մը զրպարտությունով կմատնվինք, իբրև ապստամբ Ֆրանսիայի տերության դեմ... Այս հուսալի էր տեսակ մը հայերն և այս եղավ: Ըսելիք չմնար...» (1859, էջ 132-133):

Ոսկանյանը իրավամբ ընդգծում է, որ տասը տարի առաջ՝ 1849-ին, իր ձեռքում է եղել Իտալիայի ազատության համար պարզված այն դրոշը, որն այսօր՝ 1859-ին «հաղթանակով

¹ Մտավորապես քառասուն տարի անց՝ 1890-ականի կեսերին, հայ հասարակությունը սրտի ջերմությամբ տոգորվեց Գարիբալդիի նախկին զինվորներից մեկի, Հալեայի իտալական հյուպատոս Վիթոյի նկատմամբ: 1896թ. Չեյրոնի կոտորածների առթիվ, նա օտարերկրյա հյուպատոսների կազմում իբրև պատվիրակության ղեկավար եղել է Չեյրոնում՝ հաշտության պայմանները որոշելու համար: Այդ առիթով նա մանրամասն ծանոթացել է երկրին ու գեյրուցիներին և հետագայում հրատարակել իր տպավորությունները: Վիթոն իր երկը հրատարակել է ծածկանունով, որը շատ չանցած բացահայտվել է: Նրա երկի թթվածորը ամփոփված է «Կողջունեն քեզի, դյուցազնաբաղաբը Չեյրոն» խոսքերում: Անդրադառնալով «հանկարծ լուսափայլող հուսատու հրեշտակի ձայնի» տպավորություն թողած նրա երկին, Ար. Արվիարյանը նկատել է, որ օտար բռնատիրության սարսուռները վերապրած իտալացին երբեք չի մոռանա «իտալյան պատանիներու և երիտասարդներու դիակները: Այդ դիակներու ուրվականները, – շեշտում է Արվիարյանը, – վրեժխնդիր թափառեցան Իտալիո մեջ... ու օր մը միջևն դուրս վոնտեց «Թեռտսքո» – ին, – ավարդիացին: Կարիպալտին եկած էր Քավուրին հետ, քաջություն ու խելք ձեռք ձեռք տված հայրենասիրության մեծ հովանիին տակ: Կարիպալտիի զինվոր մըն էր և Վեթո և հիմա... կպատվիրեր մերիններուն.

– Դուք ալ խելքն ու քաջությունը միացուցեք, միշտ հավատքով աշխատեցեք, ու ապագան ձերն է» («Նոր կյանք» 1898, N 6, էջ 90 կամ 91, Հրագրանի) *Ա Արվիարյան* («Օրվան կյանքը» հողվածաշարը), Տե՛ս նաև «Պատմություն Ս.Գ. Հնչակյան կուսակցության», հ. 1, Պեյրուք, 1862, էջ 198:

Իտալիայի գավակը, գարիբալդիական վեհերանը կարծես քառասուն տարի անց արձագանքում էր Ստ. Ոսկանյանի փափագին:

կփառավորվի պատվո դաշտին վրա», որ «հիմա Իդալիա ոչ միայն կզարթնու, կկանգնի, ոգի կառնու և կկազդուրվի, այլև Հոռոմայի մեկ մասը այնպիսի նորոգումներու և օրենքներու սերմը կընդունի, որ շատ չերթար բարօրություն և ազատություն պիտի բերե իրեն»: Մեծ է Ոսկանյանի ուրախությունը, տեղին է նաև նրա հպարտությունը: Բայց այլ էր նրա բուն նպատակը, երբ գրում էր վերոհիշյալ տողերը: Ինչպես 40-ական, այնպես էլ 50-ական թվականների վերջերին նրան մտահոգողը հայության վիճակն էր և նրան գործունեության մղելու հոգը. «Տասը տարի անցան և հայերը փոխանակ ուրիշ ազգերը օրինակ առնելու և մեր փոքր, բայց հարատև չափը հասկանալու, սկսան խորթալ և մեր լրսածները երազ սեպել» (1859, էջ 132-133):

«Ուրիշ ազգերը օրինակ առնել», – սա էր Ոսկանյանի պրոպագանդած գաղափարը Իտալիայի մղած ազատագրական պատերազմի ժամանակամիջոցին... «Վառողի աման պետք է» կոչը՝ իտալացիների օրինակին հեռուելու, նրա պես ազատության և անկախության համար մարտնչելու, միավորվելու կոչ էր, որ բխում էր նրա կայուն սկզբունքից՝ հավատարիմ մնալ ազատության գաղափարին և անմնացորդ ատել բռնությունը «թե՛ հայերու և թե՛ օտարներու մեջ»: Ըստ այդմ նա համոզված էր, որ միմիայն հայ ժողովուրդը չի կարող իր ուժերով ձեռք բերել երազած ազատությունը, որ այն կնվաճի «նկուն ազգերի» հետ համագործակցելով և նրանց համակրանքով ու աջակցությամբ:

Արդ, որն էր Ոսկանյանի պատկերացմամբ այդ ազատագրության ուղին: Ուղղակի պատասխան այդ հարցին Ոսկանյանն, անշուշտ, տալ չէր կարող: Նրա հանդեսները չթուլացող հսկողության տակ էին: Բայց անտարբեր լինել նույնպես չէր կարող, որքան էլ կաշկանդված ու ենթարկված էր որոշակի պայմանադրության, որ թելադրել ու շարունակ պահանջում էին «Արևմուտքի» հիմնադիրները կամ ընկերությունը: Հանդեսի հավաքածուի ամբողջական և ուշադիր ուսումնասիրությունը մեզ բերում է այն հետևության, որ մի շարք հարցերում, մասնավորապես ազգային-ազատագրական պայքարի ուղիների հարցում «Արևմուտքի» հրատարակիչների և խմբագիրների միջև, այսուամենայնիվ տարակարծություն կար: Դրա ապա-

ցույցն են Ստ. Ոսկանյանի երբեմն-երբեմն արած ակնարկները այն մասին, որ ինքը հանդեսի միայն առաջին խմբագիրն է, որ միշտ չէ բաժանում տպագրվող նյութերի առաջադրած սկզբունքները կամ պատասխանատու չէ այս կամ այն փաստի համար: Նման տարանջատումը պատահական չէր: Այդ մասին է թերևս ասում նաև այն, որ հակառակ նախապես կայացած համաձայնության, Ոսկանյանը «Արևմուտքը» մեկ տարի խմբագրելու փոխարեն տասը ամիս լրանալուց հետո հրաժարական տվեց: Ճիշտ է, թե՛ հանդեսի համարատուի ազդը և թե՛ «Արևմուտքի» ընկերության հայտարարությունը՝ Ոսկանյանի հրաժարականը պատճառաբանում են ժամանակին. և ըստ պայմանավորվածության՝ չվարձատրվելով, սակայն այլ բացատրություն հրապարակել, թվում է, անհնար էր:

Առանց լրացուցիչ նյութերի չենք կարող որոշակի պատասխան տալ այդ, ինչպես և մի շարք այլ հարցերի: Անկախ դրանից հարկ է անդրադառնալ Ոսկանյանի հրաժարականից հետո «Արևմուտքում» հրատարակված Փարիզի հունական դեսպանի ակնարկին ու նրան կցված նախաբանին, որոնց մասին հիշատակվեց նախորդ էջերում: Դրանք ուղղակի առնչություն ունեն ազգային-ազատագրական այն զաղափարախոսության հետ, որ արծարծում էին «Արևելքն» ու «Արևմուտքը» և նրանց խմբագիրը՝ 1850-ական թվականներին:

«Արևմուտքի» 1859թ. տարեվերջի երկու համարներում գրեթե ամբողջապես զբաղեցնում է «Նոր Հունաստանի դյուցազմները» ընդհանուր խորագրի տակ հրատարակված Էմանվել Եմենիցի (Իեմենից) «Փոթոս Յավելաս» պատմավավերագրական ակնարկը¹: Մենք ժամանակին մանրամասն քննել ենք այդ ակնարկը, ինչպես և անդրադարձել ենք թուրքական բռնատիրության դեմ մղված հունական ազգային-ազատագրական պայքարը հայ իրականության մեջ պրոպագանդելու և հույների օրինակով հայ ժողովրդին ոտքի հանելու նպատակով մեզանում կատարված

¹ Տե՛ս «Արևմուտք», I նոյեմբերի 1859, N 21, էջ 161, 15 դեկտեմբերի 1859, N 24, էջ 185-186:

² «Արևմուտք», I դեկտեմբերի 1859, N 23, էջ 177-184, 15 դեկտեմբերի 1859, N 24, էջ 186-194:

երկարատև փորձերին¹: Կրկնությունից խուսափելու համար նշենք լոկ հետևյալը: Պատմական մի ակնարկի շրջանակում Եմենիցը բավականաչափ ազդեցիկ նկարագրել է, թե ինչպես ընդամենը մի բուռ ժողովուրդ, փարված Սուլիի անառիկ ժայռածերպերին, Ցավելասի գլխավորությամբ դիմակայել է թուրքական բազմահազարանոց հորդաներին ու պահպանել իր կիսանկախ վիճակը, ցուցաբերել մարտիյոսության սքանչելի օրինակ: Ակնարկը սուլեցիներին ներկայացնում է ցնցող դրվագներով, և Ոսկանյանը, որ արդեն անմիջական շփումներ ուներ հույների հետ, ծանոթ էր նրանց պատմությանը, մանավանդ առգորված էր ազատաբաղձ հակումներով, անմիջապես ուշադրություն է դարձրել այդ նյութի վրա: Լինելով հմուտ խմբագիր, նա ըմբռնել է ակնարկի գործոն նշանակությունը, նրա նյութի ուժը հայ ընթերցողի համար: Ֆրանսիական հանդեսը Եմենիցի ակնարկը տպագրել է 1859թ. ապրիլի 15-ի համարում: Յոթ ամիս հետո՝ դեկտեմբերի 1-ին, ակնարկը հրատարակվել է «Արևմուտքում»: Եթե հանդեսը ծանրաբեռնված չլիներ շարունակաբար լույս տեսնող նյութերով և պատերազմական անհետաձգելի հաղորդումներով, թերևս հիշյալ ակնարկն ավելի շատ հրատարակվեր:

«Փոքոս Ցավելաս» պատմավավերական ակնարկի ընտրությունը և նրա հրպարակումը «Արևմուտքում» արդեն ինքնին հուշում են, որ մատնացույց է արվում հույների ազատագրական-հերոսական պայքարի օրինակը, հայ ընթերցողին են մատուցվում այդ պայքարի ընդօրինակելի դասերը: Դրանից բացի, ակնարկի փայլուն թարգմանությունը, նրա հղկված լեզուն, պատկերավոր ոճն ու արտահայտչական հյուսվածքը ոսկանյանական են և հեշտությամբ մատնում են «Ժ.Դ.» ծածկանվան տակ թարնված «Արևմուտքի» խմբագրին: Ակնարկին կցված հակիրճ խմբագրականը, որ անատրագիր է, ուղղակյի արտացոլել է նաև

¹ Տե՛ս «Հունական ազատագրական շարժումների արտացոլումը «Մետերա» պարբերականում» («Հայ պարբերական մամուլի պատմությունից», ժողովածու Ա.Բ. Կարինյանի խմբագրությամբ, հ. 1, Երևան, 1963, էջ 275-296), «Մետերա» հանդեսը արևմտահայ լուսավորական-դեմոկրատական շարժման մեջ» (Երևան, 1977, էջ 167-225), “Освобождение Греции и армянская общественная мысль” (“Центральная и Юго-Восточная Европа в новое время”. Сборник статей. М., 1974, стр. 150-157) ուսումնասիրությունները:

Ոսկանյանի մտորումները հայ ժողովրդի ազատագրության խնդրի շուրջ: Դա Ոսկանյանի ուղղակի, բայց և այլաբանորեն ասված խոսքն է, հայ ազգային-ազատագրական պայքարի նրա պատգամն է, բայց ոչ թելադրանքը, նրա մտորումն է ընթերցողի հետ, նաև կոչը՝ սրտուրախ արձագանք գտնելու հույսով: Ահա այդ նախաբանը՝ որոշ կրճատումով:

«Նոր Հունաստանի դյուցազները»

Այս վերնագիրը կարդալուն ո՛ր հայ, որուն երակներուն մեջ Հայկա արյունը կեռա, իսկույն պիտի չի հուզի, ո՛ր հայուն ոգին տխուր ամպով մը պիտի չի պատի տեսնելով, որ ան Հունաստանը, որ ատենով մեր գեղեցիկ Հայաստանին դժբախտ վիճակին վիճակակից էր, անոր պես կուլար, կիեծեր, ան Հունաստանը հիմա նոր կկոչվի, անոր դյուցազները եվրոպական լեզուներով կգովվին, կհռչակվին, երբ մեր Հայաստանին վրա դեռ նույն հին քողը ծածկված է, մեր Հայաստանը դեռ մոխրի վրա նստած կողբա: Աստված չընե, որ մենք հունաց երջանկության վրա չուրախանանք, յուրաքանչյուր ազգաց երջանկությունը ընդհանուր մարդկության երջանկությունն է, ինչպես ազգի մը յուրաքանչյուր անհատին բարօրությունը բոլոր ազգին բարեբախտությունն է: Հայու սրտին տխրություն տվողը ան պիտի ըլլա, որ Հայաստան դեռ նոր չի կոչվիր, հին Վարդաններուն, Վահաններուն հաջորդող, նոր դյուցազներ հառնելու կուշանան:

...Գիտնալով, որ ազգաց ամենեն եռանդուն դասատուն պատմությունն է, կփութանք աս նոր դյուցազներուն պատմությունը մեր հեռավոր ու միշտ սիրական հայրենակցուց հաղորդել, խորհրդածությունները յուրաքանչյուրոց իրենց սրտին զգացմանցը թող տալով, վասնզի ամենեն շահավետ խորհրդածությունը ամենուն սրտեն ինքնիրեն հառաջ եկողն է» (1859, էջ 177):

Հայ պարբերական հրատարակությունների էջերում հունական ազգային-ազատագրական պայքարը արձագանք է գտել դեռ դարասկզբից, իսկ 1820-ականին ծավալված մարտերի բուն ընթացքում նույնիսկ մատնացույց էին արվում հույները և նրանց ընդօրինակելու կոչեր արվում մամուլում, հայ գործիչները շահագրգռված հետաքրքրություն էին հանդես բերում հունական շարժումների նկատմամբ: Հետագա տարիների հայերեն շատ հրա-

տարակոթյուններում, ինչպես ցույց են տվել, այս կամ այն չափով տեղ են գտել Հունաստանի ազատագրության պատմության առանձին էջեր ու դրվագներ: Այդուհանդերձ «Արևմուտքը» և նրա խմբագիրն առաջինն էին լայն տեղ հատկացնում հունական ազգային-ազատագրական պայքարին, հանդես բերում ուղղակի և նպատակամղված հետաքրքրություն:

Այսպիսով, փաստորեն «Արևմուտքից» է սկսվում հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության այն ուղեգիծը, որ կապվում է հայ ժողովրդին հույների օրինակով թուրքական բռնապետության դեմ ոտքի հանելու, նրանց պատմական դասերն ուսուցելու եռանդուն մղումների հետ: Այդ ուղեգիծը բավական կենսունակ ու ներգործուն լինելով, զոյատևել է մինչև մեր դարի առաջին տասնամյակները:

Պատմական միջավայրը և ազատագրական պայքարի անցյալի դասերը, սակայն, որոշ չափով սրբագրել են 1850-ական թվականներին Ռսկանյանի դավանած վերոհիշյալ ուղեգիծը և նա, չիրաժարվելով զինված պայքարի գաղափարի պրոպագանդայի ծրագրից, 1860-ական թվականներից առաջին պլան է մղում ոչ թե զենքի դիմելու կոչը, այլ զենքի ուժով ազատագրվելու համար հիմնավորապես նախապատրաստվելու անհրաժեշտությունը¹:

Այստեղ Ռսկանյանը զենքի դիմելը բավարար չի համարում: Լավատեղյակ լինելով Շամիլի գլխավորած ապստամբությանը, որի մասին առանձին լուրեր էին տպագրվում զմյուռնահայ մամուլում², ֆրանսիական հեղափոխությունների մասնակիցն ու ականատեսը դառնալով, առավել ևս ծանր ապրելով Ջեյթունի ապստամբության արյունոտ իրադարձությունները, Ռսկանյանը գտնում էր, որ ժամանակները փոխվել են, տերությունները հենվում են հզոր բանակների վրա, որոնց դիմակայելու համար պետք է գործել ավելի մտածված, ավելի խելացի, գործել *ոչ միայն բազուկով, այլև մտքով*³՝ համակողմանի պատրաստված:

Թուրքիայի դեմ հմարավոր ապստամբության խնդրին հենց

¹ Այս ուղեգծի որոշակի դրսևորումները կարելի է գտնել 1864 – 1865-ին նրա խմբագրած «Արևմուտքի» նոր միայն գլխավորական շրջանառության մեջ դրվող համարներում:

² Տե՛ս «Արշալույս արարատյան», 7 հոկտեմբերի 1844, N 211:

այդպես էր մոտենում Նալբանդյանը: Այն պահերին, երբ «հասարակաց ծանրաչափը գուշակում է նորա կյանքի համար մի մահաբեր մրրիկ» հարկավոր է հանդես բերել առավելագույն կազմակերպվածություն և խորաթափանց շրջահայեցություն: Նկատի ունենալով թուրքական միջավայրը, մասնավորապես հայության վիճակն այդ միջավայրում, նա գրում է, որ «մի այլ այսպիսի վատաբաղդ դիպվածում առաջ քրիստոնյայք կկոդոպտվին, կմերկանան, կմեռանին, իսկ հետո թուրքը... Այս ապագայի ստվերական և թույլ օրինակը Պոլսի մեջ երևցավ 1861 թվական վերջերում, բայց կգա օրը, երբ այն ստվերականը ի լույս կճշմարտվի...»¹:

Հասարակական մթնոլորտի շիկացման իրավիճակում, Թուրքիայի հայկական միջավայրում, մանավանդ երիտասարդության շրջանում ի հայտ էին գալիս անմիջապես գործելու հորդորներ: «Ծաղիկն», օրինակ, արձանագրել է, որ «սրակն ու աշխույժ պատանի»ները կոչ էին անում. «Մինչև ե՞րբ սպասել և մեր իրավանց վրա այք զոցել պետք է: Ազգին տունը կփոխ, անոր շունչը կկտրի... Մոտավոր, մանավանդ հեռավոր հայք անիշխանության մեջ կլլկին, կփարատին, լեռն լեռ կքափառին, արյուն կուլան և բավական չէ, և դեռ մենք սպասե՛նք... Չէ, չէ, ալ մեր համբերությունը հատավ, հատավ մեր հոգին, հատան մեր ոսկերքը: Համբերությունը և հլությունը չունին վարձք այս աշխարհիվ վրա, հանդգնությամբ և անվեհերությամբ պարտինք կորզել դանդաղության, շարակամության մեզ զլացածը: Մինչև որ չբողոքենք, մինչև որ չատիպենք և ի հարկին մեր բազուկը միմիայն մեր թշնամիներն են, որ...»²: Այսպես էր դրվում հարցը 1862-ին:

Խնդիրը վերոհիշյալ տեսանկյունով քննելով, չի կարելի չնկատել, որ Ոսկանյանն առաջադրում է ազատագրության ավելի լայն ու խորագնա ծրագիր: Ըստ որում՝ դա նրա գաղափարախոսության մեջ նոր երանգ չէր: 'Դեռ 1859-ին նա դատապարտում էր Շամիլի վարած քաղաքականությունը (բայց ոչ նրա զլլսավորած ապստամբությունը): Ոսկանյանը գտնում էր, որ դեռ

¹ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 3, էջ 66:

² «Ծաղիկ», 1 օգոստոսի 1862, N 40, էջ 330:

մի քանի տարի առաջ նրա վարած «կույր քաղաքականությունն հայտնի էր, որ ուրիշ կերպ չէր կրնար ավարտիլ այս պատերազմը: Շամիլ ցույց տվավ ամենուն, որ ավելի հուղկահարի քան թե ազգապետի սիրտ ունի և չգիտցավ իր շահը պաշտպանել Եվրոպայի առջև»: Նման վրիպումները հաճախ «փոքր ժողովուրդների» կամ ազգությունների կործանվելու («անհետանալու») առիթ են դառնում. «Ահա նոր օրինակ մը ևս»: Դնշվող ու հալածվող փոքր ազգերի ազատագրության ջերմեռանդ կողմնակիցը լինելով, Ռսկանյանը տվյալ առիթով նկատում է, թե «Շամիլին տեղ ուրիշ արթուն պետ մը, որ արևմտյան ազգերու դեպքերը գիտնար, իր ազգությունը և իշխանությունը կրնար ազատել»: Այս հարցում, ի դեպ, Ռսկանյանի դիրքորոշումն համահնչուն է Նալբանդյանի և ռուս հեղափոխական-դեմոկրատների բացասական վերաբերմունքին Շամիլի նկատմամբ:

Հետագա տարիների իրադարձություններն ավելի են ամրապնդել Ռսկանյանի այդ համոզումը: 1864-ին նա հանդես է գալիս «Թե ինչպես կկործանի ազգ մը» հոդվածով¹ և սրտացավությամբ ու ցասումով ծառանում է այն քանի դեմ, ինչ տեղի ուներ չերքեզների հետ՝ միաժամանակ նկատելով, թե «ազգայինը լավ կընեն անոր վրա խորհիլ ու անկե ծագելիք

¹ «Արևմուտք», I հունիս 1864, N 9, էջ 65-66:

«Օրպել» ծածկանունը Ռսկանյանին պատկանելու մասին տե՛ս մեր հոդվածը՝ «Արևմուտքի» նորահայտ համարը» («Բանբեր» Երևանի համալսարանի, 1971, N 2, էջ 148-167): Այստեղ լոկ ավելացնենք, որ «Արևմուտքի» 1864թ. ապրիլի 15-ից՝ Թշուրապյանի փոխարեն իբրև հանդեսի Փարիզի գործակալ նշվում է «Օ.Օրպել» և նույն համարում էլ «Օ.Օ.» ստորագրությամբ գետեղված է հատուկ ազդ այն մասին, որ հրաժարված գործակալի փոխարեն «այսուհետև ինչ որ «Արևմուտքին» կվերաբերվի Բարեգի մեջ, առ պարոն Օրպել գրելու է» (1864, էջ 48): Այստեղ էլ նշվում է նրա հասցեն՝ փողոց Կոնդ. 23, որը հավանաբար հենց Ստ. Ռսկանյանի տնային հասցեն է: Հանդեսի հենց այդ համարի առաջին հոդվածը կրում է «Օ.Օրպել» ստորագրությունը, որ այնուհետև երևան է գալիս հաջորդ բոլոր համարներում, կարևոր հոդվածների տակ: Ավելացնենք նաև, որ, ամենայն հավանականությամբ, Ռսկանյանն այդ անունը փոխ է առել «Արշալույս արարատյանի» 1843թ. փետրվարի և ապրիլի համարներում (N 124, 126, 136) գետեղված «Սյունյաց երկրին վրա: Սյունիք կամ Սիսական» հոդվածից, որը շարադրված է Ստեփանոս Օրպելյանի հայտնի պատմագիտական երկի հիման վրա: Այդտեղ պատմիչի անուն-ազգանունը որպես կանոն նշված է «Ստ. Օրպել» ձևով:

հետևությունները գուշակել»։ Գուշակելու բան, իրոք կար. և Ոսկանյանն ինքն առաջինն է փորձում դա անել։ Մտահոգված լինելով հայ ժողովրդի ապագա ճակատագրով և խոսելով Շամիլի քաղաքականության մասին, նա առաջ էր քաշում հենց այդ ճակատագրի խելացի տնօրինության արմատական հարցը։ Շամիլը դիմել է «հանդուգն քաջության», բայց նա պետք է հանդես բերեր նաև զգուշություն, իրադարձությունները լավ քննել, մտածել ապագայի մասին։ Այդ դեպքում նա «ոչ միայն իր ազատությունը և իշխանությունը կպահեր, այլև իր ժողովրդին անկախությունը կհաստատեր անդրդվելի կերպով»։ Նա կույր վստահություն հանդես բերելով, հույսը հայրենի լեռների անառիկության վրա դնելով, «կաշառք ուտելով» ուզեց չեզոքություն պահպանել, խաբվեց «անուշ խոստումներով» և չշարունակեց իր զինված պայքարը «պատերազմի դաշտում»։ «Շամիլին անխոհեմությունը բերավ կործանում և իր տխուր օրինակը մեզ ցույց կտա, որ քաջությունը միայն չբավեր ազգի մը կյանքը ապահովեցնելու համար։ Բազակին քով միտք պետք է, որ դատե, կշռե և շարժելու կետը հայտնե՝ բոլորտիքը եղածները մանր քննելով։ Ժողովուրդ մը, որ ընդհանուր քաղաքականության օրենքներն կհեռանա, որ միտքով և գիտությամբ չազդվեր և որ արտաքին երևույթներու գգայությամբ ապրիլը շատ կսեպե, այն բազմության կնմանի, որ ծով ու հովնն միայն կսպասե իր փրկությունը...»։ Միջազգային կյանքում տեղի ունեցող բուն իրադարձությունների անտեսումը, «սուտ ազատասերների», «բախտամուլ մարդերու» աղմուկին տեղի տալը, «անապատեհ ժամանակ» ապստամբության դրոշ պարզելը և հաղթություն երազելը, «հինումին զենքերը լեցնել ու ժայռերուն ապավինել»՝ նշանակում է վտանգի տակ դնել ամբողջ ժողովրդին։ Ռազմական արդի տեխնիկան և «կռվելու արհեստը», Ոսկանյանի համոզմամբ, հրամայական պահանջ են դնում հիմնավոր բազմակողմանի կրթություն ունենալ, լինել շրջահայաց, վարել իրադրությանը համապատասխանող խելացի քաղաքականություն։ Հակառակ դեպքում «ոչ լեռ և ոչ պատվար կրնան դիմանալ»։ Ոսկանյանի հետևությունն է՝ «սուկ քաջությունը նահատակներ պատրաստելեն ուրիշ արդյունք չունի» (1859, էջ 66)։

Հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախո-

սության մեջ այսպիսի ուրույն ուղեգիծ, եթե չենք սխալվում, առաջինը Ոսկանյանն է առաջադրում: Նշանակո՞ւմ է սա, թե նա հրաժարվում է զենքի դիմելու անհրաժեշտության նախկին գաղափարից կամ թերահավատ է ապստամբության հեռանկարի նկատմամբ: Բնավ ո՛չ: Ոսկանյանը ներքին հավատ ունի, որ ապստամբությունը հաղթանակով կպսակվի, որ զինված պայքարը և կռիվը պատերազմի դաշտում կտան ցանկալի արդյունքը, նույնիսկ ազգային անկախության կհանգեցնեն, եթե ուժին, բազկին *միտքը*, որով ակնարկվում է ազգի ազատագրությանը բազմակողմանիորեն, նաև ռազմագիտական տեսակետից պատրաստվելու հրամայական անհրաժեշտությունը, այլ խոսքով՝ ժողովրդին նման մեծ պայքարի համար նախապատրաստելու կարևորությունը:

Այդ նախապատրաստությանը և «բոլորտիքը եղածները մանր քննելուն» Ոսկանյանը զլխավոր տեղ է հատկացնում հայ ժողովրդի ազատագրության համար մղվող ընդհանուր պայքարի մեջ: Ինքը՝ Ոսկանյանն, իր հերթին նման ուղեգիծ առաջադրելիս ելնում էր ժամանակի իրադրության ու հայ կյանքի ընդհանուր իրավիճակից, այն դասերից, որոնք մատուցել են ազգային ու դասակարգային մարտերը: Այլ հարց է, թե որքան ճիշտ էր նա գնահատում այդ իրադրությունը, կամ որքան ճիշտ էր նա ընկալում Ֆրանսիայում մղված հեղափոխական պայքարը, Շամիլի ու Լեհաստանի ազատագրության համար ծավալված դարձյալ արյունալի մարտերի դասերը. Ոսկանյանի ժամանակակիցներից ոչ ոք, նրանց թվում նաև ինքը, մամոսրինակ համազգային հարցերում սխալվելու իրավունքից զերծ չէր: Կարևորը, սակայն, այն է, որ նա կանգնած է իր ժողովրդի ազատագրության ուղու վրա, խելացիորեն գործելու և հմտությամբ պայքարելու կոչ է անում, հավատում ու պաշտպանում է ազատագրական պայքարի գաղափարը, նաև արհաբար հայտարարում. «Բնականորեն մենք տկարին հետ ենք հզորին դեմ» (1864, էջ 21): Առավել ևս կարևոր է, որ Ոսկանյանն այդ գաղափարները պաշտպանում էր 60-ական թվականների երկրորդ կեսին. «Ազգերն ալ, – գրել է նա 1865-ին, – մարդու պես, բախտ և դժբախտություն ունին և օրենքներու ենթակա են: Այսուհետև գիտու-

թյունը միայն կրնա ճշմարիտ ուղղություն մը տալ ազգերու և դեպքերու հոսանքին հաղթել և ոչ թե թևերու գորությունը...» (1864, էջ 76): Նա չէ դադարում կրկնել իր դավանած «Մեծ ճշմարտությունը»՝ «Ստրկության որս է այն մարդը, կամ ժողովուրդը, որ բարոյական արիություն չունի»:

Այսպիսի դավանանքով Ռսկանյանը չափազանց ուրույն մոտեցում է հանդես բերում գեթոնցիների հերոսական ապստամբության նկատմամբ: Վերը բերված նրա տողերի արանքում, ինչպես և մի շարք նյութերում գուցե և կարելի է ինչ-որ ակնարկներ տեսնել Ձեյթունի 1862թ. հերոսական ապստամբության մասին, բայց նմանօրինակ կոահումներից առաջ շատ ավելի կարևոր են նրա դիրքորոշումը բացահայտող այն էջերը, որոնք սրտուրախ ոգեշնչմամբ փառաբանում են Ձեյթունը և գեթոնցիներին: Այդ դիրքորոշման ամերկբայելի վկայությունն է «Լեռնականք» հոդվածը¹, որ հրատարակվել է «Արևմուտքում», 1864թ. մարտի 15-ին: Հանդես բերելով հրապարակախոսի ու ժուռնալիստի մեծ վարպետություն և իր հողվածին ամենդ տեսք տալով, Ռսկանյանը կիրառել է իր միտքն այլաբանորեն արտահայտելու հիանալի եղանակ: Ընթերցողին թվում է, թե հեղինակը պարզապես համադրում է դաշտավայրում, քաղաքում և լեռներում բնակվողներին, քննում է նրանց դիմագիծը, խառնվածքը, մարտունակությունը, բարոյահոգեբանական հատկանիշները: Իրոք, Ռսկանյանը զուգակշիռ է անցկացնում նրանց միջև, բայց որոշակի միտումով ու ելակետով՝ ինչպես են նրանք իրենց դրսևորում իշխող բռնության պայմաններում և ինչ հակում ունեն ազատության նկատմամբ: Այս հարցադրումներով քննելով «քաղքի մարդուն», «գյուղի մարդուն» և «լեռի մարդուն», Ռսկանյանը նկատում է, որ առաջինը «սովորապես բռնավորությունը կատե և անօրենության դեմ կմոռա», բայց «չափի համար նաև ազատությունը կուրանա», «քաղքի մարդը իր արհեստով, ժրությունով և մոլությունով, լուսավորությունով գործի մ' է, որու վրայեն ազատությունը միայն կրնա քաղքին անխուսելի ժանգերը սրբել»: «Գյուղի մարդը, մշտապես աղքա-

¹ «Արևմուտք», 15 մարտի 1864, N 4, էջ 25-27:

տության դատապարտված լինելով, «կոշտության կենդանի արձանն մ' է», նա «ոսկեթել բռնությունը կհարգե միայն անկե քել մը վրցնելու միաբով... Լուծեն սոսկում չունի, մանավանդ, եթե այս լուծը ազնիվ քարերով և արծաթով իր վիզին վրա կդրվի»:

Բոլորովին այլ գույներով է Ռսկանյանը բնութագրում «Լեռնականին»¹ կամ «լեռի մարդուն», նույնիսկ նրա խոսքն այս դեպքում այլ երանգ ու շեշտ ունի: Լեռնաբնակը «երբեմն մրրկայի և երբեմն վառվռուն կելնե, կիջնե, կթմրի, կբացվի, կբորբոքի, կմարի, բայց չտողար երբեք գետնաքարը»: Նա սլանում է արծվի պես, ժայռերը նրա համար սանդուղք են, մանկուց ընտելացել է վտանգին, վախ չունի մահից, սնվում է չոր հացով, բույսերով և «գուտ օդով», որով նրա ուժը տասնապատկվում է, օրն անց է կացնում երգով, քնելիս բարձի փոխարեն քար է դնում գլխատակին «և կարթննա առյուծի նման»: Նրա համար կա միայն երկու բան՝ «Աստված և ազատություն և երկուքին ալ գիտե ծառայել նվիրումով: Ավելի վեր կնայե, քան վայր... ու ամեն վտանգ աչքին խաղալիք կերևա» (1864, էջ 26):

Այլ հարց է, թե որքանով է իրավացի իր համադրումներում Ստ. Ռսկանյանը: Նա, ինչպես տեսնում ենք, վեհ հատկանիշներ է տեսնում լեռնական-գեյթունցու մեջ և նրան հակադրում է քաղաքում ու գյուղում բնակվողին միանգամայն որոշակի նպատակով, այն է՝ փառաբանել լեռնականին, նրա թիկունքում նկատի ունենալով գեյթունցուն: Նրա խոսքը սրտուրախ ձոն է թուրքական լծի դեմ անկոտրում կամքով ու աննահանջ մարտնչող գեյթունցիներին՝ ասված վարպետ այլաբանությամբ ու բոցաշունչ ոգևորությամբ: Բերենք մի քիչ ավելի ընդարձակ քաղվածք Ռսկանյանի այդ խոսքից.

«Լեռնականը... կկռվի իր կամ ընկերին ազատությունը պաշտպանելու համար և ոչ փառք գտնելու կամ գովեստ մուրալու նպատակով...»

Լեռնականը ազատության զինվոր է, ասպարեզ ունի

¹ Նկատենք, որ հայ մատենագրության մեջ հաճախ «լեռնական» կոչականը հավասարագոր է գեյթունցի հասկացությանը: Այդ արտահայտությունը հենց այս իմաստով է մեկնում Մ.Նալբանդյանը (տե՛ս ԵԼԺ, հ. 3, էջ 406) և այդ բովանդակությունն ունի նրա մոտ հայտնաբերված գաղտնագիր բառարանում (տե՛ս *Ա Հովհաննիսյան*, նշվ. աշխ., հ. 1, էջ 504-505):

դարավանդը և վահան՝ հինօրյա ապառաժները: Վերեն կընդունի հրամանը և վարեն եկած սպառնալիքին կպատասխանեն վառողի բերնով. – Բռնավորք, լեռներուս ոտքե անդին մի անցնիք, իր կույս հողը մի կոխեք, գահավեժ կզլորիք, և ազատություն գողնալու ատեն կգտնեք մահ, մահ անխուսելի: Ասկե հեռու, բռնավորք, ձեզի համար թավիչե արո՞ չունի՞նք հոս, կերպասե անկողին չկա մեր քով ձեր թույլ մարմիններու համար: Չեր քնքուշ մորթը քարե խշտին չընդունի՞ր և խոտերուն վրա ընկողմնիլ ձեր քիթերեն ցուր կբերե:

Աստված լեռները ազատության տվավ և մեզ իրեն պահապան դրավ հոս: Բռնավորք, մեր մեջ ոսկիե գավազան չանցնի՞ր հապա երկաթե կեռ, և այս երկաթը զմեզ վիհերե ազատելեն ետքը չպիտի թողու երբեք, որ ձեր դարաններու մեջ իյնանք:

Ահ, լեռնականը կսիրեմ իրեն այս ազատասիրության համար. և լեռներու տեսքը անհուն բերկրություն կտա ինձ, երբ կնշմարեմ զիրենք ամպերով գոտեպինդ, ձյունով պսակված ու օձաձև ուխերով ոռոգված... իսկ լեռներու լայն տեսքը, սուր հասակը, թավ կուշտերը, մերկ ու երբեմն անարգ կերպարանքը զիս կհափշտակեն և շատ անգամ սև օրերու մտմտուքը մեղմեր են իրենց ազդումով:

Լեռները կսիրեմ, վասնզի բռնավորության ոտքը կոտրած են և իրենց հանդուզն արշավանքին դեմ բնական պատվարներու պես տնկվելով չեն ձգեր, որ անցնի առաջ և լուծ բաշխե ազգերու:

Լեռները կսիրեմ, վասն զի ազատությունը, ծովադեմ գետերու պես, իր սարերու և ժայռերու մեջեն վար իջեր և մարդկության վրա ծավալեր է՝ իրեն տալով այն բեղմնավորությունը, զորն որ գետը կշնորհե արտերու և բլուրներու:

Լեռները կսիրեմ, վասնզի մարմինին հետ մարդուս միտքն ալ վեր կհանեն և ապագային անդունդը մեր առջև կդնեն իրենց անդունդներու քով: Իրենց ելեւջը կյանքից օրինակն է...

Լեռները կսիրեմ ի վերջե, վասնզի լեռներու զավակ են: Նախահայրս (իմա՝ Նոյ Նահապետը – Մ.Հ.) իր հույսը լեռներու վրա դրավ և այսօր ազգիս հույսը լեռի մը վրա է: Օտարին արևը զգալու և հացը ուտելու ժամանակ, երբեմն հոն միտքս կտանիմ... Բնության այս շնորհած պատվարը գոնե զիս չպիտի խաբե և

ազգս պիտի պաշտպանե, ինչպես և պաշտպաներ է միշտ, արտաքին և մանավանդ ներքին թշնամիներու դեմ: Մյուքս հոն է նաև այս սողերը գրելու ժամանակ և կարծես թե իր քարոտ հողին վրա քալած առենս «կզգամ, որ ազատությունը սիրտիս մեջ կտղղի», ինչպես կըսե Ալֆրեստ տը Մյուսե բանաստեղծը» (1864, էջ 26-27):

Հայ ազատագրական պայքարի առաջամարտիկների այս վառաբանությունից արդեն իսկ ակնառու է, որ Ռսկանյանը 1860-ականի կեսերին գտնվում էր առաջադիմական-դեմոկրատական դիրքերում, հավատարիմ էր իր պարզած պայքարի դրոշին և վրովին իրավունք ուներ գրելու, թե «մեր կյանքին մեջ գրվածներեն ո՛չ տառ մը, ո՛չ կետ մը և ո՛չ շեշտ մը կուրանանք, ի՛նչ որ ըսինք, գրեցինք և հրատարակեցինք, նորեն ըսելու, գրելու և հրատարակելու պատրաստ ենք, եթե նույն դեպքերը պատահին» (1859, էջ 126):

Հասկանալի պատճառներով Ռսկանյանն ազատագրության հասնելու իր վերոհիշյալ ծրագիրը լրիվ չի բացահայտել. բայց ամբողջապես զինվորագրվել է այդ նպատակին և նրան ի սպաս դրել իր տաղանդաշատ գրիչը: Իր հրապարակախոսության ընթացքում նա շեշտը դրել է լուսավորության ու ազատության վրա՝ դրանք դիտելով մի միասնության ու անբաժանելիության մեջ, մեկը դիտելով իբրև մյուսի տրամաբանական շարունակությունն ու արդյունքը և հենց նրանցով պայմանավորել ազգի ազատագրությունն ամեն կարգի բռնությունից ու հալածանքից: Այլ խոսքով ասած, ազատությունն ու լուսավորությունն այն միջոցներն էին, որ պիտի ապահովեին հայ ժողովրդի գոյատևումն ու ազատագրությունը, նրա առաջադիմությունն ու անկախությունը: Ահա ինչպես էր Ռսկանյանը բանաձևում այդ գաղափարախոսությունը. «Լուսավորությունը միտքի ազատությամբ կսկսի և կպահվի» (1859, էջ 36), «Ազատության ամեն տեսակ մասունքը կպաշտեն հավատքի չափ» (1859, էջ 52), «Ազատություն: Ժողովուրդ մը, որ ուխտ կընե ազատության ծառայել, անմեռ է ասոր պես» (1859, էջ 102), «Մեզի համար ազատությունն դուրս լուսավորություն չկա» (1859, էջ 132): «Ազատությունը կհաղթվի, չմեռնի» (1859, էջ 147), «Հայաս-

տանեն դուրս հայերուն լուսավորություն չկա» (1859, էջ 153), «Մարդկային ազատությունը կենթադրե ամեն ժողովուրդներու ինքնիշխանությունը... Մարդուս խիղճը, միտքը, իրավունքը ապստամբությունով ազատություն գտեր և աշխարհք մատեր են... մենք կմնանք ապստամբության մեջ» (1859, էջ 159):

Նա վերստին հրատարակվող իր հանդեսի և հենց հրապարակախոսի իր կոչումն էր համարում «Նորեն ազատության ծառայել և ազգը մղել դեպի հայրենիք: Իր սահմանն են ելած ժողովուրդի մը գլխավոր պարտքն է վերստին այն սահմանի մոտիլ և ամփոփվիլ մեկ հողի վերա ու մեկ երկինքի ներքև... Ուղղի՛նք ուրեմն դեպի հայրենիք ազատության ճամբայեն: Այս ճամբու ծայրը միայն կգտնվի լուսավորությունը... Հայրենի՛ք՝ մարդու անկախություն գտնելու համար և ազատություն՝ ընդհանուր մարդկության ծառայելու միտքով» (1864, էջ 2): Վերահրատարակվող «Արևմուտքում», նա այսպես էր արտահայտվում. «Երբ բազմություն մը իր ըրածը կսրբագրե, գրեթե գենք (հետո բառն ուղղվել է՝ «զինք» – Մ.Հ.) կսրբե, կմաքրե և կընդունի ի վերջե այն փայլությունը, որ լուսավորության սկիզբը կրնա սեպվել» (1864, էջ 5 և 16): Կա աշխարհում մի բան «առանց որու մյուս ամենը ոչինչ է», դա է «ազատությունը՝ բոլոր մարդերու և լուսավորության նպատակը այս աշխարհիս մեջ»: «Երկրի վրա, – գրում է Ռսկանյանը, – լույս և կյանք առնել ուզողը, պետք է որ քալե և երբեմն վազե իսկ, որպեսզի ետնորդ չմնա» (1864, էջ 30 և 31): «Ո՛, հայրենասիրություն... եթե դուն արմատ ունենալիք հայերու սիրտին վրա... Հայաստան ուրիշ օրենք և շենք կունենար այսօր...» (1864, էջ 47): Կրկնելով Պրուդոնի խոսքերը, նա հռչակում է. «Թող այսուհետև անոթութենե մարդ չմեռնի և աշխատողին տրվի իր աշխատանքը» (1864, էջ 88):

«Արևմուտքի» գլխավոր գիծը, նրա հաստատուն նշանաբանը՝ «բոլոր դավանությունը», ոսկանյանական սեղմ ոճով արտահայտված, եղել է երկու գաղափար՝ «Ազատություն և Հայրենիք»: Նվ, իրոք, հանդեսի «մանր լուրերից» սկսած մինչև առաջատար խմբագրականներն ու հիմնական նյութերը, կարելի է ասել՝ ամբողջ «Արևմուտքը», հագեցած են ազատության գաղափարախոսությամբ, հայ ժողովրդի ու նրա հայրենիքի

վերածնության գաղափարով: Այդ գաղափարախոսությունը Ստ. Ոսկանյանն ավելի լայնորեն կայրուպագանդեր, ավելի կխորացնե՞ր ու կզարգացնե՞ր, եթե նրա հանդեսները՝ «Արևելքն» ու «Արևմուտքը», քաղաքական հարցերի քննելու արտոնություն ունենային, եթե Ոսկանյանն իրավունք ունենար ազատորեն գրելու. «Առայժմ մեր ձեռքերը կապված են» (1859, էջ 16), «ազատություն չունինք երկարորեն մեկնելու», – խոստովանում է Ոսկանյանը:

Նման սահմանափակումները կաշկանդել են հրապարակախոսի գրիչը. Ոսկանյանն իր իսկ խմբագրած հանդեսներում վանդակված էր գգում, բռնությունները քանիցս ջարդել են նրա գրիչը: Այդուհանդերձ նա կարողացել է իր հրապարակախոսությամբ ու հանդեսներով յոթ ակոս բացել հայ հասարակական մտքի ասպարեզում, իր մտրակող քննադատությամբ ալեկոծել հայկական նեխած ճահիճը, ինչպես արտահայտվել է Լեոն՝ Ոսկանյանին նվիրված իր արժեքավոր ուսումնասիրությունում դեռևս 1901թ.:

Ի՞նչ և ինչպե՞ս է գրել Ոսկանյանն «Արևմուտքում»:

Ստ. Ոսկանյանի քննադատող գրիչը նախ և առաջ ուղղված էր, իր խոսքերով ասած, ազգի, ժողովրդի «ներքին թշնամու» դեմ: Այդ թշնամին, գրում է Ոսկանյանը հենց հանդեսի անդրանիկ համարում, – բոլոր ազգը անխնա կվրդովե... Հայ պատմության ամեն էջերու վրա իր արյունալի շավիղը կնշմարվի և քիչ ազգային կա, որ իր մահաբույր շունչեն ազատ մնա» (1859, էջ 1): Առանց ընդմիջելու նրա դեմ ուղղելով անխնա հարվածներ, Ոսկանյանը պարզում է իր դրոշը, որի վրա դրոշմված է՝ «Միտք և ազատություն». բոլոր այն տեղերում, որտեղ միտքը թունավորվում է, ազատությունը գոհվում, «ի՞նչ ազգ մը չկրնար լուսավորվիլ և եթե լուսավորված է՝ կխավարի», – «այս է մեր ներքին համոզումը, – գրում է նա նույն տեղում և ավելացնում, – անով ջանք ըրինք մեր թշվառ ազգայիններու զգուշություն տալ և ոյքան կարելի է մտական խտությունին արգիլել: Անով հիմա նորեն կերևինք...»: Կրած հալածանքները, «մրիկիկն ու ժգնությունը» չեն խախտել նրա հավատամբը, այլ նրան ավելի փորձառու են դարձրել: Ուստի և, ինչպես գրում է հրապարակախոսը,

«մեր զգեստը փոխվեցավ, մեր դեմքը թմրեցավ, բայց սիրտերնիս մինևույն մնաց»: Հին հալածանքներից կզուսարվեն նորերը՝ ավելի դաժան ու ավելի նենգ և թունալի, նոր մորիկներ ու հողմեր վրա կտան, բայց «Արևմուտքի» խմբագիրը դարձյալ կմնա անհողողող և հինգ տարի անց նորից կկրկնի իտալացի հեղինակի մինևույն խոսքերը՝ «*Հագուսարս և դեմքս փոխված են, բայց ոչ սիրտս*»՝ բազմանշանակ ավելացնելով՝ «մարդը հագուստն չդատել» (1865, էջ 86):

Ոսկանյանը եզակի զգացողությամբ հասկանում էր իր խոսքի արժեքը և մի քանի բառերի մեջ մեծ իմաստ էր դնում, հաճախ էլ ասելիքը հասկացնում կիսատ և եզոպոսյան խոսքով՝ միաժամանակ նկատելով, որ ամեն ինչ չէ բացահայտ գրում: Այդ գրելաձևը նա հատկապես կիրառում էր քաղաքական հարցերի քննությանը նվիրված հողվածներում, ինչպես և ազգային արմատական խնդիրներ շոշափելիս: Ուշադիր քննությամբ, սակայն, դժվար չէ երևան հանել նրա բուն մտքերն ու զաղափարները: Այս իմաստով բնորոշ է, որ, պարտավորված լինելով կրոնական խնդիրներ չհարուցել, Ոսկանյանը զանազան առիթներով բազմիցս արտահայտել է իր կտրուկ վերաբերմունքը կրոնի նկատմամբ՝ հռչակելով իր կայուն հավատամքը՝ «այլ է ազգություն, այլ է կրոնք», «կրոնքը ազգի մը հիմն չկրնար ըլլար», «Ազգը կրոնքի ներքև դնել, գայն ուրանալ է» (1859, էջ 12, 149, տե՛ս նաև էջ 19, 47, 197): Այս արմատական սկզբունքը նրա գործունեության անկյունաքարն էր, թեև, ի վերջո, նա ոչ միայն չէր ժխտում ազգապահպանության գործում կրոնի խաղացած դերը, այլև չէր անտեսում հայ եկեղեցու կատարած ու կատարելիք ծառայությունն ազգի համախմբման գործում, մանավանդ նրա դարավոր տարագրության ծանր պայմաններում: Կրոնին ծառայողների տեղը եկեղեցու բակն է, նրանք, ըստ Ստ. Ոսկանյանի, պետք է «եկեղեցիեն դուրս ուրիշ բաներու չխառնվին», ոչ մի անելիք չունեն ազգի աշխարհային գործերում, առավել ևս նրա առաջադիմության ու լուսավորության ասպարեզում: Նա հանգում էր նույնիսկ արմատական այն պահանջի պաշտպանությանը, թե «Եկեղեցին պետք է որ բաժանվի տերութենե, և տերությունը եկեղեցիեն», որն արդեն

«Ժամանակի խնդիր մ' է այսուհետև, ոչ լուծելի դժվարություն մը», թե «այլ է տերություն», թե «կրոնքը ավելորդ, չըսենք նեղություն է մեր դրոշին, որ ազատությունն ուրիշ դրոշ մ' չէ կրեր երբեք» (1859, էջ 19, 91, 154):

Ոսկանյանը հաճախ է դիմել ֆրանսիական բուրժուադեմոկրատական առաջավոր մտածողներին, նրանց միջոցով հայ իրականության մեջ տարածել սկզբունքային գաղափարներ, երբեմն դրանք զարգացնելով իր սեփական մտահայեցությամբ: Այդպես նա քարոզում էր «ճշմարիտ կրթության» կարևորությունը, որը դաստիարակում է «ճշմարիտ բաղաբացի» (1859, էջ 4) և որը պետք է կրթեր և՛ մարմինը, և՛ միտքը, և՛ սիրտը. «Ով որ առողջ մարմին ունի առողջ միտք ունի» (1859, էջ 3): Չգտելով՝ ամեն գնով արթնացնել հայ ժողովրդի միտքը և այն ազատել կրոնական շղարշից ու զանազան վնասակար ազդեցություններից, Ոսկանյանն ընդգծում էր մտքի զորեղ ներգործությունը, նրա մեծ ուժը. «միտքը գորություն մ' է... երբ կամփոփվի և կվարժվի կրնա դյուրավ նշանավոր բան մը արտադրել ու ընկերության ծառայել: Հայ ազգը շատ ցրված է անտարակույս, բայց հայու միտքը ավելի ցրված կգտնենք հիմա և կտրտմինք...» (1864, էջ 13): Լուսավորության հասնելու ճանապարհը, որ մատնացույց էր անում Ոսկանյանը, Եվրոպան էր, նրա հանդեսի նշանաբանն էլ՝ «Արձագանք Եվրոպայի լուսավորության», այդ էր ցույց տալիս: Բայց նա տեսնում էր բազմադեմ Եվրոպան և վճռաբար մերժում էր ամեն ինչ փոխ առնելու կործանարար հակումներն ու միտումները, զայրույթով հռչակում էր, որ «կեղտի կարոտություն չունինք բնավ»: Նա գրում էր. «Կփափազինք, որ *հարկավոր* եղածը Եվրոպայեն փոխ առնվի առաջվնե քննելով առնվածին արժեքը, վասնզի Եվրոպայի մեջ քանի մը դեմքով Եվրոպա կա... Փոխ առնունք ուրեմն Եվրոպայեն լույս և ոչ սնգույր» (1864, էջ 17): Լուսավորության գերագույն նպատակը, նրա խոր համոզմամբ, ազատությունն է, ուստի և պայքարել ժողովրդի կրթության համար նշանակելով է՝ պայքարել նրա ազատության համար: «Ազատություն լուսավորություն կնշանակեն» իր հռչակած բանաձևը Ոսկանյանը լրացնում ու ընդարձակում է նույնքան կտրուկ բանաձևերով՝ «Մարդս» միտքով

միայն մարդ է և ոչ ոսկիով կամ թավիշով: Ազգերը միտքով միայն ազգ են և ոչ բանակի մը զորությամբ կամ արտաքին զարդերով» (1864, էջ 43 և 67):

Ակնհայտ է. Ոսկանյանն այստեղ, ինչպես և մի շարք այլ դեպքերում, կրել է ֆրանսիական մտածողների որոշակի ազդեցությունը: Բայց դա հենց այն ազդեցությունն է, որ նա եվրոպական լույս է համարում, նաև այն լույսը, որին տենչալով փակեց իր աչքերը Գյոթեն և որի խոսքերը մեջբերելով, նա գտնում էր, որ ի տարբերություն կրոնական լույսի, «աշխարհականը միայն կրնան Եվրոպայեն առնուլ և ազգին մեջ տարածել...» իրական լույսն ու լուսավորությունը (1859, էջ 64): Եվ ամեն ինչ արարող մտքի հարությունը ջատագովելով, նա նկատի ուներ այն միտքը, որ «կրոնամոլության խարույկը» մարելուց հետո ազատագրվել է «կրոնքին հովանիեն»:

«Խորհելու ազատությունը», որ բոլոր ազատություններից առաջինն է, նրանց աղբյուրը, ամենից մվիրականը, ինչպես բնորոշել է Ոսկանյանի «վաղեմի դասատու» Ժ.Միմոնը նրա կողմից գրախոսվող գրքում¹, ինչպես և «միտքին ազատությունը բերավ 89 թվականը և իշխանության գավազանը անցավ ժողովուրդին» (1859, էջ 149): Այստեղից էլ բխում է Ոսկանյանի անվերապահ համակրանքը մարդկության զարգացման նոր դարաշրջանը նշանավորած ֆրանսիական հեղափոխության նկատմամբ: «Այո՛, ապստամբ ենք, այսինքն 89 վեհ թվականը կսիրենք հոգով և մարմնով» (1859, էջ 159): Այդ «երանելի հանցանքը» նա պատիվ ու փառք է համարում իր համար: Նույն այս առիթով նա դարձյալ ու դարձյալ փառաբանում է մարդկային մտքի ազատությունը նրա արարչական ուժը հակադրելով ռազմական ուժին. «Գաղղիայի բոլոր նշույլը, փառքը, դպրությունը և արհեստը միտքի արդյունք են և չորս հարյուր հազար սվինի»: Այս մտքով պետք է զինվի նաև կեղեքվող և «հինօրյա լուծեն և տգիտության մշուշեն պաշարված» (1864, էջ 67) մեր ժողովուրդը, որպեսզի կարողանա ազատություն նվաճել և Հաստանի նախկին փառքը վերականգնել:

Այսպիսով, կյոթության ու լուսավորության տարածման իր

¹ «Արևմուտք» I հոկտեմբերի 1859, N 19, էջ 146-149:

ջանքերով, «հայության միտքը կապանքե ազատելու» նպատակով մղված գործունեությամբ (1864, էջ 75), Ռսկանյանը խնդիրը հանգեցնում էր միևնույն ծրագրին՝ ձեռք բերել ազատություն, վերականգնել հայրենիքը՝ մի հարկի տակ:

Հաջորդ հարցը, որ կազմում էր Ստ. Ռսկանյանի հրապարակախոսության առանցքը, ուրեմն և՛ «Արևմուտքի» հարցերի հարցը, հայապահպանության բուն խնդիրն էր: Այս ուղղությամբ հրապարակախոսը ծավալվել է ազատորեն՝ ընդգրկելով խնդրի բոլոր կողմերը՝ հավասար խորությամբ ու լայնությամբ: Դրան էլ անդրադառնանք գաղափար տալու անհրաժեշտության շարժումով:

Եթե նախորդ հանգուցային հարցին Ռսկանյանը հնարավորություն չի ունեցել հատուկ հողված նվիրել, ապա ազգապահպանության խնդրին նա անդրադարձել է բազմիցս՝ թե՛ առանձին հողվածներով և թե՛ այլևայլ առիթներով քննելով նրա այս կամ այն ենթահարցը: Կրթությանը և հավատքի ազատությանը նվիրված նյութերից հետո նա առաջ է քաշում զուտ լուսավորական խնդիրներ հետապնդող ընկերություն հիմնելու առաջարկը, ապա հանդես է գալիս սկզբունքային նշանակություն ունեցող «ազգային պակասություն» խմբագրականով¹: Ինչպես Նարբանդյանը, Ռսկանյանն էլ գտնում է, որ պատմական ճակատագրի անխնա հարվածների տակ հայի ազգային դիմագիծը խաթարվել է, նա ունի լուրջ պակասություններ, որոնք խանգարում են նրա համախմբմանն ու առաջընթացին: Այդ պակասությունները պետք է բացահայտել և ոչ թե թաքցնել, և դա պետք է անի դեպի ազգությունը սիրով տողորված հայրենասեր խմբագիրը: Նա այս կապակցությամբ գրում է. «Վերք մը թե՛ բարոյական և թե՛ նյութական պետք է որ հայտնվի, որ գուժ գտնե: Մեզի համար ազգասեր է այն մարդը, որ պակասություն մը կհայտնե, կնկարագրե և դարման կբնտռե, և չազգասեր այն, որ ջանք կընե ամեն բան ծածկելու»: Ազգի պակասությունները ելևան հանողը ոչ թե նախատիմքի է արժանի, այլ պետք է իսկական հայրենասեր համարվի: Ռսկանյանի ելակետն այս

¹ Նույն տեղում, 1 փետրվարի 1859, N 3, էջ 17-18:

դեպքում այն է, որ «ամեն ազգային թերություն հիմնավոր պատճառ ունի», քանզի անկարելի է, որ հայերու պես ժողովուրդ մը, հինգ դարե ի վեր երկրի երեսը սփռելեն և անլուր տառապանք կրելեն ետև, պակասություններ չունենա» (1859, էջ 17-18): Սկզբունքային այս մտտեցումը Ոսկանյանի համար կայուն ելակետ էր, երբ նա բացահայտում էր ազգային թերությունները:

Ոսկանյանը «Հայ դյուցազնուհի մը» պատմվածքում¹ սուր ծաղրի է ենթարկում ու մերկացնում նրանց, ովքեր ազգային հարցերում անտարբերություն են ցուցաբերում, ղեկավարվում «Ի՛նչ կըլլա եղեր» սկզբունքով: Նույն սատիրական գրչով Ոսկանյանն ըմբոստանում է ազգային մի շարք գործիչների՝ Գ.Այվազովսկու, Հ. Կոճիկյանի, Խ.Միսաքյանի, Կ.Շահնագարյանի, Գալֆայան եղբայրների, ինչպես և Հովի. Չամուռճյանի գործունեության դեմ՝ նրանց մերկացնելով ամեն առիթով ու «Արևմուտքի» գրեթե բոլոր համարներում: Նրանք հայ ռեակցիայի, կղերաավատատիրական դասի խոսափողն ու զաղափարախոսներն էին, և նրանց դեմ մղվող պայքարը սկզբունքային նշանակություն ուներ դեմոկրատիայի ու ազգային առաջադիմության համար մղվող ընդհանուր պայքարում: Կարող ենք նաև համարձակորեն նշել, որ այդ պայքարում Մ.Նալբանդյանը և Ստ. Ոսկանյանը հանդես էին գալիս ոչ միայն համանման դիրքերից, այլև հայտնի չափով փոխհամագործակցությամբ ու իրար հետ դաշնակցած:

1858-ին կյանքից հեռացած հայ գործիչներից առանձնացնելով երեքին՝ զորավար Բեհրուբովին, հազվագյուտ ձիրքերի տեր և բարի սիրտ ունեցող Առաքել Նուպարյանին, ճարտարապետ Նիկողոս Գալֆայանին, հակիրճ բնութագրումներով գովերգում է նրանց:

Անդրդվելի ու անզիջում է իր պայքարում Ոսկանյանը. ոչինչ, մույնիսկ հանդեսի բանադրման ու խափանման սպառնալիքները, մինչև անգամ մտերմական քողով ծածկված «բարեկամական» հորդորները չեն ազդում նրա վրա, նա չի փոխում «իր լրագրի բերանը», չի զիջում «երևելի մարդկանց», սպառվարժան ամիրաներին, կանգ չի առնում նյութական վնասների առջև: Բանը միայն անձնական արդարացիությունը չէ կամ արժանապատվությունը, անձնական վիճակի տակ նա ազգի շահն էր

տեսնում, շոշափվող հարցերում՝ ազգային խնդիրները: Եվ նա իրավացի էր. հակահարված տալով իր «անձնական» հակառակորդներին, Ոսկանյանը ցնցող հարվածներ էր հասցնում հայ հետադիմությանն ու նրա գաղափարախոսներին, հայ ժողովրդի պատիվն ու ճակատագիրը խաղալիք դարձնողներին, որոնք կարողացան չորս անգամ խափանել նրա հանդեսները, բայց անզոր եղան ամենաբազմազան ձևերով մեղմել հրապարակախոսի գրիչը:

Այդ են հաստատում «Արևելքի», «Արևմուտքի» երկու տարեշրջանների համարները, դրա վկայությունն են «Ինչ կըլլար եղեր», «Մոլի եռանդ», «Հավելված», «Առ պարոն Հակոբ Կոճիկյան», «Պոլիս տպված կես թերթ մը...» սկզբնատողով, «Խայտառակություն ուրկե կուզա», «Քսանչորս ստություն», «Խոսքով բարոյական», «Ծանյալ էշն զմտոր յուր», «Քանի մը հայերու մատնությունը», 1865թ. հունվարի 1-ի համարում զետեղված անվերնագիր հոդվածներն ու պամֆլետները¹: Դրանք ամենայն իրավացիությամբ կարող են դասվել 1850 – 1860-ական թվականների հայ հրապարակախոսության լավագույն նյութերի շարքը և՛ իրենց ոճով ու գրելաձևով, և՛ հարցադրումներով, և՛ առաջ քաշած ու պաշտպանած գաղափարներով:

Միասնական նպատակը՝ պայքարել ազգի առաջադիմությանը խոչընդոտող երևույթների ու խավարամուլ գործիչների դեմ, վերոհիշյալ նյութերն օրգանապես շաղախել է միմյանց և հնարավորություն ընձեռել միևնույն դիտակետից քննել դրանք: Հրատարակման ժամանակագրով դրանցից առաջինը «Ինչ կըլլար եղեր» հոդվածն է, որտեղ տրվում է երեք հայի միջև երես առ երես տեղի ունեցած զրույցը՝ «բարեկամի մը իրավունքը» պաշտպանելու նպատակով: Նրանց ինքնության մասին մեր բանասիրության մեջ այն կարծիքն է հայտնվել, թե հոդվածի հեղինակ Ոսկանյանը նկատի ունի իրեն, Մ.Նալբանդյանին և Գ.Այվազովսկուն, և ենթադրություն է արվել, թե Այվազովսկուն

¹ Նույն տեղում, 15 փետրվարի, N 4, էջ 25-27, 1 մարտի, N 5, էջ 35-36, 16 մարտի N 6, էջ 43-47, 1 ապրիլի, N 7, էջ 49-54, 1 օգոստոսի, N 15, էջ 117-118, 15 օգոստոսի, N 16, էջ 123-126, 1 սեպտեմբերի, N 17, էջ 129-133, 1 հոկտեմբերի, N 19, էջ 145-146 (1859թ.), 15 մարտի, 1 ապրիլի և 1 մայիսի, N 4, 5 և 7, էջ 27-32, 36-39 և 51-53, 15 ապրիլի, N 6, էջ 46-47 (1864թ.), 1 հունվարի, N 10, էջ 73-77 (1865թ.):

այցելելու ու նրանց, մասնավորապես Նալբանդյանի, նպատակն էր «արգելք հանդիսանալ Այվազովսկու Հարավային Ռուսաստան փոխադրվելուն, ցանկանալով, անշուշտ, որ այդ պաշտոնում (Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ – Մ.Հ.) մնա Մ. Վեհապետյանը»¹: Ըստ որում վարկածն առաջ է քաշվել իբրև լրացուցիչ հիմնավորում Նալբանդյանի և Ոսկանյանի «գլխակցության» ապացույց, որը, ինչպես գրում է վարկածի հեղինակը, սկսվել է ավելի վաղ, 1857 թվականից՝ ընդդեմ Գ.Այվազովսկու, երբ Նալբանդյանը ձեռնարկել է իր առաջին ուղևորությունն արտասահման²:

Սակայն ուշադիր հետազոտությունն այլ բան է ասում: Նախ ավելի հավանական է, որ «Երկու երիտասարդի» գրուցակից «հասակավոր անձը», «Ծերունի հայր» ոչ թե Այվազովսկին էր, այլ Հ.Կոճիկյանը: Որքան կարելի է դատել հողվածում ալված ակնարկներից՝ «գրեթե հիսուն տարեկան կա», «ծակամուտ կյանք մը և մթին սովորություններ ունի», «ստվեր» «Ակնցի է և ժամանակով վարժապետ եղեր է», կրում է «Ֆես», «սիբլումաթի ձև մը կառնու» «սուտ տիբլումաթ» և այլն, դիպուկ բնութագրում են հենց Հ.Կոճիկյանին: Սա ծնվել է 1808թ. (այլ վկայությամբ՝ 1807-ին), ուրեմն և 1859-ին, ավելի ճիշտ՝ հողվածը գրելու պահին, իրոք, գրեթե հիսուն տարեկան էր, դիվանագիտական ծառայության մեջ էր և մշտապես թուրք դեսպանի «ստվերի» տակ, ակնցիների ընտանիքում էր ծնվել և ժամանակին Ռեշիդ վաշայի որդիների տնային դաստիարակն էր³: Արտաքին դիմագիծը, որ նկարագրում է Ստ. Ոսկանյանը, նույնպես գուգադիպում է Կոճիկյանի դիմանկարին: Նրա հասցեին արված ակնարկը, թե «ազգային իրերու կխառնվի, մեծ-մեծ խրատներ

¹ *Ա Մակարյան*, Մ.Նալբանդյանի և Ստ.Ոսկանյանի փոխհարաբերության հարցի շուրջ (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1955, N 4, էջ 91):

² Այս կապակցությամբ տե՛ս *Ա Ինճիկյան*, Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրություն, 1954, էջ 79, Մ.Նալբանդյանի կենսագրության անհայտ մի էջը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ., 1954, N 6, էջ 95-99):

³ Հենց միայն այն, որ Այվազովսկին ծնվել է 1812-ին Թեոդոսիայում, հերքում է Ոսկանյանի ակնարկները նրան վերագրելու վարկածը, էլ չենք ասում այն մասին, որ նա 1857-ից Ռուսաստանում էր և դրան «արգելք հանդիսանալու» անհրաժեշտություն 1859-ին չկար:

կուտա ուրիշին հարը փոքելու կամ տունը կործանելու համար», ուղղակի վերաբերում է Հ.Կոճիկյանին, որը, մասնավորապես ենթարկվելով Այվազովսկու թելադրանքին, դավեր էր նյութել «Արևելքի» դեմ, ինչպես տեսանք՝ խափանել էր հանդեսը: Այնուհետև Մ.Նալբանդյանը հագիվ թե նպատակ դներ «արգելք հանդիսանալ» Այվազովսկու Ռուսաստան փոխադրվելուն, որովհետև դա նրա ուժից վեր էր, ապա և հիշենք, որ Այվազովսկին Ռուսաստան էր փոխադրվել 1857-ին, մայիսի 27-ին նա արդեն Կ.Պոլսում էր: Ավելի հավանական է, որ երկու երիտասարդներին հուզող հարցը, ոչ թե Մ.Վեհապետյանին իր պոստում պահելն էր (հագիվ թե նախապես հայտնի դարձած լիներ, որ Այվազովսկին գալիս է նրան փոխարինելու), այլ ֆրանսահայ գործիչներից մեկն ու մեկի (գուց՛հ Ճ.Արամյանի, գուցե «Արևելքի» հիմնադիրներից կամ խմբագիրներից մեկն ու մեկի, թերևս նրա հիմնադիրների, գուցե նաև պոլսահայ որևէ մտերիմի) շահերի և իրավունքների պաշտպանությունը, որը կարող էր կախում ունենալ իրոք մեծ ազդեցություն ունեցող Կոճիկյանից և ոչ թե որևէ ազդեցությունից ու դիրքից զրկված Այվազովսկուց: Համենայն դեպս, շատ ավելի տրամաբանական է Կոճիկյանին դիմելու, քան Փարիզից արդեն մեկնած Այվազովսկուն դիմելու ենթադրությունը:

Այդ ամենից գատ կա Ռսկանյանի մի այլ վկայությունը, որը գրեթե ուղղակի կռվան է ենթադրելու համար, թե երկու երիտասարդների «սուտ դիպլոմաթ» զրուցակիցը, իրոք, Փարիզի թուրքական դեսպանատան խորհրդական Հ.Կոճիկյանն էր: Ավելի ուշ, «Արևմուտքի» ապրիլյան համարում զետեղված բաց նամակում՝ «Առ պարոն Հակոբ Կոճիկյան», Ռսկանյանն ասում է՝ «զձեզ չեմ ճանչնար... մեկ անգամ միայն զձեզ տեսեր եմ¹ և այլև՝ այն՝ երրորդի մ՝ առջև և շատ քիչ ժամանակ» (1859, էջ 52): Տարակույս չի կարող լինել, խոսքն այն հանդիպման մասին է, որին նվիրված է «Ինչ կըլլա եղեր» հոդվածը: Այս նույն նամակում Ռսկանյանը, խոսքն ուղղելով Կոճիկյանին, ասում է նրա մասին՝

¹ Մինչդեռ Ռսկանյանը Գ.Այվազովսկու հետ շատ և շատ հանդիպումներ է ունեցել դեռ Արարատյան ընկերություն հիմնելու օրերին, ապա և «Արևելքի» հրատարակության ժամանակ:

«տիրութեան քի համարավ ունի... Իր բարեկամներու քով» (1859, էջ 51):

Այստեղ առաջանում է կարևոր մի այլ հարց. իսկապե՞ս երկու երիտասարդներից մեկը Մ.Նալբանդյանն էր: Ոսկանյանի հողվածը լույս է տեսել 1859-ի փետրվարին, անշուշտ գրված լինելով ավելի վաղ: Ուրեմն նրանում խոսքը մինչ այդ տեղի ունեցած հանդիպման մասին է: Սակայն որևէ կողման չկա, որ նպաստեր Նալբանդյանի՝ Փարիզում 1857-ին լինելու ենթադրվող վարկածին: Տրամաբանորեն նա, իհարկե, առիթներ ուներ Փարիզում լինելու: Հենց ենթադրվող ու վկայվող այն նպատակը, որ հետապնդում էր Նալբանդյանը 1857թ. արտասահմանյան ուղևորության մեկնելով, կարող էր, եթե ոչ սկզբնապես, ապա գործի ընթացքում կապվել Փարիզի հետ. Ռ. Պատկանյանի հիշատակությամբ, նախապատրաստվող «Հյուսիսավայլի» «համար մամուլ, տառեր ու գլխշեներ» ձեռք բերելու համար նա կարող էր հասնել Փարիզ, որտեղ գործում էր Ծ.Արամյանի հայկական տպարանը, ուր տպագրվում էին Ստ.Ոսկանյանի «Արևելք» և Գ.Այվազովսկու «Մասյաց աղավնի» հանդեսները, հայերեն գրքեր: Արամյանը 1857թ. արդեն՝ հռչակված տպագրիչ էր, տառատեսակներ ստեղծող ու ձուլող, նույնիսկ հայտարարություն էր հրատարակել, որ վաճառում է հայկական տառատեսակներ և տպագրական պարագաներ, որոնց մասին գրել է 1859-ին Փարիզ այցելած Նալբանդյանը՝ «Հիշատակարանում»¹:

Սա, իհարկե, հնարավոր հիմք է ենթադրելու, թե իր նպատակն իրագործելու համար Վիեննա մեկնած Նալբանդյանը կարող էր այնուհետև թերևս Վիեննա ու Փարիզ հասած լինել: Բայց, կրկնում ենք, վերջին պնդման համար որևէ հիմք դեռ չունենք: «Ինչ կըլլա եղեր» հողվածը ինքնին դեռևս բավարար հիմք չի նման ենթադրության համար, թեև այնտեղ երկրորդ երիտասարդի մասին ասվածը, նրա խառնվածքի, պահվածքի ու մտածումների նկարագրությունը հեռու չեն Նալբանդյանից: Ինչպես նկարագրում է Ոսկանյանը նրա ընկերակցի «հանդարտ

¹ Մ.Նալբանդյան, ԵԼԺ, հ. 1, էջ 437:

կացությունը և պարզ շարժումները խոհեմության ստվեր մը կուտան իրեն, որ բավական ազդում կընէ երրորդին (իմա՝ Հ.Կոճիկյանի – Մ.Հ.) վրա»։ Նա լավատեղյակ է գիտությունից, փիլիսոփայությունից, կրոնից, խոսք է բացում ազգի վիճակի մասին, փաստարկում է «մտքի արտոնությունը, խորհելու ազատությունը, առաջ է քաշում այն հանգամանքը, որ հայի ձեռքով հայի իրավունքը ռոմնահարվում է, նա դրված է գերության շղթայի տակ, կրոնական ոգին մեծ վնաս է հասցնում ազգին։ Վերջապես նա ծանր սոսկում է ապրում գրուցակցի հետ ունեցած շփումից ու նրա պահվածքից, ըմբռնում է, որ նրա ներքնաշխարհում «ժահանույր ապականություն մը կվխտա», հանգում է այն եզրակացության, որ «ապականութենեն ծագած վիհին խորությունն» ահռելի է, անքննելի։ Որքան էլ այս ամենն առանց տարակուսելու կարելի է վերագրել Նալբանդյանին, այնուամենայնիվ, մեզ թվում է, հարկ է նախ հիմնավորել, որ Նալբանդյանն, իրոք, 1857-ին եղել է Փարիզում և հանդիպել Ռսկանյանին, ապա և նրա հետ այցելել Հ.Կոճիկյանին։

Շարունակենք ծանոթանալ Ռսկանյանի բուն հոգվածին։ Ջրուցակիցներից երրորդի՝ Հ.Կոճիկյանի ծաղրական դիմագիծը Ռսկանյանը տալիս է շատ դիպուկ ու տպավորիչ. «այժի մորուքով, կապիկի ճակատով և արծվի քթով», «ծեր և չոր մարդը», «ոչ սիրտ ունի, ոչ արյուն և ոչ փոքր եռանդ», «ինքզինքը երևելի մարդու տեղ դրեր է իր շուքին հետ չափվելեն ետև» (1859, էջ 25)։ Նա «աչքը մեյ մը դեպի հայելին կդարձնե, շուրթերը կլզե, կկճե, ձեռքով ֆեսը կշտկե, մորուքը (կ)շոյե¹, ճակատը մատերով կշփե իբր թե իր փտուն գլխեն խոսքի պաշարք մը դուրս հանել ուզե և ահա ի քթիթ ական բոլորովին կայլակերպի և տիբլումաթի ձև մը կառնու, այսինքն սիրալիր ժպիտ մը շուրթերու վրա կդնե, լեզվին ծայրը մեղր կքսե, այտերուն հեզության ստվեր մը կուտա, աչերուն բոլորտիքը անտարբեր բողոժ մը կնկարե և մեկեն փոթերը կսկսին ճակատին վրա ու ազդ կառնե, որ իր ուղեղը դժվար խորհուրդներու ենթակա է։ Այս ընելեն ետև նորեն

¹ Հ.Կոճիկյանի այդ սովորությունը՝ «մորուքին հետ սկսավ խաղալ», Ռսկանյանը նշում է նաև մի այլ անգամ, երբ կոնկրետ խոսում է նրա մասին (տե՛ս 1859, էջ 154)։

մեղմիկ կդառնա հայելիին կողմը ինք հավանություն կուտա իր դեմքին...»:

Նրա հետ զրուցող երիտասարդները փորձում են պաշտպանել «բարեկամի մը իրավունքը», խոսում են «ազգային վիճակի վրա», բայց նա «կույսի համետություն» ցուցադրելով, ասում է. «Ինչ կըլլա եղեր»: Նրանք ներկայացնում են «տրտմալի վիճակի» պատճառը, նշում են, թե ով է հանցավոր, դատապարտում են «անմեղին լլկումը», հիշեցնում «Արևելքի» «հողվածներեն մեկը»՝ հավանաբար Այվազովսկու և Պոդոս ամիրա Տատյանի դեմ գրվածը, որի տույզությունը խափանվել էր հենց զրուցակցի՝ Կռճիկյանի ջանքերով, բայց նա նույն պատասխանն է տալիս՝ «Ինչ կըլլա եղեր»¹:

Ուռնահարված ազատության դեմ բողոքող, մտքի ու խորհելու ազատության իրավունքը պաշտպանող, պատվասիրություն դրսևորող, կրոնական ոգին ազգի մեջ չգրգռելու խնդիրն առաջ քաշող երիտասարդներին, դարձյալ նույն քար անտարբերությամբ է պատասխանում «այժի մորուքը»: Նրանք, Եվրոպայում ծավալվող լուսավորությունը հիշեցնելով, նկատում են, որ «ազատությունը կրոնքին գոհել, միտքը բռնասեր կամքին ներքև թողուլ, իրավունքը անգոսնել ազգի մը խավարումը կուտան», բայց «երկդիմի հայը» հեզմանքով է ընդունում ամեն ինչ և դարձյալ նույն խոսքերը շարունակում, նրան «այս ամենը խաղալիք մը կերևի»: «Անարժան հային» հրաժեշտ տալով, երիտասարդները խոր սոսկում են զգում. «Այս կերպ և այս դրությունով ամեն բարոյական, ամեն օրենք կվերանա աշխարհի և չկա անցյալ վատություն մը և ապագա մը, որ կատարելապես չարդարանան» (1859, էջ 26):

Անտարբերությունը, որ քարաբար խտացել է «ի՛նչ կըլլա եղեր» խոսքում, բորոտության չափ (նողկալի է երկու երիտա-

¹ Այս արտահայտությունը ավելի ուշ՝ հոկտեմբերին գրած մի հողվածում, որ ուղղված է Հ.Կռճիկյանի դեմ և մերկացնում է նրա բարոյական կերպարը, Ռսկանյանը գործածում է հենց Կռճիկյանի դեմ: «Ամեն բանն վեր ԲԱՐՈՅԱԿԱՆ պետք է», – հանդես գալով բուրք ուսանողների առջև ասել է «մեղրբերան» «պարոն Ակոբը»: Նկատելով, որ դա ասել է «փիլիսոփա մը»: Ռսկանյանը գրել է. «Վնաս չունի: Պարոն Ակոբը գայն կկրկնե քիչ մը փոփոխելով և զարդարելով, *ի՛նչ կըլլա եղեր...*» (1859, էջ 145):

սարդների համար: Ոսկանյանը իր հողվածով, որը կոնկրետ անուններ չի պարունակում, նույնիսկ կոնկրետ հարց չի դնում, վարպետ հրապարակախոսի գրչով հասել է մեծ ընդհանրացման: Ոսկանյանը դա անում է իր մի բարեկամի (գուցե և իր իսկ) նամակի միջոցով, որ բերում է հողվածի վերջում. կան «տեսակ մը մարդիկ», որոնց համար բարոյական ոչ մի նորմ, ոչ մի սրբություն գոյություն չունի, կարող են ներառել ամեն մի դեր, «մարդության կեղև միայն ունին», մտածում են միայն մի որևէ խարդախություն անելու մասին, բայց ավելի ու ավելի վարպետ ձևով, սատանայության կողքն են միայն պաշտում, միայն նրա գործությունն են ընդունում, մարդու կոչումը տեսնում են լոկ «ուտել, խմել, վայելել» սկզբունքի մեջ. նրանց համար «առաքինությունը անուն մ' է միայն, իրավունքը՝ ուրվական մը, պատիվը՝ անհիմն երևույթ մը և մարդկությունը՝ անբան հոտ մը», «Երկրային պատիժ մ' են անոնք մարդկային ազգի համար»:

Ավարտելով իր հողվածը, Ոսկանյանը նողկանքով մերժում է անտարբերությունը և կրավիրում ազգին «այսպիսի ապականութենեն ծագած վիհին խորությունը քննել». «Ի՛նչ կըլլա եղեր», – գրում է նա, – «թող ազգը բնտռե այս խոսքերուն հետևանքը: Մեզի համար ասկե ամբարիշտ և ժանտ դրություն չենք ճանչնայր երկրի վրա, վասնզի կսքողի ապականությունը, որ ազգության առաջին թշնամին է: «Ի՛նչ կըլլա եղեր»... Ինչ պիտի ըլլա, ո՛ր, նեխյալ սիրտ: Ամեն մարդ քեզի պես բարոյական հրեշ մը կձևանա, նոր ժողովուրդ մը կսկսի և զքեզ *նոր* նախահայր կընենք ի փառս հայկյան *նոր* ս՛երունդի» (1859, էջ 27): Հետևությունը պարզ է. «Բարոյական հրեշությունը», հանցագործ անտարբերությունը սկզբունք դառնալով և գործունեության եղանակի վերածելով կործանման անդունդ են պատրաստում ազգի համար, ծնում են ապականություն, երևան հանում մարդանման հրեշներ: Ու եթե դրանց դեմ պայքար չմղվի, ապա նման վարքագծի ու գործելակերպի տեր մարդիկ կհռչակվեն իբրև ազգի նախահայր և իրենց ապականիչ օրինակով կվարակեն ամբողջ սերունդը:

Սկզբունքային նշանակություն տալով խնդրին, Ոսկանյանը մի այլ առիթով նույնիսկ բնութագրում է անտարբերություն

հասկացությունը. «Անտարբերությունը ըսելով հոգվո այն վիճակը կիմացվի, ուր մարդ ոչ սեր և ոչ ատելություն կզգա կրոնական և բարոյական խնդիրներու համար... Կարճ խոսքով ըսենք, «անտարբերական» վիճակ մը անհավատությունեն հազիվ թե մազի չափ կտարբերի և առաքինի սիրտերու տակում կուտա» (1859, էջ 44): Իր խոսքն ավելի համոզիչ դարձնելու համար Ռսկանյանը դիմում է Լամբրեի ասույթին, ապա քաղում երկու այլ մտածողների խոսքերը. անտարբերությունը ամենից «գուժաբեր բանն» է, քայքայում է բարոյական բոլոր ուժերը, անպակասություն է տարածում չորս բոլոր, «իր սառնաբեր շունչը ամեն բան չկորցնե և անհյութ ծառի կնմանեցնե մարդը»:

Այդպիսի հարցադրման, նման «Ժանտ դրությունները» դատապարտելու համար, Ռսկանյանը շատ հիմքեր ուներ: «Նրկ-դիմի մարդիկ», ապականված գործիչները գլուխ էին բարձրացրել և «ի՛նչ կըլլա եղեր» սկզբունքով ոտնահարում էին ամեն ինչ, նաև ազգը: Հենց այդ սկզբունքի դեմ մի քանի տարի հետո՝ տակավին 1860թ. և 1864թ., իր արտահայտչաձևով կրելով Ռսկանյանի ազդեցությունը, բայց խնդիրը ավելի սուր և ավելի լայն դնելով հանդես էր գալիս Մ.Նալբանդյանը նախ՝ «Հիշատակարանում», ապա՝ «Ազգային թշվառությունում», ինչպես և այլ երկերում:

Թերթենք «Հիշատակարանի» ԺԴ հատվածը, որ լույս է տեսել «Հյուսիսասփայլի» 1860թ. 6-րդ համարում. Մանդինյանի «Մեղու Հայաստանի» լրագրի էջերից Հով. Չերքեզյանցը հայիոյություն է ժայթքել «Հյուսիսասփայլի» դեմ, նրա հրատարակիչների ու աշխատակիցների, մասնավորապես Մ.Նալբանդյանի դեմ: Նալբանդյանը արհամարհանքով է պատասխանում «անդուռն բերանով» հանդես եկած հայիոյաբանին, բայց և մերկացնում է «մի տեսակ մարդերին», այն աչք ներկող, «բազմադեմ, կամ, ավելի լավ է ասել, անդեմ մարդկանց, որոնք «փառքի կոթող» են հիմնում. «Ինչ կըլլա եղեր», -- հռչակում է Նալբանդյանը՝ մերժելով «երկակենցաղ» հեղինակի «սև բամբասանքի գունդերը»¹: Ըստ այդմ նա իր գրառումների այդ հատվածի եզրափակման մեջ օգտագործում է Ռսկանյանի

¹ Տե՛ս Մ.Նալբանդյան, ԵԼԺ, հ. 1, էջ 468-471:

առաջին պամֆլետի արտահայտությունը՝ «արտաքին թշնամանք չէ, այլ ներքին համոզումն»:

Նույն երևույթի առավել կծու ծաղրը և անդառնալի դատապարտումն առկա է «Ազգային թշվառության» մեջ: Այս անգամ Նալբանդյանը պաշտպանում է ազգային գործիչներին քննադատելու Հ.Սրվաճյանի պարբերականի՝ «Մեղուի» իրավունքը: Ազգային սահմանադրության «գործադիրը... *արտասահման բռնակալությամբ* վարվում են *Մեղուի* հետ», – գրում է Նալբանդյանը, ապա, դիմելով «Ավետարանին», նկատում է՝ «Յաթոռն Մովսեսի նստան դպիրք և փարսեցիք»: Նրանք պահանջում են՝ «մեր կամքը իբրև Մովսեսի պատգամ ընդունեն. «Մեր ըրածին կամ ընելիքին վրա չխոսին»...»: Ու Նալբանդյանը ցատկով հարցնում է.

«Իսկ ձեր «չըրածին և չընելիքին վրա» կարելի՞ է խոսել, սքանչելի՞ դեկավարք ազգային վարչության. «Անկա ալ մեր գիտենալու բանն է... Փառք աստուծու, ի՞նչ է եղեր, օրեօր ազգերնիս կհառաջադիմեն կոր (գիտենք, կդիմեն, բայց դեպի կործանումն), քիչ մը պակասությունը կան եղեր... ո՞ւրտեղ չկա, անոնք ալ կամաց կշտկվին... Ազգերնիս կհառաջադիմեն կոր... «Ազգի զավակները սրիկաների մատնված, սրախողխող են լինում յուրյանց մահիճների մեջ... ազգերնիս կհառաջադիմեն կոր»: Ազգի աղջիկները և կանայք *կրտասպին* և կբռնաբարվին անօրինակ և անլուր ժպրհությամբ. «ազգերնիս կհառաջադիմեն կոր». մի քանի կին, մի քանի աղջիկ «կտառապին եղեր... Ի՞նչ կըլլա եղեր...» ...Ազգերնիս կհառաջադիմեն՝ կոր»¹:

Բանն, իհարկե, Ստ. Ռսկանյանի և Մ.Նալբանդյանի արտահայտչաձևերի գուգադիպությունը չէ, որը չի սպառվում բերված օրինակներով²: Կայևորն այն է, որ նրանք հրապարակախոսական հզոր ձայնով դատապարտում են «ազգի աղեխորով բողոքները, յուր ներքին հալածողների և հարստահարողների ընդդեմ...» աչք ու ականջ փակելու և անտարբերությամբ «Ի՞նչ

¹ Նույն տեղում, հ. 3, էջ 108 (առաջին ընդգծումը մերն է – Մ.Հ.):

² «Ինչ կըլլա եղեր» արտահայտությունը Նալբանդյանն օգտագործում է նաև Բ.Տ.-ին Կամիչիմից գրած նամակում՝ 1865թ. դեկտեմբերի 15-ին (հունվարի 3-ին) (տե՛ս ԵԼԺ, հ. 4, էջ 256):

կըլլա եղեր» ասելով ամեն չարիք ու հանցանք սքողելու գործելաոճը, որ մեծապես վնասում էր ազգին ու նրա առաջադիմությանը:

Նկատենք նաև հետևյալը. քննվող հողվածից առաջ իր հանդեսի առաջին և երկրորդ համարներում Ոսկանյանը հակամեհանվան ամենայն սրությամբ քննադատական խոսք է ասել Հ. Կոճիկյանի հասցեին, բայց այս անգամ՝ «Արևմուտքի» չորրորդ համարում, նա չի տալիս մշտապես թուրքական փաշաների հովանու տակ գտնվողի անունը (1859, էջ 18): Հետագայում մույնպես նա բազմիցս մերկացնում է Կոճիկյանին՝ միշտ հիշատակելով նրա ազգանունը: Թվում է «Ի՛նչ կըլլա եղեր» հողվածում Ոսկանյանը հենց ընդհանրացնելու նպատակով՝ է, որ չի հիշատակել «Սյրվեր» անվանված գրուցակցին և դրանով իսկ ընդգծել է, որ «անձնական վեճի» տակ, իրոք, տեսնում է ազգային խնդիրը, որ նրան տվյալ դեպքում ոչ թե անձնավորությունն է հետաքրքրում, այլ նրան հատուկ և շատերին բնորոշ այն հատկանիշները¹, որոնց «դառն արդյունքը» «բոլոր սերունդ մը կսպառնա» (1859, էջ 12):

Առհասարակ Ոսկանյանը մշտական քննադատության տակ է պահել ազգային վերին գործերին միջամուխ եղող Հ. Կոճիկյանին, որի միջոցով թուրքական իշխանությունները, նախարարները, դեսպաններն ու փաշաները հայ միջավայրում «ներդնում» էին սուլթանական քաղաքականությունը:

«Արշալույս արարատյանի» 1859թ. N 577-ում Հակոբ Կոճիկյանը հանդես է եկել արքեպիսկոպոսին խրատ տվող մի հողվածով՝ նպատակ ունենալով կրոնական հարցերը վեր դասել ազգային խնդիրներից: Ոսկանյանը դնելով «հոգևոր իշխանությունը մարմնավորեն զատելու» հարցը, հակադրվում է նրա քարոզներին և գտնում, որ կրոնը չի կարելի շփոթել ազգության, գիտության, լուսավորության կամ նյութական շահերի հետ: Ազգությունը վեր դասելով կրոնից և դատապարտելով կրոնական

¹ «Արևմուտքի» հաջորդ համարներից մեկում (1859, էջ 40) Ոսկանյանը նկարագրում է պարահանդեսում իրեն անվայելուչ պահած մի հայի վարմունքը, որն իրեն արդարացնում է «Ի՛նչ կըլլա եղեր» խոսքերը շարունակ կրկնելով: «Ահա քեզ «Ի՛նչ կըլլա եղեր» խոսքին մեկ արդյունքը», – նկատում է Ոսկանյանը:

երկպառակտման հետևանքով դավանափոխության դիմելու այս ու այնտեղ նկատվող երևույթները, Ոսկանյանը դարձյալ ձաղկում է Հ.Կոճիկյանին, որը նույնացնում է հավատքն ու ազգությունը:

Սակայն հարցը այդպիսի նույնացումով չէր ավարտվում: Կոճիկյանը դրանից հետո առաջ էր քաշում մի այլ, ոչ պակաս վտանգավոր տեսակետ, ազգային թերութունները չպետք է բացահայտել, դրանց հանդեպ ազգասիրաբար պետք է աչք փակել, ինչպես դա որպես կանոն հարկ է աճել և արվում է կրոնի հանդեպ: Ամենայն վճռականությամբ Ոսկանյանը հանդես է եկել նաև այդ տեսակետի դեմ՝ հենց Կոճիկյանին քննադատելու առումով, այնուհետև նա այդ գաղափարախոսության դեմ ամբողջապես, շարունակելով այն գիծը, որ նա վարում էր իր հրապարակախոսական գործունեության սկզբնական շրջանում, մանավանդ «Արևելքում»: Այդ ընդհանուր հարցին նվիրված հոդվածներից մեկում՝ «Ազգային պակասություն», որին առիթ կունենանք հատուկ անդրադառնալու, նա գրեթե ոչնչացնող քննադատության է ենթարկել Հ.Կոճիկյանին, քար քարի վրա չթողնելով նրա սնանկ տեսակետից: «Շլամիտ հայ» համարելով տարիներ շարունակ փաշաներին ծառայող Կոճիկյանին, Ոսկանյանը մարտականորեն առաջ է քաշել ու պաշտպանել իր տեսակետը: «Այլանդակ հայի», «բաշայի *խահվե օջախին* մեջ մեծցողի մը լեզուն ավելի կարճ պիտի ըլլա...», – աներևությամբ նկատել է նա (1859, էջ 18):

Ավելի հաճախ ու ավելի սուր են Ոսկանյանի մերկացումները «Արևելքի» խափանման գործում Կոճիկյանի կատարած դերի առթիվ: Նա հանդեսի խափանումը դիտում է իբրև ոչ միայն անձնապես իր, այլ նաև ազգի դեմ կատարված քայլ, դրանով «մեր թշվառ ազգին անդարմանելի վնաս տրվեցավ...» (1859, էջ 16): Ահա ինչու նա անկասելի պահանջ էր զգում ընթերցողին տեղյակ պահել, թե ինչպես «Արևելքից» խլվեց նրա ազատությունը՝ հանդեսի միակ առավելությունը, պարծանքը մյուս պարբերականների համեմատ (1859, էջ 16): Իր այդ խոստումը Ոսկանյանը կատարեց «Արևմուտքի» յոթերորդ համարում՝ գետեղելով «Արևելքին վերջը» խորագրով հոդվածը, որին կցված

է հրապարակախոսի բաց նամակը՝ «Առ պարոն Հակոբ Կոճիկյան»¹:

Բուռն ցասումով է գրել իր նամակը Սո. Ոսկանյանն, ու այդ ցասումն ուղղված է մամուլի և խմբագիր-հրապարակախոսի իրավունքները, նրանց ազատությունը սահմանափակելու փորձերի դեմ: Հ.Կոճիկյանը, ինչպես նշեցինք իր տեղում, «Օսմանյան դեսպանատանին դրոշմը կրող» (1859, էջ 17) հատուկ նամակով պահանջել էր Ոսկանյանից՝ «ձեր լրագրո բերանը փոխեցեք», և խրատներ էր տալիս, թե ինչի մասին չգրել: Դա բացահայտ սպառնալիք էր, խստաբարո մի ազդարարություն: Պատասխանելով «փիլիսոփես», «աստվածաբան», «մետաքսաբան», «խրատատու» էֆենդիին, Ոսկանյանը նկատում է., որ անցյալի ինչ-ինչ դեպքերում մշտապես խառն է նրա «մատը և... ոտքը»: Եվ դա իրավունք է տալիս հիմա՝ 1859-ին, անփոփոխ ձևով հրապարակ հանել երկու տաքի առաջ գրածը և առանց երկընտրանքի մերժել Կոճիկյանի հորդորներն ու սպառնալիքները, նրա իսկ իրավունքը՝ խառնվել «ազատ հանդեսի գործերին», չափ դնել նրա խոսքին, խրատ տալ «ազատ հանդեսի մը առաջին շարագրին»: Այդ մերժման հիմքն այն է, որ հանդեսը լույս է տեսնում Փարիզում և կարող է ենթարկվել միայն ֆրանսիական օրենքներին, որի առջև ամենքն էլ հավասար են. «Երբ այս օրենքը ազատություն կուտա ինձ, – շեշտում է Ոսկանյանը, – ինչո՞ւ զայն չպիտի վայելեմ և ազգիս օգտին համար գործածեմ»:

Ոսկանյանը ոչ մի հարցում՝ փիլիսոփայության, քաղաքականության, բարոյական, կրոնական և այլն, Կոճիկյանի հետ համեմատության որևէ եզր չի ընդունում. «Այվազովսքիին պես մարդու մը բարեկամը ինձի համամիտ և համակարծիք» չկրճար ըլլալ»: «Վիհ կա ձեր և իմ մեջ», – կտրուկ հայտարարում է Ոսկանյանը և «ի բոլոր սրտե և ի լուր աշխարհի» մերժում Կոճիկյանի հետ որևէ քանում համամիտ լինելու անպատվությունը: Նա իրեն խրատ տվող «աստվածաբան փիլիսոփային» խրատում է՝ «լավ կընեք ձեր պաշտոնը հանդարտ կատարել և ձեզ չվերաբերված խնիրներու մեջ չնետվիլ...»

¹ «Արևմուտք», 1 ապրիլի 1859, N 7, էջ 49-54:

Վասնզի ոչ ոք կարե երկուց տերանց ծառայել: Կհասկանաք ինչ ըսել կուզեմ և մեկնությունը ավելորդ է»։ «բարեկամությունը տղայական խաղալիք չէ և բարեկամ եմ ըսելով՝ մարդու հոր փորելը ուրիշ անուն ունի Եվրոպայի մեջ»։ «Աշխարհական մը և պաշտոնավոր մը կսեսլվիք, թող տվեք, որ քահանաներն իրենց պաշտոնը կատարեն եկեղեցիի մը մեջ, ինչպես դուք կկատարեք ձերինն դեսպանատունին մեջ», «Երկդիմի կերպեր և հրկիզելու առաջարկություններ ընել անվայել է», «միտքի ազատությունը քիչ մը ավելի պաշտելու է... Համոզում մը, որ ուրիշին համոզումը կնեղե բռնություն կանվանվի... Այս միտքին ազատությունը կենթադրե խոսելու և գրելու իրավունքը, զոր ամեն մարդ ունի»:

Չենք սխալվի, եթե Ոսկանյանի այդ նամակ-պամֆլետը դասենք 1850-ական թվականների հայ հրապարակախոսության լավագույն նմուշների շարքը: Անդրադառնալով այդ նամակին և ընդարձակ քաղվածքներ անելով նրանից, Լեոն նկատել է. «Անշուշտ, Հակոբ Էֆենտի Կոճիկյանը շատ էլ ուրախ չպիտի լիներ, որ այսպիսի նամակ գրեց Ոսկանյանին: Նա և մյուս էֆենտիները, աղաները, վարդապետներն ու եպիսկոպոսները *նոր հայ* էին տեսնում իրանց առջև: Մեր այս բերած կտորները գեղեցիկ կերպով ցույց են տալիս, թե ինչ էր Ստեփան Ոսկանը իբրև հրապարակախոս 1855 թվականին: Դա հայկական առաջին ազատ ու անկախ միտքն էր, մի միտք, որ սնվելով Եվրոպայում, պողվատի ամբողջություն ստանալով, գալիս էր մեզ մոտ՝ դարերի մտավոր ստրկության թանձր ու սև վարագույրը պատռելու, ճնշված, տափակացած, գերի էր հայ միտքը, նրա վրա դեռ ծանրացած էին հին-հին դարերը: Ստեփան Ոսկանները նոր օրերի, նոր հայացքների արշալույսն էին մեզանում...»¹:

Որքան էլ արևմտահայ մեր հարգելի պատմաբանները հակված են դրական գույներով նկարագրել Հ.Կոճիկյանի գործունեությունը, կամ նրա անվան հետ կապել նույնիսկ ազգային սահմանադրության գաղափարի ծննդի ու իրականանալու փաստը²,

¹ *Լեո*, Ստեփան Ոսկանյան, տե՛ս «Մորճ», 1901, N 11, էջ 132:

² Տե՛ս *Սարուխան*, Հայկական խնդիրն և ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860 – 1910), Թիֆլիզ, 1912, էջ 244 և հետո, *Ա Ալոյսյանյան*, Ազգային սահմանադրություն, իր ծագումը և կիրառությունը, «Ընդարձակ օրացույց Ս. Փրկչյան հիվանդանոցի, Կ. Պոլիս, 1910, էջ 228-232 և հետո:

այսուամենայնիվ անհերքելի է, որ Կոճիկյանը և նրան համագործակցող փարիզահայ մի շարք մերձավորներ (Ալվա-գովսկի, Խ.Միսաքյան և ուրիշ.) պայքարում էին հենց «նոր օրերի, նոր հայացքների արշալույսի» դեմ, ամեն կերպ խափանում էին դեմոկրատական գաղափարախոսության ներթափանցումը հայ իրականության մեջ, փորձում էին լռեցնել ազատության պրոշ պարզող հրապարակախոսներին, նույնիսկ հալածանք էին կազմակերպում նրանց դեմ:

Հ.Կոճիկյանի վարած այդ ուղեգծի ցցուն դրսևորումն է Ստ. Ոսկանյանի դեմ ուղղված թունացայտ հողվածը «Մասիսի» 1859թ. հունիսի 25-ի համարում³: Դա փաստորեն պատասխան էր «Արևմուտքի» ապրիլյան համարում տպված բաց մամակին: Հողվածում, Ստ. Ոսկանյանին ներկայացված մի քանի «մեղադրանքներից», որոնց անդրադարձանք նախորդ էջերում, ակնհայտ է, որ նրա հեղինակը տասը տարի անցնելուց հետո էլ լավ գիտե «մեղապարտի» ակտիվ մասնակցության մասին Փարիզում ծավալված հեղափոխական շարժումներին, նրա գաղափարական ուղեգծի ու իրական գործունեության մասին: Նրան հայտնի է այն, ինչ տարիներ շարունակ Ոսկանյանի գաղտնիքն էր, միաժամանակ ակնառու է, որ նա մոտիկից ծանոթ էր Ոսկանյանին առհասարակ: Դրանից կարելի է ենթադրել, որ նա օգտվել է ինֆորմացիայի ոչ սովորական աղբյուրներից, թե մի շարք դեպքերում, թերևս գիտակցաբար, թույլ է տալիս փաստական անճշտություններ՝ հետապնդելով որոշակի նպատակ՝ թանձրացնել Ոսկանյանի «հանցանքները»: Այստեղից էլ հանգում ենք այն հետևության, որ «Մասիսի» հողվածագիրը հենց Հ.Կոճիկյանն է կամ նրա թելադրությամբ է գրվել այն:

Հողվածում «Արևմուտքը» ստացել է «խայտառակ տետ-

³ Հողվածը տպագրվել է անվերնագիր և առանց ստորագրության: Գրականության մեջ կարծիք է հայտնվել, որ Ոսկանյանի դեմ ուղղված այդ հողվածի հեղինակը Խ.Միսաքյանն է. «Թորոս» – (տե՛ս *Լեռ*, նշվ. աշխ., «Մորճ», 1901, N 11, էջ 119, *Ս.Մակարյան*, Մ.Նալբանդյանի և Ստ. Ոսկանի փոխհարաբերության հարցի շուրջ, ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1955, N 4, էջ 87-88 և այլն): Սակայն «Թորոսը» ոչ թե «Մասիսի» հեղինակներից է, այլ իր դեմ ուղղված հողվածի հեղինակին Ոսկանյանի տված մականունը, որ այնուհետև նա գործածեց իբրև իր հսկառակորդների հավարական անվանում՝ «հայ Թորոսներ» (1859, էջ 132):

րակ» պիտակը, Ոսկանյանը բնութագրվել է որպես իր բարերարների հարզը չճանաչող, խռովություն քարոզող ու կազմակերպող, «վնասակար հայազգի», «նախատինք ու անպատվություն» է մատուցում իր խնամած ու ապրեցրած մարդկանց, «հայ անվանը նախատինք ու ամոթ բերող» է: Նա «Փարիզի երեք արժանապատիվ վարդապետներին՝» Գ.Այվազովսկուն, Ամ. Գ-ալֆայանին ու Ս.Թեոդորյանին «անպատկառ լրբությամբ կնախատե ու կթշնամանե», իր հանդեսի և «Թափառական հրեայի» թարգմանության համար տրված «ստակները կլլեց», իսկ «հիմա ելեր այնպիսի անձ մը ադա Ղալիպյանի պես ազգասեր բարերարե մը հաշիվ կփնտռե... Իրմե շատ բարձր և ազգին ու աշխարհի առջև համարում ու պատիվ ունեցող անձինքը թշնամանե... Անարգ որդերն ու ճճիները ընտիր ու ազնիվ պտուղներուն թշնամի են»: Ոսկանյանը, – շարունակում է «Մասիսի» հեղինակը, – «գռեհիկ, կոշտ և վերջին ծայր անբաղաքավար մարդ մըն է...: Բանի մը տարի առաջ Փարիզեն Կ.Պոլիս եկած ժամանակը երևելի անձի մը տուն այցելության գնաց և սիկառան բերանը հիշյալ երևելի անձին ներկայացավ ընտանյացը մեջ՝ առանց գլխարկը (շապկա) վար առնելու»: Եվ հողվածագիրն այս լուտանքները Ոսկանյանի գլխին է թափում, որպեսզի հերքած լինի Ոսկանյանի «Արևմուտքի» «գռեհիկ գաղափարները», ցույց տա, թե հանդեսի աջակիցները «ցավելով կհայտնեն իրենց սխալած ըլլալը». «Մեր միտքը..., – վերջում գրում է նա, – հասարակության մեջ տարածված սխալ կարծիքներն ուղղել է»:

Եթե «Մասիսի» հողվածագիրը չխոստովաներ էլ, դարձյալ պարզ է, արդեն շուրջ 15 տարի Ֆրանսիայում գտնվող Ոսկանյանը, նույնիսկ իր հեղափոխական անցյալով, որևէ չափով վտանգ չէր սպառնում որևէ մեկին: «Վտանգավորը» նրա գաղափարախոսությունն էր, այն մերկացումներն էին «զզվանք» պատճառում, որոնք ուղղված էին այվազների ու աղաների դեմ, այն լուսավորությունն էր ատելի, որի շողերի տակ պարզ տեսանելի էր դառնում «մթան մեջ պահված» գիշատիչ դեմքերը: Դեռ մի քանի տարի առաջ, ինչպես նշեցինք, «Մասիսը իր բարեկամությունն էր ցուցադրում Ոսկանյանի «Արևելքի»

հանդեպ, իսկ հիմա, երբ Ոսկանյանն իր ամբողջ ծայնով էր արտահայտվում, նա և նրա «Արևմուտքը» դառնում են ժայթքող հիշոցների նշանակետ: Ոսկանյանը, «քանի որ երեսը արևմուտք դարձուց», ինչպես գրել է «Մասիսը», դարձել է ազգին պատիվ չբերող «լուսավորյալներից» մեկը:

«Մասիս» – Կոճիկյան մերձակեցությունն, այսպիսով, փորձում էր պատմեշել հայ հասարակական մտքի դեմոկրատական առաջընթացի ուղին և «Մեղուի» ու Սըվաճյանի դեմ ծավալած պայքարին զուգահեռ պայքար էր սկսում «Արևմուտքի» ու Սա. Ոսկանյանի դեմ: Ըստ էության դա մի գոռ պայքար էր, ուր Սա. Ոսկանյանին առյուծի բաժին է վիճակվել, և նա արհաբար է կատարել հրապարակախոս մարտիկի իր դերը, «Արևմուտքի» հետագա համարներում նոր ու ցնցող հարվածներ է ուղղել «Մասիսի» ու Թորոսների դեմ:

Ուրվագծելով «Մասիսի» խմբագրի դիմաստվերը, Հ.Պարոնյանը տվել է Կ.Յուրյուճյանի դիպուկ բնութագիրը, որ կարելի է հասցեագրել նաև Հ.Կոճիկյանին. «Ո՛հ է խնդիր մը անաչառությամբ քննելու համար զայն կսպարգե, անոր մեջ ճշմարտութենէ առաջ բաժանող կփնտռե, վասնզի առանց բաժանորդի ճշմարտությունը չպաշտպանվիր: Երբ կտեսնե, որ ճշմարտությունը խոհեմությամբ կվարվի՝ անոր կուսակից կըլլա, իսկ երբ կնշմարե, որ կհանդգնի իրեն դպչիլ՝ բոլոր ուժովը կզինվի անոր դեմ և իրավունք ալ ունի, քանի որ անձնապաշտպանությունը օրենքն ալ կներե»: Դիմելով «ինքնապաշտպանության» Կոճիկյան-Յուրյուճյանը պաշտպանում էին կղերաամիրայական մտայնությունը, Այվազովսկուն, ամիրաներին, հետադեմ եկեղեցականներին, դրանք էին նրանց հենարանը: Չէ՞ որ ինչպես բանաձևել է Պարոնյանը, «Մասիս» *պայրիխարքարանի բերանն է կամ սկանջն է*»:

Նմանօրինակ գործիչներին նկատի ունենալով, Ոսկանյանն «Արևմուտքի» էջերից կրկնել է ածուխը ձեռքն առած մարդկանց հասցեին ասված դիպուկ խոսքերը՝ եթե ի վիճակի չեն վիրավորելու, զոնե՝ կմրոտեն: Բայց Ոսկանյանը չընկրկեց նրանց առաջ, չվախեցավ մրտովելուց: Իր նամակով Կոճիկյանին հասցրած հարվածը, թեև հուժկու, Ոսկանյանը բազմապատկեց: «Արևմուտքի» հետագա համարներում նույնպես նա մտրակա-

հարել է «կես հայ, կես քյուրք էֆենտիին» (1859, էջ 117, մաս էջ 123, 135, 154-156): Հանդեսի հոկտեմբերյան համարը մա սկսում է Կոճիկյանի դեմ ուղղված հատուկ հոդվածով՝ «Խոսքով բարոյական», որտեղ նրան մերկացնում է իբրև լավ խրատներ սովող, բայց գործնականում դրանց հակառակ գործող անձնավորություն: «Ամեն բանն վեր բարոյական պետք է... Խրատատու անձի մը առաջին պարտավորությունն է խոսքին և գործին մեջ հակասություն չդնել», – այսպես է եզրափակվում այդ հոդվածը (1859, էջ 146): Նույնիսկ «Արևմուտքի» խմբագրումից Ոսկանյանի հրաժարվելու մասին ազդում, որ ստորագրել է հանդեսի ֆրանսիացի համարատուն և հավանաբար գրել է Ոսկանյանը կամ հանդեսի հիմնադիրներից մեկը՝ ասվում է, թե «մութի մեջ» սպասող թշնամիները՝ «Կոճիկյան և Շահնազարյան, Այվազովսքի և Ամբրոսիոս պարոնները պիտի խոսին, երբ հավաստի պիտի ըլլան, որ ալ պատասխան առնելու չեն: Այս արիությունը Պոլսի մեջ միայն կտեսնվի...» (1859, էջ 161):

«Մութի մեջ» գործող թշնամիներից առաջինը, թեկուզև վերոհիշյալ թվարկմամբ, Գաբրիել Այվազովսկին էր, որի դեմ առաջին ծառայողն էլ հենց Ոսկանյանն էր: Տեսանք, որ նրա դեմ պայքարը Ոսկանյանը սկսել էր դեռ «Արևելքի» էջերում: Երբ սկսեց լույս տեսնել «Արևմուտքը», Այվազովսկին արդեն Ռուսաստանում էր, թեմական առաջնորդի պոստում: Թեոդոսիայում շարունակում էր հրատարակել իր երկլեզու «Մասյաց աղավնին»՝ հայերեն և ռուսերեն: Սակայն հակառակորդի հեռավոր երկրում գտնվելը ոչ միայն չէր բացառում պայքարը նրա դեմ, այլ ընդհակառակն, այդ պայքարը նոր և ավելի ուժեղ թափ է ստանում: Այն արտակարգ ընդունելությունը, որին արժանացավ Այվազովսկին ռուսական պաշտոնական շրջաններում, չէր կարող խլացնել, առավել ևս խանգարել այդ պայքարին, թեև Այվազովսկին ու նրա համախոհները մման հովեր էին փայփայում և լայնորեն թմբկահարում Այվազովսկի գործչին: Մամուլում կրկին ու կրկին ածականներ էին շռայլվում նրա հասցեին, լուրեր տպագրվում այն մասին, որ մա մեկ ժամ տևողությամբ տեսակցել է ցարի հետ, արժանացել նրա հրամանին՝ նշանակվելով Բեսարաբիայի ու Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ: «Առկա է

աստժո մատը և օրհնությունը», – գրում էր «Արշալույս արարատյանը» և փափագում, որ «Թուրքաստանի հայկազուն ժողովուրդը յուր ազգասիրական գործունյա խնամքեն» չզրկվի: Թերթը սուպագրեց ցարի հրամանը, արտատպեց «Մասյաց աղավնու» դիֆերամքներով առլեցուն հաղորդունը այն մասին, որ Այվազովսկին տեսակցել է նաև մեծ դուքսի, ներքին գործերի նախարար Ն.Լանսկոյի հետ: Այդ ամենը, ինչպես գրել է «Մասյաց աղավնին» և արտատպել է «Արշալույս արարատյանը», «զազգը սիրողաց բոլոր սիրտերը պիտի լեցունեն... բազմագույնք թշնամյաց և ատելյաց բերանը զարկյալ պապանձեցնելով»: Հայոց եկեղեցու դարավոր ավանդության խախտումով՝ ցարի ձեռքով առաջնորդական աթոռ ստանալը երկու թերթերն էլ դիտում էին իբրև «արքիմանդրիս վարդապետին փառքն ու արդյունքը» ամբողջ աշխարհին ցուցադրող պարագա, մատնանշում էին, թե նա «խրմով այնպիսի անգյուտ անձ մը, մանավանդ թե զանձ մը կնվիրե հայրենյաց և սուրբ եկեղեցվոյս»:

Գործունեության լայն ու նոր արտոնություններ ստանալով Գ.Այվազովսկին շարունակում էր մնալ հայ առաջադիմության մոլի հակառակորդ, ռեակցիոն գաղափարախոսության ու հոսանքի պարագլուխ, նենգ ու խարդախ պայքար էր մղում ազգանվեր գործիչների ու հրատարակությունների, մասնավորապես Մ.Նալբանդյանի ու «Հյուսիսափայլի» դեմ, նույնիսկ դաշնակցելով հայ ռեակցիայի ու ցարական իշխանությունների հետ, մարտնչում էր ընդդեմ հեղափոխական-դեմոկրատ հրապարակախոս-գործչի՝ Մ.Նալբանդյանի:

Դեռ մինչև Այվազովսկու Ռուսաստան մեկնելը Ստ. Ոսկանյանը գուշակում էր, որ նա Ռուսաստանում շարունակելու է այն նույն գործունեությունը, որ ծավալել էր Փարիզում. «Արդարև այս առդերը գրողը, – հիշեցնում է Ոսկանյանը, – մարգարեական ոգի ունի եղեր, երկու տարի առաջ կանդեր, թե պ. Գ.Այվասոսքին որոն ցանելու և շփոթ հանելու համար խրըմ կերթա...» (1859, էջ 80): Եվ իրոք, 1858-ի մարտից նա, «հոգևոր գրաբննիչի» պարտականություններ ստանձնած, անհնաբ էր համարում առանց իր նախնական թույլտվության կրոնական

բովանդակությամբ գրքեր և նյութեր հրատարակել, արդեն վայելում էր ցարական իշխանությունների լիակատար վստահությունը: Շուտով նա, խորհրդատուի դեր ստանձնելով ուսուցում էր Նազարյանին իր հանդեսում «տարապայման համարձակությամբ» չգրել ազգի և երևելի ազգայինների թրությունների մասին, զգույշ լինել: Թերևս ի պատասխան դրան, Նալբանդյանը «Հյուսիսափայլի» հուլիսյան և օգոստոսյան համարներում մերկացնում է Այվազովսկուն և նրա արբանյակներին¹: Սեպտեմբերին «Սեդու Հայաստանին» քաջալերում ու ծայնակցում է Այվազովսկուն, որը հազիվ մի ամիս անց ապսպրում է Նազարյանցին՝ տեղ չտալ Նալբանդյանի «անբարենմիտ» նյութերին, եթե ոչ ստիպված կլինի դիմել ներքին գործերի նախարարին: Դ-րան հետևում է վճռական միջոցի դիմելու սպառնալիքը, «Հյուսիսափայլը» որակվում է որպես «անվայելույշ», և նրա խմբագիրը ստիպված է լինում խուսաճավող բացատրություն տալ «չարամիտ» նյութերի առթիվ:

«Հյուսիսափայլի» 1858թ. տասնմեկերորդ համարում հրատարակվում է Մ.Նալբանդյանի «Նամակ առ հրատարակողը» վերնագրով հռչակավոր հոդվածը², որի շուրջ մեծ աղմուկ է առաջանում՝ ընդգրկելով հայ մամուլը, Էջմիածնի պաշտոնական վերնախավը, Լազարյան ճեմարանի տնօրինությունն ու ղեկավարությունը, նույնիսկ ցարական երրորդ բաժանմունքը: Դրանում Նալբանդյանն աննախատիպ սրությամբ ու հետևողականությամբ մերկացնում է Խալիբյանին և Գ.Այվազովսկուն, անհերքելի ցուցադրում, որ նրանք կողոպտում են հայ հասարակությանը: Վեր հանելով Խալիբյանի խարդախությունների պատմությունը, Նալբանդյանը մահ նկատում է. «Առաջնորդը փոխվեցավ... Վիճակային գործերի կռավարիչ գերապատիվ Այվազովսկի Գաբրիել վարդապետը գնաց Նախիջևան... ստացավ մագիստրոսից 62.000 մանեթի մուրհակները և

¹ Նկատենք, որ ինչպես Ոսկանյանի, այնպես էլ Նալբանդյանի վերաբերմունքը Գ.Այվազովսկու նկատմամբ սկզբնապես դրական էր: Նալբանդյանը մասնավորապես նկատի էր առնում նրա հայրենագիտական գործերը:

² Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 2, էջ 265-273 («Հյուսիսափայլ», 1858, N11, էջ 428-438):

հրապարակեց պ. Խալիբյանը պարտապանութեանից ազատ», փոխարենն իբրև «պարզև ու ընծա» ստանալով 50.000՝ հենց իր՝ Խալիպյանի անվան դպրոց կառուցելու համար¹: «Թող տեսանե մեր պատվելի ազգը, թե միշտ լուռ ու մունջ մնալը, թե նորա դատապարտելի լռությունը ինչ բաների ծնող մայր է դատնում, թող տեսանե ազգը, թե ինչ բաներ են անցանում յուր մեջ...», – հարցի հասարակական, համազգային նշանակությունը սրելով գրում էր Նալբանդյանը իր նամակում:

«Դրդեցուցիչ հոգվածով» հասցված հարվածը ցնցեց Այվազովսկուն, դեկտեմբերի 7-ին նա ծավալուն նամակով դիմեց ներքին գործերի նախարար Ս.Ս.Լանսկոյին²: Ինքնամերկացնող այդ լրտեսագիր նամակում նա խստությամբ բողոքում էր ոչ միայն Նալբանդյանի «վրդովեցուցիչ ու անպատկառ» արտահայտություններ պարունակող և իրեն մերկացնող, «ժողովրդին խռովող» հոգվածի դեմ, այլև հարց էր դնում «շուտ արգելել» «Հյուսիսափայլը», իսկ նամակի հեղինակին «որպես վնասակար և անհանգիստ մարդ՝ ենթարկել արժանի պատժի՝ օրենքի ողջ խստությամբ»: Հատուկ «գործ» սկսվեց «Հյուսիսափայլի» դեմ, որ գրեթե մեկ տարի տևեց՝ ծնունդ տալով այլևայլ հալածանքների, որոնք 1859-ին և հետո ավելի խիստ ու տևական ընթացք ունեցան: Ըստ որում «Հյուսիսափայլի» և Նալբանդյանի դեմ մղած իր նենգ պայքարում Այվազովսկին, իբրև դաշնակիցների, հենվում էր Խալիբյանի և այլոց աջակցության վրա: Նրան հաջողվեց նույնիսկ դատական որոշում հանել այն մասին, որ արգելվի «որոմնացան» հանդեսի բաժանորդագրությունը և տարածումը իր տնօրինության վիճակում³:

Ահա այսպիսին էր Այվազովսկու գործունեության ոչ լրիվ պատկերը 1858-ին՝ «Արևմուտքի» հրատարակության նախատարում, մինչև Ստ.Ոսկանյանը կվերսկսեր պայքարը նրա դեմ: «Արևելքի» վերջին համարներում, մանավանդ խափանված տասնչորսերորդ համարում, ինչպես տեսանք, Ոսկանյանը

¹ Նույն տեղում, էջ 271-272:

² Նույն տեղում, էջ 428-429:

³ Տե՛ս *Ա.Ինժիկյան*, Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, Երևան, 1954, էջ 97-102:

հետևողական դիրք էր գրավում Այվագովսկույն մերկացնելու հարցում: Սկսելով հրատարակել «Արևմուտքը» նա վերսկսեց նաև պայքարն Այվագովսկույ դեմ և շղաղարեց մինչև «Արևմուտքի» վերջին համարները: Մեծ ու սկզբունքային պայքար էր դա, գաղափարական ճակատամարտ՝ բարիկադի երկու կողմերում. Գ.Այվագովսկին՝ իր նոր արբանյակներով ու «Մասյաց աղավնիով», «Մեղու Հայաստանին» յուր շրջանակով բարիկադի մի կողմում էին, հակառակ կողմում «Հյուսիսափայլն» էր, Մ.Նալբանդյանն ու Ստ. Նազարյանը՝ զինվորականությամբ Հ.Սըվաճյանի ու նրա «Մեղուի»: Ինչ-որ մեկին կարող է թվալ, թե դա առանձին անձնավորությունների կամ պարբերականների միջև պայքար էր՝ իրարու շահերի համար: Բայց այդպես չէ, դա իր խորքում «լինել-չլինելու» պայքար էր, որով նախորոշվում էր, թե ինչ ուղիով պիտի ընթանան հայ միտքն ու գաղափարախոսությունը, նույնիսկ հայ կյանքը:

Այդ պայքարի առաջավոր գծում մի ամբողջ տարեշրջան, գրեթե ամբողջ 1859-ին, գտնվում էին Ստ. Ոսկանյանը և նրա հրատարակած «Արևմուտքը»՝ զինակցելով Նալբանդյանին ու «Հյուսիսափայլին»:

«Արևմուտքի» պայքարն Այվագովսկույ դեմ սկսվել է նրա հենց առաջին համարով: Տարօրինակ ոչինչ դրանում չկա. Ոսկանյանի «Արևելքը» խափանվել էր հենց այն պահին, երբ նրանում սկսել էր ծավալվել այդ պայքարը: Այն հանգամանքը, որ «Արևելքը» խափանվել է հենց Այվագովսկույ ջանքերով ու խարդավանքի հետևանքով, անշուշտ, որոշ սրություն էր հաղորդել այդ պայքարին, բայց դա ոչ սկզբնապատճառ էր և ոչ էլ, առավել ևս՝ հակամարտության հետևանք. ընդհակառակը, «Արևելքը» ամիրայական-կղերական գաղափարախոսության դեմ մղվող պայքարի գոհն է, առաջին գոհը հայ առաջադիմական մամուլի:

Ինչպես ակնառու է, Այվագովսկույ դեմ մղված պայքարն ունի իր, այսպես ասած, նախապատմությունը: Դեռ 40-ական թվականների սկզբներին, երբ նոր էր ոտք դրել գրական-հասարակական ասպարեզ, նա արժանացավ հրապարակային լուրջ հանդիմանությունների, մասնավորապես «Արշալույս արարատ-

յանի» էջերում, թեև հետագայում թերթը դարձավ նրա հետևողական բարեկամն ու մեծարողը: Գրեթե մի տասնամյակ հետո էր Ոսկանյանը հանդես գալիս Այվազովսկու դեմ և այն էլ սկզբնապես որոշ համակրանք դրսևորելուց հետո՝ այն պայքարի առնչակցությամբ, որ նա մղում էր Մխիթարյանների դեմ՝ իր հետ նրանց կողմից հալածվող Ս.Թեոդորյանի և Ա.Գալֆայանի դաշնակցությամբ, նրանց հետ «համակամ ու միաբան», ինչպես գրում է Ոսկանյանը միաբանության արքայահոր տետրակի քննադատության մեջ (1855, էջ 231): Այդ ընթացքում նրա ելակետն այն էր, թե, եթե «Վերոհիշյալ ազգասերները արիամարիելի ալ ըլլան, անկե չի հետևիր, որ իրենց գրածը սուր ըլլա»: Դրանով, սակայն, սպառվում է Ոսկանյանի, այսպես ասած, դրական վերաբերմունքը Մխիթարյաններից հեռացած և հայոց եկեղեցու գիրկը վերադարձած Այվազովսկու նկատմամբ: «Արևելքի» 1855թ. դեկտեմբերի 1-ի համարում նա արդեն սուր ակնարկ է նետում Այվազովսկու «Մասյաց աղավնի կես հայ, կեսֆրանսյան» հանդեսի հասցեին (1855, էջ 323): Հաջորդ անգամ, արդեն «Արևելքի» լույս տեսած վերջին համարում, նա Այվազովսկուն արդեն մերկացնում է ըստ սկզբնաղբյուրի՝ Կ. Պոլսից ստացած «Բողոքի» տպագրությամբ (1856, էջ 418-423): Ինչպես կարելի է ենթադրել, եթե «Արևելքը» չիսսփանվեր, Այվազովսկին ավելի հուժկու հարվածներ կստանար: Անհիմն չէ ենթադրել, թե Այվազովսկին, որ զուրկ չէր հեռատեսությունից, հետագա հնարավոր մերկացումներից խուսափելու հույսով էր փութաջանությամբ Ռուսաստան փոխադրվում: Բայց Ոսկանյանը, մնալով իր հաստատուն դիրքերում, հենց որ հրապարակորեն հանդես գալու հնարավորություն ունեցավ, զինվորագրվեց Նալբանդյանի ու «Հյուսիսափայլի» պայքարին՝ նույնիսկ դրա մասին չիմանալով:

«Արևմուտքի» առաջին համարում, հատուկ հողված նվիրելով ճշմարիտ կրթության խնդրին ու նշանակությանը, Ոսկանյանը, որ հանդես է գալիս Ժիյի ծածկանունով¹, իր մտորումներն ավարտում է հետևյալ ակնարկով. «Եվ հայերը այս ճշմարիտ կրթությունը կհուսային պարոն Գաբրիել Այվազովսքիին պես

¹ «Արևմուտք», 1 փետրվարի 1859, N 3, էջ 20-21:

մարդե մը...» (1859, էջ 4): Հաջորդ անգամ, գործելու կոչ հղելով «ուսումնական և ազգասեր» երիտասարդությանը և իր «Արևմուտքով» խոստանալով նրանց պաշտպանել, Ռսկանյանը հիշեցնում է, որ «սուտ քրիստոնեությունը երբեմն Հասունյանին և երբեմն Այվազովսքիին դիմակով մինչև այսօր կփառավորվի», ապա և ազդարարում, որ ինքն իր հերթին չի մոռանա նրա խարդավանքները (1859, էջ 13, 16):

Շուտով Գ.Այվազովսկին դառնում է Ստ. Ռսկանյանի սուր երգիծանքի նշանակետը: «Արևմուտքի» 1859թ. երրորդ համարում լույս տեսավ Ռսկանյանի «Գաբրիկ» երգիծական բանաստեղծությունը, որ կարելի է համարել նաև չափածո ֆելիետոն:

Բանասիրական մի հոդվածում շեշտվել է, թե Ռսկանյանը մտահոգված էր, որ գրական ռոմանտիկական ուղղություն ներմուծվի նաև հայ իրականություն, զարկ տրվի երգիծական ժանրին, մատնանշվել է, որ Ռսկանյանը կրել է Բերանժեի որոշակի ազդեցությունը¹: Ինքը՝ Ռսկանյանն է նշել, որ «Գաբրիկը» հանդիսանում է «նմանություն մը *Լե Րեվերան Բերը* ըսված երգին» (1859, էջ 20), և որ այն հրատարակելու խնդրանքով հանդեսին է ուղարկել ընթերցողներից մեկը²: Բացահայտելով «Գաբրիկի» հրատարակության բուն հասարակական շարժառիթը, որը միայն Այվազովսկուն ծաղրելն ու մերկացնելը չէր, նա այնուհետև նկատել է. «Ճեզվիթությունը հիմա սկսավ հայ ժողովրդին մեջն ալ արմատ ձգել և արդեն իր ժանտ ոստերը կսպառնա պատմությունը ըմբռնել և հեղձել. իր դժոխսային ձայնը լսելի կըլլա մինչև մեր բոլորտիքը... Այս պարագայի մեջ Պերանժեին եղանակներ քիչ մը հայ ականջներու քով հնչվին նե գեշ չըլլար...»:

Ընդհանրապես ճիզվիտների դեմ ուղղված լինելով հանդերձ, երգիծական ֆելիետոնն ունի նաև իր կոնկրետ հասցեատերը՝ Գաբրիկը, որը ոչ այլ ոք է, քան Գաբրիել Այվազովսկին: Բավական դիպուկ ու թափանցիկ է Ռսկանյանն

¹ Տե՛ս Ս.Շտիկյանի «Ռսկանյանի քաղքական սատիրան» հոդվածը՝ «Պատմարևմտաօրիական հանդես», 1977, N 3, էջ 206-212:

² Սեփական ստեղծագործությունները նման ձևով հրատարակելը Ստ. Ռսկանյանի հաճախ կիրառած եղանակներից է: Որևէ կասկած չի հարուցում, որ բանաստեղծության հեղինակը Ռսկանյանն է, թեև այն լույս է տեսել անստորագիր:

ուրվագծել իր երգիծանքի նախատիպին: Նա «որ կողմը դառնա նոր դեմք ցույց կուտա», քողարկված է և հաճախ է ներկում դիմակը՝ հենց որ բացահայտվում են հին դիմակի տակ գործած «ամեն դավերը»: Այդպես փոխելով իր գույնը, տեսակը, ձևը, շպարն ու զարդը, Գաբրիկը, որ իրոք, Այվազովսկին էր, ներկայանում է իր ամբողջ էության՝ մերկ ու սնանկ.

- ... Եվ որ կողմ դառնա նոր դեմք ցույց կուտա:
- ... Եվ որ կողմ դառնա նոր գույն ցույց կուտա:
- ... Եվ որ կողմ դառնա նոր լույս կցուլա:
- ... Եվ որ կողմ դառնա ոսկի կմուրա:
- ... Եվ որ կողմ դառնա բան կառնե կուտա:
- ... Եվ որ կողմ դառնա նոր սուտեր կործա:

Յուրաքանչյուր տնից հետո կրկնվող այս տողերը ճշգրտությանբ բնորոշում են Այվազովսկուն. նա շահ որոնելով ուստուտում է, երփներանգ կերպարանքներով հայտնվում, իրեն երևակայում է իբրև մի կախարդ, որ, երկնային պարզևով կարող է լույս տալ հայերին, միայն թե իրեն ոսկի տրվի. «Ոսկի տուր մեզ շուտ, որ քեզ շուտ լույս գա»: Դա մի նոր առևտուր է՝ «լույս» տարածել ու ոսկի հավաքել. «Գաբրիկ ոսկի ի Պոլիս դու կգտնես շատ դյուրավ»:

Մեծ իրողություն են պարունակում ինչպես երգիծանքի ամեն մի, այնպես էլ այդ տողերը: Հեռացվելով Մխիթարյան միաբանությունից՝ երեք վարդապետները, Գ.Այվազովսկու գլխավորությամբ, շուտով՝ 1855-ին, Փարիզում, 12 աշակերտով հիմնեցին՝ Հայկազյան վերանվանված վարժարանը: «Մեծ էին ակնկալությունները, այլ մեծ չեղան արդյունքները»¹: Նյութական ծանր վիճակից ելք գտնելու համար վարժարանը լայնորեն ռեկլամվեց, բայց հազիվ երկու-երեք աշակերտ է հավաքագրվել: Դրությունից ելք գտնելու համար նախ Ամբրոսիոս Գալֆայան վարդապետը և հետո վարդապետ Մարգիս Թեոդորյանը մեկնեցին Կ.Պոլիս՝ սովորողներ հավաքագրելու և դրամ

¹ Վարժարանի մասին և նրա պատմությունը տես *Մ.Օրմանյան*, նշվ. աշխ., էջ 3950: Տես նաև էջ 3947-3948, 3963-3965, 3991-3993.4002-4005:

ժողովելու: Ամիրաներին բարձրաստիճան կրոնավորները մի քանի խոստումներ են տվել, բայց վարդապետները Փարիզ են վերադարձել ձեռնունայն և հազիվ չորս տասնյակ տղաներով: Չեն օգնել նույնիսկ դպրոցի անվանափոխությունը, Տատյան ամիրայի ջանք ու եռանդը: Վարժարանը փակվեց ավելի շուտ, քան կրողրեր իր ուսումնաշրջանը՝ տակավին չրջանավարտ չտված¹: Ահա թե ինչու, ծաղրելով ու մերկացնելով Այվազովսկուն, Ոսկանյանը միաժամանակ ծաղրում էր նրանց, ովքեր հույսեր էին կապում այդ անհեռանկար գործի, մասնավորապես Այվազովսկու ձեռնարկի հետ.

Ապուշ հայեր, որք տակավին
Այսբան փորձե եսք, հավատան Գաբրիկին,
Գնա Գաբրիկ Մեծագընի
Գնալույս ծախս հասկըցող չկա:

Այվազովսկու երգիծապատկերը ներկայացնելիս Ոսկանյանը դեռ անտեղյակ էր այն գործունեությանը, որ ծավալում էր իր հերոսը Ռուսաստանում: Բայց նրա մերկացումներն այնքան դիպուկ են, որ թվում է, թե նկատի ունի նաև նրա «բազմաերվնյա» ձեռնարկումները Բեսարաբիայում, Նոր Նախիջևանում ու Թեոդոսիայում: Պատահական չէ, որ «Գաբրիկը» մեծ տարածում գտավ, նրա տողերը վերատպվեցին (մանավանդ Հ.Մըվաճյանի «Մեղում») և դեռ երկար ժամանակ խոցում էին գաբրիկներին:

Ռուսաստան փոխադրված Այվազովսկին արդեն մատչելի չէր Ոսկանյանի համար: Բայց նա իր գործունեությամբ ամուր էր մեխվել Ոսկանյանի հիշողության մեջ, իսկ փարիզյան նրա

¹ Այցելելով վարժարան՝ Մ.Նալբանդյանը գրել է իր «Հիշատակարանում».
«Ընդամենը տասն և յոթն աշակերտ գտա ես ազգային վարժարանում... Դպրոցի ծանրությունը գտնվում է Կոստանդնուպոլսի հայերի ուսերի վրա...»: Նալբանդյանի առաջադրած ծրագրի առաջին պայմանն այն էր, որ «դպրոց հարկավոր է հիմնել և պահպանել այնտեղ, ուր է ազգը» (ԵԼԺ, հ. 1, էջ 426-427): Ի դեպ Սատրեոս կաթողիկոսը նույնպես նկատում էր, թե «ի սկզբանե առանց մեծահանճար տնօրենության և նախատեսության, միտեցան անխոհեմ բերմամբ՝ «ավազի վրա» հիմնելով Հայկազյանը (տե՛ս Մ. Օրմիսկյան, նշվ. աշխ., էջ 40041): Նշենք և այն, որ շատ տարիներ անց՝ 1875-ին, Հայկազյանի հաշիվներով Կ.Պոլսի պատրիարքարանից 100 հազար ֆրանկ պահանջվեց, նրա որոշ կապվածները գրավվեցին: Հազիվ հնարավոր եղավ մերժել այդ ապօրինի պահանջը (նույն տեղում, էջ 4361):

միջավայրում դեռ իշխում էր այվազյան ոգին ու գործելակերպը: Դրա համար էլ հրապարակախոսի սուր գրիչը հաճախ էր ուղղվում Այվազովսկու և այվազության կողմը: Այդպիսով, Ոսկանյանը կարծես թե պարբերաբար հիշեցնում էր ազգությանը, որ կան ու գործում են «երկդեմի մարդիկ», «ներքին թշնամին», նրանք, որոնք հանուն իրենց շահի ու եսության պատրաստ են անելու ամեն ինչ՝ կանգ չառնելով նույնիսկ մատնության առջև:

«Արևմուտքի» հաջորդ 4-րդ համարում Ոսկանյանը («Ս.Ս.») հրատարակեց փոքրիկ մի հոդված, որ սկսվում է այսպես. «Մեր բարեկամներեն մեկը՝ կգրե մեզ. «Այվազովսքին նոր գիրք մը հրատարակել է ՀԱՎԵԼՎԱԾ անունով, որու մեջ *գեվգեկությունը* ամեն տողերեն կհոսի: Հուսամ, որ անպատասխան չես թողուր այս գրվածը և այլն»: Եվ Ոսկանյանն առանց վարանելու պատասխանում է «Արևմուտքի» էջերից: Նա դեռ չի տեսել այդ հրատարակությունը և եթե, իրոք, այն այնպիսինն է, ինչպիսին ներկայացվում է, ապա «*գեվգեկներու* պատասխան տալու ատեն չունիմք, – գրում է Ոսկանյանը: – Չեվգեկությունը կգրվի գեվգեկներու համար և պ. Գ.Այվազովսքիին բարեկամները կրնան լիուլի ազատությամբ վայելել զայն» (1859, էջ 30): Այդուհանդերձ նա վերհիշում է, թե ինչպես է Այվազովսկին վարվել իր հետ, արձանագրում է, որ նա «իբրև գրագետ մեծ բան մը չարժեք... Ընդհակառակն իր երկդեմի վարքով և ծակամուտ, մանավանդ անստույգ բարքով ամեն համակրություն կորուսեր է առաքինի մարդերու քով...»: Ոսկանյանը խոստանում է Այվազովսկու գրվածքը, «որպեսզի ազգը օգուտ քաղե», քննել՝ նույնիսկ եթե դրանից «գայթակղություն ծագի»: Նրա համար գերադասելի էր հետևել «երևելի անձերի» խորհրդին և մոռանալ անցյալը, «անձնական կրքերը», բայց այդ դեպքում Այվազովսկին պետք է ավելի համեստ գտնվի և «անդառն բերնով և անարժան կերպով» բամբասելուց հետո, սպառնալիքներ տեղա. նա պիտի հիշի այն ամենը, որ արել է իր

¹ Ժողովրդագրական այս ձևով, երբ սեփական միտքն ու մտադրությունը հայտնվում էր մի այլ անձնավորության («բարեկամ», «մտերիմ» և այլն) միջոցով, Մտ. Ոսկանյանը հաճախ էր հանդես գալիս «Արևմուտքում»՝ սկսած նրա երկրորդ համարից:

գործընկերոջ Սարգիս Թեոդորյանի դեմ, Մատթեոս սրբազանի (ապա՝ կաթողիկոս) «վրա գրած անհիմն անվայել խոսքերը... և գաղտնի թշնամանելն ետքը հրապարակավ երեսպաշտություն չընելը»:

Իհարկե, Ոսկանյանը, այսպես ասած, հանգիստ չէր տա Այվազովսկուն մինչև անգամ այն դեպքում, եթե նա չիրատարակեր «Հավելվածը»: Նա խորապես համոզված էր, որ «կույր հայերը» ազգին մեծ վնաս են հասցրել, «որ Այվազովսքիին պես մը մարդ շահելուն համար» Փարիզում կորցրին արժանավոր «անձերու համակրությունը», ինչպես գրել է մի այլ առիթով, հարմար պահին ծաղրելով նրա և Կոճիկյանի մտերմությունը, վերջինիս տված «խրատներն ու խորհուրդները» (1859, էջ 40): Ուստի և պատահական չէ, որ շատ չանցած նա հանգամանալի հողված նվիրեց Այվազովսկու գրքին՝ իբրև վերնագիր ընտրելով հենց նրա գրվածքի անունը՝ «Հավելված», ստորագրելով «Ս.Ս.»:

Թվում է սխալված չենք լինի, եթե նկատենք, թե Այվազովսկու դեմ 1850-ականներին գրված ավելի սուր և մինչև ուղն ու ծուծը մերկացնող որևէ այլ հողված, քան Ոսկանյանի այս հողվածն է, չի հրատարակվել: Տող առ տող Ոսկանյանը քննում է Այվազովսկու «մտական ժայթքումը»՝ ամբողջ տեսրակը: Նա գրքույկը ձեռք է բերել Կ.Պոլսից, թեև այն հրատարակվել էր Փարիզում: Դա «գիշերադեմ» ճիզվիթների համար սովորական բան է: Անցնելով գրքույկի քննությանը, Ոսկանյանը նկատում է, որ նրանում Այվազովսկին չի բավարարվել զեվզեկությամբ, և որ նրա գրքույկում կա հասարակության դատին հանձնելու կարծիքներ, որոնք առնչվում են ազգի առաջադիմության ու պահպանության խնդիրներին: Հետադարձ հարցերով հերքելով և Այվազովսկուն ուղղելով իր հակառակորդներին տված նրա իսկ պիտակը՝ «իմաստակ», Ոսկանյանը հարցնում է. «Եվ պ. Գ.Այվազովսքին, որ իր միտքի անստույգ և մութով խառն լույսը իբրև շահ լուսավորության կուզե ծախել կույր հայերուն, և մեր երևելի թարգմանիչներու տեղը անցնիլ, իմաստակ չըսվի՞ր և չպիտի՞ ըսվի պատմության մեջ...» (1859, էջ 44): Իրեն դատելով Այվազովսկու կողմից մեղադրվածների շարքը, թեև անձնապես իր դեմ «Հավելվածում» որևէ խոսք չի ասված, Ոսկանյանը

հարմար ձև է տվել իր ընդդիմախոսությանը, ներգործող ուժ հաղորդել իր խոսքին:

Բայց հրապարակախոսի հիմնական նպատակը նորից ու նորից Այվազովսկուն մերկացնելն է: Ահա ինչպես է նա բնութագրել «Երկդիմի» Այվազովսկուն, «Երեսուն տարի սուրբ Ղազարոս վանքին մեջ *մոլորիլ*, հոն ամենե հետադեմ կարծիքներու արծագանք ըլլալ, անկէ ելնել սատանայութեամբ, Բարիզ գալ, հայր Սարգիսը պաշտոնեն գլորելու աշխատիլ և այս միտքով գրպարտություն մ' առջև չընկրկիլ, երբեմն ազատությունը շոյել, երբեմն բռնության ոտքը իյնալ, օր մը Հռոմայի սյուներուն փարիլ, ուրիշ օր մը դեպի Էջմիածին հակիլ և օր մըն ալ Լուտերի կարծիքներուն հարիլ, գիշեր մը Կալիքան ննջել, առավոտուն Հիսուսյան զարթնուլ, զաղտնի հռոմեականությունը բամբասել, բազմության մեջ հերձամիտները ծաղրել, փառասիրութենեն շարժված՝ ուխտ մը ոտքի տակ առնուլ, երեք մայրաքաղաքի մեջ հռոմեական ժողովուրդը գայթակդել, տանիքներու վրա մինչև ի մահ կաթոլիկ պիտի մնամ ըսել և Արթին պեյին պաշտպանությունը խնդրել»(1859, էջ 45):

Այս բնութագիրը, որ մասամբ «Արևմուտքից» քաղել ու 1861թ. N 135-ում զետեղել է «Մեղվի» խմբագիր-տնօրեն Հ.Արվաճյանը, ավելի քան դիպուկ է, նաև ավելի բազմաբառ, քան սովորաբար հատուկ է հակիրճ ոճի վարպետ հրապարակախոսին: Նա ընթերցողի առջև է դնում Այվազովսկու գրեթե ամբողջ անցյալը. նա փարվում է Փարիզի արքեպիսկոպոսին, գովում է պապին, «տգետ ամիրայի մը» հուշարկում է, որ սա բղավի, թե «կաթոլիկ եմ», ապա նրա ձեռքով կաթոլիկությանը մերձենալու գիր է մատուցում նույն արքեպիսկոպոսին, նա նաև շտապում է թուրքական դեսպանատուն՝ միջնորդություն խնդրելու, հետո իրեն նետում է հայոց պատրիարքարանը՝ անարգելու կաթոլիկությունը. «Երկու ամիս մեկ ոտքը մեկ եկեղեցվո սեմին վրա և մյուսը՝ մեկալ եկեղեցվո խորանին քով, ճոճանակի պես օրորվիլ և անտարբերության չտեսնված օրինակ մը տալ հանդիսատեսներու: Քիչ մը ոսկիի խոշյունը լսել և, օրհնյալ է աստված ըսելով, երեք անգամ իր ավագանը ուրանալ», նաև՝ հայտարարելով, թե «ուրացողը ես չեմ, եղբայրքս են, ես կաթոլիկ ծնած եմ»:

Ավելի սուր են Ոսկանյանի մերկացումները, երբ նա անդրադառնում է Այվազովսկու Ռուսաստան անցնելու և կրոնական բարձրադիր աթոռներ նվաճելու պատմությանը. «հայու վեղար» կրելու հաջորդ օրը Այվազովսկին ձգտում է դառնալ կաթողիկոս, «Լուսավորչին հաջորդել»: Այդ նպատակին հասնելու համար Այվազովսկին աղերսանքով դիմել է նույնիսկ նրանց՝ ում օր առաջ պախարակում էր, օսմանյան դեսպանատնից իրեն նետել է Ռուսաստան՝ նախապես հաշված լինելով, թե քանի ձայն կստանա կաթողիկոս ընտրվելու համար: Բայց, անհաջողության հանդիպելով, կանգ չառավ ոչ մի միջոցի առջև: Ահա ինչպես է ուրվագծում Ոսկանյանը Այվազովսկու գործելակերպը և դրա հետևանքը Ռուսաստանում. «Կայսեր բարեկամներու օգնությամբ Պետարապիայի առաջնորդը վար նետել և անոր տեղը անցնել Հայաստանյայց եկեղեցվո բոլոր օրենքներու դեմ, և այս կերպով սորվեցնել օտարին, որ իշխանություն ունի ուզած մարդը առաջնորդ կարգել, մեր թշվառ ազգին կրոնական իշխանությունը հիմնաջինջ կործանել և փառավորվիլ ազգի առջև...» (1859, էջ 45): Ազգի իրավասությունը, տվյալ դեպքում՝ նրա կրոնական անկապտելի օրենսդրությունը ոտնահարելու ճանապարհով առաջնորդության աթոռ նվաճած Այվազովսկու վարքագիծն, այսպիսով, Ոսկանյանը որակում է իբրև ազգի դեմ ուղղված գործողություն, որի հիմքում ընկած են սոսկ նրա շահասիրությունն ու փառասիրությունը:

Վերադառնալով իր հողվածի սկզբնամասում առաջ քաշած հարցադրմանը, Ոսկանյանը թվարկում է նաև Այվազովսկու չակերտավոր բարեկամներին, նրանց, «որք իր վրա համակրություն չունին բնավ». Կ. Շահնագարյան, Կոճիկյան պ. Հակոբ, որը դեռ տարիներ առաջ հայտարարել է՝ «Այվազ մայվազ չեմ ճանչնար», նրանց շարքը դասելով նաև «Բարիզի, Իզմիրի ազգայիններու մեծագույն և երևելի մասը»: Եվ ահա որևէ համակրանք չվայելող և երիցս «իր ավսուզանը» ուրացող Այվազովսկին իր գրքույկում, իր իսկ արբանյակ երկու վարդապետներին՝ Ս.Թեոդորյանին ու Ամ. Գալֆայանին համարում է չորս միլիոն հայերի երեսփոխան, «Գաղղին կայսերանիստ մայրաքաղաքին մեջ»! «Բայց ո՞վ արդյոք, – հարցնում է Ոսկանյանը, – զանոնք չորս միլիոն ազգի մը «երեսփոխան» ըրերե... արդարև ասոր ծայրը

կատակի կելնե և ամոթահար կսրտմտինք, որ այսպիսի բաներ կտպվին Բարիզի մեջ... Հրապարակավ կբողենք այսպիսի երեսփոխանության դեմ և երբեք չպիտի ընդունինք, որ կրոնավոր մը չորս միլիոն հայու պատիվը և արտաքին հարաբերությունները իր ձեռքին մեջ ամփոփե»:

Խնդիրն, իհարկե, առանձին մարդկանց չէր վերաբերում, նույնիսկ ոչ Այվազովսկուն, որ Ս.Թեոֆոյանին, որին Ռսկանյանը բոլորովին չի հիշատակում և ոչ էլ նույնիսկ «Գալֆայան պ. Ամբրոսիոսին», որի եկեղեցական երեսփոխան լինելու դեմ ոչինչ նա չունի: Խնդիրն այն սկզբունքն է, որ անկապտելի է Ռսկանյանի համար. «Նորեն կկրկնենք, և կրկնելե չպիտի դադարինք, մինչև որ ազգայինք սթափին, այլ է ազգություն և այլ է կրոն... Տասնևիններորդ դարու և Բարիզի մեջ հայ ազգին երեսփոխանը, եթե ունի երեսփոխան, աշխարհական մը միայն կրնա լլլալ, որ ունիցի ականջս լսելո, լուցե...»:

Ռսկանյանի խոսքը՝ «Հրապարակավ կբողոքենք...», հրատարակվել է «Արևմուտքի» 1859թ. մարտի 15-ի համարում: Հինգ ամիս անց, «Հյուսիսափայլի» սեպտեմբերյան համարի էջերից, Մ.Նալբանդյանն իր հուժկու ձայնով միացավ Ռսկանյանի բողոքին: Ավելորդ ջանք համարելով «Հիշատակարանի» էջերում Լամարթինի միստիկական քերթվածների գրաբարյան թարգմանությունը, որ «դուրս տվեց» Խորեն Գալֆայանը, Նալբանդյանը, հատուկ ուշադրություն է դարձնում հրատարակության ճակատին գետնոված պատկերին և նրա հիմքում դրոշմված սկզբնատառերին՝ «Ս.Գ.Ա.Խ.» և բացատրում դրանց իմաստը. «Այս բոլորը (պատկերը և տառերը) նշանակում են, թե Սարգիս, Գաբրիել, Ամբրոսիոս և Խորեն վարդապետքը, յուրյանց մեջ կենտրոնացնելով լուսավորությունը, լեզվագիտությունը և բանաստեղծությունը լուսավորում են խավարած Հայաստանը: Մեր համար ոչինչ ավելի դժվար բան չկա, ոչինչ ավելի ծանր չգիտենք, քան թե հետ պահել մեր ծիծաղը մի այսպիսի տղայական և պատվամոլ գործից: Ցանկալի էր իմանալ, թե ինչ է դոցա արածը, որ ապաթեոս են պահանջում մեզանից, դեռևս չորս միլիոն ազգի երեսփոխան քարոզելով յուրյանց, մենք բողոքում ենք»¹:

¹ *Մ.Նալբանդյան*, ԵԼԺ, հ. 1, էջ 429:

Նալբանդյանը ըստ էության իր հայրցադրումով շարունակում էր Ոսկանյանի հողվածը: Ծանոթագրելով վերը բերված իր տողերը, նա Այվազովսկու գրքուկից քաղում է իր վկայակոչած նախադասությունը և ապա ավելացնում. «Մինչև իսպառ բողոքում ենք այս ինքնակոչ երեսփոխանության ընդդեմ, *«Արևմուտքի* հետ միասին: Կ. Էմանվել»:

Այսպես ծայնակցելով միմյանց, մեր հրապարակախոսության երկու մեծերը ճակատ էին կազմում նրանց դեմ, ովքեր վեղար կրելով կամ «արծաթի սանդուղով վեր էին բարձրացել ազգի մակերևույթից», ինչպես արտահայտվել է Նալբանդյանը «Հիշատակարանի» հաջորդ հատվածներից մեկում: Այդ ճակատը շուտով ընդլայնվեց և ամուր Կատվանդան դարձավ «Արևմուտքի» և «Հյուսիսփայլի» համագործակցության համար: Ավելին. Ոսկանյանի չափածո ֆելիետոնը և հենց նույն հողվածն Այվազովսկու դեմ ավելի քան երկու տարի անց՝ 1861թ. մայիսին ավելի հզոր արծագանք գտավ, ըստ Կատշաճին գնահատելով նաև նրա հեղինակի ավանգարդային ծառայությունն այվազության դեմ մղվող պայքարը սկզբնավորելու և ծավալելու դործում:

1861թ. մայիս 10-ին «Մեղվի» 133-րդ համարում լույս տեսավ Սըվաճյանի երգիծական շաբաթաթերթում Գ.Այվազովսկու դեմ ուղղված առաջին հողվածներից մեկը՝ Բ.Աթամանյան ստորագրությամբ՝ «Գաբրիել վարդապետ Այվազովսքի և ազգային Խալիպյան վարժարան, որ ի Թեոդոսիա»: Դա ամենայն սրությամբ և հարցի համազգային նշանակությունը շիտակությամբ վեր հանող հողված է, որ ներշնչված է Ոսկանյանի ազդեցությամբ ու հիմքում ունի հենց նրա «Հավելվածը»: Խալիբյան դպրոցը հիմնելով, Այվազովսկին գրեթե երկու տարում նրա աշակերտների թիվը հասցրել է 130-ի, մոտավորապես այնքան, որքան կար 1816թ. գործող Լազարյան ճեմարանում երեսուն տարի հետո՝ 1846թ.: «Ի՞նչ աղբուրե կծագին ազգին այն վստահությունը և հույսը... Իրավ է արդյոք անոր աղեկ ըլլալը»: Պատասխանելով իր այս հարցերին, «Մեղվի» հողվածագիրը կրկնում է Ոսկանյանի այն գաղափարները, որոնք հանգում են «Լռութենեն, գովասանքեն ալ միայն բան չըլլար», «ինչ որ

ամբողջ ազգին վնասակար է, այն չէ կարող օգտակար ըլլալ և անհատին» սկզբունքներին¹:

Հողվածը, սակայն, դպրոցի դեմ չէ ուղղված, այլ նրա տնօրենի՝ Այվազովսկու և դրանով է այն արժեքավոր: Ձեռք բերված հաջողությունը նրա հեղինակը վերագրում է Այվազովսկու «մոզիչ գաղտնի գործությանը», այն «հնարից տուփին», որ երգիծանքով ակնարկել էր Ստ. Ոսկանյանը «Գաբրիկ» ֆելիետոնում՝ «հնարքներու տուփ», որը բացելու համար «ոսկի բալլիք է հարկավոր», և որի մասին Այվազովսկին ասում է. «Եվ երբ ուզեմ այն փոքր տուփեն բոլոր հայերուն լույս պիտի շողա»: Այստեղ էլ ծանոթագրությամբ հեղինակը բերում է «Արևմուտքի» 1859թ. փետրվարյան համարում տպագրված երգիծական չափածոյի մի քառյակը, որտեղ Այվազովսկին ավետում է, թե երկնքից, այսինքն աստծուց, իր ձեռքերում իջած կախարդական տուփի մեջ ներփակված է հայ ժողովրդի ճակատագիրը²:

Հողվածի շարունակության մեջ մերկացնելով Այվազովսկու երկդիմի գործելակերպը, հեղինակը դարձյալ կրկնում է Ոսկանյանին՝ ի վերջո առաջ քաշելով նաև ժողովրդի կրթության գործը հոգևորականներից փրկելու և աշխարհականներին հանձնելու անհրաժեշտության գաղափարը: Նա, Մխիթարյանների գործունեությունը դրականորեն գնահատելով հանդերձ, միաժամանակ գտնում է, որ «Մխիթարյան ոգին ճիզվիթություն է», նրանց հակադրում է նույնպես Վենետիկում գործող հույներին, որոնք դեն են նետել «ժամանակին սուած դիմակը», չեն ճանաչում պապի իշխանությունը: Որոշակի նպատակ հետապնդելով, «Մեղվի» հողվածագիրը նոր փաստերով ձաղկում է Այվազովսկուն և ցավով արձանագրում, որ «ժողովուրդը մինչև ցայժմ զանի աղեկ հասկցած չէ»: Այստեղ էլ հողվածին կցված է մի ընդարձակ ծանոթագրություն, որտեղ ասվում է.

«Ամենեն առաջ զնա հասկցավ և հրատարակեց անոր ինչ ըլլալը՝ Ս. Ոսկանյան, որ ամենեն առաջ ալ անոր չարության

¹ «Մեղու», 10 մայիսի 1861, N 133, էջ 117: Հետո մենք առիթ կունենանք անդրադառնալու «Մեղվի» այդ հողվածին:

² Տե՛ս «Արևմուտք, 1 փետրվարի 1859, N 3, 15 20:

փորձը իր վրա փորձեց, տեսեք ինչ գեղեցիկ և ճիշտ կերպով կոնե մեր դիմացը անոր գունագույն պատկերը»¹: Եվ «Մեղվում» բերվում է Ստ. Ոսկանյանի հողվածի գրեթե ամբողջ հիմնգերոդ հատվածը, որը սկսվում է Այվազովսկու վարքագծին Ոսկանյանի տված վերը բերված բնութագրությամբ²: Չափազանց նշանակալի այս փաստի իմաստն ավելի է մեծանում, երբ նկատի ենք ունենում, որ «Արևմուտքն» այն ժամանակ լույս չէր տեսնում, մոտ մեկ ու կես տարի առաջ դադարել էր, մինչդեռ նրանում տպագրված Ոսկանյանի նյութերը քաղվում ու վերատպվում էին՝ ստանալով նոր հնչեղություն, կրկին անգամ կատարում իրենց դերը:

Այդպիսով, կարելի է ասել, որ 1859թ. հաստատված «Արևմուտք»-«Հյուսիսափայլ» դաշինքը՝ ուղղված ընդդեմ Գ.Այվազովսկու, որին նույն ժամանակներում, ինչպես կտեսնենք հետո, միացավ նաև «Մեղուն»՝ իր ժամանակի հայ իրակա-նության երեք կարկառուն հրապարակախոսներով՝ Ոսկանյան-Նալբանդյան-Սըվաճյան, ժամանակներ անց մի նոր դրսևորում ևս գտավ: Եվ դա այն ժամանակ, երբ Ոսկանյանը չէր երևում հայ ասպարեզում, իսկ Մ.Նալբանդյանը գնդանված էր Պետրո-պավլովյան բերդում:

Սակայն վերադառնանք Գ.Այվազովսկու դեմ Ստ. Ոսկան-յանի մղած պայքարին՝ Փարիզից, իր «Արևմուտքի» էջերում:

Թեև Այվազովսկին բավական ժամանակ առաջ էր մեկնել Փարիզից և գործում էր Աուսաստանում, բայց նրա մերձա-վորները շարունակում էին պայքարել Ոսկանյանի և «Արև-մուտքի» դեմ, արգելքներ հարուցելուց ու հետապնդելուց զատ իրենց հետադիմական գաղափարներով վարակում էին հայ միջավայրը: Ոսկանյանը որպես խմբագիր ու գաղափարական գործիչ չէր կարող, ելնելով Այվազովսկու Ֆրանսիայից հե-ռանալու և այլուր գործելու սոսկ փաստից, մոռանալ նրա մասին,

¹ «Մեղուն», 30 մայիս 1861, N 135, էջ 134:

² Անհասկանալի պատճառով Բ.Արամանյանի հողվածի շարունակությունը «Մեղվի» հաջորդ համարներում լույս չի տեսել, քեև նրա երկրորդ հատվածի վերջում նշվել է «շարունակելի»: Չհրատարակված մասում քննվելու էր Խ.Գալֆասյանի «Քիրոսդուրյունը» և «Արշակ ըսված» ողբերգությունը:

չքննել ու չքննադատել նրա գործունեությունը: Իհարկե Այվագովսկու հալածանքներն ուղղակիորեն կրելու պարագան դեր է խաղացել Ռսկանյանի մղած տևական պայքարում ընդդեմ Այվագովսկու: Բայց Ռսկանյանը, չվերանալով այդ հանգամանքից, սկզբունքային ու համազգային նշանակություն ունեցող պայքար էր մղում՝ հիմնականում նկատի ունենալով ոչ այնքան Այվագովսկու անձնավորությունը, այլ նրա և նրա տիպի գործիչների գործունեության ընդհանուր հետևանքը, որ, իրոք, բավականաչափ զգալի ու տևական եղավ:

«Արևմուտքի» համարյա բոլոր համարներում է Ռսկանյանն անդրադարձել Այվագովսկուն և նրա արբանյակներին: Բավական էր որևէ առիթ, և նա վերհիշում է Այվագովսկուն և «ազգին ու ազգայիններին» նրա պատճառած դառնությունները: Ակնարկներ են արվել, թե «Արևմուտքն» իրեն «հայ եկեղեցվո դեմ կզինի և կուզե անոր փառքը թշնամանել»: Հերքելով մեղադրանքը, Ռսկանյանը նախ հայտարարում է, որ «Արևմուտքը» կրոնքի մը հակառակ չէ», ապա բացատրում, որ «երբ պ. Գ.Այվագովսքիին պես կրոնավոր մը իր չափը կմոռնա և ազգին անունը իրեն խաղալիկ մը կընե, պարտք կհամարի զանիկա վանելու և բռնադատելու, որ եկեղեցվո բակը մտնե համեստությամբ»: Ինչ վերաբերում է նրա «պես մարդու մը բարեկամներու» սպառնալիքներին՝ բանադրել «Արևմուտքը», ապա դա հանդեսին «փառք կեսայե» և «հանուն միտքի ազատության» նրանց ոչ թե կբանադրե, «այլ կդատապարտե»: «Մենք, – գրում է նա, – այս կրոնավորներու դեմ էինք, ենք և պիտի ըլլանք» (1859, էջ 48, 74): Ռսկանյանը «սև կրոնավորների» շարքը դասելով Այվագովսկուն և քանիցս հիշատակելով նրա հալածանքն «Արևելքի» դեմ ու նրան դիտելով իբրև հնարավոր բոլոր արատների մարմնացում շեշտում է. «չպիտի ներենք, որ Հայկադրոշակր պ. Գ.Այվագովսքիի պես մարդերու հանձնվի»: Այս մտահոգությամբ է մղում իր պայքարը, այս ելակետով էլ դատապարտում է «Իզմիրի, Պոլիսի և ուրիշ քաղաքներու հայերը», որոնք «այնքան այվագներու բոլորտիքը շարժեցան, որ գլուխները դառնալով և կրոնական մոլի եռանդով արբշիտ հիմա ևս հազիվ գիտեն, թե ուր կերթան և ինչ կուզեն» (1859, էջ

79): Ահա ինչու նա «Արևմուտքի» դեմ շարունակվող հալածանքների շղթայում որոշակիորեն տեսնում էր Այվազովսկու գործակալներին (1859, էջ 117, 123, 132), որոնք, հավանաբար, գործում էին նրա ծրագրով, որոնք, ելք նա բնավ ոչ պատահաբար Կ.Պոլսի վրայով էր Ռուսաստան մեկնում, կոնկրետ ցուցումներ էին ստացել: Երբեմն նա մինչև անգամ «Այվազ» անվանումը գործածում է իբրև արգահատելի ածական՝ «Այվազ-մայվազ», «Այվազներու համար», «Այվազ բարեկամներ», «Այվազե դեպի Շահնագ... երթևեկել», «Այվազներու քարոզությունը» (1859, էջ 74, 109, 131, 133, 141):

Դատելով Ռսկանյանի հրատարակած նյութերից դժվար է, անշուշտ, լրիվ գաղափար կազմել Գ. Այվազովսկու, ինչպես և Հ.Կոճիկյանի ընդհանուր գործունեության մասին: Նա բնականաբար անդրադարձել է միայն նրանց այն գործունեությանը, որ ուղղված էր իր խմբագրած հանդեսների այն գաղափարական ուղղության դեմ, որին հետևում էր: Առհասարակ նա չի հետապնդել այդ գործիչների ընդհանուր դիմագիծը տալու նպատակ և պատահական չէ, որ նա գրեթե որևէ խոսք չի ասում ոչ Գ.Այվազովսկու և ոչ էլ Կոճիկյանի աշխատությունների մասին, չի անդրադառնում նրանց այն ծառայություններին, որ, անկախ ամեն ինչից, նրանք մատուցել են հայ մշակույթին ու հայ կյանքին: Պարտավորված չլինելով վեր հանել այդ ծառայությունները, Ռսկանյանն այս կամ այն դեպքում քննադատության կրակի տակ է առնում նրանց պրակտիկ գործունեությունը՝ ենթարկելով ընթացիկ կյանքի ու առօրյա խնդիրների թելադրանքին: Այդ մոտեցումն իր մեջ, անշուշտ, ունի սուբյեկտիվ ընկալում, բայց որը համահնչուն է այդ գործիչների դերի հասարակական, ընդհանուր ընկալման հետ. Ռսկանյանը վերոհիշյալ գործիչներին ներկայացրել է այնպես, ինչպես նրանք ներկայացել են իրեն՝ իրենց իսկ գործելակերպով ու պահվածքով: Դրանում, իհարկե, սուբյեկտիվությունը քիչ դեր չի խաղացել, բայց դա այն սուբյեկտիվությունն է, առանց որի անհնար է պատկերացնել հրապարակախոսությունը, դա ակտիվ գործոն է, որը օգնում է ավելի մոտիկից ու ավելի շոշափելի զգալ այս կամ այն գործչի, այս կամ այն երևույթի բուն էությունը և դրանք

ներկայացնել անմիջականորեն ու իսկությամբ: Ոսկանյանի սուրբյեկտիվությունն ուներ հասարակական արժեք և հնչեղություն: Դա նրա հրապարակախոսության մեծ արժեքն է, նրա քաղաքացիական ակտիվության դրսևորման ձևը, անտարբեր չլինելու նրա ցուցանիշը:

Այդ նույն դիտակետից ու նույն ձևով է Ոսկանյանն անդրադարձել նաև Խ.Միսաքյանի, Կ.Շահնազարյանի, Կ.Յուրյունյանի, Գալֆայանների և Հովհ. Չամուռճյանի գործունեությանը: Այդ գործիչներից յուրաքանչյուրն այս կամ այն չափով մասնակցություն է բերել հայ մշակույթին և նրանք այսօր¹ կարող են արժանանալ որոշակի գնահատության, բայց իրենց ժամանակին և մանավանդ Ստ. Ոսկանյանի համար նրանք կենդանի գործիչներ էին՝ որոշակի գաղափարներ կրող ու տարածող և որոշակի դիմագծով, որ հակոտնյա էր առաջադիմական-դեմոկրատական այն գաղափարախոսությանը և ուղեգծին, որի կրողն ու հետևորդն էր Ոսկանյանը²: Եվ նա հենց այդ ելակետից

¹ Առաջին անգամ «Արևմուտքում» Գաբրիել Այվազովսկու ազգանունը «Այվազ» ձևով գործածվել է 1859թ. մարտի 15-ի համարում (էջ 46), իսկ հետագա համարներում դարձել է գրեթե սովորական: Հետաքրքրական է, որ հետագայում Այվազովսկուն իրենց գրություններում «Այվազ» էին կոչում Մ.Նալբանդյանը և նրա բարեկամները (*Մ.Նալբանդյան*, ԵԼԺ, հ. 4, էջ 62, *Ե.Շահազիզ*, Գիվան Միքայել Նալբանդյանի, 1932, Երևան, էջ 333-335 և հետո): Ժամանակին Այվազովսկու դեմ ուղղված և ձեռքից ձեռք անցնող մի թռուցիկում ևս նա անվանվում էր «Այվազ» (տե՛ս *Ե.Շահազիզ*, Միքայել Ղազարյան Նալբանդյան. կենսագրություն, Մոսկվա, 1897, էջ 73-74): Ի դեպ «այվազ» բառը թուրքական հնչմամբ բացասական իմաստ ունի:

² Երկարատև մանկավարժական աշխատանք տանելուց բացի, նրանք իրենց ժամանակի հեղինակություններից էին, հրատարակել են ինքնուրույն և թարգմանական գործեր, հանդես են եկել հայ մամուլում, ոմանք նաև օտարազգի պարբերականներում, հրատարակել են արժեքավոր հոդվածներ, մասնակցել են կյանքի հարուցած հարցերի լուսարանմանը, իհարկե, իրենց տեսանկյունից: Հիշատակենք նրանց հրատարակություններից մի քանիսը, Խ.Միսաքյանը (1811-1891), թեև մեծ ընդհատումներով, շուրջ կես դար աշխատակցում էր հայ մամուլին, «Մասիսում» տպագրել է «Ի ծնե կույրերու խնամելու և դարմանելու վրա» (1853) ուսումնասիրությունը, շուրջ 25 տարի (1848-1872) մնալով Փարիզում, մասամբ զբաղվել է լուսանկարչությամբ, հետևելով ֆրանսիական մամուլին, հաճախ հանդես է եկել նրա էջերում լույս տեսնող այն նյութերի դեմ, որոնք անմապաստ կարծիքներ էին տարածում հայերի մասին: Հեղինակակցել է Մխիթարյանների դեմ ուղղված «Եպիմենիդես ի Վուսֆոր» (1854) գրքույկին: Հետոմահու հրատարակվել է նրա «Սովիա» գրական

էր քննում նրանց գործունեությունը, նրանց այս կամ այն քայլը: Այլ կերպ նա վարվել չէր կարող: Այդ իմաստով ևս իր ժամանակի ոգու կրքոտ արտահայտիչն էր. *Սյրեփան Ռսկան*, ապահովաբար, գավակն էր իր ժողովրդին», – նկատել է Հ.Օշականը¹:

Խ.Միսաքյանին, երևի, պիտի դասել հայ տարօրինակ գործիչների շարքը: Դերձակի գավակ լինելով, երբ տակավին քսան տարեկան էր, համարվել է միակ բանաստեղծը և արտասանած մի ոտանավորի համար ստացել է «պուետ» դրվատական անվանումը, որ նա հաճույքով կրել է իբրև հատուկ անուն, գրել է վաթսույն տողից բաղկացած բանաստեղծություն՝ միայն «ա» ձայնավորով՝ «Այբահավաք»: Չամուռճյանի տնօրինության ներքո

գործը («Անահիտ», 1904, N 1, 2, 6-7, 8 և «Մասիս», 1904, N 3994 և հետո): Խ.Միսաքյանին է նվիրված Հ.Մրմըրյանի մի գրքույկը (Կ.Պոլիս, 1907):

Կ.Շահնազարյանը (1810-1865) Թիֆլիզում, Կ.Պոլսում, Փարիզում, Լոնդոնում ու Եգիպտոսում՝ կրոնական գործունեության հետ միասին, ծավալել է մշակութային օգտակար գործունեություն: Հրատարակել է «Երկրագունդ» (1863-1864) պարբերականը, «Դաշանց բուրբ» (1862), «Ծրագիր պատմության Հայաստան աշխարհին...» (1863) գրքերը, Փարիզում հիմնել է «Հայ պատմագիրներ» մատենաշարի հրատարակությունը և ֆրանսերեն լույս ընծայել Վահրամ Բաբանու, Սմբատ պատմիչի, Կաղանկատվացու, Անոնդ պատմիչի, Ստեփանոս Տարոնացու գործերը:

Կ.Յուրյուճյանը (1823-1904) ազգային լայն աշխատանքի հետ միասին եղել է «Մասիսի» խմբագիրը 1852- թթ. թարգմանել է Ե.Սյունիի, Մ.Ֆերալի, Օ.Կուլմյոդի և Կ. Ժոզեֆի գործերը: «Կարապետ Էֆենտի Յուրյուճյան, յուր ամբողջությամբն առնելով, բարի և ազգին օգտակար մարդ մ է», – գրել է Հ.Պարոնյանը «Ազգային ջոջերում»: Գալֆայան եղբայրները կրոնական գործիչներ լինելուց բացի հեղինակել են բազմաթիվ գործեր. Ամբրոսիոսը (1826-) լույս է ընծայել օտար լեզուների և հայերենի զրուցարաններ (1855), հայ-ֆրանսերեն և ֆրանս-հայերեն բառարան (1872), «Պատմություն հին և նոր ազգաց» (1849, 1851), «Պող և Վերգիլն» (1860) գրքերը. Խոբեմը (Նար-Բեյ, Լուսինյան, 1831-1893) լույս է ընծայել «Արշակ Բ» (1861), «Ալաֆրանկա» (1862), «Վարդենիք» (1863) գրական երկերը, թարգմանել է Լամարքինին, հրատարակել է «Հանգարան» (1860) և այլն:

Հովի. Չամուռճյանը հեղինակ է բազմաթիվ կրոնական գործերի: Նրա կյանքին ու գործունեությանն է նվիրված Հ.Մրմըրյանի «19-րդ դար և Հովի. Պրոսացի» գիրքը (Կ.Պոլիս, 1898):

Հ.Պարոնյանը «Ազգային ջոջեր» շարքում տվել է Խ.Միսաքյանի, Կ.Յուրյուճյանի, Խ.Գալֆայանի և Հովի. Տերոյենցի (Հովի. Չամուռճյանի) դիմաստվերները: Մ.Նալբանդյանը քննադատաբար է գնահատել Գալֆայանների, հատկապես Չամուռճյանի գործունեությունը:

¹ *Յ.Օշական*, Համայնապատկեր արևմտահայ գրականություն, Երուսաղեմ, հ. 1, 1945, էջ 251:

դասեր է տվել նորաբաց Սկյուտարի ճեմարանում, որտեղ նրան աշակերտել է «Մասիսի» ապագա խմբագիր Կ.Յուրյուճյանը, գրադպել է մասնավոր դասատվությամբ, մասնավորապես եղել է Պ.Խորսանճյան ամիրայի գավակների (Միքայել և Թովմաս) դաստիարակը, նրանց մենտորի (խնամակալի) պաշտոնով էլ մեկնել է Փարիզ, որտեղ մնացել է 1848-1872թթ.:

Քառորդ դար լինելով Փարիզում, Միսաքյանը, ըստ էության անհաղորդ մնաց ֆրանսիական կյանքին, ապրեց մենակյացի բավական տարօրինակ կյանքով: Փարիզյան տարիներին Միսաքյանի մտերիմներն էին Շիշմանյանը, որ այդտեղ էր 1848-ի վերջերից, Հովհ. Պարտիզպանյանը, Կ.Յուրյուճյանը, Հար. Պալյանը, Ն.Ռուսինյանը, Գր. Խապարաճյանը, որին նա հեզնում ու երգիծում էր: Նրանց ազդեցությամբ էլ 1859-ին նա հղացավ պարբերական հիմնելու գաղափարը՝ հավանաբար «Արևմուտքին» հակակշռելու նպատակով: Նրան այս հարցում պետք է աջակցեր Հ.Կոճիկյանը, որը, սակայն, չկարողացավ արտոնություն ձեռք բերել, միջոցներ հայթայթել: Սկյուտարի ճեմարանային վեճերից Միսաքյանն աննպաստ տպավորություն էր գործել նրանց վրա, ովքեր կարող էին մնան ձեռնարկում նպաստավոր լինել: Սակայն իր մտահղացումից նա չի հրաժարվում. նյութեր է պատրաստում ապագա պարբերականի համար: Այդ նախապատրաստությունը շարունակվում է նույնիսկ 1861-ին: Միսաքյանը տպագրել ու տարածել է իր «Ուսումնական, բանասիրական, քաղաքական և քնտանեկան գրվածոց» կիսամյա հանդեսի հայտարարությունը: Այդ մասին հատուկ ազդ տպագրելով, «Ծաղիկը» 1861թ. սեպտեմբերի 1-ի համարում հույս է հայտնում, թե «Ծաղկոցածորը», ինչպես անվանել էր իր թերթը Միսաքյանը, «հաջողությոն և սիրալիր ընդունելություն պիտի գտնե», քանի որ «հրատարակչին արժանապատվությունը և տաղանդը արդեն հայտնի է ամենուն»: Ազդից նաև պարզվում է, որ թերթին աջակցողների շարքում էր մինչև անգամ «մեծապատիվ Ս.Վիչեն էֆենտին»¹: Միսաքյանը բաժանորդներ ու աջակցողներ որոնելուց բացի, նույնիսկ մի քանի տառա-

¹ Տե՛ս «Ամենուր տարեցույց», 1923, Կ.Պոլիս, էջ 109 և «Ծաղիկ» 1 սեպտեմբերի 1861. N 7, էջ 56;

տեսակներ և տպագրական պարագաներ է ձեռք բերում: Աջակցել խոստացողները, սակայն, շուտով էլ «Ձեռնաթափ եղան», ինչպես գրել է Միսաքյանը մի նամակում: Նրանք հիասթափվեցին «պուևտից», ու նրա ձեռնարկը մարեց¹:

«Սենտորից» հիասթափված Խորասանճյանները շուտով ետ կանչելով իրենց որդիներին² Միսաքյանին գրկեցին նյութական միջոցներից: Բայց, Հ. Կոճիկյանի հատկացրած ամենամսյա նպաստով և լուսանկարչությամբ զբաղվելով, նա շարունակեց մնալ Փարիզում: Ի դեպ, նա մեծ սիրով ժողովում էր արժեքավոր գրքեր ու ձեռագրեր, որոնք հետագայում փոխադրեց Կ. Պոլիս, ուր և հրո ճարակ դարձան: Փորձելով ինքնուրույնաբար թերթ հրատարակել, Միսաքյանը միաժամանակ աշխատակցում էր Կ. Պոլսի հայ պարբերականներին, մասնավորապես իր սանիկի՝ Կ. Յուքյունյանի թերթին, հրատարակել է մի շարք նյութեր, որոնք որոշակի ազդեցություն են թողել, ընթերցողի հիացումը հասցնելով խանդաղատանքի, ինչպես հավաստում էր հեղինակին «Մասիսի» խմբագիրը:

¹ Հայ մամուլի մատենագիտություններում նշվում է, որ այդ կամ աղավաղված «Ճաղկոցածոր» անունով և Խ. Միսաքյանի խմբագրությամբ պարբերական է հրատարակվել 1861-ին, Փարիզում: Դա բյուրիմացություն է և տեղիք է տալիս նոր թյուրիմացությունների:

«Ճաղկոցածորը» լույս չի տեսել, նրա հրատարակության մասին լուր ազդարարվել է, այն մնաց «Ծրագրական վիճակի մեջ միայն» (տե՛ս «Փարիզ», 4 սեպտեմբերի 1863, N 98):

Ավելորդ չէ այստեղ բերել Հ. Պարոնյանի երգիծական տողերը Խ. Միսաքյանի «արգանդաբնակ» թերթի մասին. «Ազգին մեջ մեծ անուն հանելու փառասիրությամբ արբիշո՞ ուզեց Միսաքյան *Ճաղկոցաշոր* անունով հանդես մը հրատարակել Բարիզին: Նախ հայտարարություն մը հանեց, որ ուրիշ բան չէր, եթե ոչ ընտրված բառերու փունջ մը: Այս հայտարարությամբ կժամուցանվեր, որ հանդես մը պիտի հրատարակեր և յուր ընթերցողներուն լուսանկարության արվեստն պիտի ուսուցաներ: Հասարակությունն, որ Միսաքյանն լուսանկարության տեղ ուրիշ բան մը սորվիլ կկարծեր, հարկ եղած ընդունելությունն զլացավ անոր և հետևապես ծաղիկները ծորի մեջ նետվեցան, բառամեցան» (Հ. Պարոնյան, ԵԺ, հ. 2, Երևան, 1964, էջ 131-132):

² Նրանցից կրտսերը՝ Միսաքյան Խորասանճյանը, 1859թ. բժշկի վկայական ստացավ: Նրա մասին Ռսկանյանը նշում է իբրև «հարզի և ուսումնական բժիկ, որը խոհեմություն և աշխատասիրություն է ցուցաբերել Փարիզում. «Արևմուտքը» պատիվ կիսմարտե զինքը իր հիմնադիրներու մեջ հաշվել», – գրել է Ռսկանյանը (1859, էջ 32):

Բայց Միսաքյանի հակումներն ավելի մեծ էին: Նա ուզում էր դառնալ իրեն շարունակ աշխատակցել հորդորող Կ.Յուրթուն-
յանի մշտական աշխատակիցը, կայուն ամսավճարով՝ 150
ֆրանկ: Այդպիսի հավաստիացում նա ստացավ, բայց երկու
ամսվա ոչ լրիվ վճարից հետո վճարումը դադարեցվեց, անպա-
տասխան մնացին նրա թախանձական նամակները: «Հինով
նորով բարեխառնյալ այդ մարդու» մասին դիպուկ է նկատել նրա
կենսագիր Հ.Մրմըրյանը. «Ոչ խավարյալները կրցան վերջին
սերմը ունենալ հին լուսավորյալ Միսաքյանին վրա, ոչ ալ
լուսավորյալները կրցան իրենց առաջին ջերմ սիրույն վրա մնալ
խավարամետ Միսաքյանին վերաբերումով»¹:

Նրան մնաց մի բան միայն՝ փարվել վարժարանին: Բայց
նույնիսկ տնային դասատվությունը վրան չեկավ, ու նա մինչև
կյանքի վերջին օրերը «չղջկանի կյանքով» պարփակվեց իրեն
տրամադրված չորս պատերի արանքում՝ խուսափելով հան-
դիպել նույնիսկ իր դուռը բախողների հետ. «Ռուպինտոն ի Փարիզ,
Ռուպինտոն ի Պոլիս», – արձանագրում է նույն կենսագիրը և ավե-
լացնում, որ Միսաքյանը բոլոր պարագաներում պահպանում էր
իր «թարմ և հզոր համբավին գիտակցությունը», թեև իրականում
կարծես «հին կարավանե մոլորած սովեր» էր:

Միսաքյանի կենսագրի հետ, սակայն, չի համերաշխվում
Հր. Ասատուրի 1922-ին ուրվագծած դիմաստվերը, որ նպատակ
ունեի գետնդելու իր նույնանուն գրքի երկրորդ հատորում²: Դեռ
1891թ. կեսերին, Խ.Միսաքյանի մահվից հետո և հենց այդ կա-
պակցությամբ սուր բանավեճ գնաց «Արևելք» և «Ծաղիկ»
թերթերի միջև: Տարբեր դիրքերից առաջինը մեծարում էր
Միսաքյանին, իսկ երկրորդն առիթ չէր փախցնում «պուետին»
մերկացնելու համար, այդ նպատակով վերատպելով նաև Հ.Պա-

¹ *Յ. Գ. Մ.*, Հին օրեր: Պուետ Խաչատուր Միսաքյան և իրեն ժամանակակից
ինացականին վրա հայացքներ: 1815 էն 1891մ, Կ.Պոլիս, էջ 82: Հիմնականում այս
աղբյուրից են բաղվում Միսաքյանի կենսագրության՝ վերը բերված
տեղեկությունները:

² *Հր. Ասատուր*, Խաչատուր Միսաքյան Փարիզի մեջ՝ տե՛ս «Ամենուն
տարեցույց», 1923, Կ.Պոլիս, 1923, էջ 108-120: Մին այդ Ասատուրը Միսաքյանի
մասին ընդարձակ հոդված է հրատարակել «Արևելք» թերթի 1891թ. մայիսյան
համարներում:

րոնյանի երգիծականը: «Արևելքում» Միսաքյանի պաշտպանությամբ հանդես էր գալիս հատկապես «Հրանտը»՝ Հր. Ասատուրը: Հետագայում, երեսուն տարի անց, Հր. Ասատուրը Խ.Միսաքյանին ներկայացնում է առավելապես նպաստավոր լույսի տակ, թեև շեշտում է նաև նրա «անկողնակալությունը», «պուետի, մի շարք նյութերը («Նշանք ժամանակի») համարում է «մեր աշխարհիկ գրականության ամենեն գեղեցիկ ու արժեքավոր էջերեն: Բայց եթե Հր. Ասատուրը Ստ. Ոսկանյանի պարբերականների և հենց նրա դեմ Միսաքյանի գրած հողվածաշարում «անիրավ բան մը» տեսնելով, մերժում է «գրական գարդերով պճնված» որսակումները, սույա Հ.Մյուրքյանը նույն հողվածաշարը դասում է «իր հյատարակությանց ամենեն փայլունների» շարքը¹:

Սակայն այս դեպքում և ընդհանրապես Հ.Մյուրքյանը և Հր.Ասատուրը Միսաքյանի ժառանգությունը քննում են գրական-լեզվական դիտակետից, «աչքաթող անելով նրա գաղափարական միտվածությունը, նույնիսկ անտեսելով նրա դիրքորոշումը, որը նրա երկարատև գործունեության ամբողջ ընթացքում հակված էր ամիրայական-հետադիմական գաղափարայնության կողմը: Հագիվ մեկ-երկու դեպքում Միսաքյանը շեղվել է սկզբնապես իր որդեգրած ամիրայական ուղեգծից, այդ իմաստով որևէ տեղաշարժ չի կատարել: Այդպիսի երջանիկ շեղում էր, օրինակ, նրա հողվածը Քավուրի մասին («Նշանք ժամանակի»), որտեղ նա իտալական ազգային-ազատագրական պատերազմից փորձում էր «օգտակար դաս մը հանել... իր հայ ընթերցողների» համար²: Արդարև նա զուրկ չէր մտավոր կարողություններից, ուներ լեզվառճական չափազանց ուրույն մտածողություն և բառաստեղծիչ հմտություն: Թեկուզ միայն դրանց շնորհիվ Միսաքյանը կարող էր որոշակի ծառայություն մատուցել հայ մշակույթին, գրականության ասպարեզում որոշ հետք թողնել³:

¹ Հ.Մյուրքյան, նշվ. աշխ., էջ 58:

² «Ամենուն տարեցույց» 1923, Կ.Պոլիս, էջ 118:

³ Ի դեպ, Խ.Միսաքյանին, այսուամենայնիվ, բացառիկ պատիվ է վիճակվել: Տաղանդագուրկ «պուետը» գրել է արևմտահայ ամենատաղանդավոր բանաստեղծի՝ Պ.Դուրյանի տապանագիրը, որ հրատարակվել է ժամանակի մամուլում ու փորագրվել մահարձանի պատվանդանին: «Արևելք» և «Ծաղիկ» թերթերի միջև,

Սակայն ի սկզբանե անձնվիրաբար հարելով ամիրայական դասին, չկարողանալով վեր բարձրանալ երիտասարդական տարիներին կրած ներգործությունից, չհաղթահարելով սեփական խառնվածքի տարօրինակությունները, նա չտվեց այն, ինչ ի վիճակի էր տալու կյանքի ութսունամյա ուղի անցած մի գործիչ, մանավանդ այն, ինչ նա հույս էր ներշնչում երիտասարդական տարիներին: Կարելի է նույնիսկ ասել, որ հանձին Խ.Միսաքյանի ակնառու է օրինակն այն բանի, թե որքան ողբերգական վախճան է ունենում մի գործիչ, որն ուժ չի գտնում իր մեջ վեր բարձրանալ սեփական հակումներից, հաղթահարել արտաքին ներգործությունը, վատնել իրեն ու իր բնատուր կարողությունները և բաց է թողնում սեփական ուղիով ընթանալու ճակատագրական պահը: Միսաքյանը փաստորեն ներկայացուցիչն է XIX դարի երկրորդ կեսի հայ մտավորականների այն խավի, որ ապրել ու գործել է ինքն իր համար, գոհացել է նրանով, ինչ մասուցել են կյանքն ու ճակատագիրը, պասիվ ու անտարբեր մնալով անձնապես՝ սոսկ ենթարկվել հանգամանքների ու զանազան բերումների թելադրանքին, մման այն տաշեղի, որ հորձանքի բերանն ընկած քշվում-տարվում է դեպի վերջին հանգրվան՝ հազար ու մեկ վերիվարումներով:

«Պատրիարքարանի բերանը» (Հ.Պարոնյան) հանդիսացող «Մասիսը» միաժամանակ գտնվում էր առանձին ամիրաների, մանավանդ Պ.Խորասանճյանի ուժեղ ազդեցության ներքո: Այն բանից առաջ, երբ ամիրայական ներգործությամբ Միսաքյանը ձգտում էր կայուն ամսական ստանալու պայմանով դառնալ թերթի մշտական աշխատակիցը Փարիզում, տեղի ունեցավ Ոսկանյան-Միսաքյան բախումը:

Միսաքյանի մահից հետո տեղի ունեցած բանակովի ընթացքում «Ճաղիկը», հակադրվելով «Արևելքի» գահլատար գովքին», գտնում էր, որ Միսաքյանը «չորստող ոտանավորովը» զինքը աշխարհի տեր համարեց», ծաղրում էր նրա «գրչի հրաշակերտը»: Միսաքյանը, գրում է «Ճաղիկը», «հաջորդաբար արտադրած է զուտ գրական գործեր, իմաստասիրական գործեր, գրած է քաղաքական ուսումնասիրություն մը, մանկավարժական վեպ մը, և նույն ատեն՝ շատ ալ ընդունելության արժանացած երգիծաբան մը և հրապարակագիր մը եղած է: Այս խառնակության մեջ ինչպես որոշել ամոր կատարած դերը, անոր գրագետի հատկանիշն ու ձգտումները» («Ճաղիկ», 10 նոյեմբերի 1904, N 5, էջ 199):

Ըստ երևույթին Սո. Ոսկանյանը և Խ.Միսաքյանը, գտնվելով Փարիզում, մի ինչ-որ տեղ առնչվել են Ե՞րբ, ի՞նչ հարցով, դժվար է ասել. որևէ ակնարկ, հիշատակություն չկա: Անկախ դրանից նրանք բողոքովին հակադիր խառնվածքի մարդիկ էին, ծայրաբևեռներ հասարակական-քաղաքական հայացքներով: Արդեն այն, որ Միսաքյանը կապված էր մնում ամիրայական դասի հետ բավական էր, որ Ոսկանյանը նրա նկատմամբ հակակրանք տածեր: Բացի այդ Խ.Միսաքյանը հորջորջվում էր իբրև գրագետ, «պոետ», լեզվագետ և այլն: Մյուս կողմից, հավանաբար նա «պոետին» դիտում էր իբրև «Մասիսի» պաշտոնական կամ կիսապաշտոն ներկայացուցիչը Փարիզում, իսկ «Մասիսը» դեռ մարտից սկսել էր անուղղակի հարձակումներ գործել և հասցեագրված անվանարկումներ թույլ տալ «Արևմուտքի» նկատմամբ: Դրանից սկիզբ է առել երկար ու խիստ մի պայքար, որին առանձին պետք է անդրադառնալ:

Այդ հանգամանքներն էլ, ըստ երևույթին, առիթ են դարձել, որպեսզի Ոսկանյանը իր երգիծական գրիչն ուղղի Խ.Միսաքյանի դեմ: Նա, փաստորեն, առաջինն է ձեռնոց նետել «պոետին» իր հանդեպի մայիսյան համարում, ամստորագիր հրատարակելով սատիրական «Սազ մը պոետ» բանաստեղծությունը¹, դրանից առաջ Միսաքյանն իր ստորագրությամբ որևէ հոդված չէր հրատարակել «Արևմուտքի» ու նրա խմբագրի դեմ²:

«Սազ մը պոետը», որին անդրադարձել են Ոսկանյանով գրադված գրեթե բոլոր հետազոտողները, հեղինակի վաղ շրջանի չափածո լավագույն ինքնուրույն ստեղծագործություններից մեկն է, նրա տաղանդի վկայագիրը: Իբրև կոմկրետ նպատակ հետապնդող և որոշակի հասցեով ուղղված սատիրա, բանաստեղծությունը եզակիորեն դիպուկ է, իր սրությամբ անկասելի ու քափանցիկ: Այլ խոսքով ասած, յոթուկես քառասողով Ոսկան-

¹ «Արևմուտք», 15 մայիսի 1859, N 10» էջ 79:

² Ժամանակին բանը ներկայացվել է այնպես, թե Ոսկանյանն իր սատիրայով պատասխանել է Խ.Միսաքյանին՝ «Մասիսում» նրա հրատարակած հատվածաշարքին (տե՛ս «Ամենուն տարեցույց», 1923, Կ.Պոլիս, էջ 114-115 և «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, N 3, էջ 209-210): Դա ճիշտ չէ, Միսաքյանը հանդես է եկել «Սազ մը պոետը» հրատարակելուց չորս ամիս հետո:

յանը լիովին բացահայտել է Խ.Միսաքյանի ամբողջ էությունը, մերկացրել նրա դիմագիծը: Վանկատելով սատիրայի օբյեկտի ազգանունը՝ «մի սագ» և զուգահեռաբար գործածելով նրան իբրև մականուն տրված հորջորջումը՝ «սագ մը պուետ», կամ «սագ պուետ», Ոսկանյանն իր խոսքը գրեթե ուղղակի հղել է պուետ Խաչատուր Միսաքյանին: Ահա ինչպես է նա ներկայացրել «պուետին»:

Մի սագ էլ է տեսել Ոսկանյանը, լողլողում է նա կավացեխում ու վայելք զգում: Ելնում է նա ասի, կրկին թավալվում ժամեր շարունակ և կոկոսում անհարդար ձայնով. «Ահա ի կյանք»: Տիղմի մեջ անդադար լողալով նա կարծում է, թե սիրում է, և տիղմը զարդարում է իր փետուրները, նույնիսկ «երգի ձայն կհանի»: Անթիվ հավաքվածները՝ մանուկներ և ծերեր, ծաղրում են նրան, սուլում ու խնդում, շտապ հեռանում են, իսկ տղմասերն իրենն է շարունակում.

Ո՛ սագ ապուշ չինայիս
Ի՛նչ ծիծաղով կվայիս,
Օհ երգերու ոչ բերան
Եվ ոչ կոկորդ քեզ տուան:
Քու կռնչյուն, գորտերու
Հաճելի է գետերու:
Մի սագ ապուշ մի այդպես
Հոգներ իզուր դուն զքեզ:

Ավարտելով իր խոսքը, Ոսկանյանն արձանագրում է, որ «Մի սագը» եղել ու մնում է ազգակիցը «մեր հավերու տղմասեր», որով նորից ու նորից է մտրակում Միսաքյանին, որը Փարիզի իր բնակարանի ձեղնահարկում հավեր էր բուծում, իսկ սենյակում պահում վարժեցրած մի աքաղաղ:

Միսաքյանը չենք լինի, եթե ասենք, թե Ոսկանյանի ծաղրը մի ինչ-որ տեղ ճակատագրական եղավ Միսաքյանի համար, երգիծական քառյակները երգի վերածվեցին, կատակասերներն այն սուլում էին Միսաքյանի լուսամտի տակ, դիպուկ տողերը այլևայլ արձագանքներ ունեցան: Առավել հետաքրքիրն այն է, որ Ոսկանյանի երգիծանքի որոշ արձագանքները գտնում ենք Հ.Պարոնյանի «Ազգային ջոջերի» «Խաչատուր Միսաքյան»

երգիծական դիմաստվերում, ինչպես նշել ենք ժամանակին¹: «Մի սագ» և «մի սագ պուետ» արտահայտություններով վանկատելով Միսաքյանի ազգանունը, Պարոնյանը հետևում է Ոսկանյանի օրինակին:

«Մի սագ պուետը» հրատարակվել է հենց այն ժամանակ, երբ Կ.Յուրյուճյանը հորդորում էր Միսաքյանին «Մասիս օրաթերթը պայծառեցնել» իր հողվածներով, ոսկիներ էր խոստանում: Քանի դեռ Միսաքյանը չէր գիտակցել, որ Յուրյուճյանը լոկ իր շահերից է ելնում, շտապեց աշխատակցել «Մասիսին»՝ թերթը դարձնելով Ոսկանյանից վրեժ լուծելու ասպարեզ և միաժամանակ դառնալով Կոճիկյան-Յուրյուճյան միակցության գործիքը՝ ընդդեմ Ոսկանյանի և նրա պարբերականների: Բնակվելով Փարիզում նա, անշուշտ, հետևում էր «Արևմուտքին», թերևս նույնիսկ բաժանորդ էր: Ավելին, նա հավանաբար լավատեղյակ էր Ոսկանյանի գործունեությանը, անկասկած գիտեր Ոսկանյանի ու Նալբանդյանի հանդիպումների մասին՝ Փարիզում: Եթե ստույգ է սենատական հարցաքննության ժամանակ Նալբանդյանի հաղորդածը, թե ծածկագիր բառարանը «ես արտագրել եմ Փարիզում բնակվող հայ Միսաքյանի մոտ»², ապա ուրեմն Նալբանդյանը նույնիսկ շփումներ է ունեցել «պուետի» հետ, մինչև իսկ վստահություն ցուցաբերել նրա նկատմամբ: Որևէ ձևով Նալբանդյանը չի արտահայտել իր վերաբերմունքը Միսաքյանի նկատմամբ, եթե նկատի չունենանք այն, որ նա «մոռացել» է հիշատակել նրա անունը Փարիզում հանդիպած այն հայերի շարքում, որոնց նա տեղ է տվել «Հիշատակարանում»: Իր հերթին Միսաքյանը, ինչպես կտեսնենք ստորև, խուսափել է Նալբանդյանի անունը տալուց, թեև հատուկ անդրադառնում է նրա հողվածին: Կարելի է ենթադրել, որ Նալբանդյանը պատահաբար չէ «մոռացել» Միսաքյանի մասին հիշատակել. պետք է, որ նա ճանաչած լիներ «պուետի» անձնավորությունը և հանդգնած, որ

¹ Տե՛ս ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1970, N 2, էջ 47:

² Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 3, էջ 405: Մենք կարծում ենք, որ հազիվ թե Միսաքյանն առնչություն ունեցած լինի հիշյալ ծածկագրի հետ: Ավելի հավանական է, որ նա իրական հետքը թաքցնելու նպատակով է հիշատակել ինքնակյաց Միսաքյանի ազգանունը:

նա ուշադրության արժանի մեկը չէ, մանավանդ, որ դեռևս չէր ցուցաբերել իր իրական դեմքը: Դրանում նրան թերևս օգնած լինի Ոսկանյանը:

Միսաքյանի հողվածաշարքը «Մասիսում» հրատարակվել է 1859թ. տարեվերջի՝ սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին¹: Թերթի խմբագիր Կ.Յուրյուճյանը Ոսկանյանի և նրա հանդեսի դեմ ուղղված հողվածաշարքին այս անգամ կցել է իր վերաբերմունքը բացահայտող նախաբան: Նա պահանջ է զգացել ընթերցողին հիշեցնել «Մասիսի» N 387-ում տպագրված հողվածը՝ «մոռանալով» նշել նաև, որ Ոսկանյանը դրան պատասխանել է «Արևմուտքում»: Դրանից առավել կարևոր է, որ Յուրյուճյանը բացահայտորեն հանդես է բերում իր թշնամանքը Ոսկանյանի և նրա հանդեսի, նրանց ուղղության ու գաղափարների նկատմամբ:

Ահա ինչպես է «Մասիսի» խմբագիրը ներկայացնում դեմոկրատական «Արևմուտքը» և Ոսկանյանին. «սուտ հանդես» է դա, նրա ամեն մի էջից «գռեհիկ թշնամանքներ ու զագիր հայիոյանքներ միայն կծայթբեն»: Նրա խմբագիրը մի այնպիսի անձնավորություն է, որի նմանը հագիվ հանդիպի պոլսեցի ձիապանների և ջրհանակիրների մեջ, «սիմլոր անձ մը» է, «պժգալի շաղակրատություններ» է մատուցում ընթերցողներին: Այս դեպքում, ինչպես չի հապաղում նկատել Յուրյուճյանը, մնում է միայն արհամարհանքով պատասխանել: Բայց նրանք «զմայլողներ կրնան ունենալ» և «մանավանդ անփորձ երիտասարդների» վրա ներգործություն կթողեն, ընթերցողները կախող են հարել նրանց քարոզներին և «այլանդակ սկզբունքները եվրոպական լուսավորություն, ազատամտություն և այլն» համարել. «Ասանկ սխալ կարծիքի մեջ ինկնողներուն գաղափարը ողջամիտ քննությունը միայն կրնա բժշկել»: Խմբագրի կարծիքով, հենց այդպիսի բուժիչ դեղ է Փարիզում բնակվող «ճշմարիտ հայ գրագետ» Միսաքյանի հողվածաշարքը, որի առջև հաճությամբ է նա բացում «Մասիսի» էջերը:

Յուրյուճյանի հիմքն ու հենարանը Միսաքյանն էր ու սա

¹ «Մասիս», 17 սեպտեմբերի, (N 399, 1, 8, 22 հոկտեմբերի, N 401, 402, 404, 12, 19 նոյեմբերի, N 407, 408, 3 դեկտեմբերի, N 410, 1859թ.): «Էնարսկան» ընդհանուր խորագրի տակ:

ավելի «պերճախոս» է իր երվիներանգ ամականներով, որակումների կուտակումներով, «քաղաքավարի» հիշոցներով. դրանք ավելի շատ և ավելի շուտ «պուետին» ու նրան հյուրընկալող խմբագրին են բնորոշում: Այսօր դրանք «Մասիսի» ծալքերի մշտաբնակներն են սոսկ, որևէ կշիռ չունեն: Միևնույն ելակետով, որով բաթախված է խմբագրի նախաբանը, Միսաքյանը քրքրում է «Արևելքը» և «Արևմուտքը»: Այդ ամենից անկախ հարկ է անդրադառնալ Միսաքյանի այդ հոդվածաշարքին տեսնելու համար, թե ինչպես էր հայ ռեակցիան հալածում ու քրքրում հայ դեմոկրատական մամուլը, այլափոխում ու այլակերպում ամեն ինչ:

Ընթերցողի վրա գրքի և պարբերականների ազդեցության հարցը շեշտելով, Միսաքյանը «Արևմուտքին» լույս մի շնորհ է անում՝ «Իր նյութոց և մտածությանց սնուտի ունայնության պատճառովն ալ ծանրակաց և խաղաղասեր անձանց կողմեն անտարբերության» է արժանանում: Նա «բամբասած» է մի շարք անձանց, ապա՝ հաճախ դիպել է «իբ խոսքին նյութ եղած չեղած մարդոց» անձնական պատվին և երրորդը՝ «ազգայնաց մեջ տարածայնություն» է ձգել: Սրանք են Միսաքյանի հիմնական մեղադրանքները, և որքան էլ նա շղարշապատ է գրում, բոլոր դեպքերում խոսքը դրանց շուրջն է: Վտանգը, քստ Միսաքյանի, այն է, որ «դժբախտ մանկանց երևակայությունը կրնա խաբվիլ», ուստի և նա ցանկանում է «սփոփարար պատասխան մը տալ»: Ըստ որում նա շտապում է դա անել, քանի որ արդեն, իբրև թե օգոստոսի համարում, ծանուցվել է, որ «Արևմուտքը» պիտի դադարի¹, որը, շեշտում է Միսաքյանը, սոսկ «հոյակապ կորուստ» է:

Ազգասերի ծիրանիով քողարկելով իր խոսքը, Միսաքյանը բավական ընդարձակ դատողություններ է անում ազգի վիճակի

¹ Նման ազդ «Արևմուտքի» օգոստոսյան համարներում չի եղել, իսկ նոյեմբերի I-ի համարում հայտնվել է, որ Ռսկանյանը հրաժարվում է «Արևմուտքի» խմբագրումից, որ համդեսը լույս կտեսնի մինչև տարեվերջ: Միսաքյանի նշածից կարելի է ենթադրել, որ հավանաբար օգոստոսին Ռսկանյանի և համդեսի հովանավորների միջև, այսպես ասած, ներքին բնույթի խտասկցություն է եղել: Այս դեպքում հետաքրքրականն այն է, որ Միսաքյանը կարող եղավ իմանալ այդ մասին:

շուրջ. նա հիվանդ է, բուժվելու և դեղամիջոցի կարիք ունի: Ազգային փճակի բարելավման համար վիրահատական դանակ է հարկավոր և ոչ թե թուր: Ազգին չի կարելի ասել, որ նա հիվանդ է, դրանից նա կմեռնի, նրան միայն կարելի է ասել՝ «Բան չունիս, աղեկ ես, հոգ մը՝ներ, կեր ու խմե՛»: Եթե ազգը որևէ մեկի խորհուրդը լսում, բայց չի կատարում, դա նրա գործն է, քանի որ նա «դաշն ու պայման դրած չէ, որ իր ըսածներն անմիջապես կամ տասը տարիեն կատարվին»: Ըստ այդմ, ինչպես կարծում է Միսաքյանը, ազգը Ֆրանկլինի կարիք ունի և իր խոսքն ուղղում է «Ֆրանկլին չեղող գրչաց» դեմ¹:

Այդպիսիների կարգին դասելով նաև Ոսկանյանին, Միսաքյանը նրան մեղադրում է կոնկրետ «հանցանքների» համար, Ոսկանյանն «իր թերթերուն մեջ մեկուն վեղարը գլխեն կհափշտակե» (իմա՝ Այվազովսկու), «մեկուն ճակտի կընդուրյանը երգ կընե» (իմա՝ Միսաքյանի), մեկի անունը Ավետիք կամ Թորոս մականվամբ է փոխարինում (իմա՝ «Մասիսի» անստորագիր հեղինակներին), նորոգում է հինգ տարի առաջ ունեցած հակառակորդի (իմա՝ Կոճիկյանի և այլոց) դեմ մղած պայքարը և այլն, և այլն: «Ասանկ բարոյախոս մը, ասանկ դաստիարակ մը Միկարյան սրիկաներեն ինտո՞ր կտարբերի», – հարցնում է Միսաքյանն իր հոդվածի երրորդ հատվածում և հիշոցներ տեղում Ոսկանյանի հասցեին («Ժահով ժխորով», «լորձունքոտ», «զազրախոսություն», «սրբապիղծ» և այլն): Միսաքյանը չի մոռանում նաև վրիժառու լինել «Մասիսի» փոխարեն, որին Ոսկանյանը համարել էր «խայտառակ թերթ»:

«Արևմուտքի» առաջին թվեն մինչև վերջինին մեջն, – փորձում է համոզել Միսաքյանը, – ուսման հմտության դատման և ուղղախոսության հետք չի կա», նրա գրվածքներում «շոշափելի տգիտությունը», «ուղեղի հիվանդությունը», «մարդատյաց մեկուսությունն» են իշխում: Ոչ միայն «Արևմուտքը», այլ նաև

¹ Հիշենք, որ Ոսկանյանը Ֆրանկլինի երկրպագուներից էր և գրեթե ամվերապահ կողմնակիցը նրա բարոյախոսության: 1855-ին քարգմանաբար հրատարակած նրա մի հոդվածի նախաբանում փափագում էր, որ Ֆրանկլինի «սիրուն հոդվածներին» ծանոթ լինի իր ընթերցողը, որ նրա «ընտիր բարոյականը... Մեր ազգին մեջ տարածվեր» («Արևելք», 1 սեպտեմբերի 1855, N 5, էջ 147):

ավելի վաղ հրատարակված «Արևելքը» «ծալքովն ու շրջանակավոր միայն ետքինն կտարբերեր, այլ գրողը նույն, լեզուն նույն, (ան) հմտությունը նույն և վախճանը նույնն էր... Ազգը ներհուն, մարդասեր և ազատամիտ գրչի մը պարբերականի պետք ուներ, ոմանք այս շարագիրը խոշորացույցը ետևէ տեսած ըլլալով, անհկա ընծայեցին ազգին, իր հռչակավոր «Արևելքը» սահմանեցին, և գրասիրաց մեծն ու պզտիկը հոտն ի մատին անոր թիվերուն կապասեին»: Բայց «Արևելքը» չարժանացավ «մեծերուն ակնարկությամբ», իսկ խմբագիրը «մարտիրոս եղավ», հազիվ «վերջին թիվը լցրեր էր լցած ըլլալու համար», ինքն էլ սպասում էր, որ «հով մը գար իր թերթն ալ փշրեր տաներ իր ձեռքեն», բայց «հովուն տեղ իր քաղտեն մրրիկ և փոթորիկ եղավ»:

Միսաքյանը, գտնվելով Փարիզում, իհարկե շատ լավ գիտեր, թե ինչպես և ում ձեռքով է խափանվել «Արևելքը», բայց ֆրանկով վճարված նրա գրչին գերադասելի էր խեղաթյուրել ամեն ինչ. այդ գրիչը Կոճիկյանի թանաքով էր գրում և ամիրաների համար էր շարժվում: Նա օրինակներ է բերում «Արևելքից», հանդիմանում է Ռսկանյանին, թե «չհալածելե զատ, խոսքն անգամ չըրավ» Մխիթարյանների մասին, թե մարտնչում է «հայկադրոշակը» սուրբ պահելու համար, որ այն չհանձնվի կրոնավորների (Այվազովսկու) ձեռքը: Բիչ է ասել, թե Միսաքյանը ամեն ինչ զվխիվայր շրջած էր ներկայացնում. նա նույնիսկ իր քաղած մեջբերումներից հանում էր Գ.Այվազովսկու անունը, որպեսզի ընթերցողից ծածկի, որ Ռսկանյանը նրա դեմ էր պայքարում¹: Նույն ձևով Միսաքյանը նենգափոխում էր «Արևելքի» խափանման պատմությունը, թեև նշում է նաև, որ հանդեսի «նստխները» «պակասություն լրած են» ճնշելով տպագրիչին (Ճ.Արամյանին): Տերենտիոսի հայտնի խոսքերով՝ «Ես մարդ եմ և ինչ որ մարդկային է իզմե օտար չէ», արդարացնելով նստխների գործունեությունը, Միսաքյանն ամբողջ ձայնով մեղադրում է Ռսկանյանին, «Ինքը դուռը բաց պառկեր, թշնամին ալ մտեր իր ազատությունն առեր տարեր է»: Ավելին, նա դատապարտում է Ռսկանյանին այն բանի համար, որ «անթշնամանելի անձանց» անունները

¹ ՀՄՄ. «Մասիսի» 1859թ. հոկտեմբերի 22-ում Միսաքյանի բերած քաղվածքը «Արևմուտքի» 1859թ. մայիսի 15-ի համարի 74-րդ էջում, «Ս.Ռ.»-ի գրածին:

հրապարակ է հանել. «Թող չի խարվի Արևմուտքի շարագիրը...», – զգուշացնում է Միսաքյանը, ապա և կոչ անում՝ «տեղի տուր քիչ մը խստերախ ոտխիդ»:

Անսրոզ է Միսաքյանի խոսքը, երբ նա բացատրում է առաջադիմական «Արևելքի» հակառակորդների նպատակը. «փուշի նման՝ բուսած վնասակար գաղափարները ջնջելու ենք...», – շխտակությամբ գրում է նա: Այվազովսկու, Կոճիկյանի և այլոց թվում Միսաքյանը պաշտպանում է նաև Պողոս ամիրային ու նրա տետրակը, որը նրա կարծիքով «հորինված էր ազգային պատրիարքարանում և թելադրված էր Փարիզում»՝ իմա՝ Այվազովսկու կողմից: Հատկապես կանգ առնելով ամիրայի դեմ Ռսկանյանի հրատարակած նյութերի վրա, «պուետը» մերժում է մարտահրավերն ու ժողովրդին իր իրավունքների համար պայքարի ելնելու կոչը և Ռսկանյանին համարում «արյուն կզակ կարմիր հասարակապետական»², զրկում է նրան «աստվածապաշտ» կոչվելու իրավունքից, համարում է «աստվածամարտ»: Միսաքյանն, իհարկե, դեմ չէ, որ ազգի կրոնական իրավունքների ոտնահարման դեմ Ռսկանյանը բողոքի հուժկու ձայն է բարձրացնում, բայց նա խորապես համոզված է, որ վտանգի դեմ պայքարելու համար հրապարակախոսը «անուժ է և անկարող»: Ուստի և նման պայքարի կոչը «կարմիր հասարակապետական սկզբունք է»: Ի վերջո, Միսաքյանը պաշտպանում է «Յունիվերի» դիրքը, ծառանում է հետամնաց կրոնավորների քննադատության դեմ:

Միսաքյանի հողվածի վերջին հատվածները, որ «Մասիսում» երևացին նոյեմբերի 19-ին և դեկտեմբերի 3-ին, ուղղված են Ռսկանյանի խմբագրական գործունեության դեմ: Հողվածագիրը սանձազերծում է իր «հայիոյությունն ու թշնամանքը»,

¹ Արտահայտությունը՝ «անպիտան փուշի նման» կա և Գ.Այվազովսկու նամակներից մեկում՝ Հ.Խալիբյանին՝ ընդդեմ Մ.Նալբանդյանի, որին ջերմորեն են ընդունում Կ.Պոլսի երիտասարդները («անպիտան փուշի նման»):

² Հիշենք, որ Մխիթարյանները մույն այս «արյունկզակ» ամսականով էին կոչում Ռոբեսպիերին՝ «Եղանակ Բյուզանդյանի» (1820) էջերում, իսկ Չամուռճյանը Մ.Նալբանդյանի մտքերը մույնացնում էր «սոցիալիստներուն» կամ «կարմիր հասարակապետականներուն» գաղափարների հետ («Երևակ», 1860, N 87, էջ 83-102):

Ոսկանյանին մինչև անգամ մեղադրում, թե «հայերեն չիլտե»: Միաժամանակ նա հրավիրում է Հ.Կոճիկյանին, Կ.Շահնազարյանին, Այվազովսկուն և Ամբրոսիոս Գալֆայանին, այսինքն Ոսկանյանի հակառակորդներին՝ հանդես գալ նրա դեմ, նույնիսկ ստանձնում է Կոճիկյանի պաշտպանի դերը, կծու ծաղրում է «Արևմուտքի» խմբագրումից հրաժարվելը:

Որքան էլ Պուտեա Խաչատուր Միսաքյանի քննաբանությունն միտումնաքար ուղղված էր Ոսկանյանի և «Արևելքի» ու «Արևմուտքի» դեմ, այդուհանդերձ, դա պայքար էր հայ առաջադիմական-դեմոկրատական հրապարակախոսության ու մամուլի դեմ, դրանց շարքում նաև «Մեղուի» և Հ.Սրվաճյանի դեմ, որոնց, ի դեպ, Միսաքյանը մի անգամ չէ, որ խայթելու փորձեր էր արել: Այդ պայքարը հիմնականում ծավալվում էր Կ.Պոլսից, հատկապես «Մասիսի» էջերից՝ կղերամաժիրայական հուշարկումով ու աջակցությամբ, նույնիսկ անսքող ու բացահայտ: Ու Ոսկանյանն այդ պայքարում աներեր դիմակայողներից մեկն էր՝ իր «Արևմուտքով»: Դա նրա անձնական պայքարը չէր, և խնդիրը «Արևմուտքի» պատվին կամ տարածմանը, նրա խմբագրի հեղինակությանը չէր վերաբերվում, հայ դեմոկրատական մամուլը, մարտական հրապարակախոսությունը պահպանողական մամուլի և հետադեմ լրագրության դեմ դժվարին պայքար մղելով հաստատում էին լինելության իրենց իրավունքը, հարթում էին հայ հասարակական մտքի առաջընթացի մացառապատ ուղին: Ստ. Ոսկանյանն իր «Արևմուտքով» այդ պայքարի առաջամարտիկն էր, մաքառող հայ մտքի մշակը:

Ի՞նչ պայքար է մղել Ոսկանյանը «Մասիսի», նրա հրապարակագրերի և նրանց թիկունքին կանգնած հետադիմության դեմ:

1859թ. մարտին, «Արշալույս արարատյան» թերթի հետ բանավեճ վարելու ընթացքում, «Մասիսը», հակառակ կողմին խոցելու նպատակով, ի դեպ, Ղ.Պալազարյանին մեղադրել է նաև այն բանի համար, որ հիշեցրել է «Արևմուտքի» «քանի մը անհարմար վկայությունները»: Այդտեղ էլ անստորագիր թղթակցության հեղինակը, առանց այլևայլի, «Արևմուտքին» անվանել

¹ «Մասիս», 12 մարտի 1859, N 372:

է «խայտառակ թերթ»¹: Եթէ չենք սխալվում, սրանով առաջին անգամ «Մասիսը» դրսևորում է իր բացասական վերաբերմունքը «Փարիզ հրատարակված» պարբերականի՝ ու, անշուշտ, նաև նրա խմբագրի նկատմամբ: Կարելի է ենթադրել, որ թղթակցության բանավիճող հեղինակը հենց «Մասիսի» խմբագիր Յուրյուճյանն է: Արձագանքելով այդ թղթակցությանը, բնավ, չմիջամտելով երկու թերթերի միջև տեղի ունեցող բանավեճին, Ոսկանյանը «Արևմուտքի» մայիսի 15-ի համարում գետեղել է հակիրճ անոնս: Չի պատասխանում Ոսկանյանը «Մասիսի» վիրավորանքին, չի փորձում «ծանրագույն բառ մ' ընտրել», որպեսզի ավելի մեծ իրավունքով «խայտառակի» «զեվզեկ գրագեսի» «շողոթորթ և կեղծավոր բարքը»: Նա նույնիսկ չի հիշատակում «Մասիս» թերթը, բայց նկատում է, որ անանուն թղթակցողի «ծունրը, ուղտի ծունրի պես, մեծերու առջև խոնարհելեն բրտացել է», ընդգծում, որ «առանց առիթի նախատել բեռնակիրի սովորություն է»: «Ի՞նչ կմնա ուրեմն ընել այս պարահայի մեջ, – հարցնում է Ոսկանյանը և պատասխանում, – Արհամարհել վատությունը, որով իր զեվզեկությունը և թշնամությունը կբարդվին տեսակ մը հայելու ստվերին ներքև» (1859, էջ 64): Մեղմության շեշտ կա Ոսկանյանի արձագանքում. նա, անշուշտ, կարող էր անպատվող թերթի ու նրա թղթակցի ճակատին դրոշմել այնպիսի պիտակ, որ «ամեղծելի... տեսնվի միշտ հոն», ինչպես գրում է: Բայց նա խուսափել է դրանից, առիթ չի տվել հետագա թշնամանքի, թերևս ավստսելով իր հանդեսի էջերը զբաղեցնել անտեղի վիրավորանքներին պատասխանելով, առավել ևս, որ «ի տյառն անտի ճանաչի ծառայն...», և պիտակասերի «բարքը առակ եղած է Պոլսի մեջ»:

Իհարկե, Ոսկանյանի անոնսն անվերաբերմունք չէ, բայց նրա խոսքը սովորաբար հատու է, կտրուկ, որ այս դեպքում հազիվ նկատելի է: Կարելի է ենթադրել, որ նա չի ուզել տեղի տալ ու բանավեճի մեջ մտնել «Մասիսի» կամ նրա խմբագրի հետ, նոր հակառակորդ ձեռք բերել: Սակայն շուտով նա առիթ ունեցավ իր ամբողջ ձայնով արտահայտվելու: Մեկ ամիս անց, «Արևմուտքի» մայիսի 15-ի համարում, նա, դարձյալ իր ստորագրությամբ՝ Ս.Ո., գետեղից «Առ բարեմիտ հասարակության»

կարճառոտ, քայց շեշտակի հողվածը: Առիթն այն էր, որ տարբեր քաղաքներից «անձանոթ և ծանոթ բարեկամներ» նամակներով Ոսկանյանի նկատմամբ իրենց համակրանքն արտահայտելու հետ միասին տեղեկություններ հաղորդեցին այն «գռեհիկներու խումբի» մասին, որոնցից մեկն անվանարկել էր «Արևմուտքը»: «Մասիսին» իր քայլով իրավունք էր տվել, որ Ոսկանյանը բացահայտ արտահայտվի, հրապարակ հանի «գռեհիկների» անունները: Բայց նա նույնիսկ հրաժարվում է դրանց մասին ընթերցողներից ստացած տեղեկությունները հրատարակել իր հանդեսում. «Մենք այս գռեհիկները ի վաղուստ անտի կճանչնանք, և տակավին պ. Գ.Այվազովսքիին կարգը չիճկանք, որ մեզի գրված գովեստի նամակները հրատարակենք ու փառավորվինք: Արատավոր դեմքը միայն շպարը կրնտոն»:

Ոսկանյանն այն կարծիքին է, որ լրագիրը չպետք է մոռանա լրագրական օրենքը, առանց առիթի չպետք է նախատի տպագրական մի այլ մարմնի: Այդպես վարվողի պատասխանն արհամարհանքն է: Իրավունք վերապահելով «ամեն հայի» քննելու և հերքելու «Արևմուտքի» այս կամ այն հողվածը, դատելու և դատապարտելու իր կարծիքները, Ոսկանյանը գտնում է, որ անվայել է «հողվածները և կարծիքները թողուլ և գրողին պատիվը մրտտել», ինչպես դա արել է «Յուրյուճյան անուն «խայտառակ» պարոնը»: Նա, Փարիզում եղած լինելով, պիտի որ իմանար այդ սկզբունքը և «զգուշանալու էր աներես գռեհիկներու արձագանգ ըլլալեն»:

Մոսկ կենսագրական փաստ չէր հիշեցնում Ոսկանյանը, Յուրյուճյանի ինչ-որ «սուտ հողվածները» թարգմանվել էին և «Ֆրանսիայի տերության պաշտոնական ժողովներու մեջ դատվեցան», դարձան «երեք ուխտադրուժ վարդապետներու խայտառակության պատճառ: Այդ առթիվ «Մոնիթոր» թերթում վճիռ է հրատարակվել ընդդեմ ոմն Տյուֆլունի և հիշյալ վարդապետների: Դատապարտող վճիռը նույնիսկ փակցվել է Փարիզի բոլոր դպրոցների պատերին: Դրանով հաստատվել է «Մասիսի» «խայտառակ թերթ մը» լինելը, ինչպես արձանագրում է Ոսկանյանը: Այդ իր հերթին իրավունք էր տալիս «խայտառակելու» «Մասիսին»: Սակայն նա նման քայլի չի դիմել, ինչպես գրում է,

թերթի նկատմամբ «ավելի գութ ունենալով, քան թե թշնամություն»: Ուստի Ոսկանյանն իր հարվածն ուղղում է ոչ թե «Մասիսի», ոչ թե նրա խմբագրի դեմ, այլ «գռեհիկներու խումբի» դեմ, որոնց «արձագանքում» են նրանք: Ակնարկն այնքան էլ մութ չէ. խոսքն, անշուշտ, վերաբերում է «Մասիսը» հովանավորող և թիկունքից խրախուսողներին, դրանց թվում նաև ամիրայական դասի ներկայացուցիչներին, ինչպես ավելի պարզ ասվում է հետո: Այդ խումբը, Ոսկանյանի կարծիքով, հիշեցնում է իր ժամանակին Եվրոպայում գործող «*քոնթրոթերի* ըսված մարդերին», որոնք հանուն իրենց շահի դարձել էին բռնավորների կամակատար: «Մանը զլորեր և իր խումբը գտեր է». «Նոր տեսակ *քոնթրոթերի*... նոր տեսակ փառասեր անձերու գործի է»: Ժամանակին նրանք մեծ աղետքներ են գործել Իտալիայում, Հայաստանին հասցրած նրանց «մահաբեր հարվածը» պատմությունը կարճանագրի, իսկ «մենք, – գրում է Ոսկանյանը, – այս կրոնավորներու դեմ էինք, ենք և պիտի ըլլանք, և չպիտի ներենք, որ Հայկա դրոշակը պ. Գ.Այվազովսքիի պես մարդերու հանձնվի»:

Այսպիսով, ելակետ ունենալով մասնավոր փաստը, Ոսկանյանը հրապարակախոսի հմտությամբ ընթանում է դեպի բնդհանուրը և, խնդրին հասարակական հնչեղություն հաղորդելով, իր խոսքն ուղղում է ազգային շահերին վնասող, «թշվառ Հայաստանին» հարվածող «տեսակ մը կրոնավորների», «գռեհիկներու խումբի» դեմ, նրանց դեմ, ովքեր «այվազներու համար գովեստ» են շռայլում. «մոլությունը միայն պաշտպանել գիտեին...»: Այդպիսիների գովեստը, Ոսկանյանի համար, նախաստիճիկ է, իսկ նրանց «նախատիճիքը փառք է, և, – շարունակում է նա, – գոհ ենք, որ այս փառքին հասանք» (1859, էջ 74):

Վերը նշվեց, որ Ոսկանյանը «Մասիս» թերթի թիկունքում գտնվողների շարքին էր դասում նաև առանձին ամիրաների: Շատ չանցած նույնը հաստատեց նաև Զմյուռնիայի «Արշալույս արարատյան» թերթը: Պարզելու համար, թե ով է «Մասիսը» պաշտպանող ամիրան, Ոսկանյանը դիտել է «շատ ազգայիններու» «և ամեն կողմեն միաբերան պարոն Պ.Խորասանճյանին անունը լսելի եղավ»: Պատասխանն անսպասելի էր. նա ժամա-

նակին, հատուկ նամակով դիմել էր Ռսկանյանին, որով տեղեկացնում էր, թե զոչացել է «Արևելքի» նկատմամբ ձեռնարկված «Խայտառակությունը» պաշտպանելու համար: Պարզված իրողությունն արձանագրելով, Ռսկանյանն «Արևմուտքի» էջերից պատասխանում է. «Խոսքը ոչ միայն ըսել տվողին, այլև ըսողին արժեքը ունի և *Մասիս* սնուն «խայտառակ թերթին» մեզի դեմ գրած նախատիճքը, նաև Խորասանճյան *ամիրայի* մը պաշտպանության տակ, պատասխանի արժանի չէ... էր և կմնա մեր արհամարհության ներքև.» (1859, էջ 96):

Կ. Պոլսից «Արևմուտքի» և նրա խմբագրի դեմ մղվող պայքարը բուռն բնույթ էր ստանում: Հակառակորդները ոչնչի առջև կանգ չէին առնում, որսլեսզի վարկաբեկեն դեմոկրատական օրգանը, նրան զրկեն բաժանորդներից: Կասկած չի կարող լինել, եթե «Արևմուտքը» հրատարակվեր Թուրքիայում նրանք հազիվ թե թույլ տային նրա հրատարակությունը, հեշտությամբ կխափանեին այն առաջին իսկ համարներից հետո: Բայց նրանց բռունցքը Կ. Պոլսից չէր հասնում Փարիզ, և նրանք, ձայնակցելով միմյանց, նոր միջոցների էին դիմում: Հուլիսին Կ. Պոլսում հիմնված Հ. Փափազյանի տպարանում տպագրվեց և ցրվեց հատուկ թռուցիկ՝ Ռսկանյանի և նրա «Արևմուտքի» դեմ: Ցավոք այդ թռուցիկը մեզ չի հասել, տեղեկություն չկա նրա բովանդակության մասին: Հայտնի են միայն նրա մի քանի տողերը, որ բերել է Ռսկանյանն «Արևմուտքի» օգոստոսի 1-ի համարում, որտեղից և քաղել է հայ մամուլի պատմաբան Գ. Գալեմբյարյանը¹: Շատ բան են ասում այդ տողերը. հակառակորդները տպագիր խոսքով կոչ էին անում՝ «*Արևմուտքը* լրագիրը էրեցե՛ք, մրկեցե՛ք, փռչի դարձուցե՛ք, որպեսզի ուրիշ մեկն ալ անոր ոճեն կամ հանդգնաբար գրուցվածքեն չխաբվի...»: Պարզ է, հակառակորդներին՝ պոլսահայ ամիրաներին կատաղություն էին պատճառում Ռսկանյանի հանդեպի ոճն ու հանդուգն հողվածները, հավասարապես նաև վտանգն այն բանի, որ նրա օրինակը կարող է վարակիչ լինել: Դրա համար էլ թռուցիկի հեղինակի բերանով ազդարարում էին, թե Ռսկանյանի հողվածները «անարգ և մոլեռանդ օտարագգիի» գրվածքներ են, «սրիկայություն» են,

¹ Տե՛ս Գ. Գալեմբյարյան, նշվ. աշխ., էջ 191:

«մերկ, անամոթ և բարիկենդանի» ծաղրածուներին վայել, իսկ «Արևմուտքը» «դժոխսային» «անիծյալ» հանդես է, որ պետք է ոչնչացնել:

Այս արդեն Ոսկանյանը չէր կարող հանդուրժել: Օգոստոսի 1-ի համարում երևաց նրա հոդվածը՝ «Պոլիս տպված կես թերթ մը» սկզբնատողով: Պատասխանը պատշաճ է և հատուկ Ոսկանյանին: Թռուցիկի հեղինակը, գրում է Ոսկանյանը, պահվել է «երկու սև տառերի» տակ և նա «հոդված մը շինել սորվեր է բայց... դեռ իր անունը ստորագրել չգիտեր», քաջություն չունի իր անուն-ազգանունով երևան գալ. «Գիշերասեր հեղինակը հիշելու է, որ մութին մեջ նաև մուկը համարձակություն ունի իր ակռաները սրելու...»:

Ոսկանյանին, բնականաբար, նախ հետաքրքրում է, թե ով է թռուցիկի հեղինակը. կան հաստատողներ, թե նա «Գ.Այվազովսքիի բարեկամներեն մեկն է, որ «իր կայանը կհաստատես «օդաքաղաքի» մը մեջ»»: «Մեր ասպարեզը, – գրում է Ոսկանյանը, – հողի վրա է և օդի մեջ բերդ չենք շիներ թշնամի մը գնդակոծելու համար: Օդը թեթևության հայրենիք է...»: «Զարմանալին այն է, որ գրվածը գրողեն անիմանալի է, – նկատում է Ոսկանյանը և ապա ավելացնում, – մեր թշնամիները կրնային, ոսկի ի ձեռին, քիչ մը ավելի *խելոք* մարդ մը գտնել իբրև դիմադիր: Ոսկիին հրապույրքը նաև ուսումնականները մոլորեր է»:

Այսուհանդերձ եսկանն այն էր, թե ինչ է ազդարարում թռուցիկը, և Ոսկանյանն իր պատասխան հոդվածում շեշտը դնում է հենց դրա վրա: «Ո՛վ և ըլլա այս թերթը շարադրողը, – գրում է «Արևմուտքի» խմբագիրը, – կսենք իրեն շիտկե շիտակ. եթե մեր դուզնաքյա գրվածներու մեջ ծանր խոսք մը կա, զայն արդարացնելու համար ամեն փաստ ունինք և պատրաստ ենք հասարակության առջև դնել զանոնք: Թող ուրեմն մեր թշնամինք զայս լավ մը հիշեն և բացերես զան մեր առջև... Վասնզի բանակոծիվը ճակատ առ ճակատ կսկսի հասարակության առջև և անոր օգտին համար միայն կշարունակվի»:

Առաջադրվող կարևոր դրույթը, թե մղվող անձնական բանավեճը հանդուրժելի է միայն այն դեպքում, երբ քննվում է հասարակությանը հետաքրքրող և նրա շահը հետապնդող

խնդիր, կայուն սկզբունքային ելակետ է Ոսկանյանի համար, և նա հասարակական կարծիքն է համարում ամեն մի բանավեճի չափանիշն ու դատավորը: Ըստ այդմ նա համոզված է, որ իր ասելիքից «բազմությունը պիտի օգուտ քաղե» և ազդարարում է նախապես. «Մեզի եղած թշնամությունը չիլիշելու կաշխատինք, բայց անհնարին է, որ մոռնանք թշվառ հայրենիքին եղած վնասը...»:

Ոսկանյանն այդպիսով առաջ էր քաշում մամուլի գործունեության համար կարևոր այն սկզբունքը, որ հրապարակայնորեն մոլոր դանավեճը պետք է տեղի ունենա ճակատ առ ճակատ, հասարակության առջև, և այդ հասարակությունն էլ պետք է լինի դատողն ու դատավորը, և որ ամեն դեպքում բանավեճի ելակետը պիտի լինի հասարակության ու հայրենիքի շահը: Ինչ վերաբերում է հրապարակախոսի հասցեին տեղացող սպառնալիքներին, հանդեսը այրելու, ջնջելու կոչերին, որ միջնադարյան հավատամուրի եռանդով արվում է 1859-ին, ապա Ոսկանյանը դրանց պատասխանում է ամենայն պատշաճությամբ ու խելք արժանապատվությամբ:

«Բանադրանքի սպառնալիքը ուսրերնուս ներքև դրինք. հրաբուխ սպառնալիքին վրա կքքնենք: Մեր լրագրին փոշին, օր մը, մեզի ավելի պատիվ պիտի ընե, քան թե մեր տույզն ու պակասավոր աշխատությունը: Թյուրքերը գրատուն մը այրեցին բաղնիք տաքցնելու համար: Թյուրքի հպատակ պոլսեցի քանի մը հայեր օրագիր կայրեն իրենց կատաղությունը մարելու համար: Կերևի թե լուսավորչյանք բավական լույս չունին և կրակի տրված օրագիրներու լույսով կուզեն լուսավորվիլ: Այս կերպով *Արևմուտքին* թերթերը գոնե վայրկյան մը լույս տված եղան» (1859, էջ 118):

Ծանր էր Ոսկանյանի կացությունը, տարված խտալական ազատագրական պատերազմի լուսաբանմամբ, նա տողամեջ «ազատաբույր ակնարկություններ» էր անում և ձգտում էր հայրենակիցներին ազատագրական պայքարի մղել, մինչդեռ Կ. Պոլսից և Թուրքիայի այլ հայաբնակ վայրերից նրա դեմ շարունակ շանթեր էին արձակում: Գործում էին Կոճիկյանը և Այվազովսկու արբանյակները, հետադիմական մամուլը քարկոծում էր,

հատուկ հողվածներ ու թռուցիկներ էին երևան գալիս ընդդեմ «Արևմուտքի» ու Ռսկանյանի: Պակասը, եթե լիակատար հալածանքի համար դեռ ինչ-որ բան պակաս էր, լրացնում էին անստորագիր նամակները: Տարեսկզբից, երբ սկսեց լույս տեսնել «Արևմուտքը», չէր անցնում մի շաբաթ, որ «Արևմուտքի» խմբագիրը Պոլսից «անհեթեթ խոսքերով և նախատինքով լի նամակներ» չստանար՝ բոլորն էլ անստորագիր: Նա արհամարիում էր դրանց գրողներին, «մանավանդ գրել տվողներին», որոնք նենգաբար նետեր արձակելով ուզում էին «ածուխ ի ձեռին» անվանարկել ու մրտտել դեմոկրատական հանդեսը և նրա խմբագրին: Պատահում էր, որ Ռսկանյանը օրը 3-4 այդպիսի նամակ էր ստանում: Բանի տեղ չդնելով դրանք, Ռսկանյանը գտնում էր, որ իր հակառակորդներն իրենց իսկ «արժանի զենքով» են կռվում, ուստի և «կրման որչափ ուզեն, ինչպես ուզեն և երբ ուզեն գործ ածել զայն» իր դեմ. «Ըրածնիս ալ հայտնի է, ընելիքնիս ալ, և վախ չունինք ամենևնի»:

Հրապարակախոսի այս դիրքը կարծես թե ավելի էր ոգևորում հակառակորդներին. հուլիս-օգոստոսին «անանուն նամակները կատարի գույն մը կառնուն և հուր ու բոց» կտեղային Ռսկանյանի վրա, հակառակորդները ճիգեր էին քափում «ժողովրդին համոզել», որ հանցավորը Ռսկանյանն է, «ռամիկը գրգռում էին» նրա դեմ: Ակտիվ էին գործում հատկապես «սուտ կրոնավորները և խաբերա ազգայինները»՝ մոռանալով «ամեն իրավունք և արդարություն»: Որոշակի քայլերի էին դիմում նաև ամիրաները՝ գործի դնելով թե իրենց ազդեցությունը և թե կուտակած ոսկին, որ հրապուրում էր նույնիսկ լուսավորյալ գործիչներին:

Այդ իրադրության հանդեպ մեն-մենակ գտնվելով, Ռսկանյանը հարկադրված էր «Արևմուտքի» էջերից հանդես գալ հակառակորդների դեմ: Եվ հանդեսի օգոստոսի 15-ի համարում «Ս.Ռ.» ստորագրությամբ նա տպագրեց իր առաջին պատասխան հողվածը՝ «Խայտառակությունը ուրկե կուգա» վերնագրով: «Ի՞նչ է արդյոք մեր հանցանքը» հարցադրումով Ռսկանյանը մերկացնում է «տեսակ մը գոեհիկներին»: Նա վերհիշում է, որ իր դեմ թշնամացել է Այվազովսկին, իրեն «վատահամբավել» և

որ իր սոված պատասխանի առջև» երկդիմի կրոնավորը... լռեց և դեռ կլռե... Բայց իր անտես բարեկամներու խումբը ոռնալեն չդադարիր»: Նույնը տեղի է ունեցել նաև «խրատատու էֆեմտի» Հ.Կռճիկյանի հետ. նա էլ «դեռ կլռե... բայց իր պոլսեցի ծանոթները կշարունակեն խրոխտալ»: «Հանդարտորեն» պատասխան տրվեց նաև «պ.Պետրոս Խոռսանճյան անուն սեղանավորի մը գործի» դարձած «Մասիս» թերթին¹: Ամիրան փոխանակ հերքելու «Մասիսին» հետ իր համեմտությունը՝ «կսկսի ժամանակավ իր մեզի գրածը ուրանալ և հոն, հոս ահռելի կերպով ստել... բարեկամներու նամակներով կհանդգնի զմեզ նախաստել հեռունեն»: Հիշեցնելով այդ ամենի մասին, Ոսկանյանը դիմում է ընթերցող հասարակությանը՝ «Ի՞նչ կմնա մեզ ընելու այս տեսակ ազգայիններու դեմ»:

Լռել Ոսկանյանը չէր կարող, դա կոզևորեր հակառակորդներին, վախկոտություն կհամարվեր: Հանդես գալը նույնպես ոչ մի լավ բան չէր խոստանում, պիտի բամբասավեր, հանցավոր համարվեր: Այսուհանդերձ Ոսկանյանը կրկին չի ուզում պատասխանի արժանացնել «Մասիսի» խմբագրին և նկատում է, թե «անհնար է, որ Յուրյաճի անուն ամբողջ մը պատասխանենք: Մեր պատիվը այս աստիճան չկրնար իջնել երբեք... այս «խայտառակ» և անազգի մարդը կարհամարհիվնք ի բոլոր սրտեն»: Եվ Ոսկանյանը դիմում է լրագրության ուրույն ձևի: Նա Կ.Պոլսից իր ստացած անամուն նամակի հեղինակին կնքում է մտացածին անունով՝ Ավետիք, և քննում իրեն ներկայացված մեղադրանքները:

Այդ դիպուկ ձևը հնարավորություն է տվել Ոսկանյանին երևան հանել «Արևմուտքի» թիկունքում տեղի ունեցող այն պայքարը, որ նպատակ ուներ փակել դեմոկրատական հանդեսի բերանը, խլացնել մարտական հրապարակախոսության ձայնը: Այս իմաստով նույնպես Ոսկանյանի խիզախ պատասխանը սկզբունքային նշանակություն ուներ. հակահարվածը ոչ միայն «Արևմուտքի» հակառակորդներին էր հասցվում, այլ նաև առհասարակ հայ առաջադիմական-դեմոկրատական մամուլի դեմ

¹ Նկատենք, որ Պ.Խոռսանճյան ամիրան վաստակել էր հայ լրագրության քաջալերողի համբավ («Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի», 1901, Կ.Պոլիս, էջ 70):

որոգայթներ լարողներին:

Ավետիքի նամակը «առաջի բառեն մինչև ետինը թշնամանքե ուրիշ բան չամփոփեր»: Նա մեղադրում է Ռսկանյանին, թե «յրագիր շինել չենք գիտեր», թե «Արևմուտքը» ազգագուտ բան մը չիրատարակեց»: Ապա Ավետիքը, մատնելով ինքն իրեն, սկսում է մեծարել Պետրոս ամիրային և փորձում հերքել Ռսկանյանի այն պնդումը, թե ամիրան նամակ է հղել Ռսկանյանին և իր գղջումը հայտնել «Արևելքի» դեմ հարուցված խարդավանքը պաշտպանելու համար: Այս խնդրի վրա էլ ծանրանում է Ռսկանյանը, մերկացնելով ոչ միայն նամակագրի երեսպաշտությունը, այլև նրան հուշարկող ամիրային: Նա քաղվածաբար բերում է ամիրայի նամակը, որտեղ սա, ինչպես իր տեղում նշվեց, խոստովանում է, թե «գայթակղության պատճառով» է կարգավորել «վարդապետի» (իմա՝ Կ.Շահնագարյանի) կատարած «անցքերը», «հնար եղածին չափ ծածկելու» հորդորներով դիմել Փարիզի իր բարեկամներին: Ամիրան նաև խոստանում էր Ռսկանյանի «ՕՐԻՆԱՎՈՐ ԱԿՆԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ» բավարարել, «գայթակղությունը իսպառ վերացնել», ինչպես և փորձում էր ամիրայական ազդեցության ուժով փրկել, իր արտահայտությամբ ասած, «ԱՆԱՐԺԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ», խնդրում էր «այլ միջոցներու ձեռք չգարնել» ընդդեմ Կ.Շահնագարյանի, չիրապարակել փաստերը:

Կոնկրետ փաստարկումներով Ռսկանյանը ցույց է տալիս «հիշյալ ամիրային ինչ դասու մարդ ըլլալը», մերժում է նրա անձնական ազնվությունը, ապացուցում, որ նա չի հարգում «իր փափուկ մատերով դրոշմած» սեփական ստորագրությունը, ուրանում է այն, նույնիսկ իր արբանյակի լեզվով հայտարարում, թե նամակ չի գրել Ռսկանյանին¹: Միաժամանակ Ռսկանյանը մերկացնում, ձաղկում է «Մասիսի» Ավետիք անվանյալ քութակցին, զգուշացնում, որ «Յություճիներու ընկերությունը» տանում է դեպի «մոլի վարդապետները և... մոլի զեկզեկները»: Անգիջում խստությամբ նա մերժում է ամիրայական մեղադրանքն իր

¹ Տարիներ հետո, տակավին 1898-ին, Որբերյանի հետ ունեցած զրույցի ժամանակ Ռսկանյանն ասել է. «Քովս պահած եմ տակավին... Պետրոս ամիրա Խորասանձյանին նամակները» («Արևելք», 12/24 դեկտեմբերի 1898, N 3885):

հասցեին և այն կրկնող թղթակցի նախատինքը: Նրանց հերքող իր տողերը գրելիս Ոսկանյանը նույնիսկ խոստովանում է, որ ստիպված է մառանալ համեստությունը և «հասարակության առյանին առջև» բացականչել. «Մեր կյանքին մեջ գրվածներն ո՛չ տառ մը, ո՛չ կետ մը և ո՛չ շեշտ մը կուրանանք, ինչ որ ըսինք, գրեցինք և հրապարակեցինք, նորեն ըսելու, գրելու և հրապարակելու պատրաստ ենք, եթե նույն դեպքերը պատահին»:

Նշանավոր այս խոսքերը կարող են համարվել Ոսկանյան հրապարակախոսի կյանքի և գործունեության նշանաբանը, բնաբան դառնալ նրան մվիրված հետազոտության համար: Գրելով դրանք, նա ծանոթագրությամբ դիմում է ընթերցողին և խնդրում՝ «այս տողերը նշանակել» և խոստանում մի օր ասել, թե «ինչ պարագայի մեջ գրվեցան անոնք»: Ցավոք այդ խոստումն անկատար մնաց: Բայց մենք կարող ենք ասել, որ, իրոք, Ոսկանյանը, ամենատարբեր պարագաներում և անլուր հալածանքների ենթարկվելուց հետո էլ, նույնիսկ չոր հացով ապրելու դատապարտության ենթարկվելով, հավատարիմ մնաց իր դավանանքին, ոչ մի քայլ չնահանջեց իր դիրքերից, չարեց ոչինչ ու չգրեց ոչինչ հակառակ իր համոզմունքների:

Ոսկանյանը քննվող հողվածում հետապնդում էր մի կարևոր նպատակ ևս. «Մասխին» պատասխանելուց, Խորասանձյան ամիրային ու նրանց ձայնավող Ավետիքին մերկացնելուց զատ, նա հրապարակախոսի իր պատիվն ու իրավունքը պաշտպանելու հենքով հզորաձայն հաստատում էր դեմոկրատական մամուլը, ազատ ու անկապանք հրապարակախոսությունը, այն սկզբունքները, որոնք պետք է արմատակալեին հայ իրականության մեջ: Դա ավելին էր, քան նույնիսկ մի թերթի ինչ-որ մեղադրանքի հերքումը, որևէ ամիրայի կամ «կաշառակարծ» թղթակցի պատասխանները:

Նախ Ոսկանյանն այդահատանքով մերժում է անստորագիր նամակներով պայքար մղելու, որևէ նպատակի հասնելու զարշելի եղանակը. մարդկային վերջին տականքը միայն կարող է այդպիսի նամակ գրել, դա, պարզապես, մտքի վիժում է, որի միակ տեղն աղբանոցն է: Որևէ խնդիր, նպատակ հետապնդող արժանապատիվ գործիչ կամ հրապարակագետ, ինչ էլ որ լինի,

պետք է հանդես գա սեփական դեմքով, շիտկե շիտակ: Եթե մեկը սովորել է թղթակցություն գրել, անստորագիր նամակ երկնել, նա պետք է իմանա նաև իր անուն-ազգանունը գրել և ոչ թե կծկվի սև տառերի ու բառերի ետևում: Վեճը, բանավեճը, պայքարը ոչ թե պետք է արգելել, խափանել, այլ հասցնել ավարտի, որպեսզի իրոք ավարտվեն, հակառակ կերպով վարվելով, դրանք դարձնում ենք անվերջանալի: Եվ բոլոր պարագաներում դրանց ելակետն ու հիմքը ազգային շահը և հայրենիքի օգուտը պետք է լինեն: Ահա այս ելակետով էր Ոսկանյանը հանդես գալիս իր հակառակորդների դեմ՝ լինեն նրանք առանձին գործիչներ, խմբեր թե պարբերականներ, և նրանց հրավիրում էր ի տես և ի դատ հասարակության:

«Թող մեր թշնամիները երևին հասարակության առջև. թող պ. Կ.Շահնազարյանը, պ. Հ.Կոճիկյանը, պ. Գ.Այվազովսքին, պ. Ամբրոսիոսը և իրենց նմանները, – գրել է Ոսկանյանը, – հրապարակ գան և քննենք, մեյ մը նայինք, թե ուրկե կծագի այն «խայտառակությունը», որ Պ. Պետրոս Խորասանճյանի կողմերեն մեզ կուղարկվի: Ո՞ կրոնավոր և կրոնամուլ թշնամիք, եթե այսքան առաքինի եք ինչո՞ւ ծակամուտ կպահվիք, ինչո՞ւ հասարակության դատաստանեն կվախնաք, ինչո՞ւ ձեր փաստը գլուխնիդ մեջ կթաղեք»:

Հարցը Ոսկանյանը չէր հանգեցնում սոսկ հակառակորդների հասարակության առջև երևան գալու հրավերին, դա որևէ հարց քննելու կամ բանավիճելու միայն առաջին ու տարրական պահանջն է: Առավել էականն այն հարցերն են, որոնք, իրոք, անհրաժեշտ է քննարկել, որոնք ոչ թե որևէ պարբերականի, ամիրայի, նույնիսկ ոչ թե նրանց ձայնավողին են վերաբերում, այլ շոշափում են հասարակության, ամբողջ ազգի ներքին կյանքի խնդիրները: Ահա այն հարցերը, որ «Արևմուտքի» էջերից տեղում է Ոսկանյանը. «Ե՞րբ առաքինությունը նախատվեր և հերարձակ չէ բողոքեր նաև դահիճի ձեռքին ներքև, ե՞րբ ճշմարիտ կրոնքը դիմակ կրեր և ճշմարիտ հավատքը համրության պահեր է, ե՞րբ անարատ ազգասիրությունը ազատությունը խեղդելով պարծեր ու գետնափոր դարաններու մեջ կայան ընտրեր է, ե՞րբ պատիվը ազգին ստակը ժողովեր և հաշիվ չտալով

աներևույթ եղեր է, ե՞րբ ուղղամտությունը բազմաթիվ ընտանիքներու խոստումներ ըրեր և սպտանիներու միտքը խանգարեր և ետ դարձուցեր է»:

Անշուշտ, դժվար չէ այդ հարցադրումների տակ նկատել կոնկրետ այն վիաստերն ու գործիչներին, որ նկատի ուներ Ոսկանյանը: Սակայն դրանից առավել կարևորն այն է, որ նա առաջ էր քաշում հայ հասարակության առօրյա կյանքի հարցերը: Ինչ վերաբերում է իր, այսպես ասած, անձնական բանավեճին, ապա Ոսկանյանն այդ դեպքում ևս սկզբունքային դիրքի վրա է և օրինական արժանապատվությամբ է արժարժում նաև այդ խնդիրը: Նա ընդվզում է այն բանի դեմ, որ «ուրիշի բերնով... և կաշառակեր լեզուների» միջոցով քննվում ու մրտավում է իր «ընտանի» կյանքը: Դա կարող է թույլ տալ «անարի և անսիրտ» մարդը, նա, որ, համարձակություն չունի երևալու «հասարակության առջև».: «Երևան ելեք ուրեմն, որ մենք և ժողովուրդը զձեզ տեսնենք անսրող և հարևու, – բացականչում է Ոսկանյանը: – Երևան ելեք և անհպելի խորանի մը գոգը թող տվեք, որ ձեր բարոյականությունը հասկացվի և ընդունվի, եթե ոչ... մեկը չպիտի հավտա ձեր գրպարտություններուն ոչ հիմա և ոչ առ հապա, եթե ոչ հասարակությունը պիտի ըսե մեզի հետ թե գրպարտելը պատասխան չէ»:

Ամեն դեպքում հասարակության, ժողովրդի դատին դիմելով, Ոսկանյանը ոչ միայն դրսևորում էր դեմոկրատական իր մտահայեցությունը, իր անբաժանելի հավատն ու վստահությունը հասարակական կարծիքի նկատմամբ, այլև խորին իր համոզմունքը, որ կանգնած է ճիշտ դիրքերի վրա, ծավալում է ազգին ու ժողովրդին կենսականորեն անհրաժեշտ մի գործունեություն, որ կզնահատվի պատմության էջերում: Նա լիովին իրավունք ուներ գրելու, որ «երբեք պատմությունը չպիտի արձանագրե, որ «խայտառակության» դեմ բողոքելը «խայտառակություն» է, և այսօր հեղինակ պ. Կ.Շահնագարյանը և այս հեղինակին պաշտպան պ. Պետրոս Խորասանճյանը բարի և առաքինի մարդեր են: Երբեք պ. Ոսկանյանը չպիտի դատապարտվի իր ըրածին համար, վասնզի ազգին պատիվը պաշտպանել և ճշմարտության ծառայել իր հայու պարտավո-

րությունը և մարդու արժանավորությունն էր: Այս արժանավորությունը ունեցավ և այս պարտավորությունը կատարեց իր անձնական շահը մոռանալով...: Հակառակը պնդողները թող խոսին, եթե կրնան» (1859, էջ 126):

Այն օրերին, երբ գրվել ու տպագրվում էր «Խայտառակությունը ուրկե կուգա» հոդվածը, արդեն լույս էր տեսել «Մասիսի» այն համարը, որտեղ հատուկ հոդված էր գետեղված Ստ. Ոսկանյանի դեմ: «Արևմուտքի» հերթական համարն արդեն պատրաստ էր, ուտի և նա հնարավորություն չունեի անմիջապես պատասխանելու: Խնդրելով «բարեմիտ հասարակությանը» համբերել մինչև մյուս համարը, Ոսկանյանը պարտք էր ստանձնում հերքել իր հասցեին ժայթքած «սուտ ու պատիիր զրպարտությունները»: Եվ իրոք «Արևմուտքի» հաջորդ՝ 17-րդ համարում նա հրատարակեց իր հռչակավոր բանավիճային հոդվածը՝ «Քսանկչորս ստություն», որով պատասխանում էր «Մասիսի» հունիսի 25-ի համարի անվերնագիր ու անստորագիր «զրպարտություններով լեցուն»¹ հոդվածին:

«Մասիսի» ոչ ընդարձակ հոդվածում Ոսկանյանը գտել է իր անձնավորության դեմ ուղղված քսանչորս մեղադրանք և մի հակիրճ ներածականից հետո առանձին-առանձին պատասխանել յուրաքանչյուրին՝ «դատը կտրելը» թողնելով հասարակությանը: Անշուշտ պատասխանն ավելի ընդարձակ է ստացվել, քան ամբողջ համարը: Դա ակնհայտ շոայլություն էր և, ավելի քան որևէ մեկը, Ոսկանյանն ըմբռնում էր այդ, նա իր առաջին տողով ներում է խնդրում, խոստովանում, որ ակամա է ձեռք զարկում «դառն աշխատությանը», որ կարելի էր «ուրիշ խնդրի մը տրվիլ և գուցե ավելի օգտակար քան մը արտադրել»: Մյուս կողմից, նա լավ գիտե, որ «գրագետի մը պատիվը և իրավունքը իր մտական արդյունքեն ըմտրելի են», ինչպես գերմանացի փիլիսոփան է նկատել, «բարոյականը տաղանդեն ավելի կարժե»: Այս ըմբռնումով է Ոսկանյանն այս անգամ գլուխ վկայրել՝ ստիպված լինելով շարունակել «սկսած կռիվը», զբաղվել «անձնական խնդրով»: Որքան էլ, սակայն, Ոսկանյանը ակամա է գրել «Քսանկչորս ստությունը», հարկադրաբար զբաղվել իր

¹ Ա Հովհաննիսյան, 624. աշխ., հ, 1, էջ 315:

անձնականով, այսուամենայնիվ, պետք է բարեբախտություն համարել այդ հողվածի հրապարակ գալը: Նախ այն Ռսկանյանի կյանքի ու գործունեության ամենից հավաստի աղբյուրն է, մի վավերագիր, որ օգնում է պարզել նրա կենսագրության շատ կարևոր էջեր: Այնուհետև «Քսանկոչոս ստությունը» հրապարակախոսական վարպետության, անձնական հարցերի հենքի վրա հասարակական մեծ նշանակություն ունեցող խնդիրներ արծարծելու մի հազվադեպ օրինակ է: Այդ առումներով մենք արդեն անդրադարձանք Ռսկանյանի հիշյալ հողվածին և դեռ մի անգամ չէ, որ անհրաժեշտաբար կվերադառնանք նրան: Հողվածը կարևոր վավերաթուղթ է նաև «Մասիսին» Ռսկանյանի տված հակահարվածի տեսակետից, ուստի և այստեղ նրան անդրադառնանք այդ , ինչպես և խավարամոլության դեմ մղված պայքարի մեջ նրա նշանակության իմաստով:

Մենք, գրում է Ռսկանյանը, «սովորություն ունինք... տգիտությունը կամ իր թողը՝ զեվզեկությունը» նկատելուց անդառնալի հեռանալ, ծանր վերապրել «կրոնամոլությունը և կույր եռանդը, որ իր հետևությունն է» և «ի վերջե ազվեսի թշնամությունը արհամարհել, կարծիքներու քան թե մարտերու վրա հարձակիլ, զենքին քան թե զինվորին դեմ դնել, եթե բռնադատվինք դեմ դնելու»: Ինքնաբերորոշ այս սկզբունքների առջև, սակայն, նա տեղի է տալիս և անում այն, ինչ անհնար է չանել, երբ մոտենում է «ժանտ սավերը», երբ դեմ առ դեմ հասնում է նենգությունն՝ «ահռեյի երեսով»: «Վատությունը, գրում է Ռսկանյանն այդ բառի տակ հասկանալով նենգությունը, – մեր վրա աննկատելի ազդում մ’ ըրած է միշտ, և չենք կրնար զսպել մեր բարկությունը, երբ կդիտենք իր ձեռքը նաև անծանոթի մը քովերը թող թե մեր պատվո վրա»:

Հրապարակախոսական գործունեության ընթացքում Ռսկանյանը հաճախ է առնչվել նման վարքագծի. վրդովվել է սրտով ու մտքով, «շատ անգամ իր թունավոր շունչը և մագիլները» զմեզ պաշարեցին: Հիմա էլ այն «Ստության և Զրպարտության» զինակցությամբ վերստին հառնել է նրա դեմ «Մասիս» անուն թերթին մեջ, որ ստության և զրպարտության որջ մ’ է ի վաղուստ անտի»: Այս դեպքում նահանջելը Ռսկանյանի համար

նշանակում է «ճշմարտության պատիվը մոռանալ և մեր մարդու արժանավորությունը զոհել»: Շարունակելով բնորոշել իր դեմ մամուլում թույլ տրված հարձակումները և նրա էջերից տեղացող գրպարտությունները, Ոսկանյանը գրում է. «Վատության այս կենդանի պատկերը Յուրյուճի Կարապետի մը ճակատը համբուրելով և «Մասիսին» էջերը իրեն պատվանդան ընտրելով, հրապարակ կիջնե կատաղությամբ... *Մասիսին* փառքը կատարյալ է, և վատությունը իր մուրը և քանի մը ոսկի հոն ձգելով կմեկնի, կփութա և *ամիրայի* մը նոր արժող կնստի ու երևակայական հաղթությունով մը կփառավորվի...»:

Այսօր կարծես թե Ոսկանյանը չափից ավելի խստաբարո էր դատում «Մասիսի» խմբագրին. իր պատասխանի վերջում նա իր հակառակորդներին հավաքական անունով կոչում է «Յուրյուճի գոեհիկներ»: Դեմոկրատական մամուլի էջերից, մասնավորապես Հ.Սըվաճյանի «Մեղում» Կ.Յուրյուճյանն ավելի խիստ է դատապարտվել: Հ.Պարոնյանը նույնպես ձաղկող երգիծանքով է ուրվագծել «ազգային ջոջի» դիմապատկերը: Ըստ երևույթին պատրիարքարանի պաշտոնաթերթի խմբագրի եթե ոչ ողջ գործունեությունը (1852 – 1884), ապա այդ գործունեության առաջին շրջանը՝ առ 1870-ը, մուսավանդ որոշ կողմերը տեղիք էին տալիս նման գնահատության¹:

Ինչպես տեսանք «Մասիսի»՝ Ոսկանյանի և նրա պարբերականի դեմ անստորագիր հողված տպագրելուց շատ չանցած, սեպտեմբեր-նոյեմբերին հրատարակվեց Խ.Միսաքյանի քննաբանականը: Թույնացայտ ու հիմնագուրկ այդ հողվածաշարին Ոսկանյանը չէր կարող չանդրադառնալ ու չպառասխանել նրա վրիժառու հեղինակին: Այդ հողվածաշարի առաջին հատվածի և նրան կցված թշնամական ոգով հորինված մախաբանի՝ «Մասիսում» երևան գալուց հետո Ոսկանյանը խմբագրել է «Արևմուտքի» հոկտեմբերյան համարները: Սակայն դրանցում որևէ խոսք չկա ոչ Միսաքյանի հողվածի և ոչ էլ «Մասիսի» մասին,

¹ Մոտ երեսուն տարի անց, երբ Ռ.Որբերյանը հանդիպեց Ս.Ոսկանյանի հետ, սա վերիջեց իր բանակոթիվները «Մասիսի» և Կ.Յուրյուճյանի հետ և իմանալով, որ ապրում և գրական աշխատությամբ է զբաղված, ասաց. «Չեմ հուսար, թե նյութալիս փայլուն վիճակ ունենա» («Արևելք», 12/24 դեկտեմբերի, 1898, N 3885):

խկ նոյեմբերի 1-ի համարում երևան է եկել «Արևմուտքի» խմբագրումից նրա հրաժարականի մասին հաղորդումը: Թե՛ մեկը և թե՛ մյուսը տարօրինակ է և տեղիք է տալիս ենթադրել, թե Ռսկանյանը հնարավորություն չի ստացել «Արևմուտքում» հանդես գալ «Մասիսի» հողվածաշարի դեմ, թե այդ երկու պարագաները շաղկապված են միմյանց հետ՝ խմբագրի հրաժարականը տեղի է ունեցել ազատ հանդես գալու իրավունքի արգելման հետևանքով: Ենթադրում ենք, թե նման արգելք կարող է հարուցել «Արևմուտքի» ընկերությունը՝ նրանք, որ հիմնել էին հանդեսը և ստանձնել նրա հրատարակության հոգսը: Այլ դեպքում հազիվ թե Ռսկանյանի խառնվածքի տեղ խմբագիրը, թեկուզ առանց վարձատրության մնալով, ինչպես նրա հրաժարականը մեկնաբանվել է «Արևմուտքի» ընկերության հայտարարության մեջ¹, թողնել հանդեսի խմբագրությունը և այն էլ այն օրերին, երբ «Մասիսը» «գորեղ» գրոհ էր ձեռնարկել Ռսկանյանի ու «Արևմուտքի» դեմ: Ըստ երևույթին ընկերության և Ռսկանյանի միջև տարածայնություն է առաջացել «Մասիսի» հողվածաշարին պատասխանելու շուրջ: Ընկերության անդամները հավանաբար հարմար չեն գտել «Արևմուտքի» N 17-ից հետո հանդեսի մի այլ համար ևս հատկացնել բանավեճ-պատասխանին, որ երևի առաջարկում էր Ռսկանյանը: Ծավալի հետ միասին, անշուշտ, խոսք կարող էր լինել պատասխանի ոճի մասին, որ այս անգամ խիստ ու կոշտ պետք է լիներ, որովհետև «Մասիսի» գրոհն ավելի գռեհիկ ու հեռուները գնալու, ուղղակի ասած՝ «Արևմուտքը» խեղդելու նպատակ ուներ:

Այդ ամենով հանդերձ «Մասիսի» գրոհն առանց հակահարվածի մնալ չէր կարող. «Արևմուտքի» վերջին՝ 24-րդ համարում, որ հրատարակվել է սովորականից չորս էջ ավելի ծավալով, լույս է տեսել «Մասիսի» լրագրին գետնահարկը» հողվածը՝

¹ «Արևմուտք», 15 դեկտեմբերի 1859, N 24, 15 185-186:

² Ժ. Դ. սկզբնատառերով ստորագրությունը «Արևմուտքի» 24-րդ համարում հանդիպում է Էմ. Եմենիցի Փոքոս Յավելասին նվիրված ակնարկի քարգնամության և «Մասիսի» դեմ ուղղված պատասխանի տակ: Լևոն գտնում է, որ «Ժ. Դ. տառերի տակ» բաբնված է անհայտ «մի գրող» («Մուրճ», 1901, N 12, էջ 169), իսկ Հր. Ասատուրը կարծում է, որ այդ ստորագրությամբ հանդես էր գալիս «Վիեննայի նախկին միսրան մը» («Ամենուր տարեցույց», 1923, էջ 116): Անհնար համարելով

Ժ.Դ.² ստորագրությամբ, մանրատառ, իբրև հանդեսի եզրափակում, մի ինչ-որ տեղ նաև վերջին խոսք նրա ընթերցողներին:

Հողվածում նախ առաջ է քաշվում այն հարցը, թե ինչպես է, որ «Մասիսը» միաժամանակ գովում ու դատապարտում է Այվագովսկուն և նրան ընկերակցող վարդապետներին. «Մասիսը» երկու հակառակ կարծիք ի՞նչպես կապաշուպանե», – հարցնում է «Արևմուտքը» և ապա նկատում է, որ «Մասիսը» զգալի մասով դարձել է կրոնական թերթ, իր տված ազգային լուրերը «չորս վարդապետի, հինգ եպիսկոպոսի վրա կդառնան», հաճախ է տեղ տալիս «կրոնի ախոյաններին», «Մեր հաջորդները, – գրում է «Արևմուտքը» – պիտի խղճան, պիտի խնդան մեր վրա, երբ որ տեսնեն, որ տասնութներորդ դարուն մեջ հայոց գրագրագիտությունը, բոլոր կոիվները, բոլոր վեճերը կրոնի վրա, հայոց բոլոր գոյությունը կրոնի վրա է եղեր»: Ո՛չ, «Արևմուտքը» կրոնին դեմ չէ, գտնում է, որ «մեր հոգին առանց կրոնի չի կրնար կենալ»: Բայց նա առաջ է քաշում նաև այն հարցը, թե «մեր մարմինն ալ կրոնով չի կրնար սնանիլ». «Ավետարանը վաղվանը մի հոգար կրսե, այո, բայց անոր կրոնը քարոզողները ինչու իրենց համար քարաշեն տուներ կշինեն, ինչու գանձ գանձի վրա կլիզեն: Այո՛,

այդ չփաստարկվող ենթադրությունը, թե դեմոկրատական «Արևմուտքի» տնօրինությունն անցել է Մխիթարյան միաբանության որևէ նախկին անդամին, մենք հակված ենք ենթադրելու, որ այդ սկզբնագրերի տակ հանդես էր գալիս ինքը՝ Ստ. Ռսկանյանը, թեև նա հետագայում երկիցս արված ժամանակաշրջանում և 1859թ. նոյեմբերին և դեկտեմբերին հրատարակված «Արևմուտքի» համարներից՝ անշուշտ տակտիկական նկատառումներով: Ե՞նեմիցի ակնարկի թարգմանության և նրան կցված նախարանի լեզուն և ոճը ակնհայտորեն Ռսկանյանին են: Գաղափարական առումով «Մասիս» դեմ ուղղված հողվածը նույնպես, ամենայն հավանականությամբ, Ռսկանյանական է, ինչպես Լեոն է նկատել «Որ մի շատ զեղեցիկ հողված է, Ռսկանյանի ոգով գրված»: Սակայն լեզուն և ոճը Ռսկանյանինը չեն, թեև առանձին արտահայտություններ ուղղակի քաղված են նրա հողվածներից: Կարելի է ենթադրել, թե Ռսկանյանը գրել է պատասխան հողված, որը հարմար չի համարվել հրատարակել ու մնացել է անտիպ և որը նրա հեռանալուց հետո օգտագործվել է «Արևմուտքը» տնօրինողների կողմից, որի համար էլ նրա տակ դրվել է Ժ.Դ. ստորագրությունը: Նաև անհավանական չէ ենթադրել, թե «Արևմուտքի» տարեվերջյան չորս համարները պատրաստելիս պարզապես օգտագործվել են Ռսկանյանի թողած նյութերը, դրանց թվում նաև հիշյալ ակնարկի թարգմանությունը և հողվածը, որի գաղափարները կամ թերևս առանձին հողվածներ ենթադրվել են «Արևմուտքի» ընկերության պատրաստած պատասխանի մեջ:

առանց կրոնի մարդկությունը հրեշ մըն է, բայց ինչպես կըլլա, որ մեր մեջը նույնիսկ կրոնը իրար ասելու, իրար սպանելու պատճառ կըլլա, և ուր անանկ եղած չէ, որ ազգին կորուսա եղած չէ կրոնը գեղ գործածվելով: Ավասիկ աս է խնդիրը»:

Կրոնի դեմ չարտահայտվելով, ավելին, այն դիտելով իբրև կեցության հիմք, «Արևմուտքը» խմբիրը հանգեցնում է կրոնի գործադրմանը և կրոնը քարոզող կրոնավորների վատթար գործունեությանն ու պայքարն ուղղում նրանց դեմ: Սա մի քիչ այլ հարցադրում է, քան Ոսկանյանի դիրքորոշումն էր կրոնի և կրոնավորների հարցում, որին մենք կանդրադառնանք հետո:

«Արևմուտքի» պատասխան հողվածի հիմնական նպատակը Խ.Միսաքյանի «Մասիսում» հրատարակած հողվածաշարին պատասխանելը չէ: «Արևելքի», «Արևմուտքի» և նրանց խմբագրի դեմ հանդես եկող Միսաքյանին պատասխանելը մի կողմ, ավելի ճիշտ, Ոսկանյանին թողնելով, անդրադառնում է «Մասիսի» հողվածներում տեղ գտած միայն մի հակասությանը. «հայք իրենց գոյությունը չի կորսնելու համար *քարոչյական միություն* մը ու *զգալի կապակցության* մը պիտի անին», – գրել է Միսաքյանը և բացատրել, որ այդ միությունը «Հին հիշատակներու վրա կհաստատվի», իսկ կապակցությունը՝ «կրոնքը ու լեզուն է»: Ահա այս վերջին դրույթն էլ քննում է «Արևմուտքը»:

Թուրքիայում տիրող դրությունը նկատի ունենալով, հանդեսը գտնում է, որ ցածր աստիճանի վրա են գտնվում հառաջադիմությունը, լուսավորությունը, քաղաքակրթությունը, և դրա պատճառն այն է, որ թուրքերը «իրենց գոյության միակ միջոցը կրոնքը ըրած են», մինչդեռ քաղաքակրթված ժողովուրդները՝ ֆրանսիացիները, անգլիացիները և այլն, կրոնը գոյության միջոց չեն համարում: «Միայն «Մասիս» լրագիրն է, որ կարծես թե հայոց փրկությանը վերջին բառը գտած է, երբ որ տարին քանի մը հեզ կպոռա հայոց, թե ձեզ պահողը, ձեզ կեցնողը կրոնն է»:

Վճռական է «Արևմուտքի» դիրքն այս հարցում. «Կրոնքը չէ թե միայն միության միջոց չէ եղած, հապա ամենեն մուլեգին կռիվներու, ամենեն արյունալի պատերազմներուն միակ գրգռիչը ու պատճառ եղած է»: Այս թեզը հանդեսը փաստարկում է մարդկության ընդհանուր պատմության վկայակոչումով և

գանում, որ քրիստոնեությունը «ավելի ավերակ շինած է»... Եվրոպան նորեն բարբարոսության մեջ ինկավ կրոնքի պատճառով: Ահավասիկ աս կրոնքն է, հայք, զոր դարձյալ մեր գոյության միջոց ընել կուզեն»: Եվ այստեղ «Արևմուտքը» կտրուկ կոչ է անում. «Մի խարվիք, հայք, հեղ մը զանազանեցեք, կրոնքը ուրիշ է, ազգությունը ուրիշ է» (1859, էջ 196):

Դեռ «Արևմուտքի» երկրորդ համարում է Ռսկանյանը ազդարարել. «Կրոնքը ազգի մը հիմնա չկրնար ըլլար... այլ է ազգություն և այլ է կրոնք» (1859, էջ 12): Բազմիցս նա նույնն է կրկնել հանդեսի հաջորդ համարներում: Հիմա «Արևմուտքի» վերջին համարում, դադարից առաջ, երբ նա այլևս չկար խմբագրության կազմում, «Արևմուտքը» նույնն էր ազդարարում: Կարելի է ենթադրել, որ սկզբունքային այդ հարցում հանդեսի հիմնադիրները համակարծիք էին Ռսկանյանի հետ, թեև նրանք Ռսկանյանին իբրև առաջին պայման առաջադրել էին «կրոնի և անձնական խնդիրներն զգուշանալ» պահանջը (1859, էջ 185): Այդ հարցերից Ռսկանյանը չզգուշացավ և չէր էլ կարող և հենց դրանով ամրապնդվեց կրոնի հարցում նրա առաջադրած վերը բերված դրույթը: Հակահարված տալով «Մասիսին» ու նրա հեղինակ Խ.Մխաբյանին, «Արևմուտքը» չափազանց համոզիչ, միաժամանակ և լիովին առաջադիմական դիրքերից ցույց տվեց, որ կրոնը բնավ չի կարող կատարել նրան վերագրվող դերը հայ ժողովրդի կյանքում: Այդ իմաստով հատկապես արժեքավոր են այն դրույթները, որոնք առաջադրվում են «Արևմուտքի» եզրափակիչ հատվածում:

Ինչպես տեսանք, բանավիճելով «Մասիսի» ու նրա խմբագիր Կ.Յուրյուճյանի դեմ, Ստ. Ռսկանյանը, պաշտպանելով դեմոկրատական «Արևմուտքի» դիրքը, միաժամանակ առաջ էր քաշում ազգի շահերից բխող խնդիրներ, առաջատար մասնակցություն էր ցուցաբերում հետադիմական մամուլի ու գաղափարախոսության դեմ մղվող ընդհանուր պայքարում:

Առհասարակ Ստ. Ռսկանյանի պայքարը հայ հետադիմական, կրոնաամիրայական գաղափարախոսության, այդ դասերը մարմնավորող գործիչների դեմ, «Արևելքի» ու հատկապես

«Արևմուտքի» գաղափարախոսությունն ընդհանրապես վերցրած մեծ նպաստ էին հայ առաջադիմական-դեմոկրատական հրապարակախոսության, հայ մամուլի և հայ հասարակական մտքի զարգացմանը: Ազգային ինքնագիտակցության արթնացման, ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության հասունացման և առաջադիմական-դեմոկրատական ուժերի համախմբման ժամանակահատվածում, որի առաջին փուլը ներառում է 1850-ական թվականները, այդ պայքարը և գաղափարախոսությունը զգալի ներգործություն ունեցան մանավանդ արևմտահայ և սփյուռքահայ իրականության մեջ և ազդանշում էին այն վերելքը, որ տեղի պետք է ունենա 1860-ականներին, առհասարակ հայ կյանքում: Այդ վերելքի զագաթնակետը փառահեղորեն ներկայացավ հանձին հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի, որը գործնական-գաղափարական-փոխգործակցական կապեր հաստատեց մաև Ստեփան Ոսկանյանի հետ: Սերտ էր այդ կապը և հղի մեծ հեռանկարով: Միաժամանակ դա այն հաստատուն ցուցանիշն է, որ բնութագրում է Ստ. Ոսկանյան խմբագրին, հրապարակախոսին ու գաղափարական գործչին:

ՄԻՔԱՅԵԼ ՆԱՎԱՍԱՐԳԻ ՀԱԿՈՐՅԱՆ

ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՄԻՋԱՎԱՅԻՐԸ (ԿՑԱՆՔԸ, ԳՈՐԾԸ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՅԲՆԵՐԸ)

Հրատ. խմբագիր **Ա.Հովակիմյան**
Համակարգչային շարվածքը՝ **Վ.Պապյանի**

Հրատ. պատվեր՝ N 171
Հանձնված է շարվածքի՝ 01.06.2005թ. :
Ստորագրված է տպագրության՝ 25.08. 2005թ. :
Չափսը՝ 60 x 84¹/₁₆ : Թուղթ N 1:
29,5 տպագրական մամուլ: Տպաշանակը՝ 300 օրինակ:
Գինը պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, 375019,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24գ.:

958577

2500

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220090511

A $\overline{11}$
905 11